



Foreign Language Teaching and Research Press (Beijing)

Գրքի հրատարակությունն իրականացվել է  
«Օտար լեզուների ուսուցման եւ հետազոտությունների  
հրատարակչության» (Պեկին, Չինաստան) աջակցությամբ:



# 汤一介 儒释道耶与中国文化

Yijie TANG

Confucianism, Buddhism,  
Daoism, Christianity  
and Chinese Culture

/Armenian version/

Stepanakert 2016

Ի՞նչ ԹԱՆ

ԿՈՆՖՈՒՑԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ,  
ԲՈՒԴԴԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ,  
ԴԱՍԻՉԱԾԸ,  
ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ԶԻՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Թարգմանիչ՝  
Աստղիկ ԱթԱբեկՅԱՆ

ՀՏԴ 1/14:2-1:008  
ԳՄԴ 87+86.2/3+71  
Թ 220

«Գեղարմ» հանդեսի մատենաշար

**Թամ Իձյե**  
Թ220 Կոնֆուցիականությունը, բուդդայականությունը,  
դասիզմը, քրիստոնեությունը և չինական մշակույթը:  
Թարգմ. անգլերենից՝ Ա. Վթարեկյան:  
Ստեփանակերտ, «Ոգի-Նախրի» հրատ., 2016, 360 էջ:

Չին անվանի գիտնական Իձյե Թամը «Կոնֆուցիականությունը, բուդդայականությունը, դասիզմը, քրիստոնեությունը և չինական մշակույթը» խորագրով իր նշանավոր գրքում համակողմանի եւ խորը վերլուծության է ենթարկում կրոնա-մշակութային բոլոր այն հոսանքները, որոնք երկար դարեր ի վեր, առ օրս առանձին-առանձին, թե փոխկապակցված ծեւով ազդեցիկ ու կողմնորոշիչ դերակատարություն ունեն չինական եւ նրան հարակից որոշ տարածաշրջանների մեծաքանակ ժողովուրդների կյանքում:

Յայ ընթերցողը հիանալի առիթ ունի՝ չափազանց հարուստ տեղեկատվություն եւ համարժեք մեկնություններ ստանալու մարդկային պատմության մեծագույն ուսմունքների մասին:

ISBN 978-9939-1-0419-5

ՀՏԴ 1/14:2-1:008

ԳՄԴ 87+86.2/3+71

*Copyright:*

Original Chinese Text © Tang Yijie

© Foreign Language Teaching and Research Publishing Co., Ltd. (FLTRP)  
Armenian Translation © Foreign Language Teaching and  
Research Publishing Co., Ltd.  
All rights reserved.

**B&R Book Program**

© «Ոգի-Նախրի»/թարգմանության համար/, 2016

## **Չինական ակադեմիական գրադարան**

### **Ակադեմիական խորհուրդ**

Յետազոտող Գեն Յունջի, Չինաստանի հասարակագիտության ակադեմիայի արդի պատմության ինստիտուտ, Չինաստան

Պրոֆեսոր Չան Ջեն, Պեկինի օստար լեզուների համալսարան, Չինաստան

Յետազոտող Ջառ Շյուան, Չինաստանի հասարակագիտության ակադեմիայի ազգագրության և մարդաբանության ինստիտուտ, Չինաստան

Պրոֆեսոր Լի Սյուեցին, Ցինհուայի համալսարանի պատմության ֆակուլտետ, Չինաստան

Պրոֆեսոր Լի Ինին, Գուանհուայի կառավարման դպրոց, Պեկինի համալսարան, Չինաստան

Յետազոտող Լու Սյուեի, Յասարակագիտության ինստիտուտ, Չինաստանի հասարակագիտության ակադեմիա, Չինաստան

Պրոֆեսոր Վոն Յուն-ցու, Պատմության ֆակուլտետ, Վիրչինիայի պոլիտեխնիկական ինստիտուտ և պետական համալսարան, ԱՄՆ

Պրոֆեսոր Յու Քեփին, Յանալրման և քարզմանությունների կենտրոնական բյուրո, Չինաստան

Պրոֆեսոր Յուե Դայյուն, Չինարեն լեզվի և գրականության ֆակուլտետ, Պեկինի համալսարան, Չինաստան

Զու Ինհուան, «Չայնա Դեյլի» հրատարակչություն, Չինաստան

### **Մատենաշարի համակարգողներ**

Ցիթուն Ու, Օտար լեզվի դասավանդման և հետազոտության իրատարակչություն, Չինաստան

Չան Լի, «Սփրինգեր»

Սույն մատենաշարի մասին տեղեկատվության համար այցելեք  
<http://www.springer.com/series/11562> կայք

Յեղինակ՝

Իջեն Թան (1927-2014)

Պեկինի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետ,

Պեկին, Չինաստան

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|  |            |
|--|------------|
| <b>1. Կոնֆուցիականություն և կառուցողական հետմոդեռնիզմ</b> .....  | <b>10</b>  |
| 1.1 Ինչպիսի՞ դարաշրջանում ենք ապրում իհմա.....   | 10         |
| 1.2 Մտքի երկու միտումների վերելքը Չինաստանում 1990-ականներին.....  | 12         |
| 1.3 Չինական վերածննդի նոր պատմական ժամանակաշրջանում<br>և համաշխարհայնացման (գլոբալիզացիա) համատեքստում ավանդական<br>չինական մշակույթը կարող է դարձագմիկ ներդրում ունենալ նարդկային<br>հասարակության մեջ..... | 14         |
| 1.3.1 «Մարդու ու մշակույթը՝ որպես սերտորեն կապված կենդանի «համայնք»<br>և «Մարդու և երկնքի միասնություն».....   | 14         |
| 1.3.2 Կառուցողական հետմոդեռնիզմը, Երկրորդ լուսավորականությունը<br>և կոնֆուցիական ժենսյուեն (Բարության ուսուցում).....  | 16         |
| 1.3.3 «Մարդկայինի» սահմանումն ու «Մարդու իրավունքների»<br>ուսումնասիրությունը Լիի տեսանկյունից. ավանդական<br>չինական հասկացություն.....  | 18         |
| <b>2. Կոնֆուցիականության ժամանակակից կարևորությունը.....</b>   | <b>22</b>  |
| 2.1 Ինչո՞ւ ենք անդրադառնում «Կոնֆուցիականության ժամանակակից<br>կարևորությունը» թեմային.....  | 22         |
| 2.2 Կրթական և մշակութային շրջանակներում զանազան տեսակետներ<br>«Չինական դասականներին» և հատկապես կոնֆուցիականությունը<br>ուսումնասիրելու մասին.....   | 23         |
| 2.3 Որո՞նք են ժամանակակից մարդկային հասարակության իհմնախնդիրները..   | 28         |
| 2.4 Մարդու և բնության հարաբերությունը.....   | 29         |
| 2.5 Մարդու և մարդու հարաբերությունը.....   | 36         |
| 2.6 Մարմնի և մտքի հարաբերությունը.....   | 42         |
| Հղումներ.....  | 46         |
| <b>3. Չինական հերմենուստիկայի հետքերով.....</b>  | <b>48</b>  |
| 3.1 Արյո՞ք Չին Չինաստանում գոյություն ուներ «հերմենուստիկա» առարկան....  | 48         |
| 3.2 Արյո՞ք հնարավոր է պարզել մեկնաբանության ընդհանուր կաղապարները<br>չինացի դասականների ուսումնասիրության մեջ.....   | 53         |
| 3.2.1 Ցույն Չուանի՝ «Չուն Ցյուի» մեկնաբանությունը.....   | 55         |
| 3.2.2 Զի Ցիի՝ «Է Չինի» մեկնաբանությունը.....   | 57         |
| 3.2.3 Չան Ֆեյ Ցուի մեկնաբանությունը Լառ Ցուի մասին.....  | 64         |
| Բառացանկ.....  | 70         |
| Հղումներ.....  | 72         |
| <b>4. Զգացմունքը Յին դինաստիային նախորդած Ռուխստական բարոյական տեսության<br/>մեջ. «Դատու սկսվում Յինում» նախադասության բացատրությունը.....</b>   | <b>73</b>  |
| 4.1 «Դատու սկսվում է Յինում» պնդման մասին.....   | 73         |
| 4.2 Յինի վրա շեշտի պատճառը Յինին նախորդող ռուխստական շղանում.....  | 75         |
| 4.3 «Յինը բխում է Սինից» պնդման մասին 情生于性.....  | 78         |
| 4.4 Յինի և ցանկության տարբերակումը.....  | 80         |
| <b>5. Մտորումներ 1990-ական թվականների չինական մշակույթում Նոր<br/>կոնֆուցիականության մասին .....</b>   | <b>86</b>  |
| <b>6. Ներդաշնակ համայնքների խնդիրը Չին Չինաստանում.....</b>  | <b>100</b> |

|  |            |
|--|------------|
| <b>7. Կոնֆուցիականության զարգացման երրորդ փուլի հնարավորության<br/>հետազոտություն.....</b>   | <b>104</b> |
| <b>8. Ներունակությունն ու անդրանցականությունը Զինական չան<br/>բուդյականության մեջ.....</b>   | <b>109</b> |
| 8.1 Զինական չան բուդյականությունը չէր արժնորում սուրբ գրքերը,<br>չէր սահմանվում խոսքերով, բայց պնդում էր, որ պետք է ականջ դնել<br>հիմնական մտքին.....  | 109        |
| 8.2 Զինական չան բուդյականությունը կոտրում էր հնացած սովորույթները,<br>վերացնում մեղիտացիան (խորասուզում) և գնահատում էր միայն բնությունը<br>տեսնելն ու բուդյայության իրագործումը.....        | 113        |
| 8.3 Զինական չան բուդյականությունը չէր երկրպագում պատկերները,<br>այլ վիրապիրում էր բուդյաներին և համովիմանում վարպետներին,<br>բայց պնդում էր՝ «Նա, ով լուսավորված է մեկ մտքով, բուդյա է»..... | 116        |
| <b>9. Դնդկական բուդյայականության ներմուծումը Զինաստան. համեմատական<br/>փիլիսոփայության և համեմատական կրոնի ուսումնասիրությունների<br/>նշանակության հեռանկար.....</b>                         | <b>125</b> |
| 9.1 Դնդկական բուդյայականության ներմուծումը Զինաստան և<br>Պրաջնա ուսմունքների [բո-ժե ցյուե] դպրոցի մասսայականացումը<br>Վեյ և Զին ժամանակաշրջաններում.....                                     | 125        |
| 9.1.1 Բուդյայականության սկիզբը Զինաստանում.....  | 125        |
| 9.1.2 Աս Շիգաոն Շինայանա դպրոցից.....  | 129        |
| 9.1.3 Զի-լոռու-ձյա-ցյանը Մահայանա դպրոցից.....   | 132        |
| 9.2 Ներմուծված գաղափարական մշակույթի (բուդյայականություն) և<br>Զինաստանում արդեն իսկ գոյություն ունեցող գաղափարական<br>մշակույթի փոխագոյնեցությունը.....                                     | 149        |
| 9.2.1 Յարմարեցում ավանդույթին.....   | 150        |
| 9.2.2 Ավանդույթի հարստացումն ու ամրապնդումը.....   | 156        |
| 9.2.3 Յարաբերական գերազանցություն և իրական ավանդ.....  | 158        |
| 9.3 Փիլիսոփայությունների և տարածաշրջանների համեմատական<br>ուսումնասիրություն.....  | 161        |
| 9.3.1 Ընդհանուր օրենքի որոնումներ.....   | 162        |
| 9.3.2 Ուշադրություն մշակույթի հատուկ բնութագրին.....   | 164        |
| 9.4 Յին թեմաների և նոր հիմնախնդիրների մեկուսացումը.....  | 170        |
| <b>10. Ավանդական և ներմուծված մտքի ու մշակույթի հարաբերությունները<br/>Զինաստանում. բուդյայականության ներմուծումը.....</b>   | <b>173</b> |
| Բառարան.....   | 180        |
| <b>11. Դառ Դե Զինի (Թառ Թե Զիմ) մասին.....</b>   | <b>181</b> |
| <b>12. Դառսիզմի ծագումն ու բնութագիրը.....</b>   | <b>186</b> |
| 12.1 Ընդհանուր խորապատկեր.....   | 187        |
| 12.2 Դառսիզմի զարգացումը.....  | 191        |
| 12.3 Դառսիզմի բնութագիրը.....  | 195        |
| Բառարան.....   | 199        |
| <b>13. Զինաստանի Դառսական կրոնը.....</b>   | <b>200</b> |
| <b>14. Զինական և արևմտյան մշակույթները միմյանց կապելու<br/>Սարեն Ռիշիի փորձը.....</b>  | <b>206</b> |
| 14.1 Արևելյան և արևմտյան մշակույթների կապակցման եղանակները.....  | 208        |
| 14.1.1 Կարոլիկության կապակցումը կոնֆուցիականության հետ (Հերու).....  | 208        |
| 14.1.2 Լրացնելով կոնֆուցիականությունը (Բուրու).....  | 210        |

|  |            |
|--|------------|
| 14.1.3 Անդրամցելով կոնֆուցիականությունը (Չառորու).....   | 212        |
| 14.1.4 Համապատասխանություն կոնֆուցիականության հետ (Ֆուրու).....  | 212        |
| 14.2 «Մարմին և կիրառում» և չինական ու արևմտյան ներդաշնակության<br>հարաբերակցությունը.....  | 215        |
| <b>15. Չինական ծշակույթի հնարավոր կողմնորոշումները համաշխարհայնացման<br/>(գլոբալիզացիա) համատեքստում.....</b>  | <b>219</b> |
| 16. Չինական փիլիսոփայության պատմության ուսումնասիրության հեռանկարները և<br>ճշմարիտի, բարու ու գեղեցիկի հիմնախնդիրը Չինաստանի ավանդական<br>փիլիսոփայության մեջ..... | 226        |
| 16.1 Չինական փիլիսոփայությունը՝ որպես եռակի միացում.....   | 227        |
| 16.1.1 Երկնքի միացումը մարդուն. ծշնարիտը.....  | 227        |
| 16.1.2 Գիտելիքի միացումը պրակտիկային. բարին..  | 230        |
| 16.1.3 Զգացմունքի միացումը պատկերին. գեղեցիկը.....   | 233        |
| 16.2 Չինական փիլիսոփայության ուսումնասիրությունը<br>և մարդ լինելու պատճառը.....  | 235        |
| <b>17 Ավանդական չինական փիլիսոփայության կարգային համակարգին<br/>վերաբերող հարցեր.....</b>  | <b>238</b> |
| 17.1 Ավանդական չինական փիլիսոփայության համակարգի ուսումնասիրության<br>կարելորությունը.....   | 238        |
| 17.2 Ինչպես ուսումնասիրել ավանդական չինական փիլիսոփայության<br>հասկացություններն ու կարգերը.....   | 241        |
| 17.2.1 Հասկացությունների և կարգերի վերլուծություն.....   | 242        |
| 17.2.2 Հասկացությունների և կարգերի հմաստի զարգացման<br>վերլուծություն.....   | 244        |
| 17.2.3 Փիլիսոփամերի (կամ փիլիսոփայական դպրոցների) հասկացությունների<br>և կարգերի համակարգային վերլուծություն.....  | 246        |
| 17.2.4 Չինացի և օտարերկրյա փիլիսոփամերի հասկացությունների և կարգերի<br>նմանությունների ու տարբերությունների վերլուծություն.....                                    | 249        |
| 17.3 Ավանդական չինական փիլիսոփայության համակարգի փորձնական<br>տեսություն.....  | 251        |
| 17.4 Քննարկում.....  | 257        |
| <b>18. Նոր առաջընթաց Չինական փիլիսոփայության պատմության<br/>ուսումնասիրության մեջ.....</b>   | <b>261</b> |
| 18.1 Չինական փիլիսոփայության պատմություն՝ որպես չին ազգի<br>գիտելիքի պատմություն.....  | 261        |
| 18.2 Ավանդական չինական փիլիսոփայության<br>հասկացությունն ու կարգը.....   | 264        |
| 18.3 Ավանդական չինացի և օտարերկրյա փիլիսոփամերի<br>համեմատությունն ու վերլուծությունները.....  | 266        |
| 18.4 Համակարգ ստեղծելու համար ավանդական չինական փիլիսոփայության<br>կիրառած մեթոդը.....   | 268        |
| <b>19. «Ճշմարիտի, բարու և գեղեցիկի» հարցի վերանայումը ավանդական չինական<br/>փիլիսոփայության մեջ.....</b>   | <b>272</b> |
| 19.1 Կոնֆուցիոսի պահանջները կյանքի ոլորտից.....  | 273        |
| 19.2 Լաոցիի որոնումները կյանքի ոլորտում.....   | 278        |
| 19.3 Զուանցիի որոնումները կյանքի ոլորտում.....   | 285        |
| 19.4 Յակիրծ ամփոփում.....  | 291        |
| Չինարեն տառամշաններ.....   | 292        |

|   |            |
|---|------------|
| <b>20. Չինական ավանդական մշակույթներ և համատեղ կառավարում.....</b>  | <b>293</b> |
| <b>21. Չինաստանի մշակութային զարգացման հարցի ուսումնասիրություն.....</b>  | <b>297</b> |
| <b>22. Լուսավորականությունը և նրա բարդ ուղևորությունը Չինաստանում.....</b>  | <b>312</b> |
| 22.1 Տասնութերորդ դարի Եվրոպական «Լուսավորականության շարժումը»<br>և տասնվեցերորդ դարի՝ Մին դինաստիայի ուշ շրջանի «Մտքի լուսավորական<br>միտումը» Չինաստանում.....        | 312        |
| 22.2 Տասնիներորդ դարակեսի չինական հասարակությունն արևմուտքի<br>«Լուսավորականության» տիրույթում և նրա պայքարը՝ զանազան<br>խոչընդուներ հաղթահարելու ճանապարհին.....       | 314        |
| 22.3 Չինաստանի Լուսավորականությունը և նրա<br>«Գիտություն և ժողովրդավարություն» կարգախոսը. արդյո՞ք դրանք<br>իրականություն են դարձել.....                                 | 315        |
| 22.4 Ո՞ր է Լուսավորականության տեղը չինական հասարակության մեջ.....   | 316        |
| <b>23 Մշակութային բազմազանության գոյակցությունը. ներդաշնակության արժեքը<br/>բազմազանության պայմաններում.....</b>  | <b>319</b> |
| 23.1 Ներածություն.....  | 319        |
| 23.2 Ներդաշնակություն բազմազանության մեջ.....   | 320        |
| 23.3 Մշակութային ավանդույթների ընդհանրությունները.....  | 322        |
| 23.4 Տարածաշրջանային բազմազանությունը և մշակութային ընտրության<br>երկկողմանի բնույթը.....   | 323        |
| 23.5 Ամփոփում.....  | 325        |
| <b>24 Սարդկային քաղաքակրթությունների բախման և գոյակցության մասին.....</b>   | <b>327</b> |
| 24.1 «Քաղաքակրթությունների բախումը» և «Նոր կայսրության»<br>տեսությունը.....   | 327        |
| 24.2 «Քաղաքակրթությունների գոյակցությունը» և նոր առանցքային<br>դարաշրջանը.....  | 331        |
| 24.3 Չինական մշակույթը կարո՞ղ է ավանդ ունենալ քաղաքակրթությունների<br>գոյակցության գործում.....   | 337        |
| 24.3.1 Ժենի («, բարեգործություն, առաջնություն») կոնֆուցիական ուսմունքը<br>մտքի աղբյուր է, որը դրական նշանակություն է տալիս<br>«Քաղաքակրթությունների գոյակցությանը»..... | 337        |
| 24.3.2 ճանապարհի (թառ) բառուական ուսմունքը կարող է մտքի նշանակալի<br>աղբյուր լինել «Քաղաքակրթությունների բախումը» կանխելու համար.....                                   | 344        |
| <b>25 «Չինական փիլիսոփայության» կառուցումը չին-Եվրոպական մշակութային<br/>փոխանակումների համատեքստում.....</b>   | <b>348</b> |
| 25.1 Արևմտյան փիլիսոփայությունը և չինական փիլիսոփայությունը՝<br>որպես անկախ գիտակարգեր.....   | 350        |
| 25.2 Արևմտյան փիլիսոփայության հարացույցներն ու շրջանակները և Չինական<br>փիլիսոփայության հավանական խնդիրները.....  | 352        |
| 25.3 Չինական փիլիսոփայության ապագա զարգացումները.....   | 355        |
| Չինական եզրույթների բառարան.....  | 356        |

## ԳԼՈՒԽ 1

### Կոնֆուցիականություն և կառուցողական հետմոդեռնիզմ<sup>1</sup>

#### 1.1 Ինչպիսի՞ դարաշրջանում ենք ապրում իհմա

Ներկայիս դարաշրջանն աշխարհի տեսանկյունից գուցե կարելի է դիտարկել որպես անցում արդի կապիտալիստական հասարակությունից, որը սկսեց ձևավորվել տասնութերորդ դարի առաջին Լուսավորականությունից, ոեափ՝ «Երկրորդ լուսավորականության» հետմոդեռնիստական հասարակություն։ Չինաստանի տեսանկյունից՝ մեր դարաշրջանը դիտարկվում է որպես բախտորոշ պահ՝ համաշխարհայնության համատեքստում ազգային մեծ վերածննդի համար։ Ընդհանուր առնամբ, մարդկային հասարակության համար այս դարաշրջանը միանգանայն նոր ժամանակաշրջան մուտք գործելու անգին հնարավորություն է։

Տասնութերորդ դարի Լուսավորականության դարաշրջանից ի վեր արևմտյան կապիտալիզմն ունի համարյա 300 տարվա պատմություն, և այդ ժամանակահատվածում արևմտյան աշխարհը հասավ շլացնող «արդիացնան»։ Բայց այժմ, «արդիացված հասարակությունը» տառապում է ավելի ու ավելի բազմաբարդ խնդիրներից։ Եճանուիլ Կանտը (1724-1804) առաջարկում էր, որ բանականությունը պետք է լինի Լուսավորականության կարգախոսը, բայց մեր օրերում «բանականության» առաջ ծառացել են բարդ խնդիրներ։ Ի սկզբանե «բանականությունը» ներառում էր երկու կապակցված հայեցակետ՝ «օժանդակող բանականություն» և «արժեքային բանականություն»։ Երկուսն էլ խիստ կարևոր ունեն մարդկային առաջընթացի համար, բայց մերօրյա իրականության մեջ «գիտականրեն զորեղ» «օժանդակող բանականությունը» հաղթել է մարդասիրական «արժեքային բանականությանը», և վերջինիս դերը նվազել է։ Արդյունքում ամեն ինչ վերածվում է «գործիքի»։ մարդիկ դառնում են գործիք ուրիշների համար, իսկ բնական աշխարհը՝ գործիք, որն անհրաժեշտության դեպքում օգտագործվում է մարդ արարածների կողմից։ Մարդու և բնության բնականուն և ներդաշնակ հարաբերությունը խիստ վնասվել է մարդու անգուստ շահագործման, ոչնչացման և բնական ռեսուրսները վատնելու պատճառով։ Բայց այդ, բնության վատթարացող պայմանները՝ օգոնային շերտի սպառումը, թունավորված օվկիանոսները, աղտոտված շրջակա միջավայրը և անհավասարակշիռ էկո-միջավայրը, սպառնում են մարդու կյանքին։ Չնայած 1997 թվականի դեկտեմբերին ճապոնիայի կյոտո քաղաքում ստորագրվեց օդի աղտոտումը սահմանափակող արձանագրություն, կապիտալիստական աշխարհի որոշ զարգացած երկրներ զանազան խոշընդուներ կին ստեղծում նրա ճանապարհին։ Դրա վառ օրինակն է կանադայի վերջին հայտարարությունն առ այն, որ երկիրը նշադրություն ունի իրաժարվել արձանագրությունից։ Սա ցույց է տալիս, որ որոշ արևմտյան առաջնորդներ Լուսավորականության կողմից պաշտպանվող «բանականությունը» վերածում են «ոչ ռացիոնալ» և ուսիլիտար «գործիք»։

<sup>1</sup>. Դեկտեմբերի 23, 2011:

Արդյունաբերության գաղգացմանը գործահետ «ազատ շուկայական տնտեսությունը» նպաստել է մարդու հարստության ահօելի աճին, և մարդիկ խոշոր նյութական օգուտ են քաղել դրանից: Անժխտելի է նաև, որ այն լուրջ բևեռացում է առաջացրել հարուստների և աղքատների (այդ բվում և երկրների, ազգային խմբերի և երկրի ներսում գյոյություն ունեցող դասակարգերի) միջև: Եթե «ազատ շուկայական տնտեսությունը» շարունակի աճել ագահ հրեշի նման, առանց արդյունավետ վերահսկողության կամ զամանակ, վաղ թե ուշ որ ոա կիանգեցնի տնտեսական ճգնաժամի և հասարակական հուզումների: Համաշխարհային ֆինանսական ճգնաժամը, որն առաջին անգամ ի հայտ եկավ Միացյալ Նահանգներում 2008 թվականին, դեռ շարունակվում էր 2011 թվականին, երբ պարտքային ճգնաժամը սկսեց տարածվել Եվրոպայում: Ըստ Յեյլի համալսարանի պրոֆեսոր Փոլ Քենեդիի՝ ազատականությունը նարդկանց ազատեց նախաշուկայական դարաշրջանի կապանքներից, բայց նաև նրանց կանգնեցրեց ֆինանսական ճգնաժամի և հասարակական աղետների վտանգի առաջ<sup>2</sup>:

Լուսավորականության մյուս նշանաբանը՝ «անհատի ազատագրումը», ի սկզբանե թիրախսավորում էր կրոնական սնոտիհապաշտությունն ու գրեհիկ տգիտությունը՝ նարդկանց խրախուսելով ամբողջովին գիտակցել սեփական ուժը և լիարժեք կիրառել իրենց «ազատ» ստեղծարար միտքը: Սակայն այսօր այս գաղափարը վերածվել է ուրիշների հանդեպ գերիշխանություն հաստատելու գործիքի, որը մասնավորապես կայսերապետական երկրներն օգտագործում են՝ սեփական գերիշխանությունը պաշտպանելու և սեփական արժեքային համակարգն այլ երկրներին ու ժողովուրդներին պարտադրելու համար՝ առաջ քաշելով ունիվերսալիստական ուսմունքը<sup>3</sup>: Այսօրվա կապիտալիստական հասարակության աղավաղված զարգացումը հանգեցրել է նրան, որ մարդիկ այլևս չեն որոնում «քանականություն», այլ տարվում են իշխանության տարփանքով և փողի երկրպագությամբ: Յետևաբար, մարդկանց բոլոր խմբերն ապրում են ցավի ու մտավոր բախման պայմաններում: Սովորական մարդիկ պայքարում են թիրտ պայմաններում գոյատևելու համար, մնավորականները մշտապես մեղքի զգացում ունեն հասարակական քասար կարգավորելու անկարողության համար: Չկարողանալով շահել մարդկանց վստահությունը՝ քաղաքական գործիշները մշտական ինքնախաբեության մեջ են: Զեռնարկատերերը մաքառում են՝ փորձելով ճանապարհ հարթել երկուստեք հակասական օրենքների ու համակարգերի միջով: Անկախ դիրքից կամ ինքնությունից, բվում է, երջանիկ կյանքը, որին բոլորն են ձգտում, անհասանելի է, և երջանկությունը խուսափում է բոլորից: Բայց ոչ բոլոր անհատ-

2. Փոլ Քենեդի, «Կապիտալիզմի ձևը որոշ չափով կփոխվի», Ցանքառույառուի, մարտ 16, 2009թ.:

3. Ունիվերսալիզմ. որոշ արևմտյան գիտնականներ և քաղաքական գործչներ հավատացած են, որ միայն արևմտյան կայսրությունների քարոզած արժեքներն ունեն «ունիվերսալ արժեք», և որ մյուս բոլոր ազգերի գաղափարներն ու մշակույթները ոչ մի «ունիվերսալ արժեք» չունեն մերօրյա մարդկային հասարակության համար, բացի քանզարանային նմուշ լինելուց: Յետևաբար, մենք պետք է տարբերակենք «ունիվերսալիզմը» «ունիվերսալ արժեքից»: Այս հարցի շուրջ կարող եք նաև ուսումնասիրել թան հձեի հեղինակած «Ընդհանուր ներածությունը» «Զունգը ժուսուե Շի» գրքում, «Պեկինի համալսարանական հրատարակություն, 2011 թ. հոկտեմբեր»:

## 1.2 Մտքի երկու միտումների վերելքը Չինաստանում 1990-ականներին

1990-ականներին Չինաստանի գաղափարական և մշակութային շրջանակներում երևան եկավ «մոնիզմ» հասկացությանը հակադրվող երկու գաղափարական միտում: Դրանցից մեկը «հետմոդեռնիզմն» էր, որը ծագել էր արևոտքում և նպատակ ուներ կազմաքանդել «արդիությունը»: 1980-ականների սկզբին «հետմոդեռնիզմն» արդեն հասել էր Չինաստան, բայց այն ժամանակ նրա ազդեցությունը թույլ էր. սակայն 1990-ականների սկզբին չինացի գիտնականներն անակնկալ կերպով սկսեցին հետաքրքրությունը դրանով: Մյուս միտումը՝ «Գոյայության հոսանքը», ձգտում էր նոր ուժ հաղորդել ավանդական չինական մշակույթին: Իրականում 1980-ականներին Չինաստանի մտածողներն ավելի մեծ շեշտ էին դնում ավանդական չինական մշակույթի վրա, բայց այն մեծ ալիքի վերածվե միայն 1990-ականներին, երբ «Գոյայություն» հայտնվեց Պեկինի համալսարանում: Մեզ համար ի՞նչ նշանակություն ունեցավ այս երկու միտումների առաջացումը:

1960-ականներին, մարդկային հասարակությունը փրկելու և արդիականությանը ուղեկցող բացասական ազդեցությունը վերացնելու նպատակով նախ արևոտքում առաջ եկավ «հետմոդեռնիզմի» միտումը: Սկզբնական շրջանում հետմոդեռնիզմը «ապակառուցողական հետմոդեռնիզմ» էր, որն արդի հասարակության զարգացման ընթացքում ստեղծված խնդիրները լուծելու միջոց էր: Նրա նպատակն էր՝ կազմաքանդել արդիականությանը, դիմադրել մոնիզմին և պաշտպանել բազմակարծությունը, թուլացնել իշխանությունը և ստվերել արդիականության «հետինակությունն» ու «գերիշխող բնույթը»: Բայց ապակառուցողական հետմոդեռնիզմը առաջ չեղ քաշում ոչ դրական տեսակետներ, ոչ էլ նախագծեր տալիս գալիք դարաշրջանի համար:

Քսանմեկերորդ դարասկզբին «կառուցողական հետմոդեռնիզմը»՝ գործընթացային փիլիսոփայության վրա հիմնված գաղափարը, առաջարկում էր առաջին Լուսավորականության դրական տարրերն ընդգրկել հետմոդեռնիզմի մեջ՝ այդպիսով կոչ անելով սկիզբ դնել «Երկրորդ Լուսավորականությանը»:

Օրինակ, ըստ Ուայթենի գործընթացային փիլիսոփայության՝ «մարդը» չափետք է համարվի ամեն ինչի կենտրոն: Ավելին «մարդը և բնությունը պետք է ընկալվեն՝ որպես միմյանց հետ սերտորեն կապված համայնք»<sup>4</sup>: Ըստ գործընթացային փիլիսոփայության հիմնադիր Զոն Բ. Քորերի՝ «կառուցողական հետմոդեռնիզմը վերլուծական մոտեցում ունի ապակառուցողական հետմոդեռնիզմի հանդեպ... Մենք հետմոդեռնիզմի գաղափարի մեջ ներմուծել ենք բնապահպա-

4. Ըստ «Ուայթենի գործընթացային փիլիսոփայություն» աշխատության՝ «Գործընթացային փիլիսոփայությունը միջավայրը, ռեսուրսները և մարդ արարածներին դիտարկում է որպես միմյանց հետ սերտորեն կապված կենդանի համայնք»: «Հասարակագիտություն» շարաբարերը, օգոստոս 15, 2002թ.: Նույնիսկ Յին Յունաստանի ստոկները հավատացած էին, որ «մարդը բնության մի մասն է»:

նական հարցեր: Յետմողենիզմի դարաշրջանում մարդն ու մարդը պետք է գոյակցեն նույնքան ներդաշնակ, որքան մարդն ու բնությունը: Այս դարաշրջանն ինչ-որ դրական միտումներ կվերցնի արդիականությունից՝ միևնույն ժամանակ անցնելով երկվապաշտության (դուալիզմ), մարդակենտրոնության և տղամարդկային շովինիզմի սահմանները: Այս դարաշրջանը նպատակ ունի կառուցել հետմոդեռնիստական հասարակություն՝ հանուն ընդհանուր բարօրության»: Ըստ գործընթացային փիլիսոփայությամ եթե առաջին Լուսավորականության համախմբող կոչը «Եսի ազատությունն էր», ապա երկրորդ լուսավորականության կարգախոսը պիտի լինի «ուրիշների մասին հոգ տանելը» և (հետմոդեռնիստական հասարակության մեջ) «տարբերությունները հարգելը»: Նրանց կարծիքով՝ երբ մարդիկ օգտագործեն իրենց անհատական «ազատությունը»՝ նսեմացնելով համայնքը, նրանց «ազատությունն» անխուսափելիորեն կրուլանա: Յետևաբար, անհրաժեշտ է մերժել ազատության վերացական գաղափարը՝ հօգուտ խոր և պատասխանատու ազատությամ՝ առաջ բերելով պատասխանատվության և պարտականության գաղափարները և բացահայտելով ազատության և պարտականության ներքին հարաբերությունը: Արևոտտքում կառուցվածքային հետմոդեռնիզմը փոքրիկ ծյուղ է և չունի մեծ ազդեցություն, բայց Չինաստանում այս գրավել է մի խումբ գիտնականների ուշադրությունը, որոնք ձգտում են ազգային վերածննդի:

Կառլ Թեոդոր Յասպերսն իր «Պատմության ծագումը և նպատակը» աշխատությամ մեջ գրում է. «Մինչ օրս մարդկությունն ապրել է նրանով, ինչ եղել է Առանցքային ժամանակաշրջանում, ինչ մտածել ու արարել են այդ ժամանակահատվածում: Յուրաքանչյուր նոր վերընթաց թռչքի մեջ նա հիշողության թևով վերադառնում է այս ժամանակաշրջան և նորովի այրվում նրա կրակով: Այդ ժամանակից ի վեր Առանցքային ժամանակաշրջանի հիշողություններն ու հնարավորությունների զարթոնքը՝ վերածնունդը, հոգևոր խթան են եղել հասարակության համար: Ակունքներին վերադառնալու այս երևույթը հաճախ է կրկնվում Չինաստանում, Յնդկաստանում և արևմուտքում»<sup>5</sup>: Դրա վառ օրինակը 1990-ականների վերջի «Գոսյուե հոսանքն» է, երբ Չինաստանն ազգային երիտասարդացման գործընթացում էր, և հենց այս պատճառով կարևոր էր աջակցել վերածնված ազգային մշակույթին:

Իմ կարծիքով՝ ծցգրիտ պատճառն այն է, որ ավանդական չինական մշակույթը (Գոսյուե) մեկ դարից ավելի կրել է արևմտյան մշակույթի ազդեցությունը, և չինացի գիտնականները հնարավորություն են ունեցել մտորել մեր ավանդական մշակույթի շուրջ: Մենք սկսել ենք աստիճանաբար գիտակցել, թե մեր մշակույթի որ մասը պետք է զարգացնել, որը՝ անտեսել, և ինչը՝ յուրացնել: Ավելի քան 100 տարի չինացի գիտնականները փորձում են կլամել և յուրացնել «արևմտյան կրթությունը», և այս հանգամանքը միանշանակ ստեղծել է Գոսյուեից ավանդական իմաստով իր ժամանակակից կրկնորդին անցնելու հիմքերը: Նոր կամ արդի Գոսյուեն պետք է նշանակալի հոգևոր ուժ դարձնա Չինաստանի վերածննդի, ինչպես նաև մարդկային հասարակության «խաղաղության և զարգացման» համար: Սա

5. Կառլ Թեոդոր Յասպերս, «Պատմության ծագումն ու նպատակը», թարգմանիչ՝ Վեյ Չուայոն և այլք, Յուասյա հրատարակչություն, հունիս 1999, էջ 14:

Չինաստանին կօգնի բազմակողմանիորեն իրագործել «արդիականացումը», ինչպես նաև խուսափել այն դժվարին կացությունից, որում ներկայում հայտնվել է արևմտյան հասարակությունը:

Այլ կերպ ասած՝ նոր Գոյուուն պետք է հետևի Ֆանքեն Կայսինի սկզբունքին: Միայն Ֆանքենի (Վերադարձ ակունքներին) միջոցով կարող ենք Կայսին անել (նոր տարածք բացահայտել): Ֆանքենը մեզնից պահանջում է Գոյուունի էռթյան խոր ըմբռնում և ընդգծում է մեր իսկ մշակույթի հիմնարար բնույթը, մինչդեռ Կայսինը մեզնից պահանջում է Չինաստանի և մարդկային հասարակության առաջ ծառացած խնդիրների համակարգային ըմբռնում, խնդիրներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեն: Այս երկու հայեցակետերն անբաժան են. միայն Գոյուունի իրական էռթյունը խորապես ուսումնասիրելու դեպքում կարող ենք ճիշտ պահին նոր տարածք բացահայտել: Միայն մարդկային հասարակության խնդիրներին հավասարակշիր արձագանքելով կարող ենք ավելի լավ ներկայացնել և թարմացնել Գոյուունի էռթյունը, որպեսզի քսանմեծերորդ դարում Գոյուունի կրակը կրկին բորբոքվի Ֆանքեն Կայսինի սկզբունքից և նպաստի մարդկային հասարակության զարգացմանը:

Որո՞նք են մտքի այս երկու միտումների հեռանկարները Չինաստանում: Արդյո՞ք դրանք դրական ազդեցություն կունենան Չինաստանի և առհասարակ մարդկային հասարակության վրա: Այս հարցերին պատասխանելու համար մենք պետք է լիարժեք ուսումնասիրենք երկուսը միավորելու հնարավորությունը:

### **1.3 Չինական վերածննդի նոր պատմական ժամանակաշրջանում և համաշխարհայնացման (գլոբալիզացիա) համատեքստում ավանդական չինական մշակույթը կարող է դարակազմիկ ներդրում ունենալ մարդկային հասարակության մեջ**

Չինաստանն ազգային վերածննդի է ապրում, ինչի համար անհրաժեշտ է վերածնված ազգային մշակույթի աջակցությունը: Սակայն համաշխարհայնացման այս դարաշրջանում մեր ավանդական մշակույթի վերածնունդը պահանջում է ոչ միայն արձագանքել մեր սեփական հասարակական, այլև համաշխարհային խնդիրներին: Սրանից հետևում է, որ մեր ավանդական մշակույթի զարգացմանը գուգահեռ պիտի հիշենք, որ այն պատկանում է թե՛ Չինաստանին, թե՛ առհասարակ աշխարհին: Այն մեզնից պահանջում է ոչ միայն մեծ ուշադրություն դարձնել սեփական մշակույթի իրական զարգացմանը, այլև արևմտյան մշակույթի սաղմնավորվող միտումներին: Այստեղ հեղինակը կցանկանար քննարկման հնարավոր թեմա առաջարկել արդյո՞ք Գոյուունի և կառուցղական հետմողեռնիզմի համադրությունը (առաջինը ավանդական չինական, երկրորդ՝ արևմտյան ծագում ունեցող և նոր սաղմնավորված կրթությունն է) կարող է նպաստել Չինաստանի և ողջ աշխարհի առողջ և ռացիոնալ զարգացմանը:

#### **1.3.1 «Մարդն ու մշակույթը՝ որպես սերտորեն կապված կենդանի համայնք» և «Մարդու և երկնքի միասնություն»**

Ըստ Զոն Բ.Քոբերի՝ «Այսօր մենք ընդունում ենք, որ մարդը բնության մասնիկն է, և ապրում ենք էկոլոգիական համայնքում»: Թեև այս գաղափարն ուղղակիո-

րեն վերցված է Ուայրենից, այն շատ նման է ավանդական չինական հասկացությանը՝ Մարդու և Երկնի միասնությանը, որտեղ Երկինք ասելով ենթադրվում են բնության օրենքները: Որպես հիմնարար ավանդական չինական արժեք՝ այն մտածողության կերպ է և տարրերվում է «մարդու և բնության Երկատման» գաղափարից, որը Երկար ժամանակ գերակշռում էր արևմուտքում:

1992 թվականին 1575 հայտնի գիտնականներ ամբողջ աշխարհից ստորագրեցին և հրապարակեցին մի փաստաթուղթ, որ կոչվում էր «Աշխարհի գիտնականների գգուշացումը մարդկությանը»: Փաստաթորի առաջին տողն ասում է՝ «Մարդ արարածները և բնության աշխարհը բախման եզրին են»: Բնությունն ինչու՞ է այսքան անյացած: Անհնար է հերթել այն փաստը, որ «մարդ-բնություն Երկատման» գաղափարի Երկարատև գերակայության պատճառով բնությունը վերածվել է զոհիի<sup>6</sup>: Բարեբախտաբար, «Մարդու և Երկնի միասնության» գաղափարը բնական աշխարհի ոչնչացումը խանգարող իրագործելի միջոց է առաջարկում մեզ:

Դեռևս 2500 տարի առաջ Կոնֆուցիոսը մարդկանց հորդորում էր թե՝ «Ճանաչել Երկինքը» և թե՝ «Վախենալ Երկնից»: Առաջին նախազգուշացումը պահանջում է ավելին իմանալ բնության մասին և հետևաբար գիտակցաբար օգտագործել այն՝ մարդ արարածների բարեկեցությունն ապահովելու համար: Երկրորդը ստիպում է պատկառանքով վերաբերվել բնությանը և կատարել այն պաշտպանելու մեր պարտականությունը: Ըստ Յին Չինաստանի մեկ այլ մեծ մտածող Չու Սիի՝ «Երկինքն անբաժան է մարդուց, մարդը Երկնից»: Նրա խոսքով եղան Երկինքը ծնունդ է տալիս մարդուն, մարդու ու Երկնի միջև անբաժան կապ է հաստատվում, որը մարդուց պահանջում է մարմնավորել Երկնի օրենքները և պատասխանատվություն կրել դրա համար:

Ինչպես տեսանք, մարդու և բնության հարաբերությունը կարգավորելիս ավանդական չինական փիլիսոփայությունը գնում է գրեթե նույն ճանապարհով, ինչ կառուցղական հետմողեռնիզմը: Ինչպես Լեոն Վանդերմեերշն է գրում. «Արևմտյան մարդասիրությունը, որ աշխարհին պարզեց մի այնպիսի կատարյալ միտք, ինչպիսին մարդու իրավունքների գաղափարն է, այժմ կանգնած է արդի հասարակության բազմաթիվ մարտահրավերների առաջ, որոնց դեռևս հնարավոր չեն պատասխանել: Այդ դեպքում գուցե արժի խորիել այն մասին, թե արդյո՞ք կոնֆուցիական մտածողությունը կարող է առաջադիմական քայլ առաջարկել աշխարհին. օրինակ՝ բնության հանդեպ հարգանքը, որը ներառում է «մարդու և Երկնի միասնության» գաղափարը, և մարդասիրական ոգին, ըստ որի «բոլոր մարդիկ եղբայրներ են»: Մենք կարող ենք և պետք է կոնֆուցիական ուսմունքի երթյունը կիրառենք աշխարհի ընթացիկ խնդիրները լուծելիս, պետք է դրանք ու-

6. Բերտրան Ռասել, «Արևմտյան փիլիսոփայության պատմություն», թարգմ.<sup>7</sup> Սա Յուանդե, «Կոնֆուցիոն հրատարակություն», օգոստոս 1988 թ.: Այս թարգմանության վերջին հասորի 91-րդ էջում գրված է. «Դեկարտի փիլիսոփայությունը Եղրափակեց կամ գրեթե Եղրափակեց հոգու և նյութի Երկվասպաշտությունը (դուալիզմ), որը սկսվել էր Պլատոնից և զարգացել քրիստոնեական փիլիսոփայության մեջ՝ կրոնական պատճառներով... Ըստ Դեկարտի համակարգի՝ հոգևոր և նյութական աշխարհները Երկու գուգահեռ և անկախ աշխարհներ են, և մեկի ուսումնասիրությունը, հնարավոր է, չներառի մյուսը»:

սումնասիրենք նորովի, այլ տեսանկյունից»<sup>7</sup>:

Ինչու՝ Վանդերմեերշը մարդու իրավունքների մասին արևմտյան մտածողությունը համակցում է չինական մտածողության՝ վերոնշյալ երեք հասկացությունների հետ: Ինչպես գիտենք, մարդու իրավունքները շատ կարևոր են մեզ համար, որովհետև մարդը չանուուր է զրկվի ազատության իրավունքից, և հասարակական առաջընթացի կարելի է հասնել միայն «մտքի ազատության», «խոսքի ազատության», «դավանանքի ազատության», «ազատ տեղաշարժման իրավունքի» և այլնի շնորհիվ: Սակայն մարդու իրավունքները պաշտպանելու ձևերի հարցը հաճախ դառնում է արտաքին ուժերի միջամտության, նույնիսկ ոչնչացման առարկա: Խնդիրն առկա է թե՝ Չինաստանում, թե՝ նրա սահմաններից դուրս: Որոշ արևմտյան մտածողներ և քաղաքական գործիչներ ընդլայնում են մարդու իրավունքների հասկացությունը՝ ընդուած հասնելով նրան, որ սահմաններ չկան, և մարդու կարող է ցանկության դեպքում ոչնչացնել բնությունը: Այսպիսով, Վանդերմեերշը պնդում է, որ պեսուր է դրոշակիորեն սահմանափակել մարդու իրավունքները բնության նկատմամբ, իսկ դրա համար անհիրածեցած է օգտագործել նրանց միասնության գաղափարի նշանակալի փիլիսոփայական արժեքը:

Ըստ քրիստոնեական համոզմունքի՝ Աստված ստեղծել է աշխարհը կատարյալ, և մարդն անկարող է կատարելագործել այն: Սակայն, Վանդերմեերշի կարծիքով, երբ Աստված ստեղծեց ողջ աշխարհը, մնացած ամեն բան դարձավ մարդու խնդրու առարկան: Ինչպես ֆրանսիացի գրող Անդրե Միջն է գրում, «Աստված առաջարկում է, մարդը՝ տնօրինում»: Կոնֆուցիական այն տեսակետը, որ «բոլոր մարդիկ եղբայրներ են», կապվում է մեկ այլ ավանդական չինական գաղափարի, մասնավորապես՝ «համաշխարհային աշխարհայացքի» հետ: Սա ենթադրում է, որ մարդու բարձրագործ իդեալը «ամբողջական աշխարհն» է (կամ՝ աշխարհը Մեծ ներդաշնակության մեջ): Ինչպես գրված է «Մեծ ուսմունքում», կարևոր է զարգացնել բարոյական կերպարը, լավ հոգ տանել ընտանիքի մասին, իրաշալի կառավարել պետությունը և այդպիսով ամրող աշխարհը դարձնել խաղաղ ու ներդաշնակ: Ցանկացած երկրի կամ ազգի համար կարևոր է նկատի առնել ոչ միայն սեփական շահերը, այլև «աշխարհի խաղաղությունը» (այն է՝ մարդկության ընդհանուր շահերը), ինչը, իմ կարծիքով, պեսուր է լինի «մարդու իրավունքների» ներհատուկ իմաստը: Այլ կերպ ասած ցանկալի է, որ մարդու իրավունքների շուրջ արևմտյան մտածողությունը այլ երկրների (օրինակ՝ Չինաստանի) ավանդական մտածողության և մշակույթի մեջ փնտրի արժեքավոր տարրեր, որոնք կարող են լրացնել ու հարստացնել իր մոտեցումը և այդպիսով ավելի ողջամիտ ուղղու վրա դժու մարդկային հասարակությունը:

### **1.3.2 Կառուցողական հետմոդեռնիզմը, Երկրորդ լուսավորականությունը և կոնֆուցիական ժենսուլեն (Բարության ուսուցում)**

Ըստ կառուցողական հետմոդեռնիզմի՝ եթե առաջին Լուսավորականության նշանաբանը «անհատի ազատությունն է», ապա Երկրորդինը պիտի լինի «ուրիշների մասին հոգ տանելը» և «հարգանքը տարբերությունների համարեա»<sup>8</sup>: Առաջի-

7. Լեռն Վանդերմեերշ, «Ժուացանի (Կոնֆուցիական ժողովածու) կարևորությունը աշխարհում, «Գուանմիմ օրաթերթ», օգոստոս 31, 2009թ.:

Նը կարելի է նկարագրել որպես ժեն (բարություն), կոնֆուցիական դպրոցի հիմնարար արժեք: Ժենի ելակետն ու հիմքը «ընտանիքի հանդեպ սերն է», բայց ըստ Կոնֆուցիոնսի՝ մենք պիտի տարածենք ժենը ոչ միայն ընտանիքի անդամների վրա, այլև ընտանիքից դուրս: Նույն կերպ նաև, ինչպես սովորեցնում էր Մենցիոնը՝ Կոնֆուցիոնսի կարևոր հետմողմերից մեկը, «Բացի քո ազգակից տարեցների ու երեխաների մասին հոգ տանելուց հոգատարությունն տարածիր նաև այլ ընտանիքների տարեցների ու երեխաների վիա»: Նա նաև ամրում էր, որ ընտանիքի հանդեպ սերը ուրիշներին սիրելու, իսկ ուրիշներին սիրելը՝ բոլոր մարդ արարածներին սիրելու նախադրյալ է»:

Մենցիոնի մտածողությունը նաև համահունչ է «ուրիշների մասին հոգ տանելու» գաղափարին, որն առաջարկում է կառուցողական հետմողեռնիզմը: Ըստ կառուցողական հետմողեռնիզմի գիտնականների՝ նրանց փիլիսոփայությունը փորձում է «կառուցել հետմողեռնիստական աշխարհ, որտեղ բոլոր կենդանի համայնքներն արժանանում են պատշաճ ուշադրության և հոգատարության՝ «արդիականության որոշ դրական գործոնների պահպանման» հիմքի վրա (հիմնականում այնպիսի արժեքավոր հասկացությունների, ինչպիսիք են «ազատությունը», «ժողովրդավարությունը», «մարդու իրավունքները» և այլն, որոնք արևմտյան մտածողներն առաջարկում են բանականության հիմքի վրա)<sup>9</sup>: Սա կարելի է համարել «ուրիշների մասին հոգ տանելու» ավելի բազմակողմանի նկարագրություն: Մարդկային հասարակության զարգացման ընթացքում մշակույթը մշտապես անցնում է կուտակման, ժառանգության և արարման գործընթացով: Հետմողեռնիստական հասարակությունը պետք է պահպանի արդիականության դրական գործոնները, ինչպիսիք են «ազատությունը», «ժողովրդավարությունը», «մարդու իրավունքները», և այլն, մինչ լիարժեքորեն կդրսնորվի «հետմողեռնիստական աշխարհի կառուցման կարևորությունը, որտեղ բոլոր կենդանի համայնքները կարժանանան համապատասխան ուշադրության և հոգատարության»: «Դարգանքը տարբերությունների հանդեպ» կարելի է ընկալել՝ որպես «ճանապարհները գուգահեռ են և չեն հատվում» կոնֆուցիական հիմնավորումն արտահայտելու մեկ այլ ձև:

Տարբեր գաղափարախոսական և մշակութային ավանդույթներ օժտված են տարբեր հատկություններով: Բարեբախտաբար, այս տարբերությունները կարող են որոշակի նշանակություն ունենալ մարդկային հասարակության համար և պարտադիր չեն, որ հակասեն միմյանց<sup>10</sup>: Օրինակ, «ժողովրդավարություն» գաղափարը, որը, ըստ արևմտյան մտածողության, դրական նշանակություն ունի յուրահատուկ հասարակական պայմաններում, չի հերքում, որ ավանդական չինական

8. Վան Զիիե, «Երկրորդ լուսավորականության հետմողեռնիստական կոչերը», Յամաշիարհին մշակույթի ֆորում, Վեներա 2007:

9. «Դանուն համընդհանուր բարօրության». հարցազրոյց Զոն Բ. Քորերի հետ (հարցազրոյցը վարեց Վան Սյահուամ), «Դասարակագիտություն» շաբաթերը, Շամիա, 13 հունիսի, 2002:

10. Ըստ Զայի «Կերացնելով անտեղյակությունը» գորի «Գերագույն ներդաշնակություն» բաժնի՝ «Ամեն ինչ ունի իր հակառակ կողմը և պետք է շարժվի երևույթին հակառակ: Եթե հակառակը շարժվում է երևույթի դեմ, նրանց միջև կորիվ է ծագում: Քանի դեռ կորիվ կա, ամեն ինչ կավարտվի ներդաշնակությամբ»:

մտածողությունը, օրինակ՝ Մինքնէնը (մարդիկ՝ որպես արմատ) նույնագեն դրական նշանակություն ունի յուրահատուկ հասարակական պայմաններում: Մենք նաև չենք հերքում մեր ավանդական մտքերի «համընդհանուր արժեքը», օրինակ՝ «Դիմացինիդ հետ վարվիր այնպես, ինչպես կցանականայիր, որ քեզ հետ վարվեն»: Տարբեր երկրներն ու ազգերը կարող են համատեղ ապրել և բարգավաճել, եթե ընդունեն, որ յուրաքանչյուր գաղափարական և մշակութային ավանդույթ իր դրական ազրեցությունն ունի մարդկային հասարակության վրա: Մշակույթի զարգացման հիմնական միջոցը տարբեր մշակութային համակարգերի ուժեղ կողմերի յուրացումն ու կլանումն է՝ դրանք իրականում ընթանելու նպատակով: Ինչպես Ուասելն է գրում, «Անցյալում բազմիցս ապացուցվել է, որ տարբեր քաղաքակրթությունների փոխանակումները ուղենչային են եղել մարդկային քաղաքակրթությունների զարգացման համար»<sup>11</sup>: Մենք պետք է հիշենք, որ որպես մարդ արարածներ՝ կանգնում ենք ընդհանուր խնդիրների առաջ: Կարող ենք յուրացնել այդ խնդիրները լուծելու տարբեր միջոցներ, բայց հաճախ տարբեր ճանապարհներով հասնում ենք նույն եզրահանգնան: Դետևաբար, «հարգիր ուրիշներին» և «ճանապարհները գուգահեռ են և չեն հատվում» արտահայտությունները հանարժեք են մեզ համար:

### **1.3.3 «Մարդկայինի» սահմանումն ու «Մարդու իրավունքների» ուսումնասիրությունը Լիի տեսանկյունից. ավանդական չինական հասկացություն**

«Մարդու իրավունքներ» հասկացությունը շատ կարևոր է արդի հասարակության համար: Բայց յուրաքանչյուր գաղափարական և մշակութային ավանդույթ պետք է խորությամբ քննարկի, թե ինչ անել, որպեսզի այն դրական դեր խաղա առողջ և ռացիոնալ հասարակություն կառուցելու գործում: Ինչպես գրված է երկու հայտնի ամերիկացի փիլիսոփաներ Յոլի ու Եյսի համահեղինակած «Մտածել Կոմֆուցիոսի միջոցով» գրքում, «անհրաժեշտ է ոչ միայն ուսումնասիրել չինական ավանդույթները, այլև կիրառել որպես մշակութային ռեսուրս՝ մեր իսկ մշակույթը հարստացնելու և վերակառուցելու համար: Կոնֆուցիական դպրոցը սահմանում էր «մարդուն» հասարակական տեսանկյունից: Արդյո՞ք կարող ենք օգտագործել դա՝ ազտականության արևմտյան տեսակը ծնափոխելու և ամրապնդելու համար: Կարո՞ղ ենք որևէ օգտակար աղբյուր վերցնել լիի հիման վրա կառուցված հասարակությունից (ծիսակատարություններ, քաղաքավարություն, արարողություն և այլն), որը մեզ կօգնի ավելի լավ հասկանալ մեր ոչ շատ արմատավորված, բայց անշուշտ արժեքավոր տեսակետը մարդու իրավունքների մասին»<sup>12</sup>:

Այս հատվածում քննարկվում է երեք հիմնախնդիր. առաջինն այն է, որ

11. «Չինական և արևմտյան մշակույթների համեմատությունը» Ուասելի «Ազատ մարդու երկրպագում» գրքում, Ժամանակակից գրականության և արվեստի հրատարակություն, ապրիլ 1988 թ.: Չինարեն բարգմանությունը փոքր-ինչ փոխված է:

12. «Մտածել Կոմֆուցիոսի միջոցով», Պեկինի համալսարանի հրատարակչություն, օգոստոս 2005թ.:

արևմուտքը չպետք է դադարի չինական մտածողության և մշակույթի ուսումնասիրությունը, այլ շարունակի կիրառել այնպես, որ «հարստացնի ու վերակառուցի» իր իսկ մշակույթը. Երկրորդ, «մարդու» կարևորության ըմբռնման անհրաժեշտությունը, որն ավանդական չինական մշակույթի մեջ սահմանվել է հասարակական տեսանկյունից. և Երրորդ, այն, որ Չինաստանի լին պարունակում է տարրեր, որոնք կարող էին արժեքավոր լինել մարդու իրավունքների արևմտյան հասկացություն ներմուծվելու դեպքում:

Իմ կարծիքով՝ Յոլի և Եյսի առաջադրած Երեք հիմնախնդիրների տեսանկյունից որոշ արևմտյան փիլիսոփայական հասկացություններ «բավարար չափով արմատավորված չեն»: Արդի հասարակության մեջ մարդու ազատագրման իրավունքին տրվող մեծ կարևորության շնորհիվ (առաջին Լուսավորականությունից ի վեր) մարդկային հասարակությունն արագորեն զարգացել է: Ազատագրման իրավունքը մեծ ստեղծարար ուժ է: Դրա սխալ կիրառումն անհատի, Երկրի կամ ազգի կողմից որոշակի հանգամանքներում կարող է սպառնալիք դառնալ այլ անհատների, Երկրների կամ ազգերի իրավունքների ճնշման կամ բռնության համար: «Մարդկայինի» սահմանումը հասարակական տեսանկյունից, ինչպես ընդունված է ավանդական չինական մշակույթում, նշանակում է «չսահմանել այս անհատի մեկուսացման տեսանկյունից», որովհետև «մարդիկ» ծննդի պահից ի վեր պետք է ապրեն ու մեծանան զանազան հարաբերությունների մեջ: Սա նման է նրան, ինչ Կառլ Մարքսը գրում է «Թեզիսներ Ֆոյերբախի մասին» աշխատությունում. «Մարդու հությունը վերացարկում չէ, որ հասուկ է յուրաքանչյուր անհատի: Իրականում դա հասարակական հարաբերությունների համախումը է»<sup>13:</sup>

Այդ դեպքում ինչպես՝ ս վարպենք «մարդու հասարակական հարաբերությունների» բարդույթի հետ: Յին Չինաստանում այս հարաբերությունները կարգավորելիս հիմնական շեշտը դրվում էր լիի վրա: Չնայած լին հասկացական երևույթ էր, այն մարդու վարքագիծը սահմանափակող ուժ ուներ: Ինչպես գրված է Կոնֆուցիոսի «Չրույցներ և ասույթներում»,

«լիի կանոնները կիրառելիս անհրաժեշտ է արժևորել ներդաշնակությունը»: Լիի ամենակարևոր ները հասարակական ներդաշնակությանը՝ որպես հասարակությունը հավասարակշռող ուժին նպաստելու է: Ինչպես գրված է «Ծեսերի գրքում», «կառավարիչները լին օգտագործում են՝ բարոյականությունը պաշտպանելու, իսկ օրենքները՝ մարդկանց կողմից հանցանքներ թույլ չտալու համար»: Կառավարիչները ստեղծում էին լին, որպեսզի թույլ չտան բարոյական նորմերի ոչնչացումը և գրում էին օրենքներ՝ հասարակական կարգը պահպանելու համար: Ինչպես գրված է նախկին Չան դինաստիայից Չյա իի «Կառավարման բացատրություն» գրքում, «Լին կիրառվում է, մինչ մարդիկ սխալ քայլ կանեն, մինչդեռ օրենքն ի կատար է ածվում այն բանից հետո, երբ մարդիկ վատ արարք են գործում: Օրենքի դերը տեսանելի է, մինչդեռ լիի դերը՝ անտեսանելի և անշոշափելի»: Սեր ավանդույթի մեջ լին բարձր գնահատելու մյուս պատճառը, ինչպես առաջ է քաշում կոնֆուցիական դպրոցը, մարդկանց փոխադարձ հարաբերությունների կարևորությունն է: Ինչպես գրված է «Ծեսերի գրքում», «Ո՞րն է մարդկային արդարամտությունը: Այն ներառում է տասը (կամ հինգ զույգ) ներանձնային հարաբե-

13. Կառլ Մարքսի և Ֆրիդրիխ Էնգելսի աշխատությունների լիակատար ժողովածու, հասոր 3, էջ 5:

րություն. հայրը բարյացակամ է Երեխաների հանդեպ, իսկ Երեխաները որդիական հնագանություն են ցուցաբերում ծնողներին. Եղբայրները բարյացակամ են միմյանց հանդեպ, ամուսինը պատասխանատու է կնոջ համար, կինը հնագանդ է ամուսնուն, ավագ Երեխաները բարյացակամ են կրտսերների հանդեպ, կրտսերները հարգում են ավագներին, կառավարիչը բարյացակամ է, Ենթակաները՝ հավատարիմ»: Այսինքն՝ ըստ կոնֆուցիական դպրոցի՝ մարդկանց միջև բարոյական հարաբերությունները պետք է լինեն իրավունքների և համապատասխան պարտավորությունների հարաբերություն, և ոչ թե իրավունքների միակողմանի վայելք՝ առանց պարտավորությունների կատարման: Չինաստանի լին ստեղծվել է միանշանակ այդ հասարակական հարաբերությունների իրավունքները և պարտականությունները հավասարակշռելու համար: Յետևաբար, արդյո՞ք հնարավոր է ասել, որ Չինաստանի մինչարդիական հասարակությունը «լիի և օրենքի տիրապետության տակ» էր: Սա, անշուշտ, կոնֆուցիական դպրոցի հիեալն է:

Այստեղից կարևորոր վոլում է ոչ միայն «մարդու իրավունքների», այլև միաժամանակ «պարտավորությունների կոնվենցիայի կնքումը», որի շնորհիվ կպահպանվի իրավունքների և պարտավորությունների հավասարակշռությունը: Սա համընկնում է Շառա հետ, ինչը Հոլը և Էյմսը համարում են լիի հնարավոր դեր, այս է մարդու իրավունքների արևմտյան հասկացության «հարստացում և վերակառուցում»: Բավական է միայն պատկերացնել «պարտավորությունների կոնվենցիան», որը պաշտպանում և ամրապնդում է «մարդու իրավունքների կոնվենցիան»:

Ըստ Զոն Բ.Քոբերի՝ «ավանդական չինական գաղափարախոսությունը շատ գրավիչ է կառուցղական հետմողեռնիզմի համար, բայց մենք չպետք է հենց այնպես վերադառնանք դրան: Փոխարենը, մեր հետմողեռնիզմը պետք է նորացվի լուրջ գիտական միջոցներով և հարմարվի փոփոխվող հասարակությանը: Մինչնոդեռնիստական ավանդությը պետք է յուրացնի Լուսավորականության դրական գործոնները, այն է՝ անհատական իրավունքների հանդեպ հոգածությունն ու հարգանքը, և միայն դրանից հետո կկարողանա որոշակի ներդրում ունենալ հետմոդեռնիստական հասարակության մեջ»<sup>14</sup>: Այս պարերությունը մեծ նշանակություն ունի մեր գաղափարախոսության և մշակույթի ուսումնասիրության համար: Ավանդական կամ մինչարդիական չինական մշակույթը կարիք ուներ յուրացնել, և ոչ բացառել Լուսավորականությունից ի վեր արդի հասարակության ծեռք բերած բոլոր արժեքավոր պտուղները, ինչպիսիք են ազատությունը, ժողովրդավարությունը, մարդու իրավունքները, և այլն, այսինքն՝ հասկացություններ, որոնք մարմնավորում են «անհատական իրավունքների հանդեպ հոգածությունն ու հարգանքը»: Ի լրումն դրա, մենք պիտի տրնաջան աշխատենք՝ այս դրական հասկացությունները գործնականում կիրառելու համար, և միայն դրանից հետո կկարողանանք ավանդական կամ մինչմոդեռնիստական չինական մշակույթը հաջողությամբ հաճածայնեցնել հետմոդեռնիզմի հետ և նպաստել հասարակության անցմանը արդիականությունից հետարդիականություն:

Ցանկալի է նշել, որ որոշ չինացի գիտնականներ խորապես շփվել և համագործակցել են կառուցղական հետմոդեռնիզմի արևմտյան գիտնականների

14. «Յանուն համընդհանուր բարօրության», հարցագրույց Զոն Բ.Քոբերի հետ (հարցագրույցը վարել է Վան Միանուան), Յասարակական գիտություններ շաբաթաթեր, Ծանհայ, հունիս 13, 2002 թ.:

հետ: Կառուցղական հետմոդեռնիզմի ներկայացուցիչները նաև գիտակցել են ավանդական չինական մշակույթի արժեքն իրենց հետազոտության համար և յուրացնում են այն: Նաև որոշ չինացի գիտնականներ նկատել են կառուցղական հետմոդեռնիզմի գործնական նշանակությունը դժվար կացությունից մարդկային հասարակությանը դուրս բերելու գործում, և մեծ ուշադրություն են դարձնում այս մտքի զարգացմանը: Եթե մեծ ազդեցություն ունեցող «Գոսյուն հոսանքի» և կառուցղական հետմոդեռնիզմի միջև հնարավոր լինի հաստատել օրգանական սինթեզ, որը սկզբում խոր արմատներ կունենա չինական հասարակության մեջ և կզարգանա հետազայում, Չինաստանը գուցե կարողանա հեշտությամբ իրազործել իր իսկ «առաջին լուսավորականության» առաքելությունը՝ արդիականացումը, ապա արագորեն մուտք կգործի հետարդիական հասարակություն, որը նշագրել է «Երկրորդ լուսավորականությունը»: Եթե խնդիրն իրականացվի, Չինաստանի ընթացիկ մշակութային վերածննդի ընթացքում քաղված պտուղները մեծ նշանակություն կունենան մարդկության պատմության համար:

Այս աշխատության մեջ հեղինակն ուսումնասիրում է արևմտյան և չինական մշակույթների հաղորդակցման և միավորնան հնարավորությունը: Արդյո՞ք այդ հնարավորությունը կդառնա իրականություն, կախված է հիմնականում նրանից, թե Չինաստանի Գոսյունն ինչպես կկարողանա հարմարվել առողջ հասարակական զարգացմանը, և արդյոք կառուցղական հետմոդեռնիզմը, որ ներկայում մտածողության մի փոքրիկ ճյուղ է արևմուտքում, կկարողանա գերիշխող դիրք գրավել և արժանանալ համընդիմանուր ընդունելության: Յեղինակը շեշտում է, որ այս գիրքը պարզապես տեսական փորձ է, և մենք ուրախ կլինենք լսել ձեր մեկնաբանությունները:

## ԳԼՈՒԽ 2

### Կոնֆուցիականության ժամանակակից կարևորությունը<sup>15</sup>

#### 2.1 Ինչո՞ւ ենք անդրադառնում «Կոնֆուցիականության ժամանակակից կարևորությունը» թեմային

Ես քանիցս ելույթ եմ ունեցել «Կոնֆուցիականության ժամանակակից կարևորությունը» թեմայով, այդ թվում և անցյալ դարի 1980-1990-ականներին: Եվ այժմ՝ քսանմեկերորդ դարում, շարունակելու եմ անդրադառնալ այդ հարցին: Ինձնից բացի ավելի ու ավելի մեծ թվով գիտնականներ սկսել են իրենց տեսակետը հայտնել այս թեմայի շուրջ: Ինչո՞ւ: Կարծում եմ՝ կա երկու կարևոր պատճառ. մեկն այն է, որ մենք Չինաստանի ազգային մեծ վերածննդի շեմին ենք: Ուստի այժմ պետք է վերանայենք մեր պատճական և մշակութային ավանդույթը: Կառլ Յասպերսը ներկայացրել է «Առանցքային դարաշրջան» գաղափարը: Նրա կարծիքով՝ մեծ մտածողները Չին Չունաստանում, Խորայելում, Չնդկաստանում, Չինաստանում և այլ երկրներում ի հայտ են եկել համարյա միաժամանակ՝ մթա. 500 թվականին, և բոլորը յուրահատուկ գաղափարներն են ներկայացրել այնպիսի խնդիրների շուրջ, որոնք վերաբերում են բոլոր մարդ արարածներին: Արիստոտելը և Պլատոնը Չին Չունաստանում, հուդայականության մարդարեները Խորայելում, Չակյանունին Չնդկաստանում և Լաոցին ու Կոնֆուցիոսը Չինաստանում միմյանցից անկախ նախաձեռնեցին և ձևավորեցին առանձնահատուկ մշակութային ավանդույթներ: Զարգացման 2000 տարիների ընթացքում այս մշակութային ավանդույթները կենտրոնական տեղ են գրադեցրել մարդկային մտավոր հարստության մեջ, բայց այս տարբեր մշակույթներն ի սկզբանե իրարից անկախ են զարգացել տարբեր տարածաշրջաններում և չեն ազդել միմյանց վրա: Նրա խոսքով՝ առ այսօր մարդկությունն ապրել է ըստ նրա, ինչ մտածվել ու ստեղծվել է Առանցքային դարաշրջանուն: Յուրաքանչյուր նոր վերելքի ժամանակ մարդկությունը հիշողություններով վերադառնում է այս ժամանակաշրջան և նորովի բոցավառվուն նրանից: Այդ ժամանակից ի վեր Առանցքային դարաշրջանի հնարավորությունների հիշողություններն ու զարթոնքը՝ վերածնունդը, միշտ հոգևոր խթան է եղել մարդկության համար: Վերադարձն արմատներին շարունակաբար կրկնվում է Չինաստանում, Չնդկաստանում և Արևմուտքում (տես՝ Յասպերս, 1989, էջ 14): Օրինակ, Եվրոպացիները վերածննդի շրջանում հայացք էին նետում դեպի իրենց մշակույթի արմատները՝ Չին Չունաստան, որը վերածնեց Եվրոպական քաղաքակրթությունն ու իր հետքը թողեց համաշխարհային մշակույթի վրա: Նույն կերպ Չինաստանի Սուն և Մին դինաստիաներում հնդկական բուդդայականությունը խթանեց ներկոնֆուցիականությունը: Կոնֆուցիական մտածողները, Ցին դինաստիայից առաջ «հիշելով» Կոնֆուցիոսին ու Մենցիոսին, չինական փիլիսոփայությունը հասցել էին նոր բարձունքների: Սուտք գործելով նոր հազար

15. «Փիլիսոփայության սահմանները Չինաստանում», 2008 3 (4): 477-501 Թարգմանությունը՝ Յան Սիմի «Չյանհան Լումբանից» 江汉论坛 (Չյանհան Թրիբյուն), 2007, (1): 5-14:

րամյակ՝ աշխարհի մտավորականները «Նոր առանցքային դարաշրջանի» կոչ էին անում: Ուստի, կարևոր է վերանայել և հետազոտել հնագույն մտքերն ու ինաստությունը և իշել մեր մշակույթի սկզբնադրյուրը՝ նոր, բազմազան համաշխարհային մշակույթին արձագանքելու համար: Երկրորդ, նոր դարում մեր երկիրը ձեռնարկել է մեծ նախագիծ, որի նպատակը «ներդաշնակ հասարակություն» կառուցելն է: Ֆեյ Սյառթունը բարձրացրել է «մշակութային ինքնագիտակցության» հիմնախնդիրը: «Ներդաշնակ հասարակություն» կառուցելու համար մենք նախ պետք է ճանաչենք մեր իսկ «մշակույթը»: Ի՞նչ է «մշակութային ինքնագիտակցությունը»: Ֆեյ Սյառթունը «Մարդասիրական արժեքի վերանայում» աշխատության մեջ գրում է.

Մշակութային ինքնագիտակցությունը ցույց է տալիս, որ որևէ մշակույթի համատեքստում ապրող մարդիկ ունեն իրենց սեփական մշակույթի «գիտակցությունը» և կարող են բացատրել նրա սկզբնադրյուրը, զարգացումը, բնութագիրը և միտումը: Սա չի նշանակում, որ մարդիկ վերադառնում են «նախնական մշակույթին» կամ «հներին», միևնույն ժամանակ չի նշանակում նաև «լիարժեք արևմտայնացում» կամ «լիարժեք թահուա» 他化 (այլացում): Ինքնաճանաչման պահանջը նպատակ ունի ուժեղացնել ինքնորոշման ունակությունը մշակութային կերպափոխման գործընթացում և ընդունել մշակութային ընտրության սկզբնական կարգավիճակը նոր վիճակին և նոր դարաշրջանին հարմարվելու գործընթացում (Ֆեյ Սյառթուն 2005, էջ 248):

Սա նշանակում է, որ մենք նախ պիտի «սովորենք» մեր մշակույթը, սահմանենք մեր տեղն այդ մշակույթի մեջ և «անկախություն» ունենանք համաշխարհայնացման և մշակութային բազմազանության այս մեջ ու պատմական հազարամյակում, որտեղ կառուցում ենք մեր «ներդաշնակ հասարակությունը»: Մեր տեղը մեր մշակույթում չի նշանակում «լիարժեք վերադարձ արմատներին» և «լիարժեք արևմտայնացում». Փոխարենը, վստահեցնում է, որ մեր մշակույթը կարող է խոր արմատներ ունենալ հասարակության մեջ: Չէ՞ որ ծաղկում են միայն այն ծառերը, որոնց արմատները խոր են: Ուստի, մենք պիտի պնդենք մշակութային ընկալումների կարևորությունը, որպեսզի կարողանանք յուրացնել և կլանել այլ ազգերի ակնառու մշակույթները՝ այդպիսով սնելով մեր իսկ մշակույթը:

Այս իրավիճակում, եթե ուսումնասիրում ենք մեր պատմությունն ու ազգային մշակույթի հեռանկարը, ստիպված ենք հարմարվել համաշխարհային մշակույթի ժամանակակից զարգացման նոր միտումին, այն է «Առանցքային դարաշրջանին»: Մենք պիտի ունենանք ինքնագիտակցություն, որպեսզի իրազործենք «ներդաշնակ հասարակություն» կառուցելու նպատակը: Ի՞նչ խնդիրների առաջ է կանգնում աշխարհը և մեր հասարակությունը նոր պատմական դարաշրջանում: Ի՞նչ իմնախնդիրների պիտի անդրադառնանք՝ «Նոր առանցքային դարաշարջանը» և մեր «ներդաշնակ հասարակությունը» հասկանալու համար:

## **2.2 Կրթական և մշակութային շրջանակներում զանազան տեսակետներ «Չինական դասականներին» և հատկապես կոնֆուցիականությունը ուսումնասիրելու մասին**

Նոր, քսանմեկերորդ դարում չինացի դասականներին ուսումնասիրելը մեծ տարածում է գտել: Այս երևույթի մասին կան բազմաթիվ տեսակետներ ու բա-

ցատրությունները: Չինացի դասականների այսպիս կոչված ուսումնասիրության կարելի է հանդիպել «Չոռուլի.Չունգուան.Յուեշի» գրքում 周礼春官乐师 (Չոռուլի 1980), որը հնագույն գրավոր արձանագրությունն է. «Երաժշտության համար պատասխանատու պաշտոնյայի պարտականությունն է ղեկավարել ազգային դպրոցը և բարձրաստիճան պաշտոնյաների զավակներին երաժշտություն և պար սովորեցնել»: Բայց այժմ «չինական դասական երկերի ուսումնասիրությունը» կարծես հակառակում է «արևմտյան կրթությանը»: Պատճառն այն է, որ երբ բահվում ենք «արևմտյան կրթության» ազդեցությանը, մեր առաջ ծառանում է խնդիր՝ ինչպես պաշտպաննենք և զարգացնենք մեր ավանդական մշակույթը: Չինական մշակույթի զարգացման առաջ կրկնակի խնդիր է ծառանում: Մեկն այն է, որ պետք է պաշտպաննենք մեր մշակույթը և պահպաննենք մշակութային հիմքը: Իսկ երկրորդը՝ ինչպես վարվենք արևմտյան մշակույթի հետ: Կերպին մի քանի հարյուր տարիների ընթացքում սա եղել է «Չինաստան և Արևմուտք՝ հինգ և արդին» մշակութային բանավեճի հիմքը: Բայց այսօր՝ համաշխարհայնացման դարաշրջանում, մենք պիտի դուրս գանք բանավեճից, համաժամանակայնացնենք «Չինաստան և Արևմուտք՝ հինգ և արդին» ուսնունքները և գիտակցենք տարբեր մշակույթների՝ գոյակցելու և բարգավաճելու ունակությունը:

Այսօր գիտական և մշակութային շրջանակներում զանազան կարծիքներ կան «չինական դասական երկերը», հատկապես կոնֆուցիականությունն ուսումնասիրելու մասին: Ես դա հակիրծ կներկայացնեմ հաջորդիվ.

1. Որոշ գիտնականներ առաջարկում են «չինական կոնֆուցիականության վերակառուցման» ուրվագիծը: Նրանց կարծիքով՝ «մենք պետք է բազմակողմանի-որեն վերածնենք կոնֆուցիականությունը՝ արևմտյան քաղաքակրթության բազմակողմանի մարտահրավերներին դիմագրավելու համար», իսկ «կոնֆուցիականության վերածնունդը հրատապ հարց է չինական մշակույթը վերածնելու և չինական քաղաքակրթությունը վերակառուցելու գործում»: Յետևաբար, նրանք պաշտպանում են կոնֆուցիականության ընդունումը՝ որպես ազգային կրոն, և Չինաստանի հնագույն ժամանակների «քաղաքականության և կրոնի» այսպես կոչված համադրության ընթացնումը (Չյան Ցին 2005, 3-7 էջեր):

2. Գոյություն ունի այս տեսակետի երկու քննադատություն. մեկը «ազատականության դպրոցից» է: Քննադատները հավատացած են, որ «տեսությունը, ըստ որի կոնֆուցիականությունը կարող է փրկել ազգը», հակառակում է ժամանակակից ժողովրդավարական քաղաքականությանը և վնասում է «հավասարության» գաղափարը: Քննադատների խոսքով՝ նրանց նպատակն է՝ սահմանել «կոնֆուցիականությունը»՝ որպես «ազգային կրոն», և նրանը «փորձում են գաղափարայնացնել կոնֆուցիականությունն ու օգտագործել այն՝ որպես բննապետության գործիք» (Չեն 2006, էջ 6): Հաջորդ քննադատությունը մարքսիստ գիտնականներից է: Նրանց կարծիքով՝ «կոնֆուցիականության մեջ փրկության էությունը բարոյական գործառությի չափազանցություն է, և կարելի է «դիմել երկնքի գոյաբանական Դառյին և գոյաբանական էությանն ու ճակատագրին՝ քաղաքականության Դառյի թագավորությանը ձգտելու համար, բայց դարձյալ կհայտնվենք ֆեոդալական բռնապետության ծուղակում»: «Իրական փրկիչը կարող է միայն լինել մարքսիզմը» (Սույն աղբյուրից):

3. Որոշ գիտնականներ լիովին հաստատում են «կոնֆուցիականությունը՝ կոնֆուցիական մտքերը պահպանելու և զարգացնելու համար: Օրինակ, ներկոն-

Փուցիականների կարծիքով՝ «քագավորության Դառն», որը կարող է հարմարվել արդի ժողովրդավարական քաղաքականությանը, կարող է ծնվել ինաստության ուսումնասիրությունից: Նրանք նաև կարծում են, որ ճանաչողության տեսությունը (էպիստեմոլոգիա) կարող է զարգանալ «մտքի և բնության» կոնֆուցիական ուսումնասիրությունից: Այլոց կարծիքով՝ «սան գան ու չանը 三纲五常 (Երեք կապ և հինգ բարոյական կանոն) դեռ արժեք ունի մարդկային հարաբերություններուն: 1994 թվականի համաժողովում թու Ուեյմինը հեռացավ իր նախկին համոզմունքից առ այն, որ երեք կապերը և «Յինգ բարոյական կանոնները» դեռ արժեք ունեն մարդկային հարաբերություններում»: Նրա կարծիքը «մշակութային Չինաստանի» մասին կարևոր է չինական մշակույթն աշխարհին ճանաչելի դարձնելու համար: Բայց նա «մշակութային Չինաստանը» բաժանում էր մի քանի շրջանի, որոնցից հիմնականը Չինական մայրցամաքն է (Մայրցամաքային Չինաստան), Թայվանը և այլն: Երկրորդ շրջանը ներառում է անդրծովյան Չինաստանը, իսկ երրորդ շրջանը՝ այն երկոները, որոնց վրա չինական մշակույթն ազդեցություն է ունեցել: Չորրորդ շրջանը ներառում է այն օտարերկրացիներին, որոնք ուսումնասիրում են չինական մշակույթը և հիմնում նրանով: Բայց նրա համոզմունքներից մեկը վիճելի է: Նա ասում է. «Մշակութային Չինաստանը շատ լայն հասկացություն է: Այն մարդկի, որոնք արյունակցական կապեր չունեն Չինաստանի հետ, բայց մեծ ազդեցություն ունեն երկրի վրա, նույնպես մշակութային Չինաստանի մի մասն են» (Թու Ուեյմին 2002, էջ 430): Սա վիճելի հարց է: Այս տրամաբանությամբ կարող ենք նկատի առնել «մշակութային Եվրոպա» և «մշակութային Ամերիկա» կարգերը և այն հանգանաքը, որ որ չինացի մտածողները՝ Կոնֆուցիոնը, Սենցիոնը, Լաոցին և Զուանցին, ազդեցություն ունեն նրանց վրա, ուստի նրանք նաև «մշակութային Եվրոպայի» և «մշակութային Ամերիկայի» մասն են:

4. Անշուշտ, որոշ գիտնականներ կարծում են, որ Սայիսի չորսի շարժումը հերթում էր կոնֆուցիականությունը, և կոնֆուցիականության կարգավիճակի հերթական բարձրացումը պատմական հետադիմություն է:

Ինչպես աետք է վերաբերվել կոնֆուցիական մտքերին: «Պատասխանները տարբեր են: Այսօր այս հիմնախնդրի բազում հեռանկարները ցույց են տալիս, որ մեր հասարակությունն առաջադիմում է, որովհետև կրթական և մշակութային հարցերը կարելի է բարձրացնել միայն ազատ քննարկումների միջոցով և բարելավել ռացիոնալ երկխոսությամբ:

Անշուշտ, ես իմ անձնական կարծիքն ունեմ «կոնֆուցիականության» մասին, և քննարկումները կորոշեն՝ արդյոք իմ տեսակետը ճիշտ է, թե ոչ: Սա միայն մի տեսակետ է: Ես բազում կարծիքներ ունեմ կրթության և մշակույթի վերաբերյալ: Նախ և առաջ, պատմության մեջ գոյություն չունի մտածողության ու մշակույթի բացարձակ ծշմարիտ ձև, որովհետև նրանցից յուրաքանչյուրը, այդ թվում և կոնֆուցիականությունը, պարունակում է ներքին հակասություններ: Այսպիսով, կոնֆուցիականության որոշ կողմեր անխուսափելիորեն ունեն պատմական սահմանափակումներ և ի գորու չեն հարմարվել արդի հասարակության կարիքներին: Կոնֆուցիականության համընդհանուր նշանակությունը նաև արդի մեկնաբանության կարիք ունի: Երկրորդ, թեև մտածողությունն ու մշակույթը առաջ են շարժվում, ինն փիլիսոփաների բարձրացրած հարցերն ու նրանց մտքերը նույնն են, ինչ այսօր, որովհետև որոշ փիլիսոփայական հիմնախնդիրներ հավերժ են: Օրինակ, «մարդու և բնության հարաբերության» խնդիրը դեռևս քննարկվում է ժամա-

նակակից չինական փիլիսոփայության մեջ: Երրորդ, Բերտրան Ռասելն ասում է. «Տարբեր քաղաքակրթությունների շփումներն անցյալում հաճախ դարձել են մարդկային առաջընթացի ուղենիշեր» (Ռասել 1922, էջ 195): Ցանկացած մշակույթ, որ ցանկանում է շարունակական պատմական զարգացում ունենալ, պետք է կլանի և յուրացնի այլ ազգերի մշակույթները: Մշակույթն այլ մշակույթներից հետ չի մնա միայն փոխանակումների շնորհիվ, հատկապես համաշխարհայնացման դարաշրջանում: Եթե դիտարկենք Չինաստանի պատմությունը, ապա հնդկական բուդդայականության մուտքն ապացուցել է դա: Չինական մշակույթը մեծապես օգտվել է հնդկական բուդդայականությունից, որը զարգացել ու առաջընթաց է ապրել Չինաստանում: Չինական մշակույթը կլանի է այն, և բուդդայականությունը խոր ազդեցություն է թողել ներկոնֆուցիականության վրա Սուն և Սին դինաստիաներում: Այսօր՝ համաշխարհայնացման ժամանակաշրջանում, մենք պիտի լիարժեքորեն ու համակարգված յուրացնենք ու «մարսենք» արևմտյան մշակույթն ու այլ ազգերի մշակույթները: Միայն այս ժանապարհով չինական կրթությունն ու մշակույթը կհամապատասխանեն ժամանակակից մարդկային հասարակության և մեր իսկ ազգային զարգացման պահանջներին: Յետևաբար, մեր մշակույթը պետք է լինի ազգային և միջազգային: Չորրորդ, պետք է սահմանվի մշակութային սուբյեկտիվություն: Ցանկացած ազգային մշակույթ պետք է արնատավորվի սեփական հողում, որովհետև անհրաժեշտ է լիարժեք հասկանալ, ընկալել, պաշտպանել և զարգացնել բնիկ մշակույթը՝ այլ ազգերի մշակույթները խորությամբ յուրացնելու ունակությունը բանականորեն և առողջ զարգացնելու համար: Մշակույթը, որն անկարող է պահպանել իր ինքնավարությունը և ի գորու չէ յուրացնել այլ ազգերի մշակույթները՝ իր սեփական մշակույթը հարստացնելու և զարգացնելու համար, կամ կվերանա, կամ ամբողջությամբ կձուլվի:

Չիննվելով վերոնշյալ քննարկումների վրա՝ կարող ենք «կոնֆուցիականությունը» վերլուծել երեք տարբեր տեսանկյունից՝ քաղաքական կոնֆուցիականություն, ուղղափառ կոնֆուցիականություն և ակադեմիական կոնֆուցիականություն:

Նախորդ դինաստիաներում կոնֆուցիականությունը միահյուսվում էր քաղաքականության հետ. անկասկած, այն կարևոր դեր ուներ ֆեոդալական բռնապետությունում: Կոնֆուցիականությունը հատուկ ուշադրություն է դարձնում բարոյական զարգացման մեջ իր գործառությին, որը դրական կողմն է, իսկ բացասական կողմը հանգեցնում է բացարձակ իշխանության, ինչի պատճառով Չինաստանը կվերածվի «մարդու կողմից կառավարվող» հասարակության, և Չինաստանի համար բարդ կլինի հասնել «օրենքի կառավարման»: Կոնֆուցիականները հաճախ բարոյականացնում էին քաղաքականությունն ու փառաբանում քաղաքական կառավարումը. նրանք նաև քաղաքականացնում էին բարոյականությունը՝ այն վերածելով քաղաքականության գործիքի: Անշուշտ, քաղաքական փիլիսոփայությունը կոնֆուցիականության տիրույթուն սահմանափակվում էր բռնապետությունը, ինչպես ցույց են տալիս, օրինակ, «դիմադրել բարձրաստիճան պաշտոնյային առաջնությամբ», «ժողովուրդն ամենաարժեքավորն է» և «սպանել բռնապետին» կարգախոսները (Ցի արքա Սյուանը հարցնում է. «Կարելի՞ է հանդուրժել այն, որ կառավարության պաշտոնյան սպանում է իր արքային»: Սենցիուսն ասում է. «Նա, ով ոչնչացնում է բարեգործությունն ու արդարամտությունը, կոչվում է բռնապետ: Ես լսել եմ Ձոուի Ու արքայի՝ Ձոու դինաստիայի

առաջին արքայի մասին, որը սպանեց բռնապետ Զուին? Շան դինաստիայի վերջին կառավարչին, բայց երբեք չեմ լսել, որ նա սպանել է իր արքային, որովհետև նա պաշտոնյա էր») (Մենցին 1980, Լյան Չուեյվան սյա): Կոնֆուցիականներին բնորոշ էր նաև կիրառել «թյանը (Երկինք)՝ կայսեր իշխանությունը սահմանափակելու համար: Կոնֆուցիականներն առաջարկում էին, որ մարդ արարածները պետք է մեծարեն «Երկինքն» ու ճակատագիրը: Որոշ հանգամանքներում «Երկինքի և մարդու փոխազդեցությունը» նույնպես կարող է սահմանափակել «կայսեր իշխանությունը»: Օրինակ, երբ բնական աղետներ կամ տարօրինակ երևույթներ էին տեղի ունենում, պաշտոնյաները զգուշացնում էին կայսերը: Ապա կայսրը կայսերական ինքնարբնադատություն էր իրապարակում: Բայց ընդհանուր առմանք քաղաքական կոնֆուցիականության բացասական գործառույթն ավելի ակնհայտ է, որովհետև այն օգտագործվել է քաղաքականության մեջ: Ամեն դեպքում «հիմար հավատարմության» մասին մտքերը և «ձերդ մեծություն», դու սուլը ես ու իմաստում, իսկ քո հավատակն անթույլատրելի հանցանք է գործում և պիտի դատապարտվի մահվան» արտահայտությունը նպատակահարմար չեն: Ուստի, երբ քաղաքական գործիչները հմտորեն բանեցնում են կոնֆուցիականությունը, բազում խնդիրներ են ի հայտ գալիս:

Ուղղափառ կոնֆուցիականություն. համակարգային բնութագիր և հաջորդական ժառանգականություն ունեցող դպրոցների զարգացումն ու ազդեցությունը պետք է ունենա իր սեփական ավանդույթը՝ անկախ նրանցից՝ արևմուտքում է, թե Չինաստանում: Չինաստանում կոնֆուցիականությունը, բուդդայականությունը և դառսիզմը ունեն սեփական ավանդույթները: Քանի որ ավանդույթներ ունեցող դպրոցները շարունակ զարգանում են, հատկապես կոնֆուցիականությունը գիտակցաբար է մոտենում ավանդույթը ժառանգելուն, իսկ կոնֆուցիականները Սյա, Շան և Զոու դինաստիաների մշակութային ավանդույթների ժառանգումը համարում են իրենց պարտականությունը: «Կոնֆուցիոսը ժառանգում է Յաոյի և Շունի Դաոն և նմանակում է Զոուի Վեն և Ու արքաներին» (Ցիսի 1980, գլուխ 30): Դեռևսաքար, այսօր մենք պետք է գիտակցաբար ժառանգենք մեր սեփական մշակութային ավանդույթը: Բայց եթե կոնֆուցիականությունն ընդգծում է իր «ուղղափառ ավանդույթը», այն գուցե բացառում է այլ դպրոցները և ճնշում այլադապանությունը: Այլադապանությունը ստեղծված է հիմնական մտքին դիմադրելու և այն խորտակելու, ինչպես նաև մտածողության նոր ձևերի համար նոր ուղի հարթելու նպատակով: Կոնֆուցիականությունը համեմատաբար ամբողջական է: Օրինակ, կոնֆուցիականները պնդում են, որ բազում երևույթներ հավասարապես զարգանում են առանց միմյանց վնասելու: տարվա չորս եղանակների շրջապտույտը, արևի և լուսնի ընթացքը սահուն շարունակվում են առանց փոխադարձ միջամտության» (մեջբերումը՝ նույն աղբյուրից): Բայց երբեմն կոնֆուցիականության մեջ նկատվում է նաև բացառիկության ուժեղ զգացում: Օրինակ, Սենցիոսը մերժում էր Յան Զուին և Սոցիին և քննադատում էր Յան Զուի հոր հանդեպ որդիհական բարեպաշտության բացակայությունը, որովհետև նա պաշտպանում էր համընդիանութ և հավասար բարեգործությունը և Սոցիի հավատարմության բացակայությունը կայսեր համեմատ, որովհետև պնդում էր, որ առաջին տեղում անհատներն են: Այս դեպքում Սենցիոսը շատ հեռուն է գնում: Մեկ այլ օրինակ է Յան Յու-ի՝ բուդդայականության բացառումը: Այն ժամանակ բուդդայականությունը որոշ խնդիրներ էր ստեղծել, այդ թվում և ազգային հարստության հսկայական վատ-

նում: Բայց Յան Յուն առաջարկում էր, որ «Կառավարությունը պետք է աշխարհիկ դարձնի բուդդայական վանականներին և միանձնուի ինքներին, այրի սուտրաները և բուդդայական տաճարները վերածի քաղաքացիական տների» (Յան 1991, էջ 174): Նրա խոսքերը շատ հեռուն են գնում: Վատ է, երբ երկարակությունը չափազանց ուժեղ է:

«Կոնֆուցիականության ակադեմիական ավանդությը» կոնֆուցիական ուսումնասիրության և դրա կրթական իդեալների պատմությունն է: Այս տեսանկյունից նկատելի է կոնֆուցիականության դրական արժեքը, և այն կարող է զգալի ռեսուրսներ տրամադրել մարդկային հասարակությանը: Այժմ և ապագայում կոնֆուցիականությունը չպետք է գաղափարականացնել: Ուսումը ուսում է և չպետք է կախված լինի քաղաքականությունից: Գիտելիքի ոչ մի դպրոց չի կարելի համարել իշխող, անհրաժեշտ է թույլ տալ «մտքի հարյուրավոր դպրոցների նրգակցությանը»: Անշուշտ, մենք պետք է վերլուծենք իմաստունների և պատմության ականավոր դեմքերի մտքերը և մեկնարամները՝ դրանք՝ զստ ժամանակակից համգանքների, որպեսզի բացահայտենք այն ռեսուրսները, որոնք կարող են նպաստել չին ազգի զարթոնքին և համաշխարհային նշանակություն ունենալ մարդկային հասարակության ռացիոնալ և համընդհանուր զարգացման մեջ: Այս նպատակն իրագործելու համար կոնֆուցիականությունը պետք է նորացվի, որպեսզի դառնա իրական հոգևոր հարստության աղբյուր:

## **2.3 Որո՞նք են ժամանակակից մարդկային հասարակության հիմնախնդիրները**

Մենք կարող ենք ուսումնասիրության արժեքի մասին գաղափար կազմել բազմաթիվ տեսանկյուններից՝ քաղաքականություն, տնտեսագիտություն, գիտություն և տեխնոլոգիա: Թերևս ամենակարևորը դպրոցի արժեքին փիլիսոփայական գնահատական տալն է: Քետևաբար, պետք է իմանանք, թե որոնք են մեր հասարակության, ազգի և մարդկության առաջ ծառացած հիմնախնդիրները: Այս հիմնախնդիրները պետք է դառնան փիլիսոփայական հարցերի քննարկման ելակետ:

Որո՞նք են ժամանակակից մարդկային հասարակության հիմնախնդիրները: Իմ կարծիքով՝ դրանք երեքն են. առաջինը մարդու և բնության հարաբերությունն է, որը բավական լուրջ հակասություն է պարունակում: Երկրորդը մարդու և մարդու հարաբերությունն է, ներառյալ հարաբերությունը մարդու և եսի (մարդ և հասարակություն), ազգերի և ժողովուրդների միջև: Երրորդ խնդիրը մարմնի և մտքի հարաբերությունն է: Մարդկության առաջ ծառացած խոշորագույն խնդիրը մարդու և բնության, մարդու և մարդու (մարդ և հասարակություն) և մարդու ներքին բախումն է: Այս հիմնախնդիրները կապված են «ներդաշնակ հասարակություն» կառուցելու և մարդկային հասարակության «խաղաղ գոյակցության» գաղափարի հետ: Իմ կարծիքով՝ երեք փիլիսոփայական հիմնավորումները՝ «բնության և մարդու միասնությունը», «եսի և այլոց միասնությունը» և «մարմնի և մտքի միասնությունը», կարող են որոշ արժեքավոր մոտեցումներ և կարևոր փիլիսոփայական ռեսուրսներ տրամադրել երեք բախումները լուծելու համար: Իհարկե, դա չի նշանակում, որ այս խնդիրները կարելի է լուծել միայն կոնֆուցիականության միջոցով:

Մուտք գործելով քանմեկերորդ դար՝ մենք տեսնում ենք, որ նախորդ դարը սրբնթաց զարգացման, առաջադիմության, բայց նաև ողբերգական դար էր, լի բախումներով ու պատերազմներով: 100 տարվա ընթացքում տեղի ունեցավ երկու համաշխարհային պատերազմ, և հարյուր միլիոնից ավելի մարդ մահացավ ոչ թե բնական մահով, այլ պատերազմի հետևանքով: Մի քանի դար առաջ մարդկության կողմից ստեղծված բազմաթիվ մշակութային ննուշներ ոչնչացվեցին: Վերջին հարյուր տարիներին Չինաստանը շատ է տառապել, բայց նաև մեծ առաջնթաց է ապել: Այս ընթացքում մենք գորեք ամրողությամբ ժխտել ենք մեր մշակութային ավանդույթը և երկար ժամանակ նաև հրաժարվել ենք յուրացնել որոշ առաջադեմ արևմտյան մշակույթներ: Սա հանգեցրել է հասարակական խնդիրների, ինչպիսիք են «հավատի զգնաժամը», «բարոյական դատարկությունը», «շրջակա միջավայրի աղտոտումը» և «փողի երկրպագումը»: Ինչպես պետք է լուծենք այս խնդիրները: Ես, և ոչ միայն ես, այլև այլ գիտնականներ, կարծում ենք, որ այս խնդիրները լուծելու համար կարող ենք փիլիսոփայական ռեսուլսներ գտնել վերջին հինգ հազար տարիներից: Բազմաթիվ գիտնականներ փնտրել են այս խնդիրների պատասխանները: Անշուշտ, մենք չպետք է մտածենք, որ մեր միտքն ու մշակույթը կարող են լուծել բոլոր խնդիրները: Եթե մտածենք, որ միտքն ու մշակույթը ի զորու են լուծել բոլոր խնդիրները, սա կհանգեցնի «մշակութային դետերմինիզմի»: Այդպիսով կմուտենանք այն համոզմունքին, որ գիտությունն ու տեխնոլոգիան կարող են լուծել մարդկային և հասարակական խնդիրները՝ հանգեցնելով «գիտության ամենազորության», «գիտականության» ծուղակիմ: Դետևաբար, եթե քննարկում ենք «կոնֆուցիականության նշանակությունը», պարզապես ցանկանում ենք գտնել ռեսուլսներ ու մոտեցումներ, որոնք կարելի է կիրառել ժամանակակից մարդկային և հասարակական խնդիրների նկատմամբ և դրանք լուծելու համար:

## 2.4 Մարդու և բնության հարաբերությունը

1992 թվականին 1575 գիտնականներ, որոնց թվում կային Նորեյան դափնեկիրներ, ստորագրեցին «Աշխարհի գիտնականների գործացումը մարդկությանը», որը վերաբերում էր «Մարդու և բնության» բախմանը և հաստատում էր, որ մարդ արարածներն ու բնությունը ընդհարման եզրին են: Ին կարծիքով՝ գգուշացումն ահազանգում էր, որ մարդկային տեսակը կիայտնվի լուրջ զգնաժամի մեջ, եթե աշխարհը շարունակի այսպես ապրել: Առաջադեմ գիտությունն ու տեխնոլոգիան կարող են օգտակար լինել մարդկանց, բայց որպես բնության նաև՝ մարդիկ ոչ միայն տիրապետում են բնությունը ոչնչացնող բազմաթիվ գործիքների, այլև գենքի, որը կարելի է օգտագործել՝ բնությունը նվաճելու գործընթացում հենց մարդ արարածներին ոչնչացնելու համար: Բնության հավերժական շահագործումն ու ոչնչացումը հանգեցնում է այնպիսի հանգամանքների, ինչպիսիք են բնական ռեսուլսների վատնումը, օգնային շերտի սպառումը, օվկիանոսների գոլորշացումը, շրջակա միջավայրի աղտոտումը, մարդկային բնակչության անակնկալ և կտրուկ աճը և էկոլոգիական անհավասարակշռությունը: Այս ամենի հետևանքը «ներդաշնակ բնության» և «մարդու ու բնության ներդաշնակ հարաբերությունների» ոչնչացումն է. այս պայմանները սպառնում են մարդկության գոյրությանը: Այս իրավիճակը կապված է արևմտյան փիլիսոփայության սուրյեկտ-օր-

յեւ երկատման հետ: Օրինակ, «Արևմտյան փիլիսոփայության պատմություն» աշխատության մեջ Ռասելը գրում է. «Դեկարտի փիլիսոփայությունը... եզրափակեց, կամ գրեթե եզրափակեց մտքի ու մարմնի երկվապաշտությունը (դուալիզմ), որը սկսվեց Պլատոնից և զարգացավ, գերազանցած կրոնական պատճառներով, քրիստոնեական փիլիսոփայության կողմից... Դեկարտյան համակարգը ներկայացնում է երկու գուգահեռ, բայց անկախ աշխարհ՝ մտքի և մարմնի, որոնցից յուրաքանչյուրը կարելի է ուսումնասիրել՝ առանց մյուսը վկայակոչելու (Ուսել 1972, էջ 567): Սա նշանակում է, որ արևմտյան փիլիսոփայության մեջ երկար ժամանակ ոգին և մարմինը համարվել են անկախ ու մեկուսացած: Դետևաբար, փիլիսոփայության այս տեսակը հիմնվում է «արտաքին հարաբերության» վրա («մարդը» և «բնությունը» երկու միջյանց հետ կապ չունեցող գործոններ են), կամ կարելի է ասել, որ նրանք «միտքը» և «մարմինը» համարում են երկու անկախ երկակի գործոն, և երբ արևմտյան փիլիսոփաներն ուսումնասիրում են մեկը, չեն անդրադառնում մյուսին (բայց արևմտյան փիլիսոփայությունը փոխվել է. օրինակ, Ուայթեթը իր «Գործնթացային փիլիսոփայություն» աշխատության մեջ ավանդական մտածողությանք քննադատում է երկվապաշտությունը): Սա նշանակում է, որ արևմտյան միտքը ներառում է «սուբյեկտ-օբյեկտի» երկվապաշտությունը («միտք» և «մարմին» կամ «բնություն» և «մարդ»), որը գալիս է դեռևս Պլատոնից: Բայց չինական փիլիսոփայությունը տարբերվում է, քանի որ հիմնված է «Երկնքի և մարդու միասնության» վրա (սուբյեկտն ու օբյեկտը կապված են և չեն կարող բաժանվել):

Չինական փիլիսոփայության սկզբնաղբյուրներից մեկը «Չոռւ Ին» է 周易 («Փոփոխությունների գիրքը»): 1993 թվականին Շուլեյ նահանգի Չին Մեն վայրում հայտնաբերված Չոռ բամբուկե մազաղաթների վրա կարևոր հաղորդագրություն կա: Այն հաստատում է (Չինմեն 1998, Յույցուն ի 语丛一).

«Ծները» նկարագրում են հաղորդակցության ձևերը:

«Երաժշտությունը» վայելելու կամ կրթելու համար է:

«Պատմության գիրքը» ..... [բնագրային]:

«Երբողների գիրքը» անցյալի ու ներկայի բանաստեղծությունների ժողովածու է:

«Փոփոխությունների գրքի» նպատակն է միջյանց հետ հարաբերել բնության Դառն և մարդու Դառն:

Գարնան և աշնան տարեգրքերը անցյալի ու ներկայի գործների ժողովածու են:

Այս բամբուկե մազաղաթները ստեղծվել են մթա շուրջ 300 թվականին: Նրանց վրա գրված է. «Փոփոխությունը հաղորդակցվում է բնության Դառյի և մարդու Դառյի հետ»: Սա նշանակում է, որ «Փոփոխությունների գիրքն» ուսումնասիրում է Երկնքի Դառն (Երկնքի կամ բնության օրենքը) և մարդու Դառն (հասարակության կարգը), և թե ինչու են դրանք կապված իրերի բազմակողմանի ուսումնասիրությամբ: Այսինքն հին ժամանակներում մարդիկ արդեն հասկացել էին, որ «բնություն» ուսումնասիրելիս՝ նաև «Երկնքը»: Սա է «բնության և մարդու» միասնությունը: Իրականում, սա արդեն բացահայտվել էր Կոնֆուցիոսի «Տարեգրքում»: Ցի Գունն ասում էր. «Չեմ լսել, թե Կարպետ Կոնֆուցիոսն ինչպես է խոսում բնության և բնության Դառյի մասին (Կոնֆուցիոս 1980, Գունյե Չան): Չնայած Ցի Գունը երեք չեր լսել, թե Կոնֆուցիոսն ինչպես է խոսում «բնության և բնության Դառյի մա-

սին», նա առաջ քաշեց այս հիմնախնդիրը, որը ցույց է տալիս, որ մեծ հետաքրքրություն կա «մարդկային էության» (մարդ) և «Երկնքի Դառյի» (բնություն) նկատմամբ: Մարդկային հասարակության գարգացումն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ մարդիկ ի սկզբանե բախվել են «մարդու» և «բնության (Երկինք)» հարաբերությանը, որովհետև մարդ արարածները չեն կարող ապրել առանց «բնության»: Յետևաբար, իհն չինացիները միշտ ուշադրություն են դարձրել «մարդու և բնության հարաբերությանը»:

Իհարկե, տարբեր են «մարդու և բնության հարաբերությունները» կարգավորելու մոտեցումներն ու մեթոդները: Որոշ գիտնականներ կարծում են, որ մարդը պետք է ենթարկվի բնությանը. այլ գիտնականների կարծիքով՝ մարդը պետք է օգտվի «բնությունից», որպեսզի այն ծառայի իրեն, «ճանաչի բնությունը և կիրառի այն, որպեսզի բնությունը ծառայեցնի իրեն»: Իսկ ոմանք էլ հավատացած են, որ «թե՛ մարդը, թե՛ բնությունը ունեն սեփական օրենքներն ու առավելությունները»: Բայց հիմնական կոնֆուցիական մտածողները հավատում էին «մարդու և բնության միասնությանը»: Մարդու և բնության այսպես կոչված միասնությունը նշանակում է, որ «բնությունն» անբաժան է «մարդու», իսկ մարդը՝ բնությունից:

Ինչու՞ գոյություն ունի նաև համոզմունք: Սա Երկար պատճություն ունի: Ինչպես գիտենք, «Փոփոխությունների գիրքն» ի սկզբանե գուշակությունների գիրը էր, որը կանխատեսում էր երջանկությունը կամ դժբախտությունը, բարի կամ չար բախտը: Ո՞ւմ էին խնդրում գուշակել մարդկանց բախտը: Թյանին 亥 (Երկինք): «Մարդը» թյանին հարցնում է բարի կամ չար բախտի և երջանկության ու դժբախտության մասին: «Փոփոխությունների գիրքն արձանագրում էր այս պատասխանները, այդ պատճառով էլ վերածվեց «Երկնքի» (թյան) և «մարդու» հարաբերությունների մասին գրքի: Յետագայում այս գրքի զանազան մեկնաբանություններով կազմվեց նոր գիրը՝ «Իջուան 易传» («Փոփոխությունների գրքի հավելվածներ»): Նրանցից մասնավորապես մեկը՝ «Լրանշակումները», կարելի է համարել «Փոփոխությունների գրքի» փիլիսոփայական մեկնաբանություն: «Փոփոխությունների գիրքը» լուծում է «Երկնքի» և «մարդու» հարաբերությունների խնդիրը. այդ դեպքում ինչպիսի՞ն է «Երկնքի» և «մարդու» հարաբերությունը: «Լրանշակումները» պատասխանում են այս հարցին: Ըստ գրքի՝ «Փոփոխությունների գիրքը» ներառում է ամեն ինչ: Գիրքը վերաբերում է ոչ միայն «Երկնքի Դառյին», «Երկիր Դառյին», այլև «մարդու Դառյին»: Թեև «Երկնքի Դառն» դրսևորվում է ինչ և յանի միջոցով, «Երկիր Դառն» ներկայացվում է՝ որպես «կարծրություն» և «փափկություն», իսկ «մարդու Դառն» դրսևորվում է՝ որպես «բարեգործություն» և «արդարամտություն»: Երեքի սկզբունքը միավորվում է. Երեքը ցյանի 亥 և կունի 坤 դրսևորումն է: Կոնֆուցիական Զան Ցայը Սուն դինաստիայից ասել է. «Երկինքը, Երկիրն ու մարդը ունեն ցյանի և կունի Դառ: Փոփոխությունը թափանցում է Երկինքը, Երկիր և մարդու մեջ. ինձ ու յանը նրա նյութը են (ցի), կարծրությունն ու փափկությունը՝ նրա ծեր, իսկ բարեգործությունն ու արդարամտությունը՝ էությունը» (Զան Ցայ 1978, էջ 235): «Փոփոխությունների գրքի» օրինակից, որը միավորում է Երկինքը (Երկիր) և մարդուն, տեսնում ենք, որ Երկինքն ու մարդը փոխկապակցված են: Ցանն ու կունք օգտագործվում են «Երկնքի», «Երկիրի» և «մարդու» միասնությունը նկարագրելու համար, որովհետև «Փոփոխությունների գրքի հավելվածում» ցյանը ցույց է տալիս եռանդուն շարժում, իսկ կունը՝ մեծահոգություն

և առաջինություն: Դետևաբար, «մարդը» հասուկ պատասխանատվություն ունի «Երկնքի և Երկի համար» (Երկինք): «Մարդը» պետք է իմանա, թե Երկինքն ու Երկիրն ինչ են պահանջում «ինքնակատարելագործման մշտական ճգուման» համատեքստում և «մեծահոգաբար ընդգրկի կամ ամբողջացնի Երևայթները»: Զան Ցայն ասում է. «Երկնքի Դառն» և «մարդու Դառն» նման են իրար «բանականության կամ ծշմարտության» հմաստով: Եթե ուզում ենք իմանալ մարդ լինելու սկզբունքը, պիտի ճանաչենք «Երկնքի ու Երկի» Դառն, իսկ եթե գիտենք «Երկնքի և Երկի» ծշմարտությունը, կիմանանք «մարդու» (հասարակության) սկզբունքը կամ օրենքը:

Սուն դինաստիայի կոնֆուցիականները զարգացնում էին «քնության և մարդու միասնության» գաղափարը: Օրինակ, Չեն Ին գրում է. «Արդյո՞ք կարելի է ճանաչել մարդու Դառն, բայց չճանաչել Դառնի էլությունը: Դառն մեկն է: Արդյո՞ք ծիշտ է, որ մարդու Դառն և բնության Դառն տարբեր են» (Չեն և Չեն Ի 2004, «Էր Չեն իշու», հատոր 18): Ըստ կոնֆուցիական մտածողության «քնությունը» և «մարդը» անբաժանելի են, նրանց հարաբերությունը չի կարելի համարել արտաքին և հակադիր, և մենք չենք կարող ուսումնասիրել Երկուսից միայն մեկը: Զու Սին ավելի հստակ էր արտահայտում այս գաղափարը: Նա ասում էր. «Բնությունը մարդն է, մարդը՝ բնությունը: Ծննդյան պահին մարդն առաջանառ է բնությունից, իսկ ծննդից հետո բնությունը նույնպես մարդկային է դարձնում» (Զու Սի 1990, հատոր 17): Զու Սիի կարծիքով՝ «քնությունը» չի կարող լինել «մարդուց» անկախ, մարդը՝ «բնությունից»: Ծննդի պահին մարդիկ գալիս են բնությունից, բայց երբ մարդ արարածը ծևավորվում է, սկսում է մարմնավորել «բնության» Դառն (Երկինք): Այլ կերպ ասած «մարդ արարածները» պատասխանատու են «քնության» համար: Եթե չլինեին «մարդ արարածներ», ինչպես կմարմնավորվեր «քնության» աշխույժ մթնոլորտը, «ավելի ուժեղ լինելու հավերժական ճգումը», «մեծահոգաբար Երևայթները պարունակելու կամ ամբողջացնելու» Երկրի ճգումը: Ուրեմն մարդիկ պետք է իմանան, որ «հանուն Երկնքի և Երկրի միտք կամ սիրտ արարելը» և «հանուն մարդկանց կյանք արարելը» նույն են, և դրանք ամինար է առանձնացնել: Դետևաբար, «Ցուցուն Գոյյան Զուձյանում» 郭店竹简語从一(«Գո Դյանի բամբուկե մազաղաբների առաջին ժողովածու») գրված է. «Դառյին կարելի է տիրապետել միայն այն բանից հետո, եթի իմանաս, թե ինչ է անում Երկինքը (բնություն), և ինչ է անում մարդը: Եթե գիտենք Դառն, ապա գիտենք, թե ինչ է ճակատագիրը» (Զինմեն 1998): Եթե գիտենք «բնության (Երկնքի) Դառն» (բնության օրենքը) և մարդու Դառն (մարդկային հասարակության և կյանքի օրենքը), ապա կարող ենք իմանալ միասնական սկզբունքը կամ «բնության կամ Երկնքի» և «մարդու», «բնության կամ Երկնքի» (բնության կամ Երկնքի Դառն) և «մարդու» («մարդու Դառն», հասարակություն) զարգացումը: Կոնֆուցիոսն ասում է. «Անհրաժեշտ է իմանալ Երկնքի համարագրած ճակատագիրը կամ բախտը» (Կոնֆուցիոս 1980, Վեյշեն): Նա նկատի ունի, որ «մարդը» պիտի իմանա «բնության կամ Երկնքի» մասին: Կոնֆուցիոսը նաև ասում է. «Մարդը պիտի մեծարի բախտը կամ ճակատագիրը, որ տրվել է Երկնքի կամ բնության կողմից (Նույն տեղում, «Զիշի») և չի կարող հենց այնպես ոչնչացնել «բնության կամ Երկնքի» զարգացման օրենքը»: Մի չինացի փիլիսոփայի կարծիքով՝ «բնությունը կամ Երկինքը» երբեք անկենդան չէ: Ավելին, այն օրգանական է, մշտապես զարգանում է, աճում, միավորվում մարդու հետ՝ որպես մեկ ամբողջություն: Տարածված տեսակետ կա,

որ «մարդուն անհնար է բաժանել «Բնությունից կամ Երկնքից», բայց մարդն ինչու՝ է «բնությունը կամ Երկինքը» համարում հակադիր օբյեկտ և անխոհենաբար ոչնչնացնում և նվաճում «բնությունը»: Պատճառն այն է, որ նա «բնության» և «մարդու» հարաբերությունը համարում է արտաքին և զգիտի, որ «բնության» և «մարդու» հարաբերությունը մտերմիկ է ու ներքին: «Ներքին հարաբերությունը» տարբերվում է «արտաքին հարաբերությունից», որովհետև «արտաքին հարաբերությունը» ցույց է տալիս, որ «բնությունը» և «մարդու» անկախ են և կապակցված չեն: Իսկ «Ներքին հարաբերությունը» ցույց է տալիս, որ «բնությունը» և «մարդը» սերտ հարաբերության մեջ են: Չետևաբար, «բնության և մարդու միասնությունը» իին չինական փիլիսոփայական իիմնավորում է: Այն ոչ միայն չինական կոնֆուշիական մտքի անկյունաբարն է, այլև մի անդում, որը պիտի շարունակաբար վերամեկնաբանվի մարդկային հասարակության կողմից: Եթե ուսումնասիրում ենք մարդ արարածների խնդիրները և մեր հարաբերությունը բնության հետ, պետք է մշտապես հիշենք «բնության և մարդու միասնության» գաղափարը, և խորացնենք «բնության» և «մարդու» միջև սերտ հարաբերությունների մասին քննարկումը: Մարդկային հասարակությունը երկար ժամանակ անուշադրության է մատնել «բնության» և «մարդու» հարաբերությունը. ուրեմն իիմա բնությունը պատժում է մեզ: Ինչու ենք ընտրել բնության հետ բախումնային հարաբերությունների տարբերակը:

«Բնության և մարդու միասնության» գաղափարը (միտքը՝ «ին 易(փոփոխություն) նպատակ ունի բնության Դառն հաղորդակցել մարդու Դառնի հետ»), որը ծագել է «հիծինից», մտածողության ձև է, որը լրտօնմ է ներկայիս բախումը բնության և մարդու միջև: Այն կարող է ոգեշնչել մեզ հետևյալ երեք առումներով.

Նախ, «բնության և մարդու միասնությունը»՝ որպես մտածողության կերպ, պնդում է, որ «մարդը» չպետք է ընկալվի՝ որպես «բնության» հակադրություն, որովհետև «մարդը» բնության մասն է և «ծնունդ է առել բնությունից»: «Բնության» ոչնչացմանն ուղղված գործողությունները նույնն են, ինչ «մարդու» ոչնչացմանն ուղղված գործողությունները, և «բնությունը» կպատժի «մարդուն»: Չետևաբար, «մարդը» պետք է «ճանաչի» (ճանաչել բնությունը՝ նրանից խելամտորեն օգտվելու համար) և «մեծարի բնությունը»: (Մարդը պիտի մեծարի բնությունը և այն պաշտպանելու գործը համարի իր սուրբ պարտականությունը): Այժմ մենք ընդգծում ենք միայն «բնությունը ճանաչելը» և կուրորեն օգտագործում ենք «գիտելիքը»՝ «բնությունը» շահագործելու, նվաճելու և նույնիսկ ոչնչացմելու համար: Բայց մարդը զգիտի, որ նախ պետք է մեծարի «բնությունը»: Սա միանշանակ «գիտականության» (գիտության և տեխնոլոգիայի ամենազորություն) ծայրահեռ դրսւորում է: «Գիտականությունը» հերքում է «բնության կամ Երկնքի» սրբությունը, ապա հերքում է «բնության կամ Երկնքի» անդրանցականությունը: Այսպիսով, մարդասիրական ոգին կորցնում է իր հիմքը: «Բնության և մարդու միասնության» չինական միտքը պնդում է, որ «բնությունը ճանաչելը» հավասար է «բնությունը մեծարելուն»: Եթե «ճանաչում ենք բնությունը», բայց «չենք մեծարում», ապա «բնությունը» համարում ենք անկենդան և այդպես էլ չենք գիտակցում, որ այն օրգանական է, կենդանի ու աշխուժ: «Բնությունը մեծարելը», բայց «չճանաչելը» հանգեցնում է նրան, որ մարդը «բնությանը կամ Երկնքին» վերաբերվում է որպես «մարդուց» դուրս առեղծվածային ուժի և թույլ չի տալիս, որ մարդը ստանա բնության իրական շնորհի: «Բնությունը ճանաչելը» համակցվում է այն «մեծարելու»

հետ, և սա «բնության և մարդու միավորման» կարևոր դրսևորում է, որն արտացոլում է «մարդու» ներքին պարտավորությունը «բնության» հանդեպ: «Բնության և մարդու միասնություն» փիլիսոփայական պնդումը խորհրդանշում է «բնության» և «մարդու» միջև բարդ հարաբերությունը, որը ոչ միայն ներառում է այն, թե «մարդն» ինչպես պիտի հասկանա «բնությունը», այլև այն, որ «մարդը» պիտի մեծարի «բնությունը»՝ հանուն նրա սրբության: Սա է պատճառը, որ չինական կոնֆուցիականությունը չի դարձել համընդիանուր կրոն (ինչպես բուդդայականությունը և քրիստոնեությունը), սակայն այն որոշակի «կրոնականություն» է պարունակում: Կոնֆուցիական միտքը կրոնական գործառույթ ունի Չինաստանում, այսինքն՝ կոնֆուցիականները կարծում են, որ «մարդու» ներքին բարոյականությունը, որը հանձնագրվել է «բնության» կողմից, բարոյական զարգացման կարիք ունի՝ «անդրանցականությունը», այսինքն՝ «սովորական մարդուց ինաստունի մակարդակի անցումը» իրագործելու համար: Եթևաբար, «բնության և մարդու միասնությունը» ոչ միայն «բնության» ճանաչումն է, այլև կյանքի ոլորտ, որին «մարդը» պիտի ծգտի: Պատճառն այն է, որ թյանը (բնություն, Երկինք) նշանակում է ոչ միայն բնություն, այլև «Երկինք»՝ սրբության իմաստով: «Մարդկային եռությունը» պետք է հասնի անդրանցականության ոլորտին, որը հավասար է թյանին (Երկինք, բնություն): Այս իմաստով, «մարդն» ու «բնությունը» հակադրության մեջ չեն: Փոխարենը, «մարդը» միավորվում է «Երկնքի ու Երկրի» հետ: Օրինակ, Մենցիոն ասում է: «Այն վայրում, ուր այցելել է գերակա մշակույթը, մարդիկ կրում են նրա ազդեցությունը և կրթվում են: Այն վայրը, որտեղ այդ գերակա մշակույթն ապրել է, հրաշագործ ազդեցության տակ է, իսկ իմաստումը գործում է Երկնքի ու Երկրի հետ համատեղ» (Մենցիոն 1980, «Զինակին շան»): Այս կերպ, վերադասը գիտակցում է անձնական անդրանցականությունը: Մտածողության այս ձևը ոչ միայն օգնում է մեզ ազատվել «Երկնքի ու մարդու բաժանման» խնդրից (Երկնքի ու մարդու թշնամությունը), այլև բացում է նոր ճանապարհ, որով մարդ արարածները կհասնեն իդեալական մարդկային ոլորտի:

Երկրորդ, մենք չենք կարող «Երկնքի (բնություն)» և «մարդու» հարաբերությունը համարել արտաքին հարաբերություն, որովհետև «Երկինքը մարդ է, մարդը՝ Երկինք», ուստի «Երկինքն» ու «մարդն» ի սկզբանե կապված են: «Մարդը» չի կարող առանձնանալ «Երկնքից» և չի կարող գոյատևել առանց «Երկնքի»: «Երկինքը» չի կարելի առանձնացնել «մարդուց». առանց «մարդու» «Երկնքի» բանականությունը չի կարող մարմնավորվել, ուստի ո՞վ կարող է հասկանալ «Երկնքի Դառն»: «Երկնքի» և «մարդու» հարաբերությունը հասկանալը բնորոշ է չինական փիլիսոփայությանը: Այս հարցի շուրջ Վան Ֆուչին կարևոր դիտարկում է արել: Ուսումնասիրելով հնագույն գիտնականների տեսությունները՝ նա գալիս է այն եզրակացության, որ նրանք ընդամենք ընկալել են Յին դինաստիայից առաջ գոյություն ունեցող կոնֆուցիականության Երևույթների միայն արտաքին կողմը և կարծել, որ «Փոփոխությունների գիրքը» միայն «Երկնքի Դառնի» մասին է, բայց չգիտեին, որ Դան դինաստիայից ի վեր «Փոփոխությունների գիրքն» ուներ «մարդու Դառնի» արմատներ կամ հիմք (Վան Ֆուչի, հատոր 9, Ցյանչեն շան): Զոյլ Դունիի «թայձի նկարի» ուսմունքը «Երկնքի և մարդու միասնության» արմատների (ծագման) մասին է, որը բացատրում է, որ մարդու ծնունդը «Երկնքի Դառնի» փոփոխության արդյունքն է: «Երկնքի Դառնի» վերածվելու ընթացքում Երկինքն իր հիմնական մասը հանձնում է «մարդուն» և ստիպում, որ «մարդը» տիրի

«մարդկային էռլյանը», որը տարբերվում է մյուս երևույթներց: Այդ դեպքում մարդ կարող է բացահայտել, որ «մարդու Դառյի»՝ բարոյական մարդկային հարաբերությունների բոլոր սկզբունքները (մարդկային հասարակության կանոնները) համահունչ են «Երկնքի Դառյի» (տիեզերքի օրենքը) հն-յան շարժման հետ: «Մարդու Դառն» և «Երկնքի Դառն» պետք է միավորվեն: «Մարդու Դառն» հիմնված է «Երկնքի Դառյի» վրա, որովհետև «մարդը» Երկնքի (բնության) մասն է, ուստի «մարդու Դառյի» քննարկումն անհնար է առանձնացնել «Երկնքի Դառյից», իսկ «Երկնքի Դառյի» քննարկումը պետք է նկատի առնի նաև «մարդու Դառն»: «Մարդու Դառյի» «առօրյա կյանքի և երևույթների սկզբունքը» համահունչ է «Երկնքի Դառյի» հն-յան շարժման հետ: Զան Ցայն ասում է, որ «հծինը պարունակում է Երկնքի սկզբունքը, ինչպես նաև «մարդու Դառն» (Զան Ցայ 1978, էջ 65):

Երրորդ, կոնֆուցիական փիլիսոփայությունն ինչու՞ է պնդում, որ «Երկնքի և մարդու» միջև կա «ներքին հարաբերություն»: Արևատյան Չոռու դինաստիայում կա հնտելեկոտուալ ավանդույթ, որը նկարագրվում է հետևյալ կերպ՝ «Երկնքի ականջն իմ ժողովրդի ականջն է, Երկնքի աչքը՝ իմ ժողովրդի աչքը» (Մենցիոն 1980, Վանջան շան): Ավանդույթը գոյություն է ունեցել Կոնֆուցիոսի, Մենցիոսի, Չեն Շաոյի, Չեն Իի, Չու Սիի, Լու Ջյույուանի և Կան Յանմինի ժամանակաշրջան-ներում: Այս առունով Չու Սիի ասածն արտացոլում է Կոնֆուցիոսի հետևողականությունը «բարեգործություն սովորելու» հարցում: Նա ասում է. «Բարեգործ մարդու պիտի ունենա սիրտ՝ բնության համար առատորեն արարելու, սիրտ՝ մարդկանց հանդեպ գորովանքի և իրերի հանդեպ բարեգութ լինելու համար. բարեգործ մարդու սիրտը պարունակում է չորս բարոյախսոսություն (բարեգործություն, արդարամտություն, ծեսեր և իմաստություն) և ներթափանցում չորս բարոյախսությունների չորս ակունքներ» (Չու Սի 1936, հատոր 13): «Երկնքի Դառն» մշտապես արարում է և մեծ տեղ է հատկացնում բարեգործությանը: «Երկինքը» (բնություն) կարող է ստիճանը, որ բազմաթիվ երևույթներ լավ զարգանան, ուստի «մարդը» պետք է հետևի «Երկնքի» (բնություն) օրինակին, բարեգութ լինի մարդու հանդեպ և օգտակար լինի բազում երևույթների: Քանի որ «Երկինքն ու մարդը միավորված են՝ որպես մեկ ամբողջություն», «մարդը» ձեռք է բերում «Երկնքի» էռլյունը, որ դառնա «մարդ», ուստի մարդը պիտի գիտակցի «բնության» (Երկինք) գործառույթը և «գորովանքն այլ մարդու հանդեպ» և օգտակար լինի իրերին»: «Երկնքի սիրտը» և «մարդու սիրտը» իրականում նույն սիրտն են: «Մարդը» պիտի գիտակցի «Երկնքի Դառն» և զգա «Երկնքի Դառն»: Կյանքի արժեքն է գիտակցել «Երկնքի ճակատագիրը (բախտը)», ուստի «Երկնքի» և «մարդու» հարաբերությունն իրականում ներքին է:

Մենք քննարկում ենք «Երկնքի և մարդու միասնությունը» և այն հասկանում փիլիսոփայորեն՝ մկատի առնելով վերոնշյալ կետերը, որպեսզի հասկանանք նրա իրական ոգին և արժեքը: Սա համաշխարհային տեսակետ է, մտածողության կերպ, որ կիրառվում է «Երկնքի և մարդու միասնության» մեկնաբանության տիրություն: Սրա կարևորությունն այն է, որ այն «մարդուն» օժտում է պատասխանատվության անխուսափելի զգացողությամբ: «Մարդը» կարող է գիտակցել իր սեփական անդրանցականությունը և հասնել «Երկնքի ու մարդու իդեալական միասնության» միայն «Երկինքը» (բնությունը) նմանակենլու» գործընթացում (բարձրանալով «Երկնքի» ոլորտ):

Անշուշտ, «Երկնքի ու մարդու միասնության» կոնֆուցիական գաղափարը չի

Կարող ուղղակիորեն լուծել մարդկային հասարակության մեջ «մարդու և բնության» բախման հատուկ խնդիրները: Սակայն որպես փիլիսոփայական հիմնավորում՝ «Երկնքի և մարդու միասնության» գաղափարը ենթադրում է, որ «Երկինքն» ու «մարդը» անբաժան են: Ավելին, «Երկինքն» ու «մարդը» պետք է ընկալվեն որպես անկապտելի միություն: «Երկնքի» և «մարդու» միջև կա ներքին հաղորդակցություն, որն անկասկած մտածողության դրական ճանապարհ է «Երկնքի» և «մարդու» հարաբերության փիլիսոփայական լուծման համար:

## 2.5 Մարդու և մարդու հարաբերությունը

«Մարդու և մարդու բախումը», որ գոյություն ունի ժամանակակից հասարակության մեջ, ավելի բարդ է, քան «մարդու և բնության բախումը»: Ներանձնային բախումը կապված չէ միայն «Եսի և ուրիշների», «մարդու և համայնքի», «ազգի և ազգի», «ժողովորի և ժողովորի» ու «տարածաշրջանի և տարածաշրջանի» միջև բազմաթիվ բախումների հետ: Օրինակ, նյութական կարիքների և իշխանության հետապնդումը, պայքարը բնական ռեսուրսների հանար, ունեցվածքի և նկրտումների ընդլայնումը առաջացնում են բախումներ և պատերազմներ ազգերի, ժողովուրդների ու տարածաշրջանների միջև և հանգեցնում «կայսերական գերիշխանության» և «ահարեւէզության»: Փողը և նյութական բարիքները վայելելու ծայրահեղ մոլուցքը, հատկապես դեկավարող դասի կաշառակերությունը և նրանց կողմից հասարակ մարդկանց ճնշումը լարվածություն են առաջացնում մարդկանց հարաբերություններում, ստեղծում բացասական հասարակական մթնոլորտ, բազմաթիվ գժություններ և պառակտում: Հասարակության մեջ երեխաները, երիտասարդներն ու տարեցները ունեն սեփական խնդիրները: Թյուրիմացությունն ու թշնամությունը առօրյա կյանքում, հոգիների մեկուսացումը հետազյում հանգեցնում են հասարակական մերժաշնակության կազմաքանդան: Այս միտումը կիանգեցնի մարդկային հասարակության կործանմանը: Արդյո՞ք կոնֆուցիականությունը օգտակար մտավոր աղբյուր է ժամանակակից հասարակության թերությունները վերացնելու համար: Ին կարծիքով, կոնֆուցիական «բարեգրության ուսմունքը» թերևս մեծ նշանակություն ունի «մարդու և մարդու», ազգերի, ժողովուրդների ու տարածաշրջանների միջև ներդաշնակության ծևավորման կամ «ներդաշնակ հասարակություն» ստեղծելու գործում:

«Գոյյան Չունու Չուլյան» գրքի «Սին ցի մին չու» 性自命出 (Էռությունը բխում է բախտից) հատորում նշվում է, որ «Դառն առաջանում է կապվածությունից (զգացմունք, հույզ), իսկ կապվածությունը՝ էռությունից: Առաջինը մոտ է կապվածությանը, վերջինը՝ արդարամտությանը»: Սա նշանակում է, որ ներանձնային հարաբերություններն ի սկզբանե հիմնված են կապվածության վրա (զգացմունք), իսկ կապվածությունը բխում է մարդկային էռությունից: Հետևաբար, ներանձնային հարաբերությունների սկզբում ավելի կարևոր է կապվածությունը (ինչպես, օրինակ, մոր և երեխայի կապվածությունը), իսկ հետագայում բարոյականությունն ու արդարությունը (Դառն կամ ճանապարհ, արդարությունն կամ արդարամտություն) ավելի կարևոր են, քան կապվածությունը: Այս դեպքում «Մարդու Դառն ներանձնային հարաբերությունների կամ հասարակական հարաբերությունների սկզբունքների օրենքն է: Այն կապված է «Երկնքի Դառյի» հետ, բայց տարբերվում է «Երկնքի Դառյից», որը բնության (կամ մարդուց անդին արտաքին աշխարհի)

օրենքն է: «Դատն ծագում է կապվածությունից» արտահայտությունը նշանակում է, որ ներանձնային հարաբերություններն ի սկզբանե հիմնված են կապվածության վրա: Սա Կոնֆուցիոսի «քարեգործության ուսմունքի» ելակետն է: Կոնֆուցիոսի աշակերտ Ֆան Չին հարցում է նրան, թե ինչ է «քարեգործությունը», և Կոնֆուցիոսը պատասխանում է սիրել մարդկանց: Որտեղից է գալիս «սիրել մարդկանց» բարոյական պատվիրանը: «Զունյունը» մեջբերում է Կոնֆուցիոսին. «Բարեգործությունը մարդու բնավորության գիծ է, և նրա ամենակարևոր գործոնը ընտանիքը սիրելն է»: Բարիք գործելու բարոյական գիծը ի ծնե է, կարևոր է սիրել սեփական ընտանիքը (Ցիսի 1980, գլուխ 20): Բայց կոնֆուցիականները կարծում են, որ բարեգործությունը չի կարող հիմնվել միայն մարդու՝ ընտանիքի հանդեպ սիրո վրա: «Գողյան Զունյան» ասում է. «Ընտանիքն անկեղծորեն սիրելը պայմանավորված է կապվածությամբ, բայց բարեգործությունն ընկալվում է որպես կապվածություն սովորական մարդկանց, և ոչ միայն հոր հանդեպ» (Զինմեն 1998): Ընտանիքի հանդեպ մեծ սերը բնական է. սերը (կապվածություն), որ տարածվում է այլ մարդկանց վրա, «բարեգործություն» է: Մի այսպիսի ասացվածք կա. «Որդիական բարեպաշտությունը պետք է մեծանա և վերածվի երկնքի տակ ապրող հասարակ մարդկանց հանդեպ կապվածության (Նոյն տեղում, Թանյու ջի դառ): Սակայն ընտանիքի հետ կապվածությունն այլոց հետ կապվածության հիմքն է: Սա նշանակում է, որ կոնֆուցիական «բարեգործության ուսմունքը» պահանջում է կապվածության թե՛ ընտանիքում, թե՛ հասարակության մեջ: «Ինքո՞ք թեզ ուրիշի դերում պատկերացրու» սկզբունքը և նրա գործածումը, «հարգանքով վերաբերվիր ընտանիքի տարեցներին և այդ հարգանքը տարածիր ընտանիքից դուրս երիտասարդների վրա (Մենցիս 1980, Լյան Շուեյվան շան)` բարեգործություն տարածելով: Ղժվար է ապրել ըստ «քեզ ուրիշի դերում պատկերացրու» սկզբունքով. պետք է առաջնորդվել «ջունի忠 (մարդու նախնական բարի մտքի լիարժեք զարգացում) Դառյի» և շուի 慈 (այդ միտքն այլոց վրա տարածելու), սկզբունքներով, որոնք նկարագրում են հետևյալ արտահայտություններում՝ «ուրիշների հետ վարվիր այնպես, ինչպես կցանկանաս, որ թեզ հետ վարվեն» (Կոնֆուցիոս 1980, ՅանյուաՅ), «Եթե ցանկանում ես ստեղծել քո սեփական կերպարը, նաև ստեղծիր ուրիշների կերպարները, և եթե ուզում ես նշանավոր լինել, նաև օգնիր ուրիշներին նշանավոր լինել (Նոյն տեղում. Յունյե), որոնք կօգնեն կյանքի կոչել «բարեգործության» սկզբունքը: (Զու Սիի «Սիշու ծիջու» գիրքը բացատրում է. «Բարությունը լավագույնս իրագործելը ջուն է, իսկ բարության տարածումը՝ շուն»: Եթե «բարեգործությունը» տարածվիր է հասարակության վրա (ողջ մարդկային հասարակության), ապա նմանվում է Կոնֆուցիոսի խոսքին. «Եսփական անձին տիրապետելն ու ծեսին վերադառնալը բարեգործություն է: Եթե մարդը (կառավարիչը) կարողանա մի օր տիրապետել ինքն իրեն և վերադառնալ ծեսերին (արարողություն), երկնքի տակ ամեն ինչ կվերադառնա բարեգործության: Բարեգործությունը կիրառելը կախված է մարդուց: Մի՞թե այն կախված է ուրիշներից (Նոյն տեղում, ՅանյուաՅ): Անցյալում «Եսասիրական ցանկությունը հաղթահարելը» և «ծեսով վերականգնելը» միշտ բացատրվում էին որպես երկու զուգահեռ գործողություն, բայց նման ընկալումը, իմ կարծիքով, ճիշտ չէ: «Եսասիրական ցանկությունը հաղթահարելն ու ծեսը վերականգնելը բարեգործություն է» արտահայտու-

թյունը նշանակում է, որ «ծեսի վերականգնումը» հիմնված է «եսասիրական ցանկությունը հաղթահարելու» վրա: Ֆեյ Սյաոթունը հիանալի բացատրում է սա: Նա ասում է. «Միայն եսասիրական ցանկությունը հաղթահարելով կարելի է վերականգնել ծեսը: Ծեսը վերականգնելն անհրաժեշտ պայման է հասարակություն մտնելու և հասարակության անդամ դառնալու համար: Սեփական եսասիրական ցանկությունը սահմանափակելը կամ ավելացնելը թերևս արևմտյան և արևելյան մշակույթների հիմնական տարրերությունն է» (Ֆեյ Սյաոթուն 2002, էջ 4): Սա խելամիտ բացատրություն է: Եթե մարդը մուտք է գործում հասարակություն, նա պետք է իրենից ինչ-որ բան պահանջի: Օրինակ, պետք է խնդրի իրեն ապրել ըստ «ուրիշների հետ վարվիր այնպես, ինչպես կցանկանաս, որ քեզ հետ վարվեն» սկզբունքի: միայն այդ դեպքում կարող է հետևել հասարակական չափանիշին (ծես) և դառնալ հասարակության անդամ: Նույնը կիրառելի է ազգի դեպքում. ազգը պիտի ապրի աշխարհի «դաշնագրի» և ընդհանուր կանոնների պահանջների համապատասխան: Այդ դեպքում աշխարհի դաշնագիրը և ընդհանուր օրենքները կապահպանվեն: Ֆեյ Սյաոթունը կարծում էր, որ «եսասիրական ցանկության սահմանափակումը» չինական մշակույթում հրաշալի էր ներանձնային հարաբերությունների համար, մինչդեռ «եսասիրական ցանկության խրախուսումն» արևմտյան մշակույթում, որը մարդու եսը բարձր էր դասում այլ մարդկանցից կամ այլ ազգերից, վստահաբար և հեշտությամբ հանգեցնում էր բախման և պատերազմի: Ըստ Չու Սիի՝ ասացվածքը կարելի է հասկանալ՝ որպես «եսասիրական ցանկության հաղթահարում և վերադարձ ծեսերին, որը Երկնքի սկզբունքը է (Չու Սի 1983): Նա նկատի ունի, որ մենք պիտի սահմանափակենք մեր սեփական եսասիրական ցանկությունը՝ մեր վարքի ու գործողությունների մեջ ծեսերին ու չափանիշներին համապատասխանելու համար: «Բարեգործությունը» մարդու ներքին բնութագիրն է («կապվածությունը ծագում է էռւյունից»): Դասարակական կյանքի իմաստով ծեսը (արարողություն) արտաքին համակարգն է, որը կարգավորում է մարդու վարքագիծը, իսկ նրա գործառույթը ներանձնային հարաբերությունների կարգավորումն է ներդաշնակություն ապահովելու համար: Այն խորհրդանշում է, որ «ծեսերի (արարողություն) կարևորությունը ներդաշնակություն է»: Պահանջը առ այն, որ մարդիկ ենթարկվեն ծեսին (արարողություն), պետք է հիմնված լինի «ուրիշների հանդեպ կապվածության» նրանց ներքին զգացողության (միտք) վրա, որը համապատասխանում է «բարեգործությանը»: Կոնֆուցիոն ասում է. «Բարեգործությունը կախված է մարդուց: Մի՞թե այն կախված է ուրիշներից» (Կոնֆուցիոն 1980, Յանյուան) «Բարեգործության» և «ծեսերի» (արարողություն) հարաբերության մասին Կոնֆուցիոնը հստակ ասել է. «Եթե մարդը բարեգործ չէ, ապա ի՞նչ կապ ունի ծեսերի (արարողություններ և այլն) հետ: Եթե նա բարեգործ չէ, ի՞նչ կապ ունի երաժշտության հետ» (Սույն տեղում, Բայի): Առանց բարեգործ սրտի (միտք) ծեսերի (արարողություն) և երաժշտության համակարգը խարուսիկ է և կեղծ: Քետևաբար, Կոնֆուցիոնը գտնում էր, որ հասարակությունը կարող է լինել ներդաշնակ ու խաղաղ, եթե մարդիկ գիտակցաբար հետամուտ լինեն «բարեգործության», «բարեգործ սիրտը (միտք) հիմնեն» որոշակի չափանիշների վրա և կիրառեն այն առօրյա հասարակական կյանքում: Քենց սա է «Եթե մարդը (կառավարիչ) կարողանա գեթ մեկ օր վերահսկել իրեն և վերադառնալ ծեսերին (արարողություն), Երկնքի տակ ամեն ինչ բարի կլինի» (Սույն տեղում, Յանյուան) արտահայտության իմաստը: Առօրյա կյանքում բարեգործությանը

հետևելը նման է «մեծագույն բարձրության և գերազանցության հասնելու և Դարյի Ոսկե միջինին հետևելու ծգտմանը», որն արտացոլվել է «Զունյունում»: «Զգտել հասնել մեծագույն բարձրության և գերազանցության» (Չիսի 1980, գլուխ 27) նշանակում է, որ մարդիկ կյանքում պետք է հետևեն բարձրագույն սկզբունքին, բարեգործության իդեալին. «Հետևել Դառյի Ոսկե միջինին» սկզբունքը մարդկանց խնդրում է առօրյա կյանքում գիտակցել «բարեգործության» ոգին, «միջինի ուսմունքը ցոյց է տալիս միջինի կիրառումը»: «Մեծագույն բարձրության ու գերազանցության հասնելու ծգտումը» և «Դառյի ոսկե միջինին հետևելը» չի կարելի բաժանել երկու մասի, իսկ կոնֆուցիական բարձրագույն իդեալը՝ Դառն, իմաստություն՝ է՝ առանց արքայության: Այսօր մենք փորձում ենք կառուցել ներդաշնակ հասարակություն, ուստի Կոնֆուցիոսի խոսքերը շատ կարևոր են: «Բարեգործության» բազում բացատրություններ կան Կոնֆուցիոսի «Զրույցներ և ասույթներում», բայց ոչինչ չի ասվում «բարեգործ կառավարման» մասին: Սակայն «մարդկանց առաջնությամբ առաջնորդելն ու արարողությունների (ծեսեր, սովորություններ) կանոններով կառավարելը», «մարդկանց սրտանց սիրելը», «առաքինի և ունակ տաղանդներին ընտրելը», «մարդկանց մեծ օգուտ տալն ու բոլորի կյանքը թերևացնելը», և այլն, վերաբերում են «բարեգործ կառավարմանը»: Մենցիոսի գործերում բազում քննարկումներ կան «բարեգործ կառավարման» մասին, որը բավական լայն իմաստ ունի: Բացատրությունների մի մասն անհամատեղելի է ժամանակակից մարդկային հասարակության կարիքների հետ, բայց նրանցից երկուսը կարևոր դեռ ունի, օգուտ է կառուցել ներդաշնակ հասարակություն և խաղաղության հասնել ամբողջ աշխարհում: Դրանցից մեկը՝ «բարեգործ կառավարման պրակտիկան», պետք է ապահովի մարդկանց կայուն սեփականությունը: Մենցիոսն ասում է. «Մարդիկ հետևում են ծիշտ Դառյին, որովհետև ունեն կայուն սեփականություն և կայուն սիրտ, իսկ առանց կայուն սեփականության չի կարող լինել կայուն սիրտ» (Մենցիոս 1980, թե՛ն Վենգուն շան): Նա ուզում է ասել, որ հասարակ մարդիկ պետք է ունենան որոշակի հաստատում սեփականություն, որը կերաշխավորի նրանց բարոյական և վարքագծային սկզբունքները: Առանց դրա մարդը չի ունենա բարոյական գաղափարներ և վարքագծային ուղեցույցներ: Մենցիոսն ասում էր. «Բարեգործ կառավարումը պետք է սկսվի հողի մասնավոր սեփականությունից» (Խոյն տեղում): Նա նկատի ունի, որ բարեգործ կառավարությունը պետք է հասարակ մարդկանց ապահովի նախ սեփական հողով: Յավատացած են, մենք պետք է երաշխավորենք, որ հասարակ մարդիկ ունենան որոշակի կայուն սեփականություն, եթե իսկապես ուզում ենք կառուցել ներդաշնակ հասարակություն: Միջազգային մակարդակում յուրաքանչյուր ազգ ու ժողովուրդ պիտի ունենա այն հարստությունը, որին արժանի է. հզոր ազգերը չեն պետք է շահագործեն այլոց հարստություն ու ռեսուրսները կամ վարեն ուժի քաղաքականություն: Մենցիոսի երկրորդ տեսակետը «բարեգործ կառավարման» մասին հակառակում է անարդարացի պատերազմին: Նա ասում է. «Նրանք, որ կիետևեն բարի ու ճշմարիտ Դառյին, ավելի մեծ աջակցություն կստանան: Մյուս կողմից, նրանք, որ կկորցնեն բարի ու ճշտ Դառն, սակավ աջակցություն կստանան: Այս դեպքում «Դառ» ասելով նկատի է առնվում «բարոյականությունը և արդարությունը»: «Գոնսուն Չոռուում» կա մի պարբերություն, ըստ որի՝ բարենպատ եղանակը պակաս կարևոր է, քան նպաստավոր տարածքը, իսկ նպաստավոր տարածքը պակաս կարևոր է, քան մարդկանց աջակցությունը:

Այն ասում է.

Կարիք չկա քաղաքացիներին սահմանափակել ազգայինի սահմաններում, պետք չէ պատսպարել ազգը սարի ետևում և սպառնալ աշխարհին կործանարար գենքով: Նրանք, որ հետևում են բարի ու ծշմարիտ Դաոյին, կարժանանան ավելի մեծ աջակցության: Մյուսները, որ հրաժարվում են բարի ու ծշմարիտ Դաոյից, կարժանանան սակավ աջակցության: Նա, ով նվազագույն աջակցություն կստանա, կիանորիայի ընտանիքի ու հարազատների դիմադրությանը, իսկ երկնքի տակ բոլորը կգան ու հավատարմության երդում կտան նրան, ով արժանացել է ամենամեծ աջակցության: Արդարացի մարդ կիանորի, եթե պատերազմ հայտարարի նրանց, որոնց դիմադրում են բոլոր աջակից ուժերը, նույնիսկ իր ընտանիքն ու հարազատները, կամ էլ կարիք չի ունենա պատերազմ սկսել: (Մենցիու 1980, Գոնսուն Չոռու սյա):

Այս պարբերությունը հուշում է մեզ, որ կարիք չկա քաղաքացիներին սահմանափակել ազգային սահմաններում, կախում ունենալ նպաստավոր տարածքի՝ ազգը պաշտպանելու համար, և հույսը դնելով զանգվածային ոչնչացման գենքի վրա՝ սպառնալ աշխարհին: Կոնֆուցիականները սովորաբար պատերազմը բաժանում են երկու տեսակի՝ «արդարացի» և «անարդարացի» պատերազմ: Մենցիուն ասում է. «Գարնանը և աշնանը չի կարող լինել արդարացի պատերազմ» (Սույն գրքում, Զինսին սյա), և «նրանք, որոնք կորցնում են հանրային աջակցությունը, կորցնեն կառավարումը» (Սույն գրքում, Լիլու շան): Այս զաղափարը նաև կիրառվում է ազգի կառավարչի նկատմամբ: Դան դիմաստիայի վաղ շրջանում Զիա Ին գրեց «Գո Ցին լուն» 过秦论 (Ցին դիմաստիայի անկման վերլուծություն): Իր հոդվածում նա եկավ այն եզրահանգման, որ Ցին դիմաստիան կործանվեց, որովհետև «Ցին դիմաստիայի կառավարությունը միավորված ազգ հաստատելուց հետո չհետևեց բարեգործ և արդարամիտ քաղաքականությանը, ուստի կորցրեց իր ինքնիշխանությունը, չնայած ձեռք էր բերել ազգային իշխանություն և ուներ բազմաթիվ առավելություններ» (Զյա Ի 1989, հատոր 1): Նա մեջբերում է «Անցյալի իրադարձություններն այսօրվա դասն են» ասացվածքը: Արդյո՞ք պետք է այսօր յուրացնել իմաստությունը: Նման կոնֆուցիական մտքերը պիտի որոշակի ինաստ ունենան ազգի կառավարչի և աշխարհի զարգացած ազգերի կառավարող խմբի համար: «Կարգավորին պետության գործերը և խաղաղեցրու աշխարհը»՝ հանուն «բարեգործ կառավարման» և «արքայության Դաոյի»՝ և ոչ «բռնակալությանը» ու «ճնշումներով»:

Մեմյուել Փ. Չանթինգը 1993 թվականին քաղաքակրթությունների բախման մասին թեզը ներկայացնելուց ի վեր այն բուռն քննարկումների թեմա է դարձել բոլոր երկուների գիտնականների համար: Մարդկության պատմության մեջ հազվադեպ են մշակության տարբերությունների (օրինակ՝ փիլիսոփայության, կրոնի, արժեքների) հետևանքով առաջացած բախումներ ու պատերազմներ: Քսանմեկերորդ դարում չկա համաշխարհային պատերազմ, բայց հաճախ քաղաքական ու տնտեսական լուրջ խնդիրների պատճառով տարածաշրջանային պատերազմներ են բռնկվում ազգերի, ժողովուրդների ու տարածաշրջանների միջև, բայց մշակույթը նույնպես կարևոր պատճառ է: Մշակության տարբերություններից բխող բախումներն ու նույնիսկ պատերազմները կարգավորելու համար կոնֆուցիոսի «ներդաշնակություն առանց նմանության» գաղափարը թերևս շատ կարևոր սկզբունք է: Զինաստանի պատմության մեջ գոյություն ունի երկու գաղա-

փար՝ «հե չո(ներդաշնակություն)» և «թուն թո (նույնություն)», որոնք տարբեր են, բայց գոյություն ունի ներդաշնակության և նույնության այսպիս կոչված խորականություն: Ըստ Չուոջուանի 左传昭公二十年 (Չուոջուան, դուքս Չաոյի 20-րդ տարի) «Չաոգուն էրջի նյան» արձանագրությունների՝ «Դուքս Չաոն հարցնում է Լյան Ջուջուն միայն ինձ հետ է ներդաշնակ»: Յանցին (Յան Ին) պատասխանում է. «Չուն հենց դու ես: Այն ներդաշնակ է քեզ հետ»: Դուքսն ասում է. «Մի՞թե ներդաշնակությունը տարբերվում է նույնությունից: Յանը պատասխանում է. «Տարբերվում է: Նույնն է, ինչ եթե բանք ապուր եվիս: Չուկ կամ միս պատրաստելու համար անհրաժեշտ է ջուր, կրակ, քացախ, լոլիկ, աղ և սալոր: Կրակի համար վառելափայտ է պետք: Անհրաժեշտ է համեմել, որ համեղ լինի: Եթե համը շատ մեղմ է, խոհարարը համեմունքներ կավելացնի, իսկ եթե սուր է, ջուր կավելացնի, որ թուլացնի համը: Երբ գերադասը համտեսի ապուրը, կզաք, որ գերազանց է: Կայսեր ու նրա պաշտոնյանների միջև հարաբերությունն էլ նոյն կերպ է... Յինա Չուն փոխվել է, որովհետև միշտ համաձայնում է քեզ հետ՝ անկախ քո կայացրած որոշումներից: Դա նույնն է, ինչ եթե ջրի համը լավացնելու համար ջուր ավելացնես: Ու՞ն է պետք: Եթե երաժշտական գործիքները միշտ նոյն մեղեղին կատարեն, ո՞վ կլսի: Յենց այդ պատճառով էլ նույնությունն այնքան էլ ցանկալի չէ» (Ցուտ Ցյումին 1980, Չաոգուն էրջի նյան): Ըստ Չենօյուի Գոյուի 国语<sup>գ.郑语</sup>՝ «Իրերի միջև ներդաշնակ հարաբերություններն օգտակար են նորը ստեղծելու համար, իսկ նույնությունը չի կարող անել դա: Մի բան մյուսին ավելացնելը կոչվում է ներդաշնակություն, որի արդյունքում ստեղծվում է նորը, մինչդեռ երբ նոյնատիպ երկու բան դնում ես կողը կողքի, երկուսն էլ կորցնում են կենսական ուժը: Ուստի անցյալում արքաներն օգտագործում էին հող, մետաղ, փայտ, ջուր ու կրակ՝ բազմաթիվ իրեր ստեղծելու համար» (Ցուտ Ցյումին 1997, հատոր 16): Յետևարար, «ներդաշնակությունն» ու «նույնությունը» նոյնը չեն: Եթե տարբեր ու միմյանց կապված իրերը կարողանան ներդաշնակ աճել, ապա կյանքը կզարգանա: Եթե նոյն իրերը դրվեն կողը կողքի, արդյունքում կենսական ուժը կնվազի: Ավանդական չինական մշակույթի բարձրագույն իդեալը հետևյալն է «տասը հազար իր/առարկա աճում է միասին՝ առանց միմյանց վնասելու. նրանց Դառն շարժվում է զուգահեռ՝ առանց միջամտության» (Ցյուի 1980, գլուխ 30): («Տասը հազար իր/առարկա, որ աճում են միասին» և «զուգահեռ շարժվող Դառն» արտահայտում են «նույնության բացակայությունը». «Նրանք չեն վնասում կամ «միջամտում իրար» սա ներդաշնակություն է»): Սա կարող է դառնալ գաղափարների հարուստ աղբյուր բազմաթիվ մշակույթների գոյակցության համար:

Տարբեր ազգերն ու երկրները պետք է ունենան մշակութային փոխանակումներ և երկխոսություն՝ ընդիմանուր ընթանման, այն է՝ փոխադարձ ճանաչողության գործընթացի հասնելու և տարբերություններն ու ընդհանրությունները զգալու համար: Փոխադարձ ճանաչողության այս տեսակը չի ենթադրում, որ մի կողմը ոչնչացնում է մյուսը, կամ որ մի կողմն ամբողջությամբ ծովալում է մյուսին: Սա նշանակում է փնտրել հատնան կետեր, որտեղ տարբեր մշակույթները կարող են մոտենալ ու զարգանալ: Սա ներդաշնակությունն է: Յետևարար, մենք պետք է ջանահրաբր ձգտենք երկխոսության միջոցով տարբեր մշակույթների ներդաշնակ գոյակցության: Յինա բազմաթիվ գիտնականներ Զինաստանում և արևմուտքում գիտակցում են մշակույթների միջև երկխոսության միջոցով փոխըմբռնման ձգտելու կարևորությունը: Օրինակ, Յաբերմասն առաջ է քաշում «արդարության»

և «համերաշխության» գաղափարները (Հարերմաս 1996): Կարծում եմ՝ սրանը կարելի է կիրառել որպես սկզբունք տարբեր ազգերի ու մշակույթների հարաբերություններում: Հարերմասի արդարության սկզբունքը կարելի է ընկալել հետևյալ կերպ՝ յուրաքանչյուր ազգային մշակույթ պետք է լինի անկախ և ինքնորշված. «համերաշխության սկզբունքը» կարելի է հասկանալ հետևյալ կերպ՝ ազգը պետք է մյուս ազգային մշակույթներին վերաբերվի համակրանքով և հարգի այլ մշակույթները: Միայն շարունակական երկխոսությամ, հաղորդակցության և այլ միջոցներով կարելի է լավ հարաբերություններ հաստատել տարբեր ազգային մշակույթների միջև: Գերմանացի փիլիսոփա Գաղամերը նշում էր, որ «ըմբռումը» պետք է հասցնել «լայն երկխոսության» (Փան Դերուն 2002, էջ 65-68): Այն նպատակ ունի ավելացնել «ըմբռումը» և հասցնել «լայն երկխոսության» մակարդակի, որպեսզի սուբյեկտն ու օբյեկտը հավասարվեն: Այլ կերպ ասած՝ երկխոսությունը կարելի է ազնվորեն վարել փոխադարձ հավասարության պայմանով: Կարելի է ասել, որ Գաղամերի՝ սուբյեկտ-օբյեկտ հավասարության գիտակցությունն ու մշակութային երկխոսության նրա տեսությունը կարևոր և անհրաժեշտ գաղափարներ են մեր դարաշրջանի համար: Գաղափարի եռթյունը ոգեշնչումն է, որը մեզ թույլ կտա ճիշտ հասկանալ չինական և արտասահմանյան մշակութային և ազգային հարաբերությունները: Թե՛ Հարերմասի արդարության և համերաշխության սկզբունքները, թե՛ Գաղամերի՝ լայն երկխոսության տեսությունը՝ որպես արդարության և համերաշխության նախադրյալ, գիտակցում են ներդաշնակության կարիքը՝ առանց նույնության: Միայն այս դեպքում, եթե գիտակցենք, որ տարբեր մշակութային ավանդույթներ ունեցող ազգերն ու պետությունները կարող են հասնել ներդաշնակ գոյակցության, նրանք կունենան հավասար իրավունքների և պարտականությունների հնարավորություն. միայն այս պայմաններում «լայն երկխոսությունը» կարող է ծջնարտացիորեն և սահուն կատարել իր խնդիրները: Այսպիսով, Կոնֆուցիոնի «ներդաշնակություն առանց նույնության» սկզբունքը, որ հիմնված է արժեքավոր ներդաշնակության գաղափարի վրա, պետք է դառնա տարբեր մշակույթների հարաբերությունները կարգավորելու հիմնական սկզբունք:

## 2.6 Մարմնի և մտքի հարաբերությունը

Եթե «Երկնքի և մարդու միասնություն» կոնֆուցիական գաղափարն օգտագործում ենք՝ որպես «մարդու և բնության հակասությունները լուծելու» փիլիսոփայական ռեսուլու, իսկ «եսի ու մյուսների միասնությունը»՝ որպես «մարդկանց հակասությունները լուծելու» գործիք, ապա կարելի է օգտագործել «ներդին և արտաքին ինտեգրումը»՝ մեր իսկ ներքին հակադրությունները զսպելու համար: Արդի հասարակության մեջ կան ճնշումներ: Մասնավորապես, զգայական հաճույքի անսահմանափակ որոնումները հանգեցնում են հոգեբանական անհավասարակշռության և մարդկային անհատականության երկփեղկնան: Հոգեբանական անհավասարակշռությունը հանգեցնում է հոգևոր անհանգստության, հարբեցողության, սպանություն, ինքնասպանության և այլն: Մարդու մարմնի և մտքի այս աղճատումը վերածվել է հասարակական հիվանդության, որը լրջորեն ազդում է հասարակության խաղաղության վրա: Մրա պատճառը բարոյալքումն է. մարդիկ այլևս չունեն մարմնի ու մտքի ներդաշնակության գգացողություն: Բազմաթիվ

ընթրոնող գիտնականներ տեսություններ և քաղաքականություն են առաջարկել այն մասին, թե ինչպես բուժել հիվանդությունը: Անձը զարգացնելու և միտքը սնելու ավանդական չինական մշակույթում մեծ ուշադրություն է դարձվում սրան:

Սին ցի մին չուն «Գոյյան Չումու ջուճյան» գրքում ասում է. «Եթե մտադրվել ես ինանալ Դառն, պիտի քո ներսում վերադառնաս բնածին բարության. դա կոչվում է բարոյական զարգացում» (Չինմեն 1998): Դասյուեն 大学 (Մեծ ուսմունքը) ընդգծում է, որ ժողովորի բարոյական պրակտիկան կարևոր է ներդաշնակ հասարակություն կառուցելու գործում: Գրքի առաջին գլուխն ասում է. «Վեհ լինելու դառսական սկզբունքի էռությունը հստակ կերպարը դրսերելու, մարդկանց նորացնելու և բարձրագույն բարության մեջ ապրելու (մնալու, հանգչելու) մեջ է (Զեն Ցան 1980, գլուխ 1): Զու Սին մեկնաբանում էր. «Նորացնել նշանակում է հեռանալ հմից: Եվ եթե ես իմ ներսում հստակ եմ ու մաքուր, պիտի օգնեմ, որ ուրիշներն էլ ազատվեն նախկին աղտից այնպես, ինչպես ես ազատվեցի... Մաքուր կերպարը դրսերելու և նորանալու համար մարդիկ պետք է մնան բարձրագույն բարության մեջ և չփոխվեն» (Զու Սի 1983, Դասյուեն): Մաքուր կերպար ցուցադրելու և մարդկանց ձևավորելու նպատակն է՝ հասնել բարձրագույն բարության և մարդու բարձրագույն ոլորտին: Յետևաբար, «Մեծ ուսմունքը» պնդում է, որ «Երկնքի Որդուց մինչև սովորական քաղաքացիներ՝ բոլորը բարոյական զարգացումը համարեն արմատ կամ հիմք: Եթե արմատը կարգին չէ, ճյուղերը երբեք կարգին չեն լինի» (Յեն Ցան 1980, գլուխ 1): Դա նշանակում է, որ ըստ կոնֆուցիականության՝ եթե բոլորը (Երկնքի որդուց մինչև սովորական մարդիկ) լավ մշակեին իրենց բարոյականությունը, հնարավոր կլիմեր կարգավորել «ընտանիքը», կարգի բերել «պետությունը» և խաղաղություն հաստատել ողջ «աշխարհում»: Բայց եթե բարոյական զարգացումը, արմատը կամ հիմքը խարիսխած են, միանշանակ անհնար է կարգավորել «ընտանիքը», «պետությունը» և «աշխարհը»: Ըստ «Միջինի ուսմունքի»՝ «հասարակական կառավարումը կախված է մարդուց, ընտրությունը պետք է կատարվի՝ ըստ նրա բարոյական զարգացման, իսկ բարոյական զարգացման չափանիշը՝ Դառն է (բարձրագույն Դառն, ներդաշնակություն), և բարեգործ և սիրող սիրու (միտքը) է անհրաժեշտ՝ ներդաշնակ հասարակություն կայացնելու համար» (Ցիսի 1980, գլուխ 20): Այստեղ անհատի բարոյական զարգացման կապը «քարեզործության» հետ ապացուցում է կոնֆուցիական մտքի հետևողականությունը: Կոնֆուցիականության ուշադրությունը «բարոյական զարգացման» հանդեպ աննպատակ չէ. ավելին, նրա նպատակն է կարգավորել ընտանիքը, կառավարել ազգը և միավորել աշխարհը, այսինքն՝ կառուցել «ներդաշնակ հարաբերություն»: Յամցնիհանուր միասնության իդեալը «Ծեսերի արձանագրության» մեջ նպատակ ունի կառուցել քաղաքական, տնտեսական և մշակութային առումով ներդաշնակ հասարակություն: Ներդաշնակ հասարակության կոնֆուցիական իդեալը հիմնված է անհատական բարոյական զարգացման վրա, ուստի կոնֆուցիականները հատուկ շեշտ են դնում մարմնի ու մտքի անհատական զարգացման վրա: Կոնֆուցիականները կարծում են, որ կյանքն ու մահը, հարստությունն ու պատիվը չպետք է լինեն կյանքի վերջնական նպատակ, և մարդիկ պիտի ծգտեն բարոյական կատարելության ու գիտելիքի: Կոնֆուցիոս ասում էր. «Ինձ անհանգստացնում է, որ մարդիկ չեն զարգացնում իրենց բարոյական կերպարը, գիտելիք չեն սովորում ու սովորեցնում, չեն ապրում արդարամտության օրենքներով և չեն ուղղում իրենց սխալները, թեև գիտեն, որ սխալ են»

(Կոնֆուցիոս 1980, Շուեր): Սա բացահայտում է մարդ լինելու պատճառը: Յեշտ չէ զարգացնել մեր բարոյական կերպարը, որովհետև ունենք մեծ երազանքներ և մարդկության բարեկեցությունն ապահովելու պատրաստականություն: Նաև հեշտ չէ ուսումնասիրել գիտելիքը, որովհետև մենք ոչ միայն կարիք ունենք բարելավել մեր իսկ իմաստությունը, այլև հասարակությունը ցույց տալ մշակույթն ու կրթությունը: Մարդիկ միշտ սխալներ են թույլ տալիս, բայց մենք պետք է խիզախություն ունենանք ուղղել մեր սխալները՝ նպաստելով հասարակական ներդաշնակությանը: «Ունակ լինել բարության» նշանակում է, որ պետք է ամեն օր ձգտենք բարության և օրեցօր զարգացնենք ինքներս մեզ, և միայն այդ դեպքում կիասնենք բարձրագույն բարության վիճակին: Վերը նշված բոլոր պատճառները կարևոր են շիտակ անձ լինելու համար, ինչպես պնդում է կոնֆուցիականությունը: Դրանք անհրաժեշտ են մարմնի և մտքի, ներքինի և արտաքինի ներդաշնակությունը պահպանելու համար: Մենցիսն ասում էր. «Մարդու միտքը պահպանելը և էլուրյունը սնելը Երկնքին ծառայելու ուղին է: Թույլ չտալ ցանկացած անվճռականություն՝ անկախ Երկարակեցությունից կամ խիզախությունից, այլ զարգացնել սեփական անձը և սպասել լին ։ (Ճակատագիր, բախտ, Երկնքի վճիռ կամ իրավասություն) սկսել սեփական ճանապարհը). սա մարդու ճակատագիրն իրագործելու ճանապարհն է» (Մենցիս 1980, Զինսին շան): Եթե մարդը կարող է պահպանել իր կարեկից սիրտը և զարգացնել բարոյական կերպարը՝ Երկնքի Դառն գիտակցելու համար, ապա կյանքի տևողությունը կարևոր չէ: Բայց նա պետք է վստահ լինի, որ կիամապատասխանի Երկնքի Դառնին անհատական բարոյական զարգացման միջոցով: Սա մարդու խաղաղությունն է, անդորրը և ճակատագիր սահմանումը:

Կոնֆուցիական ինքնազարգացումը նպատակ ունի: Իծինն ասում է. «Օգտվեք անհատական բարոյական զարգացումից, որպեսզի հարգեք առաքինությունը» («Զոուի, Սիցի սյա): Մարդկանց գործողությունները պետք է օգուտ բերեն հասարակությանը, և սա նրանց գլխավոր ձգտումն է: Անհատն ինքնակրթվում է, որպեսզի վսեմացնի իր ոգին «և կենտրոնացնի միտքը Երկնքի և Երկրի վրա, սահմանի իր կյանքի ճակատագիրը և շարունակի սովորել ու դառնալ իմաստուն, որպեսզի աշխարհում ամեն ինչ խաղաղ լինի» (Զան Ցայ 1978, էջ 320): Սրա նպատակն է՝ «սահմանել մեծ արմատը կամ հիմքը և իրականացնել Դառն»: Սուն դինաստիայում կոնֆուցիականները պնդում էին, որ ինչ վերաբերում է անհատին, նա խաղաղ կլինի ինքն իր հետ թե՛ ներքին մտքերում ու զգացմունքներում, թե՛ արտաքին հարաբերություններում: Զան Զինֆուին ուղղված նամակում Զինֆուի հետ քննարկելով «միջինի ու ներդաշնակության նշանակությունը»՝ Զու Սին ասում է. «Այսուհետ ես գիտեմ, որ ապահով վայր ունեմ, մարդու խաղաղության ու հանդարտության, ճակատագրի սահմաննան և տիեզերքի ընդարձակ կերպափոխության մեջ գիտակցության գերիշխանության մի վայր: Ուստիև, մեզ համար խոր արմատ (հիմք) ստեղծելու և մեծ Դառն իրագործելու մեր բանալին նկարագրված է այնպես, որ նյութն ու գործառույթն ունեն մեկ աղբյուր, և ակնհայտնի ու թաքնվածի միջև անջրպետ չկա» (Զու Սի 1936, հատոր 10): Կոնֆուցիականության պնդմամբ՝ մարդու համար շատ կարևոր էր խաղաղություն և հանդարտություն գտնել և սահմանել սեփական ճակատագիրը՝ հանուն մարմնի և մտքի ներդաշնակության, ներքին մտքերի և զգացմունքի և արտաքին գործոնների: Յետևաբար, Զու Սին ասում էր. «Եթե մարդը կարողանում է ներդաշնակորեն

կենտրոնանալ ինքն իր մեջ, չնայած աշխարհն ընդհանուր առնամբ, ներքին աշխարհը, նրա երկինքն ու երկիրը և բազմաթիվ իրեր քառային վիճակում են, նա խաղաղ ու անվնաս է մնում: Եթե մարդն ունակ չէ հասնել սրան, չնայած աշխարհում ընդհանուր առնամբ կարգուկանոն է, նրա ներքին աշխարհը կվոդովվի, նույնիսկ եթե դրսից որևէ վնաս չլինի: Նույնն է նաև երկրի կամ ընտանիքի դեպքում» (Նույն աղբյուրից): Եթե մեր ներքին և արտաքին էությունը ներդաշնակ են, խառնաշփոր աշխարհի քառու չի կարող վրդովել մեր ներքին խաղաղությունը: Եթե կենտրոնացած և ներդաշնակ չենք մեր ներքին և արտաքին էության հետ, նույնիսկ եթե արտաքին աշխարհը կարգավորված է, մենք կլինենք անհանգիստ, տագնապած կամ խռովված: «Ետք է ջանասիրաբար աշխատենք և զարգացնենք մեր առաքինություն՝ անկախ նրանից՝ աշխարհում քառս է տիրում, թե կարգուկանոն: Այսպես կարող ենք իրականացնել մեր կյանքի պարտականությունը, և երբ գա աշխարհը լքելու ժամանակը, կկարողանանք հեռանալ խաղաղության և բավարարվածության զգացումով: Այսպիսով, Զան Ցայի «Սիմին»<sup>10</sup> (Արևմտյան գրություն) գրքի վերջին երկու նախադասությունները հետևյալն են. «Կյանքում ես կատարում եմ իմ պարտականությունը՝ որպես հասարակության անդամ և տիեզերքի անդամ, և երբ մահը գալիս է, հանգստանում եմ» (Զան Ցայ 1978, էջ 63):

Կոնֆուցիականները հետևողականորեն մեծ ուշադրություն են դարձնում անհատի խաղաղությանն ու հանդարտությանը և ճակատագրի սահմանմանը: Սա գալիս է ինքնազարգացումից: Այս ճանապարհով մենք կարող ենք ներդաշնակություն հաստատել մեր սրտերում, մտքերում, մեր ներքին աշխարհում և նրա արտաքին դրսերումներում: Մեր խոսքերն ու գործողությունները հարմարվում են «մարդ լինելու սկզբունքին»: Եվ այսպես ապրում ենք խաղաղության մեջ և սահմանում մեր ճակատագիրը: Մենք պետք է վերացնենք բոլոր խոչընդոտները անձնական ներդաշնակության ճանապարհին: Ցեն Ցին ասում է. «Ամեն օր երեք հարց են տալիս ինձ. արդյոք հավատարիմ եմ եղել ուրիշներին խրատելիս, արդյոք ընկերներիս հետ շփման մեջ վստահելի եմ եղել, արդյոք դարձյալ ու դարձյալ կրկնել և գործնականում կիրառել են ուսուցչի հրահանգները» (Կոնֆուցիոս 1980, Սյուէ էր): «Պատվարժան մարդն ամեն օր պետք է ճանաչի իրեն և հասկանա, թե արդյոք իր վարքն ու գործողությունները բարոյական են և արդար: Եթե կա որևէ անբարոյական և անարդարացի երևույթ, նա պետք է գոհաբերի իր կյանքը՝ մարդասիրությունն իրագործելու և արդարությունը պաշտպանելու համար: Կոնֆուցիոսն ասում էր. «Վճռական և մարդասեր գիտնականը երբեք չի ծգուի ապրել մարդկությանը վնասելու հաշվին: Նա կնախընտրի զոհել իր կյանքը՝ մարդասիրություն գործելու համար» (Կոնֆուցիոս 1980, Վեյ լին Գուն): Մենցիոսն ասում էր. «Եթե ես չեմ ապրում մարդասիրության և արդարության օրենքներով, նախընտրում եմ ինքնալբումը» (Մենցիոս 1980, Լիլոու շան): Յեշտ չէ իրագործել կոնֆուցիականների «մարդ լինելու սկզբունքը», բայց մարդիկ պետք է ջանասիրաբար ձգտեն դրան: Այս անհատական խաղաղության հասնելու նպատակը հասարակական ներդաշնակություն ստեղծելն է:

Սիմա Ցյանն ասում է. «Մարդու համար իների Դառն ուսումնասիրելը նման է ինքներս մեզ համար հայելի պատրաստելուն. պարտադիր չէ, որ երկու դարաշրջանները միանգանայն նույնական լինեն» (Սիմա Ցյան 1997, հատոր 18): Մենք վերանայում ենք Կոնֆուցիոսի և նրա դպրոցի մտքերը, որպեսզի գտնենք մարդկային հասարակության համար պիտանի աղբյուրներ: Սա, անկասկած, կարևոր

Է: Բայց իհն ժամանակների իմաստունների և արժանավորների մտքերն ու գաղափարներն ամբողջությամբ ի վիճակի չեն լուծել մեր ժամանակի բոլոր խնդիրները. դրանք նաև չեն համապատասխանում ժամանակակից հասարակության պահանջներին: Նրանք կարող են միայն մեզ ցույց տալ մտածողության արահետը, հուշել, թե ինչպես օգտվենք այս ռեսուլսներից՝ նոր իհնքեր տալով մեր ժամանակների խնդիրներին անդրադառնալու համար: Ենց այսպես են նրանք իրենց ներդրումն ունենալ ներդաշնակ մարդկային հասարակության կառուցման գործում: «Չնայած Զոուն իհն պետություն է, նրա իշխանությունը նոր է» (Շիձին 1980, Դայա): Մեր չինացի ազգը հնագույն ազգ է, 5000 տարվա պատմությամբ և մշակույթով: Մեր առաքելությունն է՝ երաշխավորել, որ մեր հասարակությունը մշտապես վերակենդանանա և իր ներդրումն ունենա ողջ մարդկության մեջ:

### Հղումներ

Չեն Զամբյա: (2006, փետրվար 23): Ժուտուե «ոդիսից լամչառ». Զիրյան ժուծյան (Կոնֆուցիականության «Չորրորդ ալիքը»). թեժ քննարկում կոնֆուցիականության շուրջ: Չանհայ. Չենհուեյ Քեսյուե Բառ:

Չեն Չառ, Չեն Ի (2004): «Էր Չեն ծի» (Չեն եղբայրների ստեղծագործությունների ժողովածու): Պեկին. Չունհուա Շուածու:

Կոնֆուցիոն: (1980): «Լումյու» (Զրույցներ և առակներ: Ժուան Յուանում (խմբ.) «Չիսան ծին ջուշու» (Տասներեք դասականների մեկնարանություններ): Պեկին. Չունհուա Շուածու:

Ֆեյ Սյաթրուն: (2002, հունիս 6): «Չունգոն վենհուա դե ցյանթու» (Չինական մշակույթի հեռանկարներ): Չանհայ. Չենհուեյ Քեսյուե Բառ:

Ֆեյ Սյաթրուն: (2005): «Ֆեյ Սյաթրուն լում վենհուա յու վենհուա ցիձյուե (Ֆեյ Սյաթրունի տեսությունը մշակույթի և մշակութային ինքնագիտակցության մասին): Պեկին. Յունյան Չուրանչե:

Ջարերմաս, Զ. (1996): «Փաստերի և նորմերի միջև. ներդրումներ օրենքի և ժողովրդավարության տեսության տրամասության մեջ»: Քենբրիջ, ՍԱ. «Միթ Փրես»:

Չան Չու: (1991): «Չան Չանլի ցյուանձի» (Չան Չանլիի երկերի լիակատար ժողովածու): Կոնֆուցիականության ժամանակակից կարևորությունը 501: Պեկին. Չունգոն Շուածու:

Չասիկերս, Ք. (1989): «Պատմության ծագումն ու նպատակը»: Նյու Յեվըն. Յեյլի համալսարանի հրատարակչություն

Ջաս Ի: (1989): «Ախնչու» (Նյու գիրը): Չանհայ. Չանհայ Գուծի Չուրանշե

Ջամ Ցին: (2005): «Լում Չունգոն ժուծյան դե չունձյան (Չինական կոնֆուցիականության վերակառուցման մասին): «Չունգոն ժուծյան Յանձյու (Չինական կոնֆուցիականության հետագործությունների ամսագիր), (հատոր 1):

Չինմեն քանգարան: (1998): «Գոյշան Չումու ջուծյան (Չու քամբուկից մագաղաքներ Չինմենում, Յուրեյ նահանգ): Պեկին. Վենվու Չուրանշե:

Սենցիոն: (1980): «Մենցի» (Սենցիոն: Ժուան Յուանում (խմբ.) «Չիսան ծին ջուշու» (Սեկնարանություններ տասներեք դասականների մասին): Պեկին. Չունհուա Շուածու:

Փան Ղեժուն: (2002, ապրիլ): «Գաղամեր դե ջեսյուե իշան» (Գաղամերի փիլիսոփայական ժառանգությունը): Յոնգ Քոնդ. Էրշի Շիձի:

Ուսել, Բ. (1922): «Չինաստանի խնդիրը»: Նյու Յորք. «Անչըրի Քո»

Ուսել, Բ. (1972): «Արևմտյան փիլիսոփայության պատմություն»: Նյու Յորք. «Սայմոն ընդ Շուսթեր:

«Ծիծին»: (1980): Ծիծին (Երգերի գիրք): Ժուան Յուանում (Խմբ.) «Ծիսան ծին ջուշու (Սեկնարանություններ տասներեք դասականների մասին)»: Պեկին. Զունհուա Շունդու:

Միմա Ցյան: (1997): «Ծիծին» (Չինաստանի մեծ պատմաբանի արձանագրությունները): Պեկին. Զունգուա Շունդու:

Թու Ուեյմին: (2002): «Թու Վեյմին վենձի» (Թու Ուեյմինի երկերի ժողովածու) (հատոր 5): Ուհան. Ուհան Չուբանշե:

Վան Ֆուշի: (1975): «Զանցի Զենմեն ջու» (Վարպետ Զանի «Զենմենի» ծանոթագրություններ): Պեկին. Զունհուա Շունդու:

Ցեն Ցան: (1980): «Դասյուե» (Մեծ ուսմունք): Ժուան Յուանում (Խմբ.) «Ծիսան ծին ջուշու (Սեկնարանություններ տասներեք դասականների մասին)»: Պեկին. Զունհուա Շունդու:

Զան Ցայ: (1978): «Զան Ցայ ծի» (Զան Ցայի երկերի ժողովածու): Պեկին. Զունհուա Շունդու:

Զոուլի: (1980): «Զոուլի» (Ծեսերի գիրք): Ժուան Յուանում (Խմբ.) «Ծիսան ծին ջուշու (Սեկնարանություններ տասներեք դասականների մասին)»: Պեկին. Զունհուա Շունդու:

Զու Սի: (1936): «Զուցի վենձի» (Զու Սիի երկերի ժողովածու): Շանհայ. Շանու Ին-շուգուան:

Զու Սի: (1983): «Սիշու ջանձու ծիջու» (Զորս գրքերի տարրերակներ): Պեկին. Զունհուա Շունդու:

Զու Սի: (1990): «Զուցի յուլեյ» (Վարպետ Զուի գրույցմերը՝ ըստ թեմաների): Պեկին. Զունհուա Շունդու:

Ցիսի: (1980): «Զունյուն» (Միջինի ուսմունքը): Ժուան Յուանում (Խմբ.) «Ծիսան ծին Զուշու (Սեկնարանություններ տասներեք դասականների մասին)»: Պեկին. Զունհուա Շունդու:

Ցուլ Ցյումին: (1980): «Ցուլ Ցուան» (Գարնան և աշնան տարեգրերի Ցուլ Ցյումինի հրատարակություն): Ժուան Յուանում (Խմբ. «Ծիսան ծին ջուշու (Սեկնարանություններ տասներեք դասականների մասին)»: Պեկին. Զունհուա Շունդու:

Ցուլ Ցյումին: (1997): «Գոյու (Ազգային խոսքեր): Շենյան. Լյաոնին. Ջյաոյու Չուբանշե:

## ԳԼՈՒԽ 3

### Չինական հերմենևստիկայի հետքերով<sup>16</sup>

Այս պահից ի վեր, երբ տասը տարի առաջ արևմտյան հերմենևստիկան ներմուծվեց չինական կրթական հաստատությունների, չինացի գիտնականներն օգտագործում են նրա մեթոդներն ու տեսությունները հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառում: Արևմուտքում մեկնարանության պատմության հետքերը տանում են Յին Յունաստան, բայց այն բուրն ծաղկում ապրեց աստվածաշնչյան գիտության հետ: Մի քանի դար հասունանալուց հետո, հատկապես Ֆրիդրիխ Շլայերնախերի (1768-1834) և Վիլհելմ Դիլբի (1833-1911) աշխատությունների հրատարակությունից հետո, այն դարձավ ազդեցիկ ու մշակված առարկա՝ իր համակարգային տեսություններով: Այս թեզում կընարկվի երկու հարց: նախ, արդյո՞ք կա «հերմենևստիկա» առարկա Յին Չինաստանում: Եվ երկրորդ, հնարավո՞ր է պարզել մեկնարանության ընդհանուր կաղապարները չինացի դասականների ուսումնասիրություններում:

#### 3.1 Արդյո՞ք Յին Չինաստանում գոյություն ուներ «հերմենևստիկա» առարկան

Անշուշտ, դասականների մեկնարանությունը երկար պատմություն ունի Չինաստանում: Սակայն արդյո՞ք կարող ենք ասել, որ կա մեկնարանության համակարգային տեսություն, որը տարբերվում է արևմտյանից: Չեմ կարծում: Կարող ենք ասել միայն, որ մենք փորձում ենք սահմանել մեր հերմենևստիկան, որն ունի չինական բնութագիր, և որ մենք նշանակալի առաջընթաց ենք գրանցել այս նպատակին հասնելու ճանապարհին: Իմ կարծիքով՝ ուսումնասիրության առարկա կամ գիտության ճյուղ ստեղծելու համար անհրաժեշտ է նախ հասկանալ մեր իսկ տեսական և մեթոդաբանական ենթադրությունները: Արևմուտքում գոյություն է ունեցել մեկնարանության ավանդույթ: Սակայն միայն տասնիներորդ դարում Շլայերնախերն ու Դիլբին սկսեցին ուսումնասիրել «մեկնարանությունը»՝ որպես առարկա: Մեկ դարից ավելի պահանջվեց, մինչ «մեկնարանությունն» առարկա դարձավ արևմուտքում: Անշուշտ, մինչ առարկայի ի հայտ գալը սովորաբար լինում է «հարցերի կուտակման» կամ «նյութի կուտակման» ժամանակահատված: Այս ժամանակահատվածը կարելի է հանարել առարկայի նախապատմություն: Օրինակ, ընդունված տեսակետ է, որ համենատական գրականությունը տասնիներորդ դարում հիմնված առարկա է, չնայած, ինչպես մեզ հայտնի է, ավելի վաղ շրջանում թե՛ արևմուտքում, թե՛ Չինաստանում գոյություն ուներ համենատական գրականություն: Չինաստանում, օրինակ, կա տարբեր ժամանակների բանաստեղծական ոճերի համենատական ուսումնասիրություն, որին կարելի է հանդիպել Լյու Սյեի (劉勰, ?465-?532) «Վեն Սին Դյառ Լուն» աշխատության «Մին Շի

16. «Յունական և հասարակական գիտությունների ամսագիր», Չինական ակադեմիա, 2008 (1): 43-69

Պյան» («Պոեզիան հասկանալով») գլխում: Յեղինակը գրում է, որ «Սուն դինաստիայի (420-479)<sup>17</sup> սկզբնական շրջանում բանաստեղծական ոճերին հատուկ էր շարունակականությունն ու էվոլյուցիան, մինչդեռ Լաո Ցուի (老子, ?570 մթ.-?470 մթ.) և Չուան Ցուի (庄子, 369 մթ.-286 մթ.) մտքերը ծածուկ էին. սկսում էր զարգանալ բնական լանդշաֆտը նկարագրող պոեզիան»: Սա ոճային փոփոխությունների համեմատությունն է, որ տեղի ունեցավ Վեյ-Զին (220-420) ժամանակաշրջանում և Յարավ-Ջյուսիս դինաստիաներում (420-589): Վեյ-Զին ժամանակաշրջանում պոեզիան սովորաբար «ծայրահեղ առեղծվածային և խրթին էր», բայց հետո՝ Յարավ-Ջյուսիս դինաստիաների սկզբնական շրջանում, այն վերածվեց «բնապատկերի պոեզիայի»: Արդյունքում պոեզիան ավելի «բնական» էր թվում (Թան Ի Չյե 1999: 186-187): Իր «Համեմատական գրականության ուսումնասիրություն. նոր ուղղություն» գրքում Լի Դա Սանը գրում է. «Որպես առարկա՝ «համեմատական գրականությունը» ֆրանսիայում հասունացավ միայն 1830-1840-ականներին: Յետևաբար, Ամբերը (1800-1864) և Արել Ֆրանսուա Վիլմենը (1790-1867) թերևս այն գիտնականներն են, որոնք իսկապես նպատակ ունեին հիմնել «համեմատական գրականությունը» (Լի Դա Սան 1978: 107): Չինաստանում համեմատական գրականությունը որպես առարկա ուսումնասիրվում էր 1920-ականների վերջին: Պետք է ընդունել, որ համեմատական գրականությունը որպես առարկա Չինաստանում գոյություն է ունեցել հնագույն ժամանակներից: Բացի այդ, կային (սովորաբար անօրինական ճանապարհով պեղված առարկաների) բազմաթիվ հնագիտական ուսումնասիրություններ կամ անտիկ շրջանի հետազոտություններ թե՛ Չինաստանում, թե՛ նրա սահմաններից դուրս, սակայն ըստ «Սինիկա հանրագիտարանի» «Յնեաբանություն» հատորի՝ արևմտյան հնէաբանությունը սկզբանավորվել է 1760-1840 թվականներին, մինչդեռ չինական հնէաբանությունը հիմնադրվել է Փեյ Վեն Զունի (1904-1982) և Լի Զիի (1896-1979) կողմից 1920-ականների վերջերին:

Ես նույնիսկ փոքր-ինչ տարօրինակ և գուցե վիճահարույց գաղափար ունեմ: Չեմ կարծում, որ Յեղելի կողմից ճիշտ է հայտարարել, որ Չինաստանում փիլիսոփայություն չի եղել, քանի որ չինական ավանդական մշակույթը հարուստ է «փիլիսոփայական մտքերով»: Բայց թերևս տեղին է ասել, որ մինչ արևմտյան փիլիսոփայությունը Չինաստանում կընդունվեր՝ որպես անկախ, «Չին Սյունից» (经学 դասական գործերի ուսումնասիրություն) «8ի Սյունից» (子学, իհն փիլիսոփայի ուսումնասիրություն), պատմագրությունից և գրականությունից առանձին առարկա, «փիլիսոփայությունն» անշուշտ գոյություն չուներ Չինաստանում: Յետք թիրքիր է՝ արդյո՞ք կարող ենք եզրակացնել, որ չինական ավանդական մշակույթում գոյություն ունեն բազմաթիվ «փիլիսոփայական մտքեր» կամ «փիլիսոփայական հարցեր», որոնք մարմնավորվել են «Չին Սյուն» և «8ի Սյուն» երկերում: Չինական մտավոր կյանքի զարգացման ընթացքում լուրջ ջանքեր չեն գործադրվել՝ փիլիսոփայությունը գրականությունից և պատմությունից տարանջատելու համար: Յնագույն ժամանակներում արևմուտքում իրավիճակը նույն էր: Նույնիսկ իհնա չինական կրթական շրջանակներում տարբերությունը «չինական

17. Յիմնվել է Լյու Յուի (363-422) կողմից, ի տարբերություն Սուն դինաստիայի (960-1279), որի հիմնադիրը Զառ Քուան Յինն է (927-976):

փիլիսոփայության» և «չինական մտավոր (ինտելեկտուալ) խորապատկերի» միջև աննշան է: Իրականում շատ ավելի հեշտ է գրել Չինաստանի մտքի, քան չինական փիլիսոփայության պատմությունը: Իմ կարծիքով՝ «փիլիսոփայությունը» պետք է սկսվի մեկ կամ ավելի «փիլիսոփայական հարցերի շուրջ» մտորումներից՝ սկսած կազմակերպված հասկացությունների և տարրական պնդումների շարքից, որոնք հիմնված են այս հասկացությունների հարաբերությունների վրա: Դրա համար անհրաժեշտ է տեսական վերլուծությունից և սինթեզից ձևավորված վերլուծական մեթոդների գիտակցված կիրառում: Յնարավոր է, ծագի հետևյալ հարցը. «Եթե դուք իրավացի եք, արդյո՞ք դա չի նշանակում, որ բազմաթիվ չինական առարկաներ պետք է հետևեն արևմուտքի սահմանած նմուշներին»: Իմ պատասխանը հետևյալն է՝ մենք նախ և առաջ պետք է սովորենք արևմուտքից, և միայն դրանից հետո սահմանենք մեր «չինական» առարկաները (օրինակ՝ «չինական համեմատական գրականություն» և «չինական հնէաբանություն»), և ապա կարող ենք ետևում քողնել արևմուտքը՝ մեր «ուսուցչին»:

Սա նկատելի է նաև Չինաստանում հնդկականական բուդդայականության ձևափոխությունից: Յարավ-Ջյուսիս դինաստիաների ընթացքում, եթե հնդկական բուդդայականությունը ներմուծվեց Չինաստան, չինացիները նախ փորձեցին հասկանալ և սովորել նրա տեքստերը, սկզբունքներն ու տեսությունները: Միայն Սույ և Թան դինաստիաների ընթացքում (587-907) էր, որ Չինաստանը ստեղծեց իր սեփական բուդդայական դպրոցներն ու ուղղությունները: Միավորվելով բնիկ չինական մշակույթների հետ՝ չինական բուդդայականությունը զգալիորեն հարստացրեց հնդկական բուդդայականությունը: Այստեղ կցանկանայի մեջբերել Բերտրան Ռասելի խոսքերը.

«Տարբեր քաղաքակրթությունների շփումներն անցյալում հաճախ դարձել են մարդկության առաջընթացի նշաններ: Յունաստանը սովորում էր Եգիպտոսից, Յոռմը՝ Յունաստանից, արաբները՝ Յոռմենական կայսրությունից, միջնադարյան Եվրոպան՝ արաբներից, Վերածննդի Եվրոպան՝ բյուզանդացիներից: Այս դեպքերում աշակերտները հիմնականում գերազանցում էին իրենց ուսուցիչներին: Չինաստանի դեպքում, եթե համարենք, որ աշակերտները չինացիներն են, նույն պատկերն է» (Եզմեր և Էդմոն 1992: 547):

Չնայած մենք Չինաստանում «համեմատական գրականությունը» և «դասականների մեկնարանությունը» որպես ուսումնասիրության առարկա հիմնեցինք շատ ավելի ուշ, քան արևմուտքում, արդեն կարող ենք նոռանալ արևմտյան կադապարը: Անշուշտ, սա նի տարբերակ է: Կա մեկ այլ տարբերակ, որը կը նարկեմ հաջորդ էշերում: Իսկ մինչ այդ կարելի ասել, որ արևմուտքը կարող է դասեր քաղել չինական մշակույթից: Օրինակ, կոնֆուցիականությունը մեծ ազդեցություն է թողել ֆրանսիացի փիլիսոփաների, հատկապես Վոլտերի վրա (Մեն Յուա 1993: 14, 149 և 151): Ես նաև հավատացած եմ, որ որպես անկախ առարկա՝ «ավանդական չինական բժշկությունը» նպաստել է և կշարունակի նպաստել համաշխարհային բժշկության զարգացմանը: Բազմաթիվ գիտնականներ գրում են չինական փիլիսոփայության պատմությունը, բայց նրանցից ոչ մեկը հետաքրքրված չէ «Չին Սյուեի» պատմությամբ: Մենք չպետք է անուշադրության մատնենք այն փաստը, որ «Չին Սյուեն» ավելի քան 2000 տարվա պատմություն ունի: Այն եղել է անկախ առարկա և ազդեցություն է թողել չինական հասարակության գրեթե բոլոր փուլերի վրա: Յավատացած եմ, որ «Չին Սյուեի» ուսումնասիրությունն ի վեր-

Չ իր ազդեցությունը կրողնի այլ մշակույթների զարգացման վրա:

Այժմ վերադառնանք չինական հերմենատիկայի հնարավորության հարցին: Ին առաջարկը իհննված է այն փաստի վրա, որ Չինաստանում դասական մեկնաբանությունն ունեցել է երկար ու հարուստ ավանդույթ: Ըստ ճապոնացի գիտնական Թայսուկե Ջայաշի (1854-1922) «Լուն Յու Նյան Փու» աշխատության՝ գոյություն ունի ավելի քան 3000 «Տարեգիրք»: Իր «Թառ Թե Չին Յուան Չի» («Թառ Թե Չին») նախնական նշանակությունը) գրքի նախնական դիտարկումներում Յուան դինաստիայի (1206-1368) թափառ Դու Դառ Չյանը (1237-1318) նշում էր, որ «ավելի քան 3000 գիտնականներ մեկնաբանել են «Թառ Թե Չինը»: Չի բացառվում, որ գոյություն են ունեցել նույն քանակով մեկնաբանություններ այլ դասական երկերի վերաբերյալ, որոնց մեջ մասը չի պահպանվել: Մենք պետք է լավագույնս օգտագործենք այն գրքերը, որոնք հասանելի են մեզ և փորձենք սահմանել հերմենատիկայի չինական տարրերակը:

Ինչև, այստեղ պետք է շեշտել, որ չինական հերմենատիկան հնարավոր է միայն, երբ այն շիման մեջ է արևմտյան հերմենատիկայի հետ: Իմ «Չինական հերմենատիկայի հետքերով. Երկրորդ ուսումնասիրություն» հոդվածում վերլուծել եմ դասական մեկնաբանության տեսակները Ցին դինաստիայից առաջ, որպեսզի ցույց տամ, որ Չինաստանում գոյություն ունի մեկնաբանության վաղեմի ավանդույթը: Յոդվածում նաև քննարկվում են հիմնախնդիրներ, որոնք ներառված են Ցին դինաստիային հաջորդող շրջանի և Ջան դինաստիաների (մթա.206 – մ.թ.220) դասական մեկնաբանություններում: Նկարագրելով Չինաստանում դասական երկերի մեկնաբանության զարգացումը՝ հույս ունեմ պարզել, թե արդյոք կան ընդհանուր սկզբունքներ և կաղապարներ, որոնք նման են կամ տարբերվում են արևմտյան մեկնաբանական պրակտիկայից:

Ինչ վերաբերում է այս հարցին, թե արդյոք չինական հերմենատիկան տարրերովում է այդ մեկնաբանական ավանդույթից, մենք կարող ենք հարստացնել արևմտյան հերմենատիկան նրա մեջ ներմուծելով մեկնաբանական տեսություններ և մեթոդներ, որոնք հասուլ են չինական ավանդույթին: Եթե ցանկանում ենք սահմանել հերմենատիկայի չինական տարրերակը, կարծում են, կպահանջվեն հետևյալ ուսումնասիրությունները: Նախ, մենք պետք է տքնածան աշխատենք և ուսումնասիրենք մեկնաբանության պատմությունը (նաևնավորապես աստվածաշնչային մեկնաբանությունները) արևմուտքում և հերմենատիկայի տեսությունները, որոնք պաշտպանում էին Ֆրիդրիխ Շլայերմախերն ու Վիլհելմ Շիլքին, ինչպես նաև նրանց ժամանակակից զարգացումներն արևմուտքում: Վերջին հարյուրամյակի ընթացքում գրեթե բոլոր փիլիսոփայական դպրոցները (օրինակ, Երևանի բանական ակադեմիա, Ֆենոմենոլոգիա), կառուցվածքաբանությունը, ապակառուցվածքաբանությունը և հետմոտենանիզմը արևմուտքում թիւ թե շատ կապված են հերմենատիկայի հետ: Բազմաթիվ բանավեճեր են ծագում նրանից, որ մարդիկ տարբեր տեսակետ ունեն «մեկնաբանության» ծերի մասին: Ուստի գերմանական հերմենատիկ տեսությունների հիմնավոր իմացությունը կարևոր է չինական հերմենատիկայի զարգացման համար:

Երկրորդ, Չինաստանում երկար մեկնաբանական պատմություն կա: Մենք պետք է տքնածան աշխատենք՝ երկու խնդիր իրականացնելու համար: Առաջինն այն է, որ պետք է կարգի բերել չինական դասական գործերի մեկնաբանության պատմությունը: Ինչու՞ դասական երկերի տարատեսակ մեկնաբանություններ

կային Ցին դինաստիայից առաջ: Ինչու՝ «Զան Չյու Զի Սյուեն» (անտիկ ստեղծագործությունների գլուխների ու նախաղասությունների ծանոթագրական ուսումնասիրություն) ամենակարևոր մերոդն էր, որ Յան դինաստիայում կիրառվում էր ոչ միայն կոնֆուցիական դասական երկերը, այլև «Թառ Թե Զինը» ուսումնասիրելիս<sup>18</sup>: Անհրաժեշտ է նաև բացատրել, թե ինչու Վեյ-Ցին դինաստիաներում գիտնականներն իրենց մեկնաբանություններում թաքցնում էին բարձրարժեք գաղափարներ, ինչպիսիք են «Դե Ի Վան Յան» (得意忘言, զաղափարները ստանալուց հետո մոռանալ խոսքերը) և «Բյան Մին Մի Լին» (辨名析理, տարրերակել անունները և վերլուծել սկզբունքները): Մեկնաբանության հետ կապված բազմաթիվ նոր խնդիրներ ծագեցին, երբ հնդկական բուդդայականությունը հասավ Զինաստան, օրինակ՝ Գե Ին (格爻, մեկնաբանել բուդդայականության դասական գործերը չինական մտքի հասանելի գաղափարների միջոցով) և Լյան Լեյը (连类, զուգորդել նմանատիպ երևույթները համարանություն ստեղծելու նպատակով) Զին դինաստիայում (265-420): Գիտնականները բանավիճում էին այն հարցի շուրջ, թե արդյոք բարգմանիները նույն բուդդայական եզրույթի համար չպե՞տք է օգտագործեն տարբեր չինական արտահայտություններ: Սուտրաների թարգմանությունը նույնիսկ տարածայնություններ առաջացրեց դասական տեքստերից վերցրած բառերի ճշգրիտ նշանակության շուրջ: Այս բոլոր ուսումնասիրությունները հետագա հետազոտության կարիք ունեն: Անշուշտ, մենք ստիպված կլինենք նաև հարցնել, թե ինչու այսքան շատ փոփոխություններ կան դասական մեկնաբանություններում, և որ փոփոխությունն է չինական մտավոր ոլորտի փոփոխության արդյունքը: Եթե չինական դասական մեկնաբանության մեթոդները (ինչպիսիք են լուսաբանումը, արձանագրությունը, բացատրությունը, ծանոթագրությունը, մեկնաբանությունը, նշումները և այլն) բազմաթիվ են, ինչպես կարող ենք հստակ և բացահայտ բացատրել այս մեթոդների համատեքստերը: Բացի այդ, քանի որ գիտելիքի բազմաթիվ բնագավառներ, ինչպիսիք են «Սյուն Գու Սյոււեն» (հնացած բառերի բացատրությունը ժամանակակից լեզվում կամ ինաստարանական ուսումնասիրությունը), բանասիրությունը, հնէաբանությունը, հնչյունագիտությունը և «Բան Բեն Սյոււեն» (պատմական հրատարակությունների ուսումնասիրություն) օգտագործվում են մեկնաբանության մեջ, մենք չենք կարող անտեսել այն հարցը, թե ինչպես պետք է վերաբերվենք նրանց գործառություններին:

Երրորդ, բազմաթիվ չինական առարկաներ, օրինակ՝ «համեմատական գրականությունը», հնագիտությունը, հասարակագիտությունը, պատմությունը և փիլիսոփայությունը, վերջերս կիրառում են արևմտյան հերմենուակայի տեսություններ և մեթոդներ և մեծ առաջընթաց ունեն: Կարելի է ասել, որ ինչպես արևմտքում, այնպես էլ Չինաստանում, գոյություն ունի «մեկնաբանության մտքի միտում»: Բազմաթիվ չինացի փիլիսոփաներ քսաներորդ դարում չինական փիլիսոփայությունն ուսումնասիրելիս քիչ թե շատ օգտագործել են այս տեսություններն ու մեթոդները: Իմ կարծիքով՝ առանց արևմտյան փիլիսոփայության ազդեցության ժամանակակից չինական փիլիսոփայությունը կյանքի չեր կոչվի: Այն կարող

18. Օրինակ, Լաո Ցու Ղառ Թե Զին Զան Չու (Ղառ Թե Զինի ծանոթագրական ուսումնասիրություն) Յան Գունի կողմից, Արևմտյան (նախկին) Յան դինաստիայի վաղ շրջան (206 մթա.-8 մթ.):

Է «անցյալից» տեղափոխվել «մեր ժամանակներ» միայն այն դեպքում, երբ վերակառուցվի (կամ նորովի մեկնարանվի) արևմտյան փիլիսոփայության օգնությամբ: Միայն այս ճանապարհով «չինական փիլիսոփայությունը» կարող է տեղին և օգտակար լինել ժամանակակից Չինաստանի համար, Չինաստան, որն աստիճանաբար դառնում է աշխարհի մասը: Ենց սա նկատի ունեմ, երբ ասում եմ, որ նախ պետք է ուսումնասիրենք չինական մշակութային ավանդույթը հերմենուսիկայի արևմտյան տեսությունների լույսի ներքո, և հետո միայն քննարկենք չինական հերմենուսիկա ստեղծելու հնարավորությունը: Որքան ինձ է հայտնի, բազմաթիվ գիտնականներ, ինչպիսիք են «Գուան Չույ Փյան» երկի (չինական և արևմտյան դասական ստեղծագործությունների և գրական տեսությունների մանրամասն համեմատական ուսումնասիրություն) հեղինակ Ցյան Շուն (1910-1998), «Գոյաբանություն» և «Չերմենստիկա» աշխատությունների հեղինակ պրոֆեսոր Չեն Չունյինը Միացյալ Նահանգներում (1935-) և պրոֆեսոր Ռուլֆ Վագները Գերմանիայում, որը ներկայացրել է «Լաու Ցուի» ազդեցիկ մեկնարանությունը, մեծ ծեռքբերումներ են ունեցել դասական չինական մեկնարանական մերոդներն արևմտյան հերմենուսիկայի տեսությունների հետ համադրելու գործում:

Չետնաբար, չինական մեկնարանական տեսության հիմնադրման համար մենք պետք է նախ և առաջ զարգացնենք համեմատական տեսակետ: Միայն այս միջոցով կարող ենք ստեղծել մեր սեփական հերմենուսիկան՝ չինական քննութագրով տեսություն, որը տարբերվում է արևմտյան տեսակետից:

### **3.2 Արդյո՞ք հնարավոր է պարզել մեկնարանության ընդհանուր կաղապարները չինացի դասականների ուսումնասիրության մեջ**

«Սինիկա հանրագիտարամի» փիլիսոփայություն հատորում կա «Չերմենուստիկա» հակիրծ բառահոդված: Ըստ այդ բառահոդվածի՝ մեկնարանության ուսումնասիրությունը սկսվում է դեռևս Յին Շունաստանից: Ավգուստինը (354-430) աստիճանաբար համակարգեց իրենից առաջ ստեղծված կցկոտուր աստվածաշնչային գիտական նյութերը: Չինական մեկնարանությունը գուցե ավելի երկար պատմություն է ունեցել, քան արևմուտքում: Այս աշխատության մեջ ես կներկայացնեմ դասական մեկնարանության որոշ բնորոշ գծեր Յին Չինաստանում (գերազանցապես Չին ժամանակաշրջանից առաջ): Մենք կկարողանանք քննարկել չինական հերմենուսիկայի հիմնադրման հնարավորությունը, երբ համակողմանի գիտելիք ունենանք այն մասին, թե ինչպես է զարգացել դասական մեկնարանությունը Չինաստանում:

Չինաստանը մեծ ուշադրություն է դարձնում պատմությանն ու ավանդույթին, ուստի հաճախ ենք հանդիպում հետևյալ ասացվածքին՝ «Վեց դասական երկերը պատմություն են»<sup>19</sup>: Ըստ «Տարեգրերի»՝ Կոնֆուցիոս իր ուսանողներին սովորեցնում էր այնպիսի դասական երկեր, ինչպիսիք են «Ծի Չին», «Շու Չին», «Լի

19. Չինաստանում «Վեց դասական երկեր» արտահայտությունը վերաբերում է վեց գրքերին, մասնավորապես՝ «Ծի Չին» (Սերբողների գիրք կամ Երգերի գիրք), «Շու Չին» (Պատմության գիրք), «Լի Չին» (Ծեսերի գիրք), «Յուե Չին» (Երաժշտության գիրք), «Ի Չին» (Փոփոխությունների գիրք) և Չուն Ցյու (Գարնան և աշնան տարեգրեր): «Յուե Չինը» չի պահպանվել:

Զին» և «Յուե Զին», և նա ինքն իրեն կոչում էր «ավելի շատ միջնորդ-փոխանցող, քան ստեղծող, որը հավատում է հներին և սիրում է նրանց» (Տարեգիրք, 7:1): Սա նշանակում է, որ Կոնֆուցիոսը չեր լուսաբանում իր սեփական մտքերը՝ առանց դասական ստեղծագործությունների հիմքի, այլ մեկնաբանում էր դասականներն այնպես, ինչպես նրանք կան: Նա հավատում և համակրում էր հին դասական հեղինակներին: Մենցիոսը (孟子, մթա. ?372-?289) կարծես հիմնեց «Դառ Թուն» (փոխանցման միջոց) կոնֆուցիական ուսմունքները և որպես իդեալ ընտրեց «Յաոյի և Շունի հնագույն ավանդույթների փոխանցումը», «կառուցելով այն ըստ Վեն և Ու արքաների համակարգերի և կատարելագործելով դրանք» և «ծավալելով կոնֆուցիական միտքը»: Ըստ Սուն Ցուի՝ «մարդկության անդամ մարդու» առաքելությունն է «նախ հետևել Յաոյի, Շունի և Յուի<sup>20</sup> համակարգերին, ապա՝ Կոնֆուցիոսի և Ցի Գունի ուսմունքներին» (Սուն Ցու,-գլուխ 6)<sup>21</sup>: Նույնիսկ փիլիսոփայորեն անկախ և ստեղծագործ թառականները (Ցին դինաստիայից առաջ) շատ բարձր էին գնահատում դասական երկերը: Լառ Ցուն Չոռու թագավորական ընտանիքի կայսերական պահոցների պահապանն էր և իր գրքում հաճախ մեջքերում էր հին իմաստունների խոսքերը: Չուան Չուն նաև դիմում էր հին գրողների հեղինակությանը՝ իր ժամանակակիցների սխալները մատնանշելու համար: Մասնակի հիմնադիր Մո Ցուն (墨子, մթա. ?476 -?390) պաշտպանում էր Յուի միտքը և ասում. «Եթե Յուի մտքերը չեն, ապա Մո Ցուի մտքերը չեն» (Սուն Ի Ժան 1986): Լեզալիզմի դպրոցը, սակայն, պնդում էր, որ «պետք չէ ուսումնասիրել իին իմաստունների ուսմունքները, ինչպես նաև կանոնները» (Յան Ֆեյ Չու, գլուխ 49): Այս նաև քննադատում էր կոնֆուցիականությունը և մատիզմը՝ հների հանդեպ կույր երկրպագության համար: Սա չի նշանակում, որ լեզալիստական դպրոցն ամբողջությամբ հերքում էր մշակութային ժառանգությունը: Նրա ներկայացուցիչ Յան Ֆեյ Չուն (韓非子, 280 մթա.-233 մթա.) բարձր էր գնահատում իրենից առաջ ապրած լեզալիստ մտածողներին: Նա ասում է. «Յին իմաստունները փայփայում և փոխանցում էին այն (ավանդույթը): Պետք է նշել, որ Յան Ֆեյ Չուի գրքում կան այնպիսի հոդվածներ, ինչպիսիք են «Չե Լաոն» (Բացատրելով Լառ Ցուն) և «Յու Լաոն» (Յասկանալով Լառ Ցուն): Սրանով Յան Ֆեյ Չուն ստեղծեց մեկնաբանության կաղապար, որը տարբերվում էր Ցուռ Չուանից և Ցի Ցիից: Այս հոդվածում չի բացահայտվի այն, թե Յին Չինաստանում մտածողներն ինչ կարծիք ունեին պատմության և ավանդույթի մասին: Իմ դինաստիան ասելիքն այն է, որ սերտ կապ կա պատմության և ավանդույթի վրա չինական շեշտի և չինական դասական մեկնաբանության միջև:

Ցին դինաստիայից առաջ (մթա. 221-206) գոյություն են ունեցել դասական երկերի մասին որոշ մեկնաբանական գրքեր: Այժմ ես ընտրում եմ մեկնաբանության երեք կաղապարների բնորոշ նմուշներ (Երկու գիրք և Երկու հոդված): Մեկնաբանության առաջին տեսակը, ինչպես ցույց է տալիս «Չուն Ցյուի» մեկնաբանությունը Ցուռ Չուանի կողմից, կոչվում է պատմական իրադարձությունների մեկնաբա-

20. Յառն, Շունը և Յուն մթա. Երրորդ հազարամյակի երեք առասպելական կառավարիչներն էին: Յաոյին հաջորդեցին Շունն ու Յուն: Յուն Մյա դինաստիայի հիմնադիրն էր (մթա. ?2183 - ?1752):

21. Ցի Գունը Կոնֆուցիոսի աշակերտներից էր:

նություն: «Գուն Յան Չուանը» (Գուն Յան Գաոյի մեկնաբանությունները «Չուն Ցյուի» մասին) և «Գու Լյան Չուանը» (Չուն Ցյուի մեկնաբանությունները Գու Լյանի մասին) նույնպես «Չուն Ցյուի» մեկնաբանություններն են և միանգամայն տարրերվում են «Ցուռ Չուանից»: Այս երկու գրքերն այստեղ չեն քննարկվի: Երկրորդը, ինչպես երևում է «Չի Ցիի»՝ «Ի Չինի» մեկնաբանության մեջ («Չուու Ի» կամ «Փոփոխությունների գիրը») կոչվում է ընդհանուր փիլիսոփայական մեկնաբանություն: Եղրորդը, որ մերկայացնում են «Չյե Լառն» և «Յու Լառն» «Հան Ֆեյ Ցու» գրքի երկու հոդվածները, կոչվում է գործնական, այն է հասարակական և քաղաքական մեկնաբանություն: Անշուշտ, երեք մեկնաբանությունները կատարյալ չեն, բայց պետք է հիշենք, որ այս բոլոր մեկնաբանություններն ամեն դեպքում ուշագրավ հատկություններ ունեն:

### 3.2.1 Ցուռ Չուանի՝ «Չուն Ցյուի» մեկնաբանությունը

«Ցուռ Չուանի» կամ «Ցուռոյի մեկնաբանությունները», որոնց հեղինակը, ըստ լեզենդի, Ցուռ Ցյու Մինն է, ներառում են մեկնաբանություններ «Գարնան և աշնան տարեգրքերի» մասին: Սակայն Յան Բո Ջյունը համաձայն չիր: Յանն ասում էր, որ «Ցուռ Չուանի» հեղինակը երկի Ցուռ Ցյու Մինը չէ, և որպես կոնֆուցիական՝ նա թերևս պատկանում է կոնֆուցիականության մեկ այլ դպրոցի: Յանը նաև պնդում էր, որ «Ցուռ Չանը» ստեղծվել է մոտավորապես մթա. 403-386 թվական-ներին (Յան Բոջուն 1981): Այստեղ մենք կրննարկենք «Ցուռ Չուանի» մեկնաբանությունը «Չուն Ցյուի» մասին՝ իիննվելով Յանի եզրահանգումների վրա: Ըստ «Ցուռ Չուանի» ստեղծման տարեթվի մասին Յանի տեղեկության՝ այն հնագույն մեկնաբանական գիրըն է կամ հնագույններից մեկը, որ գոյություն ունի աշխարհում: Սա նշանակում է, որ դասական երկերի չինական մեկնաբանությունը ավելի քան 2300 տարվա պատմություն ունի: «Չուն Ցյու» երկում ասվում է, որ դուքս Յինի բազավորության (մթա.722- 712) առաջին տարում՝ «ճայիսին, Յանում կոնս Չենը հաղթեց Դուանին»: Այս կարճ նախադասությունը մեկնաբանված է երկար պարբերությամբ<sup>22</sup>.

Զենի Ու դուքսն ամուսնացել էր Շինի տան դստեր՝ Ու Ջյանի հետ, որն իր կրծքի տակ կրում էր դուքս Չուանին և նրա եղբորը՝ Դուանին: Կոնս Չուանը ծնվեց, երբ նա դեռ նոր էր արթնանում քնից [այստեղ տեքստի իմաստն անորոշ է], ինչից կինը Վախեցավ և երեխային կոչեց Ու-շեն (արթնանալու պահին ծնված) և ատեց նրան, սակայն սիրեց Դուանին և ցանկացավ, որ նա հօչակվի իր հոր ժառանգ: Յաճախ էր այդ մասին խմբում Ու դուքսին, բայց նա մերժում էր: Երբ դուքս Չուանը հասունացավ, մայրն աղաքեց, որ Չի քաղաքը նվիրաբերվի Դուանին: «Ճատ վտանգավոր վայր է», -պատասխանեց նա: -Կրտսեր Գոն մահացավ այնտեղ, բայց դու կարող ես ընտրել ցանկացած այլ վայր, միայն իրամայիր»: Յետո նա խնդրանքով դիմեց Չինին, և ահա Դուանը բնակություն հաստատեց այնտեղ և սկսեց կոչվել Չին քաղաքի Դա Շու (Մեծ կրտսեր): Չի Չումն ասում էր դքսին. «Ցանկա-

22. Թարգմանությունը վերցված է Լեզի «Չինական դասական երկերը, հասոր 5, Չուն Ցեռ Չուն Ցյու և Ցու Չուեն (Ցուռ Չուան)» գրքից՝ աննշան փոփոխություններով: Այստեղ տեղանումներն ու անձնանումները եղբեմն փոխված են Փին Ին համակարգի:

ցած մայրաքաղաք, որի պատը 3000 կանգունից բարձր է, վտանգավոր է պետության համար: Ըստ նախկին արքաների կանոնադրության՝ առաջին կարգի ննանատիպ քաղաքի պատի երկարությունը կարող է լինել մայրաքաղաքի պատի երկարության մեկ երրորդի չափ: Երկրորդ կարգինը՝ ընդամենը մեկ հինգերրորդի չափ, իսկ վերջին կարգինը՝ մեկ հնաներրորդի չափ: Դիմա Զինը չի համապատասխանում այս չափման միավորներին ու կանոններին: Որպես կառավարիչ՝ դու չես կարողանա համրութել, որ Դուանը մնա այսպիսի վայրում»: Կոմսը պատասխանեց. «Մեր մոր ցանկությունն էր. ինչպես կարող էի խուսափել վտանգից»: «Տիկին Զյանը,- պատասխանեց սպան,- գոհ չի լինի: Ավելի լավ կլինի, եթե անհրաժշտ նախազգուշական միջոցառումներ ծերնարկես և թույլ չտաս, որ վտանգն այնքան մեծանա, որ դժվար լինի չեզոքացնել այն: Նույնիսկ երբ խոտն աճում ու տարածվում է ամենուր, այն հնարավոր չէ վերացնել. չէ՞ որ նա քո սիրելի եղբայրն է»: Դուքսն ասաց. «Նա կկործանի իրեն իր անարդարացի արարքներով: Դու ի՞նչ ես սպասում»:

Այնուհետև Դա Շուն հրամայեց, որ պետության արևոտյան և հյուսիսային սահմանակից քաղաքներն իրեն հավատարմության երդում տան և ընդունեն՝ որպես կոմս: Ապա ազնվական Լյուն ասաց դբսին. «Պետությունը չի կարող դիմանալ երկուսին ծառայելու բեռին: Դիմա ի՞նչ ես անելու: Եթե ցանկանում ես Զինը հանձնել Դա Շուին, թույլ տուր ծառայել նրան՝ որպես հայտակ: Եթե մտադրություն չունես քաղաքը հանձնել նրան, թույլ տուր, որ նրան հեռացնեմ ճանապարհից, որ չմոլորեցնի մարդկանց»: «Կարիք չկա դիմել նման քայլի,-պատասխանեց Դուքսը: -Դժբախտությունն ինքը կայցելի նրան»:

Դա Շուն շարունակում էր սեփականացնել այն վայրերը, որոնց հպատակության պահանջ էր ներկայացրել, այդ թվում և Լին-յանը: Ցի Ֆենը [վերոնշյալ ազնվական Լյուի անվանումը] ասում է. «Դիմա ժամանակն է: Այս մեծ ռեսուրսներով նա դեպի իրեն կծագի թոլոր մարդկանց»: Դուքսը պատասխանեց. «Մարդիկ հավատարիմ չեն լինի նրան, որովհետև նա արդարամիտ չէ: Իր հարստության պատճուկ նա ավելի շատ կկործանվի»:

Դա Շուն ամրացրեց իր պաշտպանությունը, իր շուրջը հավաքեց մարդկանց, կարգի բերեց կաշվե վերարկուներն ու գենքը, պատրաստեց հետևակն ու մարտակառերը՝ նպատակ ունենալով անակնկալի բերել Ձենին, մինչդեռ մոր սիրտը բաց էր նրա համար: Դուքսն իմացավ, թե նրանք ինչ են պայմանավորվել ու ասաց. «Դիմա կարող ենք գործել»: Ուստի նա Ցի Ֆենին հրամայեց երկու հարյուր մարտակառքով հարձակվել Զինի վրա: Զինն ապստամբեց Դա Շուի դեմ, որը հետո մտավ Յան, որի վրա էլ հարձակվեց հենց ինքը՝ Դուքսը. իսկ 5-րդ ամսում Սին Չոռի օրը, Դա Շուն այնտեղից փախավ Գուն:

Ըստ տեքստի՝ «Ձենի կոմսը Յանում հաղթեց Դուանին»: Դուանը չի նշվում՝ որպես կոմսի կրտսեր եղբայր, որովհետև նա չի խոսում այդ մասին: Նրանք կարծեն երկու թշնամի արքայազններ լինեն, և հետևաբար, այստեղ օգտագործվում է «հաղթել» բառը: Դուքսը ներկայացված է միայն որպես Ձենի կոմս, որը նրան պախարակում է այն բանի համար, որ նրան չի հաջողվել ինչպես հարկն է հրահագել եղբորը: Տեքստում չի հիշատակվում Դուանի փախուստը, որովհետև դա բարդ էր՝ նկատի ունենալով այն հանգանանքը, որ Ձենը ցանկանում էր, որ Դուանը սպանվեր:

Սա ընդամենը վեց չինացի կերպարների մեկնաբանություն է, բայց բավական

Երկարաշունչ է: Ինչպես տեսնում ենք, այս տեքստը պատմական իրադարձության մեկնաբանական շարադրանք է, որը նկարագրում է ծագումը, ոլորապտույտ ընթացքն ու ավարտը: Գոյություն ունեն բազմաթիվ քննարկումներ և դիտողություններ, որոնք տեքստը վերածում են ամբողջական պատումի: Ինչ վերաբերում է այս երկար պարբերությանը, նույնիսկ եթե այն չի համարվում Ցուանի տեքստի ուղղակի մեկնաբանություն, ինքնին չի կարող համարվել ամբողջական պատմական իրադարձության արձանագրություն: Փաստն է այն, որ այս պարբերությունը միանշանակ տեքստի մեկնաբանություն է: Եթե «կոնս Ձենը Յանում հաղթեց Շուանին» նախադասությունը պատմական իրադարձություն է, ապա վերևում նեցրերված հատվածը պատմական իրադարձության մեկնաբանական արձանագրություն է: Մեկնողը կամ պատմողը անկասկած նկատի կառնեն նրա պատմական խորապատկերը, բարոյական արժեքները և այլ հանգամանքներ և կիրեն դրանց ազդեցությունը: Սա նշանակում է, որ պատումն, անշուշտ, մարմնավիրում է հեղինակի «պատմական դիրքորոշումը» որոշակի պատմական իրադարձությունների հանդեպ: Վերը նեցրերված հատվածում «իր բազմաթիվ անարդարացի արարքներով նա կկործանի իրեն» արտահայտությունը և վերջին խոսքերը այն «մեխն» են, որոնք մարմնավիրում են հեղինակի «պատմական դիրքորոշումը»: Մեկնաբանության այս տեսակը մեծ ազդեցություն է թողել հետագայում ստեղծվող պատմական գրքերի վրա: Ինչպես գիտենք, «24 պատմություն» գրքում բազում այսպիսի մեկնաբանություններ կան, օրինակ, «Սան Գո Ձի» գրքում (Երեք պետությունների արձանագրություններ) կարելի է գտնել Փեյ Սուն Ձիի մեկնաբանությունները: Եթե չինեին Փեյ Սուն Ձիի մեկնաբանությունները, «Սան Գուո Ձին» այսքան տարածված չէր լինի: Իր մեկնաբանության մեջ Փեյ Սուն Ձին շատ ժամանակ չի տրամադրում հնաբանություններին, այլ բացատրում և լրացնում է ընդհանուր փաստերը: Եկեք տեսնենք, թե նա ինչպես է ներկայացնում Զան Լա Շուանին (Զան Լուի կենսագրությունը) «Սան Գուո Ձի» գրքում: Իր մեկնաբանություններում Փեյ Սուն Ձին նշում է. «Սի Փինի ժամանակաշրջանում (172-178) ողջ երկում ամկարգություններ էին տեղի ունենում: Լուս Յան անունով մի մարդ ապստամբեց: Գուան Յի ժամանակաշրջանում (178-184) Զան Ջաոն և Զան Սյուն ապստամբեցին համապատասխանաբար արևելյան և կենտրոնական Չինաստանում: Լուս Յան իր մարդկանց սովորեցրեց թաքնվել: Զան Ջաոն հիմնեց Թայփին Դառն: Զան Սյուն հիմնեց Ու Շոու մի Դառն: «Փեյ Սուն Ձիի մեցրերում մեզ տեղեկացնում է այն մասին, թե ինչ պատահեց այդ ժամանակի թառսական դպրոցների հետ: Այսպիսի մասին Փեյ Սուն Ձիի մեկնաբանությունները փոքր-ինչ տարբերվում են «Չուն Ցյուի» մասին «Ցուո Չուանի» մեկնաբանություններից. որանք պատկանում են նույն մեկնաբանական կաղապարին: Երկուսն էլ դասական երկերում արձանագրված պատմական իրադարձությունների մեկնաբանություններ են:

### 3.2.2 Ձի Չինի՝ «Ի Չինի» մեկնաբանությունը

«Ի Չինը» (Փոփոխությունների գիրքը) ի սկզբանե Յին Չինաստանում գուշակությունների դասական գիրք էր: Գուշակության անուններում և տրամագրերում, ինչպես նաև «Գուա Ցուում» (ամրողջական վեցագիր տեքստի բացատրություն) և «Յա Ցիում» (բաղադրիչ տողի բացատրություն) խոր իմաստություն կա: «Ի Չու-

անի» («Ի Չինի» մեկնաբանություններ) «Զի Ցի» (լրացված դիտողություններ) բաժնում տեղ է գտել «Ի Չինի»<sup>23</sup> բազմակողմանի և փիլիսոփայորեն հասուն մեկնաբանություն: «Զի Ցին» մեկնաբանում էր «Ի Չինը»՝ որպես ամբողջական համակարգ: Յնազույն դասական գործերի այսպիսի ամբողջական մեկնաբանությունը մեծ ազդեցություն է բողել Չինաստանի հետագա գիտնականների վրա: Օրինակ, «Լառ Ցի Չի Լոււն» (Լառ Ցուի հակիրծ ներածություն) և «Չոռու Ի Լոււն Լին» («Ի Չինի» սկզբունքի պարզ օրինակները), որոնց հերիխակը Վան Բին է, համապատասխանաբար «Լառ Ցուի» և «Ի Չինի» համակարգային և ամբողջական մեկնաբանություններն էին: «Դառ Դե Լոււնը» («Լառ Ցուի» մասին) և «Ու Մին Լոււն» (անանուն գրքի մասին), որոնք գրվել են Յե Յանի կողմից (?–249), նույնպես «Լառ Ցուի» ամբողջական մեկնաբանություններն էին: Չինական պատմության մեջ այդպիսի բազմաթիվ աշխատություններ կան<sup>24</sup>: «Զի Ցին» մեկնաբանությունները շատ առումներով ուսուցանող են: Այստեղ մենք կենտրոնանանք գոյաբանական և տիեզերական մեկնաբանությունների վրա, որոնք գործնականում տարբեր են, սակայն՝ փոխկապակցված:

«Ի Չինի» 64 վեցագրերը կազմում են ամբողջական, բայց բաց համակարգ, որը կառուցվածքային առումնով նաև ամեն է տիեզերքի: Այս ձևում օրգանական է և դինամիկ: Այդ պատճառով էլ ասում ենք, որ «արտադրությունն ու վերարտադրությունը կոչվում է Ի (Փոփոխություն)» (Զի Ցի, գլուխ 5)<sup>25</sup>: Աշխարհում ամեն ինչ ունի իր համապատասխան դիրքը, ուստի ըստ «Զի Ցին»՝ «Ի Չինը» (թերևս լավ կլինի այն կոչել «Ի սկզբունք»)՝ «ծովալվում է և անսխալ պարունակում երկնքի ու երկրի բոլոր ձևափոխությունները, և ճկվում է, որպեսզի ավարտին հասցնի ամեն ինչ՝ առանց որևէ բան բաց թողնելու» (Զի Ցի, գլուխ 4): Երկինքը, երկրը և աշխարհում ամեն բան, նրանց արարումն ու փոփոխությունները, բոլորն էլ ի սկզբանե ներկայացված են «Ի Չինում» կառուցվածքի տեսքով: Գիրքն ասում է. «Երկնքում հայտնվում են ձևերը (երկնային մարմինները) են, իսկ երկրի վրա՝ ուրվագծերը (արարածներ): Նրանցում տեսանելի են փոփոխություններն ու ձևափոխությունները» (Զի Ցի, գլուխ 1): Երկնքի, երկրի ու աշխարհում գոյություն ունեցող ամենայն ինչի պատճառներն ու սկզբունքները կարելի է գտնել այս կերպի մեջ: Ընդհանուր կառուցվածքում նրանց համապատասխան դիրքի հիմքը նույն-

---

23. Ի լրումն «Զի Ցին», «Ի Չուանում» բազմաթիվ հատվածներ կարելի է ուսումնասիրել և քննարկել այս համատեքստում: Սահմանափակ տեղի պատճառով այս հոդվածում կրմնարկվի միայն «Զի Ցին»՝ «Ի Չինի» մեկնաբանությունը:

24. Այս հոդվածում բարգմանությունների մեծամասնությունը մեջբերված է Վին-ցիր Չանի կամ Ոչչարդ Վիլիելմի աշխատություններից:

25. Ձեն Զի Եզրույթը շատ տարածված է եղել բուդդայականության մեջ: Օրինակ, «Ժեն Կան Չին» երկն ասում է. «Բուդդայի եռթյունը Ձեն Զի է, որը չունի ոչ անցյալ, ոչ ապագա, չունի ոչ կյանք և ոչ մահ: Ձեն Զին Բուդդայի եռթյունն է»: «Վինալակիսի Նիրդեսա սուտրան» ասում է. «Ձեն Զին Բուդդայի եռթյունն է, այն չունի ոչ եռթյուն, ոչ չեռթյուն»: «Բուդդայականության մեջ բարարանում» որի հեղինակը Դին Ֆու Բառն է, Ձեն Զին անդրադառնում է վերջնական սկզբունքին: Չնայած այն տարածական որոշակի եռթյուն է, Թառն ոչ թե չգոյություն է, այլ «չգոյություն, բայց եռթյուն»: Նետագա քննարկման համար տեսն Ֆեն Յուլան (1999): «Չգոյություն, բայց եռթյուն» հասկացության լավագույն հիմնավորումը Լու Զիի (261-303) «չեռթյունից եռթյուն խնդրել, իսկ հեշտումից՝ լրություն» պնդումն է:

պես կարելի է գտնել այստեղ. «Չեշտ և պարզ միջոցներով ընկալում ենք ամբողջ աշխարհի օրենքները: Երբ ամբողջ աշխարհի օրենքներն ընկալվում են, սկիզբ է առնում կատարելությունը»: Տիեզերական ծևերը, որ մարմնավորված են «Ի Չի-նում» (որը ոչ նիհայն պարունակում է Երկնքի, Երկրի և արդեն իսկ գոյություն ունեցող ամենայն ինչի սկզբունքները), ինչպես նաև հավանական երևույթների սկզբունքները կարող են դառնալ աշխարհում գոյություն ունեցող ամեն երևույթի համապատասխան ուղեցույցներ: «Ի Չին» ասում է. «Չոփն չունի տարածական սահմանափակում, իսկ Փոփոխությունը՝ ֆիզիկական ձև» (Չի 8ի, գլուխ 4, «Իի (易) փոփոխությունները չունեն կողմնորոշում և տեղ և չեն սահմանափակվում գործնական էությամբ: Սա նշանակում է, որ ըստ «Չի 8ի» հեղինակի՝ Երկնքի, Երկրի և աշխարհում ամենայն ինչի գոյության և փոփոխությունների հիմքերը կարելի է գտնել «Ի» համակարգում: «Ին» տիեզերական կերպ է, որը պարունակում է ամեն ինչ: Այն նաև «Դառն» (道, ճանապարհ) է՝ մետաֆիզիկական իմաստով. գոյություն ունեցող ամեն ինչ և այն ամենը, որ դեռ նոր պիտի կյանքի կոչվի, կարող են այս համակարգում գտնել իրենց գոյության սկզբունքները. դա է պատճառը, որ «Չի 8ին» ասում է. «Այն, ինչ գոյություն ունի ֆիզիկական ձևից առաջ [և հետևաբար առանց նրա], կոչվում է «Դառ» (ճանապարհ): Այն, ինչ գոյություն ունի ֆիզիկական ձևից հետո [և հետևաբար՝ նրա հետ], կոչվում է «8ի» (八, կոնկրետ առարկա): Դատելով գոյություն ունեցող գրականությունից՝ կարելի է ասել, որ չինական փիլիսոփայության մեջ «Չի 8ին» թերևս առաջին գիրքն է, որն առաջադրում է երկու եզրույթ՝ «Սին Շան» (ֆիզիկական ձևից առաջ) և «Սին Սյա» (ֆիզիկական ձևից հետո): Փոխառելով պրոֆեսոր Ֆեն Ցուլանի խոսքերը՝ կարելի է ասել, որ «Սին Շանը» «Ձեն Չի» է (眞际, վերջնական պատճառ), իսկ «Սին Սյանը» «Չի Չի» է (实际, կոնկրետ էություն): Չի Չին վերաբերում է կոնկրետ իրերի, իսկ Ձեն Չին՝ պատճառին (կամ սկզբունքին), թե ինչու գոյություն ունեն կոնկրետ իրեր<sup>26</sup>: Դա նշանակում է, որ «Չի 8ին» նկատել է ակնհայտ տարրերությունը Սին Շանի և Սին Սյայի միջև և մետաֆիզիկական համակարգ սահմանել իի (փոփոխություն) հիմքի վրա, որը չունի ֆիզիկական ձևեր:

Մեկնաբանական այս կաղապարը մեծապես ազդել է չինական փիլիսոփայության զարգացման վրա: Մենք տեսնում ենք այս ազդեցությունը ինչպես Վան Բիի մեկնաբանության մեջ՝ «Մեծ բանաձևի արժեքը (բազմապատկված) կազմում է 50, որից (միայն) 49-ն է օգտագործվում (գուշակության մեջ)» (Չի 8ի, գլուխ 9), այնպես էլ «Լառ Չու Չու Լուե» գրքում Լառ Չուի նրա մեկնաբանությունից: Դան Քան Բոն (332-380) իր «Չոռու Ի Չի 8ի Չու» («Ի Չինի» «Չի 8ի» մեկնաբանությունները) գրքում մեջքերում է Վան Բիին. «Աշխարհի սկզբունքները սահմանելու համար անհրաժեշտ է 50 թիվ, որոնցից 49-ը կօգտագործվի, իսկ մեկը՝ ոչ: Մենք այն չենք օգտագործի, որովհետև այն կրացահայտի գուշակությունը: Ահա թե որն է իի մեջությունը: Չեղության գոյությունը պետք է թիվի էությունից, ուստի մենք հասկանում ենք, որ չեղությունը բխում է էության սահմանայնությունից: «Սահմանայնությունն» այստեղ վերաբերում է նյութին: Այս դեպքում Վան Բիի՝ նյութի և գոր-

26. «Թառն ծագել է անբովանդակությունից», «Չուայ Նամ Ցու, 3:1. Անբովանդակությունը (Սու Թու) վերաբերում է այն վիճակին, որը նախորդում է ժամանակի և տարածության բաժանմանը: Տե՛ս Չան (1963:307):

ծառուլքի հարաբերության բացատրությունը լույս է սփռում Սին Շանի և Սին Սյայի հարաբերության վրա:

«Զի Ցիում» կա մի շատ կարևոր մեկնաբանություն. «Իի կերպերի համակարգում կա թայ Զի (Մեծ Տերմինուս կամ Մեծ սահման): Թայ Զիից առաջանում են կերպեր (ին և յան), իսկ երկու կերպերից՝ չորս ծևեր (մեծ և փոքր, ին և յան): Չորս ծևերից ստեղծվում են ուժագրեր...»: Սա ցույց է տալիս, որ «Ին» ստեղծարար համակարգ է, ինչ էլ վկայում է տիեզերքի հաստատում փոփոխությունների և առաջադիմական զարգացման մասին: Տիեզերքը ծևավորվել է նախնական քառասյին վիճակներից (թայձի), որին հաջորդել են երկու ուժերը՝ ինը և յանը, իսկ նրանց փոխազդեցությունն էլ իր հերթին սկզբնավորում է չորս ծևերը (մեծ և փոքր, ին և յան): Նրանց փոխազդեցությունից դարձյալ առաջանում է ութ եռագիր (8յան, Կուն, Ձեն, Սուն, Քան, Լի, Գեն և Դույ): Այս եռագրերը համապատասխանաբար ներկայացնում են տարբեր հատկանիշներ: Ըստ «Շոու Գուայի» (Եռագրերի քննարկում)՝ «Ստեղծարարը [Ցիան] ուժերն է: Ընկալունակը [Կուն] գիշող է: Արթնացնողը [Ձեն] շարժվող է: Մեղմը [Սուն] թափանցող է: Անհատակը [Քան] վտանգավոր է: Կառչել [Լի] նշանակում է կախվածություն: Հանդարտ մնալ [Գեն] նշանակում է անշարժություն: Ուրախություն [Դույ] նշանակում է հաճույք»: Այս հատկանիշները կարող են դրսևորվել նաև երկնքի, երկրի, որոտի, քամու, ջրի, կրակի, սարի ու ծահծի (ջրամբար) մեջ: Յուրաքանչյուր եռագիր միանում է մյուսին, մեկը մյուսի հետ կազմում 64 վեցագիր: Սակայն տիեզերքի փոփոխությունները կանգ չեն առնում, նրանք հավերժ են: Վերջին երկու վեցագրերն են՝ Զի Զի (ավարտից հետո) և Վեյ Զի (ավարտից առաջ): Սա ցույց է տալիս, որ ցանկացած երևույթ (ոչ մասնավոր, այլ մի քան, որ վերաբերում է ցանկացած այլ երևույթի) անխուսափելիորեն կիասնի վախճանին, թայց այս վախճանը միևնույն ժամանակ մի նոր սկիզբ է: Նետևաբար, «Շոու Գուայ» ասում է. «Դեպքերի հաջորդականությունը չի կարող հասնել ավարտին, և հետևաբար Վեյ Զին հաջորդում է Զի Զիին»: Աշխարհում ամեն ինչ փոխվում է հենց այս ծևով:

«Ին» բաց համակարգ է, որը դրսևորում է տիեզերքի զարգացումներն ու փոփոխությունները: «Զի Ցին» ասում է. «Երկինքն ու երկիրը մոտենում են իրար, և ամեն բան ծև ու տեսք է ստանում: Արականն ու իգականը միախառնում են իրենց սերմերը, և ծևավորվում ու ծնվում են բոլոր արարածները»: Եվ «Սյու Գուայում» (վեցագրերի հաջորդականություն) ասվում է. «Նախ գոյություն ունեին երկինքն ու երկիրը, ապա կյանքի կոչվեցին բոլոր (նյութական) առարկաները: Բոլոր (նյութական) առարկաներն ունեն գոյություն, դրան հաջորդում են արականն ու իգականը: Արականի ու իգականի գոյությանը հաջորդում են ամուսինն ու կինը: Ամուսինն ու կնոջը հաջորդում են հայրն ու որդին: Յորն ու որդուն հաջորդում են կառավարիչն ու նախարարը: Կառավարչին ու նախարարին հաջորդում են բարձրն ու ցածրը: Երբ ծևավորվում է բարձրի ու ցածրի տարբերակումը, դրան հաջորդում է վարդութարքն ու արդարամտությունը»: Այս մեկնաբանությունը ներառում է տիեզերական էվոլյուցիայի տեսությունը: Կարող ենք ասել, որ «Զի Ցիի» «Ի Զինի» մեկնաբանությունը տիեզերական է: Այստեղ ծագում է մի հարց, որը քննարկման կարիք ունի: Իմ կարծիքով՝ «Թայ Զին ստեղծում է երկու ծև» նախադասությունը ոչ ավելին է, քան խորհրդանշական համակարգ, մինչդեռ «Երկինքն ու երկիրը մոտենում են իրար, և ամեն բան տեսք ու ծև է ստանում...» և «Նախ գոյություն ունեն երկինքն ու երկիրը, ապա կյանք են առնում բոլոր (նյու-

թական) առարկաները...» նախադասությունները ոչ թե խորհրդանիշեր են, այլ իրական գործընթացներ կամ ուղղություններ. նրանք օգտագործվում են որպես օրինակ՝ ցույց տալու համար, թե ինչպես է ձևավորվում և զարգանում տիեզերքը: Ուստի կարող ենք եզրակացնել, որ այն, ինչ ձևավորվել է «Զի Ցիում», տիեզերքի զարգացումների և փոփոխությունների խորհրդանշանային համակարգ է:

Մենք կարող ենք առաջադրել չինական փիլիսոփայության ուսումնասիրության մի նոր հիմնախնդիր, այն է՝ տիեզերքի զարգացումների և փոփոխությունների խորհրդանշանային համակարգ: Այս հիմնախնդիրը կարող ենք գտնել նաև Շան Յունի (1011–1077) «Սյան Թյան Թու» (բնածին գծագիր) գրքում և Զոու Դուն Ցիի (1017–1073) թայձի թու (Մեծ սահմանի գծագիր) եզրույթում: Ասում են, որ թայձի թուն ծագել է մեկ այլ գրքից՝ «Ու Զի Թու» (Ծայրակետի էության գծագիր), որի հեղինակը Չեն Թուան անունով թասսական գիտնական է (906-989): Սակայն սա վիճելի եզրակացություն է և հետագա քննարկումների կարիք ունի: Կարծում եմ՝ շատ կարևոր է տարրերակել մի կողմից տիեզերական էվոլյուցիաների խորհրդանշանային համակարգերը, մյուս կողմից՝ իրական տիեզերական էվոլյուցիայի գործընթացի նկարագրությունները: Վերջինս սովորաբար հիմնված է լինում փորձառական դիտարկումների վրա և վերաբերում է կոնկրետ ծևեր ունեցող այնպիսի կոնկրետ իրողությունների էվոլյուցիայի գործընթացին, ինչպիսիք են Երկինքը, երկիրը, արականն ու իգականը: Առաջինը՝ որպես խորհրդանշանային համակարգ, կարող է հիմնվել փորձառական դիտարկումների վրա, բայց էվոլյուցիայի գործընթացը, որին այն վերաբերում է, ավելի շուտ ներառում է խորհրդանիշեր, քան կոնկրետ երևույթներ: Այս խորհրդանիշերը կարող են ունենալ անուններ, բայց դրանք ավելին են, քան կոնկրետ երևույթների ու նրանց էության նշանները: Դեռևսարար, տիեզերական էվոլյուցիաների խորհրդանշական համակարգերը, ինչպիսին է հանրահաշիվը, կարող են ներառել ցանկացած կոնկրետ առարկա և նրա էությունը: Օրինակ, երկու ծևերը կարող են ներկայացնել կամ Երկինքը և երկիրը, կամ արականը և իգականը, թե՛ Եռանդը, թե՛ հնազանդությունը: Ուստի կարծում են, տեղին չեն «Զի Ցիում» «Ի Ցինի» մեկնարանությունը համարել տիեզերքի իրական էվոլյուցիայի նկարագրություն: Փոխարենը, պետք է այն ընկալել՝ որպես տիեզերքի զարգացման և ծավալման եղանակ, որն ինչ-որ չափով նման է տիեզերական հանրահաշվի: «Ի Ցինում» «Զի Ցիի» մեկնարանության համակարգում են այն կոչում են «տիեզերական էվոլյուցիայի տեսություն»:

«Զի Ցին» միակ տեսությունը չեն, որ ցույց է տալիս տիեզերական էվոլյուցիան՝ խորհրդանիշերի իմաստով: Բազմաթիվ այլ գործեր, օրինակ Լառ Ցուի Երկերը, նման են «Զի Ցիին»: Լառ Ցուն ասում են. «Դառն ստեղծեց մեկ, մեկը ստեղծեց Երկու, Երկուսը ստեղծեց Երեք, իսկ Երեքը՝ տասը հազար Երևոյք: Այդ տասը հազարը կրում են ինն ու ներառում Յանը, և Ցիի (նյութական ուժ) ձուլման միջոցով հասնում են ներդաշնակության» (Չան 1963:160): Սա տիեզերական էվոլյուցիայի խորհրդանիշերի համակարգ է, ինչպես նաև տիեզերական հանրահաշիվ, որտեղ թվերը կարելի է փոխարինել ցանկացած կոնկրետ առարկաներով: «Յուան Ցին» (元氣, կենսունակություն) կամ «Սյու Քուուն» (虛廓, անբովանդակություն)<sup>27</sup> կարող

27. «Անրովանդակությունը ստեղծեց տիեզերքը», «Դուայ Նան Ցու, 3:1. Ժամանակը և տարածությունը առանձնանում են «անրովանդակություն» պայմանից:

Է փոխարինել մեկին, իսկ ին Յամն ու տիեզերքը<sup>28</sup> կարող են փոխարինել երկուսին: Երեքը ոչ միշտ է վերաբերում երկնքին, երկրին ու մարդ արարածին, փոխարենը այն կարող է լինել մի երրորդ առարկա, որը ստեղծվում է հակադիր եռթյուն ունեցող երկու առարկաներից: Յուրաքանչյուր կոնկրետ երևույթ ծագում է հակադիր բնույթ ունեցող երկու առարկայի փոխազդեցությունից<sup>29</sup>: Սակայն Դան գոյաբանությունը, որի մեջ մասը կազմում են տիեզերքի իրական էվոլյուցիոն գործընթացների նկարագրությունները, տարբերվում է նրանից, ինչ սահմանված է «Չի Ցիում»: Սա այլ հարց է, և ես այն կը նարկեմ մեկ այլ էսենում<sup>30</sup>:

Այսպիսով, «Ի Չինի» «Ցի Չիի» մեկնարանության մեջ գոյություն ունի երկու համակարգ, մասնավորապես՝ նյութի համակարգ և տիեզերական էվոլյուցիայի համակարգ: Արդյո՞ք սա ցույց է տալիս, որ մեկնարանության մեջ կա որոշակի բախում: Չեն կարծում: Դակառակը, երկու համակարգերը պարզապես փոխլրացնում են իրար՝ չինական փիլիսոփայության մեջ ձևավորելով համապատասխանաբար երկու տարբեր համակարգ: Ինչ վերաբերում է ինքնին տիեզերքին, մենք կարող ենք այն դիտարկել որպես բաց համակարգ, որն անսահման է. ինչպես

**28. Պրոֆեսոր Փան Փուն առաջադրում է «մեկը բաժանվում է երկուսի» հասկացությունը, որպեսզի տարբերակի այն «մեկը բաժանվում է երեքի» հիմնավորումից: Ենտաքրքի հարց է: Գոյաբանության տեսանկյունից «մեկը բաժանվում է երեքի» սահմանումը բերևս բացատրում է, որ «երեքը», (որը «երկուսից վեր է կամ նրա մեջ է») թերևս «նյութը» է: Օրինակ, թայձի գումարած երկու հավասար է «երեք». թայձին նյութը է, երկուսից նյութի գործառույթները: Իմ էսեններից մեկում (*Տես Թան Ի Ջել 1986*) ես նշել եմ, որ որոշակի տարբերություններ կան կոնֆուցիականության և քառսիզի հետազոտական մոտեցումների միջև. կոնֆուցիականությունը սովորաբար ուսումնասիրում էր միջինը (կենտրոն) երկու ծայրակետից, օրինակ՝ «շատ հեռու գմալը նոյնքան վաստ է, որքան ոչ այնքան հեռու գմալը» (*Տարեգրքեր, 11:16*), «մանրամասն ուսումնասիրել հարցը՝ իր բոլոր առավելություններով և թերություններով» (*Տարեգրքեր, 9:8*) և «ազնվորեն ընկալել խնդիրը կենտրոնից» (*Տարեգրքեր, 20:1*): Ի հակադրություն դրա՝ քառսիզմը խնդիրը լուծում էր ծայրահեղության տեսանկյունից: Օրինակ, «Աշխարհում բոլորը զիտեմ»: Ինչ քան է գեղեցիկի գեղեցկությունը, և դրանով էլ (զաղափար են կազմում), թե ինչ է տղեղը (*Սատ Ցու*, գլուխ 2): Ինչ վերաբերում է միջինի զաղափարին կոնֆուցիականության տիրություն, այն ոչ թե համապատասխանում է երկու ծայրահեղություններին, այլ գերազանցում է դրանք: Գոյաբանության լույսի մեջքու «միջինը» Թայ Չին է: Ուստի «մեկը բաժանվում է երեքի» և «մեկը բաժանվում է երկուսի» հիմնավորումները նույն կարևորությունն ունեն փիլիսոփայական ուսումնասիրության մեջ, և իրականում առաջինը երկրորդի հիմք է:**

**29. Օրինակ,** «Յուայ Նան Ցու» 3:1 սկզբունքն ասում է. «Մինչ երկինքն ու երկիրը ձև կստանային, գոյություն ունենա միայն չտարբերակված անձնություն: Ենուաբար, այն կոչվեց մեծ սկզբը: Թառն առաջացավ անրովանդակությունից, իսկ անրովանդակությունը ծնունդ տվեց (տարածության և ժամանակի) տիեզերքին: Տիեզերքը ստեղծեց նյութական ուժը: Եյութական ուժը խստ վստահելի էր: Այն, ինչ հստակ էր ու թերև, սահեց վեր ու դարձավ երկինք, իսկ այն, ինչ ծանր էր ու պլոտը, ամրացավ ու հոռ դարձավ»: Նաև «Սատ Չին Վեյը» (Որդիական բարեպաշտության գուշակությունների գիրը) ասում է. «Տիեզերքը (երկինք և երկիր) իր ծնունդից ականատես եղավ իինգ փուլի՝ Թայ Ի, Թայ Չու, Թայ Շի, Թայ Սու և Թայ Ջի: Մինչ տիեզերքը ձև է ստանում, կոչվում է Թայ Ի. Երբ նյութական ուժը սկսում է ծլարձակել, կոչվում է Թայ Չու, երբ նյութական ուժն ու ձևը սկսում են զարգանալ, կոչվում է Թայ Շի, երբ տիեզերքը ըստ էնության զարգանում է, կոչվում է Թայ Սու. Երբ տիեզերքը ձև և էնություն է ստանում, կոչվում է Թայ Ջի»: Այս պատզամները ցույց են տալիս, որ Դան գոյաբանությունն ըստ էնության հիմնված է նյութական ուժի վրա:

**30. Երեք չինական տառեղու տես Ֆեն Յուլամի գրքում (1952):**

Գուռ Սյամը (252–312) գրում է իր «Չուան Ցու Զու (Չուան Ցուի մեկնաբանություններ) գրքում.«Յուն (字, անսահման տարածություն) վերաբերում է աշխարհի չորս ծագերին, վերին ու վարին, որը սահմաններ չունի»: Մինչդեռ միևնույն ժամանակ մենք կարող ենք դիտարկել տիեզերքը՝ որպես ուղղահայաց ծգվող համակարգ: Երկարության տեսանկյունից տիեզերքը ծայր չունի, ինչպես Գուռ Սյամն է նշել նույն գրքում. «Զոուն (宙, անսահման ժամանակ) միշտ ընդգրկում էր անցյալն ու ապագան, մինչդեռ այն սահմաններ չունի»: Քանի որ տիեզերքը կարելի է դիտարկել երկու տեսանկյունից, «ինաստունը» կարող է տիեզերքի մեկնաբանության իր փիլիսոփայական համակարգերը սահմանել երկու ուղղությամբ. ուստի «Զի Ցիում» գրված է. «Փոփոխությունների գիրքը («Ի») ներառում է երկնքի ու երկրի չափը»: (Վիլհելմ 1979: 293)

«Ի Թառն» (Իի ճանապարհ) բաց, ամբողջական համակարգի կերպ է. ուստի այն աննկատելի «մեծ ամբողջություն» է, որում իրերը, որոնք գոյություն են ունեցել, գոյություն ունեն և գուցեց գոյություն ունենան ապագայում, կարող են գտնել իրենց համապատասխան հիմքը: «Ի Թառն» լճացած չէ, այն մշտապես վերարտադրվող համակարգ է: Յետևաբար, այն պետք է ինքնարտահայտվի երկու փոխազդող խորհրդանշերի, և ոչ թե այլ անշարժ երևույթների միջոցով: Երկու խորհրդանշերը՝ ինը և յանը, ինչպես գրված է «Ի Չինում», «ձևափոխվում են իրենց միաձուլման պատճառով» և «այն, ինչ անշափելի է Ինի և Յանի գործողության մեջ, կոչվում է ոգի» (Չան 1963: 266). դրանք տարբեր ենթյուն ունեցող երկու ուժեր են: «Ի Թառն», որը ներառում է այս երկու խորհրդանշերը, ինի և յանի փոփոխությունների արմատն է: Յետևաբար, «ճանապարհը (Թառ) կազմված է Ինի և Յանի հաջորդական շարժումից» (Չան 1963: 266): Յան Շի Սունը իր «Չուն Ցյու Գու Լյան Չուան Ցու» (Գու Լյան Չուանի մեկնաբանությունը) գրքում մեջքերում է Վան Բիի (226-249)` այս նախադասության մեկնաբանությունը: Յանն ասում է. «Զի Ցիում» նշված է, որ ճանապարհը կազմված է Ինի և Յանի հաջորդական շարժումից: Վան Բին ասում էր. «Ինչ վերաբերում է Ինին և Յանին, երբեմն այն կոչվում է Ին, երբեմն՝ Յան. Ծգրիտ անվանումներ չկան: Եթե Ին է, չի կարող լինել Յան. Եթե զիջող է, չի կարող լինել վճռական: Միայն երբ այն ոչ Ին է, ոչ Յան, (միևնույն ժամանակ և Ին է, և Յան), ապա Ինի և Յանի Մեծ վարպետն է: Միայն երբ այն ոչ զիջող է, ոչ վճռական (միևնույն ժամանակ և մեղմ, և զիջող), կարող է դաշնալ վճռական և զիջող Մեծ վարպետ: Յանապատասխանաբար, երբ չկան տարածական սահմանափակումներ և ֆիզիկական ծև, կարելի է կարծել, որ ոչ Ինը, ոչ Յանը չեն կարող հասկանալ Թառն, բայց կարող են հասկանալ հոգին»: Ինը ու Յանը ներկայացնում են համապատասխանաբար երկու տարբեր ենթյուն. Ինը չի կարող փոխարինել Յանին և հակառակը: Միայն Թառն կարող է ներկայացնել երկուսն էլ, քանի որ ոչ Ին է, ոչ Յան, այլ երկուսի ենթյունն է: Այսպիսով, «Ի Չինում» ասվում է, որ «հոգին չունի տարածական սահմանափակում, իսկ Ինը՝ ֆիզիկական ծև»: Այս տեսանկյունից դիտարկելիս, անկասկած, մեծ փիլիսոփայական իմաստություն կա նրա մեջ, որ «Զի Ցիի» կողմից «Ի Չինի» մեկնաբանությունը թե՛ բաց, թե՛ ուղղահայաց ծգվող համակարգ է: Թույլ տվեք մեկ անգամ ևս հաստատել, որ «Զի Ցի» գրքում «Ի Չինի» ամբողջական փիլիսոփայական մեկնաբանության կաղապարը խիստ տարբերվում է «Ցու Չուանում» «Չուն Ցյուի» մեկնաբանությունից:

### 3.2.3 Հան Ֆեյ Ցուի մեկնաբանությունը Լառ Ցուի մասին

Եթե «Ցուու Չուանում» Չուն Ցյուի մեկնաբանությունը պատմական իրադարձությունների մկարգություն է, իսկ «Զի Ցիում» «Ի Չինի» մեկնաբանությունը՝ ամբողջական փիլիսոփայական մեկնաբանություն, ապա «Հան Ֆեյ Ցուում» Լառ Ցուի մեկնաբանությունն արվել է հիմնականում հասարակական և քաղաքական գործունեության լույսի ներքո: «Հան Ֆեյ Ցուի» «Զի Լառ» և «Յու Լառ» երկու հոդվածներում հայտնաբերում ենք, որ մեծ հաշվով նրանց նախնական նպատակը Հանի լեզարտական մտքերի լուսաբանումն է, որոնց բնորոշ գծերն են՝ ֆա (օրենք), Շու (պետություն ղեկավարելու հմտություն) կամ Շի (ուժ կամ իշխանություն):<sup>31</sup> Վեյ Ցուանը (1794–1857) իր «Լառ Ցու Բեն Ի» («Լառ Ցուի» նախնական իմաստը) գրքում գրում է. «Լառ Ցուն» ուսումնասիրողների թվում էր Հան Ֆեյ Ցուն, որը գրել է «Զի Լառ» և «Յու Լառ» գրքերը: Նա Թաոն ընկալում էր լեզարտական մտքի լույսի ներքո. կային գիտնականներ, ինչպիսիք են Վան Ֆանը (1044–1076) և Լյու Յուեյ Ցինը (1032–1111), որոնք հասկանում էին «Լառ Ցուն» և «Չուան Ցուն», և կային գիտնականներ, օրինակ՝ Սու Ցուն (1039–1112), 8յան Յունը (1540–1620) և Լի Ջին (1527–1602), որոնք «Լառ Ցուն» ընկալում էին բուդայական տեսանկյունից: Նրանցից ոչ ոք չէր հասկանում «Լառ Ցուի» հիմնական եւթյունը: Այստեղ մենք չենք քննարկի բոլորին, այլ կանդրադառնանք նիայն Վեյ Ցուանին: Վիճելի հարց է, թե արդյոք Վեյն իր մեկնաբանության մեջ ըմբռնել էր «Լառ Ցուի հիմնական ոգին», որը ոչ այլ ինչ է, քան Լառ Ցուի բազմաթիվ մեկնաբանություններից մեկը: Բայց խելամիտ կլինի նշել, որ «Հանա Ֆեյ Ցուն» բացատրում էր «Լառ Ցուն» լեզարտական մտքերով: Յետևաբար, մենք կարծում ենք, որ «Զի Լառ» և «Յու Լառն» ստեղծեցին մեկնաբանական այլ կաղապար, երբ հեղինակը հասարակական և քաղաքական գործունեության լույսի ներքո հասկացավ դասական երկը: Ավելի ուշ շրջանում գրված գործերը, ինչպիսին է Թան դինաստիայից Վան Ջենի «Դառ Դե Չին Լուն Բին Յառ Ինը» (Պատերազմի արվեստի հիմնական իմաստը «Դառ Դե Չինում») անհրաժեշտ է տեղավորել այս կաղապարում:

«Զի Լառոյում» մեկնաբանությունների մեծ մասը ստեղծվել է հասարակական և քաղաքական մոտեցման միջոցով: Հանը տրամադրում է տեքստի մի փոքր փիլիսոփայական բացատրություն. եթե դիտարկենք փիլիսոփայության տեսանկյունից, ապա դրան չի տրվել մեծ փիլիսոփայական կարևորություն: Օրինակ, Հանի մեկնաբանության «սա կոչվում է ուրվագիծ առանց ուրվագիծ, ծև (Սյան) առանց

31. 1993 թվականին Յու Բեյ նահանգի Գուու Դյան վայրում պեղված բամբուկե գրքերից մեկը, որ կրում էր «Ու սին» (Չինգ գործոն) վերնագիրը, ինստ տարբերվում է նոյն վերնագրով մետաքս գրքից, որը հայտնաբերվել է 1973 թվականին Յու Նամ նահանգի Չամ Շա քաղաքում: Մետաքս «Ու սին» գրքում կարելի է գտնել Չինը (Չին, դասական) և Շուուն (դասական երկի մեկնաբանության քննախոսություն), իսկ բամբուկից «Ու սին» գրքում Չին կա, բայց Շուուն բացակայում է: Սա նշանակում է, որ ինչ-որ մեկը հետագայում Շուու բառն ավելացրել է մետաքսից «Ու սին» գրքում: Յետարար, չենք կարող հաստատել, որ թե՝ «Չին Շուուն» և թե՝ «Սու Չինը» գրվել են նոյն մարդու կողմից: Միանշանակ չենք կարող նաև հերքել, որ (1) երկու գրքերն էլ գրվել են մեկ մարդու կողմից և (2) «Սուն» և «Չինը» ավարտին են հասցել «Չին Շուուից» առաջ, որը գրվել է «Մո Չինը» ավելի բազմակողմանի ընկալելու համար:

առարկայի» (Լառ 8ու, գլուխ 14) նախադասությունը ոչ ավելին էր, քան ողջամտության վրա հիմնված փորձառական մեկնաբանություն: Հանը բացատրում էր. «Մարդիկ հազվադեպ են տեսնում կենդանի փիդ: Նրանք գտնում են մեռած փիդի կմախըք և ըստ դրա հատկանիշների պատկերացում կազմում կենդանի փիդի մասին: Այն, ինչ մարդիկ օգտագործում են իրականը պատկերացնելու համար, կոչվում է ձև: Չնայած Թառն հնարավոր չէ լսել կամ տեսնել, ինաստունը որոշում է և տեսնում է նրա հատկանիշները՝ իմնվելով նրա թողած ազդեցության վրա: Դետևաբար, այն կոչվում է (Լառ 8ու) «ուրվագիծ առանց ուրվագիծի և ձև՝ առանց առարկաների» (Չան 1963: 161): «Թառն (ճանապարհ), որի մասին կարելի է պատմել, հավերժական թառն չէ: Անունը, որ կարելի է տալ, հավերժական անունը չէ,-ասում էր Հանը: -Այժմ այն, ինչ նախ գոյություն է ունենում, հետո՝ բնաջնջվում, հիմա ապրում է, իսկ հետո մեռնում, կամ սկզբում ծաղկում է, այնուհետև՝ թառամում, չի կարող կոչվել հավերժական: Միայն այն, ինչ գոյություն ունի տիեզերքի ամենասկզբից և ոչ մեռնում է, ոչ էլ թառամում մինչ երկնքի ու երկրի տարրապուծումը, կարող է կոչվել հավերժական» (Չան 1963: 261): Այստեղ մեծ փիլիսոփայական կարևորություն են ձեռք բերում «փոփոխականության» և «անփոփոխականության» մեկնաբանությունները: Քանի որ այս ընկալումը կարելի է ձեռք բերել ընդհանուր ինացությունից, որոշակի հեռավորություն կա այս կետի և մետաֆիզիկական մտքերի միջև: Թառն «մեծ ամբողջականություն» է, որը ննան է ինչպես «Թառն (ճանապարհ) կարելի է ներկայացնել՝ որպես ոչ հավերժական թառ» իմնավորմանը, այնպես էլ «այն, ինչ ձևից վեր է, կոչվում է թառ» պնդմանը («Թառ Չուանը» «Ի Չինում», գլուխ XII: Վիլիելմ 1979: 323): Ինչ վերաբերում է այս երկու հոդվածների մյուս մասերին, Հանը հաճախ բացատրում էր դրանք Ֆայի, Շուի և Շիի մտքերի միջոցով: Օրինակ, Հանը բացատրում է. «Նա, ում պատկանում է պետության Սայրը (Թառն), երկար կապրի («Լառ 8ու», գլուխ 59), քանի որ «մայրը թառն» է: Թառն ծնվել էր երկրում, որտեղ մեծ տեղ էր տրվում մարտավարությանը: Այսպիսի երկիրը, որը կոչվում է «մայրական երկիր (Թառ)», արդարացիորեն նատնանշում է Հանի լեզավիստական միտքը: Բացատրելով «Եթե նրա կարողությունն անցնում է մյուսների ինացության սահմանները, նա հարմար է պետությունը դեկավարելու համար» (Լառ 8ու, գլուխ 59) իմնավորումը՝ Հան Ֆեյ Ցուն ասում էր. «Նրանք, որ պետություն են կառավարում և իրենց փրկում վտանգից, միանշանակ հասկանում են թառն: Նա ավելի իմաստուն կիննի, եթե հասկանա թառն. Եթե դառնա ավելի իմաստում, խոր գիտելիք ձեռք կրերի, և մյուսներն ի վիճակի կլինեն իճանալ, թե ինչ գիտի և ինչ չգիտի: Միայն այս ճանապարհով նա կարողանա ոչ միայն հեռու մնալ վնասից, այլև կառավարել իր պետությունը»: Սա նշանակում է, որ նա, ով խորությամբ հասկանում է թառոյի երթությունը, կարող է թե՛ իրեն փրկել վլունգից և թե՛ կառավարել պետությունը: Իրականում սա բացատրում է թառն օրենքի տեսանկյունից: Բացատրելով «Լառ 8ուի»՝ «ո՞վ գիտի՝ երբ ենք հասնելու սահմանագծին» նախադասությունը («Լառ 8ու», գլուխ 58), Հանն ասում է. «Ցանկացած ոք հաջողության կիհասնի, եթե հետևի սկզբումքին: Ինչ վերաբերում է հաջողությանը, ապա ամենահզորը կլինի Արքա, իսկ պակաս հզորները կլինեն նախարարներ կամ գորավարներ»: Սա նշանակում է, որ եթե մեկը գործում է՝ հետևելով Թառի երթյանը, կիհասնի թագավորի բարձրագույն դիրքին, իսկ նախարարը կամ գորավարը կստանան այն պարզեատրումը և աշխատավարձը, որին արժանի են: Այստեղ Հանը թառն միավորում էր իշխանության հետ: Սեկնաբաններով «մեծ երկիր կառավարելը ննան է

փոքր ծովականությունը՝ Հանն ասում է. «Եթե մեծ երկրի կառավարիչը մշտապես փոխի օրենքները, ժողովուրդը շատ կտառապի: Հետևաբար, զգայուն կառավարիչը օրենքները փոխելու փոխարեն գնահատում է հանդարտությունը (անգործությունը)»: Նշանակում է՝ օրենքները պետք է ընդունվեն երկար ժամանակով, որպեսզի մարդիկ հասցնեն դիտարկել դրանք: Նման մեկնաբանությունները բազմաթիվ են «Հան Ֆեյ Ցուում», սակայն այս մեկնաբանություններից քեզը փիլիսոփայական նշանակություն ունեն: Հետևաբար, «Լառ Ցուն» մեկնաբանելի Հանը պատրաստ էր լուսաբանել ֆայի, Շուի և Շիի լեգալիստական մտքերը:

«Յու Լաոյուն» Հանն ավելի հստակ է մեկնաբանում «Լառ Ցուն» հասարակական և քաղաքական գործունեության համատեքստում, և նրա օգտագործած նյութերի մեծ մասը պատմական իրադարձություններ են. նրա նպատակն էր ցույց տալ, թե կառավարիչն ինչպես է հաջողության հասել կամ ձախողվել, և պետությունն ինչպես է վերելք և անկում ապրել: Օրինակ, նա վերցրել է 8իի Զյան դրսի (484 մթա.-481 մթա.) և նրա նախարար Թյան Չենի պատմությունը, որպեսզի ցույց տա, որ «Ճուկը չի կարող բաժանվել ջրից» (Լառ Ցու, գլուխ 36), որովհետև «խոշող պետությունները հենման կետ են կառավարչի համար (ինչպես Ճուկը՝ ջրի համար). նա իր իշխանությունը պետք է տարածի իր նախարարների վրա, և իշխանությունը նախարարներին հանձնելուց հետո այլևս չի կարողանա հետ վերցնել այն»: Նա դարձյալ օգտագործում է Զինի Սյան Կոնսի (մթա. 676–651 թթ.) պատմությունը, որը գեղեցիկ ծիրեր և նեփրիտ էր նվիրում Յու նահանգին (որպեսզի թուլացնի նրա զգոնությունը և այդ ընթացքում հարձակում ծրագրի նահանգի վրա)` բացատրելու, որ «Եթե ուզում ես ստանալ, ապա նախ պետք է տաս»: Հան Ֆեյն այսպես է մեկնաբանում «Լառ Ցուն», որովհետև «Լառ Ցուում» շատ մնտքեր այն մասին են, թե ինչպես պետք է ոեկավարել և կառավարել պետությունը: Հասկանալի է, որ Սի Մա 8յանի (145 մթա.-?) «Չի Չի» (պատմական արձանագրություններ) գրքում նրա անունը գրված է Լառ Ցուի, Չուան Ցուի և Շեն Դաոյի (395–C.315 մթա.) կողքին: Մյուս կողմից, Հանը շատ է տարբերվում Վեյ-Չին (ներ-քառոսական) ժամանակաշրջանի գիտնականներից, որովհետև «Լառ ցուում» նա քիչ մեկնաբանություններ է անում փիլիսոփայական նշանակություն ունեցող տեքստերի մասին: Մի խորքով, Հանի մեկնաբանությունը կարելի է համարել չինական կրթության պատմության մեջ մեկնաբանական կաղապարի մի այլ տեսակ:

8ին ժամանակաշրջանին նախորդած դասական երկերում կան այլ մեկնաբանական կաղապարներ, բայց կարծում են, որ մեկնաբանական երեք կաղապարները, որոնք քննարկեցինք վերևում, կարող են մեծագույն ազդեցություն ունենալ հետագա շրջանի չինական գիտության վրա: Այստեղ կցանկանայի հիշատակել «Մո Ցու», «Մո Փին» (մողմի դասական երկ) և «Չին Շուու» (քննախոսություն Մո Չինի մասին) երկերը: Ինչ վերաբերում է այս երկու հոդվածների տարբերվիճ, ապա ես համաձայն չեմ, որ «Չին Շուուն» հայտնվել է «Մո Չինից» հետո: Կարծում եմ՝ «Մո Չինը» ի հայտ է եկել այն նույն ժամանակ, ինչ «Չին Շուուն», կամ էլ երկու հոդվածները գրվել են նույն մարդկանց կողմից<sup>32</sup>: Երկուսն էլ հիմնականում հասկացությունների բացատրություններ են, սակայն նրանց միջև որոշ տարբերություններ կան: «Մո Չինը» ընդհանուր առնամբ բացատրում է հասկացություններ, իսկ «Չին Շուուն» կենտրոնանում է հասկացությունների իմաստների կամ

32. Յոդվածներից մեկը՝ «Չան Շուուն» («Պատմության գիրք»)

լրացուցիչ կարծիքների վրա: Օրինակ, «Մո Չինում» գրված է. «Զյուն (Երկար ժամանակ) վերաբերում է տարբեր ժամանակների»: Այս սահմանումը չի վերաբերում կոնկրետ ժամանակաշրջանի, այլ անընդհատ է. սա վերացական և ընդարձակ բացատրություն է, իսկ «Չին Շուն» ավելի որոշակի սահմանում է տալիս. «Զյուն վերաբերում է հին ու նոր ժամանակներին, ցերեկվան ու գիշերվան», ինչը ցույց է տալիս, որ Զյուն ներառում է ողջ ժամանակը՝ հին ժամանակներից մինչև ներկա, արևածագից արևամուտ: Դարձյալ «Մո Չինում» գրված է. «Յուն (անսահման տարածություն) վերաբերում է տարբեր տարածությունների»: Յուն վերաբերում է տարածությունների, ոչ թե որոշակի վայրի, ուստի «տարբեր տարածք» արտահայտությունն ընդամենը Յուի սահմանում է: «Չին Շուն» ասում է. «Յուն վերաբերում է Դունին (արևելք), Սիին (արևմուտք), Ջյային (տուն), Նամին (հարավ) և Բեյին (հյուսիս): Գոյություն ունեն Ջյա (家) բարի բազմաթիվ բացատրություններ: Օրինակ, պրոֆեսոր Գառ Հենը (1900–1986) հավատացած էր, որ դա Զունն է (中, կենտրոն), բայց ին կարծիքով՝ Ջյան է (加, գումարած): Յուն արևելքի և արևմուտքի ընդարձակումն է, գումարած հարավն ու հյուսիսը, որը միանշանակ Յուի տեսակետն է «Մո Չինում»: Յատուկ բարի կամ արտահայտության այսպիսի մեկնաբանությունը շատ նման է ժամանակակից բառարաններին և մեծ ազդեցություն ունի, հատկապես բառարանների կազմնան և բուդդայական դասական երկերի թարգմանության ոլորտում:

Քանի որ Յան Կոնֆուցիականները շատ բարձր էին գնահատում կոնֆուցիական դասական երկերը, և այս դասական երկերը հավանության արժանացան՝ որպես քաղաքացիական ծառայության քննությունների հիմնական աղբյուր, ստեղծվեց շարժում, որը խրախուսում էր այս երկերի ուսումնասիրությունը շարահյուսական և իմաստաբանական վերլուծության միջոցով. աստիճանաբար այսպիսի գիտելիքը՝ անտիկ տառերի ծագումն ու զարգացումը բացատրելու ուսումնասիրելը, պարտադիր հնտություն էր դարձել այն գիտնականների համար, որոնք մեկնաբանում էին այս դասական երկերը, և արդյունքում նրանցից մի քանիսը՝ Սուն Գուն, ինչյունագիտությունը, բանասիրությունը, Քառ Զուն (տեքստային հետազոտություն), դարձան հատուկ և տեխնիկական առարկաներ: Այս դասական երկերի Յանի ուսումնասիրությունն ու մեկնաբանությունը լի է անկարևոր մանրամասներով. ինչպես գրված է «Յան Շունում» (Յան դիմաստիայի պատմություն), «Սովորաբար դասական երկի քննախոսությունը պարունակում է ավելի քան մեկ միլիոն տառ»: Ցին Յան Զուն անունով մի կոնֆուցիական «Յան Դյանում» երկու տառը բացատրում է ավելի քան հարյուր հազար տառով, իսկ չորս բառ բացատրելու համար օգտագործում է 30,000 տառ: «Վեն Սին Դյան Լունի» «Լուն Շուն» (քննախոսության քննարկում) գլուխն ասում է. «Այնպիսի մարդկանց պատճառով, ինչպիսին Ցին Յան Զունն է, որը մեկնաբանել է «Յան Դյանը» ավելի քան հարյուր հազար տառով, և Զուն Շին, որը բացատրել է «Շան Շուն» (Պատմության գիրը) 300 տառով, բազմաթիվ գիտնականներ այնքան էին հոգնել, որ չին ցանկանում ուսումնասիրել շարահյուսական և իմաստաբանական վերլուծությունները»: Յան դիմաստիայի գիտնականները բացատրում էին դասական երկերը ոչ միայն չափազանց շատ ու անկարևոր մանրամասներով, այլև դրանք դառնում էին զվարճալի: Սակայն այս ոճը զգալիորեն փոխվեց Վեյ-Չին ժամանակաշրջանում: Այդ ժամանակի գիտնականները հակված էին դասական երկերը մեկնաբանել հակիրծ և բազմակողմանիորեն: Այդ ժամանակաշրջանում ստեղծված երկերի մեծ մասը, այդ թվում և «Ի Չինի» և «Լառ Յուի» մեկնա-

բանությունները (Վաճ Բիի կողմից), ինչպես նաև «Չուան Ցուի» մեկնաբանությունները (Գուլ Սյանի կողմից), թե՝ համառոտ էն, թե՝ փիլիսոփայական (Թան Ի Զյե 1998 ա)՝<sup>33</sup>: Ես կցանկանայի մեկ օրինակով ցույց տալ ոճերի տարբերությունը Հան դինաստիայում և Վեյ-Զին ժամանակաշրջանում: «Չուան Ցուի» «Սյան Յան Ցու» (Ուրախ ուղարկություն) գլխում ասվում է. «Հյուսիսային օվկիանոսում Կուն անունով ծուկ կա: Չգիտեմ, թե քանի հազար մղոն երկարություն ունի: Այս Կունը կերպափոխվում է Փեն անունով թռչնի: Չգիտեմ, թե մեջքը քանի հազար մղոն լայնություն ունի: Երբ նրան շարժում ես, թռչում է, թևերն ամպերի պես ծածկում են Երկինքը»: Իր մեկնաբանության մեջ Գո Սյանն ասում է. «Կստահ չեմ, որ Կունի և Փենի մասին պատմությունն իրականություն է»: Նա շարունակում է քննադատել անկարելոր ոճերը Հան դինաստիայում՝ դրանք որակելով «կարծրացած բացատրություններ» և ասում է. «Բազմակողմանի զարգացած գիտնականն իր ուսումնասիրության մեջ պետք է ընթանի նյութի էլեկտրոնը, և ոչ այդ կողմնակի մանրամասները, և չպետք է անդադար ջանք բափի բարացած բացատրություններ տալու համար: Այս մանրամասները կարելի է բաց թռղնել, եթե դրանք չեն ազդում հիմնական գաղափարների վրա»: Այսպիսով, հանգում ենք այն եզրակացության, որ Հան դինաստիայի կոնֆուցիականները դասական երկերը մեկնաբանում էին «Ես մեկնաբանեցի դասական երկերը՝ «դասականները մեկնաբանեցին ինձ» սկզբունքով: «Դա Հուեյ Փու Ջյուե Չան Շի Ցու Լու» (Փու Ջյուեի՝ Զենի մեծ վարպետի երկերի ժողովածոլ) 22-րդ գլխում ասվում է. «Գո Սյանին տեսել էին «Չուան Ցուի» մասին իր մեկնաբանությունը գրելիս: Այդ մասին իմացող մարդիկ ասում էին. «Իրականում այդ Չուան Ցուն է մեկնաբանել Գո Սյանին»: Բացի այդ, Գուեյ Ցու Գուանի՝ «Խան Հուա Զեն Զին Փին Չու» («Չուան Ցու» ծանոթագրություն) գրքի իր նախաբանում Ֆեն Մեն Զենը (1546-1605, Մին դինաստիայից) գրում է. «Սա ոչ թե Գո Սյանի մեկնաբանությունն է «Չուան Ցուի» մասին, այլ «Չուան Ցուի» մեկնաբանությունը Գո Սյանի մասին»:

Այն ժամանակից ի վեր, երբ հնդկական բուդդայականությունը մուտք գործեց Չինաստան Արևմտյան Հան դինաստիայի վերջում (մթա. 206-25թթ.), մարդիկ ավելի ու ավելի մտահոգվեցին մեկնաբանություններով: Սկզբում, երբ Արևելյան Հանից Ան Շի Գաոն (պատկանում էր Հինայանային) սկսեց բուդդայական դասական երկերը բարգանել չինարեն, նա բուդդայական տեսությունները համադրում էր այդ ժամանակի գերիշխող մտքի հետ, ինչպիսին էր Կատուրմահաբուտան (հող, կրակ, ջուր և քամի) հինգ տարերքների համար (ջուր, կրակ, փայտ, մետաղ և հող), Պանկասիլա (չսպանել կենդանի արարածի, չգողանալ, չանել անպարկեցտ արտահայտություններ, չստել և չօգտագործել ոգելից խմիչքներ) չորս առաջինությունների համար (բարեգործություն, արդարամտություն, ծես, իմաստություն և անկեղծություն), և այլն: «Ին Զի մեն Զին Չու» («Ին Զի մեն դասական գործի մեկնաբանություն») գիրքն ասում է. «Պանկասկանդիհան վերաբերում է մարմնին... ճիշտ այնպես, ինչպես մարդու նախնական եռանդը: Երբ եռանդը միախառնվում է, այն բարձրանում է, իջնում, ծաղկում և թառամում Տրիլոկյայի

33. Այս էսեի վերջում ես առաջադրում եմ չինական հերմենուսիկայի տեսության և մերոդի սահմանման հարցը և որոշակի վերլուծության եմ ենթարկում երկու մեթոդները, որոնք Գուլ Սյանն օգտագործել է «Չուան Ցուն» մեկնաբանելիս: Նաև տես իմ նյոււ էսսեն, Թան Ի Զյե (1998 թ):

շուրջ անվերջ. այն կոչվում է սերմ»: «Պանկասկանդիան եռանդի տեսանկյունից բացատրելը միանշանակ հեռու էր իրական բուդդայական սկզբունքից, բայց համընկնում էր այդ ժամանակի գերիշխող մտքի դպրոցների հետ: Ավելի ուշ, երբ Սահայանան ներմուծվեց Չինաստան, սովորաբար այն ընկալվում էր՝ որպես Նետո-թաոսիզմի միտր: Նետոնաբար, ի հայտ եկան մեկնաբանության նոր մեթոդներ, օրինակ՝ Գե Ին և Լյան Լեյը (Թան Յուն Թուն 1991): «Գառ Սեն Զուանում» (Բարձրաստիճան պաշտոնյայի կենսագրությունը) գրված է, որ երբ Հուեյ Յուանը (334-416) «24 տարեկան էր, դասախոսություններ էր կարդում: Մի անգամ հանդիսատեսներից մեկը զգում է, որ չի հասկանում նրան: Զայյած Հուեյ Յուանը ջանք չի խնայում, նրան չի հաջողվում մատչելի բացատրել ունկնդիրն: Ի վերջո, Հուեյ Յուանը մեջբերում է «Զուան Յուի» մտքերը, և մարդու ամեն ինչ հասկանում է»: Այս դեպքից կարող ենք եզրակացնել, որ Գե Ին ոչ ավելին է, քան Լյան Լեյը, որը մասնավորապես բուդդայական դասական երկերը մեկնաբանում է չինական գաղափարների միջոցով: Իրականում գիտնականներն արդեն նկատել էին, որ Գե Ին սխալ էր մեկնաբանում դասական երկերի էությունը: Օրինակ, Դառ Անը (314-385) հասկացավ, որ «Գե Ին սխալ էր հասկացել դասական երկերի մեջ մասը»: Կուռարացիվայի ամենաակնառու հետևողներից մեկը՝ Սեն Ժույը, ասում էր. «Գե Ին օգնությամբ (բուդդայական սկզբունքները) տարածելն ու սովորեցնելը թե՛ մանրախնդրություն է, թե՛ շեղում իրական բուդդայական ոգուց» (Թայշո շինչու դայցույո, 55:59): Դրանից հետո Գե Ինը աստիճանաբար հրաժարվեցին: Բայց բուդդայական դասական երկերը թարգմանելիս տառադարձության օգտագործումն անխուսափելի է, քանի որ բուդդայականության մեջ գոյություն ունեն բազմաթիվ եզրույթներ, օրինակ՝ պրաջնա և նիրվանա, որոնք փոխարինող համարժեքներ չունեն չինարենում: «Ձեն Ու Լունը» («Սխալներն ուղղելու մասին») ասում է. «Նի Յուանը սանսկրիտ լեզվով բառ է, որը Զին դինաստիայում նշանակում էր անգործություն» (Բուն Մնգ Ս, գլուխ 1): Նի Յուանը Նիրվանայի տառադարձումն է. չինարենում չկա նրա համարժեքը. այն տառադարձել և մեկնաբանվել է՝ որպես «անգործություն»: Սեկ այլ օրինակ կարելի է գտնել Վինալակիրտի Նիրդեսա Սուտրայում: Այս գրքի առաջին հատորում կարելի է հանդիպել հետևյալ խոսքերը. «Սեն Զառն (384-414) ասում էր, թի ցյու (Բհիկու) բառը Ցին դինաստիայի ուշ շրջանում (936-947) երբեմն նշանակում էր մուրացկան, երբեմն՝ զայրույթից ազատվել, երբեմն՝ պատվիրան կատարել, երբեմն՝ սարսափելի դև: Մեկ հնդկերեն բառը կարող էր ընդհանրացնել բոլոր չորս իմաստները. սակայն քանի որ չկար դրան համարժեք բառ, այն կարելի էր միայն տառադարձել: Սա բացատրում էր, թե ինչու բուդդայական դասական թարգմանություններում որոշ տառադարձումներ կան: Բայց այս հանգամանքը կարող է մի նոր հարց բարձրացնել, այն է՝ բուդդայական գաղափարների տարրեր ընկալուների պատճառով հնարավոր են նույն գաղափարի տարրեր մեկնաբանություններ: Բուդդայական դասական գործերում ընդհանուր և սովորական եզրույթները հասկանալու համար տպագրվեցին մի շարք հատուկ գրքեր, որոնք սահմանում էին եզրույթների չափանիշները: Այսպիսի գրքերից էին՝ «Ի Ցին Ի Ցին Ի» (Բոլոր դասական երկերի տառադարձնան ուղեցույց) և «Ֆան Ի Մին Ի Զիմ» (Տառադարձնան մատյան): Ավելին, Շարավ-Ջուսիս դինաստիաներից մինչև Սույ և Թան դինաստիաներ (581-907), բուդդայականության որոշ հետևողներ առաջարրում էին դասական երկերի թարգմանության որոշ սկզբունքներ, ինչպես, օրինակ, Ցի Դա Լյանը, որը սահմանեց «չքարգմանելու իինց սկզբունքները», որոնք էլ հետագայում կատարելագոր-

Ժեց Սյուան Ցանը (602-662) (Թան Յուն Թուն 1982): Չինական մեկնաբանական տեսության զարգացումն ուսումնասիրելիս թերևս մեզ համար խիստ կարևոր է հաճակարգել այս մեթոդներն ու սկզբունքները բուդդայական թարգմանության մեջ: Իհարկե, այն ժամանակից ի վեր, երբ արևմտյան կրթությունը մուտք գործեց Չինաստան, նոր հարցեր բարձրացան թարգմանության և մեկնաբանության վերաբերյալ: Այս հանգանանքը վեր հանեց բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք դուրս են իմ իմացության շրջանակներից: Հոյս ունեն՝ այլ գիտնականներ նույնականացնեն այս բնագավառում:

### Բառացանկ

|                      |          |                |        |
|----------------------|----------|----------------|--------|
| Բան Բեն Սյուն        | 版本学      | Ջառ Հուն       | 焦竑     |
| Բի Ցյու              | 比丘       | Ջե Լաո         | 解老     |
| Կատուրմահարիուտա     | 四大       | Չին դինաստիա   | 晋朝     |
| Չեն Թուան            | 陈抟       | Չին Սյուն      | 经学     |
| Չին Շուն             | 经说       | Լաո Ցի Չի Լուն | 老子指略   |
| Շուն Ցյու            | 春秋       | Լի Չի          | 李贽     |
| Դա Հուեյ Փու Զուե Շի | 大慧普觉禅师语录 | Լյան Լեյ       | 连类     |
| Զուե Շի Յու Լու      |          | Լյու Սե        | 刘勰     |
| Դառ Դե Լուն          | 道德论      | Լյու Հուեյ Ցին | 吕惠卿    |
| Դառ Թուն             | 道统       | Լուն Շուն      | 论说     |
| Դու Դառ Ջյան         | 杜道坚      | Լուն Նյան Փու  | 论语年谱   |
| Ֆան Ի Մին Ի Չի       | 翻译名义记    | Նան Հուա Զեն   | 南华真经评注 |
| Ֆեն Մեն Զեն          | 冯梦祯      | Չին Փին Զու    |        |
| Գառ Հեն              | 高        | Փանկասիլա      | 五戒     |
| Գուն Յան Գառ         | 公羊高      | Փեյ Սուն Զի    | 裴松之    |
| Գուն Յան Զուան       | 公羊传      | Փեյ Վեն Զուն   | 裴文中    |
| Գու Լյան Չի          | 谷梁赤      | Ցյան Զուն Շու  | 钱钟书    |
| Գու Լյան Զուան       | 谷梁传      | Ցին Յան Զուն   | 秦廷君    |
| Գուա Ցի              | 卦辞       | Սան Գուո Չի    | 三国志    |
| Գուան Զույ Բյան      | 管锥编      | Սեն Զան        | 僧肇     |
| Գուեյ Յու Գուան      | 归有光      | Շան Ժուն       | 邵雍     |
| Հան Քան Բոն          | 韩康伯      | Շեն Դառ        | 慎到     |
| Հե Յան               | 何晏       | Շի Չի          | 史记     |
| Հուն Մին Չի          | 弘明集      | Շուն Գուա      | 说卦     |
| Ի Զուան              | 易传       | Սիմա Ցյան      | 司马迁    |
| Չի Ցի                | 系辞       | Սու Ցի Յու     | 苏子由    |
| Չի Չի                | 既济       | Թայ Չի         | 太极     |

|                     |       |
|---------------------|-------|
| Թայսուկե Հայաշի     | 林泰辅   |
| Թառ Թե Չին Յուան Զի | 道德经原旨 |
| Վան Բի              | 王弼    |
| Վան Փան             | 王雱    |
| Սյան Չին Վեյ        | 孝经纬   |
| Վեյ Չի              | 未济    |
| Վեյ Սի              | 魏斯    |
| Վեյ Յուան           | 魏源    |
| Ու Մին Լու          | 无名论   |
| Սյու Գուա           | 序卦    |
| Սուն Գու Սյուե      | 训诂学   |
| Յան Շի Սուն         | 杨士勋   |
| Ի Ցյե Չին Ին Ի      | 一切经音义 |
| Ին Չի Ժեն Չին Ջու   | 阴持人经注 |
| Զան Ջու Չի Սյուե    | 章句之学  |
| Ջեն Ու Լուն         | 正诬论   |
| Ջոու Շուն Ի         | 周敦颐   |
| Ջոու Ի Լուն Լի      | 周易略例  |
| Ցուն Ցյու Մին       | 左丘明   |

Չան, Վին-ցիտ: (1963): Չինական փիլիսոփայության գիոբ-սկզբնաղբյուր: Փրինս-թըն. Փրինսթընի համալսարանի հրատարակություն:

Էգմեր, Ռ.Ե. և Էղմոն, Լ.Ի. (Խմբ.): (1992): Բնուրան Շասելի հիմնական երկերը (Էջ 547): Լոնդոն. Րութելիջ

Ֆեն Յուլան: (1952): Չինական փիլիսոփայության պատմություն (Դերք Բոդ, թարգմ.): Փրինսթըն. Փրինսթըն համալսարանի հրատարակություն: գլուխ XIII:

Ֆեն Յուլան (1999): Արդի չինական փիլիսոփայության պատմություն (Էջ 217): Գու-անցոու. Գուան Դուն ժողովրդական հրատարակություն

Լի Դա Սան: (1978): Համեմատական գրականության ուսումնասիրություն. նոր ուղղություն (Էջ 107): Թայիին. «Լինքին» հրատարակչություն

Մեն Յուա: (1993): Արուե դե Կուլտեր և Կոնֆուցիոս (Էջ 14, Էջ 149 և Էջ 151): Պեկին. «Նոր Չինաստան» հրատարակչություն:

Սուն Ի Ժան: (1986): Մո Ցու ծյան Գու: Պեկին. «Զուն Յուա» հրատարակչություն:

Թան Ի Ջյե: (1986): Փիլիսոփայական համակարգ հիմնելու նպատակով Դառ Թե Չինի կիրառած մեթոդի մասին: Փիլիսոփայական ուսումնասիրություն (1), Պեկին:

Թան Ի Ջյե (1998 ա): Տարբերակելով անուններն ու վերլուծելով բանականությունը. Գուռ Սյանի նոր մեթոդ Չուան Յուին մեկնաբանելիս: Չինական հասարակական գիտություն (1), Շանհայ

Թան Ի Ջյե (1998 բ): Գուռ Սյանի՝ Չուան Յուին մեկնաբանելու նոր մեթոդի մասին: Չինական մշակույթի ուսումնասիրություն (1), Պեկին:

Թան Ի Ջյե: (1999): Գրական տեսությունները Վեյ-Չին և Չարավ-Յյուսիս դիմաստի-աներում: Թան Ի Ջյե (Խմբ.), Ֆեյ Շի Ֆեյ Սյույ Զի (186-187 էջեր): Պեկին. Յուավեն հրատարակություն:

Թան Յուն Թուն: (1982): Սույ և Թան դիմաստիաների բուդդայականության պատ-մություն (գլուխ II, 76-77 էջեր): Պեկին. «Զուն Յուա» հրատարակչություն:

Թան Յուն Թուն: (1991): Գե Ի. Յնդկական բուդդայականությունը և չինական միտ-քը հաշտեցնելու հնագույն մեթոդը: Կոնֆուցիականությունը, բուդդայականությունը և Սյուան Սյուան Թան Յուն Թունում (Խմբ.) (282-294): Պեկին. Պեկինի համալսարանի հրատարակություն:

Վիլիելմ, Ոհչարդ, անգլերեն է բարգմանվել Քերի Ֆ.Բեյնսի կողմից: (1979): «Ի Չի-նը կամ փոփոխությունների գիրքը»: Փրինսթըն. Փրինսթըն համալսարանի հրատա-րակություն:

Չան Բոջուն: (1981): Չուն Ցյու Յուու Չուան Զու (1981): (Յուու Չուանի մեկնաբանու-թյունները): Պեկին. «Զուն Յուա» հրատարակչություն:

## ԳԼՈՒԽ 4

## Զգացմունքը Ցին դինաստիային նախորդած Ռուիստական բարոյական տեսության մեջ. «Դառն սկսվում Ցինում» նախադասության բացատրությունը<sup>34</sup>

Տարածված տեսակետ կա, ըստ որի ռուիստները երբեք մեծ շեշտ չին դնում ցինի (情) վրա<sup>35</sup> և նույնիսկ բացասաբար էին վերաբերվում դրան: Սա հավանաբար բյուրինացություն է, հատկապես եթե խոսում ենք Ցին շրջանին նախորդած ռուիզմի մասին: «Գողյան Սին ցի մին չու» (性自命出) գրքում «Դառն սկսվում է ցինում» (դառ շի յու ցին, 道始于情) հատվածը կարևոր դեր է խաղում Ցին շրջանին նախորդած ցին գաղափարը հասկանալու համար: Այս հոդվածը կկենտրոնանա Ցինին նախորդող շրջանի ռուիզմի, ինչպես նաև դասսականության մեջ «ցինի տեսության» քննարկման վրա: Ի լրումն դրա, կփորձի փիլիսոփայական մեկնաբանության ենթարկել «Դառն սկսվում է ցինում» նախադասությունը, և այդ ընթացքում կառաջարկի մի շարք կարևոր գաղափարների փիլիսոփայական մեկնաբանությունները:

### 4.1 «Դառն սկսվում է Ցինում» պնդման մասին

«Գողյան Սին Ցի մին չուն» Պատերազմող պետությունների ժամանակաշրջանի (մթա. 300 թվականից առաջ) ռուիստական տեքստ է և պարունակում է հետևյալ առանձքային տողերը:

Դառ շի յու ցին, ցին շեն յու սին: 道始于情, 情生于性:

Դառն սկսվում է ցինում, իսկ ցինը ծագում է սինից:

Սին ցի մին չու: 性自命出

Սինը սկիզբ է առնում մինից:

Սին ցի թյան ձյան: 性自命出:

Սինն առաջանում է թյանից:

Այս հատվածների հարաբերակցության բացահայտումը որոշիչ նշանակություն ունի սին և ցին նախացինյան գաղափարները հասկանալու համար: Նախ կարող ենք բացատրել դրանք հետևյալ կերպ. մարդկային դառն (անձնական և հասարակական վարքի նորմերը) գոյություն ունի հենց սկզբից՝ մարդկանց ընդհանուր զգացմունքների հաշվին (ցինգան 情感): Զգացմունքների ցինը (սի, նու,

34. Հավայիի համասարան, փիլիսոփայության ֆակուլտետ: Արևելքի և արևմուտքի փիլիսոփայություն, 2003, 3(2): 271-281

35. Թարգմանչի ծանոթագրություն. ցին և սին եզրույթները չեն թարգմանվում այս հոդվածում, քանի որ դրանց թարգմանությունը կիակասի եզրույթներն ուսումնասիրենու ծրագրին: Նույն կերպ նաև մենք չենք թարգմանում չինական բարոյական փիլիսոփայության առանձքային տեխնիկական եզրույթները, քանի որ արևմտյան փիլիսոփայության մեջ դրանք չունեն համարժեքներ:

այ, լե՝ 喜怒哀乐 ) ծագում է մարդկային սինից, իսկ մարդկային սինը շնորհվում է թյանի կողմից (մարդկային սինը ձեռք է բերվում մինից, որը շնորհում է թյանը): Թյան մինը ամսուսափելիությունն է, և թելեղոջիան՝ թյանի դրսնորումը: Այս նախադասություններից հասկանում ենք, որ «դառն սկսվում է ցինում» նախադասությունը խիստ կարևոր էր Ցին դինաստիային նախորդող շրջանի ռուսակաների համար: Ավելի ճիշտ է «դառն սկսվում է ցինում», քան «դառն սկիզբ է առնում ցինից» պնդումը, որովհետև դառն գոյություն ունի հենց սկզբից՝ մարդկային ցինի շնորհիվ, և ոչ թե ծագել է ցինից<sup>36</sup>: Դա է պատճառը, որ «Սին ցի մին չուն» ասում է. «Նա, ով հասկանում է ցինը, ի վիճակի է հաղորդել (չու 出) այն, մինչդեռ նա, ով հասկանում է ի-ն 义, ի գորու է յուրացմել (ժու 入) այն: Մեկը, ով ամրողությամբ ըմբռնում է մարդկային ցինը, կարող է լիարժեքորեն զարգացնել մարդկային զգացմունքը, իսկ նա, ով ամուր կառչում է ծիսական վարդութարքից (լի 礼) և ից, կարող է կարգավորել մարդկային զգացմունքը: Այսպիսով, ծիսական վարդութարքը և ին սերտորեն կապված են ցինի հետ և անբաժանելի են մարդկային զգացմունքի արտահայտությունից:

Այստեղ կարելի է անդրադարձնալ բազմաթիվ հիմնախնդիրների, և մենք կը ենթորնանանք հետևյալ երեքի վրա.

1. «Դառն սկսվում է ցինում» նախադասության մեջ դառն վերաբերում է ավելի շատ մարդկային դառյին, քան համակցված թյանին և մարդկային դառյին: Ավելին, Լաոցին չի խոսում «կայուն դառյի» մասին, որովհետև «Սին ցի մին չուն» պնդում է. «Միայն մարդկային դառն կարելի է արտաբերել [դառ]:» Դառն, որը կարելի է արտաբերել, «կայուն դառն» չէ, և ոչ ել այն «դառն, որը չի կարելի արտաբերել»: Այսպիսով, այս դառն այն դառն չէ, որը Լաոցին մեկնաբանում է հետևյալ կերպ՝ «նախորդում է թյանի սերնդին և երկրին»: «Սին ցի մին չուն» նաև ասում է. «Ծիսական վարդութարքը սկսվում է ցինից» (լի ցու յու ցին 礼作于情):<sup>37</sup> Ծիսական վարդութարքը ներառված է «մարդկային դառյի» շրջանակներում: Յետևաբար, «դառն սկսվում է ցինում» նախադասությունը ոչ թե դառսական, այլ ռուսական զարդարք է: Ծիսական վարդութարքի այս տեսակը, որն այնքան կապված է ցինին, հասարակության մեջ ապրող մարդկանց արտաքին պատշաճությունը պահպանելու ճշգրիտ հիմքն է: Սակայն այս դառն, որ սկսվում է ցինում, չի սահմանափակվում ծիսական վարդութարքով, որովհետև ժենը (仁), ին, ծիսական վարդութարքը, ինաստությունը, արժանահավատությունը պատկանում են նույն ոլորտում: Օրինակ.

Սկզբուն այն նոտ է ցինին, իսկ վերջում՝ իին (Սին ցի մին չու):

Ժենը ծագում է մարդկանց մեջ, իսկ ին՝ դառյում: (Յու ցուն համար 1): (Այս դառն, բնականաբար, նաև մարդկային դառն է):

Սակայն ռուսական տեսանկյունից մարդկային դառն առաջանում է թյանի

36. Սա չի նշանակում, որ այն բոլորովին չի առաջանում, քանի որ այն կարող է նաև ծագել բանականությունից կամ ուսումնասիրությունից:

37. «Գոյյան Յու ցուն համար 1»-ում կա «Ծիսական վարդութարքը ստեղծվել է ի պատասխան մարդկային ցինի»: «Յու ցուն համար 2»-ն ասում է. «Ցինը բխում է սինից. ծիսական վարդութարքը ծագում է ցինից»:

դառնում, և դա է պատճառը, որ մենք հանդիպում ենք «թյանի և մարդկանց միասնություն» գաղափարին:

2. «Ցինը» սովորաբար վերաբերում է «յոթ ցիներին» (բերկրանք, զայրույթ, վիշտ, վախ, սեր, հակակրանք, ցանկություն [սի, նու, այ, ջու, այ, ու, յու 喜怒哀惧愛惡欲]), «Վեց ցիներին» (բերկրանք, զայրույթ, վիշտ, վայելք [ի 乐], քնքշություն [հառ 好], հակակրանք), կամ «հինգ ցիներին» (բերկրանք, բարկություն, վիշտ, վայելք, վրդովմունք [յուան 怨]), բայց «Սին ծի մին չում» ասում է՝ «բերկրանքի, զայրույթի, վշտի և տիխորության ցինը 气 պայմանավորված է սինով», իսկ «քնքշությունն ու հակակրանքը կախված են սինից»: Այստեղ մենք անդրադառնում ենք սինի և ցինի հարաբերության խնդրին:

«Սունցիի» «Թյան Լուն» գլխում հանդիպում ենք հետևյալ հատվածին. «Քնքշությունը, հակակրանքը, բերկրանքը, բարկությունը, վիշտը և վայելքը ներսում են (ցան 欲)<sup>38</sup>, և սա կոչվում է բնական ցին»: «Քնքշությունը, հակակրանքը, բերկրանքը, բարկությունը, վիշտը և վայելքը» այն զգացմունքներն են (ցինգան), որոնք բնականորեն արթնանում են մարդու ներսում: Այն, ինչ հիմնված է բնական մարդկային սինի ու ցինի վրա, մարդկային զգացմունք (զանցին), որը գործողության է վերածվում, երբ շփում է իրերի հետ» և արտաքին արտահայտություն է ստանում: (Այս հիմնախնդիրն ավելի մանրանասն կը ներկայական ստորև):

3. Ի՞նչ է նշանակում ռուխտական «թյանը»: Այն ունի բազմաթիվ հարակից իմաստներ, բայց մեծ ռուխտամերի համար (ինչպիսիք են Մենցին և Սունցին) այն փոքր-ինչ այլ նշանակություն ուներ: Այդուհանդերձ, իմ կարծիքով խելանիտ կլիներ Չինաստանի վաղ շրջանի թյանը (հատկապես ռուխտամերի համար) մեկնաբանել որպես կառավարող ուժ և սկզբունք, որն անցնում է բնության և անթիվ-անհամար երևույթների (այդ թվում և մարդկանց) սահմանները: Այսպիսով, թյանը ունի սրբության, գերագույն իշխանության և բարոյականության հարանշանակությունները: Այսպիսով, թյան մինը այն անհրաժեշտ տեսությունն է, որը բացարում է անթիվ-անհամար երևույթները կառավարող ուժը: Բայց այս թեմայի քննարկումը կներկայացնենք մեկ ուրիշ անգամ:

#### 4.2 Ցինի վրա շեշտի պատճառը Ցինին նախորդող ռուխտական շրջանում

Յին Չինաստանում հասարակությունը նահապետական էր, նրա առանցքն ընտանիքն էր, և ընտանեկան ցինը (ցին ցին 亲情) ընտանեկան կապերի պահպանման հիմքն էր: Լայն իմաստով այն նաև ողջ հասարակության մեջ կապերը պահպանելու հիմքն էր: Քանի որ նախացին շրջանի ռուխտմն առաջացել է այս ցինամետ հասարակական խորապատկերից, «դառն սկսվում է ցինում» արտահայտությունը կարելի է համարել նախացին շրջանի ռուխտական մտքի հիմնարար խնդիր, հատկապես բարոյական մտքի առանցքային հիմնախնդիրների առումով:

Կոնֆուցիոնի «Առակներում և զրույցներում» չկան արձանագրություններ, որոնք երբեւ ուղղակիորեն քննարկել են ցինի թեման, բայց նրա վարքագծից

38. «Ցանը» 欲 «քանն» է 藏 :

Երևում է, որ նա մեծ կարևորություն էր տալիս ցինին: Օրինակ.

Յան Յուանը մահացել էր, և Կոնֆուցիոսը վշտի մեջ էր (11:10):

Երբ Կոնֆուցիոն Ցիում էր, նա լսում էր Շառ Երաժշտություն և Երեք ամիս չեր զգացել մսի համը: Նա ասում էր. «Երեք չէի սպասում, որ Երաժշտությունը կարող է այսպիսին լինել» (7:14):

Չնայած նա Երեք ուղղակիորեն չէր քննարկել ցինը, Ցինին նախորդող շրջանում ցինի վրա շեշտը հիմնված է Կոնֆուցիոսի մտքի վրա: Օրինակ, «Ֆան Չին ուսումնասիրում էր Ժենը: Կոնֆուցիոսն ասում էր. «Սիրիր (այ *愛*) այլոց»<sup>39</sup> (12:22): Ինչո՞ւ՝ Կոնֆուցիոսը սերն ընդունում է՝ որպես Ժենի հիմնական հարանշանակություն:

«Զույնյունը» մեջերում է Կոնֆուցիոսին, որն ասել է. «Ժենը կապված է ուրիշ-ների հետ, իսկ ընտանիքի հետ մտերմությունը (ցին ցին 亲亲) բարձրագույն արժեքն է»<sup>40</sup>: Պատահական չէ, որ Ժենը համարվում է հիմնարար գործոն, քանի որ սկսվում է ընտանիքը սիրելուց և տարածվում է ընտանիքի սահմաններից դուրս<sup>41</sup>: Սա նշանակում է, որ ընտանիքի հետ մտերմությունը ամենահիմնական զգացմունքն է, և միայն ընտանիքի հանդեպ սիրո դեպում հնարավոր է «սերը տարածել ուրիշների վրա» կամ կարողանալ «հարգել տարեցներին այնպես, ինչպես վայել է տարեցներին, և այդ հարգանքը տարածել բոլոր տարեցների վրա... հարգել սեփական երեխաներին այնպես, ինչպես վայել է երեխաներին, և այս հարգանքը տարածել բոլոր երեխաների հանդեպ»: «Սեփական անձից ուրիշների վրա տարածելու» ունակությունը հեշտ չէ և պահանջում է, որ մարդու անցնի բարեխսդության և կարեկցանքի ծանապարհով՝ որպես չափանիշ, «դիմացինի հետ վարչի այնպես, ինչպես ցանկանում է, որ իր հետ վարվեն», և «ընդունի ուրիշներին, երբ ցանկանում է ընդունել ինքն իրեն, և ուրիշներին օգնի հասնել այն նպատակին, որին ինքն է ուզում հասնել»<sup>42</sup>: Կոնֆուցիոսի համար իդեալական էր ընտանեկան ցինի վրա հիմնված սիրո և հոգածության ոգին տարածել հասարակու-

39. «Գոյյան Յու ցուն համար Յ»-ում կա «Սերը Ժեն է» նախադասությունը:

40. Մենցիոն ասում է. «Մտերմությունն ընտանիքի անդամների հետ (ցին ցին ) Ժեն» «Գաղցի սյա»: Գույուն, «Չինյուն» ասում է. «Սիրել ընտանիքը նշանակում է գործածել Ժենը»:

41. Յան Ֆեյ ցի, «Ու դու». «Ինչ վերաբերում է սինին և ցինին, ապա ծնողներն արածին տեղում են: Բայց չնայած երկուսն էլ կարող են իրենց սերը ցույց տալ երեխաների նկատմամբ, նրանք գուցե լավ չուկավարեն երեխաներին»: Սկսածք, որ ըստ այս հասկածի՝ Յան Ֆեյցին հավաստում էր, որ ծնողների հանդեպ սերը միշտ չէ, որ նպաստում է պնտության լավ կառավարմանը, բայց նաև որ մարդկային զգացմունքը նախ արտահայտվում է՝ որպես ծնողների հանդեպ տածած սեր: Այստեղ մենք հասկանում ենք, որ լեզավիստները նաև հավաստում էին, որ ծնողների հանդեպ զգացմունքը բոլոր զգացմունքների հիմքն է:

42. «Տարեգիրը 4:5»-ը ասում է. «Կոնֆուցիոսն ասաց. «Չենը՝ իմ ծանապարհը, ունի մեկ շարունակական թել»: Չենցին ասաց՝ անշուշտ: Կոնֆուցիոսը հեռացավ: Մյուս աշակերտները հարցրին, թե ինչ նկատի ուներ Կոնֆուցիոսը: Չենցին ասաց. «Կարպետի ծանապարհը ոչ ավելին է, քան բարեխտնությունն ու կարեկցանքը»: Ձու Մին մեկնարանում է. «Զամք ու եռամդ շխնայելը կոչվում է բարեխտնություն, լավագույնին ծգտելը՝ կարեկցանք»: Այս դեպքում տեսնում ենք, որ Կոնֆուցիոսը վերցրել է «բարեխտնության և կարեկցանքի դառն»: որի հիմքը, ըստ նրա, ընտանեկան ցինն էր՝ որպես մարդկային վարքագի մի ոլորտ:

թյան մեջ՝ ողջ հասարակությանը ստիպելով դեմքով շրջվել դեպի ժենը. «Սեփական անձը վերահսկելը և ծիսական վարքութարքը վերականգնելը ժենն է: Եթե դա կարող ես անել մեկ օր, ապա քո ներսում ողջ աշխարհը դեմքով կշրջվի դեպի ժենը: Ժենը բխում է մարդու ներսից. ինչպես կարող է բխել ուրիշներից»:

«Ինքն իրեն վերահսկելը և ծիսական վարքութարքը վերականգնելը» միշտ մեկնաբանվում է այնպես, ասես դրանք զուգահեռ անցկացվող երկու գաղափարներ են: Չեմ կարծում, թե սա լավագույն մեկնաբանությունն է: Յավանաբար նկատի է առնվում, որ միայն «ծիսական վարքութարքի վերականգնումը», որը հիմնված է «ինքն իրեն վերահսկելու» վրա, կարող է կոչվել ժեն: Ժենը բխում է մարդու ներքին բնավորությունից, մինչդեռ ծիսական վարքութարքը նարդու վարքագիծը կարգավորող վարվելակերպի կանոնների արտաքին համակարգ է. նրա նպատակն է՝ կարգավորել մարդկանց հարաբերությունները և դարձնել ավելի ներդաշնակ. «Ներդաշնակության հասնելը ծիսական վարքութարքի դիտարկման ամենաարժեքավոր գործառույթն է»: Որպեսզի մարդիկ կարողանան պահպանել վարվելակերպի կանոնների համակարգը, այն պետք է բխի նրանց զգայունությունից: Միայն այս որակն է զուգակցվում ժենի հետ: Հենց այս պատճառով է Կոնֆուցիոն ասում էր. «Ժենը բխում է մարդու ներսից, ինչպես կարող է բխել ուրիշներից»: Ժենի և ծիսական վարքութարքի հարաբերության Կոնֆուցիոնի բնութագիրը երկիմաստ չէ. «Մարդը, որը ժեն չէ, հ՞նչ կապ ունի ծիսական վարքութարքի ուսումնասիրության հետ: Մարդը, որը ժեն չէ, հ՞նչ կապ ունի երաժշտության հետ»: (3:3): Միրո վրա հիմնված ժենի այս տեսությունն ամխուսափելիորեն ազդեցություն էր թողել Սենցիոնի վրա, որն ասում էր. «Ժենը մտերմության զգացումն է սեփական ընտանիքի հանդեպ» (6Բ:3, 7Ա:15):

Սենցիոնի երկերում չենք կարող գտնել ցինը ուղղակիորեն քննարկող որևէ հատված: Սակայն Մենցիոն առաջադրում է «չորս շիվերի», հատկապես «կարեկից սրտի (միտք)» (ցեկին ջի սին 憬隱之心) գաղափարը, չնայած միայն մարդկային սինի «բողբոջումը» միանշանակ ունի մարդկային ցինի բովանդակություն: Անդրադառնալով այն հարցին, թե ինչու մարդիկ ունեն կարեկից սիրտ (միտք), Սենցիոն ասում է. «Ցանկացած ոք, որը տեսնում է, որ երեխան ուր որ է կընկնի ջրհորը, կանհանգստանա, որովհետև կարեկից սիրտ (միտք) ունի: Պատճառն այն չէ, որ նա ցանկանում է հաճյանալ երեխայի ծնողներին, կամ որովհետև ուզում է բարձր հեղինակություն ծեռք բերել ընկերների կամ գյուղի բնակիչների շրջանում, կամ որովհետև նրան դուր չի գալիս երեխայի ծայնը» (2Ա:6): Տեսնելով մի երեխայի, որն ուր որ է կընկնի ջրհորը, մարդն ինքնաբերաբար օգնության է հասնում: Սա պայմանավորված է կարեկից սրտով (մտքով), որը եսասիրական շարժառիթներից գերծ ներքին զգացողություն է:

Կոնֆուցիական մտածողության այս երկակի զարգացումը կարող ենք նկատել Գոյյանի նյութերում: Օդինակ, «Յու ցուն համար 3»-ում (ինչպես նշվել էր վերը), կամ «Սերը ժեն է» և «Սերը բխում է սինից» հասկացությունները, իսկ «Թամ Յու ջի դառն» ասում է. «Որդիական բարեպաշտության արտահայտությունը սերն է աշխարհի մարդկանց հանդեպ»: Ծնողների հանդեպ ուժգին սերն աշխարհի բոլոր մարդկանց հանդեպ սիրո հիմքն է: «Ու սինն» ասում է. «Խոր մտերմության զգացումը սեր է: Յոր հանդեպ սերը ուրիշների վրա խոհենաբար տարածելը ժենն է»: Սերն արտահայտում է ընտանեկան ցինը. ծնողներին սիրելը, իսկ հետո սերն ուրիշների վրա տարածելը կոչվում է լիարժեք ժեն:

Բայց ինչու՞ մարդիկ օժտված են սիրո գգացմունքով: Միայն որովհետև «ցինը բխում է սինից»: Ինչպես նշեցինք վերևում, «Յու ցուն համար 2»-ն ասում է. «Ցինը բխում է սինից. ծիսական վարքութարքը՝ ցինից», իսկ «Յու ցուն համար 1»-ն ասում է, «Ծիսական վարքութարքը ստեղծվում է՝ ի պատասխան մարդկային ցինի»: Մարդկային զգացմունքը ծագում է մարդու ներքին սինից: Բոլոր նրանց, որ սեր են տածում այլոց հանդեպ, հատուկ է այն կապերի պահպանումը, որոնք միավորում են մարդկանց՝ ծիսական վարքութարքի և իի միջոցով: Ծիսական վարքութարքը «մարդկային դառյի» հմաստներից է: Յամաձայն վերը նշվածի՝ կարող ենք ասել, որ Ցինին նախորդող շրջանի ուրիզմի բարոյական տեսությունը կառուցված էր Կոնֆուցիոսի ժենի գաղափարի վրա, որն ընտանեկան ցինի ընդլայնումն է: «Դառն սկսվում է ցինում» արտահայտությունն, ուրեմն, պետք է լինի ժենի կոնֆուցիական տեսության նշանակալի մաս և Կոնֆուցիոսի սիրո գաղափարի մեկնաբանության կարևոր գործոն:

### 4.3 «Ցինը բխում է Սինից» պնդման մասին 情生于性

Ցին շրջանին նախորդած դասական երկերում բազմաթիվ են հատվածները, որոնք քննարկում են սինի և ցինի հարաբերությունը: Դրանցից է, օրինակ, «Սունցին», որի «Ձեն մին» գլխում ասվում է. «Սինի զգացմունքները (հառ, ու, սի, նու, այ, լե) կոչվում են ցին»: Բայց սինի և ցինի հարանշանակությունները Ցինին նախորդող շրջանի դասական երկերում խիստ տարբերակված են: «Սին ցի մին չուն» երկու փորձ է անում. (1) «զգացմունքային (ու, նու, այ, թեյ) ցին գոյություն ունի սինի շնորհիվ<sup>43</sup>», և (2) «քննչությունն ու հակակրանքը պայմանավորված են սինով»: Բամբուկի վրա գրված «Յու ցուն համար 2» տեքստում նշված է, որ գրեթե բոլոր մարդկային զգացմունքները և ցանկությունները «բխում են սինից» օրինակ, «ցանկությունը բխում է սինից», «հակակրանքը բխում է սինից», «բերկրանքը բխում է սինից» և այլն: Այս բոլոր հատվածները բացատրում են, որ մարդկային սինը կարող է արտահայտել զգացմունքների բոլոր ծները, և որ ցինն անբաժան է սինից, առանց ցինի ոչինչ չի կարող լինել:

Նմանատիպ իրավիճակի կարելի է հանդիպել «Սունցիի» մի հատվածում, որտեղ, օրինակ, խոսվում է թե՝ սինի, թե՝ քննչության ու հակակրանքի մասին. «Մեր օրերում, երբ ի հայտ է եկել շահույթի գաղափարը, գործի է անցել մարդկային սինը»: Ես հավատացած եմ, որ սա կապված է Ցին շրջանին նախորդած դասական երկերում «ցին սինի» կամ «սին ցինի» կիրառման հետ: Մենք հանդիպում ենք հետևյալ օրինակին.

Ցին շրջանի արքաները, իհմնվելով ցին սինի վրա,(Լի ձի, «Յուե ձի»)...

Այս բոլորը՝ գույներ տեսնող աչքերը, հնյուններ լսող ականջները, համ զգացող քիմքը, մնտքի անհատական շահը և մարմնի հարմարավետությունն ու բերելությունը, ծնվել են մարդկային ցին սինից: (Սունցի, «Սին ե»)

Սին ցինով տարվելը խանգարում է ուսումնասիրությանը: (Սունցի, «Ժու

43. Այստեղ «ցին» թերևս վերաբերում է արյանը և ցիին, ինչպես «Յու ցուն համար մեկում». «Ցանկացած բան, որն օժտված է արյամբ և ցինով, օժտված է նաև բերկրանքով և զայրույթով, գգուշությամբ և քաջությամբ»:

սյառ»)

Այստեղ հիշատակված ցին սինը կամ սին ցինը, վերաբերում է կամ հենց սինին կամ սինի գործառութին, բայց նաև կարող ենք ասել, որ Սունցին արդեն հասկանում էր, որ որոշակի տարրերակում կա ցինի և սինի միջև։ Օրինակ, «Թյան լուն» գլխում հանդիպում ենք հետևյալ հատվածին։ «Այն զգացմունքները (հառ, ու, սի, նու, այ, լե), որոնք տեղակայված են [մարմի մեջ], կոչվում են բնական ցին»։ «Բնական ցինն» այստեղ իրականում վերաբերում է զգացմունքներին (ցինգան 情感), որոնք բնական սինի ներսում են (այսինքն՝ սինի զգացմունքների ցինն [հառ, ու, սի, նու, այ, լե])։ Զանազան զգացմունքները տեղակայված են մարդկային սինում։ սա մտածողության նույն կերպն է, ինչին հանդիպում ենք «Լի ծիում» («Յուե ծի»)։ «Մարդկային կյանքի պասիվությունը պայմանավորված է բնական սինով։ Երևույթներին արձագանքելու ակտիվությունը պայմանավորված է սինի ցանկություններով»։ «Սինի ցանկություններ» արտահայտության մեջ «ցանկությունները» վերաբերում է միմիայն ցինին<sup>44</sup>։

Մրանից ակնհայտ է դաշնում, որ «Սինը պասիվ է, ցինը՝ ակտիվ» նշանաբանը գուցե տարածված էր Ցին դինաստիայից առաջ ռուսաների շրջանում (կամ պետք է գոնե ասենք, որ դա կարևոր տեսակետ էր Ցին դինաստիային նախորդած ռուսաների շրջանում)։ Օրինակ, «Սին ցի մին չուն» ասում է. «Զգացմունքային (սի, յուե, նու, այ, լե) ցին պայմանավորված է սինով։ Երբ այն արտաքին դրսերում է ունենում, դա պայմանավորված է երևույթների հետ (ու ցու ջի 物取之) զգայական շփունով», և դարձալ, «Սինին գործողության մեջ են դնում իրերը (ու)։ Մարդկային սինի արտաքին արտահայտությունը, որն արթնանում է ներքին տիրություն՝ արտաքին իրերի դրդմանք, դրսերվում է զանազան զգացմունքների (և ցանկությունների) տեսքով»։ սա հետևյալ մտքի մեկ այլ արտահայտությունն է. «Այն, որ մարդիկ ծնվում են պասիվ, պայմանավորված է բնական սինով։ իրերին արձագանքելու ակտիվությունը պայմանավորված է սինի ցանկություններով» (Լի ցի, «Յուե ցի»)։ Թերևս սա լավագույնս արտահայտված է Հե Թիից<sup>45</sup> արված մեջբերման մեջ. «Լի ծի ցենգ ի»-ում. «Սինի և ցինի հարաբերությունը նման է ալիքի ու ջրի հարաբերությանը։ Երբ հանդարտ է, ջուր է, երբ ակտիվ է, ալիքներ են։ Նույն կերպ նաև՝ «Երբ հանդարտ է, սին է, երբ ակտիվ է՝ ցին»։ Սա նշանակում է, որ մարդկային սինը մեր ներքին որակն է, իսկ ցինը՝ սինի զգացմունքների բացահայտումը՝ կապված իրերին արձագանքելու ակտիվության հետ։ Այսպիսով, Զունյունն ասում է.

44. Պատասխանելով Ու կայսեր՝ Դուն Զունշուն ասում է. «Ցինը մարդկային ցանկություն է» (տես Հան չու, «Դուն Զունշուն ջուան»)։ Նաև Չեն Լին «Բայ Յու Թուն ջու ջենում» հիշատակում է, որ «Սինի ցանկությունները ցին են» (տես «Այու ցին յե ին վեյ յեն» 六情也何謂也 տողի նրա ծանոթագրությունը (ինչն է կոչվում վեց ցին) «Սին ցինում»)։

45. Կենսագրությունը տես «Լյան շուի» 48-րդ գլխում, «Հե Թի ջուան»։

46. Թարգմանչի ծանոթագրություն. 爰 ֆա եզրույթը հաճախ թարգմանվում է «բխելու» կամ «զարթոնքի» իմաստով։ Ընտրությունը հաճախ կատարվում է՝ կախված նրամից, թե կոնկրետ հատվածում կիրառումը ակտիվ է, պասիվ, անցողական թե անանցողական։ Մենք ընտրում ենք «ակտիվացնել» բառը, քանի որ անանցողականության իմաստով (պետք է ընդունել, որ այն սակավ է կիրառվում) այն նշանակում է «ակտիվ դառնալ» և ներառել մյուս երեք ծները։

Զգացմունքների (սի, նու, այ, լե) նախաակտիվացման վիճակը<sup>46</sup> (վեյ ֆա 未) կոչվում է չափավորություն, իսկ երբ դրանք կարգավորվում են ակտիվացմանը գուգահեռ (ի ֆա 已发), սա կոչվում է ներդաշնակություն: Չափավորությունը աշխարհի հիմքն է, իսկ ներդաշնակությունը՝ աշխարհի հաղորդակցության ճանապարհը: Չափավորության և ներդաշնակության հասնելը այն տեղն է, որտեղ հանգրվանում են երկինքն ու երկրը, և որտեղ անթիվ-անհամար երևույթներ են ծաղկում (գլուխ 1):

Երբ մարդկային սինը ընկալում է (գան 感) իրերը, դրա արդյունքում արթնացած զգացմունքները (ցինգան) պետք է համապատասխանեն տիեզերական կաղապարին (դաոլի 道理). տիեզերական կաղապարին համապատասխանելու օգտակար կլինի անթիվ-անհամար իրերի զարգացման համար: Կամ, ինչպես ասվում է «Լի ծի ծեն իում»՝ Զունյունի մասին մեկնաբանության մեջ, «կաղապարների (լի 理) զարգացմանը և ձևավորմանը գուգահեռ՝ դրանից սնվում են անթիվ-անհամար իրեր»: Նույն մեկնաբանության մեջ նաև «Ներդաշնակությունն աշխարհի հաղորդակցության ճանապարհն է» արտահայտությունը նշանակում է, որ չնայած ցինը ու ցանկությունն ակտիվանում են, եթե մարդուն հաջողվի հասնել ներդաշնակության, տիեզերական շունչը կիսով և կտարածվի ամենուր»: Կարծ ասած՝ ցինի զարթոնքն ու արտահայտությունը մշտապես պետք է համապատասխանի կաղապարին»<sup>47</sup>: Մենք կարող ենք ընդունել, որ սին գաղափարը պատկանում է նախաակտիվացման, իսկ ցինը՝ ակտիվացման տիրույթին, և ընդհանրացնել «սինը պասիվ է, ցինը՝ ակտիվ» տեսությամբ»: «Նախաակտիվացման» և «ակտիվացման» այս տեսությունը կարևոր հիմնախնդիր է, որ քննարկել են Սուն և Սին դինաստիաների ռուկատները, բայց քանի որ դուրս է այս եսեի շրջանակներից, այն կքննարկենք մեկ այլ անգամ:

#### 4.4 Ցինի և ցանկության տարբերակումը

Ցին ժամանակներից ի վեր մարդիկ խոսում են «յոթ ցիների և վեց ցանկությունների» մասին: «Լի ցի» գորի «Լի յուն» գլխում գրված է. «Ի՞նչ է մարդկային ցինը: Բերկանք, բարկություն, վիշտ, վախ, սեր, հակակրանք, ցանկություն: Այս յոթ ունակությունները բնածին են»: Այստեղ «ցանկությունը» կարող է լինել հաջորդ հատվածի «ցանկությունը». «Խմիչք, ուտելիք, տղամարդիկ և կանայք մեծագույն մարդկային ցանկություններն են», ինչը նշանակում է, որ «խմիչքը, ուտելիքը, տղամարդիկ և կանայք» մարդկային սինի բնական պահանջներն են: Այդ պատճառով էլ Գաուցին ասում էր. «Ուտելիքն ու սեռական ցանկությունները պայմանագրված են սինով»:

Իրականում Ցին դինաստիայից առաջ ցինի և սինի ռուկատական տեսություններն ընդգրկված են մտքի մի շարք դպրոցներում: Կան Զունը «Լուն հենի» երկի «Բեն սին» գլխում հիշատակում է, որ գոյություն է ունեցել այսպիսի հինգ մտքի դպրոց, և բոլորն էլ շարադրում էին Կոնֆուցիոսի մեջբերումը. «Սիները մոտ են

47. Այս հիմնախնդիրն ավելի մանրամասն կքննարկվի չորրորդ՝ «Ցինի և ցանկության տարբերակումը» հատվածում:

միմյանց» (սին սյան ծին 性相近) (17:2): Տարբեր դիրքորոշումները հետևյալն էին պնդում՝ (1) սինը ոչ «ոչ լավ է» (շան 善), ոչ «ոչ վատ», (2) սինը լավ է, (3) սինը վատ է (է 惡), (4) լավը և վատը միախառնված են (հուլ), և (5) լավը կամ վատը կախված է նրանից, թե արդյոք մարդը բարձր, միջին թե ցածր որակի է: «Բեն սին» գլխում Վան Չունը հետևյալ կերպ է խոսում «Վեց ցիների» մասին. «Վեց ցիներն են՝ քնքշությունը, հակակրանքը, բերկրանքը, բարկությունը, վիշտը և վայելքը»: Սակայն նա ցանկությունը չի դասում ցիների շարքը:

Վեց ցիների մասին հիշատակնանը հանդիպում ենք դեռևս 8ինին նախորդող դարաշրջանում, օրինակ.

Մարդիկ օժտված են քնքշությամբ և հակակրանքով, բերկրանքով և զայրույթով, վշտով և վայելքով, որոնք արտահայտվում են վեց ցիների միջոցով<sup>48</sup>: (Ցուուան, Շաոյի դուքս, տարի 25-րդ):

Հակակրանք, ցանկություն, բերկրանք, բարկություն, վիշտ և վայելք. այս վեցը դեի (德) խոչընդոտներն են<sup>49</sup>: (Ցուանցի, «Գենսանչու»):

Սունցին մի քանի անգամ հիշատակում է վեց ցիները (տես վերոնշյալ մեջբերումները)<sup>50</sup>:

Ինչ վերաբերում է վեց ցանկությունների քննարկմանը, հնագույնը թերևս «Լուշի չունցյու» երկի «Գու շեն» գլխում է. «Լիարժեք կարելի է կոչել այն կյանքը, որում հավուր պատշաճի կատարվում են վեց ցանկությունները», ուստիև Յան դինաստիայից Գաո Յուն նշում է. «Վեց ցանկությունները կապված են կյանքի, մահվան, ականջների, աչքերի, քիմքի և քթի հետ»: Այստեղ նշված բոլոր վեց ցանկությունները զգացական են և թերևս ցանկալի են, եթե հավուր պատշաճի են իրագործվում:

Ինչեւ, «Լուշի չունցյուի» «8ին և ցանկություն» գլուխն ասում է. «Յինգ հնչյունները, որ ցանկանում է ականջը, հինգ գույները, որ ցանկանում է աչքը, և հինգ համերը, որ ցանկանում է քիմքը, ցին են»: Սա թերևս հուշում է մեզ, որ 8ին դինաստիայից առաջ դասական երկերում ցինը և ցանկությունը դեռևս չեն տարբերակվում, կամ ցանկությունը դիտարկվում է՝ որպես ցինը արտահայտելու ձև: Սա գու-

48. «Լի ծի» գրքի «Լի յուն» գլխում «ինչպես են իմաստունները կառավարում յոթ ցիները» տողի ծամոթրագրության մեջ մեջբերվում են Ցուուանի՝ «Շառ դուքս, տարի 25-րդ» խոսքերը. «Բնությունն ունի վեց ցի, որոնք մարդկանց մեջ վերածվում են վեց ցինի և կոչվում են բերկրանք և բարկություն, վիշտ և վայելք, և քնքշություն և հակակրանք»:

49. «Ցանկությունը» նույնպես ներառված է այս վեցում, բայց պետք է ընկալվի՝ որպես «քնքշություն»:

50. Յան դինաստիայի «Բայ Յու Թուն ի» գրքի «Սին ցին» գլխում նույնպես հիշատակվում է «վեց ցինը»:

51. «Գուանյայում» «Ճի գու» գլխում «ցինը» ներկայացվում է՝ որպես «պասիվություն»:

52. Քանի որ Սունցիի «սինը վատ է» արտահայտությունը հիմնված է այն զաղափարի վրա, որ մարդիկ ունեն ցանկություններ (օրինակ՝ «Յիմա, իմ վերաբերում է մարդկային սինին... մարդն իր ծննդի պահից ի վեր ունենում է զգայական ցանկություններ և ձգտում կյանքի կոչել դրանք: Արդյունքում ծնվում են սանձարձակություններ, և ապա ծիսական վարդութարքը, ին և մշակույթը անհետանում են») [«Սին ե»]: Կարելի է ասել, որ այս տեսության մեջ ցինը նույնպես համարվում է վատ որակ:

ցե բացատրի, թե ինչու ենք հաճախ հանդիպում «ցինի ցանկություններ» (ցին յու 情欲) արտահայտությանը, ինչպես հետևյալ օրինակում.

Մինչ ցինի ցանկությունների ակտիվացումը, սա մարդկային սինի սկզբնաղբյուրն է: (Չի սարի ծին ջու շու, Լի ծի, «Չունյուն», «Չունը» աշխարհի արմատն է»)<sup>51</sup> ...այսպիսին են ցին ցանկությունները, որով օժտված են մարդիկ: (Սունցի, «Չեն լուն»)<sup>52</sup> [Նրանք] ցին ցանկությունների կրծատումը համարում են ներքին խնդիր: (Չուանցի, «Թյանսյա»):

Սակայն «ցինի ցանկությունների» այս երեք կիրառությունները զգալիորեն տարրերվում են միմյանցից: Չունյունին ուղարկված երկտողում, որ մեջբերված էր վերը, «ցինի ցանկությունները» վերաբերում են ցինին, և թե արդյոք ցինը կարելի է ներդաշնակեցնել՝ կախված է նրանից, թե արդյոք դրանք դիտարկվում են դրական կամ բացասական իմաստով: Սունցին պաշտպանում է այն տեսակետը, որ սինը վատ է, և հետևաբար համարում է, որ «ցինի ցանկությունները» վատ են, ինչպես «Չեն մին» գլխում, որտեղ ասվում է. «Ամկախ նրանից՝ նա ազնվական է, թե միապետ, եթե սնում է իր ցանկություններն ու ազատություն տալիս ցինին, ապա ոչնչով չի տարրերվում ավազակից: Չուանցին հավանություն չէր տալիս ցանկությանը, միևնույն ժամանակ հավանություն էր տալիս ինքնարությ ցինին հետևելուն, ինչպես հուշում է «աշխարհը բավարար է առանց ցանկության» պնդումը, ու հավատացած էր, որ արտասովոր մարդը (շեն ժեն 神人) «լիարժեք ապրում է իր ճակատագիրը՝ առաջնայնություն տալով ցինին»<sup>53</sup>: Այսպիսով, «հետևել» (շուայ 率) բառը «ցինի համար չկա ավելի լավ բան, քան հետևելը» պնդման մեջ վերաբերում է անկենջությամբ: Սա է պատճառը, որ սին ցինը հաճախ է հանդիպում «Չուանցիում» (օրինակ՝ «Եթե սինն ու ցինը միմյանցից անջատված չեն, ինչպես կարող է մարդը օգտագործել ծիսական վարքութարքն ու երաժշտությունը») [«Մա թի»]: Երբեմն սինի (կամ «ամկենջ սինի») իմաստը «Չուանցիում» կարող է նույնիսկ ներառել ցինը (կամ անկենջ ցինը): Օրինակ «Մա թի» գլխում նաև ասվում է. «Զիու ոտքերը կարող են անցնել սառնամանիքի ու ձյան միջով. նորթին պաշտպանում է ձմեռվա խոնավությունից: Զին խոտ է ծամում ու ջուր խնում, բարձրացնում սմբակներն ու կանգնում ետևի ոտքերի վրա: Սա ձիու իսկական սինն է: «Զիու իսկական սինը» ձիու իսկական ցինն է:

«Ցինի» և «յուի» հաջորդականությունը կոչում են «ցին», իսկ ցինի տեսանկյունից ցանկությունները համարվում են վատ: Ցին և Յան դինաստիաներից ի վեր չինական փիլիսոփայության մեջ տարածված է հետևյալ ասացվածքը՝ «սինը լավ է, ցինը՝ վատ»: Օրինակ, Դուն Չունչուն Յան դինաստիայից իր «Չունցյու ֆանլու» երկում քննարկում է լավն ու վատը ինի և յանի տեսանկյունից՝ «Յան ցուն ին բեյ». «Վատը պատկանում է միայն ինին, իսկ լավը՝ միայն յանին»: Այսպիսով, նա հավատացած էր, որ սինը ներառում է թե՝ լավ, թե՝ վատ գծեր, և որ դա կապվում է ժենի հետ<sup>54</sup>, մինչդեռ սինի վատ կողմը ցին է, իսկ ցինը ագահ է: Յանդիպում են

53. Չեն Սյուանինը նշում էր. «Մեմփական սինն ու ճակատագիրը լիարժեքորեն ապրելը, միաժամանակ ցինի ծևափոխություններին առաջնայնություն տալը հավասարագոր է աննախադեպ ազատության և երջանկության՝ բնությանը նվիրվելու միջոցով»:

54. Դուն Չունչուի «Սինի երեք աստիճանները» տարրերվում էր այս տեսությունից: Տես «Չունցյու ֆանլու» գրքի «Ծեն չա մին հառ» և «Ծի սին» գլուխները:

նաև հետևյալ պնդումները.

Բնության մեջ ընթանում են թե՝ ին, թե՝ յան գործնթացներ, և մարդուն հատուկ են ազահության սինը և ժենը... Մարդն ինչպէ՞ս կարող է չվերացնել ցանկությունը ու չճշշել ցինը՝ արձագանքելով բնությանը: (Սումցի, «Շեն չա ին հառ»)

Սինը մարդկանց յան ցին է (阳气), և այն լավ է: Ցինը մարդկանց ին ցին է (阴气) և ունի ցանկություններ: (Չուովեն, «Սին բու» 心部)

Ցինը զգացնունքների (սի, նու, այ, ու) կարգն է. ցինը որպես այդպիսին մարդկային ցանկություն է: (Դա դայ լի. «Ցիջան վեն ժու գուան», Երկտող «达诸民之情»-ի մասին [իասկանալ մարդկանց ցինը ])

Սինը ժեն է, ի, ծիսական վարդուբարք, իմաստություն և այլն. սինը որպես այդպիսին կյանքի նյութն է, (մեջբերումը՝ նույն աղբյուրից՝ Երկտող «բու քե բու ջի մին փի սին»-ի (不可本知民之性) մասին [պետք է նկատի ունենալ մարդկային սինը])

Ցինը բխում է ինից՝ ըստ վայրկենական ցանկությունների. սինը բխում է յանից՝ ըստ կաղապարների (լի 理): Յան ցին ժեն է, իսկ ին ցին՝ ազահություն, և այդ պատճառով էլ ցինը բնութագրվում է հիմնական շահով և ցանկությամբ, իսկ սինը՝ ժենով: (Բայ Յուն Թուն ի, «Սին ցին», մեջբերումը՝ Գուու Սին Զուեից):

Սինը ծագում է յանից, ցինը՝ ինից: (Լուն հեն, «Քին չու»):

«Սինը լավ է, ցինը՝ վատ» մտածողությունը շատ տարածված էր Յան դինաստիայում, բայց զգալիորեն տարբերվում էր Ցին շրջանին նախորդող ռուխատմերի «սինը պասիվ է, ցինը՝ ակտիվ» տեսությունից: «Ցինը ակտիվ է» նախադասությունը ոչ մի արժեք չի վերագրում ոչ ցինին, ոչ նրա գործունեությանը: Այն կարող է լինել լավ կամ վատ՝ կախված նրանից, թե արդյոք համապատասխանում է կաղապարին (կամ ծիսական վարդուբարքին): Յետևարար, այն չի վնասում այն տեսակետին, որ իմաստումն ունի ցին. Կոնֆուցիոն իմաստում էր և ուներ ցին: Սակայն, Վեյ-Զին ժամանակաշրջանում քննարկվում էր այն հարցը, թե արդյոք իմաստումն ունի ցին, թե չունի<sup>55</sup>. «Վան Բի ջուանում» Յե Շառն ասում է:

Յե Յանը հավատացած էր, որ իմաստունները չունեն զգացնունքներ (սի, նու, այ, լե ), և նա դա մանրակրկիտ քննարկման էր Ենթարկում: Նրա տեսակետին հարում էին Զուն Յուեյ և մյուսները: Վան Բին համաձայն չէր, որ ուրիշներին ճնշող իմաստուններն օժտված են յուրահատուկ սուր մտքով (շեն մին 神明), իսկ իմաստունները, որոնք ուրիշների հետ նույն աստիճանի վրա էին, ունեին իինգ ցին: Նրանք, որ օժտված էին խիստ յուրահատուկ սուր մտքով, կարող էին ծովզել ներդաշնակության հետ և թափանցել անելություն: Նրանց, որ իինգ ցինի նակարդակին էին, ուրիշ ոչինչ չէր մնում, քան իրերին արձագանքել զգացնունքներով (այ, լե): Սա նկատի ունենալով՝ իմաստունի ցինն արձագանքում է իրերին, բայց չի տարվում դրանցով: Նրանք, որ իինա չեն տարվում իրերով և չեն արձագանքում իրերին, անտեղի են խոսում: (Սան Գուու ջի, «Վեյ ջի», ջուան 28. մեջբերված է «Զուն հուեյ ջուանի» ծանոթագրության մեջ):

55. Յավանական է, որ իմաստունների տեսությունն այն մասին, որ նրանք ազատ են ցինից, ծագել է Langqihի հետևյալ մտքից՝ «Թյանի դառն չումի նախընտրություններ (ու ցին 无亲) (79)»:

Չե Յանը հավատացած էր, որ իմաստունները գործում են բացառապես բնական կարգուկանոնի (թյան դառ) համաձայն և չունեն ցին: Նրա կարծիքով՝ սովորական մարդիկ ունեն ցին, իսկ օգացմունքների առումով (սի, նու, այ, լե), նրանք, ինարավոր են, չենթարկվեն ընդհանուր կաղապարներին և կատարյալ ազատություն ձեռք բերեն: Սակայն Վան Բին հավատացած էր, որ իմաստունները մյուսներից չեն տարբերվում «հինգ ցին» ունենալու առումով: Իմաստունը մյուսներից տարբերվում է ոչ թե նրանով՝ ունի օգացմունքներ (ցինգան) թե ոչ, այլ այն փաստով, որ իմաստունները «լիովին տիրապետում են իրենց մտքին» և «ի բնե ինքնարավ են» (սա խիստ յուրահատուկ մտքի սրություն է): Այսպիսով՝

Կոնֆուցիոսը հասկանում էր՝ ինչ բարդ իրավիճակում է Յան Յուեյը, բայց նրան հանդիպելով՝ չկարողացավ զսպել ուրախությունը: Եվ երբ Յան Յուեյը մահացավ, Կոնֆուցիոսը չկարողացավ զսպել իր վիշտը: Յաճախ պատահում են նեղմիտ մարդիկ, որոնք կարծում են, թե Կոնֆուցիոսը չկարողացավ իր ցինը հարմարեցնել կաղապարին, բայց հիմա հասկանում ենք, որ եռթյան դեմ չես ապստամբի: (Վան Բի ջուան)

Բնական օգացմունքներից (գանցին) ոչ մեկը չի կարելի վերացնել: Սա նշանակում է, որ իմաստուններն ունեն ցին, բայց նրանք նաև կարող են «իրենց ցինը հարմարեցնել կաղապարին»: Ակնհայտ է, որ Յան դինաստիայի «սինը լավ է, ցինը՝ վատ» տեսակետուն ազդեցություն է բռնել Չե Յանի վրա, ի լրումն ցանկությունների բացակայության մասին Լաո-Չուանից ժառանգած դիրքորոշման (որը, սակայն, տարբերվում էր Զուանցիից, քանի որ այս նենաքրում ցինը չէր բաժանվում ցանկություններից): Վան Բին, մյուս կողմից, Ցինին նախորդող ռուկատական Զուանցիի «սինը պասիվ է, ցինը՝ ակտիվ» դիրքորոշումը նույնացնում էր այլ տեքստերի հետ: Ինչպես նշվեց Վերևում, Զուանցին նախապատվություն էր տալիս ոչ թե օգացմունքների, այլ ցանկությունների բացակայությանը, և հետևաբար, այլ տարբերակ չուներ, քան ցինը տարբերակել ցանկությունից:

Կարծում եմ՝ անհրաժեշտ է ինչ-որ կերպ տարբերակել ցինը և ցանկությունը: Ըստ Ցին շրջանին նախորդող ռուկատական տեսակետի՝ չնայած թե՛ ցինը, թե՛ ցանկությունը առաջանում են սինի՝ իրերի ընկալման (գան) գործունեության արդյունքում, իսկ հետո օգացմունքները (սի, նու, այ, լե) արտաքին դրսնորում են ստանում, «ցինը» չունի տիրապետության օգացողություն, մինչդեռ «ցանկությունը» ունի տիրապետության կամ ձեռքբերման օգացողությունը<sup>56</sup>: Չետևաբար կարող ենք ասել, որ օգացմունքը (ցինգան) և ցանկությունը (ցինյու) տարբեր են: Զգացմունքները սինի բնականորեն դրսնորված պահանջներն են, իսկ ցանկությունը միշտ բիսում է նրանից, ինչ հետապնդում են «եսասիրական շարժադիրները» (սի սին 私心). այստեղ խնդիրը ցանկությանը հասնելն է: Չնայած օգացմունքն ու ցանկությունը տարբեր են, սա չի նշանակում, որ ցանկությունը պետք է բացառել: Ցին շրջանին նախորդող դասական երկերում հստակ տարանջատում չկա ցինի (օգացմունք [ցինգան]) և ցանկության միջև: Բայց թե ցինը կամ ցանկու-

56. Չիմա մարդիկ հուսալքված են, միմչդեռ միապեսն իրեն թույլ է տալիս ցանկություններ ունենալ» (Ցուցուան, «Կոմս Յեմ, տարի 6-րդ»: Այս հատվածներում «ցանկությունները» ոչ այլ ինչ են, եթե ոչ ցինյու, որը տիրապետության կամ ձեռքբերման օգացողությունն է: Զու Սին ասում է. «Զգայական շփումը կոչվում է ցին ... [Այն, ինչ հետապնդում ես, կոչվում է ցանկություն» (Ցուցի յուլեհ, ջուան 5):

թյունը ինքն ինչ դիրքորոշում կունենան, կախված է նրանից, թե արդյոք նրանք համահունչ են ընդհանուր կաղապարներին (կամ ծիսական վարքութարքին): «Սինը լավ է, ցինը՝ վատ» Յան դինաստիայի ռուխստական դիրքորոշումն ահօելի ազդեցություն է ունեցել ուշ շրջանի բոլոր ռուխստների վրա, ինչպիսին է, օրինակ, Լի Առն Թան դինաստիայից, որն իր «Ֆու սին շու» գրքում ասում է. «Մարդու ինաստուն լինելը պայմանավորված է սինով. այն, որ սինն ընկնում է շփոթմունքի մեջ, պայմանավորված է ցինով»: Սուն դինաստիայում տարածված էին «կաղապար ցանկությունից տարբերելու» և «բնական կաղապարը պահպանելու, միաժամանակ մարդկային ցանկությունը ոչնչացնելու» գաղափարները: Բայց այս «մարդկային ցանկությունը» վերաբերում էր եսասիրական ցանկությանը և տարբերվում մարդկային ցինից (զգացմունք [ցինգան]):

Ցինը մի բան է, որ հոսում է սինից: Այս դեպքում ցինը ի սկզբանե լավը չէ, ապա ինչպես է ստացվում, որ վերջում այն բացասական բնույթ է ստանում: Դա կապված է իրերի հետ (ու 万物): Իրերի ազդեցության շնորհիվ ցինը, որ հոսում է մարդկային սինից, դառնում է «ոչ լավ»: Եթե չի հետևում կաղապարին (կամ վարքութարքին) կամ ծեռք չի բերում այն: Այսպիսի ձգտումը կամ ծեռքբերումը, որը չի համապատասխանում կաղապարին (կամ վարքութարքի կանոններին), դառնում է եսասիրական ցանկություն, որն այդ դեպքում վնասակար ազդեցություն է թողնում հասարակության վրա: Զու Սին ասում է. «Սինը խորհրդանշում է ջրի անշարժությունը, ապա նրան հաջորդում է ցինը, որ նման է ջրի շարժմանը. նույն կերպ և ցանկությունը ջրի նման հոսում է և վերածվում հեղեղի»<sup>57</sup>: Այսպիսով, ակնհայտ է, որ Զու Սին պաշտպանում է «սինը պասիվ է, ցինը՝ ակտիվ» տեսությունը, բայց պարզաբանում է ցինի և ցանկության տարբերակումը՝ այսպիսով վերադառնալով Զունյունի «ակտիվացման» և «նախաակտիվացման» գաղափարին: Եթե որպես իհմք ընդունենք «Սին ցի մին չուի» «դառն սկսվում է ցինում, իսկ ցինը բխում է սինից» և «սինը բխում է մինից, իսկ մինը՝ թյանից» սկզբունքները, կտեսնենք, որ Ցին դինաստիային նախորդող շրջանի ռուխստական «սինը պասիվ է, ցինը՝ ակտիվ» դիրքորոշումը, անկասկած, ավելի խոր տեսական արժեք ունի, քան «սինը լավ է, ցինը՝ վատ» սկզբունքը: Կարող ենք ասել, որ «դառն սկսվում է ցինում» արտահայտությունը բացահայտում է Ցին շրջանին նախորդող ռուխստական բարոյական տեսության իհմքը:

## ԳԼՈՒԽ 5

57. Մեջբերումը՝ նույն աղբյուրից:

## Մտորումներ 1990-ական թվականների չինական մշակույթում<sup>58</sup> Նոր կոնֆուցիականության մասին

Այս էսեում Նոր կոնֆուցիականության մասին իմ մեկնաբանությունները կվեճրունանան երկու խոշոր հիմնախնդրի վրա. Նոր կոնֆուցիականության վերելքը Չինաստանում 1990-ականներին և հարցեր, որոնց Նոր կոնֆուցիականությունն անդրադառնում է այս համատեքստում<sup>59</sup>: Նոր կոնֆուցիականության վերելքը ժամանակակից չինական աշխարհում գրավել է ողջ աշխարհի, և հատկապես Մայրցանաքային Չինաստանի գիտնականների ուշադրությունը: Շետևաբար կարևոր է ձև ու շունչ տալ այս զարգացնանք՝ սահմանելով նրա ակնառու առանձնահատկությունները: Իմ կարծիքով՝ 1994 թվականի հոկտեմբերին Պեկինում կոնֆուցիականության միջազգային ընկերակցության հիմնադրումը (ժուսյուտ Լյան-հեհուեյ, ICA) հիմստ նշանակալի պահ էր Նոր կոնֆուցիականության վերելքի համար: Մինչ այժմ ICA-ը մեծ ազդեցություն չի ունեցել իր անմիջական հասարակական միջավայի վրա, բայց հենց նրա գոյության փաստը, որը նկատի է առնվլում իմ քննարկելիք հիմնախնդրների համատեքստում, առաջարկում է, որ կոնֆուցիականությունը մի օր կարող է կարևոր գաղափարական դեր ունենալ որոշ ասիական երկրներում: Բայց ինչու՞ կոնֆուցիականությունը կարող է այսպիսի կարևորություն ունենալ այս երկրներում: Տեղին է հիշատակել հետևյալ կետերը. նախ, Պեկինում կոնֆուցիականության դաշնության հիմնումը նշանավորող անդրանիկ համաժողովին ներկա էին ներկայացուցիչներ Արևելյան և Չարավարևելյան Ասիայի տարածաշրջանի բոլոր երկրներից: Նախկինում կոնֆուցիականության թեմայով նմանատիպ համաժողովը կգրավեր հիմնականում Չինաստանի, ճապոնիայի և Չարավային Կորեայի ներկայացուցիչների ուշադրությունը: Չինաստան ասելով նկատի են առնում նաև Թայվանը և Չոնգ Քոնգը, որովհետև դրանք Մայրցանաքային Չինաստանի կարևոր հատվածերն են: Բայց 1994 թվականի այս համաժողովին, ի լրումն այս երկրների նմանակիցների, եկել էին նաև ակադեմիկոսներ Վիետնամից, Սինգապուրից և նույնիսկ Ֆիլիպիններից: Ասիական տարածաշրջանից ժամանած գիտնականների շնորհիվ համաժողովի մշակութային շրջանակները գգալիորեն ընդլայնվեցին, և այս համիգնումն իր ծավալներով միանշանակ գերազանցեց նախորդները: Երկրորդ, Զան Դայնյանը և ICA-ի գործունեությանը ակտիվորեն մասնակցող նյութ գիտնականները ժամանակակից աշխարհի խոշորագույն գիտնականներն են<sup>60</sup>: Միջոցառմանը ներկա էին նաև մի շարք երիտասարդ գիտնականներ: Զանաժողովն իրենց ներկայու-

58. «Բարձրածայնել մտահոգությունների մասին. ժամանակակից չինական վերլուծական հարցախույզ», 2001: 123-134:

59. [Թարգմանչի ծանոթագրություն] «Սին ժուսյուեն» թարգմանվել է «Նոր կոնֆուցիականություն» և ոչ թե «Ներկոնֆուցիականություն», որպեսզի ընդգծի այն հանգամանքը, որ եզրույթը վերաբերում է հատկապես Կոնֆուցիականության արդի, քանի ներկոնֆուցիականության զանազան պատմական ծևերի հետ շփորձուց: Հենց այս պատճառով այս գոքում քանանելերորդ դարի բոլոր վկայակոչումները թարգմանվում են «Նոր կոնֆուցիականություն»:

թյամբ պատվեցին այնպիսի ականավոր գիտնականներ, ինչպիսիք են Քենձի Շինաղան ճապոնիայից և Միացյալ Նահանգներում բնակվող մի շարք նշանավոր գիտնականներ՝ Թեդրո դե Բարին, Թու Ուեյմինը և Չեն Զունինը։ Ներկա էին նաև թայվանցի և ռուս գիտնականներ։ Ի հակադրություն դրա՝ սակավաթիվ էին եվրոպական երկրներից ժամանակած գերազանցապես ասիացի գիտնականները մեծամասնություն էին կազմում։ սա ժամանակակից Նոր կոնֆուցիականության ակնհայտ առանձնահատկություններից է։ Մյուս առանձնահատկությունը Չինաստանի կառավարության մեջ ուշադրությունն էր հանգամանքին, որ այս համաժողովին մասնակցող եվրոպացի գիտնականները փոքրաթիվ էին, իսկ տարրեր երկրներից ժամանակած գերազանցապես ասիացի գիտնականները մեծամասնություն էին կազմում։ սա ժամանակակից Նոր կոնֆուցիականության ակնհայտ առանձնահատկություններից է։ Մյուս առանձնահատկությունը Չինաստանի կառավարության մեջ ուշադրությունն էր հանգամանքը կարևոր նշանակություն ունի չինախոս աշխարհում Նոր կոնֆուցիականության վերելքը հասկանալու համար։ Չամաժողովում ելույթ ունեցան թե՛ փոխվարչապետ Լի Հանցինը և թե՛ Չինական ժողովորական քաղաքական խորհրդատվական համաժողովի նախագահ Լի Ժույինուանը։ Զեկույցների ավարտից հետո նախագահ Ջյան Չեմինը հանդիպեց մի շարք ականավոր գիտնականների, որոնք մասնակցում էին համաժողովին։ Նկատի առնելով այս փաստերը՝ ակնհայտ է, որ Չինաստանի կառավարությունը բարձր է գնահատում այս համաժողովը։ Այստեղ քննարկված թեմաները բազմազան էին, և բացի այլ ոլորտներից, ներառում էին կոնֆուցիականության պատմությունը, կոնֆուցիական ուսումնասիրությունների վերածնունդը, կոնֆուցիականության ազդեցությունը համաշխարհային մշակույթի վրա և կոնֆուցիականության և արդի արդյունաբերության հարաբերությունը<sup>61</sup>։ Չամաժողովի ընթացքում մի պահ ասացի ընկերոջ՝ Սուն Չանձյանին. «Ներկայում կոնֆուցիականությունը Չինաստանի մայրցամաքային հատվածում նման է բաժնետոմսերի վերավաճառքի։ Ամենաաննշան քայլի դեպքում անգամ կապիտալը կարող է կտրուկ ավելանալ»։

Կոնֆուցիոնի ծննդյան 2550-րդ տարեդարձին նվիրված մեկ շաբաթ տևողությամբ Չիշատակի համաժողովը, որը սկսվեց Պեկինում և ավարտվեց Ցուֆուուս 1999 թվականի հոկտեմբերի 12-ին, ապացուցում է, որ կոնֆուցիականության նշանակությունը մեծանում է ինչպես Մայրցամաքային Չինաստանի, այնպես էլ Արևելյան Ասիայի տարածաշրջանի հանրային մշակույթում։ ICA-ի, Չինաստանի կոնֆուցիոնի հիմնադրամի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի ֆինանսավորած համաժողովը միավորել էր ակադեմիկոսների, գործարար և քաղաքական ականավոր գործիչների։ Ըստ Քիմ Չերտուի, որը համաժողովում ներկայացնում էր ՅՈՒՆԵՍԿՕ-ն, «այսօր որդ աշխարհը դիտարկում է կոնֆուցիականությունը՝ որպես այնպիսի գաղա-

60. [Թարգմանչի ծանոթագրություն] Պեկինի համալսարանի փիլիսոփայության պրոֆեսոր Զան Դայնյանը չինական մշակութային և փիլիսոփայական հիմնախմբի միջազգային փորձագետ է։ Թաճը և Զանը Չինական մշակույթի ակադեմիայի՝ 1980-ականների առաջատար մինձյան (ոչ պաշտոնական) նախաձեռնության հիմնադիրներն են։ Տե՛ս այս գրքի Չեն Ֆուն-չին գլուխը։

61. [Թարգմանչի ծանոթագրություն] Չամաժողովի գեկույցները խմբագրվել են Կոնֆուցիականության միջազգային ընկերակցության կոմիտեի կողմից և հրատարակվել «Պեկին ժենմին չուբամշե» հրատարակչության կողմից 1995 թվականին։ «Կոնֆուցիականության միջազգային ուսումնասիրություններ (Գուլմի ժուայուն յանձյու)» խորագրով։

փարմերի և արժեքների ոգեշնչման աղյուր, որոնք անհրաժեշտ են նոր հազարամյակին անհամբեր սպասող մարդկության առաջ ծառացած խնդիրները լուծելու համար<sup>62</sup>:

Նոր կոմֆուցիականության վերելքը ժամանակակից Չինաստանի մայրցամաքային հատվածում նաև 1980-ականների «Մշակութային տենդի» մասին քննադատա-վերլուծական խորհրդածությունների արդյունքն է: 1990-ականների ավելի խաղաղ մքնոլորտում Մայրցամաքային Չինաստանի որոշ գիտնականներ սկսեցին Մշակութային տենդը որակել՝ որպես «արմատական, չափազանց հապճեպ, անպատճախանատու, արևմտացված» իրողություն: Մայիսի չորսի շարժման բարոյախոսությունը, որ հաճախ կիրառվում էր 1980-ականներին, նույնպես ենթարկվում էր քննադատական վերլուծության: Այժմ որոշ գիտնականներ 1980-ականների Մշակութային տենդը համարում են մի բան, որը ժառանգվել է այսպես կոչված Մայիսի չորսի շարժման արմատական ավանդությաց: Նրանք բացասական վերաբերմունք են որոքեզել այն գիտելիքի համեմաք, որը նույնացվում է Մայիսի չորսի շարժման հետ՝ այսպիսով ձեռնոց նետելով Մայիսի չորսի շարժման երբեմնի անվերապահ հեղինակությանը՝ որպես արդի չինական մտքի ելակետ:

Կարևոր է հիշել, որ չնայած մշակութային պահպանողականությունը ծաղկում է ապրում Մայրցամաքային Չինաստանում 1990-ականներից ի վեր, մշակութային պահպանողականության կենսունակության մասին գիտական հարցախույզը սկսվել է դեռևս 1980-ականներին: Պարզելու համար, թե որն է մշակութային պահպանողականության խնդրո առարկան, անհրաժեշտ է տարրերակում մտցնել նրանց միջև, որոնք որդեգրել են մշակութային պահպանողական դիրքորոշում, և նրանց, որոնք ուսումնասիրում են ավանդական չինական մշակույթը, բայց իրենց տեսակետներում մշակութային տեսանկյունից պահպանողական չեն: Սա ծայրահեռ բարդ խնդիր է: Որոշ նշանավոր գիտնականներ, ինչպիսիք են Լուլ Իծյունը և Չեն Լայը, բացահայտ ընդունում են, որ իրենք մշակութային տեսանկյունից պահպանողական են<sup>63</sup>: Սակայն մշակութային պահպանողականության դիրքորոշումը չի նշանակում ժամանակակից չինական քաղաքականության տիրություն ինքնարերաբար հարել նեռպահպանողականությանը: Հստակ տարրերություն կա մշակութային և քաղաքական պահպանողականության միջև: Բնական է, գոյություն ունեն նաև մարդիկ, որոնք ուղղակի կապ են տեսնում սեփական մշակութային պահպանողականության և քաղաքական նեռպահպանողականության միջև: Յարկ է նաև նշել, որ այս համատեքստում Զյան Ցինի պես գիտնականները, որոնք, թվում է, արմատական պահպանողականներ են իրենց մշակութային մոտեցման մեջ, մեծ կապ չեն տեսնում սեփական դիրքորոշման և 1990-ականների ժողովրդական Յանրապետության քաղաքական նեռպահպանողականության միջև: Բայց կան նաև մարդիկ, որոնք գրադարձ են մշակութային պահպանողականության հետազոտությամբ, բայց հետազոտության առարկայի նկատմամբ

62. [Թարգմանչի ծանոթագրություն]. Տես համաժողովի գեկույցը «Չինաստան» օրաթերթի 1999 թվականի հոկտեմբերի 20-ի համարում:

63. [Թարգմանչի ծանոթագրություն]. Տես նաև Լյու Ցինֆենի գրքի այն գլուխը, որտեղ նա Լուլ Իծյունին մշակութային է՝ որպես մեկը, «որն ակնհայտորեն երկրպագում էր Սոու Ցունսանին», և որը «խիստ բարկանում էր ամեն անգամ, երբ ասվում էր մի բան, որը չէր համապատասխանում Սու Ցունսանի տեսակետին»:

չեն որդեգրում պահպանողական մոտեցում:

Գուցե հարց ծագի՝ ինչու՝ է մեծացել մշակութային պահպանողականության իհմնախնդիրները հետազոտելու պահանջարկը: Իմ կարծիքով՝ իհմնական պատճառը վերջին մի քանի տասնամյակներում Մայրցամաքային Չինաստանում ի հայտ եկած նոր «ավանդական» հասկացությունների հանդեպ քննադատական մոտեցումների առաջացումն է<sup>64</sup>: Քանի որ այս նոր «ավանդական» հասկացությունները հանգեցրել են այն տեսակետին, որ արմատականությունը միակ արդյունավետ մոտեցումն է մշակութային զարգացմանը, մշակութային պահպանողականության ժամանակակից հետազոտությունը քննադատաբար է մոտենում այս տեսակետին: Իմ կարծիքով՝ այս արձագանքը բոլորովին զարմանալի չէ ներկա փուլում: Զարմանալի չէ նաև այն, որ ոնանք սկսել են իրենց կոչել մշակութային պահպանողականներ: Եկեք դիտարկենք Չեն Լայի օրինակը<sup>65</sup>: Նա հանգամանորեն անդրադարձել է անցյալի այնպիսի ծևակերպումների, ինչպիսիք են «Չինական (երիկական) գիտելիքը՝ որպես հիմք, արևմտյան գիտելիքը (և տեխնոլոգիան)՝ գործնական կիրառության համար» (Զուն սյուե վեյ թի Սի սյուե վեյ յուն). Դրա հակառակ կողմը՝ «արևմտյան գիտելիքը (և տեխնոլոգիան)՝ որպես հիմք, չինական (երիկական) գիտելիքը՝ գործնական կիրառության համար» (Սի սյուե վեյ թի Զուն սյուե վեյ յուն), կամ ուրիշ այլընտրանք՝ «Չինական և արևմտյան գիտելիքները՝ թե՛ որպես հիմք, թե՛ գործնական կիրառության համար» (Զուն Սի հու վեյ թի յուն): Չենը դիտարկում է, որ այնպիսի գաղափարներ, ինչպիսիք են «հիմքը» և «գործնական կիրառությունը», տեղին չեն, եթե կիրառվում են արևելյան և արևմտյան մշակույթների նկատմամբ: Փոխարենը նա առաջարկում է այլ ծևակերպում. «Մարդկությունը՝ որպես հիմք, և (չինական երիկական գիտելիքի և արևմտյան գիտելիքի ու տեխնոլոգիայի) համադրությունը՝ գործնական կիրառության համար (ժենի վեյ թի, ցունիե վեյ յուն): Չենը պնդում է, որ մեր դարաշրջանը սինթետիկ մշակույթի պահանջ ունի (ցունիե վենիուա դե ծինշեն): Այս ծևակերպման մեջ ակնհայտ է նրա մշակութային պահպանողականության դիրքորոշումը:

«Ակադեմիական ստանդարտացման» պահանջը մշակութային պահպանողականության մեկ այլ կողմն է ժամանակակից Մայրցամաքային Չինաստանում, և դա ունի երկու տարրեր աղբյուր: Առաջինը «Սյուեժեն» («Գիտնականներ», այժմ չի գործում) ամսագիրն է, որը հիմնադրվել է 1992 թվականին: Ամսագրի առաջին համարի «Սեկնարանություններ» բաժնում հստակ բարձրացվում էր ակադեմիական ստանդարտացման հարցը, բայց՝ բավական ավանդական ուրվագծերով: «Զունզո շեհուեյ թեսյուեծիքան» («Դասարակական գիտությունների ամսագիր»), որի խմբագիրը Ղեն Չենլայն է, նույնպես բարձրացնում էր ակադեմիական չափանիշների հարցը: Ընդհանուր առմամբ, այս ամսագիրը պաշտպանում է արևմտյան

64. [Թարգմանչի ծանոթագրություն]. Սա վերաբերում է Սառ Ցեղունի մտքի «ավանդությին» և կուսակցության ուղղափառությանը 1940-ականներից ի վեր:

65. [Թարգմանչի ծանոթագրություն]. Պրոֆեսոր Չեն Լայը Պեկինի համալսարանում դասավանդում է Չինական փիլիսոփայություն և Զու Սիի և Կան Յանմինի ներկոնքուցիականության մասնագետ է: Նա նաև հրապարակումներ ունի կոնֆուցիականության տարածված ընկալման և կոնֆուցիական վարվելակերպի կանոնների և չինական արդիականության հարաբերության մասին:

հասարակագիտական չափանիշների յուրացումը չինական ակադեմիական գործունեության մեջ: Ավելի ուշ ամսագիրը բարձրացնում էր ստանդարտացման հիմնախնդիրը՝ ընդդեմ արմատացման: Իմ կարծիքով՝ ստանդարտացման հարցը դրական ազդեցություն է ունեցել Չինաստանի գիտական մտքի առաջընթացի վրա: Միևնույն ժամանակ, չպետք է նոռանանք, որ միանշանակ կարիք կա քննարկել ստանդարտացման իրական նշանակությունը: Նկատի առնելով այն, որ ակադեմիական ստանդարտացման այս հարցը բարձրացնողները ներքուստ քննադատում են այն, ինչ որակվում է՝ որպես 1980-ականների սրբնթաց Մշակութային տեսնդ և մակերեսային ստանդարտացում, որոշակի խնդիրը այս տեսանկյունից դիտարկելիս առաջ են գալիս մի շարք խնդիրներ: Ստանդարտացման մասին նման դիտարկումը սահմանվում է գերազանցապես 1980-ականների Մշակութային տեսնդը ժխտելու իմաստով: Տարածված տեսակետ կա, որ 1980-ականների Մշակութային տեսնդն առաջ բերեց գաղափարներ, բայց գուրկ էր գիտականությունից, մինչդեռ ազգային ուսումնասիրությունների արդյունքում 1990-ականներին առաջ եկավ այսպես յոչված գիտականությունը, որը գուրկ էր գաղափարներից: Ակնհայտ է, որ այս տեսակ մեկնաբանություններն անհիմն են, բայց, այնուամենայնիվ, մեզ որոշ գաղափար են տալիս այն մասին, թե ինչ են մտածում մարդիկ:

1980-ականների Մշակութային տեսնդի վերլուծության և վերանայման մյուս արդյունքը ժամանակակից Մայրցամաքային Չինաստանի գիտնականների շրջանում Ցին դիմաստիայի ուշ շրջանի պատմական ուսումնասիրությունների հանդեպ բուռն հետաքրքրության զարթոնքն էր: Այս նոր միտումը կապված է բարեփոխումների (ի հակադրություն հեղափոխության) և տասնիններորդ դարի հնքնաամրապնդման շարժման դրական վերարժմումն է: Այսպիսով, 8եւ Գուռփանի «Երկերի ժողովածուի» երկու տարբեր հրատարակությունները լույս են տեսել Չինաստանի մայրցամաքային հատվածում նրա անձնական նամակագրության և նրա մասին մի շարք կենսագրական գործերի ժողովածուի հետ: Մենք տեսել ենք նաև Լի Հունչամի և Ցու Ցունթանի կենսագրությունների հրատարակությունը, ինչպես նաև ուշ Ցին շրջանի ազդեցիկ անհատների և իրադրությունների նմանատիպ այլ ուսումնասիրություններ: Ուշ Ցին շրջանի ուսումնասիրություններում հետաքրքրության այս ալիքը այն ինտելեկտուալ միտումներից մեկն է, ըստ որի հեղափոխությունը ստորակարգվում է բարեփոխումներին: Այն հիմնված է այն համոզմունքի վրա, որ Չինաստանը կրարգավաճեր, եթե շարունակեր գնալ բարեփոխումների (գայլյանջուի) և արևմտյան ոճով «հնքնաամրապնդման» ճանապարհով (Յանվու յունդուն):

Բնականաբար, այն էսսեները, որոնք նաև հայտնվեցին Լի Ցեհուի և Լյու Ցայֆուի «Յրաժեշտ հեղափոխությանը» («Գաորի գեմին») հակասական գրքում, Չինական մայրցամաքում երևան բերեցին երկու տեսակ արձագանք, որոնցից կարելի է առանձնացնել Սուն Չանջյանի և Ֆան Քելիի տեսակետները: Սուն Չանջյանը խիստ հակադրվում է «Յրաժեշտ հեղափոխությանը» գրքում Լի Ցեհուի առաջարած տեսակետին և մեղադրում է Լիին հասարակական պատասխանատվության և պատմական առաքելության որևէ զգացողության բացակայության մեջ, ինչն էլ հանգեցնում է նման դիրքորոշման: Ֆան Քելին, մյուս կողմից, վերլուծել է Լի Ցուի էսսեները՝ ասելով, որ նրանք ոչ միայն հրաժեշտ են տալիս», այլև առհասարակ հակադրվում են հեղափոխությանը: Այսպիսով, երբ Սուն

Չանձյան ասաց ինձ, որ ցանկանում է հրատարակել Լի Ցեհուի մասին իր քննադասությունը, ես նրան ասացի, որ Ֆան Ռելին արդեն հրապարակավ քննադատել է նրան, և որ լավ կլինի, որ նա փոքր-ինչ սպասի, այլապես Լի Ցեհուն բոլոր կողմերից կիայտնի պաշարման մեջ: Այդ պատճառով էլ նա հետաձգեց Լի Ցեհուի մասին իր քննադասության հրապարակումը<sup>66</sup>:

Նոր կոնֆուցիականության վերելքի մյուս կարևոր մշակութային և գաղափարախոսական համատեքստը Չինական մայլցամաքում մարդուզմի առաջ ծառացած մարտահրավերն է: Օրինակ, մի չինացի ղեկավար Պեկինի համալսարաններից մեկում ելույթի ժամանակ քարձրացրեց «ազգային ուսումնասիրությունների» (գոյայութե) հիմնախնդիրը: Երբ հանդիսատեսներից ոմանք հարցրին՝ արդյոք ազգային ուսումնասիրությունների անթաքույց վկայակոչումը չի դիտարկվի որպես կոնֆուցիականության և ավանդական չինական մշակույթի ակնառու գովազդ, նրանք կարծես խնդրեցին պարզաբանել՝ արդյոք անհրաժեշտություն կա մարդուստական շղարշով պատել ազգային հարցեղը: Բանախոսը պարզաբանեց, որ ազգային հարցերը կարելի է պաշտպանել առանց նման քաղաքական ենթատեսատի: Մեկ այլ դեպքում, երբ չինական կառավարության մի անդամ գրուցում էր մի օտարազգի քաղաքագետի հետ, վերջինս հարցրեց նրան՝ արդյոք Չինաստանը ուժեղանալու դեպքում կնվաճի այլ երկրներ: Չինացի առաջնորդը պատասխանեց, որ Չինաստանը երկրներ չի նվաճի, «որովհետև մենք ունենք կոնֆուցիականություն»: ICA-ի անդրանիկ հանդիպման ժամանակ մեկ այլ քաղաքական գործիչ՝ Լի Ուուեյհուանը, իր ելույթում առնվազն հինգ-վեց անգամ մեջբերեց Մենցիոնին և ամեն անգամ արժանացավ հանդիսատեսի բուռն ծափահարություններին:

Եթիկական և քարոյական կրթության ուղղված դասագրքի նյութերը հավաքագրելու և խմբագրելու աշխատանքը մեծ արագությամբ էր ընթանում 1990-ականներին, և զարմանալի չէ, որ այս նյութերի մեծ մասը հիմնված է կոնֆուցիականության վրա: Անհրաժեշտ է հիշատակել, որ այսպիսի աշխատանքն արժանանում է կառավարության լիարժեք աջակցությանը: 1993 թվականի օգոստոսի 16-ի համարում «Ժենմին ժիհաո»-ում («Ժողովրդական օրաթերթ») «Ազգային ուսումնասիրությունների լուր վերելքը Յին Պեկինի համալսարանում» («Գոյայուն ցայ յանյուան ցյանժան սինցի») խիստ կարևոր հոդվածի տպագրությունից ի վեր կոնֆուցիականությունն ավելի մեծ պաշտոնական աջակցություն է վայելում: 1993 թվականին «Ժողովրդական օրաթերթ» գովասանքի արժանացավ այս հոդվածը հրապարակելու համար, քանի որ, ըստ տվյալների՝ այն շրջանառվում էր կուսակցության բոլոր առաջնորդների շրջանում: 1999 թվականին, մասնավորապես Կոնֆուցիոնի ծննդյան 2550-րդ տարեդարձի Պեկինչան համաժողովի ժամանակ, կուսակցության առաջնորդները հրապարակավ ընդգծում էին կոնֆուցիականության ները ժամանակակից հասարակական խնդիրների լուծումները որոնելիս<sup>67</sup>:

66. [Թարգմանչի ծանոթագրություն]. Սուն Չանձյան ի վերջո հրապարակեց իր գրախոսությունը Չան Չյան անունով, «Չեհուեյ ջուանսին ցի դե իջուն վենհուա սյանսյան. Փին Գառ բյե գեմին» («Չետարրերական մշակութային երևոյթ հասարակական անցման ժամանակաշրջանում. «Դրաժեշտ հեղափոխության» գրքի գրախոսություն», Էրշի շիձի Քսանմեկերորդ դար), թիվ 33 (Փետրվար 1996), 68-71:

«Զեսյուէ յանձյու» («Փիլիսոփայական ուսումնասիրություններ») ամսագիրը 1994 թվականի հունիսի համարում հրապարակեց մի քանի հոդված, որոնք քննադատում էին ազգային ուսումնասիրությունների վերելքն ու իրենց անհանգստությունն էին արտահայտում առ այն, որ այն շեղվել էր հետմառյական Չինաստանի նոր սոցիալիստական մշակույթից: Հասարակական գիտությունների չինական ակադեմիայի (CASS) նախագահ Յու Շենը նույն տարում հոդված հրապարակեց պաշտոնական շրջանակներում լայնորեն ընթերցվող «Լյաովան» («Աշխարհայացք») ամսագրում՝ հավանություն տալիվ ազգային ուսումնասիրությունների մասին աշխատություններին: Ազգային ուսումնասիրությունների վրա այս համատեղ գրոհը հանգեցրեց նրան, որ «Կուն սյուէ յանձյու» («Կոնֆուցիական ուսումնասիրություններ») ամսագիրը 1995 թվականի սկզբին համաժողով կազմակերպեց, որի ընթացքում քննադատության ենթարկվեցին «Փիլիսոփայական ուսումնասիրությունները» և նաև ակադեմիական աշխատանքները: Սա աննախադեպ երևույթ էր, որովհետև Յու Շենը նրանցից էր, ում ոչ չէր համարձակվում բացահայտ քննադատել: Համաժողովի կազմակերպիչներն արեցին հաջորդ քայլը՝ համաժողովի սեղմագիրը հրապարակելով «Կոնֆուցիական ուսումնասիրություններ» ամսագրի 1995 թվականի առաջին համարում: Նույն տարում հրատարակված ամսագրի երրորդ համարում տպագրվեց Լյու Յունջանի՝ «Մտորումներ մարքսիզմի և կոնֆուցիականների կապի մասին» («Գուանյու Մաքսիզուի յու ժուլյա գրւանսի դե սիջաո») հոդվածը, որն ավելի էր հաստատում CASS-ի նախագահի այս քննադատությունը: Այս բազմազան օրինակներից ակնհայտ է դառնում, որ հասարակության մեջ և համալսարանական շրջանակներում ակտիվություն մարտահրավեր էին նետում մարքսիզմի գաղափարախոսական հեղինակությանը:

Նոր կոնֆուցիականության վերելքի մյուս կարևոր համատեքստը ժամանակակից Մայրցամաքային Չինաստանի կոմերցիոն ոլորտի կողմից տրամադրվող աջակցությունն է: 1990-ականներին որոշ գործարարներ ֆինանսական աջակցություն էին տրամադրում ավանդական չինական մշակույթի հետազոտությանը միտված բազմաթիվ համագումարների, հրապարակումների և նույնիսկ որոշ կրթարշակների ու դրամաշնորհների: Օրինակ, 1995 թվականին ես ներկա էի կոնֆուցիականությանը և արդի գործարարությանը նվիրված գիտաժողովի, որը կազմակերպվել էր Շենչենում հիմնված «Չառ Շուն Գրուփի» և «Արևելյան մշակույթների հետազոտության ընկերակցության» (Դունֆան վենհուա յանձյու հուեյ) համատեղ ջանքերով: Նույն տարվա հոկտեմբերին «Չինաստանի բուդդայական մշակույթն ու արդի հասարակությունը» խորագրով մեկ այլ գիտաժողով ֆինանսավորվեց ճեռնարկատեր Մեյ Ցիի կողմից<sup>67</sup>: Չինական կամ կոնֆուցիական ուսումնասիրությունների մասին և գործարարների կողմից ֆինանսավորվող մի

67. [Թարգմանչի ծանոթագրություն]. Տես նաև Վիլի Վո-Լափ Լամի կարծքնադական գրախոսությունը. «Բարձր տեխնոլոգիաներով՝ դեպի կոնֆուցիական ապագա», FreeRepublic.com, [www.freerepublic.com/forum/a38058d9d3d3c.htm](http://www.freerepublic.com/forum/a38058d9d3d3c.htm), հոկտեմբեր 14, 1999 թ.:

68. Մեյ Ցին կին ճեռնարկատեր է, ապրում է Պեկինում և Պեկինի Յունիվերսիտետում արվարձանում ունի սեփական ամշարժ գուլք, որը հիմնականում օգտագործվում է ֆինանսավորության և հեռուստատեսության համար:

շարք համաժողովներ կազմակերպվեցին Չինաստանի տարբեր քաղաքներում: «Չունգուռ վենիուա» («Չինական մշակույթ») ամսագիրը, որը տպագրվում է Լյու Սենսիի խմբագրմամբ, տարեկան 200,000 յուան նվիրատվություն է ստանում մեկ այլ ձեռնարկատեր Սյե Յունձյանից: Նույն կերպ նաև «Յուան դառ» («Սախնական ճանապարհ») ամսագիրը, որը խմբագրում են Պեկինի համալսարանի մի շարք երիտասարդ գիտնականներ, ֆինանսավորվում է Յայնանում հիմնված ձեռնարկության կողմից: Չափ Շուն Գրուփի գլխավոր գործադիր տնօրեն Ու Սյեգանը նաև կրթաթոշակներ է տրամադրել Պեկինի համալսարանում Բարոյական զարգացման միության (Սյուշեն Սյուլիուեյ) ստեղծման համար: Կան բազմաթիվ օրինակներ, որոնք ցույց են տալիս, որ կոնֆուցիականության և ավանդական չինական մշակույթի հետազոտությունները գգալի ֆինանսական աջակցություն են ստացել չինական գործարար սեկտորի կողմից: Բացի այս համեմատարար ակներև օրինակներից, մեծ թվով գործարարներ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում կոնֆուցիական ուսումնասիրությունների համեմատ, և նրանցից ոմանք, ինչպիսիք են Վերը նշված «Չափ Շուն Գրուփ» ընկերությունը, նույնիսկ կոչ են անում կոնֆուցիական արժեքներն ընդունել՝ որպես իրենց ընկերության փիլիսոփայություն, և ներկայացնում են մասնավորապես «Ներդաշնակությունը գերազանց արժեք է» (հետո վեյ գույ) նշանաբանը: Որպեսզի ազգային ուսումնասիրությունների միտումը և 1990-ականներին Չինաստանի մայրցամաքային հատվածում ի հայտ եկած այսպես կոչված մշակութային պահպանողականությունը հեռանկար ունենա, անհրաժեշտ է մտորել այն մասին, թե գործարար հատվածն ինչ կարևոր դեր է խաղացել այս միտումը խթանելու գործում:

Իմ տեսակետը ազգային ուսումնասիրությունների այս նոր միտումի մասին հետևյալն է՝ այն թերևս կարող է ունենալ առնվազն երեք կարևոր և մշակութային առումով բարդ արդյունք: Այն կարող է ծառայել կառավարության շահերին և դառնալ արևմտականացմանը հակադրվելու հիմք: Յայրենասիրության տեսանկյունից այն կարող է հռչակվել՝ որպես վերադարձ ազգայնականությանը չինական մշակութային էության փառարանման միջոցով: Սա ոչ միայն հավանական սցենար է, այլև ինչ-որ չափով դարձ իրականություն, որովհետև նման զգացողության մի շարք օրինակներ հրապարակավ և նույնիսկ բռնի ուժով արտահայտվել են Վերջին մի քանի տարիներին: Մարդկանց մեծամասնությունը գիտի, որ հայրենասիրության և ազգային հպարտության վրա շեշտը ժամանակակից Մայրցամաքային Չինաստանի ազգային գաղափարախոսության շրջանակներում սերտորեն կապված է «քուրժուական ազատականության հակադրության» հետ և զարգացել է դրամից: Դեռևս 1993 թվականին ես մտահոգություն հայտնեցի ազգային ուսումնասիրությունների հնարավոր բացասական հասարակական ազդեցության մասին, որն օգտագործվելու է գաղափարախոսական և քաղաքական նպատակների համար: Այսօր նման ազդեցություններն ակնհայտ են Չինաստանի մայրցամաքային հատվածի հասարակության վրա: Այս իմաստով, նարքսիզմի՝ որպես Չինաստանի ժողովրդական Յանրապետության գաղափարական հիմքի քայլքայումը, որի մասին խոսեցի Վերևում, մանրամասն վերլուծություն է պահանջում: Ավելի դրական լույսի ներքո դիտարկելիս հնարավոր է, որ վերադարձը դեպի մշակութային պահպանողականություն հանգեցնի ավանդական չինական ուսումնասիրությունների լուրջ հետազոտության: Մի քանի տասնամյակ՝ Մշակութային հեղափոխությանը նախորդող ժամանակահատվածում և դրա ընթացքում,

գերիշխում էր բացասական վերաբերմունքն ավանդական չինական մշակույթի հանդեպ: 1984 թվականին Շանհայում ժողովրդական մամուլի կազմակերպած համաժողովին ներկայացված վիճակագրությունից պարզ դարձավ, որ զգալի հակասություն կա չինական մշակույթի մասին հրապարակումների թվի մեջ երկու ժամանակահատվածներում, որոնցից յուրաքանչյուրը կազմում է երեսուն տարի՝ 1919-1949թթ. և 1949-1979 թթ.<sup>69</sup>: 1919-1949 թվականներին եղել է ավելի քան 200 ամուսն հրապարակում, որոնք անդրադառնում էին մասնավորապես չինական մշակույթին: 1949-1979 թվականներին հրապարակումներն անդրադառնում էին մասնավորապես չինական մշակույթին և չին ներառում փիլիսոփայության մասին դասագրքերը: Գիտաժողովի ընթացքում որոշում կայացվեց, որ այս անջրպետը պետք է լրացվի չինական մշակույթի պատմության մասին մատենաշարի հրատարակումով, որը պետք է կազմված լիներ 100 գրքից: 1949-1979 թվականներին ավանդական չինական մշակույթի ուսումնասիրության լճացման համեմատաբար երկար շրջանը և թերևս դրամ հաջորդող մի քանի տարիներն ակնհայտորեն ազդել են մշակույթի զարգացման վրա:

Այսպիսով՝ հարց է ծագում՝ արդյոք ազգային ուսումնասիրությունների ժամանակակից միտումը կիանգեցնի ավանդական չինական մշակույթի շուրջ զգալի հետազոտական աշխատանքի, և արդյոք այդ միտումը վճշորոշ ազդեցություն կունենա՝ անկախ նրանից՝ այս ազդեցությունը ընկալվում է դրական, թե բացասական տեսանկյունից: Օրինակ, մի շարք գիտնականներ սկսել են մանրամասն հետազոտել ավանդական չինական մշակույթի որոշ կողմեր: Բոլորին հայտնի է, որ վերջին տարիներին «Փոփոխությունների գիրքը» («Ի Չին») ահրելի հետաքրքրություն է առաջացրել Մայրացանաբային Չինաստանում: Սակայն սակավարիվ են այն մարդիկ, որոնց հսկապես շատ բան է հայտնի «Փոփոխությունների գրքի» մասին: «Փոփոխությունների գիրքը» ստեղծվել է կրիայի վահանով և ծոլտներով (բու շի) գուշակությունների պրակտիկայից: Գուշակությունների պրակտիկան հանգեցրեց գծագրերի և գծագրերում գծերի դիրքերի (սյան շու) ուսումնասիրության, որը հետագայում դարձավ «Փոփոխությունների գրքի» բաղադրիչ մասը: Մեր օրերում շատ մարդիկ, որոնք օգտվում են «Փոփոխությունների գրքից», գրում են նրա մասին կամ կարդում են այն, ծանոթ են միայն այս դասական երկի սկզբունքներին: Նրանք անտեսյակ են գուշակության հիմագույն պրակտիկայից, գծագրերի ուսումնասիրությունից և գծերի դիրքերից, որոնք նախորդում էին այս սկզբունքներին: Ուստիև, նրանք ի վիճակի չեն որևէ ստույգ մեկնաբանություն անել «Փոփոխությունների գրքի» մասին: Այս տեքստում հնչանակ հարկն է հետազոտելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել նրա առաջացման և տարածման յուրահատուկ համատեքստը: Փոքր-ինչ այլ է Մավանդույի մետաքսից մագաղաթների օրինակը, որոնք արդեն գրեթե ամբողջությամբ վերարտադրվել են տպագիր տարբերակով: Անցյալում Մավանդույի մետաքսե մագաղաթները հիմնված էին գերազանցապես գոյություն ունեցող մեկնաբանությունների վրա: Այժմ, երբ Մավանդույի բնագիր տեքստերը հրապարակվել են և հասանելի են լայն հասարա-

69. Այս գիտաժողովն առնչվում էր «Չինական մշակույթի պատմություն» մատենաշարի խմբագրման ընթացքում ի հայտ եկած հիմնախմերին:

կությանը, Մավանդույի՝ միայն երկրորդական աղբյուրների վրա հիմնված հետազոտությունն այլևս վավեր չէ: Սա մի վճռական քայլ է դեպի ավանդական չինական մշակույթի լուրջ հետազոտություն:

Ավանդական չինական մշակույթի նշանակալի հետազոտություն ասելով նկատի ունեմ թե՝ չինական մշակույթի յուրահատկությունների, թե՝ ամբողջությամբ ավանդական չինական մշակույթի ուսումնասիրությունը, քանի որ որոշ գիտնականներ արդեն իսկ ձևակերպել են այն հարցը, թե ինչպես պետք է նոտենալ ավանդական չինական մշակույթին՝ որպես ամբողջություն: Այս գիտնականների թվում է վաղամեթիկ պրոֆեսոր Ֆեն Ցին, որը «հիմաստության փնտրություն» (Զիհուեյ դե բանսուու) և «Երեք էսե իմաստության մասին» (Զիհուեյ սան լուն) գրքերի հետինակն է<sup>70</sup>: Պրոֆեսոր Ֆենը մարքսիստ էր, որը երիտասարդ տարիքում՝ ճապոնիայի դեմ Դիմադրության պատերազմի ընթացքում, Արևմտյան Չինաստանի միության համալսարանում ուսումնասիրություններ էր կատարել երկու ականավոր արդի փիլիսոփաների՝ Չին Յուելինի և Ֆեն Յուլանի դեկավարությամբ: Այսպիսով, նա տրամաբանական վերլուծության երկու լուրջ ուսումնասիրություն էր անցկացրել: Կյանքի վերջին տարիներին նա իր առաջ դրել էր տրամաբանական վերլուծության արևմտյան մեթոդը ավանդական չինական մշակույթում կիրառելու խնդիրը՝ չինական մշակույթի մասին նոր ընթօնում ձևավորելու համար: Ցավոք, այս խիստ կարևոր նախագիծը հնարավոր չեղավ ավարտին հասցել, որովհետև Ֆենը մահացավ 1995 թվականին: 1994 թվականին, երբ լրացավ նրա ութառնամյակը, ես նամակ գրեցի նրան՝ հիշատակելով, որ կարդացել եմ նրա դոկտորական ատենախոսությունը «հիմաստության» մասին, երբ սովորում էի Արևմտյան Չինաստանի միության համալսարանում: Ես նրան հարցորդ՝ արդյոք մտադրություն ունի անփոփել և զարգացնել այն ուղին, որն ուրվագծել էր իր դոկտորական ատենախոսության մեջ, և որի հիմնադիրը նրա նախկին ուսուցիչ Չին Յուելինն էր: Այն ժամանակ ես հնարավորություն չեմ ունեցել կարդալ նրա «Երեք էսե իմաստության մասին» գիրքը, որ հրատարակվելու էր հետո: Այն կարդալուց հետո բացահայտեցի, որ նա հենց այդպես էլ արել է: Այս օրինակով նպատակ ունեմ լուսաբանել նոտեցնան կարևորությունը, որ գիտնականը որդեգրում է չինական մշակույթի ուսումնասիրության մեջ: Ավանդական չինական մշակույթի լուրջ և նշանակալի ուսումնասիրություններ անելու համար անհրաժեշտ է տեղյակ լինել այն համաշխարհային համատեքստին, որում մենք այժմ վարում մեր հետազոտությունը: Այլ կերպ ասած՝ մենք ավանդական չինական մշակույթի մեր հետազոտությունը պետք է տեղակայենք մեր ժամանակներին հասուկ համաշխարհային մշակութամետ ընդհանուր միտումի տիրույթում: Եթե մեզ վիճակված լիներ հեռանալ այս միտումից, հանգանանքները չափազանց վտանգավոր կլինեին, որովհետև ազգային ուսումնասիրությունները կարելի է հեշտությամբ

70. [Թարգմանչի ծանոթագրություն]. 1986 թվականին, երբ Շանհայի Արևելյան Չինաստանի համալսարանում հիմնադրվեց Փիլիսոփայության ֆակուլտետ, Ֆեն Ցին (1915-1995) դարձավ փիլիսոփայության պրոֆեսոր: «Ֆեն Ցին երկերի լիակատար ժողովածուն», որ բաղկացած է տասը հատորից, հրատարակվեց 1996 թվականին «Յուադուն շիֆանդասյուէ չուբանշե» հրատարակչությունում:

օգտագործել և ծառայեցնել մշակութային շովինիզմի և ազգայնականության շահերին, ինչը կիանգեցնի գիտական հետազոտության քաղաքականացմանը:

Մենք պետք է նկատի ունենանք նաև հարաբերությունների բնույթը մի քանի հազար տարվա պատմություն ունեցող հին չինական ավանդույթի և Վերջին մի քանի տասնամյակի «նոր ավանդույթի» միջև։ Ակնհայտ է, որ այս հարաբերությունների բնույթը խիստ բարդ է։ Սա կարելի է տեսնել Չին Գուանթաոյի աշխատանքում։ Այս առումով անհրաժեշտ է նկատի ունենալ նաև նարբախտական դոգմատիզմի ծայրահեղ ծախականությունը, որ այս դարի մի քանի տասնամյակների ընթացքում գերակշռում էր Չինաստանում։ Արդյո՞ք մեծ է տարբերությունը դոգմատիզմի և կոնֆուցիականության այս տեսակի սկզբունքների միջև։ Ին կարծիքով՝ նրանց միջև զգալի տարբերություն կա։ Այս տարբերությունը կարելի է ուսումնասիրել մի շարք կենտրոնական հիմնախմնդիրների միջոցով։ Առաջինը պայքարն է (դոուչեն) ընդեմ ներդաշնակության (հեսյե)։ Այս հիմնախմնդիրն անդրադառնալու առաջին փորձերը նախաձեռնել են գիտնականներ Չեն Ֆոնչինը և Լյու Շու-հյենը 1985 թվականին Յոնգ Քոնգում անցկացված գիտաժողովին, որին ներկա էի նաև ես։ Այն ժամանակ խնդիրը ծևակերպվում էր կոնֆուցիականության և նարբախմի այս տեսակի (որի ուղղորդող սկզբունքը դասակարգային պայքարն էր) տարբերության տեսանկյունից։ Ուստի խոսք չէր գնում այն մասին, որ այս երկուսի տարբերությունը հսկայական էր։ Ֆեն Յուլանը այս հիմնախմնդիրը քննարկել էր նաև իր «Չինական փիլիսոփայության նոր պատմություն» (Զունգուու ցեսյուե շի սին հյան) յոթհատորյակում։ Նրա ժողովածուի յոթերորդ հատորն անդրադառնում է այս հիմնախմնդիրին, և հենց այս պատճառով չէր կարող հրատարակվել Չինաստանի մայրցամաքային հատվածում։ Ի վերջո այն հրատարակվեց Թայվանում<sup>71</sup>։ Ֆենն անդրադարձ է կատարում կոնֆուցիականության և նարբախմի միջև ահրելի անդունդին Մատ Չեդրունի մտքի ծևակերպմանը՝ պնդելով, որ վերջինս պայքարի փիլիսոփայություն էր՝ հիմնված այն գաղափարի վրա, որ «թշնամությունը մինչև վերջ պիտի թշնամություն մնա» (չոու բի չոու դառոի)։ Սա նշանակում է, որ պայքարը պետք է շարունակվի այնքան, մինչև թշնամին պարտվի։ Սակայն կոնֆուցիականությունն ամբողջությամբ տարբերվում է սրանից, քանի որ այն առաջարկում է, որ «թշնամությունը պետք է ներդաշնակվի և այդպիսով հօդս ցնի» (չոու բի հե էր ձյե)։ Չնայած «թշնամությունը ծագում է հակադրություններից» (յու դույ սի յու չոու), պայքարի վերջուն միհանշանակ առաջանում է նաև հաշտեցման անհրաժեշտությունը։ Այս գաղափարն առաջին անգամ ի հայտ եկավ Զան Ցայի (1020-1077) «ճիշտ կարգապահություն սկսնակների համար» (Չեն Սեն) գրքում, իսկ հետագայում զարգացավ Վան Ֆուչի (1619-1693) իր «Մեկնարանություններ «ճիշտ կարգապահություն սկսնակների համար» գրքի մասին» (Չեն Սեն ջու) աշխատության մեջ։

Մարքսիզմի և կոնֆուցիականության նշանակալի տարբերությունն այն է, որ մարքսիզմը հիմնականում գիտականության մի ծև է։ Այն մտածողության կերպ է,

71. [Թարգմանչի ժամութքություն]։ Տե՛ս Ֆեն Յուլան, «Զունգուու ցեսյուե շի սին թյան», 7 հատոր (Թայվեյ, Թայվան։ Լան Դեն վենհուա շիյե գուֆեն գունսի, 1991)։ Մայրցամաքային Չինաստանում հրատարակվել է նույն գրքի ընդամենը վեց հատոր։

որ խարսխված է գիտության սկզբունքների վրա, մինչդեռ կոնֆուցիականությունը մտածողության մարդասիրական ծև է: Կոնֆուցիականությունը չի գնում գիտության արահետով, և ոչ էլ համաձայնում է գիտության սկզբունքների հետ: Որպես մտածողության կերպ՝ կոնֆուցիականությունը հիմնված չէ ակներև փաստերի կամ վկայությունների վրա (լունջեն): Ավելին, այն հիմնված է ինտուիցիայի (ներըմբռնում) վրա (ջիջուե): Կոնֆուցիականության և մարքսիզմի երրորդ տարբերությունը կարելի է սահմանել Լյան Շումինի և Մատ Ցեղունի միջև բանավեճի տեսանկյունից: Լյան Շումինը հակադրվում էր դասակարգային պայքարի և հասարակական գոյության դասակարգային բնույթի մարքսիստական հասկացություններին: Նա, փոխարենը, հարում էր համընդհանուր մարդկության գաղափարին: Այս թե ինչ էր պատմում ինձ Լյան Շումինը 1938 կամ 1939 թվականին: Երբ նա կարդաց Մատ Ցեղունի «Զգձգված պատերազմ» (Լուն չիձյու ջան) գիրքը, խիստ տպավորված էր և գգում էր, որ այն, ինչ Մատն գրել էր «ձգձգված պատերազմի» մասին, շատ հաճողիչ է: Այսպիսով, Լյանը մեկնեց Յանան՝ Մատի հետ հանդիպման: Երբ առաջին օրը հանդիպեց Մատին, հանդիպումը հրաշալի անցավ, որովհետև քննարկումը նվիրված էր հիմնականում ձգձգված պատերազմի մասին Մատի գրքին: Սակայն երկրորդ օրը, երբ քննարկումն անցավ դասակարգային պայքարին, նրանք մինչև գիշեր վիճեցին: Բանավեճը ծավալվել էր այն հարցերի շուրջ, թե արդյոք գոյություն ունի համընդհանուր մարդկություն, և կոնկրետ ինչ էր նկատի առնվիւմ «դասակարգային պայքար» ասելով: Այն, որ կոնֆուցիականության և մարքսիզմի տարբերությունը նշանակալի է, կարելի է հասկանալ այս երկու հարցերի անհամապատասխանությունից:

Այսպիսով, թեև վերջին մի քանի տասնամյակների նոր ավանդույթը և մի քանի հազար տարվա պատմություն ունեցող հին ավանդույթը կապված են միմյանց հետ, պետք է նկատել, որ նոր «ավանդույթը», որ հրապարակավ պաշտպանվում է վերջին մի քանի տասնամյակներում, բովանդակությամբ զգալիորեն տարբերվում է հին ավանդույթից: Այստեղից կարևոր հարց է ծագում. արդյո՞ք կոնֆուցիականությունը կարելի է այնքան ուղղորդել դեպի արմատականություն, որ այն վերածվի ծախս ծայրահեղականության մի տեսակի: Այս հարցն արժանի է հետագա քննարկման, որովհետև եթե ապացուցվի, որ կոնֆուցիականությունը կարող է դառնալ ծայրահեղ և ուղղորդել դեպի ծախս ծայրահեղականության կամ գաղափարախոսական արմատականություն, ապա մինչ այժմ ին առաջադրած փաստարկը դառնում է խնդրահարույց: Այս համատեքստում, կարծում են, անհրաժշտ է տարբերակել ինքնին կոնֆուցիականության տիրույթում գոյություն ունեցող տարբեր միտումները: Պետք է տարբերակել, թե կոնֆուցիականության որ կողմերն են համատեղելի վերջին մի քանի տասնամյակների նոր «ավանդույթի» հետ և որոնք համատեղելի չեն:

Այս տարբերությունը նկարագրելու համար կարելի է օգնության կանչել երկու անհատի: Առաջինը Թու Ուեյմինն է, հատկապես նրա ավելի նոր գաղափարները: 1994 թվականի նոյեմբերին Յանչուում տեղի ունեցած մի համագումարի ժամանակ, որին երկուսս էլ ներկա էինք, Թու Ուեյմինն, ի զարման ինձ, քննադատաբար էր խոսում ավանդական չինական մշակույթի որոշ հիմնարար առանձնահատկությունների մասին, ինչպիսիք են լրացրցից հարաբերությունը «երեք կապերի» (սան զան) և «հինգ հաստատում առաքինությունների (ու չան) միջև<sup>72</sup>: Նա

դիտարկում էր, որ «Երեք կապերն» այլևս անընդունելի են, կոչ էր անում հրաժարվել դրանցից և առաջարկում էր, որ «Երեք կապերն» առանձնացվեն «հինգ հաստատուն առաքինություններից»: Սա լրիվ անակնկալ էր ինձ համար, որովհետև նախկինում նա նմանատիպ տարբերակում չէր մտցել: Երբ նա բարձրացրեց այս հիմնախնդիրը, նույն համաժողովում մեկ այլ գիտնական՝ Վան Յուանհուան, համակարծ պատասխանեց՝ ասելով. «Ի՞նչ էք առաջարկում, ինչպէ՞ս տարբերակենք դրանք: Անհնար է առանձնացնել այս երկուսը, քանի որ դրանք իրենց պատմական զարգացման մեջ կապված են միմյանց»: Բնականաբար, թու Ուեյմինը շարունակեց պաշտպանել իր փաստարկը, բայց քանի որ նրա բացատրությունը կապ չունի իմ առաջադրած խնդրի համար, ես չեմ զարգացնի այդ թեման:

Թուի և Վանի միջև մտքերի այս փոխանակումը ցույց է տալիս, որ հսկայական տարբերություն կա կոնֆուցիականության մասին նրանց տեսակետների միջև: Պարզ է նաև, որ թու Ուեյմինը փոխել է կոնֆուցիականության մասին իր նախկին դիրքորոշումը: Երբ ավելի ուշ անդրադարձա այն հարցին, թե ինչպիսին է այս որոշիչ տարբերությունը, հասկացա, որ թու Ուեյմինը ստիպված է եղել որդեգրել Նոր կոնֆուցիականությունը՝ ժամանակակից համաշխարհային մշակույթի տրամասության պահանջների համար, հատկապես արդի արևմտյան մշակույթի համատեքստում, որտեղ «Երեք կապերը» գուցե անմիջապես չընդունվեն»<sup>72</sup>: Եթե նա այդպես չվարվեր, նրա կողմից նոր կոնֆուցիականության պաշտպանությունը գուցե հանդիպեր լուրջ դիմադրության: Ուստիև, ես այն կարծիքի եմ, որ թու Ուեյմինի կողմից «Երեք կապերի» և «հինգ հաստատուն առաքինությունների» միջև տարբերությունն ըստ էլության որոշակի հարմար դիրքից նոր կոնֆուցիականությունը պաշտպանելու գործնական հետևանքն է, և ոչ թե փիլիսոփայական առեղծվածք բացայացնելու փորձ: Վան Յուանհուան, մյուս կողմից, իր փաստարկը կառուցում է պատմական փաստի վրա: Քանի որ «Երեք կապերը» և «հինգ հաստատուն առաքինությունները» պատմության մեջ զարգացել են համատեղ, հնարավոր չէ հեշտությամբ տարբերակել կամ առանձին վերաբերմունք ունենալ նրանց համեմեա՝ առանց աղճատելու նրանց գաղափարական և պատմական կարևորությունը: Բայց ուշագրավ է, որ Վան Յուանհուան նույնպես զգալիորեն փոխել է իր տեսակետը: Մարդկանց մեծամասնությունը տեղյակ է, որ Չունիսի չորսից առաջ Վանը «Նոր լուսավորականության» (Սին Ցինեն) պաշտպաններից էր: Ավելին, Մշակութային հեղափոխությանը նախորդած տարիներին նա հայտնի

72. [Թարգմանչի ծանոթագրություն]. Երեք կապերը վերաբերում են Կոնֆուցիոսի թվարկած երեք արքինատիկ հարաբերություններին՝ կառավարչի և ենթակայի, հոր և որդու և ամուսնու և կնոջ: Ընդհանուր առմամք, Երեք կապերը համարվում են հասարակական կյանքում պատշաճ կամ վարքագծային կարգուկանոնի տարբեր կերպերի տարբերակման հիմք՝ կախված հասարակական դիրքից: Դիմզ հաստատուն առաքինությունները տիեզերական կարգի բնածին հատկություններն են, որոնք դրսևորվում են սիրո (ժեն), արդարանության (ի), պատշաճության (լի), հմաստության (զի) և բարեպաշտության (սին) միջոցով: «Սան զան ու չան» տարածված արտահայտությունը ցույց է տալիս, թե այս հասկացությունների փոխվախվածությունը որքան ամուր հիմքեր ունի չինարենում:

73. [Թարգմանչի ծանոթագրություն]. Սա վերաբերում է նրան, որ թու Ուեյմինը շեշտը դնում է կոնֆուցիականության դերի վրա ժամանակակից արևմտյան (կամ նույնիսկ ավելի շատ Չյուսիսային Ամերիկայի) մշակութային հարստացման մեջ, ինչպես նաև կարևորում Հարվարդ-Յենչին ինստիտուտի տնօրին թուի հեղինակությունը:

Էր՝ որպես մեկը, ով բարձր էր գնահատում Մայիսի չորսի շարժումը: Բայց 1990-ականներին նա սկսեց հետաքրքրվել Դու Յայուանով և ավելին, Դուի մասին գրեց խիստ դրական իմաստով: 1993 թվականին նույնիսկ Ձեզյանում համաժողով անցկացվեց, որը նվիրված էր Դու Յայուանին<sup>74</sup>: Թու Ուեյմինի և Կան Յուան-հուայի տեսակետների փոփոխությունը մեզ թույլ է տալիս բարձրացնել նոր հարց՝ արդյոք նախորդ դարաշրջանի հակաավանդական և ավանդական դիրքորոշումները կարող են չգուգամիտել, գուգակցվել կամ հակառակ միմյանց ժամանակակից համատեքստում: Այս հարցն իր հերթին մեզնից պահանջում է վերանայել ժամանակակից չինական գիտության կարիքները:

Պետք է հիշել նաև, որ կառավարությունը հետաքրքրված է ավանդական կոնֆուցիականության պաշտպանությամբ՝ որպես չինական հասարակությամ էթիկական և մշակութային առանցք: Գիտական կամ քննադատական հետազոտությունները ներկայում կատարվում են հանուն արդի կոնֆուցիականության: Ինչպես արդեն նշել եմ, կոնֆուցիականությանը վերադառնալու հիմնական պատճառներից մեկը կապված է մարքսիզմ՝ որպես պետական գաղափարախոսության մերժման հետ: Անշուշտ, կարելի է ասել, որ Մշակութային հեղափոխության ավարտից ի վեր Մայրացանաքային Չինաստանի մեծ մասը կորցրել է հավատը մարքսիզմի հանդեպ: Մինչդեռ կառավարությունը ուժին և դիմամիկ գաղափարախոսության կարիք ունի, որը կծառայի նրա գերագույն նպատակին, կիրականացնի իր ժամանակակից խնդիրը՝ ստեղծելով միավորված Չինաստան, որը կներառի ոչ միայն Չոնգ Քոնգն ու Մակաուն, այլև Թայվանը: Այս իմաստով ավանդական կոնֆուցիականությունը Մայրցանաքային Չինաստանի կառավարությանը տրամադրում է ամբողջությամբ ծանրակշիռ պատմական հիմք՝ Չինաստանի և Թայվանի մշակութային միասնությանը հասնելու համար: Այս պատճառով մենք պետք են ուշադրություն դարձնենք Մայրցանաքային Չինաստանի այս գաղափարական փոփոխության հանդեպ հանրային արձագանքին: Այս համատեքստում պետք է մեծ զգուշությամբ վերաբերվել այն պնդմանը, որ կոնֆուցիականությունը հիմք է տնտեսական հաջողության «ասիհական կերպի» համար, որի մասին շատ է խոսվում Չինական մայրցանաքի գործարար շրջանակներում, ինչպես նաև այլ ասիհական երկրների կառավարությունների և գործարար շրջանակների բարձրացրած նմանատիպ այլ պնդումներին:

## ԳԼՈՒԽ 6

74. [Թարգմանչի ծանրագրություն]: Դու Յայուանը (1873-1933) իմբուլս գրող և քարգմանչ է, Մայիսի չորսի շարժման խոչըն և կարևոր մտավորական: Նա հիմնադրել և խմբագրում էր առաջին «Դունֆան ցացի» (Արևելյան ամսագիր) ամսագիրը և կազմել է Չինաստանի առաջին արդի գիտական բառարաններից մի քանիսը: Ըստ Սու Զիլինի՝ Կան Յու-անհուան սկսեց հետաքրքրվել Դու Յայուանով այն ժամանակ, երբ Սուն Կամին առաջարկեց գրել Դու Յայուանի հատընտիր էսեների ժողովածուի նախարանը, որը շուտով իրատարակվելու էր: Վամբ հասկացավ, որ Դու Յայուանի գաղափարները չափազանց գրավիչ են, և ի վերջո ծավալուն նախարան գրեց նրա ժողովածուի համար: Սու Զիլինը Դու Յայուանին նկարագրում է՝ որպես «մշակութային պահպանողական և միաժամանակ կոնֆուցիական ազատական» և ըստ նրա՝ հենց սա է պատճառը, որ Վերջին ժամանակներս նրա ամունը հազվադեպ է երևում Չինաստանի մայրցանաքային հատվածի արդի շինական ինտելեկտուալ պատմության ուսումնասիրություններում: Տե՛ս Սու Զիլինի հետաքրքիր մանրապատումներն ու քննադատական նկարագրությունը՝ «Դու Յայուան յու դրույուան դե Ու Սի ցիմեն» «Սին յուսի դյանցի վենքու» ամսագրում: [www.xys.org/xsys-ebooks/literature/essays/Duyaquan.txt](http://www.xys.org/xsys-ebooks/literature/essays/Duyaquan.txt), 5 հունվար, 2000 թ.:

## Ներդաշնակ համայնքների խնդիրը Չին Չինաստանում<sup>75</sup>

«ճշմարտության, բարության և գեղեցկության խնդիրը չինական փիլիսոփայության մեջ» իմ էսեում ես առաջարկել եմ, որ ճշմարտության, բարության և գեղեցկության գաղափարները հենվում են երեք հիմնավորումների վրա՝ Երկնքի և մարդու միասնությունը, գիտելիքի և գործողության միասնությունը, զգացման և պատկերի միասնությունը: Արանցից Երկնքի և մարդու միասնությունը ամենահիմնարարն է, և դրանից էլ բխում են մյուս երկու միասնությունները: Գիտելիքի և գործողության միասնությունը պահանջում է, որ մարդիկ գիտակցեն թե՝ «Երկնային ճանապարհը» և թե՝ «մարդկային ճանապարհը» և գործնականում կիրառեն դրանք առօրյա կյանքում, մինչդեռ զգացման և պատկերի միասնությունը պահանջում է, որ մարդիկ Երկնքի ուղին դրսւորեն իրենց նտքերում և զգացմունքներում:

Ինչու՞ էին իին չինացի փիլիսոփաները հետամուտ այս երեք միասնություններին: Իմ կարծիքով՝ չինական փիլիսոփայությունը չի զբաղվում արտաքին աշխարհի ուսումնասիրությամբ, այլ մտահոգված է ավելի շատ ներքին մարդկային արժեքների որոնումներով: Այլ կերպ ասած՝ պահանջական չինական փիլիսոփայությունը մարդկանց սովորեցնում է լինել մարդկային՝ սեփական անձի վրա պահանջներ դնելով, այն է՝ փայփայելով մարդկային կյանքի հղեալական ձկը: Իմաստությունը երեք միասնությունների ձգտումն է: Կոնֆուցիոնից սկսած՝ չինացի փիլիսոփաները մշտապես ձգտել են ներդաշնակ հասարակությունների ստեղծմանը և փորձել են կյանքի կոչել դրանք: Նույնիսկ երբ Վստահ չին, որ իրենց ջանքերը կասակվեն հաջողությամբ, նրանք, միևնույն է, կարծում էին, որ ջանքերը պարտադիր են: Ուստի, ասում են, որ Կոնֆուցիոնը «գիտեր [խնդրի] անհնարինության մասին, մինչդեռ շարունակում էր ձգտել դրան»: Իդեալական հասարակությունները, որոնց նրանք ձգտում էին, բնորոշվում են ներդաշնակությամբ: Դրա վառ օրինակն են «Մեծ ներդաշնակությամբ» բնորոշվող հասարակության կոնֆուցիական նկարագրությունը «Ծեսերի գրքի» «Լի Յուն» գլխում և «փոքր Երկիր՝ փոքր բնակչությամբ» արտահայտությունը «Ղան Ղե Չին» (Թառ Թե Չին) դասսական դասական Երկի 80-րդ գլխում: Նման համայնքները ցուցադրում են մարդու և Երկնքի համաձայնությունը, գիտելիքի և գործողության միասնությունը և զգացման և պատկերի միաձուլումը:

Բայց այս իդեալները կարող են և իրականություն չդառնալ իրական կյանքում: Արդյոք մենք պիտի ձգտենք ներդաշնակության իդեալին, թե ոչ, մոտեցման հարց է: Չին չինացի փիլիսոփաները հավատացած էին, որ իրենց իդեալների մի մասը գուցե իրականանան միայն իրենց նտքերում: Այդ դեպքում ինչու՞ Զայի «Արևանյան գրություններ» էսեն այդքան բարձր գնահատականի արժանացավ հետագա մտածողների կողմից: Կարծում եմ՝ պատճառն այն է, որ այն բացահայտում է իդեալական ներդաշնակ հասարակության ոգին: Էսեն սկսվում է «Մար-

75. «Կոնֆուցիականությունը, բուդդայականություն, դառսիզմ, քրիստոնեություն և չինական մշակույթը, 1991: 55-57:

ոդիկ իմ հայրենակիցներն են, իրերը (Երևույթներ)՝ իմ ընկերները» և ավարտվում է «Ապրել՝ նշանակում է հետևել իմ եռթյանը, մեռնել՝ հետևել իմ հանդարտությանը» նախադասություններով: Քանի դեռ ողջ ես, պետք է իրականացնես իդեալական «Մեծ Աերդաշնակության» պատասխանատվությունը: Այդպես կարող ես վայելել խաղաղությունը մինչև կյանքի վերջ, առանց ամոթի զգացման:

Իդեալական Աերդաշնակ հասարակության ձգտումը տարբերվում է արևմտյան մարդասիրությունից, չնայած այն կարելի է դիտարկել՝ որպես չինական մարդասիրություն: Ըստ իին չինացի մտածողների՝ միայն մարդ արարածներն են ապահովում ամենակարևոր կապը Երկնքի և Երկրի միջև: Ինաստուններն ի վիճակի են «սահմանել Երկնքի և Երկրի միտքը, վճռել մարդկային կյանքերի ճակատագիրը, վերականգնել անցյալից սովորելու կիսատ ավանդույթները և սկիզբ դնել գերագույն խաղաղության ժամանակաշրջանին՝ հանուն հետնորդների»: Յետևաբար ծագեց կոնֆուցիական գաղափարը, որ մարդիկ կարող են ընդարձակել ճանապարհը, և ոչ թե շրջանցել այն: Չնայած Երկնքի ճանապարհը օբյեկտիվ է ուրիշուն է, այն մարդկային մարմնավորման կարիք ունի: Ըստ իին չինական մտածողության՝ մարդը կարող է մարմնավորել ճանապարհը, երբ հասկանա Երկնքի ու մարդու միասնությունը, գործնականում կիրարի գիտելիքի և գործողության միասնությունը և ստեղծագործարար բացահայտի զգացման և պատկերի միասնությունը: Միայն մարդկության ամենավսեմ ոլորտն ընկալելու դեպքում կարելի է մտքում կենտրոնանալ վերը նշված իդեալի վրա, որպեսզի այն իրականություն դառնա: Այս ոլորտն անհատական խոսքերն ու արարժները ներդաշնակեցնում է բոլոր մարդկային հասարակությունների հետ և նույնիսկ այս ներդաշնակությունը տարածում է ամբողջ տիեզերքի վրա: Ավանդական չինական փիլիսոփայության մեջ մարդ արարածների հիմնական դերը «մարդ» լինելն է ներդաշնակ հասարակության իդեալի որոնումներում: Որպես բնության և համայնքի կենտրոնական տարր՝ մարդը մեծ պատասխանատվություն է վերցնում:

Չինական փիլիսոփայությունը խոր ազդեցություն է թողել չինական ազգային մտածողության վրա: Դավատացած եմ, որ մտածողությունը բացահայտում է չինական մտքի մշակույթի թե՛ ուժեղ, թե՛ թույլ կողմերը:

Կարծ ասած՝ չինական մտածողությունը կարելի է բնութագրել ներդաշնակության և միասնության ձգտումներով: Ամենաականավոր չինացի փիլիսոփաները դրական էին համարում իրականությունը և ջանում էին ձևափոխել բախումնային հասարակությունները՝ այնտեղ ստեղծելով ներդաշնակ համայնքներ: Չնայած նրանց իդեալներն ու ուսմունքները չեն բերում իրական քաղաքական փոփոխություններ, չինացի կառավարիչները փիլիսոփայական գաղափարներն օգտագործում էին՝ որպես արտաքին շղարշ: Օրինակ, երբ Մեծ ներդաշնակության և գերագույն խաղաղության իդեալները քայլացվեցին, նրանց փոխարեն առաջ եկան կայսերական տիտղոսներ, և կառավարիչները սկսեցին իրենց կոչել գերագույն խաղաղության կայսր կամ կայսրուի: Գյուղացիական ապստամբությունները պատմության ընթացքում «գերագույն խաղաղությունը» օգտագործում էին՝ որպես իրենց արդար գործի նշանաբան: Արևելյան Հան դինաստիայի վերջուն (25-220) Դեղին գլխաշորերի ապստամբությունը «Գերագույն խաղաղության ճանապարհ» կարգախոսն օգտագործում էր՝ ազգարակատերերին կազմակերպելու համար: Սուն դինաստիայի (960-1279) գյուղացիական ապստամբությունները նպատակ ունեին «վերացնել անհավասարությունը՝ գերագույն խաղաղության

հասնելու նպատակով»: Արդի ժամանակներում Հուն Սյուցյուանի (Հուն Յայու-չուան) ղեկավարած գյուղացիական ապստամբությունը հայտնի էր «Գերագույն խաղաղության բանակ» անունով (Թայփին Զուն), որը պատկանում էր «Գերագույն խաղաղության երկնային բագավորությանը» (Թայփին Թյանգո):

Չնայած չինական մտածողության մեջ իր գերայակայությանը՝ գերագույն խաղաղության հասնելու իդեալը երեք էլ իրականություն չդարձավ: Լավագույն դեպքում «գերագույն խաղաղության և բարօպականող աշխարհի» պատրաճը իրականություն դարձավ պատմության կարծ ժամանակահատվածներում: Չինական ավանդական իդեալիզմն ըստ էության երևակայություն է: Անցյալի իմաստունները գուցե և ճշմարիտ անկեղծությամբ հրապարակել են «Երկիրը կառավարելու և աշխարհին խաղաղություն բերելու» իդեալը, բայց քանի որ դրա իրականացումն անհնար է, նրանց մտադրությունները պետք է դիտարկել՝ որպես փոքր-ինչ ավելի իդեալականացված ֆեռալիզմ:

Մենք կարող ենք դիտարկել, որ չինական մտածողությունը մշտապես բնութագրվել է միասնության որոնումներով: Իր սկզբնավորումից ի վեր՝ չինական փիլիսոփայությունը շեշտել է երկու հասկացությունների միասնությունը կամ մի շարք հասկացությունների փոխսարարերությունը: «Փոփոխությունների գրքում» Ցյանն ու Կունը (ավելի ուշ՝ ինն ու յանը) միասնության մեջ երկակիության գաղափարներն են, «Ծեսերի գրքում» «Մեծ սկզբունք» գլուխը իմանված էր «հինգ տարրերի» համակարգի վրա, որոնք կապված են երկակի միասնություններով: Երբ երկիմքն ու մարդը դիտարկվեցին՝ որպես երկվապաշտական (դրահաստական) փիլիսոփայական հասկացություններ, չինական փիլիսոփայությունը սկսեց շեշտել երկնքի և մարդու միասնությունը: Մտածողության այս կերպը բանական է, երբ շեշտը դրվում է մերդաշնակության և միասնության վրա և հակադրվում է ավելցուկին և պակասությանը:

Որոշակի պայմաններում այս իդեալը շահավետ է հասարակական կայունության և զարգացման, ինչպես նաև առարկաների միջև իրական հարաբերությունների հետազոտության համար: Կասարակական զարգացումը պահանջում է հարաբերական կայունության ժամանակաշրջան, մինչդեռ մտքի մշակույթները զգալիորեն շահում են փոխադարձ ծովումից և միախառնումից: Պատմության ընթացքում եղել են «ստատուս քվոյի» պահպանման և բարեփոխումների միմյանց հաջորդող ժամանակաշրջաններ: Ցին և Չան դինաստիաներից ի վեր (մթա 221-220թթ.) Չինաստանը եղել է մեծ միասնության վիճակում: Սասնատումները կամ քաժանումները միշտ ժամանակավոր են եղել: Չան ժողովուրդը և փոքրանասնություն կազմող ազգերը ստեղծեցին մեկ միասնական երկիր՝ միևնույն ժամանակ ծովելով օտար մշակույթներ: Չիններին նաև միասնություն հասկացության վրա՝ չինական բժշկությունը շեշտում է օրգանական կապը մարդու և նրա միջավայրի, մարդկային մարմնի և մարդկային հոգու, մարմնի օրգանների, ինչպես նաև զանազան դեղամիջոցների միջև: Ցին (կենսունակություն) օգտագործվում էր իրերի միասնությունը և նրանց փոխադարձ ազդեցության բաքնված պատճառը բացատրելու համար: Այստեղ նմանություն կա արդի ֆիզիկայի հայտնագործությունների հետ:

Չնայած չինական փիլիսոփայության ավանդին՝ մենք չենք կարող անտեսել մտածողության այս ազգային կերպի բերությունները: Ներդաշնակության և միասնության վրա չափազանց մեջ շեշտը հանգեցրեց ֆեռալական հասարակության

Երկարատև լճացմանը, կապիտալիզմի դանդաղ օարգացմանը, չափազանցված ազգային հպարտության ու առաջադեմ մտածողության բացակայությանը: Չինական ավանդական փիլիսոփայությունը գուրկ է համակարգային ճանաչողության տեսությունից (Էպիստեմոլոգիա) և տրամաբանության ավանդությունը: Տեսական մտածողությունը չինական փիլիսոփայության մեջ չի ենթարկվել վերլուծության և հարուստ է էության ճանաչողության, ինչպես նաև արդի գիտության որոշ եզրահամգումների առումով: Բայց առանց անհրաժեշտ վերլուծության և փաստարկների այն չի կարող վերածվել արդի գիտության: Փոխադարձ հարաբերությունների և միասնության հանդեպ չափազանց մեծ ուշադրության, ինչպես նաև անառոմիայի լիակատար անտեսման պատճառով ավանդական չինական մտքին չհաջողվեց հասունանալ արևմուտքում և վերածվել արդի գիտության: Մենք պետք ենք բարեփոխենք մտածողության ավանդական ձևերը՝ հարաբերությունների, միասնության և տիեզերական ներդաշնակության գաղափարներն ուսումնասիրելիս կիրառելով տրամաբանական տրամասությունը և գիտական ճանաչողությունը: Մենք պետք ենք շեշտենք հատուկ վերլուծությունը, խուսափենք մեր փիլիսոփայության վաղոր ճանաչված թերություններից և լավագույնս օգտագործենք արևմտյան փիլիսոփայության սկզբունքները, որպեսզի ստեղծենք գիտական փիլիսոփայության դպրոց, որն օժտված է չինական հատկանիշներով:

## Կոնֆուցիականության երրորդ փուլի զարգացման հնարավորության հետազոտություն<sup>76</sup>

Արդյո՞ք հնարավոր է, որ կոնֆուցիականությունը թևակոխի զարգացման երրորդ փուլը: Այստեղ պետք է նշել, որ Կոնֆուցիոսի, Սենցիոսի և Սունցիի պաշտպանած մտքի դպրոցը Գարնան և աշնան և Պատերազմնող պետությունների ժամանակաշրջաններում կոնֆուցիականության զարգացման առաջին փուլն էր: Դան դիմաստիայից հետո բուդդայականությունը հասավ Չինաստան: Բուդդայական զարավարների ազդեցության ներքո Սուն և Մին դիմաստիաներում ի հայտ եկավ իդեալիստական փիլիսոփայության կոնֆուցիական դպրոցը: Այն առաջ տարավ կոնֆուցիական ուսմունքներն ու ազդարարեց կոնֆուցիականության զարգացման երկրորդ փուլը: Վերջին դարում արևմտյան քաղաքակրթությունը ճանապարհ էր հարթում դեպի Չինաստան: Դատկապես «Մայիսի չորսի [1919] շարժման ժամանակահատվածում մաքսիզմը տարածվել էր նաև մեր Երկրում: Սա շատ ավելի մեծ ու լուրջ ազդեցություն բռնեց Չինաստանի ավանդական մտքի և մշակույթի վրա: Նման հանգանակներում արդյո՞ք հնարավոր է, որ կոնֆուցիականությունը թևակոխի զարգացման երրորդ փուլ: Արդյո՞ք կարելի է այն դարձյալ կյանքի կոչել: Արդյո՞ք այն դեռ որևէ դեր ունի Չինաստանում և աշխարհում: Իմ կարծիքով՝ թերևս չափազանց վաղ է այս հիմնախնդրի մասին համապարփակ քննարկում անցկացնելու համար: Սակայն գուցե օգտակար լինի տարբեր տեսանկյուններից հարցեր բարձրացնել ու կարծիքներ արտահայտել՝ փորձելով ուսումնասիրել խնդիրը:

Եթե քննարկում ենք, թե արդյոք հնարավոր է կոնֆուցիականության թևակոխումը զարգացման երրորդ փուլ, պետք է նախ և առաջ հստակ պատկերացում կազմնենք կոնֆուցիականության հիմնական էության մասին: Այդ մասին անցյալում եղել, իսկ ապագայում կլինեն բազմաթիվ տարբեր հայեցակետեր: Տարբեր հայեցակետերի գոյությունը դրական գործոն է, այն կարող է նպաստել այս հիմնախնդրի ուսումնասիրության խորացմանը: Դիմնական էությունը պարզաբանելիս, կարծում եմ, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել երկու խնդիր: մտքեր, որոնք մշտապես արդյունավետ են եղել կոնֆուցիականության զարգացման ողջ ընթացքում, և մտքեր, որոնք դեռևս այսօր ել կենսունակ են: Երկուսն էլ նկատի առնելով՝ թերևս ճիշտ կլինի պարզել, թե արդյոք կոնֆուցիականության զարգացման երրորդ փուլը հնարավոր է:

Թերթելով կոնֆուցիականության զարգացման ողջ ուղին՝ համոզվում են, որ գոյություն ունի երկու հիմնական տարր, որոնք դեռևս այսօր էլ մեծ նշանակություն ունեն մեզ համար. մեկը իդեալիզմն է, մյուսը՝ մարդասիրությունը. այս երկու սը փոխկապակցված են:

Կոնֆուցիականությունը իդեալիզմի մի տեսակ է: Կոնֆուցիոսից սկսած՝ մտքի այս դպրոցը փայփայել է այն հասարակության իդեալը, որտեղ «գերիշխում են

76. Թան Իծյե, «Գուանյու ժուձյա սիսյան դիսամցի ֆաջան քենենսին դե թանթառ»: Պեկինի համալսարան «Կոնֆուցիականություն, բուդդայականություն, դառսիզմ, քրիստոնեություն և չինական մշակույթ», 1991: 51-54:

ճիշտ սկզբունքները», և ամեն ջանք գործադրել է՝ իրական աշխարհում այս իդեալը կյանքի կոչելու համար: Չնայած բոլորն ընդունում են այս նպատակի անհասանելիությունը, դեռևս շարունակում են պնդել, որ անհրաժեշտ է փայփայել իդեալն ու նվիրվել «անհնարդ հնարավոր դարձնելու» գործին: Յետևաբար, երբ Ցիգունը հարցրեց Կոնֆուցիոսին. «Էսկ հ՞նչ կլինի, եթե կարողանանք մեծահոգի լինել մարդկանց հանդեաւ և թերևացնել նրանց կյանքը: Արդյո՞ք դա կարող է կոչվել բարեգործություն», Կոնֆուցիոսը պատասխանեց. «Սա, ով առաջնորդվում է բարեգործությամբ, պետք է սուրբ լինի: Տույնիսկ Յառյին ու Շունին դա չի հաջողվում»: Ավելիաց է, որ Կոնֆուցիոսը Յառյի հասարակությունը և Շունի ժամանակը չեր համարում մարդու բարձրագույն իդեալ: Յետևաբար, անհրաժեշտ է հասկանալ, թե որոն է իդեալական հասարակությունը: Ըստ կոնֆուցիականների՝ իդեալական է այն հասարակությունը, որն ունի կյանքի կոչվելու հնարավորություն, և ոչ անհրաժեշտություն: Չնայած այն իրողությանը, որ իդեալական հասարակություն նախկինում երթեք չի եղել, այն հարցը, թե արդյոք արժի ծգուել դրան, հիմնարար նշանակություն ունի և կապված է կյանքին մարդու մոտեցման հետ: Ըստ կոնֆուցիականների համոզմունքի՝ մարդը պետք է անդադար ծգուի դրան: Դա է պատճառը, որ, ըստ իս, այն ժամանակ մարդիկ քննադատում էին կոնֆուցիականներին՝ նրանց կոչելով «աշխարհի հարցերից անտեղյակ»: Կարիք չկա, որ իդեալական հասարակությունն անպայման կյանքի կոչվի իրական կյանքուն. ըստ կոնֆուցիական փիլիսոփաների՝ այն կարող է իրագործվել նաև մտքերուն: Ինչպես է պատահում, որ Զան Ցայի «Արևմտյան գրություններն» այդքան հարգված էր ուշ շրջանի կոնֆուցիականների կողմից: Իմ կարծիքով՝ բանն այն է, որ «Արևմտյան գրությունը» մարմնավորում էր իդեալական հասարակություն ստեղծելու կոնֆուցիական ծգուունները, բացի այդ, Զան Ցայն արդեն իր մտքում կառուցել էր իդեալական հասարակություն: Ճիշտ է, որ այն, թե արդյոք իդեալական հասարակությունը, որտեղ «մարդիկ իմ եղբայրներն են, և ես իմ ունեցածը կիսում եմ նրանց հետո» (ինչպես ընկալում էր Զան Ցայը) սկզբունքը կարող է իրագործվել, կարևոր էր նրա համար, բայց ավելի կարևոր էր, թե արդյոք կարելի է ունենալ իդեալական հասարակության ծգուելու համաշխարհային հեռանկար: Յետևաբար, «Արևմտյան գրություններ» գրքի վերջին նախադասությունն ասում է. «Ես շարունակում եմ իմ որոնումները, քանի դեռ ողջ եմ, և խաղաղվում, երբ մեռնում եմ»: Քանի դեռ մարդն ապրում է, պարտը ունի կատարելու: «Պարտը հետևյալն է՝ ջանք գործադրել՝ «համընդիհանուր շահին ծառայող աշխարհի» իդեալն իրագործելու համար: Կարելի է ասել, որ ըստ այս մոտեցման՝ «մարդուն մտահոգում է զարգացումը, և ոչ թե շահը»: Կյանքի հանդեաւ այսպիսի մոտեցում որդեգրած մարդը մաքուր խիզճ ունի: Մի՞թե այսօր, ավելի, քան երբէս, չունենք այս մոտեցման կարիքը:

Կոնֆուցիականությունն իդեալիզմի տեսակ է, որի նախադրյալը մարդասիրությունն է: Ինչու՝ մարդը պետք է ունենա իդեալ և ծգուի կառուցել իդեալական հասարակություն: Ըստ կոնֆուցիականների՝ մարդն աշխարհի կարևորագույն գործունն է, որովհետև կարող է «ձևակերպել տիեզերքի բարոյագիտությունը, մարդկանց տրամադրել կենսամիջոցներ, կատարյալ ուսմունքը փոխանցել ժառանգներին և խաղաղություն նվաճել հազարավոր սերունդների համար»: Կոնֆուցիոսն ասում էր. «Մարդը կարող է ընդլայնել ճանապարհը, և ոչ թե հակառակը»: «ճանապարհը» կամ «Բնության ճանապարհը» օրյեկտիվ գոյություն է: Բայց

մարդու պետք է ընդլայնի և փոխանցի այն, պետք է գործնականում ազդեցություն գործի ճանապարհի վրա: Բայց ինչպես կարելի է մարմնավորել «Բնության ճանապարհը»: Եթե, ինչպես կանխատեսում էին կոնֆուցիականները, մարդու կարող է հասկանալ, թե «Երկինքն ինչպես է միանում մարդուն», «գիտելիքը՝ գործնականին» և «զգացնունքը՝ պատկերին», նա կարող է հասնել մարդ լինելու վսենագույն ոլորտին: Այլ կերպ ասած՝ մարդու կարող է սրտում պահել ծշմարիտի, բարու և գեղեցիկի հիեալը:

Երկրի միացումը մարդուն, գիտելիքի միացումը պրակտիկային և զգացմունքի միացումը պատկերին չինական ավանդական փիլիսոփայության երեք գլխավոր հիմնավորումներն են ծշմարիտի, բարու և գեղեցիկի մասին. դրանք այն իդեալական ոլորտներն են, որոնց ձգտում է կոնֆուցիական դպրոցը: Ինչու՞ է կոնֆուցիականությունը մշտապես ձգտում այս երեք միասնություններին: Ին կարծիքով՝ կոնֆուցիականությունը ոչ ավելին է, քան ուսմունք, որը սովորեցնում է, թե մարդու ինչպես պետք է պահի իրեն, այսինքն՝ պահանջկու լինի իր նկատմամբ և պատասխանատվություն կրի աշխարհի և ազգի համար: Սա շատ տարածված հարց է, բայց չափազանց բարդ իրականացվող խնդիր: Նա, ով հասել է ծշմարիտի, բարու և գեղեցիկի հիեալական ոլորտին, սուրբ է:

Չնայած Երկնքի և մարդու միավորման գաղափարը նպատակ ունի ցուցադրել մարդու և ողջ տիեզերքի հարաբերությունները, այն սկսվում է մարդուց՝ որպես տիեզերքի կենտրոն: Ըստ «Զունյունի»՝ [Ուսկե միջինը] «Ազնիվ լինելը Երկնքի ճանապարհն է: Ազնիվ լինելու ձգտումը մարդու ճանապարհն է: Ազնիվ մարդն առանց դժվարության կանգնում է ծշմարիտ ճանապարհի վրա և առանց մտածելու հասկանում այն: Նա, ով առանց Երկնտելու հարմարվում է Երկնքի ճանապարհն, սուրբ է:» Յետևաբար, սուրբը ոչ միայն ապրում է ըստ Երկնքի ճանապարհի պահանջների, այլև իր պարտքն է համարում կատարել այդ պահանջները: Այս աշխարհում ապրելով չի կարելի պասիվ մոտեցում ցուցադրերել: Յակառակը, մարդը «պետք է անդադար ջանքեր գործադրի ինքնակատարելագործման համար», որպեսզի մարմնավորի բնության անդադար հոսքն ու զարգացումը: Այսպիսով, մարդը պահանջներ է դնում իր առաջ. նա պիտի գտնի իր գոյության պատճառը և փայփայի վեհ իրեալը: Երբ պահանջներ ես դնում քո առաջ և գտնում գոյության պատճառը, ամենակարևորը «սեփական հասկացողությունը վարքի հետ միավորելն է» և միասնական տեսակետը մտածողության և վարքի մասին՝ բարոյականության և ինքնազարգացման տեսանկյունից: «Դասյուն» [Մեծ ուսմունք] Երկում ուրվագծված երեք ծրագրերն ու ութ հոդվածները հստակ ասում են, թե ինչի մասին է այն: «Դասյուն» ասում է.

Մեծ ուսմունքի ճանապարհը լույս է սփռում պայծառ սկզբունքների վրա, մոտ է մարդկանց, և նրա հանգրվանը ամենամարարին է: Յնագույն ժամանակներում նրանք, որ ցանկանում էին լույս սփռել պայծառ սկզբունքների վրա՝ հանուն աշխարհի, նախ պետք է կարգուկանոն հաստատեին իրենց սեփական թագավորություններում: Թագավորություններում կարգուկանոն հաստատելու համար նախ պետք է կարգի բերեին իրենց տները: Տներում կարգուկանոն հաստատելուց հետո նրանք պետք է զարգացնեին իրենց սեփական բարոյական կերպարը: Բարոյական կերպարը զարգացնելու համար պետք է նախ շտկեին իրենց միտքը: Միտքը շտկելու համար պետք է փայփայեին անկեղծ ցանկությունը: Անկեղծ ցանկությունը փայփայելու համար նրանք պետք է նախ գիտելիքը հասցնեին բարձրա-

գույն աստիճանի: Գիտելիքը բարձրագույն աստիճանի հասնելու համար պետք է նախ հետաքրքրվեն իրերի հատկություններով: Իրերի հատկությունները պարզելուց հետո միայն նրանք ի վիճակի կլինեն բարձրագույն աստիճանի հասցնել գիտելիքը: Գիտելիքը բարձրագույն աստիճանի հասցնելուց հետո նրանք կլարողանային փայփայել անկեղծ ցանկությունը: Անկեղծ ցանկությունը փայփայելուց հետո նրանք ի վիճակի կլինեն շտկել իրենց միտքը: Միտքը շտկելուց հետո նրանք կվարողանային զարգացնել սեփական բարոյական կերպարը: Սեփական բարոյական կերպարը զարգացնելուց հետո ի վիճակի կլինեն կարգի բերել իրենց տները: Տները կարգի բերելուց հետո ի վիճակի կլինեն կարգի բերել իրենց թագավորությունները: Թագավորությունները կարգի բերելուց հետո ամբողջ աշխարհը կապրեր խաղաղության մեջ:

Սա թեև ճանաչողության, բայց ավելի շատ բարոյական պրակտիկայի գործնթաց է: Մարդու պետք է ունենա իդեալ, իսկ բարձրագույն իդեալը «խաղաղության ձեռքբերումն» է, որպեսզի մարդկային հասարակությունը մտնի «Մեծ ներդաշնակության» ոլորտ: Իսկ «Մեծ ներդաշնակության» աշխարհը պահանջում է, որ բոլորն իրենց առաջ դնեն մարդ լինելու պահանջ, մարդ լինելու պատճառ և «դիմացինիդ հետ վարվիր այնպես, ինչպես կցանկանայիր, որ քեզ հետ վարվեն» սկզբունքը: Կոնֆուցիոնը նշում էր: «Ին սկզբունքը հետևյալն է՝ ապրել ազնիվ և արդար»: Անշուշտ, այն հարցը, թե արդյոք կարելի է հասնել «Մեծ ներդաշնակության» իդեալական հասարակության մեջ, թե ոչ, դեռ պատասխան չունի: Բայց կոնֆուցիականը պետք է ունենա նման նպատակ և հաճույքով հետամուտ լինի դրան: Եթե ուզում ես գոյություն պահպանել աշխարհում և լինել մարդ, պետք է հաճույք ստանաս դրանից և գնահատես տիեզերքի արարումը: Իսկ Բնությունը ծշմարդիտ գնահատելու համար «տիեզերքի արարումը» վերարտադրելիս պետք է կարողանաս ցուցաբերել ստեղծագործական մոտեցում և դրսնորել հոգևոր ոլորտը: Պետք է ցոյց տալ, թե մարդն ինչու պետք է մարդ լինի, ստեղծել պոեզիայի և արձակի «գլուխգործոցներ», «բարձրարվեստ կտավներ» և «բնության հնչյուններ» հիշեցնող երաժշտություն: Այդ պատճառով էլ արվեստը պահանջում է, որ «զգացմունքը միանա պատկերին»: Վաճ ֆուջին դիտարկել է. «Զգացմունքն ու պատկերն առանձին երևույթներ են, բայց իրականության մեջ անբաժան են: Ովքեր օժտված են պոեզիա գրելու շնորհով, օժտված են անսահման սուր մտքով: Մրամիտ տողը, բնականաբար, զգացմունքը է ներմուծում տեսարան, իսկ տեսարանը հայտնվում է զգացմունքներում»: «Երբ զգացմունքը միավորվում է տեսարանի հետ, ծնվում է սրամիտ դիտարկումը»: Երբ մարդը մտնում է արարման ոլորտ, սա մի դաշտ է, որտեղ ծշմարիտը, բարին և գեղեցիկը միանում են իրար: Հենց սա է կյանքի իմաստն ու մարդկության բարձրագույն իդեալը: Կոնֆուցիոն իրեն նկարագրում է՝ որպես յոթանասունամյա մարդ, որն «ամեն ինչ անում է իր կամքով, առանց կանոնները խախտելու»: Գուցե դա հենց վերը նշված իդեալական ոլորտն էր: Անշուշտ, սա սրբության ոլորտ է, երբ այն, ինչ մարդն ասում ու անում է, ներդաշնակ է ամբողջ տիեզերքի, հասարակության և մտքի շրջանակի հետ:

Այն, որ կոնֆուցիականության գոյությունը դեռևս արժևորվում է, գուցե պայմանավորված է միայն այն փաստով, որ այն լուսաբանում է մարդ լինելու պատճառը: Մարդու համար չափազանց դժվար է մարդ լինել, բայց առավել դժվար է պահպանել ներդաշնակությունը սեփական անձի և բնության, հասարակության

ԻՃԵԿ ԹՌՆ

Կոնֆուցիականությունը, բուդդայականությունը, դառսիզմը,  
քրիստոնեությունը և չինական մշակույթը

այլոց կամ մարմնի և հոգու միջև՝ թե՛ ներսից և թե՛ դրսից: Արդյո՞ք այսպիսի պահանջն անհրաժեշտ է ժամանակակից աշխարհին: Քանի որ Կոնֆուցիականությունը մեզ ներկայացնում է մարդ լինելու պատճառը, մեր կողմից ներկայացված այլ պահանջներն այլևս անտեղի են: Եվ զարմանալի չէ, որ նրանում տեղ են գտել որոշ անհանապատասխանություններ:

## ԳԼՈՒԽ 8

## Ներունակությունն ու անդրանցականությունը Չինական չան բուդդայականության մեջ<sup>77</sup>

Եթե բուդդայականությունը թափանցեց Չինաստան, մինչև Սույ (581-618) և Թան (618-907) դինաստիաները այն արդեն բաժանվել էր մի քանի դպրոցի. Թյանթայ, գիտակցության դպրոց, Վինայա, Մաքուր հող, Յուայան, Չան և այլն: Թան դինաստիայից ի վեր Չան բուդդայականությունը զգալիորեն մեծացրեց իր ազդեցությունը և նույնիսկ բարգավաճեց՝ գերազանցելով մյուս բոլոր դպրոցները, որոնք վաղ թե ուշ թուլացան: Կասկած չկա, որ նրա բարգավաճումն ուներ բազմաթիվ պատճառներ, և թերևս դրանցից մեկն այն է, որ Չան բուդդայականությունը կարող է մասնավորապես արտացոլել չինական փիլիսոփայության բնորոշ գծերը՝ «Ներունակ անդրանցականությունը», որին գիտնականները թերևս պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնեն:

Որպես կրոն՝ բուդդայականությունն ունի իր դավանաբանական սուրբ գրքերը, կանոնավոր ծեսերը, պատվիրանները, երկրպագության առարկաները և այլն, բայց Յուեյնենից հետո (638-713) Չան բուդդայականությունը հրաժարվեց վերը նշված ամեն ինչից: Ուստի Չան բուդդայականության մեջ կարիք չկա երգել սուրբ գրքերը, կատարել պատվիրանները, հետևել ցանկացած ծեսի և երկրպագել պատկերներ, և նույնիսկ տնից հեռանալն ու վանական կամ միանձնուի դառնալը պարտադիր չէ: Յետևաբար, Բուդդա դառնալու և Նիրվանայի վիճակին հասնելու համար նարդ կարող է միայն հույսը ղեկավագ մտքի վրա: Ըստ բուդդայականության՝ «նա, ով իրազեկ միտք ունի, բուդդա է, իսկ մտքերի մեջ շփորվածը՝ դյուրազգաց էակ»: Սա նշանակում է, որ բուդդա դառնալը և անդրանցական վիճակին հասնելն ամբողջությամբ կախված է հիմնական ներունակ մտքից:

### 8.1 Չինական Չան բուդդայականությունը չեր արժևորում սուրբ գրքերը, չեր սահմանվում խոսքերով, բայց պնդում էր, որ պետք է ականջ դնել հիմնական մտքին

«Բուդդան ոլորում է ծաղիկը, իսկ Մահա-Կաշապան ժպտում է». չան աղանդի այս պատմությունն արձանագրված է «Ձի-յուե-լու» գրքում [Մատները, որ ցույց են տալիս Լուսինը]:

Եթե Բուդդան Գրդիրակուտա սարի մոտ էր, մատներով մի ծաղիկ քաղեց, բարձրացրեց և ցույց տվեց իր ունկնդիրներին: Բոլորը լուր էին: Միայն Մահա-Կաշապան էր ժպտում այս բացահայտումից, չնայած փորձում էր վերահսկել իր ոդիմախաղը: Բուդդան ասում է. «Ես տեսնում եմ ճշմարիտ ուսմունքը, սրտով զգում Նիրվանան, հասկանում անձնության ճշմարիտ կողմը և Դիարմայի անպատճելի քայլերը: Սա չի արտահայտվում խոսքերով, բայց փոխանցվում է հատ-

77. [Չանն ավելի հայտնի է ճապոներեն ամունով՝ գեն, և առաջացել է դիյանա սամսկրիտ բարհից: Անգլերենում չանը սովորաբար ներկայացվում է՝ որպես «մեղիտացիա» (խորասուլում):]

«Չին-արևմտյան հաղորդակցություններ» ամսագիր, 2010, 2 (2): 51-68: Թարգմանությունը՝ Յան Յաոյի, 佛教与中国文化ii, 宗教文化出版社1999年版, “论禅宗思想中的内在性与超越性”。引文有所修订。

Կապես ուսմունքից անդին: Ես այն փոխանցել եմ Մահա-Կաշապային»:

Չան բուդդայականությունն իրեն հաճարում է «ուսմունքից անդին փոխանցվող» ոլորտ և այս պատմության միջոցով իրեն տարբերակում այլ դպրոցներից: Երբ բուդդայականությունը մուտք գործեց Չնդկաստան, այն բավական պարզ էր և ի սկզբանե կյանքի փիլիսոփայություն էր: Շակյանունի Բուդդան խուսափում էր քննարկել այն տեսությունները, որոնք կապված չէին իրական կյանքի հետ կամ քիչ էին առնչվում հետևյալ խնդիրների հետ՝ «արդյոք տիեզերքը հարատև է, թե ոչ», «արդյոք տիեզերքը սահմանափակ է, թե անսահմանափակ», «արդյոք մահից հետո կյանք կա, թե ոչ», «արդյոք կյանքն ու մարմինը մեկ են, թե ոչ» և այլն, որոնք հաճախ բոււռն քննարկումների պատճառ էին դառնում իր ժամանակի Չնդկաստանում: Ավելի ուշ՝ զարգացման ընթացքում, հնդկական բուդդայականությունն ավելի ու ավելի բարդացավ, հեռացավ իրական կյանքից, և նրա հաճակարգն ընդայնվեց, երկրպագության առարկաները շատացան, իսկ տեխնիկական եզրույթները դարձան անքիվ-անհամար, ինչը միանգամայն անհամատեղելի էր չինական ավանդական մտքի հետ: Սույ և թան դինաստիաներից հետո չինական բուդդայականության բազմաթիվ դպրոցներ փորձում էին բոլոր հնարավոր միջոցներով հաղթահարել հնդկական բուդդայականության այս բարդությունները, որոնցից մի քանիսը, օրինակ՝ «մեկ միլիարդ աշխարհ մուտք գործեց մեկ մտքի մեջ» սկզբունքը թյանքայ դպրոցում, և «սկզբունքն ու նյութը միավորվեցին մեկ իրական մտքի մեջ» սկզբունքը Չուայան դպրոցում ընդգծում էին հիմնական մտքի դերը: Այս միտումը, ինչպես նաև նրա շեշտը առանց բառերի արտահայտվելու և բոլոր սուրբ գրքերից հրաժարվելու վրա, Չան բուդդայականության մեջ ուժգնացավ հետագայում՝ Չուեյնենից հետո:

Չուեյնենը չէր հրաժարվում սուրբ գրքերից և պաշտպանում էր առանց խոսքերի արտահայտվելու գաղափարը: «Չարթակի Սուտրայում» գրված էր, որ Չուեյնենն իր աշակերտներին սովորեցնում էր «Աղանանդի սուտրան» և «Լոտուս սուտրան», բայց շարունակում էր պնդել, որ «բոլոր սուրբ գրքերն ու սովորական գրքերը գոյություն ունեն և պատմում են մի բան, որ համապատասխանում է մարդկանց պատմածին» (Չարթակի Սուտրա) և մարդկանց կառավարելու միակ գործիքն են: Ուստիև, պետք չէ կառչել սուրբ գրքերից, որովհետև մարդը չի կարող Բուդդա դառնալ սուրբ գրքերը երգելով, և կարող է ազատագրվել միայն հույսը դնելով իր հիմնական մտքի վրա: Մի կողմից պատճառն այն է, որ Բուդդա դառնալու սկզբունքներն ու մեթոդներն ի սկզբանե գոյություն ունեն մարդու հիմնական մտքում, ուստի «անցյալի, ներկայի և ապագայի Բուդդաների տասներկու մասամոց կանոններն ի սկզբանե ներհատուկ են մարդու կությանը» (Չարթակի Սուտրա): Այսպիսով, կարիք չկա փնտրել դրսում, կարիք չկա Բուդդային որոնել մտքից դուրս, որովհետև Բուդդա լինելը և լուսավորված լինելն ամբողջությամբ կախված է մարդուց, իսկ խոսքերը ոչ մի կապ չունեն դրա հետ: Մյուս կողմից, բառերն արտաքին երևույթներ են: Եթե կառչում ես այս արտաքին երևույթներից, «կառչում ես ծներից» և «սեփական եռթյունդ իրականում ծնեք է բերում պրաջնայի [իմաստություն] ներհայեցողությունը, եթե մշտապես դիտունակ ես և օգտագործում ես ներհայեցողությունդ: Չետևարայ, մարդը կախված չէ խոսքերից» (Չարթակի սուտրա): Սուրբ գրքերի կապանքներից ազատվելու համար Չան վարպետները Չուեյնենից հետո պարզապես դեմ էին սուրբ գրքերը երգելուն և նույնիսկ բոլոր տեսակ խոսքերին: «Ու-դեն-հուեյ-յուանում» [«Չինգ ջահերը հան-

դիպում են սկզբնավորման պահին»] գրված է. «Վեյ-շանը (771-853) հարցրեց Յան-շանին (814-890). «Նիրվանա սուտրան ունի քառասուն հատոր: Քանի՞սն են պատկանում Բուդդային: Քանի՞սը մարային [դէն]:» Եթե մարդը կառչում է սուտրաներից, ինչպես Դիարման, արդեն իսկ կախարդված ու խարված է դևերի կողմից: «Գու-ցուն-սու-յու-լու» [Յնագույն արժանավորների արձանագրված ասույթները] արձանագրում է. «Ինչ վերաբերում է նրանց, որոնք համարվում են Բուդդա և մեկնարանվում որպես Բուդդա, երբ մեկն ինչ-որ բան գտնում ու ինչ-որ բանի հետ կապվում, այս ամենն ընդամենը ինտելեկտուալ խաղ է, անմշակ խոսքեր և մեռած լեզու» (հատոր 2): «Զին-դե-չուան-դեն-լու» [Զահի փոխանցման արձանագրություն] երկն ասում է. «Լին-ջին (787?-867) «ամառվա կեսին զնում է Յուան-բո սար (որտեղ ապրում էր իր վարպետը) և տեսնում, որ վարպետ Յուան-բոն (?-805) սուտրա է կարդում: Նա ասում է. «Կարծում էի՝ այստեղ կգտնեմ մարդու, բայց ահա տեսնում եմ ծեր վաճականի, որը սև սույայի հատիկներ է ուտում» (հատոր 12): Բոլոր սուրբ գրքերն անհեթեթություն են: Կառչելով այս անհեթեթությունից՝ ինչպես կարող ես ազատագրվել և դառնալ Բուդդա: Քանի որ բուդդայական սուրբ գրքերը «մեռած լեզու» են, «գրվել են մարայի [դէն] կողմից» և զարթոնքի միջոցներ չեն, բնականարար պետք չէ դիմել նրանց օգնությանը՝ Բուդդա դառնալու նպատակն իրազործելու համար: «Գու-ցուն-սու-յու-լուն» արձանագրում է Նան-ցյուանի (748-834) ասացվածքը. «ճանապարհը կապ չունի իմացության կամ չիմացության հետ, որովհետև իմացությունը կեղծ իմացություն է, իսկ չիմացությունը՝ հիշողության բացակայություն: Եթե մարդն իրականում հասնում է ճշմարիտ ճանապարհին, որ նման է մեծ դատարկության, լայն է, ընդարձակ ու բաց, ինչպես կարող է ճիշտը տարբերել սխալից (հատոր 13):» ճանապարհը կապ չունի այն գիտելիքի հետ, որը տարբերակում է սուրբեկտը և օրբեկտը, այսինքն՝ հասկացության (կոնցեպտուալ) մտքերը. դեպի ճանապարհ լուսավորությունը հիմնված է մտքի ինքնաճանաչնա վրա: Եթե այդպես է, ապա «Եսը» չի կարող չճանաչել ինքն իրեն: Եթե եսը չի ճանաչում ինքն իրեն, ապա դա կոչվում է «ավիդյա» [անտեղյակություն], հետևաբար չիմանալը հիշողության կորուստ է:

Չանի վարպետները կարծում էին, որ բառերն անհրաժեշտ չեն, և լեզուն չի կարող օգտակար լինել լուսավորության ու Բուդդա դառնալու համար: Մարդը չի կարող ըմբռնել բուդդայական Դիարման միայն լեզվի միջոցով: Ինչ-որ մեկը հարցում է Վեն-իին (885-958). «Ո՞րն է (Բուդդայական Դիարմայի) առաջին իմաստը»: Վեն-ին պատասխանում է. «Եթե ասեմ, այն արդեն երկրորդ իմաստ կդառնա» («Վեն-ի-շան-շի-յու-լու» [Չան վարպետ Վեն-իի խոսքերից]): Դիարման անպատճելի է, և այն, ինչ ասվել է, այլև Դիարմա չէ: Յետևաբար, կա՞ արդյոք որևէ մեթոդ, որ կարող է մարդկանց առաջնորդել դեպի լուսավորություն: Ըստ Չան բուդդայականության՝ հազիվ թե լինի լուսավորական դառնալու որևէ մեթոդ, բացի սեփական ինքնաճանաչնությունից: Ինչևէ, Չան բուդդայականությունն իր աշակերտներին հրահանգելու համար նաև կիրառում էր շատ յուրահատուկ մեթոդ-ներ, ինչպիսին է «փայտի և գոռողի» մեթոդը: Այն արձանագրված է «Ու-դեն-հու-եյ-յուանում».

Մի վաճական հարցնում է. «Ի՞նչ է բոդիին [զարթոնք]»: Վարպետը (Դե-շան, 782-865) հարվածում է նրան ու ասում. «Դուքս կորիիր: Մի՛ աղոտուիր այստեղ»:

Մեկը հարցնում է. «Ի՞նչ է Բուդդան»: Վարպետը պատասխանում է. «Բուդդան ծեր բիիկու [վանական] է Չնդկաստանում»: Սյուե-Ֆենը (822-908) հարցնում է. «Թեև ժառանգել եք բուդդայականությունը, շարունակո՞ւմ եք խորականություններ դնել»: Վարպետը փայտով հարվածում է նրան ու հարցնում. «Սա ի՞նչ է նշանակում»: Սյուե-Ֆենը պատասխանում է. «Չեն հասկանում»: Զաջորդ օրը Սյուե-Ֆենը խնդրում է էլի ուսուցանել իրեն, բայց Վարպետն ասում է. «Մեր դպրոցում չեն սովորեցնում ոչ լեզուներ, ոչ նախադասություններ, իսկ ես Դիարմա չունեմ, որ տաճ»: Այդպես Սյուե-Ֆենն ամեն ինչ հասկանում է: (հատոր 7):

«Գու-ցուն-սու-յու-լուուն» նաև գրված է.

(Լին-ձին) գալիս է Չին-շանին տեսնելու: Երբ Չին-շանը ուղղակի բարձրացնում է գլուխը, որ տեսնի, թե ով է գալիս, Վարպետը (Լին-ձի) գոռում է: Երբ նա պատրաստվում է բացել բերանը, որ խոսի, Վարպետը հեռանում է՝ թեքը թափ տալով: (հատոր 5):

Սա կոչվում է Ղե շանի փայտ և Լին-ձիի գոռոց: Այս հատուկ մեթոդները նպատակ ունեն քայլայել կապվածությունը և լսել հիմնական մտքի ծայնը: Ըստ Չան բուդդայականության՝ մարդը կորցնում է իր եռթյունը, որովհետև միշտ կառչում է ինչ-որ բանից. հետևաբար, անակնկալ գոռոցն ու անսպասելի հարվածը գլխին մարդուն ստիպում է հանկարծ դառնալ լուսավորական և ինքնուրույն հասնել բուդդայականության: Ինչպես Յուանուն (1063-1135) ասում էր «Յուան-ու-ֆոգուո-չան-շի-յու-լու» [«Չանի վարպետ Յուան-Ու Ֆո-գուու-չան-շի-յու-լու»] գործում, «Թե՛ Ղե-շանի փայտը, թե Լին-ձիի գոռոցը կատարյալ են, ավարտուն և ուղղակի-որեն կտրված են իին արմատներից: Նրանք մեծ հնարքներ ու հմտություններ են, որոնք անթիվ-անհամար միջոցներով հասնում են նույն նպատակին և կարող են աշակերտներին ազատել կապանքներից» (հատոր 14): Լին-ձիի վարպետը՝ Յուան-բոն, ասում է իր «Յուան-սին-ֆա-յառ» [«Մտքի փոխանցման հիմնական ուսմունքները»] գործում:

Յոգնոր, լուսավորող եռթյունը... չես որոնի կամ փնտորի, չես ըմբռնի իմաստության կամ գիտելիքի միջոցով, չես բացատրի բառերով, նրա հետ չես հաստատի նյութական կապ, նրան չես հասնի գովասանքի արժանի ծեռքբերումներով: Բոլոր Բուդդաները և Բոդհիկսատվաները, ինչպես և կյանքի բոլոր գալարվող ու սողոսկող արարածները կիսում են Նիրվանայի այս մեծ եռթյունը: Այս եռթյունը Միտք Բուդդան է, իսկ Բուդդան՝ Դիարման:

Քանի որ այս հոգենոր, լուսավորող եռթյունը, որ բոլորն էլ ունեն, չի կարող բացահայտվել գիտելիքի և լեզվի միջոցով, կապվածությունը վերացնելու միակ միջոցը փայտի ու գոռոցի մեթոդն է (անշուշտ, պարտադիր չէ օգտագործել փայտի ու գոռոցի մեթոդը, ցանկացած այլ մեթոդ կարող է փոխարինել դրան, միայն թե կարողանա վերացնել կապվածությունը): Ուստի, միտքը կորցնում է իր դիտարկման առարկան, և մարդը հասնում է անդրանցական վիճակի՝ մերժելով օրյեկտն ու միտքը:

## 8.2 Չինական չան բուդդայականությունը կոտրում էր հնացած սովորույթները, վերացնում մեղիտացիան<sup>78</sup>

## (խորասուցում) և գնահատում էր միայն բնությունը տեսնելն ու բուդդայության իրագործումը

Մեղիտացիան (խորասուցում) բուդդայական բոլոր դպրոցներում կիրառվող գործնական մերոր է: Շակյանունի Բուդդան լուսավորվեց բոդհի [զարթոնք] ծառի տակ 49 օր մեղիտացիայից հետո. Բոդհիդարձան հասավ Չինաստան և բախվեց պատին՝ երեք տարի զբաղվելով մեղիտացիայով: Հուեյնենից հետո չինական չան բուդդայականությունը զգալիորեն փոխվել է: «Չարթակի սուտրայում» Հուեյնենն ասում է. «Խսնդիրը միայն բնությունը տեսնելն է, և ոչ թե մեղիտացիան կամ ազատագործումը»: Պարզ է, որ Հուեյնենը պնդում էր «բնությունը տեսնելու և բուդդայության հասնելու» անհրաժեշտությունը և հավատում էր, որ ազատագորվել կարելի է միայն մեղիտացիայի միջոցով: Ուստիև, ասում էր.

Մոլորված մարդիկ կառչում են իրերի արտաքին տեսքից. նրանք գործնական կյանքում կառչում են կլամելու զաղափարից՝ դա համարելով մշտապես անշարժ նստելու և ցանկացած մտքի պատահական ծնունդը կանխելու միակ իմաստը: Գործնականում նրանք սա նույնացնում են կլամնան հետ, բայց այս մեկնաբանողները ոչ ավելին են, քան անշունչ առարկաներ: Սա մի վիճակ է, որ փակում է ճանապարհը: ճանապարհը պետք է լինի հարահոս, հեշտունթաց: Այդ դեպքում ինչու՞ ենք լճանում: Երբ միտքը չի կենտրոնանում առարկաների վրա, ճանապարհը հեշտունթաց է: Եթե միտքը կենտրոնանում է իրերի վրա, տեղի է ունենում այսպես կոչված ինքնաշղթայում: Եթե ասեք, որ մշտապես անշարժ նստելը ճիշտ է, կիակադրվեք այն փաստին, որ Վիճակիրտին հանդիմանում էր Շարիկուտրային անտառում լուր նստելու համար (Շարրակի Սուտրա):

Նրանք, որոնք կառչում են մեղիտացիայից և հավատացած են, որ նրա շնորհիվ մոլորված մտքեր չեն կարող ծագել, իրականում մարդ արարածին համարում են մեռած և ոչինչ չգիտեն «ճանապարհը պետք է հարահոս լինի» արտահայտության մասին: Միտքը պետք է շարժվի և չկենտրոնանա իրերի վրա, այլապես կընկնի կապանքների մեջ, այդ դեպքում ինչպես կարելի է ազատագորվել: «Գուցուն-սու-յու-լունը» արձանագրում է. «Սա-ցուն (709-788) ապրում էր Նան-յուեչուան-ֆա վանքում, որտեղ իր վարպետ Հուայ-ժանը կառավարում էր (677-744): Նա մենակ ապրում էր խրճիթում և զբաղվում մեղիտացիայով՝ առանց ուշադրություն դարձնելու այցելումներին (նույնիսկ իր վարպետ Հուայ-ժանին)... Սի օր, (հատուկ Մա-ցուի համար) Հուայ-ժանը մի սալաքար է դնում խրճիթի դիմաց ու սկսում աղալ այն: Սա-ցուն սկզբում ուշադրություն չի դարձնում, բայց երկար ժամանակ անց հետաքրքրություն և ասում է. «Ի՞նչ ես անում»: Հուայ-ժանը պատասխանում է. «Յայելի եմ պատրաստում»: Սա-ցուն ծիծաղում է ու ասում. «Սալաքարից ինչպես կարող ես հայելի պատրաստել»: Հուայ-ժանն առարկում է՝ ասելով. «Եթե սալաքարից հայելի չես պատրաստի, ապա մարդն ինչպես կարող է մեղիտացիայի միջոցով Բուդդա դառնալ» (հատոր 1): Սա-ցուն նստած զբաղվում էր մեղիտացիաով և կապվել էր այդ սովորությանը: Հետևաբար Հուայ-ժանն օգտագործեց «սալաքարն աղալու և հայելու վերածելու» փոխարերական պատկերը,

78. Նստած դիրքում մեղիտացիան (խորասուցում [ցուր-չան]) բառացի նշանակում է նստել չան և ավելի հայտնի է իր ծապոներեն համարժեք անունով՝ Ցացեն:

որպեսզի լուսավորի նրան: Սա ուրիշների միջոցով կապանքներից ազատվելու օրինակ է: Մեկ այլ օրինակ է Հուեյլենը (854-932), որը քսան տարի անընդմեջ, ծղոտից բարձիկի վրա նստած, խորասուզման մեջ էր, բայց այդպես էլ չէր տեսնում բնությունը: Վերջապես մի օր, պատահաբար բարձրացնելով վարագույրը, նա հանկարծ լուսավորվեց ու բանաստեղծություն գրեց. «Ես իսկապես սխալ էի, սխալ էի մինչ այն պահը, երբ վարագույրը վեր բարձրացնելով՝ տեսա աշխարհը: Եթե ինձ հարցնեմ, թե որ ուսմունքն է ինձ հայտնի, ես կրածրացնեմ ցախավելն ու կխփեմ հարցնողի դեմքին» («Ու-դեն-հուեյ-յուան», հատոր 7): Հուեյ-լենը պատահաբար բարձրացրեց վարագույրը և տեսավ, որ գոյություն ունի մեկ միլիարդ աշխարհ, իսկ հետո «ճանաչեց միտքն ու տեսավ էռթյունը»: Նա ազատագրվեց մերիտացիայի կապանքներից, հանկարծ պարզ լույսի ներքո տեսավ ամեն ինչ և լուսավորվեց: «Ճարթակի սուտրան» ասում է. «Նրանք չեն կարող ինքնուրույն գիտակցել դա պայմանական մտքի թափառումների պատճառով. դա է պատճառը, որ նրանց անտր է բարի, բանիմաց խորհրդատու, որը ցույց կտա և նրանց կառաջնորդի դեպի հիմնական էռթյան ընկալումը»: Մացուն ոգեշնչվեց Հուեյ-ժանից, իսկ Հուեյ-լենը ինքնուրույն դարձավ լուսավորական. թե՛ Մա-ցուն, թե՛ Հուեյ-լենը հասկացան, որ «իրենց լավագույն խորհրդատուն հենց իրենց հիմնական միտքն է»: Սա նշանակում է, որ մարդը պետք է հենվի իր ներունակ հիմնական մտքի վրա, որպեսզի հասնի անդրանցական վիճակի: «Մինչև ես, բարձրացնելով վարագույրը, տեսա աշխարհը» արտահայտությունը Հուեյ-լենի չափածոյում նրա լուսավորության ամենավճռական պահն է, որովհետև Չան բուդդայականության տեսանկյունից՝ կարիք չկա միտումնավոր ստիպել, որ մարդը լուսավորվի և դառնա Բուդդա: Նա պետք է ինքնաբերաբար տեսնի ճանապարհը սովորական, առօրյա կյանքում այնպես, ինչպես կտեսներ «կապույտ երկնքում սահող ամպերն ու շշի մեջ լցվող ջուրը», և ամեն ինչ կզնա բնականոն և սովորական հունով: «Ու-մեն-գուանում» կա մի բանաստեղծություն [«Անդարպաս դարպաս»], որի հեղիակը Ու-մենն է (1183-1260).

**Գարնամը քեզ ուղեկցում են հարյուրավոր ծաղիկներ, աշմամը՝ լիալուսին,  
Ամռանը՝ թարմացնող գեփյուռ, ծմռանը՝ ծյուն:  
Եթե գլուխդ լցված չէ անօգուտ մտքերով,  
Ցանկացած եղանակ հրաշալի է քեզ համար:**

Չան բուդդայականության հոգևոր վիճակը բնության հետ համահունչ լինելու վիճակն է. մարդը գարնանը հետևում է հարյուրավոր ծաղիկների ծաղկմանը, աշմանը վայելում է անդրորը լիալուսին ներքո, ամռանը գգում է հանկարծ սահող թարմացնող գեփյուռը, իսկ ծմռանը հետևում, թե ծյան փաթիլներն ինչպես են պտտվում ու ծանր իշնում գետնին: Թող ամեն ինչ ընթանա իր հունով, հանդարտ, առանց որևէ արգելքի, և այդ դեպքում «ամեն օրը բարի կիմնի» և «ամեն գիշերը՝ հածելի»: Եթե մարդը կախում ունի մերիտացիայից, ապա շղթայված է այդ մերուդի կապանքներով և չի կարող ազատագրվել: Լին-ծին ասում էր. «Բուդդայականության մեջ կարիք չկա ջանք գործադրել: Եղիր հասարակ մարդ և հատուկ ոչինչ մի՛ արա: Հոգայ բնական կարիքներդ, հագի՞ր շորերդ և կեր ուտելիքդ: Երբ հոգնես, պառկիր: Անտեղյակ մարդիկ գուցե ծիծաղեն ինձ վրա, բայց ինաստունները կիասկանան» («Գու-ցուն-սու-յու-լու», հատոր 11): Եթե ուզում են Բուդդա դառնալ և հասնել Նիրվանայի վիճակի, պետք է հույս չդնես արտադին գործոնների վրա, այլ լուսավորվես անակնկալ կերպով, ինչպես Հուեյ-լենի դեպքում: Մի վանական

հարցնում է Մա-ցուին. «Ինչպե՞ս զարգացնել ճանապարհը»: Մա-ցուն ասում է. «Անհնար է զարգացնել ճանապարհը: Ասում են՝ կարելի է զարգացնել, բայց նույնիսկ եթե դա հաջողվի, այդպես ձեռք բերված ճանապարհը շուտով կանհետանա» («Գու-ցուն-սու-յու-լու», հատոր 1): Ինչպե՞ս կարելի է ճանապարհ հարթել: Դիմնվելով այսպես կոչված զարգացնան գաղափարի վրա՝ մարդը պետք է կարգավորի ճանապարհն իր ջանքերի, այլապես այն, միանշանակ, «ի վերջո կանհետանա»: Յետևաբար, ճանապարհը չի կարելի միտումնավոր որոնել սովորական կյանքից դուրս: Վինայայի վարպետ Յու-Յուանը հարցնում է Յուեյ-Յային. «Արդյո՞ք դու ջանք ես գործադրում ճանապարհի քո որոնումներում»: Յուեյ-Յայը պատասխանում է. «Այո, իհարկե»: Վինայայի վարպետը հարցնում է. «Ինչպե՞ս»: Յուեյ-Յայը պատասխանում է. «Երբ քաղցած են, ուտում են, երբ հոգնած են, քնում են»: Վինայայի վարպետը հարցնում է. «Եվ արդյո՞ք բոլորը նույն ջանքերն են գործադրում, ինչ դու, վարպետ»: Յուեյ-Յայը պատասխանում է. «Ոչ նույնը»: Վինայայի վարպետը հարցնում է. «Ինչո՞ւ»: Յուեյ-Յայը պատասխանում է. «Երբ նրանք ուտում են, մտածում են հարյուրավոր անհրաժեշտ իրերի մասին, իսկ երբ գնում են քնելու, խորհում են հազարավոր տարբեր գործերի մասին: Յենց դրանով էլ տարբերվում են ինձնից»: Յասարակ մարդն ուտում է՝ նախապատվություն տալով սննդի մեջ յուղի առկայությանը կամ բացակայությանը, քնում է՝ մուտք գործելով երևակայության վայրի թրչքների աշխարհ, ունի տարբեր նախապատվություններ ու կապվածություններ և չունի ազատագրվելու հնարավորություն: Նրանք, որոնք իսկապես ճանաչում են Չանը, «պետք է քնեն, եթե քնի կարիք ունեն, և նստեն, եթե նստելու կարիք ունեն», «վայելեն զովը, եթե շոգ է, և կրակի ջերմությունը, երբ ցուրտ է»: Մի վանական ասում է Չառ-Չոռուին (778-897). «Ես հենց նոր եմ մտել մենաստան: Խնդրում են, ուտուցանի՛ր ինձ»: Չառ-Չոռուն հարցրեց. «Կերե՞լ ես բրնձի շիլադ»: «Կերել են», -պատասխանում է վանականը: Չառ-Չոռուն ասում է. «Այդ դեպքում լավ կլինի լվանաս պնակը»: Այդ պահին վանականը լուսավորվում է (Ձի-յուե-լու, հատոր 11): Ուտելուց հետո, բնականաբար, ժամանակն է լվանալ պնակը: Սա այնքան պարզ է: Միայն սրա միջոցով կարելի է խորասուզվել, երբ նստած ես, խորասուզվել, երբ քնած ես, խորասուզվել, երբ հանգստանում ես և խորասուզվել, երբ շարժվում ես: Յետևաբար, թե՛ ուտելը, թե՛ բնական կարիքները հոգալը լավ ճանապարհներ են: Եթե խորասուզումը (մերիտացիա) անհրաժեշտ չէ, կարիք չկա հետևել բոլոր պատվիրաններին: Լու-սի-շենը հարցնում է Յան-շանին. «Դու դեռ պահպանու՞մ ես պատվիրանները, վարպետ»: Յան-շանն ասում է. «Ոչ» («Ու-դեն-հուեյ-յուան», հատոր 9): Լի-առն 772-841 հարցնում է Յան-շանին 751-834. «Ի՞նչ է սիլան [պատվիրաններ], դիյանան [խորասուզում] և պրածնան [իմաստություն]»: Յան-շանն ասում է. «Մենք այստեղ չունենք այդ պարապ բաների կարիքը» («Ձին-դե-չուան-դեն-լու», հատոր 14): Միլան [պատվիրաններ], դիյանան [խորասուզում] և պրածնան [իմաստություն] բուդդայականության «Երեք հմտություններն են», պարտադիր պայման բուդդայականության համար, բայց Չան վարպետները դրանք անօգուտ են համարում: Թվում է՝ այս ժխտումը նշանակում է, որ կիրառվող մեթոդներն անօգուտ են. ուստի, Չան բուդդայականությունը ժխտում է ցանկացած արտաքին և ծևական (ֆորմալ) երևույթ: Չան բուդդայականության այս տեսակետը հիմնված է «ամենօրյա կյանքի միտքը ճանապարհի միտքն է» սկզբունքի վրա: Չկա «ճանապարհի միտք», որն անջատ է ամենօրյա կյանքի մտքից, և նաև կարիք չկա ապել հա-

տուկ կյանքով՝ ամենօրյա կյանքից անդին: Սա գիտակցելու դեպքում ամենօրյա կյանքի ներունակ միտքը կարող է դառնալ ճանապարհի անդրանցական միտք: Եվ ինչպես Ին-շունն է (1906-2005) գրել իր «Զինական չան բուդրայականության պատմություն» գրքում, «Բնությունը թե՛ անդրանցական է (հեռու բոլոր ձևերից, մաքուր ու պարզ մարմնով), և թե՛ ներունակ (ողջ Դիարժան չի կարող տարրերվել բնությունից): Միայն երբ մարդը լուսավորվում է և անցնում այստեղի և հինայի բոլոր սահմաները, միևնույն ժամանակ չի տարրերվում ամենից, լուսավորությունը դառնում է բնության կախարդական հնարք. միայն այդ դեպքում մարդը կարող է մտնել աշխարհի կամ իր կամքով մերժել աշխարհը, վերցնել նյութն ու նրա կիրառությունը, մատերիան ինտերներ սկզբունքների հետ, և ոտքերն ամուր դնել գետնին<sup>79</sup>:

### **8.3 Զինական չան բուդրայականությունը չերկրապագում պատկերները, այլ վիրավորում էր բուդրաներին և հանդիմանում վարպետներին, բայց պնդում էր՝ «Նա, ով լուսավորված է մեկ մտքով, Բուդրա է»**

Հնդկական բուդրայականությունը չի կարող հեռու մնալ հնդկական մշակույթի ազդեցությունից, որը հստակ նշագրել է խորհրդապաշտության բնութագիրը, հատկապես Չակյանունի Բուդրայից հետո: Օրինակ, գոյություն ունի այսպես կոչված քանութ Երկինք և տասնութ դժոխք, որոնց կցված են այլ Երկինքներ կամ դժոխքներ, և կան նաև անթիվ-անհամար Բուդրաներ ու բողիսատվաներ, որոնք օժտված են գերբնական ուժերով: Միանշանակ, այս ամենը կրում է հնդկական ավանդական մշակույթի ազդեցությունը: Նույնիսկ շատ ավելի պարզ Հնդկական Չանը, որը համարվում է «ուսմունքից անդին փոխանցվող», դեռևս առեղծվածային երևույթ է: Ասում են, որ հնդկական Չանի բոլոր 28 վարպետներն օժտված են այսպես կոչված վեց գերբնական ուժերով՝ (1) աստվածային լսողության ուժը, (2) աստվածային տեսողության ուժը, (3) ուրիշների մտքերը կարդալու ուժը, (4) նախորդ կյանքների մասին գիտելիքը, (5) անարգել ֆիզիկական գործողությունները և (6) աղտոտումը վերացնելու ուժը: Նույնիսկ չորս մտահայեցողական վիճակները՝ «հսորասուլզման չորս Երկինքները», որ կիրառում էր հնդկական Չանը, նույնպես շատ առեղծվածային են: Զինական չան բուդրայականությունը Յուեյնենից զգալիորեն փոխվել է Յուեյնենն ասում է. «Իմ մտքում ներքին Բուդրա կա, և ներքին Բուդրան իրական Բուդրան է» (Յարթակի սուտրա): Քիմնվելով սրա վրա՝ Չան բուդրայականությունը դեմ էր գերբնական ուժերին և պատկերներ Երկրապագելուն: «Ու-դեն-հուեյ-յուանն» արձանագրում է. «Դառ-ինը (?-902) «տուն է կառուցում մի վայրի մոտակայքում, որ կոչվում էր Սամ-ֆեն, և մի քանի շաբաթ չի մտնում ճաշասրահ: Դուն-շանը (807-869) հարցնում է նրան. «Վերջերս ինչու՞ չես գալիս ճաշելու»: Դառ-ինն ասում է. «Երկնային աստվածն ամեն օր սնունդ է մատուցում ինձ»: Դուն-շանն ասում է նրան. «Կարծում էի՛ դու մարդ ես, չգիտեի, որ այսպիսի գաղափարներ ունես: Գիշերը արի իմ տուն»: Գիշերը Դառ-ինը գալիս է

79. Ին-շուն. «Զինական Չան բուդրայականության պատմությունը (չինարեն), Թայփեյ, Թայվան. «Ին-վեն» իրատարակչություն, 1987, էջ 375:

Դուն-շանի տուն: Դուն շանը կանչում է՝ Դառ-ինին: Դառ-ինը պատասխանում է: Դուն-շանն ասում է. «Եթե չես մտածում ոչ լավի, ոչ վատի մասին, այդ դեպքում ի՞նչ է մնում անել»: Դառ-ինը վերադառնում ու լուր նստում է: Դրանից հետո Դառ-ինն այլևս չի կարողանում գտնել երկնային աստծուն: Երեք օր անց գաղափարը լիովին անհետանում է Դառ-ինի մտքից» (հատոր 13): Դուն-շանը քննադատում էր Դառ-ինին, որովհետև մտածում էր՝ Դառ-ինի պես մարդն ինչպես կարող էր հավատալ այս առեղծվածային գերբնական ուժերին: Ո՞րմ է «չմտածել ոչ լավի, ոչ վատի մասին» նախադասության իմաստը: Սա Հուեյնենի ուսմունքն է, որ մարդը երբեք չպետք է կապվի սեփական երևակայության արգասիքներին: «Զան-ցուն-ջուանում» [Զան բուդդայականության կենսագրություն] գրված է. «Հուեյ-մինը Հուեյնենից Դիարձա է խնդրում: Հուեյնենն ասում է. «Դու պետք է մոռանաս բոլոր ցանկություները և չիղանաս ոչ լավ, ոչ վատ մտքեր»: Հուեյ-մինն անում է այնպես, ինչպես Հուեյնենն էր ասել նրան: Հուեյնենն ասում է. «Եթե չես մտածում ոչ լավի, ոչ վատի մասին, ապա ո՞րմ է քո նախնական էլուրյունը»: Այս խոսքերը լսելով՝ Հուեյ-մինը լուսավորվում է և խոր երախտագիտությամբ ասում Հուեյնենին. «Ես նման եմ մարդու, որը մի կում ջուր է ընպում և ներքուստ գիտի՝ այն սառն է, թե տաք»: Այսպես կոչված «երկնային աստվածը սնունդ էր մատուցում» նախադասությունն ընդամենը Դառ-ինի պատրանքն էր: Երբ նա հասկացավ դա, պատրանքն անհետացավ, և այլևս անհնար էր գտնել երկնային աստծուն: Մարդն իրապես մարդ է և ունի իր նախնական տեսքը, հետևաբար ամեն ինչում անհրաժեշտ է նկատի առնել մարդուն, և արտաքին անդրանցական ուժերի կարիքն իսպառ կվերանա: «Դարթակի սուտրայում» (8ի-սունի իրատարակություն) կա «Ու-սյան-սուն» [«Բանաստեղծություն ձևերից ազատվելու մասին»] վերնագրով մի բանաստեղծություն.

**Երբ միտքը հանդարտ է, ինչու հետևել պատվիրաններին:**

**Երբ գործողությունը շիտակ է, ինչու դիմել մեղիտացիայի:**

**Եթե երախտապարտ ես, հարգանքով հոգ ես տանում ծնողներիդ մասին,**

**Եթե հնազանդ ես, վերն ու վարդ կարեկից են քեզ:**

**Եթե հարգալից ես, բարձրն ու ցածրը բարեկամաբար ներդաշնակվում են,**

**Եթե հանդուրժող ես, անթիվ-անհամար չար ուժերը չեն անհանգստացնի:**

**Եթե կարող ես փայտ կտրել ու կրակ վառել,**

**Ցեխից կարմիր լոտոսներ կաճեցնես:**

**Կոպիտ խոսքերը, հարկավ, լավ դեղամիջոց են,**

**Եթե ականջ չեն շոյում, անկասկած, ծզգիտ խոսքեր են:**

**Ուղղի՛ սիազներդ, և կզարգացնես իմաստությունդ,**

**Պաշտպանի՛ արատներդ, և կդավաճանես տկար մտքին:**

**Առօրյա կյանքում միշտ դիմիր այլասիրությանը,**

**ճանապարհին հասնելը կապ չունի գումար նվիրաբերելու հետ:**

**Լուսավորությունը պետք է փնտրել միայն մտքում,**

**ինչու առեղծվածներ որոնել դրսում:**

**Լսելով բացատրությունս՝ շարժվիր այս սկզբունքով,**

**Եվ երկինքը կիայտնվի ուղիղ աչքերիդ առաջ:**

Այս բանաստեղծությունը հերքում է ոչ միայն արտաքին առեղծվածային ուժերի գոյությունը, այլևս այսպես կոչված երկնքի և Դժոխքի գոյությունը՝ հավատալով, որ իրական կյանքը պետք է ապրել պարզ և պատասխանատվության զգա-

ցումով, և միայն սեփական Բուդդայի էության (ներունակ հիմնական էություն) միջոցով կարող ես կյանքում այստեղ և հիմա դառնալ Բուդդա: Սա նույն է, ինչ Դահուեյը (1089–1163) ասել է. «Աշխարհիկ կյանքի Դարման Բուդդայի Դարման է և հակառակը» («Դա-հուեյ-փոլ-ջուե-չան-շի-յուլ-լու, հատոր 27):

«Ու-դեն-հուեյ-յուանուն» գրված է. «Երբ Թյան-ժանը (739–824) այցելեց Յուեյլին տաճար, դաժան ցուրտ եղանակ էր, ուստի նա վառեց Բուդդայի փայտե արձանը, որ տաքանա: Տաճարի տեղը բռավեց. «Ինչո՞ւ այրեցիր իմ փայտե Բուդդային»: Թյան-ժանը փայտով խառնեց մոխիրն ու կատակով ասաց. «Այրում եմ, որովհետև շարիրա [մասունքներ] եմ փնտրում»: Տերը հակածառեց. «Բուդդայի փայտե արձանն ինչպե՞ս կարող է շարիրա [մասունքներ] ունենալ»: Թյան-ժանը ծիծաղեց. «Ուրեմն, եթե շարիրա [մասունքներ] չունի, ևս երկու արձան վերցրու և այրիր»: (հատոր 5): Բուդդայի փայտե արձանը պատկեր է. ինչպե՞ս կարող է Բուդդայի շարիրա [մասունքներ] ունենալ: Փայտե Բուդդա այրելը միայն փայտից պատրաստված արձան այրել չէ: Մտքում պատկերի մերժմանը այն գիտակցությունն է, որ «միտքը ներքին Բուդդա ունի, իսկ ներքին Բուդդան իրական Բուդդան է»: Լին-ձին մազգում է Սյոն-էր աշտարակի վերնահարկ, և աշտարակի պահակը հարցնում է նրան. «Դու նախ Բուդդաների՝ առաջ ես ծնկի գալիս, թե՝ վարպետների»: Լին-ձին ասում է. «Ոչ մեկի» («Զին-դե-չուան-դեն-լու», հատոր 12): Չան վարպետները բոլորովին հարգանք չին տածում Բուդդաների ու վարպետների հանդեպ և նույնիսկ վիրավորում էին Բուդդաներին և կշտամբում վարպետներին: Ղեշանն ասում է. «Այստեղ՝ ներքևում, ոչ Բուդդաներ կան, ոչ վարպետներ: Բոդհիդհարման ծեր անազնիվ օտարական է, Շակյամունի Բուդդան կեղտուր աղքի կոյստ է, իսկ Բոդհիսատվա Մանձուսրին և Սամանտարհադրան այն մարդիկ են, որոնք տանում են աղքը («Ու-դեն-հուեյ-յուան», հատոր 7): Ինչպես դիտարկում է Չան բուդդայականությունը, ամեն ոք ներքուստ Բուդդա է, իսկ ուրիշ որտե՞ղ կարելի է գտնել Բուդդային: Նրանք վիրավոր ու հանդիմանում են սեփական մտքում պահած պատկերները, որոնց երկրպագումը միանշանակ կիտչընդուռում է մարդու հիմնական էության զարգացմանը: «Զին-դե-չուան-դեն-լուում» գրված է. «Մեկը հարցնում է Յուայ-հային (720–814). «Ի՞նչ է Բուդդան»: Յուայ-հայն առարկում է. «Ո՞վ ես դու»: (հատոր 6): Նույն գրքում նաև գրված է. «Լին-սունը գալիս է Գույ-ցունի հետ պարապելու և անմիջապես հարցնում է Գույցունին. «Ի՞նչ է Բուդդան»: ...Գույ-ցունն ասում է. «Դու ես»: (հատոր 10): Ամեն մարդ ինքնին Բուդդա է: Ինչպե՞ս կարելի է հարցնել «Ի՞նչ է Բուդդան»: «Ի՞նչ է Բուդդան» հարցը տալով մարդը Բուդդային փնտրում է իր մտքից դուրս: Այնուամենայնիվ, մարդը չաետք է կապվի Բուդդա դարնալու այս գաղափարին: Յուանբոն ասում է. «Եթե Բուդդա ծնես, հենց այդ Բուդդան կխանգարի քեզ»: («Վան-լին-լու» [«Վան-Լիմի արձանագրված ասույթները»]): Եթե մարդն իր մտքում մշտապես կրում է Բուդդա դարնալու գաղափարը, նա չի կարող ապրել բնական կյանքով և այդ որոնումներով ինքն իրեն խանգարում է Բուդդա դառնալ: Մի վանական հարցնում է Դում-շանին, երբ նա վուշ էր կշռում. «Ի՞նչ է Բուդդան»: Դում-շանն ասում է. «Այս վուշը երեք ֆունտ է կշռում» («Ու-դեն-հուեյ-յուան», հատոր 15): Մի վանական հարցնում է Մա-ցուին. «Ո՞րն է Բոդհիդհարմայի՝ Զինաստան գալու մտադրությունը»: Մա-ցուն հարվածում է նրան և ասում. «Եթե չհարվածեն քեզ, նրանք, ովքեր գիտեն ինձ, կծիծաղեն ինձ վրա («Զին-դե-Յուան-դեն-լու, հատոր 6): Դում-շանը հպանցիկ պատասխան է տալիս, վերացնում Բուդդա դառնալու

գաղափարը: Մա-ցուն նույնիսկ փորձում է խանգարել արտաքին բուդդայական Դիարմայի որոնումներին, որովհետև, ինչպես Մա-ցուն էր կարծում, «Բոլորդ պետք է հավատաք, որ ձեր հիմնական միտքը Բուդդան է, իսկ ճիշտ միտքը՝ Բուդդայի միտքը» (մեջբերումը՝ նույն աղբյուրից): Սա Չան բուդդայականության հիմնական ոգին է, ինչպես գրված է «Հարթակի սուտրայում»: «Բուդդայությունը կյանքի է կոչվում սեփական էության մեջ. մի՛ փնտրեք այն մարմնից դուքս: Երբ սեփական էությունը շփորված է, Բուդդան հասարակ մարդ է. Երբ սեփական էությունը զարթոնք է ապրում, յուրաքանչյուր հասարակ մարդ Բուդդա է»: Վերը ընարկվածից պարզ է դառնում, որ չինական չան բուդդայականության կենտրոնական մոքերը կամ հիմնարար առարկան «միտքը վկայելն ու էությունը տեսնելն է» և «էությունը տեսնելն ու Բուդդա դառնալն է»: «Հարթակի սուտրայում» օգտագործված հիմնարար հասկացությունները «միտքն» ու «էությունն (բնություն)» են: «Միտքը» այլ կերպ նաև կոչվում է «մարդու սեփական միտք» (ցի-սին), «հիմնական միտք» (բեն-սին), «մարդու հիմնական միտք» (ցի-բեն-սին), և այլն: «Էությունը» նաև կոչվում է «սեփական էություն» (ցի-սին), «հիմնական էություն» (բեն-սին), «Դիարմայի էություն» (ֆա-սին), «մարդու սեփական Դիարմայի էություն» (ցի-ֆա-սին), և այլն: «Միտքը» և «էությունը» բավական մոտ են իմաստով, և երկուսն էլ վերաբերում են յուրաքանչյուրի ներումնակ կյանքի սուբյեկտիվ ոլորտին: Ի սկզբանե նրանք մաքրուր են ու դատարկ, բայց անցնում են բացառիկ աշխարհի սահմանները. միևնույն ժամանակ նրանց գործողությունները տարբեր են ու բազմազան: Ինչպես ասում է «Հարթակի սուտրան», «Միտքը տիեզերքի չափ ընդարձակ է... ֆիզիկական տարածության դատարկությունը պարունակում է անթիվ-անհամար իրերի գույններն ու ձևերը, արևը, լուսինը և աստղերը, սարերը, օվկիանոսները, գետերն ու հողերը, աղբյուրներն ու վլուակները, խոտերը, ծառերն ու անտառները, լավ ու վատ մարդիկ, լավ ու վատ երևոյթներ, երկինքն ու դժոխքը. այս ամենը տիեզերքում է: Մարդկանց հիմնական էության դատարկությունն աշխարհում նույնպես նման է սրան»: Այն նաև ասում է. «Մարդ արարածների հիմնական էությունն ի սկզբանե մաքրուր է: Բոլոր երևոյթները գալիս են հիմնական էությունից. երբ մտածում ես չար երևոյթների մասին, էությունը վատ վարք է դրսւորում, երբ մտածում ես լավ երևոյթների մասին, լավ վարք է դրսւորում: Այսպիսով, ամեն ինչ գալիս է մեր էությունից, իսկ էությունը միշտ պարզ է»: Լավը և վատը, դրախտն ու դժոխքը, սարերը, գետերն ու հողերը, խոտերը, ծառերը, միջատներն ու ձկները և այլն, այս բոլորը կյանքի են կոչվում քո սեփական էությունից՝ «մտքի մտածական» (սի-լան) գործառույթի միջոցով: Տիեզերքի տիրություն ցանկացած երևոյթի արտաքին տեսքը չի կարող շեղել «ներքին էությունից»: Եթե մարդու «միտքը» շփորված է, նա չի կարող տեսնել «իր սեփական էությունը», ուստի հասարակ մարդ է. Եթե մարդու միտքը միշտ պարզ է, նա «տեսնում է էությունը» և դառնում Բուդդա կամ Բոդհիստավա: «Հարթակի սուտրան» ասում է. «Իմ մտքում ներքին Բուդդա կա, իսկ ներքին Բուդդան իրական Բուդդան է: Եթե չլիներ մտքի Բուդդան, որտե՞ղ է ինք փնտրելու իրական Բուդդային»:

Ինչպես դիտարկում է Չան բուդդայականությունը, մարդու սեփական էությունը (կամ սեփական միտքը) ի սկզբանե ընդարձակ տարածություն է, որտեղ ոչինչ չկա, և սա ճահացու հանդարտություն չէ, ավելին, այն կարող է «մտածել», և ամեն ինչ ծագում է այս «մտքից»: Եթե «մտածելու» այս գործունեությունն անցնում է, այն ազդեցություն չի բողնում մարդու «սեփական էության» վրա, և մար-

դու Էռթյունը միշտ կարող է մնալ պարզ վիճակում: «Մարդու Էռթյունը միշտ պարզ է» արտահայտությունը նման է նրան, որ արևմ ու լուսինը միշտ շողում են, միայն թե երեմն ծածկվում են ամպերով ու ներքևից նայելիս աղոտ են երևում, ուստի մարդը չի կարող տեսնել արևի և լուսինի իրական դեմքը: Եթե իմաստության անակնակալ քամին (Ենթադրվում է, որ սա բանիմաց խորհրդատուի իրահանգներն ու ոգեշնչումն են) ցրում է ամպերը կամ մառախուղը, բնականաբար հայտնվում են մշտապես շողացող արևն ու լուսինը: Սա գրված է «Յարթակի սուտրայում»: «Աշխարհիկ մարդկանց Էռթյունը միշտ սահում է, ինչպես ամպերը երկնքում: Իմաստությունը նման է արևին, ներհայեցողությունը՝ լուսինին. գիտելիքն ու ներհայեցողությունը միշտ թերեւ են, բայց երբ կառչում ես արտաքին առարկաներից, քո հիմնական Էռթյունը ծածկվում է թափառող մտքերի սահող ամպերով, ուստի գրկվում ես թերեւությունից և պարզությունից: Եթե հանդիպում ես հոգևոր բարերարի և իսկապես ծշմարիտ ուսմունք լսում, ազատվում ես շփորձնությոց, աճրոջությամբ պարզվում ես թե՛ ներսում, թե՛ դրսում, և անքիվ-անհամար երևույթներ են հայտնվում քո հիմնական Էռթյան մեջ»: Բանիմաց խորհրդատուն կարող է ոգեշնչել միայն մեկին, բայց միայն մարդուց է կախված՝ նա կլուսավորվի, թե ոչ: «Ի՞նչ է նշանակում ազատագրվել քո իսկ հիմնական Էռթյան միջոցով: Դա նշանակում է, որ կեղծ տեսակետներներ ունեցող, տրտում և անտեղյակ մարդիկ կարող են ազատագրվել միայն ծզգիտ ներհայեցողության միջոցով: Երբ ունենում ես ծզգիտ ներհայեցողություն, ձեռք ես թերում պրածնա [իմաստություն] և հարթահարում մղողությունն ու հիմնարությունը: Այդպես յուրաքանչյուր ոք ինքնազատագրվում է» (Յարթակի սուտրա):

«Բուդդայի Էռթյուն» արտահայտությունը միայն մի քանի անգամ է հանդիպում «Յարթակի սուտրայի» Դուն-հուանի հրատարակության մեջ, իսկ Ցուն-բառ հրատարակության մեջ ավելի հաճախ էր հանդիպում: «Բուդդայի Էռթյունը», որը երկու անգամ հիշատակվել է «Յարթակի սուտրայում», բավական կարևոր է. մեկը չափած Ցուեյնենն էր, որը հորինվեց, երբ նա ուսանում էր իր վարպետի մոտ՝ «Բուդդայի Էռթյունը մշտապես պարզ է», իսկ հաջորդը հորինվեց այն ժամանակ, երբ Ցուեյնենը պատասխանեց Կառավարիչ Վեյի հարցին՝ ասելով. «Տաճարներ կառուցելը, բարեգործությունը, կայունությունը և այլն... իրականում առաջինություն չեն», «առաջինությունը դիարմակայայի մեջ է [ծշմարտության մարմին], և ոչ թե արժանիքի դաշտում. մարդու Դիարմայի Էռթյունը ներքին առաքինությունն է, իսկ ազնվությունը՝ արտաքին առաքինությունը: Երբ մարդը Բուդդայի Էռթյունը տեսնում է ներսից, բնականաբար ակնածանքով է վերաբերվում նրան դրսից»: Առաջին դեպքը ցույց է տալիս, որ «Բուդդայի Էռթյան» հիմքը, որը նույն որակն ունի, ինչ «սեփական Էռթյունը», «մշտապես պարզ է»: Յետևաբար, այսպես կոչված Բուդդայի Էռթյունը «մարդու սեփական Էռթյունն է», մարդ արարածի հիմնական Էռթյունը, որը սուլքեկտիվ բնույց է կրում յուրաքանչյուր մարդու ներքին կյանքում: Երկրորդ դեպքը ցույց է տալիս, որ «Բուդդայի Էռթյունը» «մարդու սեփական Դիարմայի Էռթյունն է», որը նաև բոլորի ներքին Էռթյունն է: Դիմնվելով վերը նշված գաղափարների վրա՝ Զան բուդդայականությունը սահմանեց «միտքը վկայելու և Էռթյունը տեսնելու» և «Էռթյունը տեսնելու և Բուդդա դառնալու» տեսությունը: «Միտքը վկայելն ու Էռթյունը տեսնելը» նշանակում է, որ եթե մարդը կարող է գիտակցել իր սեփական միտքը, կարող է գիտակցել, որ «մարդու սեփական Էռթյունը մշտապես պարզ է»: Յասնել նրան, որ «մարդու սեփական Էռթյու-

Այս մշտապես պարզ լինի», նշանակում է բացահայտել ներքին էությունը՝ անդրանցական Բուդդայի էությունը: Դետևաբար, ծիշտ է, որ «միտքը վկայելն ու էությունը տեսնելը, ինքնուրույն Բուդդայականության ճանապարհին հասնելը» ընկած է «լուսավորության միջոցով իմաստության հասնելու» գաղափարի հիմքում:

Այդ դեպքում ինչպես կարելի է «վկայել միտքն ու տեսնել էությունը»: Չան բուդդայականությունը մատնանշում էր իր սահմանած ուղղակի և պարզ գործնական մեթոդ, այն է՝ «ազատություն մտքից՝ աղբյուրից, ազատություն ծկից՝ նյութից, և ազատություն սևեռումից»: «Դարթակի սուտրան» ասում է.

Անիշելի ժամանակներում այս դպրոցն առաջին անգամ սահմանել է ազատությունը մտքից՝ որպես աղբյուր, ազատությունը ծկից՝ որպես նյութ, և ազատությունը սևեռումից՝ որպես հիմք: Ազատություն ծկից նշանակում է լինել ձևերի մեջ և միաժամանակ անջատվել դրանցից: Ազատություն մտքից նշանակում է լինել մտքերի մեջ և միաժամանակ չունենալ մտքեր: Ինչ վերաբերում է սևեռումից ազատվելուն այն ռեպքում, երբ մարդկության հիմնական էությունը ապրում է աշխարհի մեջ, որտեղ կա լավ և վատ, գեղեցկություն ու տգեղություն, թշնամություն և հարազատություն, բառեր և խոսք, անարգանք և հարձակում, խաբեություն և մրցակցություն, մարդն այս ամենը պետք է համարի դատարկ և չմտածի ոչ փոխհատուցման, ոչ իրեն շրջապատող առարկաների մասին: Երբ մտքերը՝ նախորդ, ներկա ու հաջորդ, անընդմեջ հաջորդում են իրար, սա կոչվում է ստրկություն: Երբ մտքերը մեկը մյուսի ետևից չեն կենտրոնանում իրերի վրա, ստրկություն չկա: Այսպիսով, հիմքը սևեռումից ազատվելն է:

«Ազատություն ծկից» նշանակում է չկապվել որևէ երևույթի հետ (անջատում ծկից), որովհետև հասարակ մարդիկ մշտապես կապվում են երևույթների՝ նյութի հետ: Օրինակ, երբեմն մտածում են, որ մերիտացիայի միջոցով կարող են դառնալ Բուդդա, որը միանշամանակ ենթադրում է կապվածություն մերիտացիայի սովորույթին: Ունաճք, հնարավոր է, կարծում են, որ Բուդդաներին երկրպագելով կարող են Բուդդա դառնալ, ինչը միանշամանակ կապված է Բուդդաներին երկրպագելու սովորույթի հետ: Այս բոլոր գաղափարները «շունչ ու ծև են ստանում, և մարդ կապվում է դրանց»: Այս կապվածությունը կարող է խանգարել մարդու սեփական էությանը, ինչպես անպերն ու մառախուղն են ծածկում պայծառ, ջինջ երկինքը: Երբ մարդն «արտաքին տեսքի մեջ անջատվում է արտաքին տեսքից», նա հանկարծ կարող է տեսնել էության սկզբնական պարզությունը, ծիշտ այնպես, ինչպես քամին քշում է անպերն ու մառախուղը, և բացվում է երկնքի պայծառ, մարդու, ջինջ տարածությունը: Դետևաբար, ազատությունը ծկից ոչ միայն նշանակում է չկառչել ոչ մի երևույթից, այլև նշանակում է չկառչել «մշտապես պարզ սեփական էությունից» և այդ էության հայտնությունից: «Դարթակի սուտրան» ասում է. «Եթե կարողանում ես անջատվել ծկերից ու արտաքինից, բնության նյութը մաքրվում է: Ուստի՝ նյութը ազատությունն է ծկից»: «Ազատություն սևեռումից» նշանակում է, որ սեփական էությունն ի սկզբանե չի սևեռվում մտքերի վրա, այսինքն՝ նախորդ, ներկա և հաջորդ մտքերը հերթագայում են միմյանց, ու եթե մարդը կենտրոնանում է մի առարկայի վրա, միտքն ընդհատվում է: Այսպիսով՝ «միտքը» «կապված է»: «Եթե միտքը չի կենտրոնանում իրերի վրա, հարահու է: Եթե միտքը կենտրոնանում է իրերի վրա, ընդհատվում է» («Դարթակի սուտրա»): Եթե միտքը չի կենտրոնանում, ամեն ինչ անհետ անցնում է. սա ննան է նրան, երբ վայրի սագը սավառնում է ընդհարձակ երկնքում ու բոլորովին հետք չի թողնում,

Կամ սպիտակ էկրանի, որի վրա Փիլմ է ցուցադրվում. Երբ Փիլմն ավարտվում է, էկրանի վրա ոչինչ չի մնում: Միայն այսպես մարդը կարող է ազատվել կապանքներից: Ուստիև, «սևոռումից ազատությունը պետք է դառնա հիմք»: «Ազատություն մտքից» չի նշանակում «բոլորովին չմտածել ոչնչի մասին և ամբողջությամբ ազատվել բոլոր մտքերից» (մեջբերումը՝ նույն աղբյուրից), բայց այս դեպքում առարկաների հետ կապ հաստատելիս արտաքին առարկաները չեն ազդում մտքի վրա, այսինքն՝ «միտքը չի իշխում առարկաների վրա» (մեջբերումը՝ նույն աղբյուրից): «Մտածողությունը» մտքի գործառույթն է, և միտքն առերեսվում է արտաքին առարկաների հետ: Դասարակ մարդկանց մտքերն իշխում են արտաքին առարկաների վրա. Եթե առարկաները լավն են, մտքերն արթնանում ու կառչում են նրանցից. հակառակ դեպքում մտքերն արթնանում ու զայրանում են: Դետևաբար, հասարակ մարդկանց «մտքերն» արթնանում են առարկաների հետ գուգահեռ և շարժվում առարկաների հետ համընթաց, իսկ նմանատիպ «մտքերը» «սխալական մտքեր են», որոնք բխում են ազատությունից գուրկ առարկաներից: «Երբ առարկաները չեն ազդում մտքի վրա» (մեջբերումը՝ նույն աղբյուրից), արտաքին աշխարհը չի կարող անհանգստացնել, ու չնայած մարդն ապրում է աշխարհիկ կյանքով, չի պղծվում ու աղտոտվում, այլ հեշտությամբ գալիս ու անցնում է, մշտապես ունի պարզ էություն և ինքնուրույն հասնում է բուդդայության: «Ազատությունը ծևից», «ազատությունը սևոռումից» և «ազատությունը մտքից», որ քննարկվեցին վերևում, մտքի գործառույթներն են, և անտեղյակն ու տեղյակը միմյանցից տարբերվում են մտքով. հետևաբար, բուդդայության հասմելու համար պետք է հենվել անակնկալ լուսավորականության վրա:

Ըստ Վերը նկարագրված քննարկման՝ կարող ենք եզրակացնել հետևյալը.

Նախ, ի տարբերություն հնդկական բուդդայականության՝ Չինական Չան բուդդայականությունը պատկանում է չինական ավանդական մտքին, և դրա պատճառը «ներունակ անդրանցականությունն է», որը հասուն է նաև չինական կոնֆուցիականությանը և թասական փիլիսոփայությանը: Սուն (960–1279) և Սին (1368–1644) դինաստիաների (հատկապես Լու-Վամի համընդիանությունը մտքի դպրոց) ներկոնֆուցիականության վրա նրա թողած խոր ազդեցության պատճառը նույնպես մտքի «ներունակ անդրանցականությունն» էր: Ըստ ընդունված տեսակետի՝ «ներունակ անդրանցականությամբ» բնութագրվող կոնֆուցիական միտքը մշտապես ձգուում է բարոյական իդեալական անհատականության, որն անցնում է «եսի» սահմանները և դառնում տւրբը: Թառսական փիլիսոփայությունը, որին հատուկ է «ներունակ անդրանցականությունը», ձգուում է հոգևոր բացարձակ ազատության, որն անցնում է «եսի» սահմանները և դառնում «անմահ», իսկ Չան բուդդայականությունը, որին հատուկ է «ներունակ անդրանցականությունը», վայրկենական հավիտենականության մեջ որոնում է առեղծվածային փիճակ, որն անցնում է «եսի» սահմանները և դառնում «Բուդդա»: Այս կետում Չան բուդդայականությունը կարծես կրում է կրոնի ազդեցությունը:

Երկրորդ, չնայած Չան բուդդայականությունը ցույց է տալիս կրոնի ազդեցության նշույներ՝ ազատություն բոլոր արտաքին կապանքներից՝ սուրբ գրքերը երգելուց, մեղիտացիայից, Բուդդային երկրագելուց և այլն, այն անպայմանորեն ենթադրում է իրեն՝ որպես կրոն մերժելը: Սա նշանակում է, որ Չան բուդդայականության աշխարհիկացումը այն դարձնում է հակարունական կրոն, որն ազդեցություն ունի Չինաստանի վրա, և սա մարդկանց մղում է իրականության մեջ իրա-

գործել իրականության սահմաններն անցնելու նպատակը՝ մերժելով դրախտի ու դժոխի գերբնական հասկացությունները, առաջարկելով «աշխարհիկ կյանքի Դիարման Բուդդայի Դիարման է և հակառակը» գաղափարի աշխարհիկ տարրերակը:

Երրորդ, որպես կրոն՝ Չան բուդդայականությունը ոչ միայն խախտում է ավանդական բուդդայականության բոլոր օրենքները, այլև հավատացած է, որ հենվում է ոչ թե արտաքին ուժի, այլ Չան վարպետների՝ բուդդայականության հասնելու ներունակ ինքնաճանաչողության վրա: Դետևաբար, սա «արտաքին անդրանցականությամբ» բնութագրվող կրոնը վերածում է «ներունակ անդրանցականությամբ» բնութագրվող հակակրոնական կրոնի, դադարում է աշխարհից հրաժարվելուց և մուտք է գործում աշխարհ՝ այդպիսով խուսափելով երկվապաշտության հակումից: Արդյո՞ք այս ծևափոխությունը նշանակում է, որ Չան բուդդայականությունը հակված է դուրս գալ ավանդական կրոնական կերպից: Եթե հանգում ենք այս եզրակացության, ապա այն միանշանակ որոշակի առնչություն ունի Չան բուդդայականության պատմության ուսումնասիրության հետ, որը հետագոտում է կրոնների դերը իրական հասարակական կյանքում:

Չորրորդ, ասում են՝ Չինաստանում գոյություն է ունեցել ավանդույթ, որը խիստ շղթայում է մարդկանց միտքը: Այդ դեպքում կարո՞ղ ենք ասել, որ դեռևս կան ռեսուրսներ, որոնք կարելի է օգտագործել՝ մարդկանց մտքերը շղթայող ամեն ինչ վերացնելու համար: Եթե կան նման կարևոր ռեսուրսներ, ապա Չան բուդդայականությունը թերևս դրանցից մեկն է: Չան բուդդայականությունը ժխտում է բոլոր արտաքին կապանքները, վերացնում է կապվածությունները, քայլքայում ավանդական և իրատեսական իշխանություննը, և թույլ տալիս, որ բոլորն ականց դնեն իհմնական մտքին. հենց այսպես մարդը կարող է տիրապետել իրեն: Այս լայնախոհությունը շատ արժեքավոր է Չինաստանի ֆեոդալական բռնակալական հասարակության շրջանում և արժանի է մեր ուշադրությանը: Անշուշտ, Չան բուդդայականությունն իր իշխանությունը կառուցում էր «եսի» ներունակ սուրբեկուիվ իհմքի վրա և լրացնում «եսի» անսահման անդրանցական ուժը, և մարդն էլ իր հերթին կարող էր դարձյալ կապվել «եսի» ներհատուկ սուրբեկուիվ թյամբ. սա, թերևս, Չան բուդդայականության անխուսափելի հակասությունն է:

Յինգերորդ, Չան բուդդայականության գաղափարախոսական համակարգը, որին հատուկ է «ներունակ անդրանցականությունը», ակնհայտորեն սուրբեկուիվ է և անխուսափելիորեն հանգեցնում է ցանկացած օբյեկտիվ չափանիշի ու իհմնավորման հերքմանը, որը վնասում է արտաքին աշխարհի ուսումնասիրությանը և օբյեկտիվ ու ծանրակշիռ հասարակական համակարգի և հրավական կարգի հաստատմանը, և որոշ թերություններ ունի տիեզերքի և մարդկային կյանքի հանդեպ հոգատարության առումով: Դետևաբար, մենք կարող ենք լուրջ իհմնախնդիր բարձրացնել. արդյո՞ք հնարավոր է կառուցել ավելի լավ փիլիսոփայական համակարգ, որը կմերանի միտքը, որին բնորոշ է «ներունակ անդրանցականությունը», և միտքը, որին բնորոշ է «արտաքին անդրանցականությունը»: Կարծում են՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այս իհմնախնդիրին չինական փիլիսոփայության զարգացման ոլորաններում:

Վեցերորդ, եթե հնարավոր է կառուցել չինական փիլիսոփայական համակարգ, որը պարունակում է մտքեր թե՝ «ներունակ անդրանցականության» և թե՝ «արտաքին անդրանցականության» մասին, ապա արդյո՞ք հնարավոր է չինական

ավանդական փիլիսոփայության մեջ գտնել «արտաքին անդրանցականության» ռեսուլտսեր: Կարծում եմ՝ չինական ավանդական փիլիսոփայությունն ունի այդպիսի ներուժ: Կոնֆուցիոսի միտքը երկու կողմ ունի. մի կողմից, նա պաշտպանում էր «մարդու գրասրտությունը, որի աղբյուրը հենց մարդու մեջ է» (Տարեգրքեր, 12.1) և «մարդը կարող է վեհացնել ճանապարհը, և ոչ թե ճանապարհ՝ մարդուն» (Տարեգրքեր, 15.29) գաղափարները, որոնք կարելի է համարել «ներունակ անդրանցականության» առանձնահատկություն. մյուս կողմից, նա պնդում էր, որ մարդը պետք է «վախենա երկնքի կամքից, վախենա մեծ մարդկանցից և վախենա աստվածային իմաստունների խոսքից» (Տարեգրքեր, 16.8), ինչը կարելի է համարել «արտաքին անդրանցականության» առանձնահատկություն կամ առնվազն առաջարկություն: Ուշ շրջանի կոնֆուցիականությունը զարգացրել է առաջին գիծը՝ միևնույն ժամանակ բոլորովին չանդրադառնալով երկրորդին: Արդյո՞ք հնարավոր է կառուցել չինական փիլիսոփայական համակարգ, որը ներառում է Կոնֆուցիոսի մտքերը թե՝ «ներունակ անդրանցականության» և թե՝ «արտաքին անդրանցականության» մասին՝ զարգացնելով ու համադրելով Կոնֆուցիոսի մտքերի այս երկու կողմը: Իմ կարծիքով՝ այս հիմնախնդիրն արժանի է մեր ուսումնասիրությանը: Մեկ այլ փիլիսոփա՝ Մո-ցին, որը ծնվել է Կոնֆուցիոսից կարծ ժամանակ անց, և որի փիլիսոփայությունը բնութագրվում է «արտաքին անդրանցականությամբ», իր փիլիսոփայության մեջ ներառում է միմյանց հետ կապակցված երկու հայեցակերպ՝ «ամենակոլ սերը», որպես մարդկային հոգու գործոն, և «Երկնքի կամքը»՝ որպես կրոնական գործոն: Թվում է՝ փոքր-ինչ հակադրություն կա երկու կողմերի միջև, բայց իրականում «ամենակոլ սերը» «Երկնքի կամքի» հիմնարար սկզբունքն է. հետևաբար, «Երկնքի կամքը» Մո-ցիի մտքերի միջուկն է: Մո-ցիի «Երկնքի կամքը» նշանակում է, որ «Երկինքն» ունի կամք, որն ամեն ինչ դատելու գերազույն և վերջնական չափանիշն է, կարող է պարզևատրել բարին և պատժել չարը. այն մարդուց դուրս անդրանցական ուժ է, կամ, այլ կերպ ասած՝ օժտված է ակնհայտ «արտաքին անդրանցականությամբ»: Դետևաբար, ուշ մոհիսատական դպրոցն առաջարկում էր գիտական հայեցակերպ և շարժվում էր տրամարանության և ճանաչողության օրենքներով, բայց ցավոք Պատերազմող պետությունների ժամանակաշրջանից հետո (նթա. 403-221) այս մտքերը զարգացում չունեցան Չինաստանում: Արդյո՞ք հնարավոր է օգտագործել Մոհիստական միտքը որպես ռեսուլու՝ կառուցելու համար չինական փիլիսոփայական համակարգ, որը պարունակում է մտքեր թե՝ «ներքին անդրանցականության», թե՝ արտաքին անդրանցականության մասին: Կարծում եմ՝ մենք կարող ենք ուսումնասիրել նաև այս հիմնախնդիրը:

## ԳԼՈՒԽ 9

## Հնդկական բուդրայականության ներմուծումը Չինաստան. համեմատական փիլիսոփայության և համեմատական կրոնի ուսումնասիրությունների նշանակության հեռանկար<sup>80</sup>

Այս գրքում ես նպատակ չունեմ վերլուծել կամ ուսումնասիրել հնդկական բուդրայականության Չինաստան մուտք գործելու ողջ պատմությունը, փոխարենը ցանկանում եմ պարզապես ուսումնասիրել հարաբերությունները, որ գոյություն ունեին բուդրայականության և Չինաստանում այդ ժամանակ արդեն իսկ գոյություն ունեցող գաղափարախոսությունների և մշակույթների միջև այն բանից հետո, եթե Վեյ և Չին ժամանակաշրջաններում և Յուսիսի ու Յարավի դինաստիաներում բուդրայականությունը ներմուծվեց Չինաստան, ինչպես նաև նկարգրել համեմատական փիլիսոփայության և համեմատական կրոնների ուսումնասիրության նշանակությունը:

### 9.1 Հնդկական բուդրայականության ներմուծումը Չինաստան և Պրաջնա ուսմունքների [բո-ժե ցյուե] դպրոցի մասսայականացումը Վեյ և Չին ժամանակաշրջաններում

#### 9.1.1 Բուդրայականության սկիզբը Չինաստանում

Բազմազան տեսություններ կան այն մասին, թե բուդրայականությունը երբ է Հնդկաստանից մուտք գործել Չինաստան: Սակայն բոլոր տեսություններն էլ պնդում են, որ բուդրայականությունը ներմուծվեց այն ժամանակ, երբ Արևելյան Չան դինաստիայի կայսր Մինդին Յունփինում իր կառավարման ընթացքում (նթ. 58-75) պատվիրակ ուղարկեց արևմտյան հողեր՝ բուդրայական ուսմունքներն ուսումնասիրելու: Ըստ ավելի վաղ տարածված ավանդության՝ գործակալ Չան Սյանը, որին ուղարկել էին արևմտյան հողեր, լսել էր ֆոռութուի (Բուդրա) ուսուցման մասին, և Ղաժառջիի միապետը նրան պատվիրել էր պահպանել և փոխանցել ֆոռու ծինի (Բուդրայի դասական երկերը կամ սուտրան) ուսմունքները: Նույնիսկ սա հաշվի չառնելու դեպքում, համոզված են, բուդրայականության՝ Չինաստան ներմուծվելուն նախորդել էր Յունփինի թագավորության կայսերական պատվիրակի գրոծուղումը՝ բուդրայական ուսմունքները որոնելու նպատակով: Յունփինի կառավարման ուր տարիների ընթացքում կայսր Մինդին վճիռ արձակեց, որ մահապատժի դատապարտված հանցագործները կարող են քավել իրենց մեղքերը, եթե ծյան ճահուղ հանձնեն պետությանը՝ այդպիսով խուսափելով մահվան դատապահի իրականացումից: Մինդին եղբայրը՝ արքայազն ինը, 30 հակ ծյան ուղարկեց, իսկ կայսրն արձակեց հետևյալ բացատրական հրովարտակը.

80. Թաճ Իձեն, «Համեմատական փիլիսոփայության և համեմատական կրոնի ուսումնասիրության նշանակությունը. հնդկական բուդրայականության մուտքը Չինաստան: «Ձեսյուե Լունցուն» [Փիլիսոփայական տրամասությունների ժողովածու], համար 8, օգոստոս, 1983, 272-301 էջեր:

Չուի արքայազն Ինը պատմել է Յուանի և Լաոյի Յուանդին կամ Դեղին կայսր, և Լաոցին (Լառ Ցու) հարգված են՝ որպես դասուզօմի փիլիսոփայության և մասնավորապես նրա այսպես կոչված Եզրերիկ կամ անմահ դպրոցի հիմնադիրներ – Թարգմ. ծան.] ստույգ ուսմունքների մասին և երկրպագել է Բուդդայի բարեգործ սրբավայրը: Նա ինքնամաքրում է սկսել և երեք ամիս պաս է պահել՝ կատարելով աստվածներին տված իր երդումները: [Չինական բուդդայական համատեքստում պաս պահելը ոչ միշտ է նշանակում ամբողջությամբ հրաժարվել սննդից, այլև սովորաբար վերաբերում է խիստ բուսական սննդակարգին, կենդանու կյանքը խվելուց խուսափելուն և հայտնի է ցայծե անունով, Թարգմ. ծան.]: Նա ապաշխարել է և պետք է ընդունել, որ քավել է ցանկացած հանցանք, որ գուցե գործել է, կամ ազատվել է ցանկացած կասկածից, որ գուցե հարուցել է: Այժմ նա ապաշխարության միջոցով իր ունեցվածքը նվիրաբերում է Ուպասակայի [բուդդայականության աշակերտներ] մեջ տոնին՝ ի փառ Բուդդայի տաճարների:

Այս փաստը, որ արքայազն Ինը երկրպագում էր միաժամանակ Յուանդին, Լաոցին (Լառ Ցու) և Բուդդային, ապացուցում է, որ բուդդայականությունը ներմուծվել էր Չինաստան դեռևս Յունֆինի թագավորության ութերորդ տարուց առաջ: Յետևարար ժամանակագրական արումով սինալ է Յունֆինի թագավորության շրջանում բուդդայական ուսմունքներին հետամուտ լինելու նպատակով կայսերական պատվիրակին ուղարկելը համարել Չինաստանում բուդդայականության ներմուծման սկիզբ: Մինչեւ, չնայած բուդդայականությունը Չինաստան մուտք գործեց այդ իրադարձությունից հետո, ընդիհանուր առնամբ գուցե ճիշտ է, որ բուդդայականությունը Չինաստանում որոշակի ազդեցություն ծեռք բերեց միայն Յունֆինի թագավորության ընթացքում և նույնիսկ դրանից հետո: Չինաստան մուտք գործելուց հետո բուդդայականությունն ազդեցության գագաթնակետին հասավ միայն Արևելյան Չին դինաստիայում՝ մինչ այդ անցնելով տարածման ու զարգացման մի քանի նշանակալի փուլ:

Արևելյան Չան դինաստիայի տարիներին բուդդայականությունը Չինաստանում տարածվում էր՝ որպես այն ժամանակ հանրաճանաչ դասուական մի շարք ճյուղերից մեկը [Դառշուլ]: Դասուական ուսմունքներն ու պրակտիկան մեջ մասսայականություն էին վայելում Արևմտյան Չան դինաստիայի սկզբից և նորածն էին երկու Չան դինաստիաների ընթացքում: Այդ ժամանակ դասուական բոլոր ուղղությունները՝ թե՝ Յուանդիի և Լաոցիի (Լառ Ցու) [փիլիսոփայական] ուսմունքները, թե՝ կախարդների մոգական վարպետությունը, հայտնի էին դառշուլ անունով [Դառսուական հմտություններ կամ տեխնիկա]: Կախարդների դասավանդած և կիրառած տեխնիկան ներառում էր մի շարք ոլորտներ՝ սրբավայրերի և տաճարների երկրպագում, տոհմական երկրպագություն, միջոցներ անմահության և երկարակեցության համար և այնպիսի մեթոդներ, ինչպիսին ծյուշին [ինուատեսություն]: Ըստ «Հոռո Չան շուու» [Չան դինաստիայի ուշ շրջանի պատմություն] գործի «Ֆանշու ջուան» [Մոգերի կենսագրությունները] գլխի՝ այն ժամանակ բազմաթիվ մարդիկ ուսումնասիրում էին զանազան երևույթներ և բազմաթիվ դպրոցների ուսմունքներ, ինչպիսիք են «Քայերի հաշվարկը՝ ըստ Ինի և Յանի», «Չեի և Լույյի գրերը» [Յուան Չե կամ Դեղին գետը և Լույ գետը], «Կրիայի և վիշապի գծագրերը», «Զի Ցի մեթոդները», «Վեյի [լայնություններ] և Յոուի [եղանակներ] գիրքը», «Զանգերի հմայիլ-գծագրերը» և «Շի Քուանի գիրքը», ինչպես նաև այնպիսի տեխնիկական միջոցներ, ինչպիսիք են «Քամու եղջյուր», «Փոխարկում և փո-

խաղորում», «Յոթ ճանապարհ», «Յիմնական և նախնական շնչառություն», «Վեց օրվա յոթ բաժանումները», «Պատահական հանդիպումների գուշակություն», «Օրվա նախանշանը», «Վճռականություն և յուրահատկություն», «Վայրկենականություն», «Մենություն և դատարկություն» և այլն: Յետևայլ հատվածը բացատրում է այդ ժամանակների դառսական պրակտիկայի և մեթոդների տարածման պատճառը.

Յան դինաստիայում, երբ Վուի կայսրն իր բարեհաճությունն արտահայտեց դառսականների մեթոդների և հմտությունների նկատմամբ, ողջ երկրի գիտնականները, որոնք տիրապետում էին առնվազն այս առարկաներին, չեն կարող չօգտվել այդ առավելությունից: Նրանք հավաքվեցին բազավորական արքունիքում՝ յուրաքանչյուրն իր հետ բերելով իր գրքերը և ձեռք սեղմելով միմյանց հետ [ի նշան ողջույնի]: Այնուհետև Վան Մանը [«Զավթիչը»], որ գահընկեց արեց Յան կայսերը և հիմնեց կարճաժամկետ Սին դինաստիան մթ. 8-23 թվականներին, Թարգմ. Ժան.] գրավեց գահը՝ անօրինական ճանապարհով գաղտնի ստանձնելով իշխանությունը թալիսմանների օգնությամբ: Ավելի ուշ պարզվեց, որ Գուանութիւնի կայսրը [մթ. 25-57թթ.] նախանշանների ու գուշակների սիրահար է և հավատում է դրանց: Այսպիսով, գիտնականները, որոնք սովորել էին ուշադրություն դարձնել նորածն մեթոդներին, ջանում էին մրցել միմյանց դեմ այդ տեխնիկական միջոցների, հմտությունների և գաղափարների տիրույթում: Յնարավորության դեպքում նրանք իրենց ունակությունները ներկայացնում էին նորին մեծության ուշադրությանը և երբ կարողանում էին, քննարկում էին այդ երևույթների հիմնավորությունն ու հարաբերական առավելությունները:

Ըստ այդ օրվա արձանագրությունների՝ «Յուան-Լաոն» և Բուդդան հավասարապես համարվում էին դառսական տեխնիկայի կրողներ: Յանսիում Յուանդի կայսեր (166) թագավորության իններորդ տարում Սյան Չայը հիշատակեց կայսեր՝ ասելով.

Լսել ենք, որ Յուան-Լաոյի և Բուդդայի սրբավայրեր են կառուցվել պալատում: Նրանց ուսմունքները մարդկանց հորդորում են մաքրագործել միտքը և խաղաղեցնել հոգին. նրանք իրենց արժեքներում մեծ տեղ են հատկացնում անգործության ու հանգստությանը, նրանք ընդգծում են կյանքի արժեքը և նողկում սպանությունից: Նրանք մարդկանց հորդորում են սահմանափակել իրենց ցանկությունները և մաքրագործվել ցոփ ու շվայտ կյանքից: Բայց Չերդ Գերազանցությունը չի հրաժարվել ոչ ցանկությունից, ոչ գեխությունից, իսկ մարդկանց սպանելու և պատժելու սովորություններն անցնում են բանականության սահմանները: Եթե խախտել ես նրանց օրենքը, ինչպես կարող ես սպասել, որ կստանա նրանց իշխանությունը:

Նույնիսկ բուդդայականության աշակերտներն իրենց սեփական ուսմունքները համարում էին դառ (թառ) [ճանապարհ]: «Լի Յու Լունում» [Սխալի տեղաբաշխման տրամասություն], Մոուցին գրում է. «Գոյություն ունի մարդու իննասունվեց տեսակ, որոնք հարում են Դառյի ուսմունքին. նրանցից ոչ մեկը Բուդդայի ուսմունքներից ավելի մեծ կամ ավելի մեծարված չէ»: «Սիշի՛ Չան Չինը» [Քառասուններկու գլուխների սուտրա] [սուտրա, որը հաճախ վերագրվում է Կասյապա Մարանգային և Գրիհարանային՝ առաջին հնդիկ վանականներին, որոնք «պաշտոնապես» ժամանեցին Չինաստան՝ որպես բուդդայական պետության պատվիրակներ – թարգմ. Ժան.] նաև իր սեփական ուսմունքներն եր կոչում ֆողառ կամ

Բուդդայի ճանապարհ]: Ավելին, այդ ժամանակի բուդդայական ուսմունքները պարունակում էին տարրեր, որոնք համընկնում էին կամ նմանություններ ունեին չինական դառասական ուսմունքների հետ, օրինակ, նրանք, որ կիրառվում էին դասավանդման ընթացքում:

Արհանը [արժանավոր մարդիկ կամ սրբերը] կարող են սավառնել և ի վիճակի են կերպափոխվել. նրանց երկարակեցությունը կալպա [տարիք] է, այսինքն՝ անցյալ, և նրանք ապրում ու շարժվում են երկնքի ու երկրի երկայնքով («Սիշէ՛ Զան Չին», գլուխ 1) և. նրանք, որ սովորել են ճանապարհը, պետք է մաքրագործեն իրենց միտքը կեղտից և անմիջապես կդառնան անարատ ու մաքուր (գլուխ 35):

Այս ժամանակներում բուդդայական սուտրան շատ մոտ էր Յուան-Լաոյի դատական դպրոցի (թառոսիզմ) «անմահության ուսմունքներին»:

Այն ժամանակ բուդդայական ուսմունքները հիմնականում կազմված էին այնպիսի երևույթներից, ինչպիսիք են «հոգու կամ ոգու մշտնջենականությունը», ինգուն լպատճառներն ու ազրեցությունները՝ որպես իրերի զարգացում հասկանալու հիմնական մեթոդ] և բարին [հատուցում]: Օրինակ, «Յուու Զան Չի» [«Զան դինաստիայի ուշ շրջանի ժամանակագրություն»] գրքում Յուան Յունը գրել է.

Ըստ [Բուդդայականության] երբ մարդը մահանում է, ոգին չի մեռնում, այլ հետագայում նոր տեսք է ձեռք բերում: Կյանքում գործած բոլոր արարքների համար՝ լավ կամ վատ, կա հատուցում: Յենց այդ պատճառով մարդը պետք է արժևորի լավ քայլերի իրագործումն ու դառյի զարգացումը, որպեսզի շարունակի պահպանել իր գոյությունը՝ կրիելով հոգին այնքան, մինչ հասնի ուվեց լանգործություն կամ հանգստությունը ոլորտ, և այդ պահին մարդը կդառնա Բուդդա:

Սա էր այն գաղափարը, որ նախկինում գոյություն ուներ Չինաստանում: Չինական տարրերակում հոգու մշտնջենականության գաղափարն արտահայտվում էր «յու գուեյ լուն» [ուրվականների գոյության տեսություն] հնագույն գաղափարով: «Վեն Վան» [Վեն արքա] բանաստեղծությունը «Չի Չին» [Դասական ներբողեր] գրքի «Դա յա» բաժնում նկարագրում էր «Երեք հողուի [երկրորդական կամ մարդկային անկախ ոգի] գոյությունը Երկնքում» և [մահկանացուների]: նույր ոգիների և ուրվականների՝ [ծին լին] այդ ոլորտ համբարձվելը: «Զուանցի» գրքի «Յան շեն ջու» [Կյանքի գլխավոր ուսուցիչ] գլխում մի առակ պատմում է, թե «բոցը չի հանգչում, չնայած պատրույգն այրվել է», իսկ «Յուայ Նան Ցի» գրքի «Չին շեն սուն» [Ոգու հորդոր] գաղափարը պնդում էր, որ «ձևն, անշուշտ, ունի իր սահմանափակումները, բայց հոգին չի քայլավում: Յետևաբար, [հոգու և ձևի հարաբերությունն այնպիսի հարաբերություն է, որում] այն, ինչ չի քայլավում, հարմարվում է նրան, ինչ քայլավում է. արդյունքում առաջ են գալիս հարմարեցման նմանատիպ անթիվ-անհամար օրինակներ. անհնար է չնկատել փոփոխության և վերադասավորման այս միջոցները»: Յենց այս մտքի գերակայության և նրա արձագանքի պատճառով է, որ ընդիմախսուները, օրինակ՝ Յուան Թանը, պաշտպանում էին «ձևի և ոգու համաժանանակյա քայլայման» տեսությունը, իսկ Վան Չունն առաջարկում էր, որ «մահից հետո մարդը չի կերպափոխվում ուրվականի»: Կերպիններս քննադատում էին «հոգու մշտնջենականության գաղափարը»: Գաղափարը, որ հոգու կամ ոգու մշտնջենականությունն ինքնին կախված է կոփելու և զարգացնելու վարժություններից [առեղծվածային կամ մետաֆիզիկական միջոցներով], արդեն իսկ գոյություն ուներ Չինաստանի ավանդություն: Ինչ վերաբերում է պատճառների, ազրեցությունների և հատուցման գաղափարնե-

րին, բուդյայականության այս տեսություններն ընդհանուր առնամբ լրիվ նման չեն նախկինում գոյություն ունեցող չինական տեսություններին. նրանց տարածված ձևերը Յան դինաստիայում համապատասխանում էին որոշ գաղափարների, որոնք չինացիները կրում էին արդեն այն ժամանակ. դրանցից են «Կուն Գուայի» [Փոփոխություններ կնոջ խորհրդանշի միջոցով] «Ի Չին» («Ի Չին») [«Փոփոխությունների գիրք] բաժինը, ըստ որի «բարի բախտը կժպտա նրանց, որոնք կատարում են լավ արարքներ, իսկ դժբախտությունը կայցելի նրանց, որոնք չար արարքներ են գործում» կամ որ «ընտանիքը, որ կուտակում է բարի գործեր, կպարզնատրվի տոնելու բազում առիթներով, մինչդեռ այն ընտանիքները, որոնցում հավաքվել են չար արարքներ, տառապանքի բազմաթիվ պատճառներ կունենա»:

Յանց վեյ դինաստիաների անցման շրջանում բուդյայականության աստիճանական տարածման շնորհիվ ավելի ու ավելի մեծ թվով բուդյայական սուտրաներ էին բարգմանվում չինարեն: Այդ ժամանակ բարգմանվում էին թե՝ Յինայանա [Թերավեդական, որ չինարենում հայտնի է այս չեն անունով] թե՝ Մահայանա [Դա չեն] սուտրաներ: Ուստիև, միջոցները, որոնցով բուդյայականությունը մասսայականություն էր վայելում Չինաստանում, բաժանվեցին երկու հիմնական ուղղության՝ Ան Շիգա դպրոցի պատմությունը, որ պատկանում էր Յինայանա կարգին, և Զի-լու-ծայցան դպրոցը, որ պատկանում էր Մահայանային և ընդգծում էր պրածնայի [իմաստություն] ուսմունքը:

### 9.1.2 Ան Շիգան Յինայանա դպրոցից

Այս ուղղությունն ընդգծում էր դիյանայի [մեղիտացիայի վարժություններ, չինարեն՝ չան] ուսուցումը: Յան դինաստիայի Յուանդի կայսեր՝ Չյանհեում թագավորելու առաջին տարում [մթ. 147] Ան Շիգան ժամանեց Լույյան և սկսեց սուտրաներ բարգմանելու իր բեղմնավոր գործունեությունը: [Ան Շիգան բուդյայական գիտնականի չինարեն անունն է. նա Պարթևատանից կամ Պարսկաստանից մեկնեց Չինաստան: Ան անունը բարգմանաբար նշանակում է հանդարտություն և թերևս առաջացել է վանականի պարսկական ինքնությունից, քանի որ այն ժամանակ և Չինաստանի պատմության գգալի հատվածում Պարսկաստանը չինարենում հայտնի էր Անշիգուռ կամ Յանդարտության երկիր անունվ: Վանականի պարսկերեն անունը մեզ հայտնի չէ: Թարգմ. ծան.]:

Նրա բարգմանություններից ամենաազդեցիկները «Ան Բան Շոու Ի Չինը» [Սուտրա մտքի պահպանման մասին՝ ըստ Անապանայի պրակտիկայի] և «Ին Չի Ժու Չին» էին: Առաջինը նկարագրում էր չանը գործնականում կիրառելու մեթոդը կամ մեղիտացիայի (խորասուզում) վարժությունները. գիրքը նվիրված էր շնչառական մեթոդներին, որոնք ստեղծված են «մարդու մտքերը պահպանելու նպատակով». մեթոդներն ինչ-որ չափով նման էին շնչառությանը, շնչառական վարժություններին և տեխնիկային, որոնք պաշտպանում էին դառսականները և մասնավորապես Անմահների դպրոցը: Վերջին սուտրան բուդյայական կանոններում անունների և թվերի եղորդերիկ կարևորության ապացույցն էր և ինչ-որ չափով նման էր դասական երկերի տող առ տող, արտահայտություն առ արտահայտություն մեկնաբանությանը. գիտական այս մեթոդը հայտնի է ջանջու սյուե անունով: Սա կիրառվում էր ընդհանրապես Յան դինաստիայի բազմաթիվ կոմֆուցիա-

կանության գիտնականների կողմից կոնֆուցիական դասական երկերի նրանց բազմաթիվ ծանոթագրություններում և մեկնարանություններում, երբ նրանք հաճախ փորձում էին գտնել սուրբ գրքերի բարերի տակ քողարկված «Ճշնարիտ» իմաստները:

Չինայանայի սուրբ գրքերի ուսումնասիրության այս մեթոդաբանությունը շարունակվեց Ան Շիգաո դպրոցում մինչ առնվազն նրա աշակերտների երրորդ սերունդը, որոնցից աչքի էր ընկնում հատկապես վանական Բան Յուեյը [Քան Զեն Յուեյ]. նա ապրում էր Ու թագավորության ժամանակաշրջանում: Այս դպրոցի կյանքի տեսությունը գերազանցապես հիմնված էր յուանցի [նախնական շնչառություն] հասկացության վրա: Այն հաստատում էր, որ «նախնական շնչառությունը» նույնն էր, ինչ չինացիները կոչում են ու սին [իինգ տարր կամ իինգ գործոն] կամ ու ին [Կոնց հատկանիշների հինգ բացասական կողմերը] [ավելի ուշ սա ներմուծվեց բուդդայական տերմինարանություն՝ որպես ու ին կամ Յինգ Օերքին բուվանդակություն, որն իմաստով և ինքնությամբ նման է սանսկրիտի սկանդիհաս եգորույթին. դրանք նույնպես հինգն էին. Թարգմ. ծան.]: «Յասնել ճշնարտության՝ գաղտնի աջակցության միջոցով» սուտրան ու ին ջունը [իինգ ին տեսակները] բացատրում էր հետևյալ կերպ.

Չինգ ին տեսակները կազմում են մարմինը... սա նման է նախնական շնչառությանը [յուանցի]... նախնական շնչառությունը բոլոր երևույթների վերելքն ու վայրէցքն է, ինչպես նաև հաստատումն ու կործանումն: Երբ հասնում է ավարտին, վերսկսվում է և շարունակում անցնել տրիլոկայի [Երեք ոլորտ] միջով. այն չի ավարտվում, անսահման է, այդ պատճառով էլ կոչվում է ջուն [տեսակներ կամ սերմ]:

Բուդդայականության այս տեսակը հավատում էր, որ սկզբում մարդ արարածը կազմված էր հինգ ինի [տարր] կուտակումից և միացությունից. այսպիսով Ան Շիգաոյի թարգմանած «Յասնել ճշնարտության՝ գաղտնի աջակցության միջոցով» սուտրան հաստատում էր, որ «ինը ամեն ինչի արտաքին տեսքն է»: Յուանցիի տեսությունը [նախնական շնչառություն] տարածված էր Չինաստանում դեռևս 8ինցից առաջ և ծաղկում ապրեց երկու Յան դինաստիաներում: Ավելին, սերտ կապ կար նախնական շնչառության և ծե-ոգի հարաբերության հիմնախնդրի միջև, քանի որ տարածված կարծիք կար, որ եթե ծեր չուցի է [չիղկված շնչառություն], ապա ոգին ծինցի է [իղկված շնչառություն]: Այս տեսությունը սերտորեն կապված էր յանշենի [կյանքի եռթյան զարգացում և սնուցում] հետ, որը պաշտպանում էր Աննահության դպրոցը:

«Լյու Շի Ջունցյու» գրքում [Գարնան և աշնան դասական երկ վարպետ Լուի հեղինակնամբ] ապացուցվում է, որ անմահ դառնալու և ծյու շիի [իեռատեսություն] հասնելու համար ցին կամ շնչառությունը պետք է շրջանառվի առանց մարմնում որևէ տեսակ խոչընդոտի. միայն այդ դեպքում «իղկված շնչառություն» ունեցող ոգին ամեն օր կերիտասարդանա, իսկ չար շնչառությունն ամեն օր կրուլանա», այդպիսով «ոգին ծեկ մեջ ծեռք կրերի խաղաղություն, և մարդու օրերն ու տարիները կծգվեն մինչև անվերջություն»: Այդ ժամանակ Ան Շիգաոյի բուդդայական դպրոցի հետևողաբար նաև սովորում էին միավորել հինգ ինի և յուանցիի գաղափարները և պնդում, որ եթե մարդն ի վիճակի լինի համակարգել իր նախնական շնչառությունը, միտքը կլինի հանդարտ, անկաշկանդ, իսկ մարմինը կագատվի իիվանդություններից. եթե նախնական շնչառությունը ծիշտ չհամակարգ-

վի, և Եթե մարդու ներսում ինն ու յանը և հինգ տարրերը [ուսիմ] պատշաճ կերպով չմիախառնվեն, մարմինը կպարտվի հիվանդությանը: «Ֆո Ի Զինը» [Բուդդայի բժշկական սուտրա], որ Ու թագավորության ընթացքում թարգմանվել է Չու Լույանի և Չի Յուեի կողմից, ասում է.

Մարդու մարմնում կա չորս հիվանդություն. մեկը կապված է Երկրի, մյուսը՝ Զրի, երրորդը՝ Կրակի, չորրորդը՝ Քամու հետ: Երբ Քամին ուժգնանում է, ցինը [շնչառություն] բարձրանում է. Երբ Կրակն ուժգնանում է, ջերմությունը բարձրանում է, Երբ Զուրն ավելանում է, մրսում է, Երբ Երկիրն ուժգնանում է, [մարդու] ուժն աճում է: Յենց այս չորս [իիմնական] հիվանդություններից են առաջացել չորս հարյուր և չորս հիվանդությունները: Երկիրը պատկանում է մարմնին, Զուրը՝ բերանին, Կրակը՝ աչքերին, իսկ Քամին՝ ականջին:

Նմանատիպ ասացվածքները շատ նման են Յան դինաստիայում տարածված բժշկական տեսություններին, որոնցում շեշտը դրվում էր մարմնի ներսում հավասարակշռության կամ կորորինացիայի համակարգ ստեղծելու մեթոդներին՝ հանուն յուանցիի: Սա դիտարկվում էր յուանցիի զարգացումը դեպի բարին կամ ճշմարիտը ուղղորդելու և չար կամ սխալ ուղղությունից փրկելու անհրաժեշտության տեսանկյունից: Ըստ տարածված տեսակետի՝ Եթե միտքն ու ոգին հաճարտ լինեն, մարդուն կհաջողվի չարթնացնել կամ առաջացնել որևէ ցանկություն կամ անհանգստություն. ամեն տեսակ հոգսերն ու անհանգստություններն ի հայտ են գալիս միայն այն պատճառով, որ միտքն ու ոգին շարժվում կամ գործում են՝ միաժամանակ մտքեր արարելով:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչպես է պետք վերացնել այս զանազան հոգսերը, չանի կամ մեղիտացիայի Յինայանա դպրոցը հավատացած էր, որ մարդու ուղղակի ստիպված է սնել միտքը և զարգացնել հոգին, որտեղ հիմնական գաղափարը «մտքերը [ի] իրենց պատշաճ տեղում պահելն է» [այսինքն՝ չկեցության վիճակում կամ այն վիճակից առաջ, երբ արարվում են մտքերը]: Խորասուգման (մեղիտացիա) վարժությունները, հետևաբար, նպատակ ունեին կենտրոնացնան միջոցով կանխել մտքերի կամ գաղափարների հոգացումը: «Ան Բան Շոու Ի Զինը» ասում էր. «Մտքը պետք է իր տեղում պահի միտքը, մինչ որևէ գաղափար կծագի: Մտքերի ծնունդից հետո մտքի պահպանումը կդադարի»: Ան Շիգանի թարգմանած «Չու Զինը» [Սուտրա եղելությանը համբերությամբ համակերպվելու մասին] ներկայացնում է հետևյալ պատմությունը:

Բուդդան ասաց հավաքված բիիկուին [մուրացիկ աշակերտներ]. «Դուք պետք է սովորեք մեղիտացիայի ընթացքում հասկանալ ամեն ինչ, բայց պետք է նաև սովորեք խոսել Օրենքի լեզվով: Նրանք, որ չեն կարող ամել դա, պետք է արգելափակեն իրենց տեսողությունը, չլսեն ձայները և սովորեն մտքերը պահել տեղում և ականջ դնել միայն ներքին ձայնին: Այսպես նրանք գուցե գտնեն իրենց ճանապարհը դեպի [Լուսավորականություն կամ բուդդայություն]: Երբ հավաքված բիիկուն լսեց Բուդդայի այս հայտարարությունը, նրանց սրտերն ուրախացան, նրանք հասկացան Բուդդայի խոսքերը և անմիջապես գտան Արհաթ [սրբեր] դառնալու ճանապարհը:

Միտքն իր տեղում պահելու մեթոդը հայտնի էր ան բան [անապանայ] անունով, որտեղ անան վերաբերում էր ներշնչելուն, իսկ պանան՝ արտաշնչելուն: Սա նման էր թու նա շնչառական վարժություններին, որոնք ընդունված էին թե՛ Յուան-Լառ դպրոցի և թե՛ դառսիզմի (թառսիզմ) անմահության դպրոցի կողմից. Երկուսն էլ

տարածված էին Չան դինաստիայում: Այսպիսով, «Ան Բան Զու Սուն» [Անապանայի ծանոթագրությունների նախարան], որը գրվել է [Վանական] Դառ Անի կողմից, բացատրում էր. «Անապանա ասելով նկատի ունենք արտաշնչում [արտաքին մարմնավորում] և ներշնչում [յուրացում]» և «Մարդու կարող է վստահել իր շնչառությունը անապանային և պահել կամ պահպանել միայն այն, ինչ արդեն ծեռք է բերվել»: Ըստ նրանց փաստարկի՝ եթե մարդու կարողանա միտքը պահել իր տեղում, նրա միտքն ու հոգին կրառնան պարզ և ջինջ, իսկ եթե մարդու միտքն ու հոգին լինեն պարզ ու համդարտ, նա կրառնա Բուդդա: Այսպիսով, վանական քան Չուեյն իր «Ան Բան Սուն» [Անապանայի նախարան] գրքում ասում է.

Նա, ով զարգացնում է անապանան, ամբողջությամբ պարզ միտք ունի. եթե բարձրացնում է աչքերը, հայացքով ծակում է իր տեսադաշտի մթությունն ու խավարը... Չեռու-հեռվում չկա որևէ բան, որ նա չկարողանա տեսնել, ոչ մի աղոտ հնչյուն, որ չկարողանա լսել: Նա կընթանի ամեն ինչ՝ անորոշ, երկիմաստ երևությունը, կենց տպավորություններ ու նմանություններ. Նա միանգամայն ազատ կլինի իր գոյության մեջ, նա բավական կմեծանա և իր ներսում կներառի Ութ ծայրահեղությունների սահմանում գտնվող ամեն ինչ, նաև այնքան փոքր կլինի, որ կկարողանա թափանցել մազարմատի կամ փետուրի մեջ: Նա կվերահսկի երկինքն ու երկիրը և կվանգնեցնի ժամանակի ու երկարակեցության առաջնթացը: Նրա բարեպաշտ նկարագիրն ու ուժերն այնքան ուժգին կլինեն, որ կկործանեն երկնքի գենքը, և նա ուժ կունենա, որպեսզի վերացնի տղիսահասրան [Երեք հազար երևույթ կամ բոլորը] և երկրի վրա բոլոր տաճարները: Ութ անշրջահայացությունները [Չմտքեր] անհասկանալի են նույնիսկ Բրահմանի համար, իսկ Աստծո առաքինի կերպարը սահմաններ չի ճանաչում: Սա է վեց պարամիտանների [մեթոդներ] ծագումը:

Վերը նշվածից պարզ է դառնում, որ Ան Շիգառ դպրոցի կողմից պաշտպանվող Չինայանա չան [դիյանա կամ մեդիտացիա] տեխնիկան որոշակի գաղափարների համախումը էր, որոնք մինչ այդ արդեն մասսայականություն էին վայելում Չինաստանում Չուան-Լաոյի դպրոցի և դասուիզմի (թասիզմ) անմահության դպրոցի մեկնաբանության միջոցով, իսկ այն, ինչ մենք տեսել ենք, գերիշխող դասուական տեխնիկայի [դառնու] օգտագործման ակնհայտ փորձ է, որի նպատակը բուդդայականությունը բացատրելն ու մասսայականացնելն է:

### 9.1.3 Զի-լոռու-ծյա-ցյանը Մահայանա դպրոցից

Մտքի այս համակարգը միանգամայն տարբերվում էր, քանի որ նրա Մահայանա ուսմունքն ընդգծում էր պրածնան [իմաստություն]: Զի-լոռու-ծյա-ցյանը ուներ Զի Լյան անունով մի աշակերտ և Զի Ցյան անունով երրորդ սերնդի մեկ այլ աշակերտ. նրանք միասին հայտնի էին «Երեք Զի» անունով: Զի-լոռու-ծյա-ցյանը Լուույան ժամանեց Չուանդի կայսեր թագավորության վերջին տարում [167], իսկ 169 թվականին թագմանեց «Դառսին բռ-ժե բռլուոմի ծին» [Պրածնապարամիտա Սուտրան ճշմարտության զարգացման մասին]: Ավելի ուշ Զի Ցյանը վերաբարգ-մանեց այս սուտրան՝ այն վերնագրելով «Դամին Դու Ուծի Զին» [Սուտրա Սեծ լուսավորականության միջոցով անսահման անվերջության անցնելու մասին]: Մտքի այս համակարգը, որն ի սկզբանե պաշտպանում էր Զի Ցյանը, շեշտում էր, որ կյանքի իմնարար սկզբունքը ոգին իր ակունքներին, անբիշ ճշմարտությանը

Կամ իրականությանը վերադարձնելն է, և որ կյանքն այդ դեպքում կհամապատասխանի դառյին [կամ Բնական երևույթների ծանապարի]: Այս կանխադրույթով Լաոցիի (Լառ 8ու) և Զուանցիի գաղափարները խոր ազդեցություն էին թողնում բուդդայականության կոնկրետ այս դպրոցի վրա:

Չատ ավելի ակնհայտ է դառնում, որ Զի Ցյանի նպատակն էր բուդդայականությունը հարմարեցնել չինական մետաֆիզիկայի դպրոցին, որն այն ժամանակ հիմնված էր Լաոցիի (Լառ 8ու) և Զուանցիի գաղափարների վրա, երբ Պրաջնապարամիտա սուտրայի իր նոր բարգմանության վերնագրում նա «Մեծ լուսավորականությունը» կամ «Մեծ լույսը» փոխարինեց «պրածնա» բառով: [Տեխնիկական առումով, չինական մին եզրույթի համարժեքը սանսկրիտում, որը նշանակում է պայծառություն կամ լուսավորություն, վիյան է, և ոչ թե պրածնան – Թարգմ. ծան.]: Սա արտացոլում է Լաոցիի (Լառ 8ու) [կամ Դառ Դե ծինի] հետևյալ գաղափարը. «Զի չան յուտ մին» [Յաստատունը իմանալը Լուսավորություն է]: Նաև «պարամիտայի» բարգմանությունը՝ «յորու ու ծի» [մի ափից անցնել մյուսը՝ դեպի անսահման անվերջություն], պարզվում է, վերաբերում է դառյի հետ նույնության կամ միասնության ոլորտ հասնելուն: [Իրականում դու եզրույթը, որը նշանակում է անցում կատարել, ներառված է հենց պարամիտա սանսկրիտի եզրույթում, որը նշանակում է մի ափից մյուսն անցնել և այդպես փրկվել–Թարգմ. ծան.]: Յետևաբար, Զի Ցյանի՝ «Մեծ լուսավորության միջոցով անսահման անվերջության հասնելու սուտրայի» ծանոթագրությունների առաջին փինում հանդիպում ենք հետևյալ հատվածին.

Ուսուցիչը [Զի Ցյանի ուսուցիչ Զի Լյանը] ասում է. Բոդհիստատվայի միտքը կանգնում է Մեծ ծանապարի վրա, որպեսզի հասկանա ճանապարհը ու ապրումակցի նրա հետ: Միտքը նույնանում է դառյի հետ [ճանապարի]: Այն ձև չի ստանում, այդ պատճառով էլ նկարագրվում է Դատարկություն բառով:

Այս դեպքում «մտքի միացումը ճանապարին» գաղափարը կարծես թե նույն հասկացությունն էր, որն արտահայտվել էր դառսական (թառսիզմ) «[ոզին] այլա չվերադարձնել ինի մարմնին [այն է՝ մեռած մարմնին], այլ դառյի (թառ) հետ մեկ ամբողջություն կդառնա» գաղափարով: Սա ավելի մանրամասն նկարագրվեց հետագայում «Ֆո շուտ սի վեն ցին ցին» գրքում: [Կարծես թե չինարեն տեքստի այս հատվածում տպագրական սիսալ կա: Մեզ չհաջողվեց գտնել մասնավորապես այս սուտրան, որը ներկայացված է այստեղ կամ նույնիսկ բուդդայականության որևէ եզրույթ, որը համապատասխանում է «սի վեն ցին» արտահայտությանը: Թերևս, ցի եզրույթն այստեղ սիսալմամբ ընկալվել է ցինի փոխարեն: Բուդդայականության մեջ «սի ցի ցին» եզրույթը վերաբերում է այսպես կոչված չորս ինքնավնասումներին, այսինքն՝ չորս միջոցների, որոնցով մարդիկ վնասում են սեփական մարմինն ու միտքը: Յնարավոր է, որ այս թեմայով սուտրա գրություն է ունեցել. Թր. Ձե՛յ՝ Ֆա Հուի [Ձու Ֆահու] թարգմանությամբ]: Այս գաղափարը նաև նման էր «միաժամանակ ճանապարի գործն իրականացնելու» լու դառ ձու չեն] հասկացությանը, որը ժուան Զին նկարագրել և առաջարկել է իր «Դա ժեն Սյան-շեն Զուան» [Մեծ մարդկանց և նախնիների կենսագրությունները] գրքում: «Զև չկա, հետևաբար այն նկարագրվում է Դատարկություն եզրույթով» նախադասությունը շատ նման է Լաոցիի (Լառ 8ու) ասացվածքին՝ «Յաստատուն ճանապարի ձև ձև չունի»: Յետևաբար, ընկալվում էր, որ միտքն ու ոգին չունեն շոշափելի ձև:

Ըստ մի շարք մարդկանց, որոնց թվում է Զի Ցյանը, մարդկային միտք-հոգին

առաջացել է ճանապարհից, և միայն զանազան անբնական ազդեցությունների պատճառով [ինչպիսիք են ցանկությունների և հակումների գայթակղությունները] միտք-ոգին այլևս ի վիճակի չէ վերադառնալ ճանապարհի հետ միասնության վիճակին: Այս սահմանափակումներից և կապանքներից ազատվելու համար, հետևաբար, միտք-ոգին պետք է ապրումակցի ճանապարհի հետ և հասկանա այն: Եթե միտք-հոգին ի գորոր լինի հասկանալ իր նախնական աղբյուրը, նա ի վիճակի կլիմի և մեկ անգամ միավորվել ճանապարհի հետ և այդպիսով դաշնալ Բուդդա: Իրականում, բուդդայականության սկզբունքները բացատրելու ընթացքում այն օգտվում է Լաոցիի (Լառ 8ու) և Չուանցիի գաղափարներից:

Վեյ և Չին դիմաստիաների այս ժամանակահատվածում սյուանսյուե դպրոցի [դառսական մետաֆիզիկա] մետաֆիզիկական գոյաբանությունը, որը Լաոցիի (Լառ 8ու) և Չուանցիի գաղափարները համարում էր կաղապար, շատ տարածված էր: Այն իհմնական շեշտը դնում էր բեն-մոյի [իհմնարարի և պատահականի հարաբերությունը] և յու-ուի [գոյություն և չգոյություն] վրա: Պրածնայի գաղափարները բուդդայական մտածողության մեջ սերտ մոտեցել են այս կարգի մետաֆիզիկական մտքին: Յետևաբար, այն ժամանակ բուդդայական վանականների համար հարմար և ծեռնտու էր օգտագործել չինական [դառսական] մետաֆիզիկայի այս տեսակը՝ բուդդայականությունը բացատրելու համար: Նրանց որդեգրած մեթոդաբանությունը և մոտեցումը սյուանսյուե դպրոցի մետաֆիզիկական մեթոդն էր, որն աստիճանաբար գեիի [իհմաստների ուսումնասիրությունը] սկզբունքից անցում կատարեց դե ի վաճ յամի [իեն նետել բարձ, երբ իհմաստը ձեռք է բերվել] սկզբունքի կամ ծի յահ չու ի [ծնավորել իհմաստ, որը ծագում է բառի ժամանակավոր «օթևանից» և անցում նրա սահմանները]:

Այս ժամանակաշրջանի խիստ հատկանշական առանձնահատկությունն այն էր, որ բազմաթիվ նմանություններ կային նրա միջև, թե ինչպես էին բուդդայականության մեջ վանականներն ընկալում երևույթները, և թե ինչպես էին [դառսական մետաֆիզիկական դպրոցի] մեջ գիտնականները դիտարկում տիեզերքի երևույթները: Ավելին, նրանք կարծես հավասարապես հապատակում էին աշխարհիկ հարցերից ազատ լինելով, պայմանականություններ չճանաչելով, սովորական բարոյագիտական (էթիկական) սահմաններով չսահմանափակվելով և «այդ ամենից վեր» լինելով: Մինչ հայտնի գիտնականները կիրառում էին այսպես կոչված սան սյուանը [Երեք մետաֆիզիկական դիտարկումները]՝ իրենց սյուանսյուեն [դառսական մետաֆիզիկա] զարգացնելու և առաջ քաշելու համար, այդ ժամանակաշրջանի մեջ վանականները նույն կերպ օգտվում էին սան սյուանի ուսմունքից՝ բուդդայականության սկզբունքները բացատրելու համար: Արևմտյան Զին դինաստիայի ականավոր վանական Զի Սյալունն ընկերական հարաբերությունների մեջ էր ժամանակի այնպիսի մեջ գիտնականների հետ, ինչպիսիք էին ժուան Ցանը և ի Քայը և հայտնի դարձավ իր ժամանակակիցներին՝ Բա դա լա, ով հեռուն գնաց բոլոր ութ ուղղություններով] անունով: Արևմտյան Զին դինաստիայում Սուն Ցուն գրել է «Դառ սյան լութի» [Դառոյի բարի մարդկանց մասին] գիրքը, որտեղ յոթ հայտնի վանականներին համեմատում էր հանրածանաչ «Բամբուկի պուրակի յոթ գիտնականների» հետ:

Այն ժամանակ բազմաթիվ բուդդայական վանականներ բավական տեղյակ էին Լաոցիի (Լառ 8ու) և Չուանցիի ուսմունքներից: Պատմական արձանագրությունն ասում է, որ վանական Ֆահուն (Չու Ֆահու) «կարդացել էր բոլոր վեց դա-

սական երկերը և միամգամայն տեղյակ էր [Ցինին նախորդող շրջանում գոյություն ունեցող] բոլոր հարյուր դպրոցների ուսմունքների մասին»: Ավելին, վանական Զի Դունը գովաբանում էր վանական Յու Ֆալանին՝ «սյուանսյուեի իմաստները բազմակողմանի ընկալելու համար»: Զի Սյալունը պնդում էր, որ ինքն էլ «դարձավ ազատ ոգի, որն ունակ էր առանց սահմանափակման [սյաոյու] թափառել, երբ հասավ փառի նպատակին [եզակիությունը պահպանելու սկզբունքը կամ Դայոյի հետ միանալու և նույնանալու դառսական սկզբունքը] և հանդարտության միջոցով հասավ միին [Նիրվանա կամ հանգչում]»: Վանական Դառ Ցյանը [Չու Դացյան] «մոտ 30 տարի ազատ թափառում էր դասավանդելով և քարոզելով. որոշ դեպքերում նա փոխանցում էր Վայփուլյա սուտրաների ուսմունքները, երբեմն էլ բացատրում էր Լանգզի (Լառ Ցու) և Չուանցի ուսմունքները»: Վանական Զի Դունը «սիրում էր Լանգզի (Լառ Ցու) և Չուանցի ուսմունքները» և «Չուանցի» գրքում ծանոթագրել էր «Սյառ յառ յու» [Ազատ ոգու թափառումը] գլուխը: Վանական Դառ Անը համեմատում էր քե դառ [Յնարավիրությունների ճանապարհը] և չան դառ [Բաստատուն ճանապարհը] [դառսական] ուսմունքները և երկու սայայի [էր լի] բուդդայական ուսմունքը: [Եշմարտության ազնիվ հիմնավորումները՝ երկու սաթյան կամ երկու ձևը, համարում է, որ դոգման արտահայտվում է երկու ձևով, կամ որ համընդիմուր ծշմարտությունն ի զրորու է արտահայտվել երկատված ձևով. մեկը սամվիրիսաթյան է կամ կուպիտ և ընդիմուր հիմնավորումը, որտեղ ծշմարտություններն արտահայտվում են այնպես, ասես երևույթներն իրական են, և երկրորդը, պարամարթիասաթյան կամ ծշմարիտ հիմնավորումը լուսավորված մարդու կողմից, որն արդեն հասկացել է ծշմարիտ անիրականությունն ու երևույթների չգոյությունը (Թարգմ. ծան.)]: Երբ վանական Ջուեյ Գուանը մեկնաբանում էր «Փա հուա ծինը» [Սահդիարմափ-ունդարիկա սուտրա կամ Ջրաշալի օրենքի լուսոսի սուտրա], նա ուսումնասիրեց Լանգզի (Լառ Ցու) և Չուանցի ուսմունքները: Վանական Ջուեյ Չուանը հայտնի էր նաև նրանով, որ «խորապես ուսումնասիրել էր Վեց դասականները և մասնավորապես հմուտ էր Լանգզի (Լառ Ցու) և Չուանցի ուսմունքը մեկնաբանելու հարցում»:

Այն ժամանակ հայտնի վանականների մեծամանությունը քարոզում էր պրաջնայի ուսմունքը, և ինչպես արդեն տեսանք, նրանք հակված էին եթե չպաշտպանել, ապա գոնե քննարկել Լայի և Չուանի ուսմունքները: Անշուշտ, հիմնականում օրյեկտիվ պատճառներով, Յնդկաստանից և այլ «արևմտյան երկրներից» Չինաստան ներմուծված բուդդայական ուսմունքներն այն ժամանակ պատկանում էին պրաջնա դպրոցին, բայց գոյություն ունեին այլ գործոններ, որոնք ապացուցում էին, որ պրաջնա դպրոցի ժողովրդականությունը այն ժամանակի Չինաստանում պատահական չէր:

«Բեյ նայ յե սու» [Վինայայի կամ գիտակարգի՝ Պիտակայի նախաբան] հոդվածում վանական Դառ Անը գրում է.

Այստեղ հավաքված տասներկու հատորներից ամենամեծածավալը Վայփուլյա սուտրաների ժողովածուն է: Պատճառն այն է, որ այս երկրում Լայի և Չուանի ուսմունքներն արդեն մեծ տարածում են գտել մարդկանց մեջ: [Այս ուսմունքները] բավական նման են ֆանդեն [վայփուլյա] սուտրաների ուսմունքներին. նրանք շատ ընդհանրություններ ունեն: Այդ պատճառով էլ մարդիկ արդեն իրենց վարքագիծն ու ապրելակերպը հարմարեցրել էին [մեր սուտրաների] ուսմունքներին:

«Վայփուլյա» ուսմունքները պատկանում էին Փանդենի [կամ Փանգուանին, երկուսն էլ ընդհանուր դասային անվանումն է, որ տրվում է Մահայանա սուտրաներին] դասին: Պրաջնայի [իմաստություն] ուսմունքները նույնպես պատկանում էին Փանդեն կարգին: Դառ Անի բացատրությունից մեզ պարզ է դառնում, որ պրաջնայի ուսմունքների մասսայականությունը Չինաստանում Արևտյան և Արևելյան Զին դինաստիաների ընթացքում մեծապես պայմանավորված էր դառսական մետաֆիզիկայի կամ սյուանսյուեի ազդեցությամբ: Ինչևէ, նոյնիսկ այդ դեպքում պրաջնայի սուտրաների խոշոր փինը [իհատվածներ], մասնավորապես «Ֆանգուան բո-ժե բոլուտմի ծինը [Պրաջնա-պարամիտայի լույս արձակող սուտրա] և «Գուանցան բո-ժե բոլուտմի ծինը [Պրաջնա-պարամիտայի լույսը գովաբանող սուտրա], մասսայականություն չին վայելում մինչև Արևելյան Զին դինաստիայի վաղ շրջանը: Դա է պատճառը, որ «Չյան բԵ ծին սուն» [Սուտրաների աստիճանական հաջորդական իրագործման հաշվետվություն] ասում էր.

Չնայած մեծ փիմը ի հայտ է եկել մի քանի տասնամյակ, նրա առաջացման ժամանակ ուսյալ մարդիկ ըստ երթյան չին ուսումնասիրել կամ կիրառել այն: Յետաքրքիր է՝ ինչո՞ւ պետք է զանազան վարպետներն այդպես անեին... Ինչևէ, այս իրավիճակն աստիճանաբար փոխվել է, և քանի որ [թարգմանության միջոցով] մեծ փինը հասել է ին թորո [Չինաստան], այսօր չկա ոչ մի բրահմա, ոչ Արևելքում, ոչ Արևմուտքում, որն իր գործունեության ընթացքում չունենա այն դասավանդելու նպատակ:

«Գուանցան բո-ժե բոլուտմի ծինը» թարգմանվել է Չու Ֆահուի կողմից Թայքանի թագավորության յոթերորդ տարում [286], իսկ «Ֆանգուան բո-ժե բոլուտմի ծինը» Չու Ֆալանի կողմից թարգմանվել է Յուանքանի թագավորության երրորդ տարում [291]: Երկուսն էլ հայտնի դարձան միայն արևելյան Զին դինաստիայի առաջին տարիներին [այսինքն՝ մոտավորապես 320 թ.]: Այս հանրաճանաչությունը սերտորեն կապված էր ժամանակաշրջանի հասարակական-պատմական պայմանների հետ: Վեն դինաստիայից ի վեր և Զին դինաստիայի սկզբից իշխանության և «մեն ֆա շիցուից» [ազնվական ընտանիքներ և ազնվականների տոհմեր] կազմված կառավարող շրջանակների ազդեցության ոլորտը շարունակարար ընդլայնվում էր: Կարելի է ասել, որ այս ազդեցությունն իր գագաթնակետին հասավ Յուանցանի թագավորության ընթացքում [մթ. 291-299]: Դրան հաջորդած «Ութ արքայազնների ապստամբությունը, հյուսիսարևմտյան ազգային փոքրամասնուների ներխուժումն ու նրանց գերիշխանությունը Կենտրոնական չինական հարթավայրերում և Զին դինաստիայի Սինա ընտանիքի թագավորական տան և կենտրոնական կառավարության տեղաշարժը դեպի հարավ արագացրին կառավարող շրջանակների քայլայումը: Մինչ այդ կառավարող իշխանական համակարգն արդեն խիստ անօգնական վիճակում էր և հորեւեսորեն էր տրամադրված սեփական բախտի ու հասարակության ճակատագրի նկատմամբ: Յետևաբար, բնական էր, որ նրանք հետո ուշադրությունը սկեռեցին անհատի կյանքի, մահվան ու ազատագրման խնդիրների վրա: Սա էր երկու կրոնների՝ բուդդայականության և դառսիզմի (թառսիզմ) տարածման պատճառներից մեկը Արևելյան Զին դինաստիայի ավարտին:

Հասարակությունը, որտեղ մարդիկ ձգտում են ստեղծել երկրայինի և իրականի սահմաններն անցնող աշխարհ, շատ կարևոր համատեքստ ու նպատակ է կրոնների առաջացման համար: Ինչ վերաբերում է կրոններին, ապա դրանք ի վի-

ճակի են բացատրել մարդկանց, որ իրենց իսկ երևակայական աշխարհներում կարելի է լուծումներ գտնել բազում տառապանքների համար, որոնք գոյություն ունեն ողջ իրական հասարակության մեջ, որտեղ դրանք հնարավոր չեն լուծել, այդ թվում և այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են կյանքն ու մահը: Բուդդայականությունը բացառություն չեն այս ընդհանրացումից: Չինաստանում պրաջնա բուդդայական ուսմունքների մուտք գործելուց հետո այն թարգմանության փուլում էր մինչ Արևելյան Զին դինաստիայի ժամանակաշրջանը: Սա նշանակում է, որ չինացի բուդդայական վանականները դեռ չեն ձևականացնել պրաջնայի ուսմունքների սեփական ընկալումը կամ մեկնարանությունը: Արևելյան Զին դինաստիայում, սակայն, սկսեցին ի հայտ գալ աղանդներ ու ենթախմբեր, որոնք ներկայացնում էին պրաջնա բուդդայականության ուսմունքների տարրեր ընկալումներ: Ավելի ուշ մարդիկ սկսեցին քննարկել և արձագանքել Արևելյան Զին դինաստիայում ի հայտ եկած պրաջնա ուսմունքի դպրոցներին: Վանական Զառն [Սեն Զառ] գրեց «Բու ջեն կուն լուն» [Քննախոսություն ճշմարիտ ոչնչի կամ չգոյության ուսմունքի մոլորության մասին], որով քննադատում էր երեք դպրոցների, մասնավորապես՝ բեն ու [Խախմական չգոյություն կամ ոչնչի] դպրոցը, զի սեն [արտաքին տեսքի ինքնություն] դպրոցը և սիթի ու [Մտքի չգոյություն] դպրոցի հերթումը: Սուն դինաստիայի ընթացքում թան Զին գրեց իր «Լյու ձյա ցի ցուն լուն» [Կեց դպրոցների և յոր աղանդների մասին] քննախոսությունը, իսկ վանական Զինը [Ցեն Զին] գրեց «Շի Սյան Լյու ձյա Լուն» [Արտաքինի աղանդի վեց դպրոցները] գիրքը:

Սենք չենք առաջարկում այս էսսեում մեծ տեղ հատկացնել այն ժամանակ մասսայականություն վայելող զանազան պրաջնա ուսմունքների մանրամասն քննարկմանը, բայց գոյություն ունի երկու նշանակալի իիմնախնդիր, որոնք Վեյ և Զին ժամանակաշրջանում դառսական մետաֆիզիկական ուսմունքների [սյունայութեա] ուշադրության կենտրոնում էին. դրանք են՝ բեն-մոյի [իիմնարարի] և պատահականի հարաբերությունը] և յու-ուի [նյութ և անիրականություն կամ գոյություն և չգոյություն] հարցերը: Սրանք այն նույն հարցերն էին, որ ծառացել էին այն ժամանակ մասսայականություն վայելող պրաջնա բուդդայականության զանազան դպրոցների առաջ: Նաջող պարբերություններում ես կփորձեմ ցույց տալ այս խնդիր՝ հերթով ներկայացնելով այն երեք դպրոցները, որոնք համեմատում և քննարկում էր վանական Շառն իր «Բու ջեն կուն լուն» գրքում:

Մտքի չգոյության ուսմունքի իմաստը [սին ու ի]: «Բու Ցեն Կուն Լուն» գրքում վարպետ վանական Շառն գրում է.

Ասելով, որ միտքն իրականում գոյություն չունի, նրանք [այս ուսմունքի հետևորդները] իրականում պմուլ են, որ միտքը գոյություն չունի ոչ մի բանի մեջ, բայց չեն ասուլ, որ բոլոր երևույթներն իրականում գոյություն չունեն: Այս ուսմունքն օգտակար է այն առումով, որ այն մարդկանց հանգեցնում է հոգու հանդարտության, բայց նրա թերությունն այն է, որ իններ երևույթները, և ոչ թե միտքն է դատարկ ու անզո:

Ըստ Զի Քանի (Զի Քան) «Էր թի ի» [Երկու իիմնավորումների իմաստը] գրքի՝

Նրանք, որոնք պաշտպանում են Մտքի չգոյության դոգման, երկար ժամանակ չեն գիտակցել այս ուսմունքի իրական արժեքը: Նույնիսկ Սեծ պանդիտա Կունարացիկայի ժամանակներից առաջ և ավելի վաղ շրջանում՝ Դառ Ան և Զու Ֆահու վարպետների ժամանակ, այս դոգման գոյություն է ունեցել: Նրանք, որոնք խոսում են մտքի չգոյության մասին, մեջբերում են սուտրաները, որոնցում ասվում է.

«Նրանք, որոնք ասում են, թե արտաքինի է ությունը դատարկ է և անգո, իրականում պարզում են, որ արտաքին տեսքը չի կարող ինքնին դատարկ ու անգո լինել. դրանք դատարկ կամ անգո են ճտքում: Պատճառն այն է, որ մարդը կարող է հասնել հեռատեսության [ճտքի] այս դատարկությանը և կարող է ասել, որ արտաքինն անգո է: Սակայն վերջնական վերլուծության մեջ արտաքինը չի կարող անգո լինել»: Վարպետ Շառն հերքում է այս դոգման. նա հասկանում է, որ նրա դրական կողմը ոգու հանդարտության հորորդն է, բայց նաև նշում էր, որ նրա թերությունը անտեղյակությունն է այն փաստի մասին, որ անգո են լոկ նյութը կամ իրերը: Ոգու հանդարտության հասնելու համար, անշուշտ, անհրաժեշտ է հասկանալ մտքի դատարկությունը կամ չգոյությունը. այս իմաստով դոգման լավն է, բայց նրա թուլությունն այն է, որ դոգման պնդում է, թե արտաքինը չի կարող ինքնին անգո լինել:

Ըստ այս գաղափարի՝ «Ճտքի չգոյության դոգմայի կարևորությունն» այն է, որ «միտքը, և ոչ թե [նյութի] արտաքինն է, որ դատարկ է ու անգո»: Ասել, որ արտաքինը անգո չէ, համարժեք է ասելուն, որ բոլոր իրերը [պարտադիր չեն, որ] անգո լինեն»: Թան դինաստիայում «Չառ Լուն Սո» [Մեծ վանական Շաոյի փաստարկների մեկնարանություն] գրքի իր ծանոթագրություններում Յուան Քանը գրում է. «Այն [ճտքի չգոյության դոգման] հաստատում է, որ մատերիան կազմված է նյութից և անգո չէ» և «այն չի հասկացել, որ նյութի էությունը չգոյություն է»: [Վանական Շաոն] սա համարում էր մոլորություն: «Չհասկանալ, որ նյութի էությունը չգոյություն է» հավասար է մատերիայի էությունը որպես նյութ կամ գոյություն ընկալելուն. այս գաղափարը շատ նմանություններ ունի Գուռ Սյանի մտածողության հետ:

Չնայած դառսական մետաֆիզիկ Գուռ Սյանը հակադրվում էր «ուն [չգոյություն կամ չկեցություն]՝ որպես ծագման կետ ընդունելու» գաղափարին, նա հավատացած էր, որ վան յուն [այն ամենը, ինչ կա, կամ ողջ գոյությունը] չի առաջանում ուից [չգոյություն] կամ ընդունում է ուն՝ որպես նախնական գոյարանական իրականություն: Գուռ Սինի համար յուն [գոյություն] միակ իրական կեցությունն է, և այն գոյություն ունի այն այն փաստի հիման վրա, որ յուրաքանչյուր նյութ ունի իր սեփական ցի սյանը [ներքին էության բնույթի առանձնահատկությունը]: Յետևաբար, նա ասում էր. «Յուրաքանչյուր նյութ կամ իր ունի իր բնույթը»: Յետևաբար, մտքի չգոյության մասին խոսելը հավասար է մտքի դատարկությունը կամ չգոյությունը բոլոր իրերի մեջ արտապատկերելուն: Յուան Քանը բացատրել է այս գաղափարը հետևյալ կերպ. «[Ասել, որ միտքն անգո է], հավասար է նրան, որ մարդը չպետք է ծնի որոշակի միտք՝ նյութի հիմքի վրա. հենց սա է դատարկությունը կամ չգոյությունը»: Սա նույնպես բավական նման էր Գուռ Սյանի պաշտպանած գաղափարներին:

Ծանոթագրելով և մեկնարաններու «Զուանցի» գրքի յոթ «ներքին» գլուխները՝ Գուռ Սյանը մի շաբթ էսսեներ, որոնք նրա տեսանկյունից բացատրում էին այս գլուխներից յուրաքանչյուրի վերնագրի նշանակությունը: Այդ էսսեներից երեքում Գուռն պաշտպանում էր «Ճտքի [ու սին] չգոյության» գաղափարը: «Ժեն ծյան շի» [Ներմարդկային աշխարհ] գլխի մասին էսսեն ասում է. «Միայն նրանք, որոնք չունեն մտքի գոյություն և չեն ծառայում իրենք իրենց, կարող են գնալ այնտեղ, ուր տանում են փոփոխությունները, բայց դեռ չեն գգում [փոփոխության] բեռը»: «Դա ցուն շի» [Մեծ նախահայրը և ուսուցիչը] գլխի մասին էսսենում հեղինակն

ասում է. «Տիեզերքի ընդարձակ տարածությունից և ամեն ինչի հարստությունից դուրս կա միայն մի բան, որից արժի դասեր քաղել, և որին արժի տիրապետել. դա նտքի դատարկությունն է կամ չգոյությունը»: «Ին դի վան» [Կայսրերի և արքայազների արձագանք] գլխի մասին էսենում Գուոն ասում է. «Ըրանք, որոնք չունեն մտքի գոյություն և սովորել են թույլ տալ, որ փոփոխություններն ու փոխակերպումները գան, ուր կամենում են, և առաջնորդեն, ուր կամենում են, արժանի են դառնալ կայսրեր և արքայազներ»: Ըստ այս ասացվածքի՝ ակնհայտ է, որ Գուոն Սյանը հավատացած էր, որ իմաստունը չունի մտքի գոյություն և պարզապես հետևում է նյութի [բնական] ընթացքին և հետևաբար ունակ է «գնալ այնտեղ, ուր առաջնորդում են փոփոխությունները, և զգալ բեռը»:

Այդուհանդերձ, չնայած կարող ենք ասել, որ մտքի չգոյության [Բուդդայական] ուսմունքը շատ առօւմներով նման է այս թեմայի մասին Գուոն Սյանի կարծիքին, փաստեր չունենք, որ ուսմունքն ուղղակիորեն առաջացել է Գուոն Սյանի մտքի համակարգից: Կարող ենք միայն ասել, որ այն ժամանակ, սյուանայութի [դրասական մետաֆիզիկա] գերիշխող ազդեցության ներքո բուդդայականությունը հաճախ կենտրոնանում էր նույն խնդիրների վրա, որոնց անդրադառնում էր սյուանսյութի այս դպրոցը:

Արտաքինի ինքնության ուսմունքի նշանակությունը [Ճի սե ի]: Ճի Դունը [Ճի Դաոլին] պաշտպանում էր արտաքինի ինքնության ուսմունքը: Ասում են, որ նա մոտ քանի էսեն է գրել [թեմայի մասին], ներառյալ «Ճի ջի սե բեն ու ին», [Բուդդայի զարական այն մասին, որ արտաքինի ինքնությունը ծագում է Ոչնչից], «Ճի սե յու սյուան լուն» [Քննախոսություն արտաքինի ինքնության ուսմունքի՝ մետաֆիզիկայի ոլորտում ազատ թափառելու մասին], «Մյան գուան ջանը» [Քրաշալի տեսողության կամ մեղիտացիայի մասին] և «Մյան յառ լունը» [Քննախոսություն ազատ թափառելու մասին]: Այս էսենների մեջ մասը կորել է, և միայն պատառիկներ են մնացել: «Ճի շուռ սին յու» [Ժամանակների զրոյացի նոր նոնուշներ] գրքի «Վենայուե» [Գրականություն] հատվածում Ճի Դունի «Մյան գուան ջան» [Քրաշալի տեսողության կամ մեղիտացիայի մասին] էսեն մեջբերվել է ծանոթագրություններից մեկում, և այդ մեջբերման [հոդվածը, որին այն կցված էր, կորել է] մի հատվածն ասում է հետևյալը.

Արտաքինների էությունը նշանակում է, որ դրանք կյանքի չեն կոչվում բնական ճանապարհով կամ իրենց ներսում: Քանի որ արտաքինները բնական ճանապարհով կամ իրենց ներսում գոյություն չունեն, նրանց մի մասը կուն է [դրատարկ կամ անհիմն]: Այդ պատճառով էլ մենք ասում ենք. արտաքին տեսքը [սե] դատարկ է, բայց այն նաև առանձնանում կամ տարրերվում է դատարկությունից:

Ավելին, «Շառ Լուն Շուռում» [Մեծ վաճական Շառյի փաստարկների մեկնաբանություն] մեջբերված է վաճական Յուեյ Դայի խոսքը.

Օրենքների վարպետ [Փաշի] Ճի Դաոլինը ասել է «Ճի սե լունում» [Արտաքինների ինքնության քննախոսություն]. Հավատացած են, որ հետևյալ արտահայտությունը՝ «Արտաքինների ինքնությունը դատարկությունն է, ոչ որովհետև արտաքիններն անհետանում են, այլ որովհետև նրանք դատարկ են կամ անգոն»: Աս ամենաճիշտ հիմնավորումն է: (Այս արտահայտությունը ծագել է «Վեյ մո ճին» [Վիմալակիրտի նիրդեսա Սուտրա] տեքստից): Ինչո՞ւ: Որովհետև արտաքինների էությունն ընկած է այն փաստի հիմքում, որ արտաքինները բնական չեն: Թեև արտաքին են, դատարկ են:

«Արտաքին ինքնին արտաքին չէ» ասացվածքը նշանակում էր, որ ֆիզիկական երևույթները չունեն սեփական եռթյուն կամ բնավորություն [ցի սին, կամ սեփական եռթյուն]: «Արտաքինը գոյություն չունի ինքնին կամ բնականորեն» արտահայտությունը նշանակում էր, որ բնական վիճակում իրերը չունեն աջակցող նյութեր կամ ռեսուլսներ: «Սեփական եռթյուն» [ցի սին] ասելով իրականում հղում ենք անում «նյութին իր մեջ» [ցի թի] կամ գոյաբանական նյութին [թեն թի]: Եթե իրերը չունեն իրենց սեփական նյութերը, թեև կամ անթիվ-անհամար առանձին ու բազմազան երևույթներ, նրանցից ոչ մեկն իրական չէ: Սա է պատճառը, որ «չնայած նրանք արտաքին տեսք ունեն, այնուամենայնիվ դատարկ են», այսինքն՝ չնայած կամ բազմաթիվ, տարատեսակ երևույթներ, իրականության մեջ չկա մեկ ծշմարիտ նյութ: Վեյ և Չին դինաստիաներում կուն [դատարկություն] եղրույթը հաճախ օգտագործվում էր ու [չգոյություն, չլկեցություն] եղրույթի փոխարեն, և ժամանակի սյուանսյուե գիտնականները [մետաֆիզիկները] [կամ բուդդայական կրոնի կողմնակիցները, որոնք կրում էին այուանյուե գաղափարների ագդեցությունը] նաև հաճախ պնդում էին, որ կունը [դատարկություն, չիհմնավորվածություն] կամ անիրականություն] կամ նրան փոխարինող ուն [չգոյություն] բոլոր իրերի գոյաբանական նյութը էր: (Օրինակ, սա թեն ու իի [Ծագման չգոյության ուսունարքը] տարածայնությունն էր, որի հետ շուտով կառնչվենք): Յետևաբար, այն դեպքում, եթե այն վերաբերում էր մատերիայի կամ իրի գոյաբանական նյութի բացակայությանը, Զի Դունի գաղափարը նաև շատ մոտ էր Գուո Սյանի գաղափարներին:

«Եյութի չգոյության» [ու-թի] գաղափարը պնդում էր, որ սեի [երևույթներ կամ արտաքին տեսք] ետևում չկա գոյաբանական նյութ կրունում կամ ուում [այսինքն՝ կունը (դատարկություն) կամ ուն (չգոյություն) իրականում սեի (արտաքիններ) գոյաբանական նյութը չէ]: Թեև կա երևույթ, չկա գոյաբանական նյութ, և հետևաբար «Արտաքին տեսքը նաև առանձին է դատարկությունից»: Քանի որ արտաքինները չունեն գոյաբանական նյութ, չի կարելի ասել, որ միայն այն ժամանակ, եթե արտաքիններն անհետանում են, նրանք դառնում են «դատարկ» [կամ վերադառնում են դատարկության], այստեղից էլ ծնվում է այն արտահայտությունը, որ «Արտաքինները ոչ թե անհետանում են, այլ դատարկ են»: Այս տեսանկյունից Զի Դունի «Զի սե լունը» [Արտաքինների ինքնության քննախոսություն] կարելի է ավելի ճշգրիտ կոչել «Զե սե թեն ու ի» [Ոչնչից առաջացած արտաքինների ինքնության ուսունարք]: Այս տեսանկյունից Զի Դունի գաղափարը բավական ննան էր Գուո Սյանի մտքին, հատկապես նրանք կիսում են նույն համոզմունքը առ այն, որ իրերի ետևում չկա գոյաբանական նյութ: Մեկ այլ հայեցակետից, սակայն, նրանց գաղափարները տարբեր էին: Զի Դունի համոզմունքը, ինչպես տեսանք, այն էր, որ եթե իրերը չունեն գոյաբանական նյութ, նշանակում է, որ դրանք ի սկզբանե «դատարկ են»:

«Զուանցի» գրքի «Սյառ յառ յու» [Ազատ թափառում] էսսեի առանձին մեկնաբանությունների տեսանկյունից շատ ավելի ակնհայտ է դառնում, որ Զի Դունի գաղափարների և Գուո Սյանի մտքի միջև տարբերություններ կան: Ըստ «Գառ Սեն Զուան» [Մեծ վանականների կենսագրությունները] գրքի «Զի Դուն ջուան» [Զի Դունի կենսագրությունը] գլխի:

Լյու Սիջին և այլք, քննարկելով «Զուանցի» գրքի «Սյառ յառ բյան» գլուխը, ասաց. «Յուրաքանչյուր ոք պետք է հարմարեցնի իր սեփական եռթյունը և միայն

դրանից հետո կարող է ամբողջությամբ ազատ թափառել»: Դունը [Զի Դուն] առարկեց՝ ասելով. «Միաւ է: Չեն բրնակալ և Սյա դինաստիայի վերջին կառավարիչը] և 8ին [ուշ գարնան և աշնան շրջանի տիրահօչակ ավազակ և ապստամբ] էությամբ դաժան են ու ավերիչ: Եթե իսկապես ճիշտ ու անհրաժեշտ լիներ, որ յուրաքանչյուր ոք հարմարեցներ իր սեփական էությունը, արդյո՞ք Չեն ու 8ին հիմա ազատ թափառելիս կլինեին»: Այդ ժամանակ [Զի Դունը] հեռացավ ու սկսեց գրել «Սյան յան բյանի» իր ծանոթագրությունները:

«Յուրաքանչյուր ոք պետք է հարմարեցնի իր սեփական էությունը և այդպիսով դառնա ազատ թափառող ոգի» գաղափարը, անշուշտ, գերիշխող միտք էր Գուռ Սյանի՝ «Սյան յան բյանի» ծանոթագրություններում և մեկնարանություններում: «Զուանցիի» այս գլխի նրա մեկնարանության ներածական նասուն նա, բացատրելով գլխի վերնագիրը, առաջ է քաշում իր փաստարկները.

Չնայած իրերը կարող են տարբերվել չափսով, եթե նրանցից յուրաքանչյուրը դրվի համապատասխան տեղում, որտեղ այն հարմար է հանգամանքներին, յուրաքանչյուր նյութ ի վիճակի կլինի ազատվել իր իսկ սեփական էությունից, և յուրաքանչյուր իր կիարմարեցվի իր ունակությանը. յուրաքանչյուրը կլինի պատշաճ չափաբաժնով, և բոլոր իրերը հավասարապես ազատ կրափառեն: Այդ դեպքում ինչպես է հնարավոր գտնել իրերի տարբերությունները:

Ավելին, Գուռ Սյանի՝ «Սյան յան յու» գրքի մեկնարանության առաջին ծանոթագրության մեջ մասնավորապես գրված է.

Զուանցիի ընդհանուր գաղափարն այն է, որ մարդը պետք է ըստ էության ազատ թափառի և լիովին ազատ շրջագայի, առանց սահմանափակումների: Յետևաբար, մարդը պետք է տիրապետի ինքն իրեն, անկախ լինի, հայտնվի անգործության տիրույթում: Ամենափոքր նաև ամենամեծն է: Ուրեմն մարդը պետք է հասկանա իր էությունը իր չափաբաժնին հարմարեցնելու սկզբունքը:

Վերը նշվածից պարզ է դառնում, որ Զի Դունը իերօնում է Գուռ Սյանի հենց այս գաղափարը: Այդ դեպքում ինչպիսի՞ն էին Զի Դունի սեփական տեսակետները «ազատ թափառող ոգու» մասին: «Սյան յան բյանի» մասին նրա մեկնարանության ամբողջական տեքստն այլևս գոյություն չունի: Սակայն նրա մի մասը մեջբերված է «Ճի շուր սին յու» գլխի «Վենայուե» [Գրականություն] գրքի ծանոթագրություններում.

Սյաոյա [ազատ թափառելը] նշանակում է Վերջին մարդու մտքի լուսավորության իրագործումը: Երիտասարդ վարպետ Զուանը խոսքի միջոցով սահմանեց Սեծ ճանապարհ՝ իր գաղափարներն արտահայտելով հերիաթային թռչնի [փեխ] և ցեխսարեկի [յան] խոսքերով: Ներիաթային թռչնի կյանքի ճանապարհը լայն է. նրան հարմարվելու համար մարդը ստիպված է դուրս գալ իր սեփական մարմնից. մյուս կողմից, ցեխսարեկը բարձր չի թռչում, բայց ծաղրում է նրանց, որոնք հեռու են ու բարձր երկնքում են: Նա ամբարտավանության ու հակասականության զգացողություն ունի: Վերջին մարդը սավանում է երկնքի վայելչության թևերի վրա և ուրախ է. Նա թափառում է Անսահմանության ոլորտում և միանգանցին ազատ է: Առարկաները մարմնավորելը և նրանց կողմից չմարմնավորվելը նշանակում է ազատ թափառել ու չվերադառնալ իին պայմաններին. ունենալ սյուանի [մետաֆիզիկական սկզբունքը] զգացողությունը և չմասնակցել գործողությանը, շարժվել սրընթաց, բայց առանց շտապողականության, ազատ թափառել և կարողանալ գնալ այնտեղ, ուր սիրտ կուզի: Յենց սա է սյաոյայի նշանա-

Կությունը: Եթե մարդը մտքում ցանկություն ունի, որը պետք է իրագործվի, և եթե նա տարված է այն ցանկություններով, որոնց իրագործումը կգոհացնի իրեն, ապա պարզունակ մտածողության դեպքում իրականում այն ծարավ մարդու գոհունակությունն է մի բաժակ ջուր խմելիս: Սարդն ինչպես կարող է կորցնել ճոխ ուտելիքի պահանջը միայն այն պատճառով, որ բավարարվել է միայն մեկ լավ ճաշկերույթով: Արդյո՞ք մենք կարող ենք մի քանի ունաց խմելուց հետո իրաժարվել ծիսական գինու շենությունից՝ Վերջին մարդը չի խոսում սայոյայից [ազատ թափառում], մինչև իսկապես չի գոհանում:

Ըստ Գուր Սյանի համոզմունքի՝ չնայած իրերը տարբերվում են մեծությամբ, նրանք հավասար են «յուրաքանչյուրն՝ ըստ իր էության» սկզբունքով՝ «ազատ թափառելու» ունակությամբ: Զի Դունի կարծիքը տարբերվում էր այս կարծիքից: Ըստ նրա՝ ազատ թափառելու ունակությունը կախված է մարդու հեռանկարից: Եթե կարող ես «մարմնավորել բոլոր առարկաները և չնարմնավորվել առարկաների կողմից», [այն է՝ վերահսկել ամեն ինչ և չկանգնել ոչ մի խոչընդունակացած գործողության, շարժվել սրընթաց, բայց առանց շտապողականության], այն է՝ օրեւեկիվորեն արձագանքել ամեն ինչի և միաժամանակ որևէ բան չխնդրել և որևէ բանի կարիքը չունենալ. արձագանքել փոփոխություններին, բայց չփոխել էությունը, այդ դեպքում մարդն ի վիճակի կլինի «ազատ թափառել», և սա իսկապես արժանի է այդ նկարագրությանը:

Մյուս կողմից, Զի Դունը հավատացած էր, որ եթե մարդն ի վիճակի է «թափառել»՝ միայն հանուն սեփական էության ու պահանջները բավարարելու հանար, ապա դա նման է նրան, եթե քաղցած մարդը սնունդ է որոնում, կամ ծարավ մարդը գոհունակությամբ ջուր է խմելում: Ըստ նրա՝ պահանջի և բավարարման նման ցածր մակարդակները չեն կարող հանարվել «ազատ թափառել»: Դեռևսաբար «ազատ թափառել» կարելի է կոչել միայն այն, ինչ բավարարում է ծայրահեղ պահանջը: Զի Դունը «Բարձրագույն կարիքները բավարարելը» նմանեցնում էր «Երկնի վայելչության թերի վրա սլամալուն» (ըստ «Չուան ցիի» տեքստի՝ ճշգրիտ մեջբերումը պետք է որ լիներ «Երկնի ու Երկրի վայելչությունը») և «Անսահմանության ոլորտում շրջագայելիս ուրախ, միանգամայն անկաշկանդ լինելու» գաղափարին: Սա նշանակում էր ապրել տիեզերում, բայց միևնույն ժամանակ չսահմանափակվել սահմանափակ աշխարհով և ամբողջությամբ անցնել նյութական աշխարհի սահմանները, մտքի մեջ լինել անկաշկանդ ու առանց կապանների: Նա հենց սա նկատի ուներ, եթե ասում էր. «Ազատ թափառելը նշանակում է հասմել Ծայրագույն մարդու մտքի լիարժեք լուսավորականությանը»: Զի Դունի կարծիքով՝ «ազատ թափառելը կախված էր միայն ժամանակի ու տարածության սահմաններն անցնելու Ծայրագույն մարդու ունակությունից»:

Զի Դունի մեկ այլ էսե, որ հայտնի է «Զի սե յու սյուան լուն» [Արտաքին տեսքերի ինքնության ուսմունքի՝ մետաֆիզիկականի ոլորտում ազատ թափառելու քննախոսություն] վերնագրով, այլևս գոյություն չունի: Սակայն հնարավոր է եգորակացնել, որ այն պարունակում էր տեսություն, որն առաջացել էր «արտաքինի ինքնության ուսմունքի [զի սե ի] և «ազատ թափառելու» նրա ուսմունքի [սյուան յան ի] գուգակցումից: Եթե Ծայրագույն մարդն ի վիճակի լինի գիտակցել այն սկզբունքը, որ «արտաքին տեսքն ինքնին արտաքին չէ», [սե բու ցի սե], ապա նա ի վիճակի կլինի «մարմնավոր բոլոր իրերը և չնարմնավորվել բոլոր իրերի կողմից»

և «ունենալ մետաֆիզիկականի սկզբունքի գգացողությունը և չնասնակցել գործողությանը, շարժվել արագ, բայց առանց շտապողականության». նման մարդը «ազատ կրափառի ամենուր և կկարողանա գնալ այնտեղ, ուր կկանենա»: Այլ կերպ ասած՝ նման մարդու միտքը ամբողջությամբ ի վիճակի կլինի անցնել ժամանակի ու տարածության բոլոր սահմանները: Դետևաբար, ըստ Զի Դունի տեսակետի՝ Բուդդա դառնալն իրականում նշանակում էր ազատ թափառել և ամբողջությամբ ազատվել սովորույթներից. սրանք հենց այն նպատակներուն էին, որոնց ձգտում էին սյուանայուել [դասուական մետաֆիզիկա] գիտնականները: Այս տեսանկյունից տեսական հակասության անհետևողականություն չկա նրա «մետաֆիզիկականի ոլորտում արտաքինների ինքնության սկզբունքով ազատ թափառելու ուսմունքի» [ձի սե յու սյուան լուս] և նրա «ոչնչությունից առաջացող արտաքինների ինքնության ուսմունքի» միջև:

Վերը նշված վերլուծությունից պարզ է դառնում, որ Զի Դունի՝ արտաքինի ինքնության ուսմունքում քննարկվող հարցերը նույնը էին, ինչ այն հարցերը, որոնք բարձրացվեցին սյուանայուելի շրջանակում: Ավելին, սյան յառի [ազատ թափառում] հարցի մասին նրա սեփական տեսակետներից տեսնում ենք, որ նա ինքն էլ սյուանայուել գիտնական էր [դասուական մետաֆիզիկա]: Չնայած նրա տեսակետները տարբերվում էին Գուր Սյանի տեսակետներից, իրականում դրանք բավական մոտ էին Զուան Չոռուի [Չուանցի] նախնական գաղափարներին:

«Նախնական Ոչնչի ուսմունքի նշանակությունը [թեն ու ի]: «Լյու ձյա ցի ցուն լունից» [Վեց դպրոցների և յոր աղանդների քննախոսություն], որը գրել է վանական Թան Զին, և «Չուն Լուն Շուլից» [Պրաննյայա մուլա սաստրտիկայի մեկնաբանություն կամ Միջինի մեդիտացիայի քննախոսություն], որը գրել է վանական Զի Քանը (Զի Քան), «քեն ու ին» [Նախնական ոչնչի ուսմունք] բաժանվեց երկու խոշոր ուղղության: Մեկը «քեն ու ցունն» է [Նախնական ոչնչի դպրոց], իսկ մյուսը հայտնի էր «քեն ու ի ցուն» [Նախնական ոչնչի այլընտրանքային ուղղություն] անունով: Առաջին դպրոցը պաշտպանում էր ուսմունքի ձևը, որին աջակցում էր վանական Դառ Անը, վերջինը պաշտպանում էր Պանդիտա Շենը [կամ Ֆա Շենը], որը հայտնի է նաև Զու Դառցյան անունով]: Իրականում նրանք խոշոր հարցերում նման էին իրար, իսկ մասն հարցերում տարբերվում էին: Դետևաբար, մենք այստեղ պետք է մանրամասնենք ոչ թե տարբերությունները, այլ վերլուծենք միայն Դառ Անի՝ «նախնական ոչնչի ուսմունքը» [թեն ու], որպեսզի ցույց տանք այս ուսմունքի հարաբերությունները սյուանայուել ուսմունքների հետ:

«Չուն լուն սույուում» Զի Քանը (Զի Քան) գրում է.

«Կումարաջիվա Պանդիտայի ժամանումից առաջ բուդդայական ուսմունքի երեք դպրոց կար Չանանում [Չինաստանի Թան դինաստիայի մայրաքաղաքը]: Մեկը վանական [Շի] Դառ Անի դպրոցն էր, որը ներկայացված էր Նախնական ոչնչի մասին ուսմունքներում, որտեղ նա պնդում էր, որ ուն [ոչնչի կամ չկեցություն] գոյություն ուներ բոլոր արարածներից առաջ, իսկ կունը [դատարկություն կամ չգոյություն] բոլոր ձևերի սկիզբն էր: Նա նաև պնդում էր, որ մարդկանց [իրենց լուսավորությունից] հետ էր պահում յուի զգացողությունը [գոյություն կամ կեցություն], երբ յունն իրականում արդյունք է, և ոչ թե սկիզբ: Եթե մարդիկ միայն կարողանային իրենց միտքը կենտրոնացնել գրիունակության վրա, նրանք կկարողանային ճնշել բոլոր շեղ մտքերը: Դասկանալ նրա կարևորությունը նշանակում է պահպանել հանդարտությունը Նախնական ոչնչի համընդիանուր լուսավորու-

թյան մեջ: Բոլոր անթիվ-անհամար դիարմաները [ֆան կամ իրերը] ունեն ինչպես նախնական էություն, այնպես էլ դատարկություն և վախճան. հենց սա նկատի ունենք, երբ ասում ենք Նախնական ոչինչ»:

Այս մեջքերումն առաջարկում է, որ Դառ Անը նախ և առաջ պնդում էր, որ բոլոր դիարմաների, նրանց բոլոր ծևերի ու երևույթների գոյությունից առաջ կար ու ոչինչ կամ չկեցությունն և կուն դիատարկությունն կամ չգոյությունն: Սակայն, կուն ուն [չգոյություն և դատարկություն կամ չկեցությունն նույնը չէ], ինչ սու կունը [դիատարկությունն]: Յետևաբար, Դառ Անը ասում էր. «Ուն [չգոյությունն] գոյությունն է ունեցել նախնական ծևափոխությունից [կամ արարումն] առաջ. կունը [դիատարկությունն] բոլոր ծևերի [ծևավորված նյութը] սկիզբն էր. հենց սա նկատի ունենք, երբ խոսում ենք նախնական ոչինչ մասին: Սա չի նշանակում, որ բոլոր իրերը ծնունդ են առել [իատուկ] դիատարկությունից»: (Տե՛ս Թան Չիի «Լյու ծյա ցի ցուն լունի» մեջքերումն «Մին Ցեն Զուան չառ» [Նշանավոր վանականների կենսագրությունների ծեռագրի կովանորինակն]): գրքում: Յետևաբար, երբ Դառ Անը պնդում էր, որ «վան յուն բոլոր իրերը առաջացել են կուն ուից» [դիատարկությունն կամ չգոյությունն], կուն ու եզրույթը չէր նշանակում սու կուն [դիատարկությունն]: Ինաստն այն էր, որ կունը [դիատարկությունն] կամ ուն [չգոյությունն] վան յուից [բոլոր իրերը] նախնական գոյաբանական նյութը էր: Միայն այսպես այն կարող էր գոյություն ունենալ «բոլոր գոյություններից առաջ» [վան յու]:

Չարկ է նշել, որ Դառ Անի՝ Կուն ցունի [Դիատարկության աղանդ կամ Չկեցության աղանդ] ընկալումը բուրդայական պրաճնա ուսմունքում այնքան էլ չէր համապատասխանում իր իսկ ուսմունքներում աղանդի ընկալմանը, որտեղ «Նախնական ոչինչը կարծես թե ծեռք էր բերել այլ նշանակություն՝ «ի սկզբանե դիարման չի ունեցել ինքնուրույն էություն [ցի սին]», կամ, այլ կերպ ասած, ոչ մի երևույի չունի իրական գոյաբանական նյութը: (Յետագայում ավելի շատ կկենտրոնանանք այս հիմնախնդրի վրա): Փոխարենը կարելի է ասել, որ Նախնական ոչինչ Դառ Անի ուսմունքը որոշակի նմանություն ունի Վան Բիի՝ «ընդունել ուն [չգոյությունն]՝ որպես ծագում [ի ու վեյ]» գաղափարի հետ: Իրականում, այն գոյւցեավելի մոտ է Զան Զանի գաղափարներին: Ինչպես Վան Բին, այնպես էլ Զան Զանը շեշտում էին «չգոյությունը՝ որպես ծագում» [ի ու վեյ թեն] գաղափարը, բայց երբ նա խոսում էր ուից [չգոյությունն] մասին, թվում էր, թե նկատի ունի յուից [գոյությունն] դուրս [անդին կամ վեր] որևէ բան: Օրինակ, նա ասում էր. «Քանի որ գոյություն ունի այսպես կոչված Ծայրահեղ չգոյություն [ցի ու], հետևաբար այն կարող է լինել բոլոր փոփոխությունների և ծևափոխությունների [որոնցից առաջացել է արարումն] ծագումն ու արրուրը»: Նա նաև ասում էր. «Նա, ով չի ծնվել, կարող է լինել ծնված ամեն ինչի սկզբանադրյուր»: Այս օրինակներում Զան Զանը մտքում հաստատում էր, որ վան յուից [ողջ գոյությունն] վեր և անդին գոյություն ունի անդրանցական բացարձակ, որը ծառայում է՝ որպես ծագում, որից և որով էլ ծնվում է ողջ գոյությունը:

Այս տեսակետը զգալիորեն տարբերվում էր Վան Բիի կարծիքից: Վանը հավատացած էր, որ չնայած «չգոյությունը» [ու] «գոյության» գոյաբանական նյութն էր, այն գոյություն չունի յուից դուրս: Նա ասում էր. «Չգոյությունը չի կարող անանուն լինել. այն պետք է ունենա գոյության պատճառ»: Վանը նաև հավատացած էր, որ նյութը [թի] չի կարելի գատել օգտագործումից: Նա ասում էր. «Մենք պետք է օգտվենք չգոյությունից. մենք չենք կարող չգոյությունը ընդունել միայն որպես նյութ»:

Մյուս կողմից, երբ Դառ Անը խոսում էր Նախնական ոչնչի մասին, համարում էր, որ ուն [չգոյություն] գոյություն է ունեցել վան յուից [բոլոր գոյությունները կամ բոլոր էությունները] առաջ: Յետևաբար նա ավելի մոտ էր Զան Զանի գաղափարներին: Ավելին, Դառ Անը, ծիշտ այնպես, ինչպես Զան Զանը, նույնիսկ օգտագործում էր «Նախնական շնչառության կամ ոգու տեսությունը»՝ յուան ցի լուն»՝ Տիեզերքի կառուցվածքը և բոլոր իրերի ձևավորումը բացատրելու համար: Թաճ Զիի «Լյու ծյա ցի ցուն լունում» արձանագրված էր հետևյալ կերպ:

Նախ և առաջ, Նախնական ոչնչի աղանդի հիմնադիրը խոսեց հետևյալ կերպ. «Ժու լայը լսա, ով եկավ, այսինքն՝ Բուդդան] եկավ՝ աշխարհը հզրացնելու: Նա դասավանդում էր Նախնական ոչնչի ուսմունքը: Դա է պատճառը, որ բոլոր խորիմաստ վայփույա սուտրաները պարունակում են տեղեկություններ լուսավորության ու ինի [իինգ բացասական տարրեր կամ գործոններ]: Նախնական ոչնչի ուսմունքի մասին: Երկար ժամանակ նախնական ոչնչի ուսմունքն ընդունվում և տարածվում էր... Բայց ինչպէ՞ս: Սկզբնական և գաղտնի արարումից առաջ ոչինչ չկար, բացի կաղապարից: Յենց այդ ժամանակ էլ Նախնական ոգին կամ Շունը սկսեց ձևավորվել և ձևափոխվել, իսկ անթիվ-անհամար երևույթներին ձև շնորհվեց... Սա չի նշանակում, որ շատ իրեր ծնվել են Դատարկությունից: Մարդկանց հետ է պահում այն, որ նրանք լճացած են մնում [իրենց ընկալման մեջ] յուի լություն] ոլորտում, որն ընդամենք արտադրանք է կամ արդյունք [և ոչ ծագում]: Եթե մարդն ի վիճակի է իր միտքը ներդնել Նախնական ոչնչի մեջ, նա ի վիճակի կլինի բորբակել այս ժամը բեռը: Յենց սա նկատի ունենք, երբ ասում ենք, որ եթե մարդը հետևի ու փառաբանի ծագումը, ծանր հետևանքները կվերանան:

Ու [չգոյություն] ասելով՝ Դառ Անը նկատի ուներ նախնական ոգին կամ շունչը [յուան ցի], որը նա ընկալում էր՝ որպես կաղապար՝ առանց ձևի կամ երևույթի: Այս տեսակետը համատեղելի էր այն մեկնաբանության հետ, որը բուդդայական վանականները՝ Հան-Վեյ ժամանակաշրջանից մինչև այս շրջանը, կիրառում էին տիեզերքի ձևավորման գաղափարի նկատմամբ, և բխում էր այս մեկնաբանություններից: Երբ վանական Քան Չուեյը թարգմանեց «Լյու Դու Չի Զին» [Վեց Պարամիտաների սուտրաների ժողովածով] գիրքը, նա 8-րդ հատորում գրեց «Չա Վեյ Վան Զին» [Արքայի խոսքերի ծածուկ իմաստների ուսումնասիրության սուտրա] վերնագրի տակ.

Այն, ինչ մենք ուսումնասիրել ենք, մեզ խոր իմացություն է տալիս այն մասին, որ երբ Մարդը պարզ նախնական վիճակում է, նա ծնվում է Նախնական Ոչնչից: Յետք տարբերակվեց Նախնական շունչը. այն մասը, որ պինդ էր ու ամուր, դարձավ հոդ, այն, որ փափուկ էր, դարձավ ջուր, այն, որ տաք էր, դարձավ կրակ, և այն, որ շարժական էր, դարձավ քամի... Այս չորս երևույթները հանդիպեցին ներդաշնակության մեջ, և ծնվեց ճանաչող հոգին: Բարձրանալով՝ այն լուսավորվեց իր ունակություններով և զգացողություններով, մի կողմ դրեց ցանկությունները՝ դատարկվելով մտքերից, և հոգին վերադարձավ Նախնական Ոչնչին: Իմացության և Ծագման այս Շունչը կամ Ոգին նույր էր, փիսրում ու աննշմար:

Դարձյալ «Ին Չի Ժու Զին Զու» [«Եշմարտության ուղին՝ այն գաղտնի պահպանելու միջոցով» սուտրայի ծանրագրություններ] գրքում «ու ին շունը» [Հինգ բացասական տարբերի նմուշներ] նկարագրվում էր՝ որպես «յուան ցիի [նախնական շունչ կամ ոգի] ազգակից»: Յետևաբար, գաղափարն այն չէր, որ «բոլոր գոյությունները» ծնվել են «դատարկությունից», այլ այն, որ «բոլոր գոյություններն» ի

հայու են եկել նախնական շնչի կամ ոգու ծևափոխության արդյունքում, որը չուներ ոչ ծև, ոչ տեսք: Բոլոր իրերը ծնվել են անծև, աներևույթ նախնական շնչից կամ ոգուց, և մարդն էլ բացառություն չեւ:

Փաստարկը շարունակվում է՝ պնդելով, որ մարդը շփոթված էր, որովհետև կառչում էր զանազան ծևերից և արտաքիններից, որոնց գոյությունը ժամանակավոր էր, բայց եթե նա ի վիճակի լիներ ընթառնել, որ ուն [չգոյություն] գոյություն ուներ ամբիշ-անհամար ծևափոխություններից առաջ, իսկ կունը [դատարկությունը] բազմաթիվ ծևերի ծագումն էր, նա կկարողանար վերադառնալ իր սեփական աղբյուրին, անցնել կյանքի ու մահվան սահմանները, ազատվել և միաձուլվել տիեզերքին և բոլոր երևույթներին, այսինքն՝ հասնել դառ [թառ] [ճանապարհ] և վերադառնալ յուան ցիին [նախնական ոգի]: Յետևաբար, Նախնական Ոչնչի մասին Դառ Անի ուսմունքում փրկության բանալին իրերի սխալ ընկալման վերացումն էր: Անգործության, ցանկության բացակայության և մտքի մաքրության դեպքում մարդն ի վիճակի կլիներ հասնել «Վերջնական դատարկությունը և խաղաղ ու ցինց երջանկության մեջ Արարող ուժի հետ թափառելով» վիճակին: (Տե՛ս «Ժեն Բեն Յու Շեն Ջին Չու» [Սուտրա՝ ցանկություններով ողողված մարդու կյանքի ծագման մասին. ծանոթագրություններ]):

Դառ Անի նկարագրած փրկության ճանապարհը գրեթե նույնական էր Զան Զանի առաջարկած տարբերակի հետ: Զանը հավատացած էր, որ եթե մարդը կարողանա թողնել բոլոր սկզբունքները և հասկանալ կյանքի ու մահվան ծագումն ու վերջնական հանգրվանը, այն է՝ որ մարդը եկել է Ծայրագույն դատարկությունից և պիտի վերադառնա այդ Ծայրագույն դատարկություն, մարդն ի վիճակի կլինի հասնել ազատության և դառնալ Ծայրագույն կեցություն, որը հասնել է դառոյին (թառ) [ճանապարհ]: Ավելին, Ծայրագույն կեցությունը այն է, «որի միտքը վերամիավորվել, վերակապակցվել է Նախնական ոգու կամ շնչի հետ, և որի մարմինը գաղտնի ներդաշնակվել է ինի և Յանի հետ»: (Տե՛ս «Լյե Ցի Չու [«Լյե Ցիի» ծանոթագրություններ] գիրքը»):

«Բու ցեն կուն լուն» գրքում [ճշմարիտ չգոյության ուսմունքի մոլորության քննախոսություն] վանական Շառն քննադատում էր Նախնական Ոչնչի գաղափարը՝ ասելով.

Նախնական ոչնչի պաշտպաններն իրենց գգացումները հարմարեցնում են ուխին [ոչինչ] և հետո գրի են առնում իրենց խոսքերը, որպեսզի պաշտպաննեն այդ փաստարկը: Սկզբում նրանք հերքում են գոյության գաղափարը և ասում, որ յուն [գոյություն կամ կեցություն] իրականում ու է [չգոյություն]: Եթե նույնիսկ հերքես չգոյության գաղափարը, այն միևնույն է, ոեր կշառունակի գոյություն ունենայ: Բուդրայական օրենքների նախնական իմաստն այն է, որ ֆեյ յուն [չկեցությունը] իրականում կեցություն չէ, և որ ֆեյ ուն [ոչ չկեցություն] իրականում չկեցություն չէ: Ինչո՞ւ հերքել կեցության գաղափարը և ասել, որ «սա կեցություն չէ»: կամ հերքել չկեցության գաղափարը և ասել, որ սա «չկեցություն չէ»:

Այս հատվածն ասում է. «Նախնական ոչնչի դպրոցը կողմնակալ համակրանքով է վերածվում ուի [չկեցություն] նկատմամբ: Նրանք ընդունում են այն գաղափարը, որ չկեցությունն իրականության գոյաբանական նյութը է, և նրա բոլոր փաստարկները հիմնված են չկեցության հենց այս փիլիսոփայության վրա: Յետևաբար, այս դպրոցի հետևորդները չեն ճանաչում յուն [կեցություն]. ավելին, նրանք հավատացած են, որ եռթյունը չի կարելի առանձնացնել չեռթյունից. այ-

սինքն՝ նրանք ընդունում են, որ «չեցությունը ծագում է»: Ավելին, նրանք հավատացած են, որ չեցությունն ինքնին չի կարող առանձնացվել չեցությունից. այսինքն՝ նրանք պահպանում են չեցության հիմնարար գաղափարը, պնդում են այն և չեցությունը համարում են ծշմարիտ չեցություն: Ինչևէ, ըստ բուդդայական սուտրաների նախնական մտադրության՝ կարևոր է և պետք է պահպանել այն միտքը, որ «չեցությունը» իրականում կեցություն չէ [ֆեյ յու բու չի ջեն ոի յու], իսկ ոչ չեցությունն իրականում կեցություն չէ [ֆեյ ու յե բու չի ջեն ոի ու]: Դեռևսաբար, հ՞նչ կարիք կա պնդել, որ «չեցությունը» նշանակում է ցանկացած մասնավոր իրի գոյություն, կամ որ «ոչ չեցությունը» նշանակում էր որևէ մասնավոր գոյության բացակայություն:

Վերը նշվածից պարզ է դառնում, որ վանական Շաոն պրածնա բուդդայականության Կուն ցունի [Դատարկության դպրոց] նախնական մտադրությունը ընդունել է՝ որպես ելակետ՝ նախնական ոչնչի ուսմունքը և նրա կողմնակիցներին ուն [չգոյություն] հաստատելու մեջ մնադրելու համար: Նա նաև քննադատում է, որ նրանք անկարող են ընթանել, որ «չեցությունն» ինքնին ծյա մին էր [կեղծ անուն կամ պատրանք] և ոչ իրական եռլոյուն: Նրա վերջնական փաստարկն այն էր, որ միայն «կեցության և չեցության հերքումն է» բուդդայականության դասավանդած ծշմարիտ սկզբունքը: Այսպիսով, «Բու ջեն կուն լունում» [Եշմարիտ ոչնչի ուսմունքի մոլորության քննախոսություն] վանական Շաոն քննադատում էր ոչ միայն հենց նախնական ոչնչի ուսմունքը, այլև Վան Բիի՝ «ոչինչն արժևորելու» գաղափարը, ինչպես նաև Գուու Սյանի՝ «Էլությունը գովարանելու» գաղափարը, և այդպիսով Վեյ և Զին ժամանակաշրջաններում մշակեց [ոչ միայն բուդդայականության, այլև] այլանայուեի [դառնական մետաֆիզիկա] ուսմունքները:

Ոչ իրականի, գոյության կամ դատարկության [բու չեն կուն ի] ուսմունքի նշանակությունը: Կարելի է հիմնավորել, որ վանական Շաոյի պրածնա բուդդայականության երեք դպրոցներից «Բու ջեն կուն լունի» քննադատությունը (ի դեպ, այդ դպրոցներն այն ժամանակ մեծ մասսայականություն էին վայելում Չինաստանում) հիմնված էր բուդդայական պրածնայի հնդկական ուսմունքների նախնական մտադրության վրա: Պնդելով, որ «դատարկությունն իրական չէ» [բու ջեն կուն], նա առաջարկում էր, որ բոլոր իրերն իրականում գոյություն չունեն, կամ որ բոլոր իրերն իրական չեն, այլ, ավելի շուտ, բոլոր իրերի գոյությունն անիրական են, և որ դա է պատճառը, որ մենք սա [գոյություն] կոչում ենք կուն [դատարկություն կամ անիրականություն]: Այլ կերպ ասած՝ «դատարկությունը» հավասար է «անիրականության»: Սա հնդկական բուդդայական պրածնա ուսմունքի Կուն ցունի [Դատարկության դպրոց] հիմնարար պայմանի չինական արտահայտությունն էր, մասնավորապես՝ այն պայմանի, որ «ողջ ֆան [դիարմա կամ իրերը] չունեն գոյաբանական սեփական նյութ» [ջու ֆա բեն ու ցի սին]:

Ըստ վանական Շաոյի՝ «Ձուն լունը» [Միջինի քննախոսություն] պնդում է, որ տարամտությունը (պարադրս), որ եթե մի տեսանկյունից «բոլոր ֆայերը [դիարմա] գոյություն չունեն, այլ տեսանկյունից «բոլոր ֆայերը նաև, միևնույն ժամանակ, անգո չեն»: Նա պնդում է, որ «անկության և դեռևս չեցության» սկզբունքը հասկանալը հավասար է վերջնական ծշմարտությունը հասկանալուն: Ըստ նրա՝ սա է պատճառը, որ չնայած գոյություն ունեն զանազան ձևեր ու արտաքին ունեցող բազմաթիվ իրեր, վերլուծության դեպքում պարզ է դառնում, որ բոլորն ել ծևավորվել են միայն պատճառներից, ազդեցություններից և նրանց համադրու-

թյուններից. նրանք չունեն ցի սին [սեփական էություն կամ գոյաբանական նյութ, կամ իրականություն իրենց ներսում և իրենցից դուրս]: Յետևաբար, սա կոչվում է «չգոյություն»: Մյուս կողմից, չնայած բոլոր դիարմաները չունեն իրական գոյաբանական նյութ, այնուամենայնիվ, կան տարբեր ձևեր և արտաքին ունեցող երևույթներ, և հետևաբար դիարման նաև «ոչ անգոյ» է: Այսպիսով, ըստ նրա՝ չի կարելի է ասել, որ իրեր չկան, կարելի է ասել, որ չկան իրական իրեր:

Այդ դեպքում իմացած է կարող է լինել «անիրական գոյություն» [ձյա յու]: Ըստ վանական Շաոյի՝ «Զուն լունի» մեկնաբանության՝ բոլոր իրերը ձևավորվում են պատճառների և ազդեցությունների համադրություններից և վերադասավորումից, և հետևաբար չունեն գոյաբանական նյութ: Սակայն, եթե իրերը կազմվում են պատճառների ու ազդեցությունների համադրությունից, դրանք հետո դառնում են «ոչ անգոյ», և չի կարելի ասել, որ իմանովին անգոյ են: Այս հիմնախնդիրի քննարկման մեջ կիրառելով տրամաբանական փաստարկման մեթոդ՝ վանական Շաոն եզրակակում է, որ այս սկզբունքը հիմնական ծշմարտություն է: Ըստ նրա՝ եթե «Էությունն» «իրական էություն է», ապա այն պիտի գոյություն ունենա սկզբում և գոյությունը շարունակի մինչև վերջ, ուստի կարիք չի լինի սպասել պատճառների և ազդեցությունների համադրությանը՝ «Էությունը» կյանքի կոչելու համար: Եթե, մյուս կողմից, «չկեցությունը» իրական չկեցություն է, ապա այն ինքնին պիտի գոյություն ունենա անենասկզբից մինչև վերջ, և նաև կարիք չի լինի սպասել պատճառների և ազդեցությունների համադրությանը, որոնք կյանքի են կոչում «չկեցությունը»:

Եթե ընդունենք, որ «Էությունը» չի կարող ինքնուրույն լինել, այլ պետք է կյանքի կոչվի միայն պատճառների և ազդեցությունների համադրության միջոցով, ապա կիասկանանք, որ «Էությունը» «իրական էություն» չէ: Նա ասում էր. «Կեցությունն իրական կեցություն չէ. հետևաբար, չնայած այն գոյություն ունի, չենք կարող ասել, որ այն իրական է»: Միևնույն ժամանակ մարդը պետք է նաև ասի, որ գոյություն ունի «ոչ չկեցություն»: Եթե կա իրական «չկեցություն», ապա այն միակուր է և լիովին անշարժ [չան ժան բու դրւն [այն է՝ ունակ չէ ձևափոխությունների], և ոչ մի երևույթ չի կարող կյանքի կոչվել: Միայն այսպիսի ամբողջության մեջ անշարժ «չգոյությունը» կարող է կոչվել «իրական չգոյություն»: Յետևաբար, եթե ասենք, որ «բոլոր ֆաները» [դիարմա] «ծշմարիտ անգոյ» է, բոլոր ֆայերի սերունդը գոյություն չի ունենա, և ոչինչ չի առաջանա պատճառներից և ազդեցություններից: Քանի որ «բոլոր ֆայերն» առաջանում են պատճառների և ազդեցությունների արդյունքում, ապա չենք կարող ասել, որ կա իրական «չգոյություն»:

Թե՛ բովանդակության, թե՛ մեթոդաբանության տեսանկյունից կարելի է ասել, որ վանական Շաոյի «Բու զեն կուն լունը» իմաստով ավելի մոտ էր հնդկական բուդդայականության պրածնա ուսմունքի նախնական մտադրությանը: Նրա «Բու զեն կուն լուն» ուսմունքի հայտնությունը պատահական չէր. պատճառն այն էր, որ մինչ այդ ժամանակահատվածը երկու պայմաններն արդեն կյանքի էին կոչվել: Առաջինն այն փաստն էր, որ կումարաջիվան արդեն իսկ ուներ բազմազան սուտրաներ, որոնք [չինացիներին] տրամադրում էին պրածնա ուսմունքների լիարժեք ացատրությունը, ինչպիսիք են «Դա զի դու լունը» [Դարամիտայի կամ Մեծ իմաստությամբ տեղաշարժվելու քննախոսություն], «Զուն լունը» [Միջինի քննախոսություն] և «Բայ լուն» [Բարյուր քննախոսություններ] և «Շի էր մեն լունը» [Տասներկու աղանդների քննախոսություն]: Մինչ այդ հնարավոր էր ավելի պարզ

պատկերացում կազմել բուդդայականության հնդկական պրաջնա դպրոցի ուսմունքների մասին: Երկրորդն այն էր, որ այուանայութի [դառսական մետաֆիզիկա] ուսմունքների ժամանակակից զարգացումները հնարավորություն տվեցին, որ այնպիսի տեսություններ, ինչպիսին է «չեցության և դեռևս ոչ չեցության» [ֆեյ յու ֆեյ ու] տեսությունը հայտնվի չինական մտքում և ազդեցություն թողնի չինացի մտածողների վրա (այս թեմայի շուրջ զարգացումները՝ ավելի ուշ):

## **9.2 Ներմուծված գաղափարական մշակույթի (բուդդայականություն) և Չինաստանում արդեն իսկ գոյություն ունեցող գաղափարական մշակույթի փոխազդեցությունը**

Օտար գաղափարախոսական մշակույթի և գոյություն ունեցող տեղական գաղափարախոսական մշակույթի փոխազդեցության կարևորության հարցը շատ խճճված է, և նրա ուսումնասիրությունը խիստ կարևոր է: Մեր երկրի փիլիսոփայական մտածողությունը [և, իրականում, նրա ողջ մշակույթն ու հասարակությունը] խոշոր փոփոխությունների ենթարկվեց Վեյ և Չին դինաստիաներում և Յյուսիս և Յարավ դինաստիաներում: Կարելի է համգիստ ասել, որ բուդդայականության ներմուծումն այս փոփոխության ամենակարևոր պատճառն է: Քանի որ չինական բուդդայականությունն օտար գաղափարախոսական մշակույթ էր, օգտակար կլինի ուսումնասիրել երկուսի փոխազդեցությունը և այն գործընթացը, որի միջոցով այս օտար գաղափարախոսական մշակույթն ինտեգրվեց Չինաստանի՝ նախապես գոյություն ունեցող ավանդական գաղափարախոսական մշակույթը: Գործընթացը ներառում է նրա զարգացումը՝ սկսած Չինաստանի ավանդական գաղափարախոսական մշակույթին նրա ձևական կցումից մինչև սեփական բնութագրի մշակումը, որն ակնհայտորեն հակադրվում և հակասում էր Չինաստանի գաղափարախոսական մշակույթին, և մինչև այն ժամանակահատվածը, երբ այն դարձավ չինական գաղափարախոսական մշակույթի անքածան մաս:

Գաղափարախոսական մշակույթի ձևավորման արմատները միանշանակ հասարակության պատմության մեջ են. այսպիսով, համաշխարհային պատմության մեջ ի հայտ են եկել զանազան գաղափարախոսական մշակույթներ, որոնք առանձին են և տարբերվում են թե՝ տեսակով, թե՝ ձևով: Գաղափարախոսական մշակույթի բնութագիրը և նրա զարգացման նակարդակը հասկանալու համար անհրաժեշտ է այն համեմատել այլ գաղափարախոսական մշակույթների հետ: Եթե Վեյ, Չին և Յյուսիս և Յարավ դինաստիաների ժամանակաշրջանում Չինաստան ներմուծված բուդդայականությունը համեմատենք այն ժամանակ գոյություն ունեցող Չինաստանի տեղական ավանդական գաղափարախոսական մշակույթի հետ, կկարողանանք խորությամբ հասկանալ ոչ միայն ավանդական չինական գաղափարախոսական մշակույթի բնութագիրն ու զարգացման մակարդակը, այլև այն բոլոր պատճառները, որոնց շնորհիվ օտար գաղափարախոսական մշակույթը յուրացվեց չինացիների կողմից: Երկու ազգի [կամ երկրի ու տարածաշրջանի] մշակույթների համեմատական վերլուծության մեթոդը կոչվում է համեմատական փիլիսոփայություն, որն առաջնորդվում է մարքսիստական մտքով:

Մեկ այլ նշանակալի երկույթ, որն ի հայտ եկավ Վեյ, Չին և Յյուսիս ու Յարավ դինաստիաներում, դառսական կրոնն էր: Այն ձևավորվեց Արևելյան Չան դինաս-

տիայի ուշ շրջանում և ծեռք բերեց իր իսկ տեսական համակարգը: Չնայած կարելի է ասել, որ դառսական կրոնը ծևավորվեց բուդդայականության ազդեցությամբ կամ խթանով, այնուամենայնիվ, այս կրոնը հատուկ էր չինացիներին, մասնավորապես Յան ժողովրդին, և հետևաբար, իր բնութափով առանձնանում էր բուդդայականությունից: Բուդդայականությունը ներմուծվել էր Վեյ և Չին դինաստիաներից առաջ և սկզբնական փուլերում արդեն իսկ մուտք էր գործել գոյություն ունեցող դառչու [դառսական տեխնիկա և հմտություններ] համակարգ: Ուստի, թեև երկու կրոնների հակասություններն իրական էին, դրանք ակնհայտ կամ ակնառու չէին: Վեյ և Չին դինաստիաներից ի վեր, սակայն, քանի որ աստիճանաբար ծևավորվել էր մտքի և տեսության դառսական կրոնի համակարգը, բուդդայականությունը՝ որպես ներմուծված օտար գաղափարախոսական մշակույթ, կարիք ուներ աստիճանաբար ծերազատվել նախապես գոյություն ունեցած տեղական գաղափարախոսական մշակույթի հետ կապվածությունից, երկու կրոնների միջև հակասություններն ու բախումը դարձան ամենօրյա, սուր և լարված: Եթե մեզ վիճակված լինի վերլուծել և համեմատություններ անցկացնել [այս երկու կրոնների] այն հիմնախնդիների միջև, որոնց շուրջ նրանք վիճում էին, ավելի հստակ և հեշտությամբ կտեսնեինք դառսական կրոնի բնութափիրը, ինչպես նաև փոխադարձ ազդեցությունը, որ երկու կրոններն թողել են մինյանց վրա իրենց հակադրությունների և բանավեճերի ընթացքում: Սա նրանց խնդիրն է, որոնք ցանկանում են զբաղվել համեմատական կրոնի ուսումնասիրությամբ: Այս դեպքում նաև ճիշտ կիմի մշակել և զարգացնել հետազոտության այս ճյուղը, որպեսզի կարողանանք ծևավորել կրոնների համեմատական ուսումնասիրություն, որը դարձյալ առաջնորդվում է մարդսիստական մտքով:

Որո՞նք էին բուդդայականության նշանակալի առանձնահատկությունները Չինաստան ներմուծվելուց և Չինաստանում տարածում գտնելուց և զարգանալուց հետո: Դրանցից ո՞րն է պետք ուսումնասիրել և [զարգացման] ի՞նչ ընդհանուր օրենքներ կարող ենք քաղել [նման ուսումնասիրությունից]: Ի՞նչ եզրահանգումներ կարող ենք անել: Քետագա քննարկման մեջ կառաջարկենք վերլուծության երեք խոչը խնդրահարույց ոլորտ:

### 9.2.1 Հարմարեցում ավանդույթին

Եթե բուդդայականությունը ներմուծվեց Չինաստան, սկզբնական շրջանում «պատվաստվեց» արդեն իսկ գոյություն ունեցող չինական գաղափարախոսական մշակույթին. հետագայում այն աստիճանաբար ինքնուրույն ծևավորվեց և սկսեց ազդել հենց այդ մշակույթի և չինական հասարակության վրա: Պետք է հասկանալ, որ բուդդայականությունը մեծ ազդեցություն ունեցավ իր ներմուծումից հետո՝ բավական ուշ:

Ներմուծվելով Չինաստան Յան դինաստիայի ընթացքում՝ բուդդայականությունը նախ կցվեց դառչուին: Վեյ և Չին ժամանակահատվածում, սյուանսյուեի [դառսական մետաֆիզիկա] մասսայականության և ազդեցության պատճառով բուդդայականությունն առանձնացավ և միացավ վերջինիս: Յան դինաստիայում [չինական] բուդդայականության հիմնական սկզբունքներն էին՝ «հոգու կամ ոգու մշտնշենականությունը» և «պատճառներն ու ազդեցությունները»: Սրանք գաղափարներ էին, որոնք ի սկզբանե գործարկվում էին ավանդական չինական մտ-

քում, կամ որոշ դեպքերում գոմե նույնական էին որոշ գաղափարների հետ, որոնք արդեն գոյություն ունեին չինական փիլիսոփայական ավանդույթում: Ավելին, չան մեղիտացիայի [դիյամ] Յինայանա մեթոդները, որոնք քարոզվում էին այն ժամանակ, նաև ընդիհանուր առմամբ գրեթե նման էին շնչառական վարժություններին, որոնք դասավանդում էին Յուան-Լառ դառսիզմի (թառսիզմ) դպրոցը և Աննահության [շեն սյան ծյա] դպրոցը: Վեյ և Չին դառսիզմից առաջ մետաֆիզիկական ուսմունքները մասսայականություն էին վայելում, և քանի որ բուդդայական պրածնա ուսմունքների Կուն ցունը [Դատարկության աղանդը] բավական նման էր այս դառսական մետաֆիզիկական ուսմունքներին, բուդդայականության այս ճյուղը, հետևաբար, կարողացավ մեծ տարածում գտնել՝ կցվելով այուանսյութին: Յետևաբար, միայն այն ժամանակ, երբ Կումարաջիվան բարգմանեց սուտրաներն ու մեկնարանությունները [սաստրաներ], օրինակ՝ «Զուն լունը», հնդկական բուդդայականության պրածնա փիլիսոփայության Կուն ցունի ուսմունքների չինական ընկալումը մոտեցավ այս ուսմունքների նախնական մտադրություններին: Վերը արված սեղմ նկարագրությունից երևում է, որ երբ բուդդայականությունն առաջին անգամ ներմուծվեց Չինաստան, այն սկզբում գոյություն ուներ՝ որպես նախկին գաղափարախոսության լրացում, և միայն այդպես կարողացավ աստիճանաբար մասսայականություն վայելել:

Այստեղ անհրաժեշտ է բարձրացնել մի հարց, որը քննարկման կարիք ունի: Երբ Չի-Լոու-ձյանը մթ. 179-րդ տարում բարգմանեց «Դառ Սին Չինը» [ճշմարտության պրակտիկայի կամ ճանապարհի սուտրան], գրքում կար մի փին [իհատված կամ թերթ], որը հայտնի է թեն ու փին [նախնական ոչնչի հատվածը] անունով: Սա առաջացել է գուի ու [ոչնչի մեծարում] [սյուանսյուե] և ի վեյ թեն [ոչնչի ընդունումը՝ որպես ծագում] գաղափարներից շատ առաջ, որոնք նույնացվում են Յե Յանի [190-249] և Վան Բիի [226-249] հետ: Արդյո՞ք սա նշանակում է, որ Վանի և Յեի՝ «ոչնչը որպես ծագում ընդունելը» բուդդայականության ազդեցության արդյունք էր կամ հետևանք: Մենք չենք կարծում, որ սա հարցի պատասխանն է. ըստ պատմական արձանագրությունների և փաստերի՝ կարելի է կարծել, որ դառսական մետաֆիզիկական մտածողությունը [կամ այուանսյուե] առաջացել է միայն բուդդայականության ազդեցության ներքո: Նախ և առաջ, դառսական մետաֆիզիկական մտածողության ծևափորումն արձագանքում էր ժամանակի հասարակական կարիքներին: Ավելին, սյուանսյուեի ի հայտ գալը պետք է դիտարկվի այդ ժամանակաշրջանի կամ նախորդող շրջանի այլ ինտելեկտուալ զարգացումների լույսի ներքո և դրանց համատեքստում: Դրանք ներառում են «մին լի ջի սյուե»՝ [անունների և սկզբունքների մասին] ուսմունքների զարգացումները և քայի [կարողություն] և սինի [եռլոյն կամ կերպար] տարբերությունը, որն ի հայտ եկավ Յան դինաստիայի անկման և Վեյ դինաստիայի վերելքի միջանկյալ ժամանակահատվածում. այդ շրջանում տեղի ունեցավ նաև կոնֆուցիականության, դառսիզմի (թառսիզմ) զանազան դպրոցների վերածնունդը, Անունների [Մին ծյա] և լեզալիզմի դպրոցի հիմնադրումը, նրանց տրամախաչումն ու ազդեցությունը: Սա հնարավորություն է տալիս տեսնել, որ գաղափարախոսական և ինտելեկտուալ զարգացման որոշ անխուսափելի միտումների տեսանկյունից սյուանսյուեի ի հայտ գալը Չինաստանի տեղական ինտելեկտուալ զարգացման բնական գործնականությունը էր:

Մենք չենք գտել համոզիչ վկայություններ առ այն, որ Վան Բին և Յե Յանը կրել

Են բուդդայականության ազդեցությունը: Նույնիսկ եթե հայտնաբերվի մեկ կամ երկու վկայություն, որոնք կապացուցեն, որ Վանը, Յեն և նրանց գործըկերներն ուղղակի կամ անուղղակի շփում են ունեցել ժամանակի բուդդայականության հետ, այնուամենայնիվ, մենք պետք է չմոռանանք, որ սյուանայուեի գաղափարներն ինքնին նախապես գոյություն ունեցող տեղական չինական գաղափարների զարգացման արդյունք են: Ավելին, բազմաթիվ վկայություններ ցույց են տալիս, որ ընդհանուր առնամբ և Յան, և Վեյ ժամանակաշրջանում չինական ազնվականությունը, որ կազմված էր գերազանցապես սպաներից և գիտնականներից, բնավ բարձր կարծիք չուներ բուդդայականության մասին: Օրինակ, Մոռուցին «Լի հուո լունում» [Սխալի տեղաբաշխման քննախոսություն] երկում ասում է, որ «տարեց մարդիկ և գիտնականները մեծ մասամբ հեգուում են այն [այսինքն՝ բուդդայականությունը] և անվանարկում» և «մենք չենք լսել, որ հինգ տաղանդների ընդունած կանոններում և ուսմունքներում կամ կոնֆուցիական գիտնականների՝ անտառում անցկացվող քննախոսումներում շոշափվող բուդդայական սկզբունքները գնահատվում են և արժանանում ակնածանքի»:

Կա մի բան, որը շատ ավելի հստակ ու համոզիչ ներկայացնում է այս հանգամանքը, մասնավորապես այն, որ մինչ ժամանակի պրաջնա բուդդայական ուսմունքներում օգտագործվում էր բեն ու [Սխանական ոչինչ] եզրույթը, այն տարբերվում էր Վան Բիի՝ ի ու վեյ բեն [ոչինչը ընդունել որպես սկզբնադրյուր] գաղափարից: Պրաջնայի զանազան սուտրաներում բեն ու զաղափարը նշանակում էր, որ «բոլոր ֆայերը [դիարմա] չունեն գոյաբանական սեփական էություն» [ջու ֆա բեն ու ցի սին], այսինքն, որ բոլոր իրերը, իրենց ներսում և իրենցից դուրս, չունեն իրական նյութ: Եթե սա ճիշտ է, ապա հերթվում է այն գաղափարը, որ իրերն ունեն նախանական նյութ: Երբ Վան Բին խոսում էր բեն ուի [Սխանական ոչինչ] մասին, նա մյուս կողմից նկատի ուներ, որ «ոչինչը գոյության [ու շի յու դի բեն լի] նախանական նյութը է», այսինքն՝ գոյաբանական իրականությունը:

Բուդդայական ուսմունքները, որոնք Զինաստան ներմուծվեցին Վեյ-Չին ժամանակաշրջանում, հիմնականում Մահայանայի պրաջնա Կուն ցունի [Դատարկության դպրոց] ուսմունքներն էին: Նրա հիմնարար նախադրյալն այն էր, որ «բոլոր իրերն ի սկզբանե չեն ունեցել գոյաբանական նյութ կամ սեփական էություն» [ցի սին]: Այս դեպքում ֆա [դիարմա] եզրույթը վերաբերում էր բոլոր իրերին՝ նյութական, բայց նաև հոգևոր: Բուդդայական սուտրաներում նրանք հայտնի էին աղիարմա անունով: «Դա բո-ժե ծի մինի» [Պրաջնա սուտրաների մեծ ժողովածու] 556-րդ հատորում հանդիպում ենք հետևյալ հատվածին.

Ընդունենք, օրինակ, որ մենք, ի վերջո, չունենք կյանք: Մենք «ծյա մին» ենք [կեղծ կամ անիրական անուններ] [այսինքն՝ մենք պատրանք կամ կեղծիք ենք]: Մենք չունենք ցի սին [սեփական էություն կամ էություն սեփական անձի ներսում և նրանից դուրս]: Նույն կերպ նաև բոլոր դիարմաները նույնպես ոչինչ են, միայն կեղծ անուններ, և չունեն էություն ոչ եսի ներսում, ոչ նրանից դուրս: Ի՞նչ է սեն [արտաքին]: Այս չի կարող ենթադրվել, չի կարող և ծնվել: Ի՞նչ է շոուն [ընդունում կամ ճակատագիր] կամ սյանը [միտք] կամ սինը [գործողություն] կամ շին [ըմբռնում կամ ընկալում]: Նրանք նույնպես չեն կարող ենթադրվել կամ ծնվել:

Պրաջնա ուսմունքի Կուն ցունը [Դատարկության դպրոց] ընդունում էր, որ եթե մարդիկ միշտ կառչում են այն գաղափարից, որ կա մի բան, որը կարելի է կոչել յու վուռ [ունենալ սեփական ես կամ սեփական գոյություն], այն է՝ ցի թի [սեփա-

կան էություն], նրանք դա անում են՝ առանց գիտակցելու, որ «Եսը» ոչ այլ ինչ է, եթե ոչ սեի [արտաքին] իինգ տարրերի [ու ին], շոուի [ընդունելություն կամ ճակատագիր], սյանի [միտք], սինի [գործողություն] և շիի [ընկալում կամ ընթանում] համադրություն: Նրանք, անշուշտ, միսավում էին այն հարցում, որ գոյություն ունի «Ես (սեփական անձ)»: «Եսն» ինչպես կարող է գոյություն ունենալ այս իինգ տարրերից առանձին կամ անկախ: Յետևաբար, «Ես կամ սեփական անձ» եգորույն իրականում ոչ այլ ինչ էր, քան վարկած, անիրական անուն [ձյան մին], և չի պարունակում որևէ սեփական էություն: Սա ծշմարիտ էր ոչ միայն մարդկանց, այլև բոլոր դիարմաների [իրերի] համար: Յետևաբար, «Գուան սի թի փինը» [Քարվարիարյա սաթյանիի մեղիտացիայի կամ Չորս ազնիվ, ծշմարիտ հիմնավորնան հատված] «Զուն լուն» գրքում պնդում էր.

Չանազան պատճառներն ու ազդեցությունները ստեղծում են դիարմա: Եսի կամ սեփական անձի գաղափարը դատարկության գաղափարն է, բայց այն նաև կեղծ անուն է: Սա Կենտրոնական ճանապարհի կամ Միջինի իմաստն է:

Այստեղ փաստարկը թերևս նշանակում է, որ քանի որ բոլոր իրերն առաջացել են պատճառներից ու ազդեցություններից, իրականության մեջ գոյություն չունի ցի սին [սեփական էություն] կամ իրական սեփական նյութ], այլ միայն կուն [չգոյություն]: Յետևաբար, եսի գաղափարն ինքնին «չգոյություն» է: Սակայն, չնայած իրերը չունեն «սեփական նյութ», այդուհանդերձ ի վերջո ամբողջ աշխարհում կան ամենատարբեր առանձին երևույթներ: Այդ դեպքում ի՞նչ են դրանք: Նրանք չունեն իրական գոյություն սակայն, անիրական գոյությունների կամ երևույթների բոլոր տեսակները նույնպես հնարավոր են: Յարմարության նպատակներից ելնելով՝ ընդունվեց այն փաստարկը, որ սրանք վարկածային կամ կեղծ անուններ են: «Ֆան գուան բո-ժե ձին» [Լույս հաղորդող Պրաջնապարամիտա սուտրան] ասում էր.

Բուդդան այսպես խոսեց Սուրիհութիի հետ [Բուդդայի տասը հիմնական աշակերտներից մեջ, ասում են, Սունյայի կամ Դատարկության ուսմունքի լավագույն ներկայացուցիչն էր. Թաղամ. ծան.]. Անուններն իրական չեն. անիրական անունը տրվում է երևույթին և կոչվում անուն, կամ իինգ ին [տարր] կամ մարդ արարած՝ տղամարդ կամ կին:

Կանական Շաոն «Բու ջեն կուն լունում» տալիս է հետևյալ բացատրությունը.

«Ֆանգուանը» [սուտրա] ասում էր. «Բոլոր դիարմաները կեղծ անվանումներ ունեն, որոնք իրական չեն»: Օրինակ, մարդը պատրանքների ծևափոխության արդյունք է, սա չի նշանակում, որ չկա մարդ, որը պատրանքների ծևափոխման արդյունք է, բայց այն Մարդը, որը պատրանքների ծևափոխման արդյունքն է, իրականում Մարդ չէ [այսինքն՝ այն մարդը, որն առաջացել է պատրանքների ծևափոխման արդյունքում, չունի իրականություն]:

Սա բարձրացնում է մի երկորորդական հարց, որը կքննարկվի այստեղ: Արդյո՞ք «սեփական անձն իր արտահայտության մեջ կուն է, թե՝ դատարկ կամ անգո» [վուր շուր ծի շի կուն] ասացվածքում կունի [դատարկություն կամ չգոյություն] գաղափարը ցույց է տալիս, որ այն ժամանակ, երբ իրերը, երևութարամության տեսանկյունից, իրականում գոյություն չունեին, այնուամենայնիվ, կար գոյաբանորեն իրական «չգոյություն» [որը նման է [Կան Բիի՝ գոյաբանական իրական ուիհն կամ անէությանը], որն ինքնին ծշմարիտ էր: Յետևագայում կտեսնենք, որ սա պրաջնա բուդդայական ուսմունքի կուն ցունի [Դատարկության դպրոց] տեսակե-

տղ չէր: Կուն ցունի կողմնակիցների համար կունը պարզապես «բոլոր դիարմաներում գոյաբանական նյութի» բացակայությունն էր: Այս հարցը բարձրացավ, որովհետև «դիարման ստեղծվում կամ առաջանում է պատճառներից և ազդեցություններից». Եսի կամ սեփական անձի հիմնավորումն ինքնին անգո է» ասույթնը առաջարկվել էր հենց նրա համար, որպեսզի թուլացնի մարդկանց հաստատականությունն այն գաղափարի շուրջ, որ բոլոր իրերն իրական գոյաբանական նյութ են պարունակում: Բայց եթե մարդիկ պարզապես պնդեն չգոյության [իրականության] գաղափարը, որին հղում է արվում «Եսի կամ սեփական անձի հիմնավորումն ինքնին չգոյություն է» նախադասության մեջ, ապա նպատակը կվերանա, որովհետև մարդիկ դեռևս կշարունակեն պնդել ինչ-որ բանի իրականությունը, այն է՝ «չգոյությունը»: Դա է պատճառը, որ Կուն ցունը հավատում էր, որ անհրաժեշտ է ավելացնել «Նույնիսկ սա [ինքնին չգոյությունը] կեղծ անուն է» արտահայտությունը: Այսպիսով, լիարժեք ծևակերպումը կլինի՝ «Ոչ միայն իրերի, այսինքն՝ երևույթների անունները, այլև ծյա ժուկն կեղծ անուններ են» և ընդամենը վարկածային են. կունը [դատարկություն] կամ չգոյություն] նույնպես կեղծ անուն է:

«Դա Բո Յու Չու Չինի» 556-րդ հատորում հանդիպում ենք հետևյալ առաջին.

Մի ժամանակ երկնքի տարբեր որդիները հարցրին Յեին, որը հայտնվեց Բարության առաջ [Բուդդայի անունը]. հնարավո՞ր է լինել Նիրվանայի մեջ և միաժամանակ վերադառնալ պատրանքի ոլորտ: Յեն, որ հայտնվեց բարության մեջ, պատասխանեց. «Եթե լիներ մի բան [Իրարմա], որին կիաջողվեր հաղթահարել Նիրվանան, ապա վերադառնալ պատրանքի վիճակի, ապա ի՞նչ կլիներ Նիրվանան»:

Յետևաբար, մարդը պետք է ոչ միայն հասկանա, որ բոլոր դիարմաները չունեն իրական գոյաբանական նյութն, ապա պետք է միևնույն ժամանակ պնդի չգոյությունը [Իրականությունը]: «Դա ջի դու լունը» [Մեծ իմաստությամբ անցում կատարելու քննախոսություն] ասում էր.

«Իրավիճակը նման է դեռ խմելուն: Դեղորայքը կարող է ցրել հիվանդությունը: Երբ հիվանդությունը նահանջում է, դեղորայքից պետք է ազատվել: Յակառակ դեպքում նոր հիվանդություն ծեռք կրերես: Կունը [չգոյություն] օգտագործվում էր մեր բոլոր անհանգստությունները ցրելու համար, բայց մենք պետք է գգուչանանք, որ կունը չշարունակի անհանգստացնել մեզ: Յետևաբար, մենք առաջարկում ենք օգտագործել կունը՝ այն թոթափելու համար, այսինքն՝ պետք է հասկանանք ինքնին չգոյության չգոյությունը»:

Սա նշանակում է, որ «չգոյության» հաստատման նպատակը գոյության պնդումը ցրելն է: Երբ և եթե գոյության գաղափարը հեռանա, այդժամ մարդը կիմանա, որ «չգոյություն» ինքնին պատրանք է, անիրականություն կամ կեղծ անուն: Մինչեւ չի կարելի ասել, որ ամենայն ինչ «չգոյություն» է (որովհետև դեռևս կա, օրինակ, մարդ, որը պատրանքների ծևափոխման արդյունքն է): Այս երկու կողմը հասկանալու համար անիրաժեշտ կլինի հասնել «Զուն դառ գուանի» [Միջին ճանապարհի կամ Միջինի ճշնարիտ մեղիտացիա]: Սակայն միայն Արևելյան Զին դինաստիայի ուշ շրջանում, երբ Կունարաջիվան արդեն թարգմանել էր այնպիսի քննախոսություններ, ինչպիսին է «Զուն լունը», «ոչ գոյություն և դեռևս ոչ չգոյություն» գաղափարը [ֆեյ յու ֆեյ ու] իրականում ընդունվեց և ընկալվեց չինացի բուդդայականների շրջանում և համառոտ ներկայացվեց վանական Շաոյի «Բու

Չեն կուն լուն» գրքում:

Մինչ վաճական Շաոյի ժամանակները չինացի վաճականների ընդհանուր ընկալումը պրաջնա ուսմունքի վերաբերյալ ամբողջությամբ ծագել էր դառսական մետափիզիկական [սյուանյութ] մտքի հեռանկարներից, որը տարածված էր այս ժամանակ: Այս հարցը մենք արդեն քննարկել ենք: Այս փաստարկն ավելի հիմնավորելու համար հիմա եկեք դարձյալ վերլուծենք մի շարք խնդիրներ, որոնք ծագում են Դառ Անի՝ Նախնական ոչնչի տեսության առնչությամբ: Ավելի վաղ մեջքերել ենք հետևյալ հատվածը Զի Քանի (Զի Քան) «Չուն Լուն Շու [Մեկնաբանություններ միջինի քննախոսության մասին] գրքից:

Երբ վարպետ Անը ասաց՝ Նախնական ոչնչ [իսմունքը], նա նկատի ուներ, որ ողջ դիարմայի նախնական էությունը դատարկությունն ու բնաջնջումն էր: Այդ պատճառով էլ նա ասում էր «Նախնական ոչնչ»:

Մի՞թե սա նույն գաղափարը չէ, որն արտահայտվում է հետևյալ նախադասությամբ՝ «Բոլոր դիարմաներն ի սկզբանե չունեն որևէ գոյարանական սեփական էություն»: Իրականում այդպես չէ: Այս դեպքում «բոլոր դիարմաների նախնական էությունը դատարկությունն ու բնաջնջումն է» նախադասությունը նշանակում էր, որ դատարկությունը և բնաջնջումը կազմում են բոլոր դիարմաների նախնական էությունը, կամ, այլ կերպ ասած, բոլոր իրերն իրենց նախնական էության կամ գոյարանական նյութի մեջ ունեն դատարկություն և բնաջնջում: Սա մի մեկնաբանություն էր, որը գնում է հետ՝ վաճական Յուե Դայի «Շառ Լուն Շու» երկի [Վաճական Շաոյի փաստարկմերի մեկնաբանություն] ժամանակմերը: Այստեղ նա քննադատում էր Դառ Անի՝ Նախնական ոչնչի տեսությունը՝ ասելով. «[Չեն, Դան, Անը] պարզապես ի վիճակի չին գիտակցել, որ ի սկզբանե ողջ դիարման ոչնչն էր. և հետևաբար, նա նախնական չգոյությունը համարում էր իրական, բայց դրա արդյունքում առաջացած գոյությունը՝ գրեհիկ»: Նույն գաղափարն առկա էր Ան Չենի «Չուն Լուն Շու» [Մեկնաբանություններ միջինի քննախոսության մասին] գործում, որն ասում էր. «Բյե ջին [Այլընտրանքային արձանագրություն] ասում է. «Նշմարիտ հիմնավորումը [ջեն լի] գրեհիկ հիմնավորման սկզբնալրյուրն է [շու թի]»: Այս պատճառով էլ ասում ենք, որ չգոյությունը գոյություն է ունեցել նախնական կամ նախնադարյան ծևափոխությունից առաջ»: Վերը նշված բոլոր օրինակներից տեսնում ենք, որ Դառ Անը կունը [չգոյություն] կամ ուն [չլինելություն] ընկալում էր՝ որպես յուի գոյություն գոյարանական նյութ:

Ինչու՞ ի հայտ եկան այսպիսի հանգամանքներ: Որովհետև, ինչպես ենցելսն էր մատնանշում, ավանդույթը պահպանողականության վիթխարի ուժ է: Ինչպես երևում է, յուրաքանչյուր գաղափարախոսական մշակութային ավանդույթը պարտավոր է ճանաչել իր պահպանողական կողմը, որը դիմադրում է ներմուծված օտար գաղափարախոսական մշակութային ազդեցություններին: Այդ պատճառով, ներմուծված գաղափարախոսական մշակույթը պետք է նախ հարմարվի ի սկզբան գոյություն ունեցող գաղափարախոսական մշակույթի պահանջներին ու կարիքներին և «պատվաստվի» նրան: Ներմուծված գաղափարախոսական մշակույթում առկա այս տարրերը, որոնք համեմատաբար մոտ են նախնական տեղական գաղափարախոսական մշակույթին, կամ որոնք նմանություններ ունեն, ավելի հեշտությամբ են տարածվում. միայն այդ դեպքում, սերտաճելուց և սկզբնական տարածումից հետո հնարավոր կլինի, որ ներմուծված մշակույթի զանազան մասերն աստիճանաբար ներծծվեն նախնական մշակույթի մեջ և նաև բողնեն

իրենց ազդեցությունը, մինչև ի վերջո [ներմուծված մշակույթը] ձևափոխի կամ ազդի նախնական գաղափարախոսական մշակույթի ձևափոխությունների վրա:

## 9.2.2 Ավանդույթի հարստացումն ու ամրապնդումը

Եթե ներմուծված գաղափարախոսական մշակույթն ի գորու է համեմատաբար մեծ ազդեցություն թողնել երկրի [կամ ազգի ու տարածաշրջանի] վրա, ուր այն ներմուծվել է, ի լրումն իրական ու գործնական հասարակական կարիքների, այն կարող է ծարայել նաև գործող ավանդույթի հարստացման ու ամրապնդմանը, որովհետև ներմուծված մշակույթը ընդհանուր առմանը մոտենում է նախնական տեղական գաղափարախոսական մշակույթի էվոլյուցիայի հավանական կամ հնարավոր արդյունքին կամ էվոլյուցիայի որոշ կողմներին:

Դնարավոր է նկատել զարգացման ուղին Վան Բիի այուանայուե [դառսական մետաֆիզիկա] գաղափարներից մինչև Յե Յանի գուեյ ուի [Իչնչի կամ չկեցության արժենորում] գաղափարները, որոնք հիմնված էին «չկեցությունը որպես սկզբանադրյուր ընդունելու» գաղափարի վրա, և կիասմենք Գուռ Սյանի ցուն յու [Էռությունը գովարանելը] գաղափարին, որը հիմնված է «բոլոր իրերն իրենք են ստեղծում իրենց» [վան ու ցի շեն] գաղափարի վրա: Յետագայում՝ Արևելյան Զին դինաստիայում, առաջացան Զան Զանի գաղափարները, որոնք արտացոլվեցին «Բոլոր իրերն ինքնուրույն են ստեղծվում՝ ինքնարբուն և ակնթարթորեն, և բոլորն էլ սկզբնավորվել են ընդհանուր չկեցությունից» [ֆու էր էր ցի շեն, ցե բե լուն յու ու] մտքում: Զարգացման այս ուղու հաջորդ հանգրվանը «չեռթյան, բայց դեռ ոչ չկեցության» [ֆեյ յու ֆեյ ու] գաղափարն է: Սա նույն էր, ինչ «ոչ իրական գոյության» [բու շեն կուն] ուսմունքը պրաջնա բուդյայական ուսմունքի կուն ցունում [Դատարկության դպրոց]: Ինչու՞ հնարավոր դարձավ, որ Վեյ-Զին դինաստիաների մետաֆիզիկան զարգանա և վերածվի «չեռթյան և դեռևս ոչ չկեցության» գաղափարի: Կարելի է ասել, որ սա Վեյ-Զին դառսական մետաֆիզիկայի էվոլյուցիայի «հնարավոր» արդյունք էր կամ, այլ կերպ ասած, կարելի է մտածել, որ նման էվոլյուցիան ոչ միայն չի հակադրվում Վեյ-Զին դինաստիաների դառսական մետաֆիզիկայի էռթյանը. իրականում Վեյ-Զին դինաստիաների դառսական մետաֆիզիկան հարստացավ:

Սկսած Վան Բիից ու Յե Յանից, և մասնավորապես Վան Բիի դեպքում, Վեյ-Զին դինաստիաների դառսական մետաֆիզիկական միտքն ավելի շատ ներթափանցող ուսումնասիություններ և տրամաբանական փաստարկումներ էր անցկացնում յուի [չկեցություն] և ուի [չկեցություն] հարաբերության հարցի մասին: Վան Բին օգտվում էր թիի [նյութ] և յունի [ազդեցություն], գործառույթ, կիրառում կամ երևույթ գաղափարից, որպեսզի նկարագրի կեցության և չկեցության հարաբերությունը: Նա սահմանում էր, որ «չկեցությունը չի կարող չունենալ արտահայտություն, և հետևաբար պետք է ունենա գոյության պատճառ»: Ուստի, նա հավատացած էր, որ եթե «չկեցությունը» գոյաբանական նյութն է, այն «կեցության» մեջ է և իր արտահայտությունն է ստանում նրա տիրույթում: Յետևաբար, նա նյութը [թի] և օգտագործումը [նյութ] դիտարկում էր՝ որպես ըստ էռթյան նույն երևույթ: Սակայն, քանի որ Վան Բիի մտքի համակարգում շեշտը դրվում էր «չկեցության» բացարձակության վրա, ի հայտ եկավ «ծագումը փառաբանելու և արդյունքը եղրափակելու» [ցուն բեն շի մո] գաղափարը: Սա անհամապատասխանություն

առաջացրեց Վան Բիի մտքի համակարգում: Ցուն թեն շի մոյի այս գաղափարի տեսանկյունից կարելի է ասել, որ կար գաղափար, որը ժխտում էր կեցությունը, այսինքն՝ «չկեցության» գաղափարը: Սյան Սյուի և Փեյ Վեյի միջոցով գուեյ ու [արժևորել չկեցությունը] Վան Բիի գաղափարը անցում կատարեց Գուն Սյանի ցուն յու վիառարանել կեցությունը գաղափարին:

Գուոյի կարծիքով՝ կեցությունը միակ գոյությունն էր, և չկար որևէ բան, որ գոյություն է ուժեցել վաճ ուից [բոլոր իրեր] վեր և անդին, և որ ուա կարող էր ծառայել՝ որպես գոյաբանական նյութ վաճ յուի այն է՝ [Արարող նյութ] համար: Նա հավատացած էր, որ բոլոր իրերի գոյությունը հիմնված էր նրանց համապատասխան «սեփական եւրյան» [ցի սին վրա], և որ այս սեփական եւրյունը ստեղծվում է ինքնարուխ և վայրկենական: Այս պատճառով նա պնդում էր. «Չկեցությունը չկեցություն է. այդպես է: Այս չի կարող կեցություն ստեղծել»: Այսպես նա ուղղակիորեն ձեռնոց էր նետում գոյաբանորեն եական չկեցության գաղափարին և ուղղակիորեն հերքում էր այս: Այս գաղափարն ինքնին պարունակում էր «ոչ չկեցության» հասկացությունը:

Արևելյան Զին դինաստիայում Զան Զանը մեկնաբանություններ և ծանոթագրություններ գրեց «Լեն Ցի» գրքի համար, որում փորձեց իր ձևով ի մի բերել Վան Բիի և Գուն Սյանի գաղափարները: Մյուս կողմից, նա պնդում էր, որ «բոլոր իրերի [ցուն յու] նախահայրը Ծայրագույն դատարկությունն է, այսինքն՝ ուն չկեցություն» կամ զի սուն [Ծայրագույն դատարկություն] յուի [կեցություն] գոյության հիմքն է: Սա ուի՝ գոյաբանական նյութի մասին նրա գաղափարն էր: Նրա համար չկեցությունը ոչ ստեղծվել է, ոչ էլ անհետացել. այն չի հավաքվել և չի ցրվել, մինչդեռ ամեն ինչ ստեղծվում և անհետանում է, կուտակվում և ցրվում: Ավելին, նա հավատացած էր, որ բոլոր տեսակները [վաճ փին] հաջողությամբ դիմադրում են վերջնական քայլայմանը, և հետևաբար, «չեւրյուն» են: Մինչդեռ, միևնույն ժամանակ, Զանը պնդում էր, որ բոլոր իրերը ստեղծվել են ակնթարթորեն և ինքնարուխ. նրանց գոյությունը ոչ նպատակային էր, ոչ պայմանական: Սա ուներ դեպի «ոչ չկեցության» գաղափարն առաջնորդող ներուժ կամ հավանականություն:

Ինչևէ, Զան Զանի դեպքում այս երկու գաղափարները մեխանիկորեն և փոխադարձաբար անհամատեղելի և հակասող են: Մտքի նրա համակարգը սերտորեն հյուսված չէր: Մինչդեռ զարմանալիորեն հենց այս իրավիճակում բուդդայական պրաջնան, մասնավորապես Կուն ցունի ոսմունքները, պնդում էին ֆեյ յու ֆեյ ու [չկեցություն և դեռևս ոչ չկեցություն] գաղափարը, որն ինքնին շատ ավելի ծանրակշիռ էր և ստույգ հիմնավորվում էր տեսության մեջ և փաստարկող մեթոդներում: Ուստի, կարելի է ասել, որ «Բու զեն կուն լունի» [իրական ոչնչի մոլորության քննախոսություն] ուսմունքը, որն առաջարկել է վաճական Շաոն, սյուանսյուէ [դառնական մետաֆիզիկա] գաղափարների զարգացումն է Վան Բիից և Գուն Սյանից հետո: Չնայած Վաճական Շաոյի գաղափարներն ուղղակիորեն եկել են հնդկական պրաջնա բուդդայական ուսմունքից, իրականում նրանք դարձան հենց չինական փիլիսոփայության կարևոր բաղադրիչ և օգնեցին կազմել Վեյ-Չին դինաստիայի սյուանսյուէի զարգացման շրջափուլը, որտեղ կարևոր դերակատարում ունեին Վան Բին, Գուն Սյանը և վաճական Շաոն:

Ինչու՞ էր հնարավոր այսպիսի զարգացումը: Գուցե ոմանք վերագրեն դա գաղափարխոսական մշակույթների շարունակականությանը կամ ժառանգականության պահանջներին ու կարիքներին [երբ այդ մշակույթները հաղորդակցվում

Էհն միջանց հետ]: Քանի դեռ գաղափարախոսական մշակույթի օարգացումը կտրուկ չի ընդհատվել, ապա հաջորդ քայլը պետք է լինի նախորդի շարունակական էվոլյուցիայի արդյունքը: Նախորդող գաղափարների օարգացումը հաճախ պարունակում է որոշակի հնարավորություններ և գաղափարներ, որոնք շարունակում են օարգանական՝ կազմելով օարգացման հետագա փուլը, և ստիպված են ընդունել այս կամ այն հնարավոր ձևը: Եթե ներմուծված օտար գաղափարախոսական մշակույթը կարողանա ընդհանուր առմամբ հարմարվել նախնական տեղական մշակույթի և գաղափարախոսության հավանական կամ հնարավոր օարգացման որոշակի կողմի կամ տեղավորվել հնարավոր օարգացումներից մեկի միտումների կամ հակումների տիրույթում], այն ոչ միայն ինքնին կզարգանա և այդպիսով համեմատարար ավելի մեծ ազդեցություն կունենա, այլև գուցե նույնիսկ ուղղակիորեն դառնա նախնական տեղական գաղափարախոսական մշակույթի բաղադրիչ մաս և գուցե նույնիսկ ինչ-որ չափով փոխի այդ նախնական գաղափարախոսական մշակույթի ընթացքը:

### **9.2.3 Հարաբերական գերազանցություն և իրական ավանդ**

Եթե ներմուծված օտար գաղափարախոսական մշակույթն ազդում է ի սկզբանե գոյություն ունեցող տեղական գաղափարախոսական մշակույթի վրա, և եթե այդ ազդեցությունը ոչ թե ժամանակավոր է, երկարատև, որոշ կամ նույնիսկ առհասարակ բոլոր առումներով այն կհասնի օարգացման ավելի բարձր նակարդակի, քան տեղական մշակույթը: Միայն այս միջոցով ներմուծված գաղափարախոսական մշակույթը կարող է խթան լինել տեղական մշակույթի համար և ազդել նաև տեղական մշակույթի օարգացման վրա:

Այս հարցը, թե արդյոք հնդկական պրաշնա բուդյայական ուսմունքի կուն ցունի [Պատարկության դպրոց] օարգացման մակարդակն ու փաստարկման իմաստնությունը առհասարակ ավելի բարձր էր Զինաստանի սեփական տեղական ու ավանդական գաղափարախոսական մշակույթից, որ գոյություն ուներ այն ժամանակ, թերևս դժվար կլինի իրատեսորեն և ազնվորեն լուծել՝ առանց ուշադիր և մանրակրկիտ վերլուծության: Մենք չենք փորձի քննարկել այս խնդիրն այստեղ: Սակայն փաստարկման և փիլիսոփայականացման միջոցների մի հատուկ տիրույթի, մասնավորապես կեցության և չկեցության [յու-ու] հարցերի վերլուծության առումով, պրաշնա բուդյայականության կուն ցուն դպրոցը, ներկայացնելով «ոչ կեցության և դեռևս ոչ չկեցության» [Փեյ յու ֆեյ ու] դիալեկտիկական թեզը, հստակ դրսարեց տեսության և փաստարկման գերագույն մակարդակ՝ համեմատած Վան Բիի և Գուռ Սյանի գաղափարների հետ, չնայած նրա սեփական գաղափարները, օրինակ՝ Վանի և Գուռի գաղափարները, ծագել են իդեալիզմի ընդհանուր սկզբնաբյուրից: Ինչ վերաբերում է օարգացմանը, ապա չնայած պարզվեց, որ այն առաջացել է Վան Բիի և Գուռ Սյանի սյուանայութ մտքից, վանական Շաոյի բու ջեն կունը [իչ իրական դատարկություն] ավելի մոտ էր կուն ցունի ուսմունքների սկզբնական մտադրություններին և պետք է համարել, որ որոշ առումներով ավելի առաջ էր Վանի և Գուռի գաղափարներից:

Որքան հասկանում են, միայն Չնդկաստանից ներմուծված պրաշնա փիլիսոփայության ներմուծումից և յուրացումից հետո չինական ավանդույթի իդեալիստական փիլիսոփայություններն ինքնին վերածվեցին մտքի իսկապես ազեցիկ և

իմաստալից համակարգի: Նրանցում Արարջի [իոգևոր գոյաբանական նյութ, որն արարեց Երկինքը և Երկիրը և ամեն ինչ] ուսմունքն այլևս կենտրոնական դիրք չէր զբաղեցնում: Փոխարենը, վերացական հասկացությունները, ինչպիսիք են լին [սկզբունք] կամ դառն [ճանապարհ], որոնք ավելի շատ վճռում, քան անհատապես արարում էին Երկնքի, Երկրի և ամեն ինչի գոյությունը, հայտնվեցին առաջնային կարևորության դիրքում: Այլ դեպքում միտքն էր հայտնվում այս դիրքում, ինչպես այն օաղափարներում, որոնք ներառվում էին, որ «միտքը հավասար է սկզբունքին» [սին ձի լի] կամ «սկզբունքը ներառված է մտքում» [լի ձու յու սին], այսինքն՝ օաղափարներ, ըստ որոնց Երկնքի, Երկրի ու ամեն ինչի սկզբունքներն առկա են մտքում: Միայն այսպիսի իդեալիստական հասկացությունների օարգացումից հետո էլ սահմանվեցին Չինաստանի ավանդական իդեալիստական փիլիսոփայության հիմնարար ձևերը: Սա էլ ինքնին պարարտ հող էր Սուն և Սին դիաստիաներում լի այուեի [Սկզբունքի ներկոնքության փիլիսոփայություն] ի հայտ գալու համար՝ անկախ նրանից՝ դա Չեմ և Զու [Չեմ Չառ, Չեմ ի և Զու Սի], թե Լու-Վան [Լու Սյանշան, Վան Յանմին] դպրոցն էր:

Սակայն, որպեսզի ներմուծված օտար օաղափարախոսական մշակույթը, նույնիսկ այն, որի օարգացման մահարդակն ավելի բարձր է, հզոր և երկարատև ազդեցություն ունենա այն Երկրի [ազգ կամ տարածաշրջան] վրա, ուր այն ներմուծվել է, այն պետք է ոչ միայն, այնուամենայնիվ, ենթարկվի ընդունող Երկրի, ազգի կամ տարածաշրջանի օաղաքական և հասարակական-տնտեսական պայմանների սահմանափակումներին, այլև տիրապետի վերը քննարկված հատվածներում նկարագրված պայմանների առաջին և երկրորդ խմբերին: Սա մասնավորապես ճիշտ է օաղափարախոսական մշակույթների առումով, հատկապես եթե սկզբնական, բնիկ օաղափարախոսական մշակույթում չի եղել կտրուկ և արմատական ընդհատում, կամ եթե այդ ընդհատումը տեղի չի ունեցել օտար մշակույթի ներմուծման հետևանքով: Միայն այսպես նոր մշակույթը կարող է խորությամբ և երկար ժամանակով ազդել սկզբնական մշակույթի վրա: Առանց այս պայմանների, անկախ նրանից, թե որքան առաջադեմ կամ որքան բարձր է ներմուծված օաղափարախոսական մշակույթը, նրա համար դժվար կլինի արճատներ գցել ընդունող Երկրի հողում և երկար ժամանակ խոր ազդեցություն ունենալ: Օրինակ, Վեյ շի [Վիդզնանա կամ Սիայն գիտակցության դպրոց] բուդդայականության ուսմունքները, որոնք [ավելի ուշ] ներմուծվեցին [թան դինաստիայի] վանական Սյուան Ցանի կողմից, և վիդզնա [ին մին կամ հետուվիդյա կամ նյայա ուսմունքներ] ուսմունքները, որոնք ներմուծվել են գրեթե նույն ժամանակ և «Սիայն գիտակցություն» դպրոցի հետ միաժամանակ, նույնպես գերակա դեր ունեին իրենց դատողության և օարգացման մակարդակներով, բայց միևնույն ժամանակ, չնայած նրանք ամուր հիմքեր ունեին որոշ ժամանակ հեղինակություն հաստատելու համար, ի վերջո շատ տևական ազդեցություն չունեցան առհասարակ չինական մտքի օարգացման վրա: Չնայած «Սիայն գիտակցության» [Վեյ շի] դպրոցում մտքի հասունի կարգերը, ինչպիսիք են նենի [ունակություն կամ հնարավորություն] և սուոյի [ինքնություն կամ պատշաճ տեղակայում] Երկակի կարգերը, անհատապես յուրացվեցին չինական մտքի կողմից, ընդհանուր առմանք Վեյ շի դպրոցը չդարձավ չինական ավանդական օաղափարախոսական մշակույթի անբաժան բաղադրիչը, և մինչ օրս, մենք դեռևս հակված ենք Վեյ շի [վիդ ջնանա կամ Սիայն գիտակցություն] ուսմունքը համարել հնդկական օաղափարախոսություն:

Վերը ուրվագծված երեք փաստարկումներից կարող ենք մեկ հիմնավորում բերել. անհրաժեշտ է փիլիսոփայության համեմատական ուսումնասիրությունը կենտրոնացնել ընդհանուր և պատմական օրենքների վրա, որոնք կառավարում են այն գործընթացը, թե ներմուծված օտար գաղափարախոսական մշակույթն ինչ չափով կարող է ազդել երկրի, ազգի կամ տարածաշրջանի գաղափարախոսական մշակույթի կամ մշակույթների] վրա, ուր այն ներմուծվել է, և այն պայմաններով, առանց որոնց այս ազդեցությունը չի կարող տեղի ուժենալ: Օրինակ, տարբեր ավանդույթներից առաջացած երկու գաղափարախոսական մշակույթները համեմատելիս և վերլուծելիս պետք է հասկանանք, որ նախ զարգացման և փաստարկման բնութագիրն ու ճակարդակը, որին հասել է սկզբնական տեղական գաղափարախոսական մշակույթը, [այսինքն՝ հյուրընկալող մշակույթը], և երկրորդ, այս երկու մշակույթների տարբերությունները և նմանությունները, նրանց փոխազդեցությունները, նրանց յուրացումն ու բախումը, բախումը մեղմացնելու միջոցները և այլն:

Երբ ուսումնասիրում ենք բուդդայականության ներմուծումը Հնդկաստանից Չինաստան մեր թվարկության առաջին դարում և նրա հետագա զարգացումը, պետք է հարցնենք, թե այն ինչ նշանակություն ունի առօրյա գործնական կյանքում: Ընթացիկ համաշխարհային գաղափարախոսական մշակույթների զարգացման միտումները դրսնորվուն են՝ որպես բախման և ներդաշնակության կադապարներ բազմաթիվ տարբեր մշակույթներից առաջացած տարբեր գաղափարախոսական մշակույթների միջև: Անկայունությունները, հակասություններն ու բախումներն առօրյա աշխարհում, ի թիվս որոշակի այլ [քաղաքական և տնտեսական] գործոնների, կարելի է մասամբ վերագրել գաղափարախոսական և մշակութային [այսինքն փիլիսոփայական և կրոնական] ավանդույթների տարբերություններին: Մյուս կողմից, արարական և իսլամական աշխարհի և արևմուտքի հակասությունները, օրինակ, ինքնին լի են փիլիսոփայական և կրոնական գործոններով: Միևնույն ժամանակ, ժամանակակից աշխարհում միշնշակութային շփումների առումով ավելացող հաճախականության արդյունքում նաև խիստ ակնհայտ է զանազան գաղափարական մշակույթների փոխազդեցության, փոխներգործության, ներդաշնակության ու առննանման միտումը:

Սասնավորապես մարքսիզմի լայն տարածումն աշխարհում այսօր մարդկությանը ստիպում է բազմաթիվ նոր դասեր քաղել տարբեր ավանդույթներից և խորապատկերներից ծագող գաղափարախոսական մշակույթների հարաբերությունից: Մարքսիզմն ինքնին առաջացել է Արևմտյան Եվրոպայում՝ այս տարածաշրջանին հատուկ պատմական պայմանների ներքո, և հետևաբար՝ որպես գաղափարախոսական մշակույթ՝ օտար էր աշխարհի բազմաթիվ այլ հատվածների համար: Սրանցից խնդիրներ են առաջացել մարքսիզմի և այն վայրերի զանազան տեղական գաղափարախոսական մշակույթների միջև, ուր այն ներմուծվել է: Թեև մարքսիզմը պրոլետարական փիլիսոփայություն է, իսկ պրոլետարիատի խնդիրները չեն սահմանափակվում ազգային սահմաններով, [մարքսիզմը] գաղափարախոսական գենք է, որով պրոլետարիատը և բոլոր երկրների հեղափոխական ժողովուրդները ջանք չեն խնայում հեղափոխություն իրականացնելու համար. որպեսզի մարքսիզմը որոշակի ինմաստով արմատավորվի որևէ երկրում [ազգում ու տարածաշրջանում], այն նախ պետք է դառնա այդ երկրի [ազգի կամ տարածաշրջանի] տեղական գաղափարախոսական մշակույթի անբաժան մասը: Կամ,

Կարելի է ասել, այն պետք է ժառանգի այդ սկզբնական տեղական գաղափարախոսական մշակութային ավանդույթը: Եթե դա չհաջողվի, մարքսիզմն ի վիճակի չի լինի որևէ իրական ազդեցություն ունենալ:

Այդ դեպքում հնարավո՞ր է, որ մարքսիզմը հարստանա, ապա խորացնի զարգացումը, օրինակ, մարքսիզմի և Չինաստանի ավանդական տեղական գաղափարախոսական մշակույթի հարաբերությունների ենթատեսական: Մենք կարծում ենք՝ այս: «Երիտասարդական լիգայի խնդիրը» էսեում Լենինը գրում է. «Միայն այն ժամանակ, երբ իսկապես լիարժեք հասկանանք մշակույթը, որը ստեղծվում է ընդհանրապես մարդկության ողջ զարգացման ընթացքում, և ի գորու լինենք ձևափոխել անցյալի այս մշակույթը, կարող ենք ձեռնամուխ լինել իսկապես պրոլետարական մշակույթի կառուցմանը»: Անկասկած, մարքսիզմը մեթոդաբանություն է, որը մեզ առաջնորդելու է մեր զանազան գաղափարախոսական մշակութային ավանդույթների հետ մանրամասն առնչվելիս: Այն «ոչ թե ուսմունք է, այլ մեթոդաբանություն: Այն ոչ թե տրամադրում է պատրաստի դոգմա, այլ հետագա հետազոտության և մեթոդաբանության ելակետեր, որոնք կարելի է կիրառել նման հետազոտության մեջ» (տես Մարքսի և Էնգելսի երկերի լիակատար ժողովածուն [չինական իրատարակություն, հատոր 39, էջ 406]): Անհրաժեշտ է ընդունել, որ մարդկային քաղաքակրթության պատմության մեջ յուրաքանչյուր ազգ կամ ժողովուրդ ունեցել է և ունի իր հատուկ ավանդը: Եթե մեզ վիճակված լիներ ճիշտ մեթոդի օգնությամբ ուսումնասիրել այս ներդրումները, մենք կվարողանայինք ճշգրիտ գնահատականաներ տալ դրանց նասին և այդ գնահատականները դարձնել մարդկության հոգևոր քաղաքակրթության ժառագության մաս, որն անհրաժեշտ է փոխանցել սերունդներին: Մարքսիզմը մտադրություն չունի մերժել հոգևոր մշակույթները, որոնք ներդրում են ունեցել մարդկային հասարակության կյանքում. ավելին, այն հույս ունի յուրացնել, ձևափոխել դրանք և ընթացքում շարունակել հարստանալ և զարգանալ:

### 9.3 Փիլիսոփայությունների և տարածաշրջանների համեմատական ուսումնասիրություն

Ներկայիս դարաշրջանը մեծապես տարբերվում է նախորդ դարերից: Քանի որ աշխարհը թևակոխում է նոր դարաշրջան, գիտության և տեխնոլոգիայի ոլորտի զարգացումների և հասարակական առաջնորդացի արդյունքում աշխարհի տարբեր երկրների ու ազգերի միջև փոխազդեցությունը խիստ տարբերվում է անցյալի իրավիճակից, երբ աշխարհը դեռևս ֆեոդալիզմի փուլում էր: Այս օբյեկտիվ հանգամանքները մեզ հարկադրում են ավելի արագ յուրացնել ներմուծված օտար գաղափարախոսական մշակույթները: Ի՞նչ մեթոդներ կարող ենք կիրառել, որպեսզի այս օտար գաղափարների այն հատվածները, որոնք օգտակար ու արժեքավոր են մեզ համար, ավելի արագ դառնան մեր սեփական գաղափարախոսական մշակույթի անբաժան մաս: Կարևոր մեթոդներից մեկը փիլիսոփայությունների համեմատական ուսումնասիրությամբ զբաղվելն է: Նախկինում օտար գաղափարախոսական մշակույթների կլանում՝ որպես բնական և ինքնարուխտ գործնթաց, հաճախ դանդաղ էր ընթանում, և պատահական ու անսպասելի գործոնները սովորաբար մեծ ազդեցություն էին թողնում գործնթացի վրա: Եթե մենք այսօր այդ սկզբանում անենք գիտակցաբար և միտումնավոր, ապա կկա-

րողանանք ավելի արագ կլանել օտար գաղափարախոսական մշակույթի արժեքավոր և հղված հատվածները: Այս խնդիրն առնչվում է նաև մարքսիզմին: Եթե կարողանանք ճիշտ վերաբերվել մարքսիզմի և մեր սեփական գաղափարախոսական մշակութային ավանդույթի հարաբերությանը, որպեսզի մարքսիզմն ավելի հաճահունչ լինի մեր երկրի հանգամանքներին և մարդկանց զգացմունքներին, եթե կարողանանք ստեղծել չինականացված մարքսիզմ, այդ դեպքում այն ոչ միայն ավելի խոր և ամուլ արմատներ կլունենա Չինաստանում, այլև ավելի արդյունավետ կերպով կյուրացնի և կպահպանի չինական գաղափարախոսական մշակութային ավանդույթի լավ և արժեքավոր հատվածները և կիեռացնի նրանք, որոնք արժեք չունեն կամ քայլայված են, որպեսզի մեր երկրի բարենպաստ հոգևոր մշակույթն էլ ավելի զարգանա: Յետևաբար, մեր ամենակարևոր խնդիրը համենատական փիլիսոփայական ուսումնասիրությունների հիմնումն է՝ մարքսիզմի առաջնորդությամբ: Յարցը հետևյալն է՝ ինչպես նախաձեռնենք համենատական փիլիսոփայության ուսումնասիրությունը:

### 9.3.1 Ընդհանուր օրենքի որոնումներ

Երկու գաղափարախոսական մշակույթները տարբեր ավանդույթների տեսանկյունից համենատության մեջ ուսումնասիրելիս պետք է ուշադրություն դարձնենք որոշ ընդհանուր օրենքների բացահայտմանը, որոնք դեկավարում են մարդկային գաղափարախոսական մշակույթի էվոլյուցիան:

Յամենատական փիլիսոփայության ուսումնասիրությունը, ինչպես կրոնների և գրականության համենատական ուսումնասիրությունը, հատուկ նշանակություն ունի: Յամենատական փիլիսոփայության ուսումնասիրությունը չի նշանակում համենատություն ցանկացած երկու փիլիսոփաների [օրինակ, Զու Միի և [Վան Շոուլեն] Վան Յանմինի] միջև. համենատական կրոնի ուսումնասիրությունը նշանակում է ավելին, քան ցանկացած երկու բուդդայական վանականների պարզ համենատությունը [օրինակ, Զի Դունի և Դաո Անի]: Յամենատական փիլիսոփայությունը կամ համենատական կրոնը վերաբերում է փիլիսոփայական մտքի երկու համակարգերի համենատությանը, որը ծագում է տարբեր ավանդույթներից կամ երկու կրոնական համակարգից, որոնք տարբեր սկզբնաղբյուրներ և ծագում ունեն: Յետևաբար, այսպիսի համենատական ուսումնասիրությունները պետք է լինեն երկու տարբեր երկրների [օրինակ՝ Չինաստանի և Ճնդկաստանի] կամ տարածաշրջանների [օրինակ՝ արևելքի և արևմուտքի] կամ ազգերի [օրինակ՝ չինացիներ և այլ ազգության ներկայացուցիչներ] համենատական վերլուծություն:

Փիլիսոփայությունն ընդհանուր գիտություն է բնության, հասարակության և մարդկային բանականության ուսումնասիրության ոլորտում, և օրենքները, որոնք կառավարում են մարդկային մտքի զարգացումը, ընդհանուր առմանը, նման են կամ հիմնականում նույնական են: Այսպիսով, որոշակի գաղափարախոսական մշակութային ավանդույթի փիլիսոփայական մտքերի վերլուծությունը կարող է խիստ օգտակար լինել: «Դիալեկտիկական մեթոդի խնդիրների մասին» աշխատության մեջ Լենինն ասում է.

[Սրանք այն] շրջանակներն են, որոնք նկարագրում են փիլիսոփայության պատմությունը. Անտիկ աշխարհը, Դիալեկտիկան՝ Դեմոկրիտից մինչև Պլատոն և Հերակլիտ. Արդի դարաշրջան, Ֆոյերբախից մինչև Յեգել [ներառյալ Բերքլի, Շյում և Կանտ]. Յեգելից մինչև Ֆոյերբախ և Մարքս:

«Յեգելի «Փիլիսոփայության պատմության նորերի» ուրվագիծը» էսեում Լենինը նաև ասում է.

Չնարավոր է դիտարկել փիլիսոփայության պատմությունը շրջանի տեսքով... Փիլիսոփայական մտածողության յուրաքանչյուր տեսակ հավասար է մարդկային մտքի մեջ շրջանի (կամ պարույրի) վրա տեղադրված ավելի փոքր շրջանի:

«Փիլիսոփայության պատմությունը՝ որպես շրջան» Յեգելի գաղափարը, որը Լենինը մեջբերել է վերոնշյալ էսեներում, ոչ միայն արևմտյան մտքի զարգացումն ամփոփող օրենք է, այլև ընդհանուր իմաստով փիլիսոփայության և մտքի զարգացման պատմության ընդհանուր օրենքի խոր արտացոլում: Եթե ընդունենք, որ այս գաղափարը կողմնացույց է, որը մեզ առաջնորդում է ավանդական չինական փիլիսոփայության զարգացումը կառավարող օրենքների ուսումնասիրության մեջ, կտեսնենք, որ ընդհանուր առանձ ավանդական չինական փիլիսոփայությունը կազմված էր երեք հիմնական պարույրից: Առաջինը Ցինին նախորդող շրջանի փիլիսոփայությունն է՝ Կոնֆուցիոսից մինչև Մենցիոս և Սունցի [ժամանակի ուրիշ դպրոցների փիլիսոփայությունների միջով]: Երրորդը Վեյ-Չին դինաստիայի սյուանայուեն է [դասուական մետաֆիզիկա]: Վաճ Բիից մինչև Գուլ Սյան և Վանական Ծառ: Երրորդը Սուն-Մին դինաստիաների Մեռ-կոնֆուցիականությունն է՝ Զան Ցայից մինչև Չու Սի և Վան Ֆուօթի: Այս երեք շրջափուլերի միջև, որոնք պարույրի պես տեղադրված են իրար վրա, կարելի է նկատել զարգացման հյուսվածքները. Յան դինաստիայի դասական գիտությունը [Ճին-սյուե], որն ապահովում էր անցումը առաջին շրջափուլից երկրորդ շրջափուլ, և Սույ-Թան դինաստիաների բուդդայականության զարգացումը, որն ապահովում էր անցումը երկրորդ շրջափուլից երրորդ շրջափուլ: Այս երեք շրջափուլերն աճման կարգով միասին կազմում են ընդարձակ շրջան, որն էլ արտահայտում է չինական փիլիսոփայական ավանդույթի ամբողջությունը. Ցինին նախորդող շրջանից և Յան դինաստիայի փիլիսոփայությունից ի վեր, որի հիմնական նյութը կոնֆուցիականությունն էր, մինչև Վեյ-Չին և Սույ-Թան դինաստիաների փիլիսոփայություն, որի հիմնական նյութը սյուանայուեն էր [մետաֆիզիկա], որը կառուցված է Լաոշիի (Լաո Ցու) և Չուանցիի գաղափարների, ինչպես նաև աստիճանաբար չինականացվող բուդդայականության հենքի և հիմքի վրա, մինչև ներկոնֆուցիականություն [Սուն-Մին դինաստիաների կոնֆուցիականություն], որը կլանեց թե՛ դարսիզմը (քառսիզմ), թե՛ բուդդայական միտքը. և այդ հիմքի վրա [կոնֆուցիականությունը] զարգացավ ու հասավ էվոլյուցիայի ավելի բարձր փուլի:

«Յամենմատական կրոն» գրքում Ֆ.Բ. Ջերնսը մեջբերել է մի օրինակ, որը հստակ ներկայացնում է համենմատական կրոնի ուսումնասիրության ընդհանուր նշանակությունը: Ըստ նրա՝ դժվար է հասկանալ կամ բացատրել Յին Բաբելոնի կրոնում Որոտի աստծու նախնական կարգավիճակի իշեցումը սատանայի կարգավիճակի: Նա նշում էր, որ պատասխանը կարելի է գտնել համենմատական կրոնի և նրա մեթոդաբանության ուսումնասիրության մեջ, որովհետև զանազան կրոնների զարգացման պատմության մեջ հաճախ հանդիպում ենք դեպքերի, երբ նախորդ կրոնի աստվածությունները նոր կրոնում կրոցնում են իրենց կարգավի-

ճակը, երբ ավելի հին կրոնը պարտվում և փոխարինվում է: Այս դեպքում համեմատական կրոնի ուսումնասիրության մեթոդը մեզ տրամադրում է այնպիսի երևույթի բանական բացատրությունը, ինչպես Բաբելոնում Որոտի աստծո կարգավիճակի իշեցումը դիկ կարգավիճակի:

Ներկա ժամանակներում ժամանակակից ուսումնասիրության մեթոդներն առհասարակ բաժանվում են երկու կարգի. «զուգահեռ ուսումնասիրություններ» և «ազդեցության ուսումնասիրություններ»: Առաջինը վերաբերում է երկու տարրեր գաղափարախոսական մշակույթների միջև համեմատական ուսումնասիրություններ անցկացնելուն, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն չեն ազդում մեկը մյուսի վրա, մինչդեռ նրանց միջև կամ ակնհայտորեն համեմատելի կետեր: Այս դեպքում խնդիրը հետևյալն է՝ բացահայտել երկուսի ինչպես ննան, այնպես էլ տարրեր հատկությունները և ի ցույց դնել ընդհանուր օրենքներն ու տարրեր, անհատական որակները: Երկրորդը համեմատական ուսումնասիրություններ անցկացնելը է, երբ գոյություն ունեն ուղղակի կամ անուղղակի փոխազդեցություններ կամ, որոշ դեպքերում, միակողմանի ազդեցություն, որպեսզի բացահայտենք ընդհանրությունները, ինչպես նաև տարրերությունները, ի ցույց դնենք նրանց միջև գոյություն ունեցող հակասությունները, բախումները, առնմանումները և փոխզիջումները:

Անկախ ուսումնասիրվող երևույթի կարգից՝ չի կարելի մեկ կամ երկու տարր առանձնացնել երկրի, ազգի կամ տարածաշրջանի գաղափարախոսական մշակույթից և ուսումնասիրել դրանք՝ համեմատելով այլ երկրի, ազգի կամ տարածաշրջանի գաղափարական մշակույթի մի քանի ասույթի կամ մեկ-երկու առանձին երևույթի հետ: Սա կոչվում է մասնակի համեմատություն, որը, եթե խիստ դատենք, գրեթե ոչ մի կապ չունի համեմատական փիլիսոփայության կամ համեմատական կրոնի ուսումնասիրության հետ: Երկու տարրեր գաղափարախոսական մշակութային ավանդույթների համեմատական ուսումնասիրությունը պետք է կատարել երկու ավանդույթներում հայտնաբերված խնդիր կամ խնդիրների բազմակողմանի և սպառիչ համեմատության հիմնան վրա: Միայն այսպես կարող ենք բացահայտել լուրաքանչյուր մշակույթի] այն իրողությունները, որոնք արտացոլում են օրենքների գոյությունը, և միայն այդ դեպքում գիտելիքից կամ նրա բացակայությունից կիամնենք մարդկային գաղափարախոսական մշակույթի գարգանական կոնկրետ այս օրենքին, իսկ անհատականի ընկալումից՝ ընդհանուրի ընկալմանը:

### **9.3.2 Ուշադրություն մշակույթի հատուկ բնութագրին**

Երկու տարրեր ավանդույթների գաղափարախոսական մշակույթների համեմատական ուսումնասիրությունը նախաձեռնելիս պետք է եզրահանգումները կառուցենք այս երկու մշակույթների բնութագրի և առանձնահատկությունների վրա: Գաղափարախոսական մշակույթի բնութագիրն ու յուրահատկություններն ընդգծվում են, երբ այն համեմատվում և վերլուծվում է այլ գաղափարախոսական մշակութային ավանդույթի լույսի ներքո: Անհնար է ցույց տալ գաղափարախոսական մշակույթի առանձնահատկությունները, երբ ուսումնասիրվում է միայն այդ մշակույթը:

Այս էսեի առաջին և երկրորդ մասերում մենք քննարկեցինք այն փաստը, որ

չնայած ակնհայտ նմանություններ կան Չինաստանի Վեյ-Զին դինաստիաների մետաֆիզիկայի [սյուանսյուե] և հնդկական բուդդայականության պրածնա ուսմունքների միջև, նրանք ի վերջո առանձին են և նույնը չեն, յուրաքանչյուրն ունի սեփական առանձնահատկությունները: Մենք կարողացանք նման եզրահանգում անել, որովհետև կատարել էինք տարրեր ավանդույթներից առաջացած այս երկու գաղափարախոսական մշակույթների համեմատական ուսումնասիրությունը: Օրինակ, պարզեցինք, որ Վեյ-Զին դինաստիաներում սյուանսյուեի՝ «կեցության» և «չկեցության» վերլուծությունը կատարվել էր «գոյության» տեսանկյունից, այսինքն՝ «գոյաբանական նյութի» և «երևույթի» միջև հարաբերության տեսանկյունից, որտեղ վերջինս դիտարկվում է՝ որպես գոյաբանական նյութի տարրեր արտահայտություն: Չնդկական պրածնա բուդդայական ուսմունքը, մյուս կողմից, հաճախ ուն [կուն կամ չգոյություն] և յուն [կեցություն] վերլուծում էին՝ որպես վերացական հասկացություններ: Չետևաբար, չնայած երկուսն էլ կարծես թե խոսում են թեն ուի մասին [ոչինչ կամ ծագում], երբ Վան Բին օգտագործում էր եգույթը, նա հղում էր անում ի ու վեյ թեն [ոչինչը՝ որպես ծագում] գաղափարին, այսինքն՝ չկեցությունը [ու]՝ որպես կեցության [յու] նյութ ներկայացնելուն, մինչեռ երբ պրածնա ուսմունքն օգտագործում էր նույն եզրույթը, հղում էր արվում այս գաղափարին, որ «բոլոր դիարմաները չունեն նախնական սեփական եւություն» [ջու ֆա թեն ու ցի սին]: Վերջին ձևակերպման մեջ ուն [կամ կունը կամ չգոյությունը] վերաբերում էր ոչ թե նյութին, այլ [գաղափարին], որ բոլոր իրերը չունեին իրական սեփական նյութը [ցի թի] և հետևաբար, որ բոլոր իրերի գոյությունը միայն պատրամքներ է: Ավելին, Վեյ-Զին դինաստիաների մետաֆիզիկայի և հնդկական բուդդայական պրածնա ուսմունքի փաստարկման մեթոդները նույնպես տարրեր էին: Չնդկական բուդդայականության պրածնա ուսուցիչները հակված էին իրենց դիրքորոշումները փաստարկելիս կիրառել վերլուծական մեթոդը, մինչեռ Վեյ-Զին դինաստիաների սյուանսյուե մետաֆիզիկները փաստարկում էին փիլիսոփայական մեթոդների միջոցով, որոնք ներկայացված էին այնպիսի ասացվածքներով, ինչպիսիք են ոչ ի վան յան [Երբ ինաստը կամ մտադրությունը հասանելի է, բառերը կարող են և մոռացվել] և ծի յու չու յան [Իմաստն ապրում է բառերից դուրս. բառերը միայն նրա ժամանակավոր կացարանն են]:

Օրինակ, պրածնա բուդդայականության Կուն ցունում [Դատարկության դպրոց] «բոլոր դիարմաները ի սկզբան չունեին սեփական եւություն» [ջու ֆա թեն ու ցի սին] կանխադրույթը հաճախ վերլուծվում էր հետևյալ տրամաբանական եղանակով.

1. Երբ իրերը ենթարկվում են մանրամասն վերլուծության, հետագա վերլուծության արդյունքում, ենթարաբար, վերլուծության առարկան հասնում է թին սու [Ունայնություն կամ ոչինչ] ոլորտ: Այսինքն՝ հետագա ուսումնասիրությունն առաջ է քաշում այն տրամաբանական եզրակացությունը, որ վերլուծության առարկան իրականում չունի նյութ կամ սեփական են, հետևաբար՝ «Ուսումնասիրի և զննիր իրերի մանրամասները. Երբ հասնես վերջին մանրութին, կտեսնես, որ նյութ չկա»:

2. Երբ վերլուծենք իրերը ժամանակի և առարկայի հարաբերության տեսանկյունից, կհասկանանք, որ ոչ ու սյանը [նյութ կամ ֆիզիկական երևույթ կամ արտարկին տեսք], ոչ սին սյանը [մտավոր կամ հոգեբանական երևույթ] իրական չեն: Նախ և առաջ, բոլոր իրերը ստեղծվում են վայրկենապես և վայրկենապես էլ ան-

հետանում են, այսինքն՝ բոլոր իրերն առաջանալուն պես անհետանում են: Երկրորդ, ոչինչ հարատև չէ, այսինքն՝ չկան իրեր, որոնք առաջանում են, իսկ հետո՝ անհետանում, բայց դրանց առաջացումն ու անհետացումը կատարվում է միանգամից. առաջացումն ու անհետացումը կատարվում են նույն պահին: Այս երկու հանգամանքից ելնելով՝ պետք է ասել, որ իրերը չունեն իրական սեփական նյութը:

3. Առարկայի վերլուծությունն ինքնին անխուսափելիորեն հանգեցնում է այն եզրակացությամբ, որ այն կազմված է պատճառների և ազդեցությունների համադրությունից և, հետևաբար, չունի որևէ իրական, սեփական գոյաբանական նյութը: Քանի որ բոլոր դիարձանները չունեն իրական սեփական նյութը, բոլոր իրերը կամ երևույթները, հետևաբար, չունեն նախնական գոյություն, ինչպես վկայում է հետևյալ արտահայտությունը՝ «արտաքին տեսքը (երևույթները) ոչ թե անհետանում են, այլ անգո են»:

Մերողը, որ վեյ-Զին դինաստիաների սյուանսյուեի [դառսական մետաֆիզիկ-ներ] գիտնականները, օրինակ՝ Վան Բին, կիրառում էին «ծագել չկեցությունից» [ի ու վեյ բեն] գաղափարը պնդելու համար, խիստ տարրերվում էր պրածնա բուդդայականների գաղափարից: «Լանգզի (Լան Ցու) Զի Լոււ» [Լանգզի (Լան Ցու) մտադրությունների ուրվագիճ] գրքում Վան Բին գրում է.

Իրի ստեղծման և նրա ձեռքբերման պատճառը հետևյալն է. այն պետք է որ ծնվի անձնությունից [ու սին] և ծագի անանունությունից [ու մին]: Անձնությունն ու անանությունը բոլոր իրերի սկզբաղյուրն է: Այն ոչ տաք է, ոչ սառը, ոչ գում, ոչ շան [Գումն ու շանը հասուկ տատերի հնչողություններն են, Թարգմ. ծամ.]: Յնարավոր չեւ լսել նրա ծայնը, տեսնել արտաքինը, զգալ կամ համտեսել: Այն կազմված է ուժերի նախնական համադրությունից. որպես երևույթ՝ այն չունի ծև, որպես աղմուկ՝ ունի բույլ հնչողություն, իսկ ինչ վերաբերում է համին, ապա այս չկա: Յենց այս պատճառով է, որ այն կարող է լինել բոլոր տեսակների և առարկաների սկզբանադրյուրը: Այն գոյությունը պահպանում է սաղմնային վիճակում, որը ներառում է ողջ Երկինքն ու Երկիրը, իսկ Երկնքի ու Երկրի բոլոր մասերը կապված են միմյանց: Այն չի կարող գնալ որևէ տեղ, և միևնույն ժամանակ չի կարող ուղղորդվել: Եթե ջերմ է, չի կարող պաղ լինել, եթե գում է, չի կարող շան լինել: Եթե իրերը ծև են առնում, անխուսափելիորեն բաժանվում են. հնչունները նույնպես, բնականաբար, պատկանում են տարրեր բաժինների: Յետևաբար, եթե մի բան, որ երևույթ է, ունի ծև, չի կարող լինել Մեծ երևույթ. հնչունը, որ աղմուկ ունի, չի կարող լինել Մեծ հնչուն: Այնուամենայնիվ, եթե Չորս երևույթները ծև չունենային, Մեծ երևույթը չէր կարողանա ազատ լինել: Եթե Յինգ հնչուններն աղմուկ չունենային, Մեծ հնչունը չէր կարողանա տեղ հասնել: Եթե չորս երևույթները ծև առնեն, սակայն առարկաները չծնավորվեն ու չհանձնվեն վարպետին, Մեծ երևույթն ազատ կլինի: Եթե իինգ հնչուններն աղմուկ ունենան, բայց միտքը չիտևի նրանց, վրա կհասնի Մեծ հնչունը:

Վան Բիի տեսանկյունից՝ Երկինքն ու Երկիրը և բոլոր իրերն ունեն բազմաթիվ ձևեր և արտաքին տեսք: Բայց այս ամենը տեղի չի ունենում միաժամանակ. Եթե մի բան ունի մի ծև, չի կարող ուրիշ ծև ծեռք բերել: Յետևաբար, միայն անձևը կարող է ծև ծեռք բերել, միայն անհնչյունը կարող է հնչողություն ծեռք բերել, և միայն չկեցությունը [այն, որը հասուկ լինելություն չէ] կարող է հասնել կեցության [դառնալ որևէ բան]: Քանի որ չկեցությունը կարող է դառնալ կեցություն, այն կարող է դառնալ ողջ գոյության հիմքը: Յետևաբար՝

Երկնքի տակ ամեն ինչ ծնվում է «Հեցությունից»: Կեցության սկիզբը չկեցությունից սկզբնավորվելն է: Եթե ցանկանում ես հասնել «Հեցության», պետք է նախ վերադառնաս «չկեցության» (տես Լաղջի (Լա Ցու) Զու [Լաղջի] (Լա Ցու) Ժանորագրություններ):

Երկնքի տակ բռլոր իրերն ունեն հատուկ և կոնկրետ գոյություն, ձև և արտաքին: Ձև և արտաքին ունեցող այս իրերը կարող են կյանքի կոչվել կամ առաջանալ, քանի որ նրանք «չկեցությունն» ընորունում են՝ որպես իրենց գոյաբանական նյութ. միայն այս դեպքում այս նյութը կարող է արտահայտվել բազմաթիվ հատուկ իրերի միջոցով, որոնք ունեն տարրեր ձև և արտաքին: Օրինակ, պնդում էին, որ ծովի ջուրը դրսևորվում է ալիքների և բազմաթիվ տարրեր գոյսներ ու ձևեր ունեցող կոհակների միջոցով: Այն կարող է դրսևորվել բազմաթիվ երևույթների տեսքով, որովհետև սկզբնադրյուրը ջուրն է: Եթևաբար, բազմազան ձևեր և երևույթներ ունեցող բռլոր իրերը պահպանելու համար պետք է ընթանալ «չկեցությունը», որը նրանց գոյաբանական նյութն է:

Ինչևէ, «չկեցությունը», որը գոյաբանական նյութն է, մյուս «բռլոր իրերից» դուրս գոյություն ունեցող «իր» չէ: Չնայած կարելի է ասել, որ «Երևույթը, որն ունի ձև, Մեծ Երևույթը» չէ, և «Եթե Չորս Երևույթները չունենան ձև, Մեծ Երևույթը չի կարող ազատ լինել»: Եթևաբար, միայն այն ժամանակ, երբ մարդը կարողանա հասկանալ իրերը հատուկ ձևերի և երևույթների միջոցով, և միևնույն ժամանակ չսահմանափակվի հատուկ ձևերով ու երևույթներով, միայն այդ դեպքում կարող է ըմբռնել «Երևույթ, որը չունի տեսք» [ու սան ջի սաճ] կամ «տեսարան՝ պատկերից դուրս» [հուա վայ ջի ծին] գաղափարները: Միայն այն ժամանակ, երբ մարդը հասկանա հատուկ հնչյունների միջոցով, բայց միևնույն ժամանակ, չսահմանափակվի այդ հատուկ հնչյուններով, կարողանա ընկալել «հնչյունը, որ չունի աղոնուկ» [ու շեն ջի ին] կամ «ակորդից դուրս հնչյունը» [այուան վայ ջի ին], և միայն լեզուն [բառեր] հասկանալու և միևնույն ժամանակ այդ լեզվի վրա չկենտրոնալաւ դեպքում մարդը ծեռք կրերի «իմաստն առանց բառերի» [ու յան ջի ի] կամ «բառերից դուրս իմաստը» [յան վայ ջի ի]:

Վերը նշվածից հստակ երևում է, որ մեթոդ, որի օգնությամբ կան Բին առաջ քաշեց «չկեցությունը՝ որպես սկզբնադրյուր» [ի ու վեյ բեն] փաստարկը, տարրերվում էր բուդդայական պրածնա ուսմունքի Կուն ցունի որդեգրած Վերլուծական մոտեցումից: Վաճ Բիի ընդունած մոտեցումը դե ի վաճ յան [իմաստնել իմաստին և կորցնել կամ մոռանալ բառերը] մեթոդն էր, որը մասնավորապես այուանայուե գիտնականների մետաֆիզիկական մեթոդն էր:

Վեյ-Զին դիմաստիաների սյուանյուե դպրոցի գույ ու [զնահատել չկեցությունը] դպրոցի զանազան կողմերը համենատելուց և ուսումնասիրելուց հետո, ինչպես ցույց են տալիս Վաճ Բիի և հնդկական պրածնա ուսմունքի Կուն ցունի [Դատարկության դպրոց] օրինակները, մենք ի վիճակի կլինենք ավելի հստակ տեսնել դպրոցներից յուրաքանչյուրի առանձնահատկություններն ու զարգացման մակարդակը: Միայն այս հիմքի վրա կարող ենք հստակեցնել հարաբերությունները բուդդայականության և Վեյ-Զին դիմաստիաների դառսական մետաֆիզիկայի հարաբերությունները բուդդայականության՝ Զիմաստան մուտք գործելու ժամանակահատվածում կամ դրանից անմիջապես հետո:

«Զեսյուե Յանձյու» [Փիլիսոփայական ուսումնասիրություններ] ամսագրի 1980 թվականի առաջին համարում տպագրվեց մի հոդված՝ «Կյանքի և մահվան,

ձեկի և ոգու հարցերի մասին դառսական կրոնի վաղ շրջանի տեսությունների հակիրծ քննարկում» վերնագրով։ Այդ էսեում համեմատություններ էին անցկացվում դառսական կրոնի և բուդդայականության միջև Վեյ, Չին ժամանակաշրջաններում և Յուլսիս և Յարավ դինաստիաներում՝ կենտրոնանալով նրանց համապատասխան հայեցակերպերի վրա, որոնք վերաբերում են կյանքին ու մահվանը, ինչպես նաև ձեթուոյի հարցին խզատագրում, կամ, բուդդայականության դեպքում, ավելի հայտնի էր՝ որպես փրկություն։ սանսկրիտում՝ մուքթի կամ մոքսայ։ Յոդվածը մատնանշում էր, որ այն ժամանակ մեծ ճամսայականություն վայելող երկու կրոնների միջև այս հարցերի շուրջ գոյություն ունեին խոշոր տարբերություններ։

1. Կյանքի և մահվան հարցում դառսական կրոնը պաշտպանում էր «հավիտենական կյանք» [այն է՝ մշտնժենականություն] գաղափարի յուրացումը՝ որպես նպատակ, մինչդեռ բուդդայականությունը պաշտպանում էր «հավերժական բնաջնջման» [այն է՝ չկյանքի] գաղափարը՝ որպես նպատակ։ Ազատագրման դասուիզմի (թառսիզմ) գաղափարը պաշտպանում էր մահկանացու մարմնի փոխակերպումն անմահության՝ մարմնի և հոգու միավորման միջոցով, որպեսզի այդ միավորված նյութը ապրի մշտնժենական, հավերժական կյանքով, այդ կյանքում առանձնանա ներկայի խնդիրներով ծանրաբեռնված աշխարհից և մուտք գործի երևակայության և պատրանքի հոգնոր աշխարհ։ Մյուս կողմից, բուդդայականությունը հավատում էր, որ մարդկային կյանքի ցավերի ալբյուրը «կեցությունն» է։ սա մի վիճակ է, եթե հոգին կապվում է մարմնին։ «Կեցության» այս վիճակում, մինչ հոգին կհասնի Նիրվանայի, այն պետք է մշտապես վերադառնա մարմնացման շրջափուլերին։ Միայն մարմնացման այս շրջափուլերն անցնելուց հետո հոգին, առանձնանալով մարմնից և վերադառնալով հավիտենական բնաջնջման, կարող է դուրս գալ դառնության ծովից, որը մարդկային կյանքն է։

2. Ինչ վերաբերում է ձեկի և ոգու հարցին, դառսիզմը (թառսիզմ) պաշտպանում էր անմահությունը, եթե հոգին և ձևը դառնում են մեկ ամբողջություն։ Բուդդայականությունը պաշտպանում էր ձեկի և ոգու՝ միմյանցից անջատ լինելը և, հետևաբար, բուդդայության հասնելը։ Բուդդայականությունը հավատացած էր, որ եթե ոգին չառանձնանա ձեկց, ի վիճակի չի լինի խուսափել մարմնացման շրջափուլերից և չի կարող ազատվել։ ազատվելու համար ոգին պետք է առանձնանա ձեկց, և ի պատասխան սեփական լիարժեք ճակատագրի՝ բնաջնջվի և անհետանա։ Դառսիզմը (թառսիզմ) հավատում էր, որ կյանքի և մահվան սահմաններն անցնելու և ազատագրվելու ուղին անցնում է ոչ թե լիարժեք ճակատագրի կամ բնաջնջման, այլ մարմնի անմահացման միջով, իսկ որպեսզի մարմինն անմահանա, այն չի կարող և չպետք է առանձնանա ոգուց։

3. Ինչ վերաբերում է ազատագրման կամ փրկության մեթոդներին՝ դառսիզմը պաշտպանում էր ձևը կոփելու, մինչդեռ բուդդայականությունը պաշտպանում էր ոգին սնելու մեթոդը։ Քանի որ բուդդայականությունը հավատացած էր, որ բուդդայության հասնելը կախված էր կրթվածությունից և ընթրոնումից, Նիրվանայի հասնելու գլխավոր միջոցներն էին՝ զարգացնել ներքին միտքն ու սեփական ընթրոնումը կամ իմացությունը։ Քանի որ դառսիզմը (թառսիզմ) հավատացած էր, որ անմահության հասնելը կախված է հաջողությունների և ծեռքբերումների կուտակումից, ազատագրման հասնելու նրա հիմնական միջոցներն էին՝ կոփել մարմինն ու միտքը, սնել կյանքը և աջակցություն ստանալ արտաքին մատերիայից

**[օտար նյութեր]:**

Չամենմատության այս երեք կետից կարող ենք ընդհանուր առմանք հասկանալ Չինաստանում Վեյ և Չին ժամանակաշրջանների և Յյուսիս և Յարավ դինաստիաների դառսիզմի և բուդդայական կրոնների ընդհանուր առանձնահատկությունները: Դառսիզմի (թառսիզմ) նպատակը աննահության ձեռքբերումն էր: Չնայած սա անհնար է, քանի որ այս մարդկանց ուշադրությունն ուղղված էր սեփական մարմնի և հոգու գործառույթները կոփելուն և սնելուն [օրինակ՝ ցի գուն կամ շնչառական վարժություններ] և արտաքին նատերիայի ուսումնասիրությանը, ինչպիսիք են հարերի և բուժահեղուկների (օտար նյութեր) արտադրությունը, որոնց օգնությամբ կարող էին իրագործել աննահության խնդիրը: Բուդդայականության նպատակը բուդդայության հասմելու (բուդդա դառնալու) ունակությունն է: Չնայած սա նույնպես ակնհայտորեն անհասանելի նպատակ էր, այնուամենայնիվ այն մարդկանց ուշադրությունն ուղղում էր հոգեբանական գործունեության վերլուծության և ճանաչչողական գործնքացների ուսումնասիրության վրա:

Ուստիև, մենք կարողացանք բացահայտել, որ դառսիզմի (թառսիզմ) տեսություններում մեծ քանակով նյութ կա, որը կապված է «նյութի ճանապարհին» և մարդու մարմնին վերաբերող գիտելիքի հետ, որն արժանի է մեր կողմից վերլուծվելու և հետազոտվելու: Օրինակ, «Դառ Ցան» [ճանապարհի գանձարանը] գիրքը կազմված էր 5000-6000 հատորից, և բոլորն ել, ցավոք, դեռևս համակարգվելու և ուսումնասիրվելու կարիք ունեն. գիրքը հսկայական տեղեկատվություն է պարունակում այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են շնչառական վարժությունները, դեղամիջոցները և բուսաբուժությունը (դեղագիտություն), քիմիան, հիգիենան և ֆիզիկական դաստիարակությունը:

Մյուս կողմից, չինարենով գոյություն ունեն ավելի քան 10,000 հատոր բուդդայական սուտրաներ [այդ թվում և սաստրաներ, ծանոթագրություններ և այլ բացատրական քննախոսություններ]: Բազմաթիվ ոլորտներում, ինչպիսիք են հոգեբանական և հոգեկան գործունեության, գիտելիքի և ճանաչչողության գործնքացների վերլուծությունը, սուբյեկտի և օբյեկտի հարաբերության վերլուծությունը, հասկացությունների, ընկալման և հասկացութենականության վերլուծությունը, և տրամարանական գործնքացը, որը հայտնի է վիդճնանա կամ երեմն հետուվիդյա անուններով, այս բուդդայական կանոնները կարող են մեծ ներդրում ունենալ մեր լուսավորականության գործում: Եթե կարողանանք մաքրվել դառսական և բուդդայական նյութերի այն հատվածներից, որոնք ոչ գիտական են, առասպեկտական, երևակայական կամ սննդավատ, և վերլուծնենք դրական արժեք ունեցող մնացած կողմերը, սա կլիմի ամենակարևոր ձեռքբերումը:

Չամենմատական փիլիսոփայության կամ համենմատական կրոնի ուսումնասիրության նպատակներից մեկն է՝ համենմատության և վերլուծության միջոցով բացահայտել զանազան ավանդույթների անհատական գաղափարախոսական մշակույթների առանձնահատկությունները, ճանաչել և սահմանել նրանց յուրահատկությունները, որպեսզի մարդկի ծիշտ հասկանան և գնահատեն այս մասնավոր գաղափարախոսական մշակույթների կարգավիճակն ու դերը համաշխարհային պատմության գաղափարախոսական մեջ և պարզեն նրանց ներդրումները: Մարդկային գաղափարախոսական և մտավոր մշակույթի մեջ գանձարանն անխուսափելիորեն կազմված է բազմաթիվ անհատական գաղափարախոսական մշակույթների լավ ու գերազանց կողմերից, յուրաքանչյուրը՝ իր սեփական ավանդույթներով

և առանձնահատկություններով: Եթե գաղափարախոսական մշակույթը չպարունակեր սեփական առանձնահատկություններ, բարդ կլիներ որևէ ներդրում ունենալ մարդկային մտավոր քաղաքակրթության մեջ: Մյուս կողմից, մշակույթը, որը դառնում է ազգի գաղափարախոսական մշակույթ կամ նրա մի մաս, պետք է ունենա իր յուրահատկությունները, և, հետևաբար, որոշակի ավանդ ունենա առհասարակ մարդկային ռասայի գաղափարախոսական մշակույթի մեջ:

#### **9.4 Չին թեմաների և նոր հիմնախնդիրների մեկուսացումը**

Վերջապես, տարբեր ավանդույթների երկու գաղափարախոսական մշակույթների համեմատական ուսումնասիրության մեջ պետք է մեծ ուշադրություն դարձնել այն խնդիրների բացահայտմանն ու վերաբացահայտմանը, որոնց շուրջ պետք է մտորել և լուծումներ գտնել, ինչպես նաև հետազոտության և ուսումնասիրության նոր թեմաներ առաջարկել:

Չին քենուն իր «Շի լուն ֆան յու ջուն դի յուի ի չուանցայ» [սանսկրիտում՝ «Կեցություն, միասնություն և գոյություն» եզրույթների կամ արտահայտությունների փորձնական քննարկում] հիդվածում նշել է, որ սանսկրիտում արտահայտություններն ունեն մի քանի արմատ կամ բառահիմք, որոնք գործածվում են կեցություն, միասնություն կամ գոյություն գաղափարների փոխարեն: Նա հայտնում է մեզ, որ ավելի տարածված եզրույթները երկուսն են՝ աս և թիու: Երկուսն էլ չինարենում թարգմանվում են՝ որպես յու [կեցություն]: Օրինակ, «Ջուն բյան ֆեն թի լուն» [Քննախոսություն Սիջինի և ծայրահեղությունների տարբերությունների մասին] [գրված է Կասուրանդիուի կողմից] երկի թարգմանության մեջ, որը կատարվել է Չեն Ձենքի կողմից, և «Բյան ջուն բյան լուն» [Քննախոսություն Սիջինի և ծայրահեղությունների ուսումնաբների միջև բանավեճի մասին] երկի թարգմանության մեջ, որը կատարվել է Սյուան Ցանի կողմից, «սաթթվառ» եզրույթը հետևողականորեն թարգմանված էր յու [կեցություն]: Սակայն թիավան [իւնենալ կամ սեփականություն] դվադասամգամ պրաթիյասամութպատմերից կամ տասներկու յինյուաններից [Ծիդանասներ կամ պատճառների համադրություններ] մեկը նույնպես թարգմանվել է յու [կեցություն]: Ասը վերաբերում է գոյությանը կամ կեցությանը հասարակ, վերացական իմաստով, կամ, եթե ցանկանում եք, անշարժ, բացարձակ իմաստով, իսկ թիուն վերաբերում է գոյությանը՝ ձևափոխող կամ հատուկ, շարժվող կամ հարաբերական իմաստով:

Մենք նաև գիտենք, որ անտիկ հունական փիլիսոփայության մեջ, մասնավորապես մտքի արիստոտելյան համակարգում, «մատերիան» բաժանվում էր երկու կարգի՝ առաջնային և երկրորդական: Այս երկուսը տարբեր իմաստներ ունեն: Առաջինը չի վերաբերում պարզ ու մաքուր նյութին, և ոչ էլ ծկին, որն ընդհանուր է զանազան նյութերի համար, այլ նյութի անհատական միավորներին և նրանց ձևերին: Նյութի երկրորդ իմաստը [կամ երկրորդական նյութը], մյուս կողմից, վերաբերում էր ընդհանուր ձկին կամ հասկացությանը կամ նյութի կարգին, որն անհատականանում է յուրաքանչյուր առանձին նյութի մեջ:

Սանսկրիտում զանազան լեզվաբանական բառարմատներին համապատասխան, «կեցություն, միասնություն և գոյություն» եզրույթներն ունեն տարբեր իմաստներ, իսկ «նյութ» եզրույթը մտքի արիստոտելյան համակարգում նաև ունի զանազան նշանակություններ. արդյո՞ք այս փաստը որևէ նշանակություն ունի

մեզ համար: Բուդդայական կանոնների չինական թարգմանություններում գոյություն և կեցություն եղույթը, որը տարբեր նշանակություններ ունի բնագրում, թարգմանվել է յու: Այդ դեպքում, արդյո՞ք յու եղույթով մեկնաբանվող հասկացությունը տարբեր հմաստներ ունի նաև չինական ավանդական փիլիսոփայության մեջ: Երբ Փեյ Վեյը իր «Ցուն յու լուն» [Կեցության մեծարնան քննախոսություն] ասում էր «ինքնուրույն առաջացում և անխուսափելի գոյություն նյութի մեջ» [ցի շեն էր թի լի յու], արդյո՞ք յու եղույթը վերաբերում էր հատուկ գոյություն ունեցող նյութերին, թե՝ նյութի ընդհանուր գոյությանը: Դարձալ, Գուռ Սյանի «Զուանցի Զու» [«Զուանցիի» ծանոթագրություններ] գրում արդյո՞ք յու եղույթը երեմն վերաբերում է հատուկ գոյություն ունեցող նյութերին, և երեմն՝ նյութի ընդհանուր գոյությանը: Այս բոլոր հարցերն ավելի խոր հետազոտության կարիք ունեն և պահանջում են խորապես վերլուծել յու եղույթի հմաստներն ավանդական չինական փիլիսոփայության մեջ:

Իր «Թի յուն լուն» [Սյուրի և կիրառության մասին] գրքում Սյուն Շիլին գրում է, որ ավանդական չինական փիլիսոփայության և հնդկական բուդդայականության հիմնական և հիմնարար տարբերությունն այն է, որ եթե ավանդական չինական փիլիսոփայությունը խոսում էր «նյութի և կիրառության նույնության» [թի յուն ժու ի] մասին, ապա հնդկական բուդդայականությունը նյութն առանձնացնում էր կիրառումից՝ դրանք միմյանցից անջատելով: Մենք չենք ցանկանում մեր քննարկման մեջ հիշատակել, թե արդյոք Սյունի եղակացությունը ճիշտ էր, թե ոչ, բայց միանշանակ կարելի է ասել, որ տարբեր ավանդույթներից առաջացած այս երկու գաղափարախոսական մշակույթների իր ուսումնասիրության մեջ բարձրացրած խնդիրը, թերևս, զգալի նշանակություն ունի հենց չինական փիլիսոփայական ավանդույթի առանձնահատկությունների ուսումնասիրության համար:

Ավանդական չինական փիլիսոփայության զարգացման ընդհանուր միտումների տեսանկյունից նկատելի է, որ թյան դառ [Երկնքի ճանապարհ] և ժեն դառ [Մարդկության ճանապարհ] գաղափարներն ընդհանրապես համարվում են միասնական և փոխկապակցված. այլ կերպ ասած՝ Ենթարկվում էր, որ հիեալը պետք է և կարող է իրականացվել իրականության մեջ: Նույնիսկ չնայած Վեյ-Զին ժամանակաշրջանի սյուանյուն և նետափիզիկան նորի այս համակարգը վերցրել էր Լաո Ցզիի և Չուանցիի գաղափարներից՝ որպես հենք, մետափիզիկների վերջնական նպատակը դեռևս «ներսից հմաստունի և դրսից միապետի համադրությունն» է [նեյ շեն վայ վան. հի դառ], որը տեղավորվում էր «դրախտ, որը պատկանում է Մեծ ուսմունքին» [մին ծյան ջուն ցի] գաղափարում, այն է՝ կոնֆուցիականության մեջ: Երբ Սուն-Սին դիմաստիաների նեո-կոնֆուցիականները դիմադրում էին բուդդայականությանը և դառսիզմին (թառսիզմ), նրանք դա անում էին՝ գերազանցապես հիմնվելով այն հանգամանքի վրա, որ բուդդայականներն ու դասուականները, ըստ նեոկոնֆուցիականների, «հետամուտ էին իրական տիեզերքի պատրանքային անդրանցական շրջագծին»: Նեո-կոնֆուցիականները միանգամայն հավատացած էին, որ «նորմի էթիկական չափանիշները» [գան չան] և մեծ ուսմունքը [մին ծյան ծյան] հավասարվում էին «Երկնքի սկզբունքին» [թյան լի]: Մյուս կողմից, չինական բուդդայականության մեջ նույնպես, մասնավորապես Չան դպրոցում, ենթարկվում էր, որ «բուդդայության հասնելը» չէր պահանջում դուրս գալ կամ առանձնանալ իրականությունից: Ըստ Չան բուդդայականության՝ «ջուր թերել, փայտ կոտրել՝ այս ամենի մեջ հրաշալի ճանապարհ ու ծշմարտություն կա».

այսինքն՝ մարդու համար միանգամայն հնարավոր էր ընթանել բուդրայության հասնելու հրաշալի ճանապարհը նույնիսկ առօրյա, երկրային կյանքի ոլորաններում:

Եթե Չինաստանի ավանդական փիլիսոփայությունը համեմատում ենք հնդկական բուդրայականության անդրանցական «աշխարհից դուրս գալու» գաղափարի հետ, կարող ենք ասել, որ չինական փիլիսոփայությունը, ի վերջո, իսկապես հավատարիմ մնաց «նյութի և օգտագործման նույնության» գաղափարին, և հենց սա է պատճառը, որ լիարժեք անդրանցականության գաղափարները երբեք չկարողացան դառնալ ավանդական չինական մտքի հիմնական ուղղության մի մաս: Որքան հասկանում եմ, սա նույնպես մի հարց է, որն արժանի է ավելի խոր ու մանրամասն հետազոտության:

Եթե մեզ վիճակված լինի համեմատական մեթոդը կիրառել փիլիսոփայական գաղափարների ուսումնասիրության և տարրեր ավանդույթներից առաջացած զանազան գաղափարախոսական մշակույթների կրոնական ուսմունքների ուսումնասիրության մեջ, օրինակ՝ Չինաստանի և Հնդկաստանի գաղափարախոսական մշակույթները, կամ արևանյան աշխարհի մշակույթը, հավատացած են, որ կհայտնաբերենք քննարկման արժանի ավելի շատ թեմաներ:

Ավելի քան հարյուր տարի առաջ Մարքսը և Էնգելսը նշել են. «Քանի որ բուրժուականությունը բացեց համաշխարհային շուկան, զանազան երկրների արտադրությունն ու սպառումը համընդիմութ բնույթ ստացան»: Սա ճշմարիտ է ոչ միայն նյութական արտադրության, այլև մտքի և հոգու արգասիքների առումով: Ազգերի հոգենոր արտադրանքը դարձել է նրանց ընդհանուր ունեցվածքը, և անհատական ազգերի մասնակիությունն ու տեղայնացումն օրեցօր դարձել են ավելի ու ավելի անհնար: Ենտևաբար, աշխարհի շատ ազգերի և երկրների գրականությունից էլ ձևավորվել է համաշխարհային գրականությունը:

Ըստ Խմբագիր-ծանոթագրողի՝ «գրականություն» եզրույթն այստեղ վերաբերում է տարբեր ոլորտներում, այդ բվում և գիտության, արվեստի և փիլիսոփայության ոլորտում գրելու: Դիմա մենք թևակոխել ենք նոր դարաշրջան, որը շատ ավելի առաջադեմ է, քան 1848 թվականը, երբ Մարքսը և Էնգելսը գրեցին «Կոմունիստական մանիֆեստը»: Գաղափարների և մշակույթների միախառնումը և ժողովուրդների ու քաղաքակրթությունների փոխազդեցությունը շատ ավելի լայն և խորն է: Փիլիսոփայության և կրոնի համեմատական ուսումնասիրությունը պետք է խթանի չինական փիլիսոփայության պատմության ուսումնասիրությունը: Տարբեր ավանդույթների գաղափարախոսական մշակույթների համեմատական ուսումնասիրության ոլորտում մենք կարող ենք բացահայտել ընդհանուր օրենքները, որոնք կառավարում են իրերի գարգացումը, կարող ենք հայտնաբերել և ի ցույց դնել տարբեր գաղափարախոսական մշակույթների առանձնահատկություններն ու զարգացման մակարդակները և ընդլայնել մեր ուսումնասիրության բովանդակությունն ու ծավալը: Արդյո՞ք սա նաև դեր կունենա մարքսիզմի զարգացման, հարստացման և առաջխաղացման մեջ: Վստահ եմ, որ կունենա:

## ԳԼՈՒԽ 10

### ԱՎԱՆԴԱԿԱՆ և ԱԵՐՄՈՒԺՎԱԾ ՄՏԹԻ ՈՒ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԻԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ. ԲՈՒԴԴԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԵՐՄՈՒԺՈՒՄԸ<sup>81</sup>

Պատմության ընթացքում օտար մշակույթը և գաղափարախոսությունը Չինաստան է ԱԵՐՄՈՒԺՎԵԼ երեք անգամ: Առաջինը բուդդայականության ԱԵՐՄՈՒԺՈՒՄ էր, որն այս աշխատության հիմնական թեման է:

Երրորդ մշակութային արշավանքը կապված էր արևմտյան մշակույթի հետ՝ իրադարձություն, որը ժամանակի ընթացքում վեճերի տեղիք տվեց անցյալի ու ԱԵՐԿԱՅԻ, չինական և օտար երևույթների համապատասխան արժանիքների շուրջ: Փիլիսոփայական տեսանկյունից այս իրադարձությունը բարձրացրեց հարցեր, որոնք վերաբերում էին արևմտյան և չինական փիլիսոփայությունների հարաբերություններին: Բազմաթիվ արդի փիլիսոփաներ, անկախ նրանից՝ տեղյակ էին այդ մասին, թե ոչ, իրականում ձգտում էին հաշտեցնել այս երկու, մեծ հաշվով տարբեր մշակույթները: Մինչ Չինական ժողովրդական Դանրապետության հիմնումը թերևս ամենաշատը Ֆեն Ցուլանինա էր հաջողվել հաշտեցնել Երկու մշակույթները: Այս «Նոր ռացիոնալիզմը» կարող է դիտարկվել՝ որպես արևմտյան պրագմատիզմի կիրառման փորձ՝ որոշ ավանդական չինական փիլիսոփայական հարցեր լուծելու համար: Այն, որ նրան չիաջողվեց վճռել չինական փիլիսոփայական զարգացման ծշմարիտ ուղին, երևում է այն փաստից, որ գործնականում այն չկարողացավ լուծել Չինաստանի հասարակական խնդիրները:

Երրորդ իրադարձությունը մարքսիզմի ԱԵՐՄՈՒԺՈՒՄ էր՝ Եվրոպական գաղափարախոսություն, որը զարգացել էր Եվրոպական պատմական պայմանների արդյունքում: Որպեսզի մարքսիզմն արմատավորվի Չինաստանում, այն նաև պետք է որոշակիորեն միաձուլվի ավանդական չինական մշակույթի և մտթի հետ: Ասել է թե՝ այն պետք է համապատասխանի ավանդական մշակույթի քննադատական պահանջներին:

Չյա Իմ<sup>6</sup> իր «Գուռ Չին Լում» (Չինի ծախողումների քննախոսություն) գործում մեջքերում է մի հին ասացվածք. «Անցյալի չմոռացված իրադարձություններն ապագայի ուսուցիչներն են»: Արդյո՞ք այսօր կարող ենք որևէ բան սովորել ԱԵՐՄՈՒԺՎԱԾ բուդդայականության և ավանդական չինական մշակույթի շփումներից: Կարծում եմ՝ կարող ենք:

Ես կցանկանայի քննարկել երեք կարևոր տարրեր, որոնք բնութագրում էին բուդդայականության տարածումը Չինաստանում:

Առաջինն այն փաստն է, որ երր բուդդայականություն առաջին անգամ մուտք գործեց Չինաստան, կցվեց տեղական գաղափարախոսություններին: Միայն ավելի ուշ այն աստիճանաբար զարգացավ և սկսեց ազդել այս գաղափարախոսությունների վրա:

81. Կոնֆուցիականություն, բուդդայականություն, դառսիզմ, քրիստոնեություն և չինական մշակույթ, 1991: 139-146:

Եթե Հան դինաստիայի ընթացքում բուդդայականությունը մուտք գործեց Չինաստան, այն նույնանում էր տեղական կրոնական գործող ուղղությունների հետ: Վեյ-Չին ժամանակաշրջանում բուդդայականությունը նույնանում էր «Առեղծվածային ուսմունքի»<sup>4</sup> հետ, որն այն ժամանակ մեծ մասսայականություն էր վայելուն:

Հան դինաստիայի ընթացքում բուդդայականությանը հաճախ վերաբերվում էին այնպես, ինչպես Հուան-Լաոս դպրոցին: Այսպիսով, ասում են, որ Չուի Ին արքան «արտասանում էր Հուան-Լաոյի նորածաշակ խոսքերը և գրիարերություններ էր մատուցում Բուդդային», մինչդեռ կայսր Հուանը՝ «իր պալատում սրբավայրեր էր պատրաստում Հուան-Լաոյի և Բուդդայի համար»:

Այդ ժամանակաշրջանի բուդդայական աշակերտները նույնիսկ նույնանում էին իրենց «ճամապարհի տեխնիկական միջոցները կիրառողների» հետ: Մոցի (Մո Ցու)<sup>5</sup> «Լիհուո լունը»ց (Քննախոսություն Սխալն ուղղելու մասին) պնդում է. «Գոյություն ունի իննսունվեց հստակ ճանապարհ, բայց պատկառանքի արժանի այդ ճանապարհներից և ոչ մեկն այնքան մեծ չէ, որքան Բուդդայի ուսմունքները»: «Քառասուներկու մասից բաղկացած սուտրան»<sup>6</sup> նաև կոչվում է «Բուդդայի ճանապարհ»:

Այն ժամանակ բուդդայական քարոզիչների գլխավոր սկզբունքներն էին հոգու անմահությունն ու կարմայի հատուցումը. այնպիսի հնդկական հասկացություններ, ինչպիսին է «եսի զգոյությունը», պարզապես չին հասկացվում: Հոգու անմահությունն արդեն իսկ գոյություն ուներ ավանդական չինական մտքում, բայց միայն հոգիների հասկացության տիրույթում: «Ճի Չինի» (Ճիի Չին)՝ «Վեն Վան» ներբողը նախկին Զոռու արքաների մասին ասում էր. «Երեք դեկավարները երկնքում են», այսինքն՝ նրանց հոգիները համբարձվել են: «Հուայ Նան ցիի»<sup>7</sup> «Զինշեն Սունը» հաստատում է, որ «ձևը կարող է տարրալուծվել, բայց հոգին չի ձևափոխվում»: Այս համոզմունքներից ելմելով՝ Հուան Թանը պնդում էր, որ «Երբ ձևը մոտենում է ավարտին, հոգին հեշտությամբ ոչնչանում է», մինչդեռ Վան Չունը հաստատում էր, որ «Երբ մարդիկ մահանում են, չեն վերածվում ուրվականների (հոգիներ)»:

Այն, որ հոգու կամ ոգու անմահությունը կախված էր «հոլկելուց և սնելուց», նույնպես բնիկ չինական հասկացություն էր:

Ինչ վերաբերում է կարմայի հատուցմանը, թեև բուդդայական ըմբռնումն ամբողջությամբ չեր համապատասխանում չինական ըմբռնմանը, այն տարածվում էր Հան դինաստիայի ընթացքում և համատեղելի էր չինական այն օաղափարի հետ, որ «քարի բախտը բակում է առաքինի մարդկանց, չար բախտը՝ անառակների դուռը»: Դրա վկայությունն է «Ի Չինի» (Ի Չին) վեցագրի Վեն-յեն բացատրությունը. «Նրանք, որ կուտակում են բարի արարքներ, անպայման կստանան մեծարիվ օրինանքներ, մինչդեռ նրանք, որ կուտակում են վատ արարքներ, կարժանանան մեծարիվ աղետների»:

Հան դինաստիայի վեցրում և Երեք բազավորությունների ժամանակաշրջանի սկզբում, երբ բուդդայական երկերի բարգմանությունների թիվը մեծացավ, բուդդայականությունը բաժանվեց երկու հիմնական դպրոցի: Առաջինը Յինայանա բուդդայականությունից սկզբնավորված Ան Շի Գաոնո էր, որն ընդգծում էր մեղիտացիայի կարևորությունը: Երկրորդը Մահայանա բուդդայականությունից առաջացած Լոկակսենան էր, որն ընդգծում էր պրածտտայի կարևորությունը:

Ան Շի Գաոն թարգմանել էր մի շարք սուտրաներ, որոնցից ամենաազդեցիկները՝ «Անապանսմրտի-սուտրան» (T602) և «Ի չի ժու ցիմ» (T1694) են: Առաջին

ընդգծում է շնչառության վերահսկողությունը, այս պրակտիկան կարելի է համեմատել անդրանցականության չինացի համակիրների «ներշնչման և արտաշնչման» (թու-նա)ր մեթոդների հետ: Վերջինը պարզաբանում է բուդդայականների թվային կարգերը և կարող է համեմատվել Չան դինաստիայի մեկնաբանական ուսումնասիրությունների հետ:

Ինչ վերաբերում է տիեզերքում մարդու գբաղեցրած տեղին, այս սուտրաների տեսությունները հիմնված են «նախնական շնչառության» հասկացության վրա և պնդում են, որ նախնական շնչառությունն ընդգրկում է հինգ փուլեր, որոնք հավասար են հինգ սկանդիաներին: Նկատելի է, որ Չինայանա ուսմունքը, որը մեկնաբանում էր Ան Շի Գաոյի ծագումը, նույնացվում էր տարածված կրոնական ուսմունքների և արդի մտածողության հետ, որն այն ժամանակ կիրառվում էր՝ բուդդայականությունը մեկնաբանելու համար:

Պրաջնա հասկացությունը, որը դասավանդում էր Լոկակսենա ուղղությունը, կարևորագույն ծշմարտություն էր համարում «օգու վերադարձն իր սկզբնական կատարելությանը և միասնությունը ճանապարհի հետո»: Այստեղ արդեն իսկ տեսնում ենք Լաոցիի (Լառ Ցու)զ և Զուանցիիր փիլիսոփայության ազդեցությունը:

Զի Ցյանը (Չիհ Չ'յեն<sup>18</sup>) Լոկակսենայի աշակերտ ԶիԼյանի աշակերտը, Պրաջնապարամիտա սուտրան թարգմանեց «Թա Մին Դու Ու Չի Չին»: Այս վերնագիրն արդեն իսկ մատնում է Լաոցիի (Լառ Ցու) և Զուանցիի ազդեցությունը: Պրաջնա բարի նրա թարգմանությունը՝ «մեծ լուսարձակում», թերևս մոտենում է Լաոցիի (Լառ Ցու) «Նա, ով գիտի իրերի հավիտենական էռությունը, լուսաշող է» արտահայտությանը: Պարամիտան թարգմանված է «հասնել անսահմանին», որը նաև նշանակում է միասնություն ճանապարհի, այսինքն՝ անսահման Դառյի հետ:

Զի Ցյանի (Չիհ Չ'յեն) առաջին գլխի մեկնաբանության մեջ նշված է. «Իմ վարպետը, (այսինքն՝ Չիհ Լյանը) ասել է. «Բոդհիսատիվայի սիրտը քայլում է Մեծ ճանապարհով: Ցանկալով մարմնավորել ճանապարհը՝ նրա սիրտն ու ճանապարհը միաձուլվում են»: Սա է պատճառը, որ անձեռ կոչվում է «դատարկ ունայնություն»: Սա նույն կետն է, որին հասել է ժուան Զին՝ «Նախապես ծնված Մեծ մարդու կենսագրություն» գործում. այստեղ մեծ մարդը միաձուլվում է ճանապարհի հետ: Վերջին արտահայտությունը նույնպես հիշեցնում է Լաոցիի (Լառ Ցու) պնդումը. «ճանապարհի հաստատուն էռություն անձն է»:

Զի Ցյանը (Չիհ Չ'յեն) և այլք հավատացած էին, որ մարդու սիրտն ու հոգին ծագել են Դառյում, բայց մարդն այլևս չի կարող միանալ ճանապարհին: Որպեսզի սիրտն ու հոգին փախչեն այս սահմանափակումներից, մարդը պետք է վերադառնա իր ծագմանը՝ Դառյին, և դառնա բուդդա: Սա, անկասկած, այն բուդդայականությունն է, որը ծովլվել է Լաոցիի (Լառ Ցու) և Զուանցիի մտքին:

Վեյ-Չին ժամանակաշրջանում «Արեղծվածային ուսմունքի» գոյաբանությունը, որ հիմնված էր Լաոցիի (Լառ Ցու) և Զուանցիի վրա, մեծ մասսայականություն էր վայելուտ: «Արեղծվածային ուսմունքում» քննարկված կենտրոնական հիմնախմբիրները հիմնարար պատճառի և երկրորդական ազդեցությունների, ինչպես նաև գոյության և չգոյության հարցերն էին: Բուդդայական պրածնա ուսումնասիրությունները բավական նման էին «Արեղծվածային ուսմունքի» խնդիրներին, ուստի բազմաթիվ վանականներ օգտագործում էին դրանք՝ բուդդայական սկզբունքները բացատրելու համար: Օրինակ, Դառ Անը գրում էր իր Փի-նայ-յեհում» (Վինայայի նախաբան).

Տրիպիտակայի տասներկու հատվածներից վայփույյա հատվածն ամենամեծն է՝ շնորհիվ այն փաստի, որ Լաոցին (Լաո Ցու) և Չուանցին այս երկրում տարածել են ուսմունքներ, որոնք նման են Ֆան-թեն-Զինին և Պրաջնապարամիտա սուտրային, ուստիև նրա համար հեշտ է եղել ճանապարհորդել քամու թևով:

Նույնիսկ այն ժամանակի հոգևորականներն ընդունում էին, որ բուդդայականության մասսայականությունը պայմանավորված էր Լաոցիի (Լաո Ցու) և Չուանցիի մտքով:

Ո՞րն է այս իրավիճակի պատճառը: Ինչպես ասել է Ենգելսը՝ «Ավանդույթը մեծ պահպանողական ուժ է»: Թվում է՝ ցանկացած մշակութային գաղափարախոսություն ունի իր պահպանողական կողմերը և կարող է դիմադրել օտար մշակութին: Այս պատճառով էլ օտար գաղափարախոսությունները պետք է նախ հարմարվեն տեղական գաղափարախոսության պահանջներին, կապվեն մտքի տեղական համակարգին: Օտար գաղափարախոսության տարրերը, որոնք նման են կամ նույնական են տեղական գաղափարախոսության հետ, հեշտությամբ փոխանցվում են, մինչդեռ տարրեր տարրերն աստիճանաբար ներհոսում և ի վերջո փոխում են տեղական գաղափարախոսությունը:

Երկրորդն այն պատճառն է, թե ինչու բուդդայականությունը՝ որպես օտար տարր, ի վիճակի եղավ այսպիսի ուժեղ ազդեցություն ունենալ չինական մշակույթի վրա: Ի լրումն այն փաստի, որ այն բավարարում էր որոշ հասարակական կարիքներ, այն հաճախ համապատասխանում էր չինական մտքի բնական զարգացմանը:

Վեյ-Չին ժամանակաշրջանի «Արեղջվածային ուսմունքը» գարգացել է նրանից, որ Վան Բին<sup>9</sup> և Յե Յանը<sup>10</sup> շեշտող դնում էին չկեցության վրա՝ որպես ողջ գոյության աղբյուր, ինչպես նաև Գուլ Սյանի<sup>11</sup> կեցության վրա շեշտից («Տասը հազար իրեր ծնվում են իրենց իրենցից») մինչև Չան Չանինաս Արևելյան Չին դիմաստիայից, որը պնդում էր, որ «Երբ բոլոր իրերը հանկարծակի ծնվում են իրենցից, նրանց Ազգը աղբյուրը հանգրվանում է կեցության մեջ»: Վերջապես, գոյություն ուներ Սեն Չառնաբ, որը պնդում էր, որ «Ամիրականի դատարկությունը» բաղկացած է թե՝ կեցության, թե՝ չկեցության ժխտումից: Ինչու՝ Վեյ-Չին ժամանակաշրջանի «Արեղջվածային ուսմունքը» ամփոփեց Սեն Չառնի՝ պրաջնայի ներշնչանքով ստեղծված ուսմունքով: Յենց այն պատճառով, որ սա հնարավոր արդյունքներից մեկն էր, որին ձգուում էր այս փիլիսոփայական համակարգը:

Ակսած Յե Յանից և մասնավորապես Վան Բիից՝ «Արեղջվածային ուսմունքը» զգալիորեն հարստացավ կեցության և չկեցության հարաբերությամբ, որը բացատրվում էր նյութի և գործառույթի տեսանկյունից: Տեսակետ կար, որ «չկեցությունը կարող էր ինքնին չհասկացվել, (ուստի) դիտարկվում էր միայն կեցության հետ հակադրության մեջ»: Այսախով, չկեցությունը համարվում էր նախնական նյութ, որն ինքնին արտահայտվում է՝ որպես կեցություն, որպեսզի նյութը ու գործառույթը միաձուլվեն: Ինչևէ, քանի որ Վան Բին ընդգծում էր չկեցության անվերապահ էռթյունը, նաև միտում կար փառաբանել սկզբնական նյութը՝ միևնույն ժամանակ մերժելով նրա կեցության արտահայտությունը: Սա Վան Բիի մտքի ներքին հակադրությունն էր:

Վան Բիի մտքի հենց այս տարրից էլ կարող ենք պատկերացնում կազմել կեցության հերքման մասին (որը լիարժեքորեն գիտակցվում էր Սեն Չառնի համակարգում):

Վան Բիի՝ չկեցության վրա շեշտն ավելի հոկվեց Սյան Սյուիաս և Փեյ Գուած

կողմից և ի վերջո զարգացավ ու վերածվեց Գուռ Սյամի՝ կեցության վրա շեշտին: Ըստ Գուռ Սյամի՝ ողջ գոյությունը կազմված է անհատական կոնկրետ օբյեկտներից: Այս նյութական առարկաներից անդին չկար նախնական նյութ (այսինքն՝ ոչ մի արարող): Տասը հազար իրերի գոյությունը իհմնված է միայն իրենց «սեփական էության» վրա: Այս սեփական էությունն ինքնաստեղծ է: Նա գրում է. «Զկեցությունը չունի իրականություն, ուստի չի կարող ծնունդ տալ կեցությանը»: Զգոյության այս ուղղակի հակադրության մեջ առկա են (Սեն Չառյի) գոյության մերժման սաղմերը:

Այս երկու զարգացումները համընկնում են հենց Պրաջնա դպրոցի կեցության և չկեցության ժխտման հետ: Ուստի Անիրականի դատարկության Սեն Չառյի ուսմունքը շարունակում է Վան Բիի և Գուռ Սյամի սկսած փիլիսոփայական զարգացումը: Այդ դեպքում մենք կարող ենք գտել Արենդվածային ուսմունքի պատճական զարգացումը Վան Բիից մինչև Գուռ Սյամ և Սեն Չառյ: Յետագայում Սան-լուն դպրոցը (Մադհյամիկա) պիտի մշակեր Սեն Չառյի ուսմունքը, իսկ Չառյ դպրոցիցաց Յուեյ Նենրաֆ հետագայում բարեփոխելու էր այն ու ի վերջո այն իր ազդեցությունն էր թողնելու Սուն և Մին դինաստիաների ներկոնֆուցիականության վրա:

Այս զարգացման պատճառն այն է, որ գաղափարախոսություններն ունեն զարգացման սկզբունքների որոշակի շարք: Ընդհատման դեպքում հետագա զարգացումները միշտ սկիզբ են առնում ավելի վաղ միտումներից: Նաև գաղափարախոսությունը հաճախ ունի մի քանի հնարավոր միջոց, որոնցով այն կարող է զարգանալ, որպեսզի եթե կարևոր գաղափարախոսությունը կարևոր կետերում համապատասխանի զարգացման հնարավոր ուղիներից մեկին, կարողանա շատ մեծ ազդեցություն ունենալ: Այդ դեպքում կարևոր գաղափարախոսությունը կարող է դառնալ տեղական գաղափարախոսության բաղկացուցիչ տարր և, շատ թե թիչ, ազդեցություն թողնել տեղական մշակույթի զարգացման վրա:

Երրորդ, բուդդայականությանը հաջողվեց այսպիսի երկարատև ազդեցություն ունենալ չինական մտքի ու մշակույթի վրա, որովհետև որոշ առումներով այն ավելի բարձր էր մտքի տեղական չինական համակարգերից: Այսպես այն կարողացավ խբանել չինական մշակույթի զարգացումը:

Յնդկական բուդդայականության պրաջնա ուսմունքի՝ մտքի տեղական չինական կերպերի նկատմամբ գերազանցության հարցը պետք է մանրակրկիտ ուսումնասիրել բոլոր տեսանկյուններից, և միայն դրանից հետո եզրահանգում անել: Այս դեպքում մենք դա չենք կարող անել, ուստի միայն կուսումնասիրենք, թե պրաջնա համակարգն ինչպես կարող է լուծել կեցության և չկեցության մերժման ուսմունքի ներհատուկ հակադրությունը: Չնայած այն փաստին, որ, ինչպես Վան Բիի և Գուռ Սյամի միտքը, այս ուսմունքը նույնպես իդեալիզմի օրինակ է, այն անկասկած ավելի բարձր է նրանց մշակույթից այն ինաստով, որ կարող է օգտագործվել՝ խնդիրները երկու հակադրի ուղղությունից վերլուծելու համար: Չնայած Սեն Չառյի՝ «Անիրականի դատարկության ուսմունքը» կարելի է դիտարկել՝ որպես Վան Բիի և Գուռ Սյամի մտքի ընդլայնում, այն հատում է նրանց համակարգերի սահմաններն այն իմաստով, որ համապատասխանում է հնդկական պրաջնա համակարգին:

Իմ կարծիքով՝ հնդկական բուդդայականության մեջ ընդգրկվելուց հետո Երկինքն ու երկիրը արարողի կամ հոգևոր էության գաղափարն այլև երբեք կարևոր դիրք չգրադեցրեց Չինաստանի իդեալիզմի տիրույթում: Այն փոխարինվեց այնպիսի վերացական հասկացություններով, ինչպիսիք են կոնֆուցիական

լինահ («բնական կաղապարը») և Դառն («ճանապարհը»), որոնք, որպես առաջնային սկզբունքներ, վճռում էին մարդկային գոյությունը տիեզերքում: Երբեմն «Սիրտ-միտքը» այ համարվում էր առաջին սկզբունք. ըստ նրա՝ «սիրտը բնական կաղապարն է», կամ «բնական կաղապարը ծովակում է սրտի հետո»: Սա Սուն և Մին դինաստիաների փիլիսոփայության առանձնահատկությունն է: Իդեալիզմի այս տեսակը զարգացավ և դարձավ չինական ավանդական փիլիսոփայության կարևորագույն ծեր:

Սակայն, որպեսզի համեմատաբար գերակա օտար գաղափարախոսությունն ազդեցություն թողնի մեկ այլ մշակույթի վրա, ի լրումն որոշակի տնտեսական և քաղաքական պայմաններ բավարարելուն, պետք է նաև կատարի մեր քննարկած առաջին երկու պահանջները: Եթե դա չհաջողվի, ապա նույնիսկ գերակա գաղափարախոսությանը չի հաջողվի արմատավորվել ընդունող երկրում: Օրինակ, «Միայն գաղափարների ծևավորման քննախոսությունը» (Վեյ-շիի հուն) առ որն առաջ էր քաշել Սյուան Ցանը, և Յետուվիդյան (Վին-մին սիյեն) երկուսն էլ բավական բարձր կառուցվածքներ էին, բայց չնայած Սյուան Ցանի հեղինակությանը՝ ազդեցիկ չէին Չինաստանում, և նրանց չհաջողվեց դառնալ չինական փիլիսոփայության բաղկացուցիչ մաս:

Կարծում եմ՝ վերը նշված երեք կետերը կարևոր երևույթներ են, որոնք վերաբերում են բուդրայականության մուտքին Չինաստան: Դրանք նկատի ունենալով՝ կցանկանայի առաջ քաշել մտահոգության տեղիք տվող մի հարց. արդյո՞ք մարդսիզմը կարող է ծովակել ավանդական չինական մտքին և մշակույթին: Սա մեծ և բարդ հարց է: Դժվար է կանխագուշակումներ անել, բայց կարելի է բացատրել: Վերացական իմաստով, մարդկանց մեծամասնությունը պատասխանում է, որ կողմ է այս երկուսի ծովամանը, բայց հարցը հետևյալն է՝ արդյո՞ք սա հնարավոր է, և ինչպես կարելի է հասնել դրան:

Այստեղ ցանկանում են միայն քննարկել մի քանի միտք, որոնք առաջ են եկել վերը նշված երկրորդ կետից. Եթե մարդսիզմն արմատավորվի Չինաստանում՝ շարունակելով ավանդական չինական մտքի մեջ և մշակույթում սաղմնավորված զարգացումները, ապա գլխավոր հիմնախնդիրն է՝ գտնել այս երկուսի ընդհանությունները, որպեսզի թե՛ չինական փիլիսոփայությունը, թե՛ մարդսիզմը զարգանան:

Մարդսիզմն, անկասկած, գերակա գաղափարախոսություն է: Ավելին, այն զարգացել է արևմուտքում, հետևաբար նրա և ավանդական չինական մտքի տարրերությունները հսկայական են: Այս նաև մտքի ընդարձակ համակարգ է, ուստի դժվար է գուշակել, թե որտեղ պետք է որոնել ընդհանրությունները: Բնականաբար, այստեղ ես չեմ կարող ամբողջությամբ քննարկել խնդիրը: Պարզապես ցանկանում են մի քանի օրինակ ներկայացնել:

Մարդսիզմի դիալեկտիկական մեթոդաբանությունը կենտրոնանում է հակադրությունների միասնության օրենքի վրա և իրական պրակտիկան համարում վճռորշ ծշմարտության միակ չափանիշ: Ես հավատացած եմ, որ սա ճիշտ մոտեցում է: Եթե ավանդական չինական փիլիսոփայության այս հիմնարար սկզբունքների շարքում հնարավոր լինի գտնել կապակցված սկզբունքներ, արդյո՞ք մարդսիզմը չի կարող ձեռք բերել չինական առանձնահատկություններ և թևակոխել չինական փիլիսոփայության զարգացման հաջորդ փուլ:

Ավանդական չինական փիլիսոփայության կենտրոնական խնդիրը, ինչպես սահմանում են անտիկ փիլիսոփամերն ու պատմաբանները, մարդու և երկնքի

հարաբերությունն է: Այս հարցի ավանդական պատասխանը մեծամասամբ եղել է այն, որ Երկինքը, (այն է՝ բնական աշխարհը կամ Երկնքի ճանապարհը) և մարդը (հասարակությունը կամ մարդու ճանապարհը) մեկ են: Այս միասնությունից էլ ծագում է մտքի և գործողության, իսկ արվեստում՝ սուբյեկտիվ զգացմունքի և օրյեկտիվ արտահայտության միասնությունը: (Կան Ֆուն սա կոչում է զգացմունքի և պատկերի միավորում):

Այս երեք միասնությունները՝ մարդու և Երկնքի, մտքի և գործողության, և սուրյեկտիվության և օբյեկտիվության, «Ծշմարտության», «Քարության» և «զեղեցկության» հարցեր են: Դետևաբար, չինական փիլիսոփայությունն ընդգծում է միասնությունը՝ փաստ, որը գուցե որևէ կապ ունի չինական մտքի գործընթացների կամ հասարակական պայմանների հետ: Կոնֆուցիական միտքը մշտապես շեշտել է Մեծ միասնությունը և Ուսկե միջնունը և դեմ է եղել չափազանցությանը:

Եթե մենք ծիշտ հասկանանք այս միասնությունը և համարենք, որ այն ճկուն է, ապա հեշտությամբ կարող ենք այն դիտարկել՝ որպես ակտիվ միասնություն, ինչպես վկայում են ի Զուանի (ի Զուան) խոսքերը՝ «Ճնունդ տալ՝ առանց ընդհատման» և «Երկնքի շարժումները չեն ընդհատվում, իսկ Սունցին (Չսուն Ցու) առ երբեք չի դադարում ընդարձակվել»:

Այդ դեպքում արդյո՞ք սիսալ կլինի պայքարը (կամ «շարժումը») դիտարկել՝ որպես չինական փիլիսոփայության ավանդական տեխնիկական միջոց, որի շնորհիվ հնարավոր եղավ զգտել և հասնել նպատակներին՝ Երկնքի և մարդու, գիտելիքի և գործողության, սուրյեկտիվի և օբյեկտիվի միասնության: Եթե այդպես է, ապա հենց սա է ավանդական չինական փիլիսոփայության և մարքսիզմի հատման կետը: Մի տեսանկյունից, հակադրությունների հաշտեցման մարքսիստական օրենքը գերազանց կանփոփի և գիտական հիմքերի վրա կլինի ավանդական չինական փիլիսոփայությունը: Մեկ այլ տեսանկյունից, միասնության չինական գաղափարների յուրացումը կիարստացնի մարքսիզմը:

Չինական փիլիսոփայության հաջորդ առանձնահատկությունն այն է, որ այն գիտելիքի իր տեսությունները երեք չի առանձնացրել բարոյական զարգացման հարցերից: Ուստիև, գիտելիքին և գործողությանը վերաբերող հարցերը միաժամանակ և ինացարանական են, և բարոյական: Ինչ-որ բան իմանալու համար անհրաժեշտ է գործնականում կիրառել այն: Ուստի մտքի և գործողության միասնությունը կարևոր հասկացություն է:

Մտքի զարգացման տեսանկյունից՝ պատշաճ և նույնիսկ անհրաժեշտ կլինի առանձնացնել ինացարանական և բարոյական հարցերը, այլապես դա կարող է դիտարկել՝ որպես թերություն: Սակայն այլ տեսանկյունից, բարոյական տեսությունները գործողության մեջ դմելու ավանդական չինական հասկացությունը մեծ նշանակություն ունի:

Մարքսիզմում «պրակտիկան» գլխավորապես նշանակում է արտադրության պայքար, դասակարգային պայքար և գիտական փորձարկում: Անշուշտ, այնպիսի հասկացություններ, ինչպիսին է «պայքար ճապոնիայի դեմ», որպես հասարակական պրակտիկայի օրինակ, ներառում են նաև բարոյական պրակտիկան: «Այդ դեպքում արդյո՞ք չարժի շեշտել բարոյական պրակտիկան»:

Կարծում եմ՝ այսպիսի շեշտը երկու կարևոր արդյունք կունենա. նախ, այն կբարձրացնի մեր ինքնազնահատականը և կստիպի ինքներս մեզ դիտարկել՝ որպես բարոյական արարածներ, երկրորդ, այն մեզ կստիպի ուշադրություն դարձնել մեր իսկ գործողությունների արդյունքներին:

Կարծում եմ՝ եթե կարողանանք հաղթահարել ավանդական չինական փիլիսոփայության շփոթմունքը պրակտիկայի հարցում, և, ավելին, հղկենք այն՝ մարքսիստական տեսակետներին հղում անելով, մեզ կհաջողվի այն դարձնել ավելի գիտական և ճշգրիտ:

Սա կծառայի երկու նպատակի՝ զարգացնել ավանդական չինական փիլիսոփայությունը և չինական առանձնահատկություններ հաղորդել մարքսիզմին։ Գործնականում մտքի և գործողության միասնության բարոյական շեշտը նաև կիարստացնի մարքսիզմը։ Այս դեպքում ավանդական չինական փիլիսոփայությունը և մարքսիզմը մի նոր հատման կետ կունենան։

Անկասկած, մարքսիզմը պետք է զարգանա, ուստիև այն պետք է լինի բաց, և ոչ թե փակ համակարգ։ Եթե այն նպատակ ունի զարգանալ Չինաստանում, ապա պիտի լուծի ավանդական մշակույթի հետ ծովլման խնդիրը։ Բնականաբար, նմանատիպ երկու ծայրահեղ տարրեր ինքնությունների հատումը բարդ հարց է, բայց մենք ձգտում ենք կատարել չինական փիլիսոփայության պահանջները։

Չինական փիլիսոփայության զարգացումը կախված է մարքսիզմի և այդ փիլիսոփայության ավելի բարենպաստ տարրերի միասնությունից։ Փիլիսոփաների արդի սերունդն առերեսվում է այս պատասխանատվության հետ։ Ես ինքս չունեմ հատուկ կարողություններ։ Ես կարող եմ միայն սեփական զգացմունքներս արտահայտել իին ասացվածքի միջոցով։ «Թեև չեմ կարող հասնել, բայց ձգտում եմ»։

## Բառարան

|           |         |            |        |
|-----------|---------|------------|--------|
| A 冯友兰     | u 支亮    | k 准南子「精神训」 | ae 三论宗 |
| b 贾谊      | v 阮籍    | l 桓谭       | af 慧能  |
| c 过秦论     | w 道安    | m 王充       | ag 禅宗  |
| d 玄学      | x 王弼    | n 易经「乾」卦   | ah 礼   |
| e 黄老      | y 何晏    | o 安也高      | ai 道   |
| f 桓帝      | z 郭象    | p 吐钠       | aj 心   |
| g 理惑论     | aa 张湛   | q 老子       | ak 唯识论 |
| h 墨子      | ab 僧肇   | r 庄子       | al 玄奘  |
| i 四十二章经   | ac 向秀   | s 支谦       | am 因明学 |
| j 诗经「文王」! | ad 裴[固] | t 大明度无极经   | an 君子  |

## ԳԼՈՒԽ 11

### Դառ Ղե Զինի (Թառ Թե Չին) մասին<sup>82</sup>

«Դառ Ղե Զինը» (Թառ Թե Չին) կամ Լաոցիին (Լառ Ցու) շատ կարևոր գիրք է չինական փիլիսոփայության ուսումնասիրության համար: Գիտնականները վաղուց են քննարկում, թե այն երբ է գրվել և ում կողմից: Ոնանք հաստատում են, որ այն գրվել է Լառ Ժանի կողմից (մթա. Վեցերորդ դար), որը Կոնֆուցիոսի ուսուցիչն էր: Սակայն չինացիների մեծամասնությունը հավատացած է, որ այն թերևս գրվել է ավելի ուշ՝ մթա. ինճգերորդ դարում, որովհետև պարբերություններից մի քամիսում քննադատվում են որոշ կոնֆուցիականներ, որոնք ապրել են մթա. ինճգերորդ դարում: Դամոզմունք կա, որ այն ժամանակ ապրող մեկը գրի է առել Լառ Ժանի միտքը: «Դառ Ղե Զինը» (Թառ Թե Չին) չէր կարող գրված լինել ուշ՝ մթա. չորրորդ դարում, ինչպես «Չուանցին», որովհետև «Չուանցիում» մեջբերումներ կան «Դառ Ղե Զինից»: Մթա. մոտավորապես երրորդ դարում հայտնի գիտնական Շան Ֆեյն իր «Շան Ֆեյ ցի» գրքում գրեց «Լաոցիի» (Լառ Ցու) մեկնաբանությունը՝ գլուխը: Սա Լաոցիի (Լառ Ցու) հնագույն հայտնի մեկնաբանությունն է: Շան դինաստիայից մինչ այժմ գրվել են այս տեքստի հազարից ավելի տարբեր մեկնաբանություններ և ծանոթագրություններ: Օտարազգի գիտնականները նույնապես մեծ ուշադրություն են դարձնում «Դառ Ղե Զինին» (Թառ Թե Չին): Տեքստի անգերեն թարգմանություններն արդեն իսկ քսանից ավելի են, ինչպես նաև կան բազմաթիվ այլ լեզուներով թարգմանություններ: Իհարկե, այսպիսի երկար պատմության ընթացքում այս մեկնաբանություններից և ծանոթագրություններից շատերը կորել են: Ըստ իին թայվանցի գիտնական Յեն Լինֆենի՝ դեռևս գոյություն ունի 500-ից ավելի տարբեր կրկնօրինակ. նա իր խմբագրած մատենաշարում հավաքել է 345-ը: Դրանցից ամենակարևորները հետևյալ հինգն են:

- Լաոցի (Լառ Ցու) «Դառ Ղե Զին» (Թառ Թե Չին): Մեկնաբանությունը՝ Վան Բիի: Նրա մեկնաբանությունը մթ. երրորդ դարում ստեղծեց մի նոր փիլիսոփայական տեսություն, որը հայտնի է «Ալեհծվածային ուսմունք» անունով:

- Լաոցի (Լառ Ցու) Դառ Ղե Զին (Թառ Թե Չին): Մեկնաբանությունը՝ Շե Շան Գումի: Սա դառսական կրոնի տեսանկյունից անենառաջին մեկնաբանությունն է, գրվել է մթ. մոտավորապես երկրորդ դարում:

- Սյանէրի մեկնաբանությունը «Դառ Ղե Զինի» (Թառ Թե Չին) մասին: Այս մեկնաբանությունն արտացոլում է մթ. շուրջ երրորդ դարի դառսական կրոնի մեկ այլ խմբի տեսակետները:

- «Դառ Ղե Զեն Զու», Թառ Դինաստիայի Մին Շուան կայսեր մեկնաբանությունը: Սա կայսեր կողմից մեկնաբանված առաջին տեքստն է:

- «Լաոցի Զու», մեկնաբանվել է մեծ քաղաքագետ Վան Ան-Շիհի կողմից: 1949 թվականից հետո բազմաթիվ չինացի գիտնականներ փորձում էին «Դառ Ղե Զինը» (Թառ Թե Չին) թարգմանել խոսակցական լեզվով, ինչպես ժեն Զիյուի՝ «Լաոցիի» (Լառ Ցու) նոր թարգմանությունը», Յան Լյու-ցյաոյի «Լաոցիի» (Լառ

82. Կոնֆուցիականություն, բուդդայականություն, դառսիզմ, քրիստոնեություն և չինական մշակույթ, 1991:61-65:

Ցու) թարգմանությունը», և Սու Քանչենի՝ «Լաոցգիի (Լաո Ցու)՝ մետաքսի վրա գրված մեկնաբանությունն ու թարգմանությունը» և այլն:

Ինչ վերաբերում է «Ղաղ Ղե Զինին (Թաօ Թե Զին) մետաքսի վրա»՝ 1973 թվականին Հունան նահանգի Մա Վան Դույի վայրի Յանար 3 Յան գերեզմանից պեղվեցին մթ. Երկրորդ դարում՝ Յա դինաստիայի ընթացքում մետաքսի վրա գրված բազմաթիվ գրքեր, այդ թվում և այսպես կոչված «Մետաքսե գիրքը» (Բո Շու): Այս մետաքսե գրքերը «Ղաղ Ղե Զինի» (Թաօ Թե Զին) երկու տարբեր հրատարակություններն են՝ Ա և Բ, որոնք տարբերվում են նի շարք բառերի, նախադասությունների և նույնիսկ մի շարք կերպարների առումով:

«Մետաքսի վրա գրված այս «Ղաղ Ղե Զինը» (Թաօ Թե Զին) ներկայացնում է «Ղաղ Ղե Զինի» (Թաօ Թե Զին) հնագույն հայտնի տեքստերը: Երկու հրատարակություններից ոչ մեկը վերնագրված չէ «Ղաղ Ղե Զին» (Թաօ Թե Զին), բայց դրանք կազմված են երկու առանձին ուղղություններից՝ դառ (թաօ) (նշանակում է «ճանապարհ») և Ղե (նշանակում է «առաքինություն»): Այս դեպքում մենք հասկանում ենք, թե ինչու «Ծի Զի» (նշանակում է՝ Պատմաբանի արձանագրություններ) պատմական գրքում հեղինակը գրում է, որ Լաոցգին (Լաո Ցու) գրել է գրքի երկու հատոր՝ մեկը դառ (թաօ), իսկ մյուսը՝ Ղե: Ավելին, «Մետաքսի վրա Ղաղ Ղե Զինի (Թաօ Թե Զին)» հաջորդականությունը միանգամայն տարբերվում է այսօր շրջանառվող «Ղաղ Ղե Զինից» (Թաօ Թե Զին): Առաջինը սկսվում է Ղեից, (իսկ երկրորդը՝ դառոյից), որը Յան Ֆեյի գրած «Լաոցգիի (Լաո Ցու) մեկնաբանության» հաջորդականությունն է:

«Մետաքսի վրա Ղաղ Ղե Զինի (Թաօ Թե Զին)» բացահայտման հետ լուծվեցին որոշ խնդիրներ, որոնք վաղուց էին քննարկվում: Յիմա մենք գիտենք, որ «Ղաղ Ղե Զինը (Թաօ Թե Զին)» ստեղծվել է միայն Յան դինաստիայի Փին կայսեր կառավարումից հետո (մթա. 156-141): «Զին» նշանակում է «կանոն» կամ «սուլք գիրք», ուստի դառն (թաօ) և Ղեն ավելի ուշ են կանոնի վերածվել, քան բազմաթիվ կոնֆուցիական կանոններ: Բացի այդ, «Մետաքսի վրա գրված Ղաղ Ղե Զինը (Թաօ Թե Զին)» (մթա. Երկրորդ դար) կազմված է 5463 տարից, իսկ Վան Բիի տեքստը՝ (մթ. Երրորդ դար)՝ 5683 տարից: Ավելի ուշ դասական կրոնի տեքստը ստվորաբար պարունակում էր միայն 5000 տառ, և այդ պատճառով էլ «Ղաղ Ղե Զինը» (Թաօ Թե Զին) նաև կոչվում էր «5000 տառանոց կանոն»:

«Ղաղ Ղե Զինը (Թաօ Թե Զին)» հատկապես կարևոր է, որովհետև այն մոտ 2000 տարի չինացի ժողովրդի գաղափարախոսությունը կառավարող երկու միտուումներից մեկն էր: Ինչպես գիտենք, կոնֆուցիականությունը և դառսիզմը (թառսիզմ), հետևաբար նաև դառսիզմի (թառսիզմ) կանոնը՝ «Ղաղ Ղե Զինը» (Թաօ Թե Զին), մեծագույն ազդեցություն են թողել չինական մշակույթի, փիլիսոփայության, արվեստի և հոգեբանության վրա:

Ընդունելի է «Ղաղ Ղե Զինը» (Թաօ Թե Զին) թարգմանել «ճանապարհի և նրա առաքինության կանոն»: Որովհետև իրականում այս գիրքը խոսում է երկու խնդիրի մասին: Առաջինը, տիեզերքի ծագումն ու էությունն է, այսինքն՝ ճանապարհի խնդիրը, և երկրորդը՝ ինչպես մարդիկ կարող են հասնել ճանապարհին կամ այլ կերպ ասած՝ ինչպես կարող են հասնել ու հասկանալ ճանապարհը, մասնավորապես՝ առաքինության խնդիրը:

Լաոցգիի (Լաո Ցու) ժամանակաշրջանում ի պատասխան այն հարցին, թե տիեզերքում ամեն բան ինչպես է ստեղծվել, մարդկանց մեծամասնությունը պնդում

էր, որ դրանք ստեղծվել են Երկնքի կամ Երկնքի Աստծո կողմից: Քանի որ Երկինքը բարձրագույն միապետն է և ունի իր սեփական կամքը, կոչվում է Երկնքի աստված: Ըստ կոնֆուցիականության ավանդական գաղափարախոսության՝ Երկինքը միշտ քահած և միանշանակ բարձրագույն ինքնիշխանություն է: Բայց հենց սկզբից էլ Լաոցին (Լաո Ցու) չէր հավատում դրան: «Դառ Դե Չինի (Թառ Թե Չին)» չորրորդ գլխում Լաոցին (Լաո Ցու) հստակ ասում էր, որ Դառն՝ ամենայն ինչի նախահայլը, թվում է, գոյություն է ունեցել աստծուց առաջ: Շատ կարևոր է այսպես սահմանել հարցը, որովհետև առաջին անգամ է, որ հերքվում է այն կայուն համոզմունքը, որ բոլոր իրերը ստեղծվել են Աստծու կողմից, Երկնքում և միտումնավոր:

Լաոցին (Լաո Ցու) հաստատում էր, որ դառն (թառ) Երկնքի և Երկրի և ամեն ինչի աղբյուրն է: Ի՞նչ է նշանակում Դառն: Լաոցի (Լաո Ցու) փորձում էր բազմաթիվ տարբեր մակրիներով փոփոխել այն: Օրինակ, նա ասում էր. «Այն, որ դառ է կոչվում (թառ), անդուսակ է ու մշուշոտ, խոր ու անորոշ (21), անձայն ու անձև (25): Դետևաբար, այն հնարավոր չէ տեսնել, նրան հնարավոր չէ դիպչել, այն չի խառնվում որևէ բանի, չի ցանկանում որևէ բան անել և այնքան հսկայական է, որ պարունակում է ամեն ինչ. միևնույն ժամանակ այնքան փոքր է, որ կարող է սուղուսկել, ուր որ կուգի: Քանի որ տիեզերքի այսպիսի աղբյուրը հիմնականում չի կարող նկարագրվել լեզվով, մենք այլընտրանք չունենք, բացի այն դառ (թառ) կոչելուց, ինչը համարժեք չէ: Դառի նկարագրությունները միայն մարդկանց բացատրելու միջոցներ են: Պետք է հստակեցնել, որ դառի (թառ) բացատրությունը տարբերվում է ինքնին դառյից (թառ). սրանք երկու տարբեր երևույթներ են, և առաջինը չպետք է շփոթել երկրորդի հետ:

Ո՞րն է Դառյի էությունը: Ըստ Լաոցիի (Լաո Ցու)՝ դառն (թառ) բացարձակ գերազույն գոյությունն է. ոչ մի գոյություն Դառյից առաջ չի ստեղծվել: Տիեզերքի սկզբում դառն (թառ) տարբերակված չէր. «Չտարբերակված ու միկնույն ժամանակ լիարժեք մի բան կար, որ գոյություն ուներ Երկրից ու Երկրից առաջ» (25), այն է՝ Դառն: Դետևաբար, առաջինը Դառն է, իսկ հետո՝ ամրոջական տիեզերքը: Լաոցին (Լաո Ցու) ասում էր. «Դառն (թառ) ստեղծեց մեկ: Մեկ ստեղծեց Երկու: Երկուսը ստեղծեց Երեք, Երեքը ստեղծեց տասը հազար Երևույթ» (42): Հաճախ ընկալվում է, որ մեկը նախական նյութական ուժն է. այն ստեղծում է Երկուսը՝ ինը և յանը, նրանք Երեքով միախառնվում են սկզբնական ուժին, և այդ միախառնումից առաջանում է տասը հազար Երևույթներ: Պետք է նշել, որ այստեղ էվոլյուցիան բնական է և ոչ մի կապ չունի ցանկացած անհատական նպատակի հետ: Սա տիեզերքի արարման առաջին համակարգային տեսությունն է. այն տիեզերագիտության պես մի բան է: Չնայած տիեզերագիտությունը հետագայում շատ ավելի զարգացավ, հիմնականում այն կրում էր հենց Դառ Դե Չինի (Թառ Թե Չին) տեսակետի ազդեցությունը: Անշուշտ, կոնֆուցիականության դասական Երկերում գոյություն ունեն տիեզերագիտության այլ տեսություններ, օրինակ՝ Փոփոխությունների գրքի մեկնաբանությունը, որը գրվել է մթա. Երրորդ դարում: Բայց «Դառ Դե Չինը (Թառ Թե Չին)» շեշտում էր, որ չնայած դառն (թառ) Երկնքի, Երկրի ու բոլոր իրերի սկզբնադրյունն է, դառն (թառ) ստեղծեց, բայց Երեք չկառավարեց նրանց. ամեն ինչ զարգացավ և փոխվեց բնական ճանապարհով: Դետևաբար, «Դառ Դե Չինը (Թառ Թե Չին)» բացասաբար է տրամադրված ցանկացած նպատակասլաց կամ գիտակից կառավարող ուժի նկատմամբ և հենց

նույն պատճառով էլ հաճախ դառյի (թառ) էռթյունը նկարագրում է՝ որպես անանուն, անձև, ցանկություն չունեցող գործողություն և այլն:

Ավելին, Լաոցին (Լաո Ցու) դառյի (թառ) էռթյունը սահմանում է՝ որպես Ու: Բոլոր իրերն առաջ են զայիս կեցությունից, իսկ կեցությունը՝ գերագույն կեցությունից՝ Ուից: Աշխարհում բոլոր իրերը ստեղծվել են անուն և ձև ունեցող ինչ-որ բանից, մինչեւ անուն և ձև ունեցողները ստեղծվել են իրերից, որոնք անցնում են փորձի, ժամանակի ու տարածության սահմանները: Այլ կերպ ասած՝ Լաոցին (Լաո Ցու) հաստատում է, որ դառն (թառ), որն անցնում է զգայական փորձի բոլոր սահմանները, զգայական փորձի մեջ գոյություն ունեցող բոլոր իրերի վերջնական պատճառն է: Այսպես էլ «Դառ Ղե Չինը (Թառ Թե Չին)» անդրադառնում է գոյաբանության խնդիրներին: Ավելի ուշ՝ Վեյ-Չին ժամանակաշրջանում (մ.թ. շուրջ երրորդ դար), առեղծվածյախն ուսմունքի Վան Բի անունով մի գիտնական զարգացրեց «Դառ Ղե Չին (Թառ Թե Չին)» միտքը հետևյալ կողմից: Նա փորձեց օգտագործել Ու՛՛ գերագույն կեցությունը, որն անցնում է փորձի սահմանները, որպեսզի փորձով ապացուցի գոյության ռացիոնալությունը. քանի որ ամեն ինչ ստեղծվել է Ուի կողմից, ապա ռացիոնալ է:

Մարդ արարածներն ինչպես կարող են ծեռք բերել դառն (թառ): «Դառ Ղե Չինը (Թառ Թե Չին)» ենթադրում է, որ մարդիկ պետք է հետևեն Դառյի օրինակին, ինչը նշանակում է, որ մարդիկ պետք է ունենան Ղե: Ղեն նշանակում է գտնել Դառյին հասնելու ուղին: «Դառ Ղե Չինում (Թառ Թե Չին)» գերագույն բարոյական ամրությունը գործողություն չծննարկելու է: Իմաստունն ասում էր. «Ես ոչ մի գործողություն չեմ ծեռնարկում, և մարդիկ ինքնուրույն են ծևափոխվում: Ես սիրում եմ հանդարտությունը, և մարդիկ ինքնուրույն շտկվում են: Ես մատնվում եմ անգործության, և մարդիկ ինքնուրույն բարգավաճում են: Ես ցանկություն չեմ ունենում, և մարդիկ իրենք հասարակ են դառնում» (57): Սա նշանակում է՝ հետևել Դառյի օրինակին, իսկ դառյին (թառ) հետևող մարդն իմաստուն է:

Բայց մարդիկ ինչպես կարող են ճանաչել Դառն: Լաոցին (Լաո Ցու) շեշտում էր, որ դառն (թառ) ճանաչելու միջոցը միանգամայն տարրերվում է ընդհանուր գիտելիքի որոնումներից: Սովորաբար, որքան շատ գիտես, այնքան շատ են ցանկանում: Քանի որ դառն (թառ) անանուն և անձև է, այն չես կարող ճանաչել այնպես, ինչպես ճանաչում են անուն և ձև ունեցող իրերը. դառն (թառ) ճանաչելու միջոցը քայլ առ քայլ անուն և ձև ունեցող իրերից ազատվելու է: Վերացնելով այն ամենը, ինչ անուններ և ձևեր ունի, այլ կերպ ասած՝ արանց որևէ այսպես կոչված գիտելիքի կարող են բնական ճանապարհով ճանաչել դառն (թառ):

Ինչպես կարող ենք ընթանել Դառյի էռթյունը: Լաոցին (Լաո Ցու) ենթադրում էր, որ անհնար է դառն (թառ) արտահայտել որևէ լեզվով: Իրականում նա ասում էր. «Դառն (թառ), որի մասին կարելի է պատմել, հավերժական Դառն չէ: Անունը, որով կարելի է կոչել, հավերժական անունը չէ» (1): Յետևարար, «Դառ Ղե Չինը (Թառ Թե Չին)» բազմաթիվ փոխաբերություններ է օգտագործում Դառն բացատրելու համար: Օրինակ, նշում է, որ դառն (թառ) նման է ջրի: «Չկա ջրից ավելի փափուկ և ավելի թույլ նի բան, և միևնույն ժամանակ չկա ավելի լավ բան, որով կարելի է հարձակվել ամուր և ուժեղ իրերի վրա» (78): «Մեծ գետը և ծովերը բոլոր լեռնային աղբյուրների արքաներն են, որովհետև հմտորեն մնում են նրանցից ներքև» (66):

Հատկապես հետաքրքիր է այն, որ «Դառ Ղե Չինը (Թառ Թե Չին)» հաճախ բա-

ցասական իմաստով է բացատրում Դառն. անանուն, անձն, ոչ մի գործունեություն, ոչ մի ցանկություն. այս բոլորը բացասական գաղափարներ են: Սովորաբար, դառն (թառ) կարելի է բացատրել՝ ասելով, թե ինչը Դառ չէ, իսկ երբ ուզում ենք իմանալ, թե ինչ բնույթ ունի, պետք է հասկանանք, թե ինչ բնույթ չունի: Դակառակ ընթացքը Դառի գործողությունն է, թուլությունը Դառի գործառույթն է (40), իմաստունները հետևում են Դառին, և այն, ինչ նրանք հետապնդում են, ծիշտ հակառակն է, ինչին ձգտում են հասարակ մարդիկ: Օրինակ, հասարակ մարդիկ ձգտում են միշտ լինել ուժերի ծաղկման շրջանում, բայց երբ հասնում են այդ վիճակին, սկսում են ծերանալ ու անհետանալ: Հետևաբար, իմաստունները երբեք չեն ձգտում իրենց սեփական նախնական վիճակին: Որպեսզի չանհետանան, հասարակ մարդիկ մշտապես մրցում են միջյանց հետ, իսկ իմաստունն այդպես չի վարվում: «Նա չի մրցում, և դրա պատճառն այն է, որ աշխարհը չի կարող մրցել նրա հետ, ուստի նա այսպիսով պաշտպանում է իրեն և ամբողջական է մնում»: Ոչնչացնելուց առաջ անհրաժեշտ է նախ տալ. ընկալելու համար անհրաժեշտ է նախ տալ: Սա կոչվում է նուրբ լույս: Թույն ու քննուշը հաղթահարում են ամուրին ու ուժեղին: Այս բոլոր սկզբունքները մինչև օրս շատ ազդեցիկ են չինական կյանքում և մտքում:

«Դառ Դե Չինը (Թառ Թե Չին)» դառսական փիլիսոփայության ամենակարևոր կանոնն է, ինչպես նաև դառսական կրոնի կարևորագույն սուրբ գիրքը: Դառսական կրոնը միակ կրոնն է, որ ստեղծվել է չինացի ազգի կողմից, զարգացել է մթ. առաջին դարում՝ Յան դինաստիայի ավարտին: Ըստ նրա գլխավոր համոզմնութի՝ մարդը կարող է հասնել անմահության, կարող է մարմնով ու հոգով բարձրանալ Երկինք: Անմահների այս համոզմնութին ի հայտ եկավ շատ ավելի վաղ, քան դառսական կրոնը՝ մթա. Երրորդ դարում: Բայց «Դառ Դե Չինում (Թառ Թե Չին)» մենք արդեն որոշակի տեղեկատվություն ենք գտնում: Օրինակ, 59-րդ գլխում հայտնաբերում ենք, որ «արմատները խորն են, իսկ ցողունները՝ անուր, և սա երկար կյանքի և հավիտենական տեսողության բանալին է»: Դառսական կրոնում մարդիկ կամ բացատրում են դառն (թառ)՝ որպես անձնավորված աստված կամ ենթադրում են, որ եթե մարդիկ ճանաչեն Դառն և ընկալեն Դառն, կարող են ծերք բերել անմահություն: «Դառ Դե Չինի (Թառ Թե Չին)» Սյամէր մեկնաբանությունը նկարագրում էր դառն (թառ)՝ որպես ցի՝ կենսական էներգիա: Դառսական կրոնի գերազույն աստվածը կուտակվում էր Ցիի կողմից: Այլ կերպ ասած՝ Ցին կուտակվում էր մի կեցության մեջ, որը գերազույն աստված է՝ Թայ Շան Լան Զունը: Յե Շան Գունի «Լաոցզի Լան Ցու Դառ Դե Չին (Թառ Թե Չին)» մեկնաբանությունը նաև ասում էր. «Եթե կարողանաս պահել դառն (թառ) մարմնիդ մեջ, եթե չվատնես կենսական էներգիադ, չչարչարեն հոգիդ, կարող ես հասնել անմահության: Ուստիև, «Դառ Դե Չինը (Թառ Թե Չին)» առաջնորդում է մարդկանց անմահության որոնումներում:

## ԳԼՈՒԽ 12

### Դառսիզմի ծագումն ու բնութագիրը<sup>83</sup>

Կրոնը հասարակական երևույթ է, և այսօր նրա ուսումնասիրությունը մեծ կարևորություն ունի պատմական զարգացումը հասկանալու իմաստով: Մենք նմանատիպ միտումներ կարող ենք տեսնել այլ երկրներում, որտեղ գիտության և տեխնոլոգիաների սրբնաց զարգացումները չեն նվազեցնում կրոնի զգացողությունը և կրոնի հանդեպ հետաքրքրությունը մարդկանց շրջանում: Նույնիսկ Չինաստանի ժողովուրդը, այս կամ այն պատճառով նույնպես հետաքրքրություն է ցուցաբերում կրոնի զարգացման նկատմամբ: Այս երևույթը բավական է՝ մի շարք տեսական հարցեր բարձրացնելու համար, որոնք վերաբերում են կրոնն ավելի լավ հասկանալու անհրաժեշտությանը. ո՞րն է կրոնի եռթյունը: Արդյո՞ք մարդկային հոգեբանությունը պահանջում է կրոնական հավատ: Արդյո՞ք կրոնը կրոնական համոզմունքի հոմանիշն է: Արդյո՞ք կրոնական համոզմունքը կարող է օգտակար լինել հասարակական կյանքում: Արդյո՞ք գիտությունը լրացնում է կրոնական համոզմունքը, թե՝ անհանատեղելի է նրա հետ: Արդյո՞ք կրոնը կարող է արդիացնող գործոն լինել և այլն: Այս հոդվածը չի անդրադարձնա մասնավորապես այս հարցերին, բայց փորձենք պարզել՝ ինչու՞ ենք ուսումնասիրում կրոնների պատմությունը: Արդյո՞ք կրոնների իդեալական պատմությունը ժամանակ չի ճանաչում: Արդյո՞ք այսպիսի պատմությունը կարող է օգնել, որ մարդիկ լրջորեն մտածեն այսօր աշխարհում գոյություն ունեցող կրոնների խնդիրների մասին: Կրոնների պատմաբանները պետք է առերեսվեն նմանատիպ խնդիրների հետ:

Չինաստանի պատմության մեջ տարածում գտած կրոններն են բուդդայականությունը, դառսիզմը (թառսիզմ), իսլամը, քրիստոնեությունը և անիմիզմը: Սակայն այս բոլոր կրոնական պահույթներից միայն դառսիզմն (թառսիզմ) է բնիկ չինական կրոն: Ավելի կոնկրետ՝ դառսիզմը (թառսիզմ) չինական կրոն է. նրա առանձնահատկությունները հատուկ են չինացիներին: Բացի այդ, այն զգալի ագդեցություն է ունեցել չինական մշակույթի, ավանդույթների և սովորությունների, գիտության և տեխնոլոգիայի, փիլիսոփայության և մտքի, բժշկության և հիգիենայի և նույնիսկ քաղաքական կյանքի վրա: Արդյո՞ք առավել ագդեցիկ կրոններից մեկի՝ դառսիզմի (թառսիզմ) ծագման, զարգացման ու առանձնահատկությունների մեր ուսումնասիրությունը կօգնի մեզ խորացնել չինական մշակույթի, անհատականության և մտածողության մասին մեր պատկերացումը: Այն կարո՞ղ է անուղղակիորեն օգնել, որ ավելի մոտիկից հասկանանք կրոնի տեսական և գործնական խնդիրները ժամանակակից աշխարհում: Կարծում եմ՝ կարող է, և հենց այդ նպատակով էլ ներկա քննարկումը փորձ է անում վերլուծել և քննարկել հետևյալ հիմնախնդիրները:

83. Կոնֆուցիականություն, բուդդայականություն, դառսիզմ, քրիստոնեություն և չինական մշակույթ, 1991: 67-80:

## 12.1 Ընդհանուր խորապատկեր

Դառսիզմի (թառսիզմ) զարգացումը փորձեց Հան դինաստիայի չինացիներին կողմնորոշել դեպի իրենց հասարակական, քաղաքական, տնտեսական, բարոյական և հոգեբանական կյանքը Արևելյան Հան դինաստիայի ավարտին:

Ինչու՝ դառսիզմը (թառսիզմ) զարգացավ միայն արևելյան Հան դինաստիայի ավարտին: Պատմականորեն այնպիսի դասական գաղափարներ, ինչպիսիք են «անմահությունը» և «մարմինների սրբագործումը», արդեն իսկ գոյություն ունեին Պատերազմող պետությունների (Չանգուռ) ժամանակաշրջանում: Նրանք շատ ավելի մեծ տարածում գտան Ցին և Հան դինաստիաներում. ինչու՝ Մենք գիտենք, որ սնահավատության ցանկացած տեսակ չի կարող կոչվել կրոն, չնայած կրոնը հաճախ մարմնավորում է սնահավատության բազմաթիվ տարրեր: Չենք կարող ասել նաև, որ ցանկացած թեխստական տրամասություն կարող է դառնալ կրոն, նույնիսկ եթե ի վիճակի է իր ազդեցությունը տարածել բնակչության բավական մեծ հատվածի վրա: Նրա աճն ու զարգացումն ուղղակիորեն կապված են մարդկանց հասարակական կյանքի, նրանց պատմության և այլ օբյեկտիվ փաստերի հետ: Արևելյան Հան դինաստիայում դառսիզմի (թառսիզմ) զարգացումը կարող էր վերագրվել հետևյալ գործոններին:

Առաջին, հասարակական կյանքի իրականությունը Արևելյան Հան դինաստիայի ավարտին պարարտ հող էր դառսիզմի (թառսիզմ) զարգացման համար: Հասարակական և քաղաքական պայմաններն Արևելյան Հան դինաստիայում Շունդից ի վեր սկսել էին վատթարանալ: Ընթացիկ կառավարման մեջ նկատելի էր արտաքին միջամտությունը, իսկ վարչական լծակները բյուրոկրատիայի ձեռքում էին: Զեխությունը, անզուսապ վարքագիծը և հասարակական պայքարը՝ թե՛ ներսից, թե՛ դրսից, սովորական երևույթ էին դարձել: Ի վերջո, սարսափելի երաշտի պատճառով բերքը վնասվեց, և մեծ թվով մարդիկ մահացան (Չուն Զանդուն, Չանյուան):

Անսանձ տնտեսական չարաշահումները և քաղաքական ճնշումն այն ժամանակ թույլ չեր տալիս, որ հասարակ ժողովուրդն արժանապատիվ կյանք վարի. սնամնկությունն ու գաղթը սովորական երևույթ էին: Ղեկավար դասի և ղեկավարվողների միջև բախումները լարված էին և սուր: Ըստ պատմական արձանագրությունների՝ Շունդի ժամանակներից մոլեգնում էին գյուղացիական ապստանքությունները: Այն ժամանակ, բացի հասարակ դասի շահերը ունահարելուց, առաջնորդները դիմում էին կախարդության և սնահավատությունների՝ որպես կազմակերպող միջոցներ: Այդ պատճառով էլ պատմության գրեթերում Շունդից հետո ապստամքներին հաճախ կոչում էին յացել կամ «չար ոգիների գողեր»:

Վերը նշված քննարկումից կարելի է համգել երկու եղանակացության: Նախ, տնտեսական և քաղաքական անհանգստությունների, ինչպես նաև հոգևոր և բարոյական քայլայման ժամանակաշրջանն օբյեկտիվ նպաստվոր պայման էր կրոնի զարգացման համար: Երկրորդ, քանի որ գյուղացիության առաջնորդներն օգտագործել էին կախարդանքն ու սնահավատությունները՝ իրենց շարժումը խթանելու համար, նրանք գիտեին, որ այս ամենը կարելի էր օգտագործել որպես գործիք՝ մարդկանց համախմբելու և այդպիսով ճանապարհ հարթելով կրոնի լայնամասշտար զարգացման համար: Ինչպես միշտ է պատահում, հասարակական ալեկոծությունները հաճախ մեծ դժվարություններ և տառապանք էին բերում

ցածր դասին: Այսպիսով, երբ մարդիկ հուսահատվում էին, նրանք հակված էին հույսը դնել ինչ-որ հոգևոր ուժի կամ շենլինի վրա: Սա ամենատարածված միջոցն էր, որի օգնությամբ մարդիկ իին ժամանակներում հաշտվում էին իրենց հասարակական իրականության հետ: Սա նաև բացատրում է, թե վաղ շրջանի դառսիզմի հետևորդների բանակն ինչու էր իմնականում կազմված ցածր հասարակական շերտերի ներկայացուցիչներից:

Երկրորդ, Արևելյան Յան դիճաստիայի ավարտին հասարակական պայմաններն օգտակար նյութ էին դառսիզմի (թառսիզմ) հաստատման համար: Յան Ուդիի ժամանակներից ի վեր, երբ Դուն Չունչուն նշում էր, որ «հարյուր դպրոցներից ամենահարգվածը կոնֆուցիականությունն է», կոնֆուցիական միտքը հարմարվում էր միացյալ ֆեռդալական հասարակություն կառուցելու և կառավարող դասի գաղափարախոսությանը ծառայելու կարիքներին: Այն ժամանակից ի վեր կոնֆուցիականության զարգացումը կախված էր գերազանցապես Երկնքի և մարդու փոխհարաբերության ուսմունքից, որին հաջողորդում էր մեծ հետաքրքրությունը թեոլոգիայի և մետաֆիզիկայի զարգացման հանդեպ: Չնայած իդեալական առումով կրոնը թեխտական է, թեզմի ոչ մի ձև համարժեք կամ բավարար չէ՝ կրոն դառնալու համար: Պատճառն այն է, որ նման կրոնը (այն է՝ զանգվածների կրոնը) պետք է ներառի ոչ միայն հոգևոր եռթյունների երկրպագությունը, այլև ունենա կանոնների հավաքածու, ինչպես նաև եկեղեցական կազմակերպման ընդունելի ձևեր, ուսմունքներ ու դոգմաներ և կրոնական գիտելիքի տարածման պատճական միջոց: Ընդհանուր առնամբ կրոնը պետք է տեսմի աշխարհը երկու ձևի մեջ՝ իրական և գերենական: Յիմնվելով այս նախադրյալի վրա՝ մարդ արարածները զգում են, որ գերբնական աշխարհում կարող են միայն առանձնանալ հասարակական կյանքի խնդիրներից՝ հավատալով, որ իդեալական կյանքը կարող է դրսկորպել միայն գերբնական աշխարհի հեռավոր ափերին:

Չնայած այն փաստին, որ կոնֆուցիականությունը ծանաչում էր Շենի կամ Աստծոն գոյությունը, հատկապես Յան դիճաստիայուն, բոլորովին պարտադիր չէր, որ նրա իդեալներն իրականություն դառնան աշխարհից դուրս. այն պահանջում էր, որ «պետությունը կառավարող և աշխարհը խաղաղեցնող» (զի գործ փին թյանյա) իդեալները կյանքի կոչվեն իրական աշխարհում, չնայած սա ընդամենը պատրաճ էր: Չնայած կրոնը շատ կարևոր դեր էր խաղում ֆեռդալական Չինաստանում, այն երբեք չդարձավ ուժ, որի հետ կարելի էր հաշվի նստել: Փոխարենը այն հաճախ երկրորդական դիրք էր զբաղեցնում, ինչը միանշանակ խոսում էր պետության վիճակի, ինչպես նաև կոնֆուցիական գաղափարախոսության գերիշխող դիքի մասին:

Զարգացման տեսանկյունից, Արևելյան Յան դիճաստիայից հետո կոնֆուցիականությունը կարող էր հանգիստ դառնալ կրոն, որովհետև նրա մետաֆիզիկան, սրբության հասկացության հետ մեկտեղ, կարող էր հեշտությամբ ձևափոխվել կրոնի: Սակայն կոնֆուցիականությունը չդարձավ կրոն Յան դիճաստիայի ընթացքում այն պարզ պատճառով, որ փորձեց իրական աշխարհը խաղաղեցնողը՝ իդեալները: Այսպիսով, Յան դիճաստիայի քայլայումից հետո կոնֆուցիական գաղափարախոսությունը ոչ միայն չդարձավ կրոն, այլև նրա դիրքը՝ որպես կառավարող դասի գաղափարախոսություն, շարունակեց նվազել: Այս նվազման պատճառով էլ կոնֆուցիական միտքը սկսեց հող նախապատրաստել դառսիզմի (թառսիզմ) զար-

գացման համար: Պատմությունը ցույց է տալիս, որ ամեն անգամ, երբ կառավարող դասի գերակա գաղափարախոսությունը կորցնում էր իր իշխանությունը, այն հաճախ ազդարարում էր հավասարակշռող կրոնի աճն ու գերիշխանությունը:

Չնայած կոնֆուցիականության դերը նվազել էր Արևելյան Չան դինաստիայի վերջում, այս գաղափարախոսության որոշ կողմեր դեռ կարող էին յուրացվել և լավագույնս օգտագործվել իշխող կրոնի կողմից: Այն փաստը, որ կոնֆուցիական գաղափարներ կարելի է գտնել դասուիզմի (թաոսիզմ) մեջ, հստակ ապացուցում է, որ այդպիսի ծովում տեղի է ունեցել: Օրինակ, «ծայրագույն խաղաղությունը երեքի միասնության մեջ (Երկինք, Երկիր և մարդ)» (թյան-դի-ժեն-սան հեի ջի թայփին) գաղափարը ցույց է տալիս, որ կոնֆուցիականները մտահոգված էին քաղաքական իրականությամբ և սանցայի (Երեք նվիրաբերություն) գաղափարով, որ հիշատակել է ի Ձուանը<sup>2</sup>: Այն գաղափարը, որ Երկինքն ու տիեզերքը ծավորվում են շնչառությունից (ցի), կարող էր ծագել աշխարհի արարման գիտելիքից, ինչպես նաև ին-յան սկզբունքներից և հինգ տարրերից, որոնք հիշատակվել են պարականոն տեքստերում: Այս բոլոր գաղափարները սերտորեն կապված են Չան կոնֆուցիական մտքի հետ: Այն, որ գիտնականների մեծամասնությունը, որն ուսումնասիրել էր դասուիզմի (թաոսիզմ) զարգացումը, ուշադրությունը կենտրոնացնում էր դասսական աղբյուրների հետ իր հարաբերության վրա և անտեսում էր կապը դասսական և կոնֆուցիական գաղափարների միջ, կողմնակալություն է:

Դասուիզմի (թաոսիզմ) աստիճանական միաձուլումը սրբերի ավանդույթի հետ գուցե այլ սկզբնաղբյուր ունի: Չնայած դասսականների և վաղ Ցին շրջանի սրբերի միջև կապ կար, այս Երկուսը կարծես պատկանում են մտքի միանգամայն տարբեր դպրոցների: Մինչ Արևմտյան Չան դինաստիայի սկիզբը տարածված Չուան-Լատ ուսմունքը հիմնականում դասսական էր: Այն հաճախ ընդգծում էր ինաստունի օրինակելի դրակները, և, հետևաբար, ենթադրվում էր, որ այն կարող է կիրառել իր ուժը պետության և տիեզերքի վրա: Այդ պատճառով էլ Սինա Ցյանն իր նախարարական մեկնարանում է, որ Չուան-Լատոյի ուսմունքի կարևորությունը «ինքնափրագրություն անգործության միջոցով և ինքնաշտկում քավության միջոցով» (ուվել ցիհուա, ցինձին ցիշեն) սկզբունքն է:

Չուան-Լատ դասսական ուսմունքը փոփոխության ենթարկվեց Արևելյան Չան դինաստիայի ընթացքում. նրա կողմնակիցներից ունանք դիմում էին սրբավայրերում տեղադրված աստվածների արձանների օգնությանը՝ այդպիսով միավորվելով սրբերի հետ: Օրինակ, Չուանդին զոհեր էր մատուցում Լաոցիի (Լատ Ցու) սրբավայրին՝ նպատակ ունենալով «պահպանել շենք՝ կերպարի Երկինք համբարձման համար»՝ այդպիսով ազդարարելով նախնական ծևափոխման կամ Չուան-Լատոյի դասսական ուսմունքը: Նաև, դեռևս Արևմտյան Չան դինաստիայի վերջին շրջանում այսպես կոչված «Չուան Լատոյի Դառն» (Չուան-Լատոյի ճանապարհ) արդեն իսկ գոյություն ուներ, իսկ հետագայում առաջ եկավ «Ֆանսյանի Դառն» (Սրբերի ճանապարհ). այս բոլորն իրականում պատկանում էր աննահերի աղանդներին: Չետագայում, սրբերի հիմնարար նպատակը «հավիտենական կյանքի» ձգտումն էր (չանշեն բուսի) և մարմինների սրբագրման պահանջը (ժողութի չենսյան): Այսպիսով, երբ այն ծովլվեց «խաղաղության հասնել անզործության, և խաղաղության մեջ մնալ ժումկալության միջոցով» (ցինձին ուվել, թյանդան գուայոլ) դասսական գաղափարների հետ, սկսեց գրավել մեծ զանգվածների ուշադրությունը և դարձավ հզոր հասարակական ուժ: Վերջապես, դառ-

սիզմի (թառսիզմ) հիմնական սկզբունքները՝ «անմահությունը» և «մարմինների սրբագրությունը», չնայած այն առաջացել է Սրբերի ճանապարհից, դարձան դառսական համակարգի մաս: Այսպիսով, նրա ծևափոխունը նաև կարևոր գործոն էր, որը նպաստեց դառսիզմի (թառսիզմ) զարգացմանը:

Վերը նշված տեսակետներից կարելի է եղրակացնել, որ դառսիզմը (թառսիզմ) շեղվել է կոնֆուցիականների և դառսականների մտքի դպրոցներից: Սակայն զաղափարների այս աղբյուղը երկուսի հետ էլ սերտ կապի մեջ էր: Յետևաբար, սկզբից այն տարրերակել էր իրեն՝ որպես կրոնական համակարգ, որում կոնֆուցիական և դառսական զաղափարները լրացնում էին իրար: Այս համակարգը ներկայացնում է չինական մշակույթին, հոգեբանությանը և մտածողությանը բնորոշ առանձնահատկություններից մի քանիսը:

Երրորդ, բուդդայական մուտքը Չինաստան մեծապես խթանել է չինական կրոնի զարգացումը: Բուդդայականությունը մուտք գործեց և տարածվեց Չինաստանում Արևմտյան Յան ժամանակաշրջանում, իսկ Արևելյան Յան դինաստիայի կեսերին դեռևս շարունակում էր կայուն և մեծ արագությամբ տարածվել: Բուդդայականությունը, որը հանդես եկավ որպես կատալիզատոր, արագացրեց դառսիզմի (թառսիզմ) զարգացումը: Իրականում սրբերի դպրոցն արդեն իսկ մասսայականություն էր վայելում Արևմտյան Յան դինաստիայում, և աշակերտները հաճախ էին արժանին մատուցում Յուան-Լաոյին: Այս մասին վկայություններ կան «Յուան-Լաոյի Դառյի» և «Ֆանսյանի Դառյի» գոյություն ունեցող ուսմունքներում: Առաջինը սրբացնում էր Յուանդիին և երկրպագում էր նրան նրա պատվին կառուցված սրբավայրերում. երկրորդը խոսում էր «մահվան բացակայության և հավիտենական կյանքի» մասին (ջունշեն բուսի): «Շիծին»3 արձանագրում է, որ գետի ծերունի ուսուցիչը՝ Լե Զիգունը, իմացել է Յուանդիի մասին: Ֆենչանի4 գիրքն արձանագրում է, որ Յուանդին անմահացավ Ֆենչանի պատճառով: Յուձյեն (ավելի ծիշտ Գանձյեն), որը կազմել էր դառսական թայփին Զին5 սուրբ գիրքը, առաջարկում էր, որ գիրքն ի սկզբանե գրվել է Լաոցիի (Լու Ցու) կողմից: Յան Մինդիի ընթացքում Չու Վամինն արդեն իսկ երկրպագում էր Յուանդիին և Ֆութու-ին: Չու Վամինն արտասանում էր Յուան-Լաոյի խոսքերը և պատվում էր Ֆութուի սրբավայրը: Յուանդին իր պալատում կառուցել էր Յուան-Լաոյի և Ֆութուի սրբավայրերը: Փաստը, որ Յուան-Լաոն և Ֆութուն ակնհայտորեն երկրպագվում էին, ցույց է տալիս, որ Յուանդին այն ժամանակ համարվում էր սրբություն կամ Բուդդա: Սրբությունն իրականում իմաստության մի ծև է: Անմահի կյանքով ապրելը մարդկային կարգապահություն է: Գոյություն չուներ կազմակերպման ոչ մի ծևական կամ ընտրունելի կերպ, որը որպես հիմք կօգտագործվեր՝ կրոնական համայնքի փոխազդեցության համար: Բայց Չինաստան բուդդայականության մուտք գործելուց հետո այն դարձավ կրոնի կազմակերպված ծև, որն ուներ ոչ մի-այն ավանդական Չինաստանի ուսմունքներից տարրերվող դասավանդման համակարգ, այլև կազմակերպված եկեղեցի՝ կրոնական կանոններով և հոգեոր համայնքով, և այս ամենը ծառայում էր՝ որպես դառսիզմի (թառսիզմ) հիմնադրման նախագիծ:

Ծիշտ է, որ բուդդայականությունը ծառայել էր որպես մողել՝ դառսիզմի (թառսիզմ) հաստատման համար: Շատ ավելի կարևոր է, որ բուդդայականությունն օտար էր չինական մշակույթի համար, և Սյայի մշակութային ավանդույթը կրողերը դիմադրեցին նրա տարածմանը Չինաստանում: Այս պաշտպանական մոտե-

ցումը չինացիներին քաջալերում էր ավելի ջանասիրաբար աշխատել տեղական կրոն հաստատելու ուղղությամբ: Երբ էթնիկական մշակույթը բախվում էր օտար մշակույթի, այն հաճախ ավարտվում էր փոխադարձ յուրացմանը կամ մերժումով:

Այս իրավիճակը մասնավորապես աչքի է ընկնում հնդկական բուդդայականության հանդեպ չինական արձագանքի առումով: Մենք կարող ենք ապացույցներ տրամադրել, որոնք ցույց կտան, թե իրականում այն ինչպես է արտացոլվել հնագույն դառսական սուլր գրքում՝ «Թայփին Զինում»: Այս սուլրը գրքում մենք տեսնում ենք, որ որոշ բուդդայական գաղափարներ, օրինակ՝ բենցին (առաջնային սկիզբը) և սանծյեն (երեք աշխարհները) ծագել են բուդդայական կանոնից: Մյուս կողմից, բուդդայականության վերաբերյալ հնչում էին մի շարք քննադատություններ. օրինակ՝ այն գրույցները, որ «չորս ավերածությունները միասնաբար քայլայում են Երկնքի հոգևոր ճանապարհը» (Շիհուեյ ջի սին, գուն ուժու հուանթյան ջի շենդառ): Ավելին, դառսիզմի (թառսիզմ) հաստատման ընթացքում նրա կողմնակիցները շրջանառում էին պատմությունն այն մասին, թե Լաոցին (Լաո Ցու) ինչ դեռ է ունեցել հյուսիսի չինացիների վերածննդի գործում (Լաոցի [Լաո Ցու] հուահու): Այն ճախագծվել էր՝ որպես հարված բուդդայականությանը, ինչպես նաև դառսիզմը (թառսիզմ) խթանելու փորձ: Այս ամենից երևում է թշնամական արձագանքը՝ ընդդեմ օտար մշակույթի ներոնուժման:

Քետևաբար, բոլորովին էլ զարմանալի չէ, որ Արևելյան Չան դինաստիայի ավարտին կարիք կար զարգացնել տեղական կրոնը: Այս կրոնի հիմնումը սերտորեն կապված էր սրբերի՝ արդեն իսկ գոյություն ունեցող ավանդույթի հետ: Փաստը, որ այն յուրացնում էր կոնֆուցիական և դառսական գաղափարները՝ որպես դառսիզմի (թառսիզմ) զարգացման հիմք, զարմանալի չէ: Ի հայտ գալուն պես այն անմիջապես մեղադրվեց սուր ազգային ուղղվածության մեջ և ուղղակիորեն բախվեց օտար բուդդայական կրոնի հետ: Արդյունքը, միանշանակ, տեղական առանձնահատկություններով օժտված չինական մշակույթի դրսևորումն էր:

## 12.2 Դառսիզմի զարգացումը

Գործընթացը, որի ընթացքում դառսիզմը (թառսիզմ) զարգացավ և վերածվեց կազմակերպված կրոնի, նաև հստակ ցույց է տալիս, թե ինչպես է կյանքի կոչվում կրոնական հանայնքը:

Ո՞րն է կրոնի էությունը: Այն կարելի է սահմանել տարրեր ձևերով: Նոյնիսկ Մարքսի երկերում կրոնը տարրեր հանգանանքներում տարրեր կերպ է ընկալվում: Նա ասում է. «Կրոնն ավիին է մարդկանց համար». սա մեկնաբանվում է այն տեսանկյունից, որ կրոնն օգտագործվում է՝ որպես զանգվածներին հիպնոսացնելու միջոց: Այս պնդման աղյուսը Մարքսը և Ֆոյերբախը չին7: Սա նշանակում է, որ կրոնը սնողները, որոնք պնդում էին, թե այն կարող է հարմարավետություն ապահովել մարդկությանը, ազնիվ չին: Լենինը կրոնն ընկալում էր՝ որպես «աշխատողների հառաջանքի ձայն», որը, ըստ մեկնաբանության, կապված է այրուետարիատի հոգեվարքի հետ: Բրեժենևը ասում էր. «Կրոնը անթիվ-անհամար սահմանումներ ունի... Այն կարող է մեկնաբանվել՝ որպես հարաբերությունների ծև, որն օգնում է գիտակցել առեղծվածային գերմարդկային ուժի գոյությունը, քանի որ մարդկի հավատում են, որ կարող են կախում ունենալ այս ուժից»: Բրեժենևի սահմանումը կարծես թե ավելի տեղին և պրակտիկ է, բայց արդյո՞ք կա այդպիսի

առեղջվածային ուժ: Ինչպես ենք մենք հաճակերպվում այսպիսի ուժի գոյությանը: Ինչու՝ մարդիկ անհրաժեշտաբար հավատում են այսպիսի ուժի: Արդյո՞ք առեղջվածային գերմարդկային ուժի հանդեպ հավատը սիահավատություն է: Այս հարցն առաջ է բերում մի շարք փիլիսոփայական խնդիրներ, մասնավորապես՝ կրոնի հարցերը՝ ընդդեմ սնահավատության և հավատի:

Արդյո՞ք կրոնը սնահավատություն է: Այս հարցը կարելի է երկար քննարկել, և ոչ ոքի հայտնի չէ, թե ինչով կավարտվի քննարկումը, բայց ջերմեռանդ հավատացյալները ամենայն հավանականությամբ կմերժեն «կրոնը սնահավատություն է» պնդումը: Ինչու՝: Պատճառն այն է, որ հավատացյալները հաճախ իրենց հույսը դնում են որոշ իդեալական սկզբունքների վրա, որպեսզի մեկնարանն այն, ինչ հաճախ կոչվում է «առեղջվածային գերմարդկային ուժ», և դա անում են ծայրահետ «ծշմարտության, բարության և գեղեցկության» (Չեն, Չան, մեյ) միջոցով, կամ էլ հաճախ «ծշմարտության, բարության և գեղեցկության» իդեալները դիտարկում են՝ որպես «առեղջվածային գերմարդկային ուժ»: Նրանք անկեղծորեն հավատում են, որ սա ճշմարիտ է, և ողջ ուժով ձգտում են այս իդեալները կիրառել իրենց հասարակական կյանքում: Թերևս «առեղջվածային գերմարդկային ուժի» շղարշի ներքո այս ծայրահետ «ծշմարտության, բարության և գեղեցկության» հանդեպ հավատը և նրանից կախումը մարդկային հոգու արձագանքն էր հասուլ հասարակական պայմաններին: Բայց նրանք, որ հավատում են «առեղջվածային գերմարդկային ուժին», կարծում են, որ սնահավատությունն ու կրոնը երկու տարրեր երևույթներ են: Նրանց համար «սնահավատությունը» միայն հնարջ է, որը կիրառում են գիտական իմացությունից գուրք մարդկանց նկատմամբ. սա իդեալների բացակայության հետևանքով առաջ եկած հոգեոր աղքատության դրսւորումն է: Բարեպաշտները, որոնք հավատում են, թե «առեղջվածային գերմարդկային ուժը» «ծշմարտության, բարության և գեղեցկության» դրսւորումն է, թերևս ընդունում են այն գաղափարը, որ «կրոնը հավատքի հոմանիշն է», բայց միանշանակ չեն ընդունում, թե «կրոնը սնահավատություն է»: Ըստ նրանց՝ մարդիկ պետք է ունենան հավատք. նույնիսկ ագնոստիկներն են հավատում ազնութիցիզմին:

Կրոնն ու հավատն, անկասկած, կապված են: Կրոնը հիմնված է հավատի վրա, բայց այլ հարց է, թե արդյոք հավատը հիմնված է կրոնի վրա՝ դասական իմաստով: Պատկերավոր բացատրելու համար բերենք հետևյալ օրինակը. կարող ենք ասել, որ «հավատում ենք արեկզմի գիտական բացատրությանը» կամ նոյնիսկ ընդունել, որ «հավատում ենք կոնֆուցիական փիլիսոփայությանը»: Այնուամենայնիվ, կասկած չկա, որ արեկզմը ոչ թե կրոն է, այլ գիտական ուսմունք: Նույնիսկ կարելի է ասել, որ կոնֆուցիականությունը մարմնավորել է որոշակի կրոնական տարրեր, չնայած կրոն չէ: Յետևարար, պետք է տարբերակենք ոչ միայն «կրոնն» ու «հավատը», այլև «կրոնն» ու «կրոնական միտքը»: Այլապես, փիլիսոփայական տրամասության գրեթե բոլոր տեսակները կարելի է համարել կրոն, և այդ դեպքում դա համարժեք կլինի կրոնի գոյության բացասմանը:

Դիմնվելով մարդկային հոգեկերտվածքի մեր ընկալման վրա՝ կարող ենք սահմանել, որ մարդ արարածներն իսկապես որոշակի հավատի կարիք ունեն: Դարցն այն է, թե արդյոք նրանք կրոնական հավատի կարիք ունեն: Եթե կրոնը բաժանենք երկու կարգի, որոնցից մեկը գիտական հավատն է, իսկ մյուսը՝ ոչ գիտական հավատը, ապա կարելի է ասել, որ ընդհանուր առմամբ կրոնը պատկանում է երկ-

րորդ կարգին: Դրան անմիջապես կհետևեն մի շարք հարցեր՝ արդյոք մարդու հոգևոր կյանքի համար անհրաժեշտ է որոշակի ինքնարավարում, որը ձեռք է բերվում ոչ գիտական գործունեությունից, և արդյոք հասարակական կյանքը կրոնական հավատն ինքնին համարում է հոգեբանական անհրաժեշտություն: Սա չափազանց մեծ խնդիր է և չի կարող քննարկվել այստեղ: Մենք միայն կարող ենք պնդել, որ որպեսզի ոչ գիտական հավատը դառնա կազմակերպված կրոն, այն պետք է առաջարկի որոշակի տեսական հիմք կամ աջակցություն: Նաև, այս փաստարկները պետք է արտացոլեն ժամանակի ոգին: Եթե չիններն կրոնական ուսմունքներ, որոնք կարելի է օգտագործել՝ որպես տեսական համակարգ, ոչ գիտական համոզունքները կարող են դառնալ հաստատված կրոն: Բացի այդ, ցանկացած կրոն, հատկապես այն, որ գունազարդել է հասարակական զանգվածների պատմությունը, պետք է ունենա կայուն եկեղեցական կազմակերպություն, կրոնական կանոն, բարեպաշտների համայնք և պատմություն:

Չինական աստղության մեջ գոյություն են ունեցել հազարավոր այսպես կոչված կրոնական աղանդներ, բայց նրանցից ոչ բոլորն են դիտարկվել զուտ որպես «կրոնական կազմակերպություն»: Իրականում, նրանց մի մասը կարելի էր կոչել «սնահավատական պաշտամունքներ»: Եթե սա իսկապես այդպես է, ապա ո՞րն է կազմակերպված կրոնը: Մինչ կրոնական կազմակերպության նշանակալի եղանակի նկարագրությունը մենք պետք է նախ վերլուծենք դառսիզմի (թառսիզմ) գարգացումը:

Կազմակերպված կրոնը պետք է ունենա սեփական փիլիսոփայության հիմքով կանոն: Կրոնական ուսմունքները չպետք է լինեն անհեթեթ, այլ ներառեն մարդկության առաջխաղացման համար անհրաժեշտ գաղափարների լավ կազմակերպված համակարգ: Յնդկական բուդդայականությունը դարձել է ազդեցիկ համաշխարհային կրոն, որովհետև այն տրամադրում է մտքի ազդեցիկ համակարգ, որն ի վիճակի է լուսավորել մարդու միտքը: Եթե դառսիզմը (թառսիզմ) սահմանափակվում էր միայն մտածողության անկազմակերպ ձևով, ինչպես ներկայացված է «Թայփիհն ծինում», նրա համար բարդ կլինի որպես կրոն հաստատվել Չինաստանում: Այսպիսով, Չան դինաստիայի վերջից, Երեք թագավորությունների ընթացքում և նույնիսկ Արևմտյան և Արևելյան Զին դինաստիաներից հետո ի հայտ եկան այնպիսի դառսականներ, ինչպիսիք են Գե Չունը, Լու Սյունդինը, Քոու Ցյան-ջին, Թաո Չունժյանը և այլք, որոնք, փորձելով կատարել ժամանակի պահանջները, ոչ միայն միավորեցին որոշ դառսական և կրոնֆուցիական գաղափարներ, այլև յուրացրին մի շարք բուդդայական տարրեր՝ դառսիզմը (թառսիզմ) հարստացնելու համար:

Իսկապես նշանակալի և ազդեցիկ կրոնական համայնքը պետք է ունենա եկեղեցական կազմակերպման ձևական կամ ավելի լուրջ եղանակ: Թեև «անմահության» և «մարմինների սրբագրօծման» գաղափարները հետագայում ներառվեցին դառսական կրոններում, սրբերն ապավինում էին անձնական նվիրումի գաղափարին՝ առանց որոշակի եկեղեցու ձևավորման, ուստի նրանց չհաջողվեց կրոն ստեղծել: Միայն Չան դինաստիայի վերջում էր, որ դառսիզմը (թառսիզմ) դարձավ հաստատված կրոն՝ աշակերտների մշտական անդամակցությամբ, հոգևորականների և եկեղեցական առաջնորդների խմբով: Սակայն Երեք թագավորությունների և Արևմտյան Զին դինաստիայի վարչակարգերն արգելեցին այս կազմակերպությունը՝ հարկադրելով, որ այն լուծարվի մինչև Արևելյան Զին դի-

Նաստիայի ժամանակաշրջանը, երբ Դու Չիգունը և այլք նոր շունչ հաղորդեցին և ևս մեկ անգամ ուղի հարթեցին նրա համար:

Կազմակերպված կրոնը պետք է ունենա կրոնական ուսմունքների և կանոնների կայուն շարք: Չնայած դառսիզմը (քառսիզմ) ուներ իր սեփական պատվիրաններն ու կանոնները, երբ այն առաջին անգամ հաստատվեց Արևելյան Հան դինաստիայի վերջուն, դրանք իրենց բնույթով ավելի պարզ ու ժամանակավոր էին: Արևելյան Հան դինաստիայից սկսած՝ դառսիզմը (քառսիզմ) աստիճանաբար ավելի ամուր իհմքեր հաստատեց բուդդայականության ազդեցության ներքո և Լու Սյուձինի, քոու Ցյանցիի և այլոց ամխոնջ ջանքերի շնորհիվ:

Կազմակերպված կրոնը պետք է ունենա իր սեփական կանոնն ու սուրբ գրքերը, որոնք կառաջնորդեն հավատացյալներին: Չնայած գոյություն ունեին մի շարք դառսական գրքեր, ինչպես «Լաոցզին (Լաո Ցու)»<sup>10</sup> և «Չուանցին»<sup>11</sup>, Վեյ և Չին դինաստիաներից առաջ այս գրքերը ճանաչվեցին սուրբ գրքեր, միայն երբ բարեպաշտների շնորհիվ հասանելի դարձան լայն հասարակայնությանը: Այս բոլոր գրքերը գրվել էին վաղ Ցին շրջանի դառսական փիլիսոփաների կողմից և գրեթե կապ չունեին դառսական կրոնի հետ: Յավատացյալների շնորհիվ, որոնք փորձեցին փնտորել պատմական վկայություններ, այդ գրքերը ստացան սուրբ գրքերի կարգավիճակ: Օրինակ, «Թայփին Չինը» գրվել է դառսական կրոնի սկզբնավորումից առաջ: Այսպիսով, այն ծառայում էր միայն որպես դառսիզմի (քառսիզմ) զարգացման հիմք: Սակայն մինչ Արևելյան Չին և Չյուսիսային և Հարավային դինաստիաների ժամանակաշրջանը, երբ դառսիզմը (քառսիզմ) արմատավորվեց, և կազմակերպվեց Եկեղեցի, ի հայտ եկան մեծ քանակությամբ սուրբ գրքեր, որոնք մեկնաբանում էին դառսական կանոնը (Գե Չունի «Փառ Փոցին»):<sup>12</sup> Այս ժամանակահատվածում առաջ եկան սուրբ գրքերի երեք հատկանշական կարգեր՝ Սահնուանձին<sup>13</sup> (Երեք կայսրերի սուրբ գիրք), Շանցինձին<sup>14</sup> (Բարձրագույն մաքուր սուրբ գիրք) և Լինբաոձին<sup>15</sup> (Յոգուց պաշտպանված սուրբ գիրք): Այս բոլոր սուրբ գրքերը հետագայում միավորվեցին և կազմեցին Դիօնանձինի «Երեք քարանձավները» (սանրուն), մասնավորաբես իրականի քարանձավը (դունցեն), աստվածների քարանձավը (դունչեն) և խորհրդավորի քարանձավը (դունայուան):

Հաստատված կրոնը պետք է ունենա հոգի կամ շենլին, ինչպես նաև երկրապագության հատուկ առարկա և սեփական պատմություն: Երբ դառսիզմը (քառսիզմ) հաստատվեց, այն ժառանգեց սրբերի ավանդույթի որոշ մասը: Դառսիզմի աշակերտները պնդում էին, որ դա նրանց տրվել էր անմահների կողմից, գերազանցապես Լաոցզի (Լաո Ցու) օժանդակությամբ: Մինչ Չյուսիսային և Հարավային դինաստիաները դառսիզմի աշակերտները ստեղծեցին «իրական մարդ արարածի աստիճանը»՝ հիմնվելով հասարակական ստորակարգության հասկացողության վրա, որը գերիշխում էր այն ժամանակ: Թառ Չունանձին «Ձենլին Յուեվեյթուն»<sup>16</sup> (Իրական հոգու մասնագիտական կարգավիճակի այցուսակ) աննահներին բաժնանում էր յոթ դասի, որոնցից ամենաբարձրը զբաղեցնում էին առաջին երեքը՝ Երկնքի գլխավոր տերը (Յուանչի Թյանցուն), Բարձրուն գտնվող դառսական տերը (Գառշան Դատչուն) և Առաջին աստվածային դառսական տերը (Յուանհուան Դատչուն): Այդ ժամանակից ի վեր այս երեք աստվածությունները երկրապագության ամենահարգված առարկաներն էին դառսական տաճարներում (դառգուն): Քանի որ կրոնը մշտապես կասկածի տակ է դնում այլ մրցակից կրոնների

գոյությունը, այն ստիպված է ստեղծել իր սեփական պատմությունը, որպեսզի բարձրացնի իր կարգավիճակը: Այսպիսով, լինելով տեղական չինական կրոն, դառսիզմ (թառսիզմ) ստիպված էր խօշնդրություն օտար բուդդայականության մուտքը: Բացի «չինականի» և «ոչ չինականի» (հուահ ջի բյան) տարբերություններն ընդգծելուց, որի նպատակը բուդդայականության իհմքերի խարիსլումն էր, դառսականները նաև տարածում էին «Լաոցգիի (Լաո Ցու) հուահու» պատմությունը և Լաոցգիի (Լաո Ցու) դերը բարձրացնում և հասցնում Բուդդա Շակյամունիի ուսուցիչ պաշտոնի: Ուստի, թե՝ բուդդայականությունը, թե՝ դառսիզմ (թառսականություն) երկար ժամանակ հականմարտության մեջ էին:

Սակայն միայն Արևելյան Չին և Յոյուսիսային և Հարավային դիմաստիաների ընթացքում էր, որ դառսիզմ (թառսիզմ) ի վերջո դարձավ հաստատված կրոն: Նրա զարգացման տարբեր փուլերը կարելի է ամփոփել հետևյալ կերպ. նախ, Արևելյան Չին դիմաստիայից սկսած՝ դառսականները սկսեցին նոր շունչ հաղորդել իրենց կրոնին՝ վերակազմակերպելով դառսական համայնքը, որը ցովել էր ու դարձել էր անկայուն: Միևնույն ժամանակ, դառսական ուսմունքի և տեսական ձևակերպումների անհանապատասխանությունը հաղթահարելու նպատակով, Գե Չունը և այլք տրամադրել էին դառսական գլխավոր օրենքներն ու պատվիրանները: Այնուհետև, փորձելով ամրացնել դառսական եկեղեցու հիմքերը, ձևակերպվեց կրոնական ուսմունքների մի շարք, և դառսական ուսմունքը տարածելու նպատակով պահանջված սուրբ գրքերը հասանելի դարձան: Ի վերջո, կրոնը ճիշտ ուղղու վրա դնելու համար, տարածում էին հեքիաթներ և առասպելներ: Դառսիզմի (թառսիզմ) զարգացման մեջ ներգրավված զանազան փուլերը, կարելի է ասել, բնորոշ են այն հանգանաքներին, որոնց ազդեցության տակ էլ կյանքի կոչվեց կրոնը: Կրոնի պատմությունն ուսումնասիրելու մեր նպատակներից մեկն այն է, որ այն կարելի է օգտագործել որպես աղբյուր՝ նրա զարգացման զանազան փուլերը պատկերելու համար, որպեսզի հնարավորություն ունենանք ավելի ճշգրիտ գնահատել նրա դերը հասարակության մեջ:

### 12.3 Դառսիզմի բնութագիրը

Որպես կրոնական փիլիսոփայության ծև՝ դառսիզմը (թառսիզմ) ումի հատուկ բնութագիր, որը կարելի է նկարագրել միայն այլ կրոնների հետ համեմատության միջոցով:

Դաստատված կրոնն ունի առանձնահատկություններ, որոնցով հստակ տարբերվում է այլ կրոններից: Բացի այսպիսի արտաքին ծերից՝ եկեղեցու կազմակերպում, կրոնական ուսմունքներ և կանոններ, ինչպես նաև սրբության հասկացություն, նրա առանձնահատկությունները պետք է արտացոլվեն տեսական համակարգում, որը կազմում է կրոնի հիմքը: Տեսական համակարգը սովորաբար պարունակում է հիմնական իդեալների խումբն ու հասկացությունների ծրագիրը: Օրինակ, բուդդայական հավատքի ծայրագույն իրականությունը, ինչպես մարմնավորված է ինքնամերժման, անդրանցականության և Նիրվանայի հասկացություններում, այլ կրոններից տարբերվելու միջոց է: Միշնադարյան քրիստոնեության երեք ուսմունքները, մասնավորապես՝ «Աստծո գոյությունը», «հոգու հարությունը» և «ազատ կանքը», նրա կրոնական փիլիսոփայության ու հասկացական ծրագրի մասն են: Եթե դա ճիշտ է, ապա արդյո՞ք դառսական փիլիսոփայությունը

Աերառում է ցանկացած ուսմունք և սկզբունք, որը տարբերվում է այլ կրոններից: Կարծում եմ՝ այդ, հատկապես դառսիզմի (թառսիզմ) նախնական ձևը: Եթե գրեթե բոլոր կրոնները տալիս են հետևյալ հարցը՝ ի՞նչ է պատահում մահից հետո, ապա դառսիզմը (թառսիզմ) ցանկանում էր իմանալ՝ ինչու մարդիկ չեն մահանում: Այս հիմնական հարցը դառսիզմի (թառսիզմ) տեսական համակարգի բանալին է: Այս ամենը ցույց է տալիս, որ այն իր բնութագրով տարբերվում է այլ կրոններից: Ըստ դառսիզմի (թառսիզմ) նախնական ձևի՝ հավասի հիմքը կազմված է «Երեքի վերելքը մեկուն» սկզբունքից, այսինքն՝ «Երկնքի, երկրի և մարդու միասնությունը՝ հանուն Մեծ խաղաղության» (թյան-դի-ժեն, սանցե հեի ի ջի թայփին) և «նյութի, շնչի և շենի միաձուլունը՝ սուրբ դառնալու համար» (ձին-ցի-շեն, սանցե հունի էր չեն շենայան): Այստեղից էլ այն օարգանում են «ամմահություն և հավիտենական կյանք» (ջունշեն բուսի), «մարմինների հարություն» (ժոութի ֆեյշեն) և «շնչի ծևափոխությունը երեք մաքուր էակների» (ցիհուա սանցին) սկզբունքները՝ այսպիսով կազմելով դառսիզմի (թառսիզմ) հիմքը:

Բուդդայական փիլիսոփայության սկզբունքները հասկանալու համար անհրաժեշտ է իմանալ Նիրվանայի նշանակությունը: Ուստի, մի ռուս բուդդայական գիտնական Նիրվանայի նշանակությունը վերլուծող մի գիրք գրեց: «Մոռ Ցունսան» գրքում<sup>18</sup> նա վերլուծում էր Նիրվանայի գաղափարը շինական բուդդայականության տեսանկյունից: Քրիստոնեությունն ուսումնասիրելիս անհրաժեշտ է վերլուծել «Աստծո» գաղափարը: Այսպիսով, Ավրելիոս Օգոստինոսը (354-430) իր «Աստծո քաղաք»<sup>19</sup> գրքում ծևակերպում է «Ամենազորի» «աստվածայնության» վերաբերյալ իր թեզը: Իր «Շենսյուե Դաջուան»<sup>20</sup> գրքում Թովմա Աքվինացին (1225-1274) առաջադրեց հինգ չափանիշները՝ ապացուցելու, որ «Աստված գոյություն ունի»: Դառսական փիլիսոփայության հիմնական հասկացությունը շունչն է (ցի), որի գոյությունը կարելի է ապացուցել հետևյալ կերպ:

Առաջին, երեքի միասնությունը մեկում վերաբերում է Երկնքի, երկրի ու մարդու միասնությանը, իսկ «Երկնքի, երկրի ու մարդու» միասնության հնարավորությունը պայմանավորված է այն փաստով, որ Թյանի դիի և Ժենի շունչը նույնն է: Երեք Զին-ցի-շենը (Էություն, շունչ և աստված) միաձուլվում են մեկի մեջ, և Զին-ցի-շենի՝ մեկի մեջ միաձուլվելու հանգանանքը պայմանավորված է այն փաստով, որ Զին-ցի-շենի շունչը նույնն է:

Երկրորդ, այսպես կոչված մեկ շունչը, որը ծնունդ է տալիս երեք մաքուր Էություններին, նշանակում է, որ դառսիզմի (թառսիզմ) երեք ամենահարգված հասկացությունները շնչի դրսւորումներն են, կամ որ ամենասուրբ Երկնքի երեք շերտերը դրսւորվում են շնչի կամ ցիի միջոցով: Սա նաև ցույց է տալիս, թե ինչպես է ծևավորվել դառսիզմի (թառսիզմ) հիմնական հասկացությունը:

Երրորդ, չնայած դառն (ճանապարհ) դառսական ուսմունքի բարձրագույն ձևն է, նրա սկզբնական շրջանում ընդունվում էն այն երեք հանգանանքները, որոնց առկայության պարագայում ընդգծվում էր դառյի և ցիի հարաբերությունը: Առաջին հանգանանքն այն է, որ դառն ավելի հիմնական է, քան ցին, բայց դառն չի կարող մեկուսանալ ցիից: Դաջորդ հանգանանքը ցույց էր տալիս, որ ցին ավելի հիմնական է, քան դառն, որովհետև դառսիզմը (թառսիզմ) օգտագործում էր ցին՝ որպես իր առաջնային խթան, օրինակ՝ Լյու Սյեի «Սի Ջու Լուն»<sup>21</sup> (Պատրանքի ոչնչացման մասին) գործը, միևնույն ժամանակ նաև մեջքերում էր «Սամփոլունը» (Երեք հայտնությունները), որն ասում էր. «Ցին դառյի առաջնային խթանն է»: Եր-

րորդ հանգամանքը այն համադրումն է, որ դառն ցի է. օրինակ, Թառ Չունձինը իր «Յանշեն Յանմյունլու»<sup>23</sup> գործում մեջբերում էր Ֆուցիձինին<sup>24</sup> (Չնաշխարհիկ սուրբ գիրք)` ասելով, որ «դառն ցի է»: Եթե դառսական կանոնի փիլիսոփայական հիմքն ուսումնասիրելիս հնարավոր լինի վերլուծել ցիի նշանակությունը և հասկացական հիմքը, որի վրա այն կառուցվել է, ապա կարելի է ավելի խորությամբ ուսումնասիրել դառսիզմի (թառսիզմ) բազմազան ակնառու առանձնահատկություններ:

Դեգելն իր «Դասախոսություններ փիլիսոփայության պատմության նախին»<sup>25</sup> գրքում գրում է. «Մշակույթների տարբերությունը պայմանավորված է գաղափարների համակարգերի տարբերությամբ»: Եթե դառսիզմը (թառսիզմ) համեմատենք կրոնական այլ համակարգերի հետ, ուսումնասիրենք դառսական գաղափարներով ձևակերպված ուսմունքները և մտքի դպրոցը, որ կազմում էր այս ուսմունքների հենքը, կարողանանք ավելի հստակ հասկանալ դառսիզմի (թառսիզմ) բնութագիրը: Չնայած դառսիզմը (թառսիզմ) բնիկ կրոն է չինացիների համար, իրականում այն իր զարգացման համար պարտական է բուդդայականության ոգեշնչմանը, երբ վերջինս տարածվեց Չինաստանում: Այսպիսով, մենք կարող ենք բուդդայականության և դառսիզմի (թառսիզմ) միջև թշնամական հարաբերությունը համարել նրա բնորոշ առանձնահատկություններից մենք:

Չնազոյն դառսական սուրբ գիրքը՝ «Թայփին Չինը», մյուս կողմից, ցույց է տալիս, որ կրում է բուդդայականության ազդեցությունը: Օրինակ, այն առնչվում է համապատասխանության խնդրին. այս հասկացությունն արդեն իսկ օգտագործվում է ավանդական չինական մտքում: Բայց «Թայփին Չինուն» այն այնքան մանրամասն և հիանալի է նկարագրված, որ ակնհայտ է դաշնում, որ այն կրում է «մտքի վերահսկողության» կամ «ցանկության վերահսկողության» հինայանական Չեն բուդդայականության գաղափարը: Մյուս կողմից, սուրբ գիրքը նաև ցույց է տալիս, որ այն հակառակում էր բուդդայականությանը: Օրինակ, «Թայփին Չինի» երգիծական արտահայտությունը՝ «չորս կործանումների ճանապարհ» (սիհուեյ ջի սին) հստակ ուղղված էր բուդդայականությանը: Այն նաև առաջ էր քաշում այն փաստարկը, որ «մարդու բերք նրա պատասխանատվությունն է» (չենֆու), որպես «վերամարմնավորման (ռեինկարնացիա)» (լայշի բոին) բուդդայական հասկացության ուղղակի հակառակություն: Արևելյան Չին դինաստիայից հետո դառսիզմը (թառսիզմ) աստիճանաբար զարգացավ և վերածվեց լիարժեք կազմավորված կրոնի: Այն ուներ սեփական տեսական համակարգը և հետագյում նրա տարբերակումը բուդդայականությունից ավելի ու ավելի շոշափելի էր: Այն ժամանակ բուդդայականության և դառսիզմի (թառսիզմ) տարբերությունները, թերևս, կապված էին հետևյալ խնդիրների հետ. (1) կյանք և մահ և աստծու ձևը, (2) մարդու լավ ու վատ արարքների (ինգուր բատին) պատճառն ու ազդեցությունը և (3) այսաշխարհային և այլաշխարհային կողմնորոշումներ: Այս բոլոր հիմնախնդիրները վերլուծելով՝ մենք կկարողանանք գնահատել դառսիզմ (թառսիզմ) կրոնի առանձնահատկությունները:

Բուդդայականությունը դառսիզմի (թառսիզմ) հետ համեմատելիս մենք, հնարավոր է, համովաքենք մենք այլ հարցի. ինչո՞ւ դառսիզմը (թառսիզմ) չի վերածվում համաշխարհային կրոնի, ինչպես բուդդայականությունը, այլ շարունակում է մնալ զուտ չինական կրոն: Պատմական տեսանկյունից հնարավոր էր դառսիզմի (թառսիզմ) տարածումը Կորեայում Յունիսիսային և Կարավային դինաստիաների

Վերջում: «Սանգու Շիձիմ<sup>26</sup>» (Երեք թագավորությունների պատմությունը) արձանագրում էր, թե դառսիզմը (թառսիզմ) ինչպես է Թան դինաստիայի սկզբում տեղափոխվել Կորեա, բայց դրանից անմիջապես հետո բուդդայականությունը մեծ տարածում գտավ Կորեայում և շատ շուտով առաջ անցավ դառսիզմից (թառսիզմ). այդ ժամանակից ի վեր այնտեղ դառսիզմի դիրքերը թուլացան: Նույն ժամանակահատվածում դառսիզմը (թառսիզմ) Կորեայով տեղափոխվեց ճապոնիա, որտեղ կարող էր որոշակի ազդեցություն ունենալ ճապոնիայի Շինթոյի վրա, չնայած դա չի նշանակում, որ Շինթոյի զարգացումը պայմանավորված էր դառսական ազդեցությամբ: Սակայն ի տարբերություն բուդդայականության՝ դառսիզմին (թառսիզմ) չհաջողվեց իր ազդեցությունը տարածել ճապոնիայում: Պատմության ընթացքում դառսիզմը (թառսիզմ) շատ ավելի քիչ ազդեցություն է ունեցել այլ երկրների վրա (չհաշված նրա շարունակական ազդեցությունը այն չինացի բարեպաշտների վրա, որոնք ապրում էին Չինաստանից դուրս):

Իմ կարծիքով՝ դառսիզմի (թառսիզմ)՝ համաշխարհային կրոն չդառնալու հիմնական պատճառն այն է, որ այն ոչ միայն թերություններ ունի հավատալիքների ու պրակտիկայի իր համակարգում, այլև բազմաթիվ գգացողություններ, որոնք բնորոշ են չինացիներին: Դառսիզմը (թառսիզմ) ունի մեկ նպատակ՝ հասնել «չնահիվան և հավիտենական կյանքի» և «մարմինների սրբագրություն»: Այս ամենը տարբերվում է միաստվածային ուսմունքից, ըստ որի «հոգին չի մեռնում»: Մի կողմից, նրա տեսական փաստարկները՝ «մարմինների սրբագրություն» և «չնահ և հավիտենական կյանք», չափազանց չիղկված ու բարդ են յուրացման համար: Յետևաբար, դառսիզմը (թառսիզմ) այլընտրանք չուներ, բացի որոշ բուդդայական գաղափարներ յուրացնելուց, որոնցից են՝ «Երբ ձևը դադարում է գոյություն ունենալ, հոգին պահպանվում է» (սինծին շեն բու մի և «կարմայի երեք կալպաների անհիվը» (սոնշի լունհուեյ): Այսպիսով, դառսիզմի (թառսիզմ) տարածումը խիստ սահմանափակվել է, բայց որտեղ էլ որ այն տարածվել է, բուդդայականությանը հաջողվել է գրավել նրա տեղը: Սյուս կողմից, դառսիզմը (թառսիզմ) չափազանց սերտորեն կապված է գիտության հետ: Դանուն կյանքի պահպանման, «չնահիվան և հավիտենական կյանքի» սկզբունքի ապահովման և մերյանների սրբագրության՝ այն շեշտում է բազմաթիվ ֆիզիկական պահանջներ, որոնց շնորհիվ նյութական իրականության շունչը (ցի) հասնում բարձրագույն մակարդակի: Ուստիև, Չինաստանի գիտությունը և տեխնոլոգիան, հատկապես բժշկությունը զարգանում էր դառսիզմին (թառսիզմ) համընթաց: Դառսիզմի (թառսիզմ) կողմից գիտության օգտագործումը նվազեցեց դառսիզմ կրոնի դինամիկան: Ուստի, «չգիտության» ու «հակագիտության» բաղադրիչները, համարվելով գիտության հիմնական որակների հետ, սկսեցին հակադրվել իրար: Կրոնը սովորաբար ընդգծում է «այլաշխարհային կողմնորոշումները», իսկ դառսիզմը (թառսիզմ) կարծես թե շեշտում է «այսաշխարհային կողմնորոշումները»: Նրա կողմնակիցները հավատացած են, որ կարող են միախառնել «երեքը (ձին, ցի, շեն), որպեսզի սուրբ դառնան» (սանցե հեի էր չեն սյան): Բայց որպես կրոնական համակարգ՝ դառսիզմը (թառսիզմ) նաև պաշտպանում է երեքի (թյան, դի, ժան) միասնությունը մեկում՝ համուն Մեծ խաղաղության (սանցե յեի էր ջի թայփին), և այս պատճառով էլ կարող է գորեղ կործանիչ ուժ լինել քաղաքական գործընթացում: Այսպիսով, հորինելով սրբերի գերբնական աշխարհը՝ դառսիզմը (թառսիզմ) հույս ունի իրական աշխարհը վերածել իդեալականի: անհերթելի է, որ սա գաղափարների հակա-

րություն է:

Դառսիզմի (թառսիզմ) բնութագրի ուսումնասիրությունը մեծ կարևորություն ունի, որովհետև մեզ հնարավորություն է զննելում հասկանալ դառսիզմի (թառսիզմ) և այլ կրոնների տարրերությունը: Վերլուծելով նրա առանձնահատկությունները՝ կարողանում ենք պարզաբանել չինական մշակույթի, հոգեբանության և փիլիսոփայության ակնառու գծերը, գիտության և տեխնոլոգիայի, բժշկության և հիգիենայի ոլորտի զարգացումները, ինչպես նաև թաքնված թերությունները: Որպեսզի մարդիկ հաջողեն զարգացնան մեջ, նրանք պետք է իմանան ոչ միայն ներկան ու ապագան, այլև անցյալը, պետք է առերևսվեն ոչ միայն քաղաքական կյանքի իրողությունների և տնտեսական անհրաժեշտությունների, այլև նրանց ավանդական մշակույթի, կրոնական հավատքի և մտածելակերպի հետ: Յենց այս պատճառով էլ դառսիզմը (թառսիզմ) պետք է ենթարկվի լուրջ հետազոտության, որպեսզի կարողանանք հասկանալ նրա դերը՝ որպես չինական կրոն:

### Բառարան

- |               |                |
|---------------|----------------|
| 1. 仲长统<<昌言>>  | 14. <<上清经>>    |
| 2. <<易传>>     | 15. <<灵寶經>>    |
| 3. <<史记>>     | 16. 陶弘景<<真灵业位  |
| 4. <<封禅书>>    | 17. 撒尔巴斯基      |
| 5. <<太平经>>    | 18. 牟宗三        |
| 6. 马克思        | 19. 圣奥古斯丁<<上帝; |
| 7. 费尔巴哈       | 20. <<神学大全>>   |
| 8. 列宁         | 21. 刘勰<<减惑论>>  |
| 9. 普列汉诺夫      | 22. <<三破论>>    |
| 10. <<老子>>    | 23. 陶弘景<<养生延命  |
| 11. <<莊子>>    | 24. <<服氣經>>    |
| 12. 葛洪<<抱朴子>> | 25. 黑格尔<<哲学史讲  |
| 13. <<三皇经>>   | 26. <<三国史記>>   |

## ԳԼՈՒԽ 13

### Չինաստանի դառսական կրոնը<sup>84</sup>

Չինաստանի պատմության մեջ եղել են բազմաթիվ կրոններ՝ բուդդայականություն, դառսիզմ (թառսիզմ), իսլամ և քրիստոնեություն՝ թե՛ կաթոլիկություն, թե՛ բողոքականություն, բայց նրանց շարքում միայն դառսիզմն է (թառսիզմ) համարվում չինացի ժողովրդի կրոն: Ավելի ճշգրիտ՝ դառսիզմը (թառսիզմ) Հան ժողովրդի կրոնն է և ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք բխում են հենց այդ համգամանքից: Այն մեծ ազդեցություն ունի չինական մշակույթի, հոգեբանության, սովորույթների, գիտության ու տեխնոլոգիայի, բժշկության ու հիգիենայի, փիլիսոփայության և նույնիսկ չինական քաղաքականության և տնտեսության վրա: Ինչպես ի հայտ եկավ դառսական կրոնը և որո՞նք են նրա յուրահատկությունները այլ կրոնների հետ համեմատության մեջ:

Դառսական կրոնը ծագել է Հան դինաստիայի Շունդի կայսեր ժամանակ՝ մթ. առաջին դարում: Այդ ժամանակ Չինաստանն արդեն իսկ ուներ մոտավորապես 2000 տարվա պատմություն: Պատերազմող պետությունների ժամանակաշրջանի վերջում, այն է՝ մթա. Երրորդ և երկրորդ դարերում, գոյություն ունեին մարդիկ, որոնց կոչում էին «անմահներ». Նրանք պնդում էին, որ ըստ որոշակի պրակտիկայի՝ կարող են «երկարածգել իրենց կյանքը և չմահանալ»: Այս «անմահներն» ընդամենը անհատներ էին, որոնք ինքնուրույն էին գործի դնում իրենց պրակտիկան: Նրանք երբեւ չէին ստեղծել որևէ կրոնական կազմակերպություն: Սակայն Արևմտյան Հան ժամանակաշրջանի վերջում (մթ. առաջին դարի սկիզբ), բուդդայականությունը Հնդկաստանից տեղափոխվեց Չինաստան: Բուդդայականության ներմուծումը առաջ բերեց մեծ փոփոխություններ և արագացրեց չինական կրոնի հիմնումը: Թեև բուդդայականությունը Չինաստան մուտք գործող օտար մշակույթ էր, այն լուրջ արձագանք գտավ չինացի ժողովրդի շրջանում:

Չինական մշակույթի փոխազդեցությունն օտար մշակույթի հետ համգեցրեց թե՛ փոխառությունների, թե՛ քննադատության: Դա նկատելի է հնագույն դառսական կրոնական երկում՝ «Թայփին Զին» գրքում: Այս աշխատության մեջ դառսականները փոխառել են այնպիսի բուդդայական եզրույթներ, ինչպիսիք են «Երեք ոլորտները» բայց նաև քննադատել են բուդդայականներին՝ նրանց այսպես կոչված չորս պրակտիկաների համար: (Դրանք են՝ հորդ կամ մորդ լքելը՝ վանական դառնալու համար, կնոջը լքելը և հետևաբար՝ հետագա սերունդներից հրաժարվելը, ողորմություն խնդրելու և արտաքրության ուտելու պրակտիկան): Դառսականներն ասում էին, որ այն վնասում է երկնքի հոգևոր ճանապարհը: Մասնավորապես դառսական կրոնը, իիմնադրումից անմիջապես հետո, առաջ քաշեց «Լաոցիի» (Լաո Ցու) բարբարոսներին փոխելու» ուսմունքը, որի նպատակը բուդդայականության քննադատությունն էր: Նրանք ասում էին, որ Լաոցիին (Լաո Ցու)՝ դառսիզմի (թառսիզմ) առաջին ուսուցիչը Զու ժամանակահատվածում (մթա. վեցերորդ դար) հեռացել էր Չինաստանից և Հանգու անցումով մեկնել

84. Կոնֆուցիականություն, բուդդայականություն, դառսիզմ, քրիստոնեություն և չինական մշակույթ, 1991: 81-85:

Յնդկաստան, որտեղ դասավանդել էր Շակյանունիին՝ պատմական Բուդդային: Յետևաբար, Բուդդան Լաոցգի (Հան Ցու) աշակերտն էր:

Որպես դասսական կրոնի հիմնադիր ընդհանրապես ճանաչված է Զան Դաոլինը: Չինական գիտական համայնքում երկու տեսակետ կա այն մասին, թե որտեղ է ծագել դասսական կրոնը: Գիտական Չեն Խնգեն պնդում է, որ դասսական կրոնը ծագել է Շանդունում, Զյանսուում և այլ ափամերձ տարածքներում: Մեկ այլ գիտնական՝ Մեն Վենթունը, պնդում է, որ այն ծագել է Սիչուանում և կրել է այն տեղ բնակվող ազգային փոքրամասնությունների սովորույթների ու պրակտիկայի ազդեցությունը: Կարծում են՝ դասսական կրոնը ծագել է ափամերձ տարածքներում, որովհետև անմահներն ակտիվ գործունեություն էին ծավալում այս տարածքում: Բացի այդ, Զան Դաոլինը ինքն էլ Զյանսուի Ֆեն մարզից էր, և միայն հետագայում մեկնեց Սիչուան, որտեղ պաշտոնապես հիմնեց դասսական կրոնը: Միանգամայն հնարավոր է, որ ազգային փոքրամասնությունների սովորույթների որոշ տարրեր ժամանակին յուրացվել են այս ուսմունքների կողմից:

Յետագայում Սիչուանում և Զան գետի տարածքում տարածվել է այսպես կոչված Բրնձի դասսիզմի (թառսիզմ) հինգ բուշելը (չափման միավոր), որովհետև մարդիկ կրոնական խումբ մտնելիս հինգ բուշել բրինձ էին նվիրաբերում: Այն նաև կոչվում է Երկնային ուսուցչի դասսիզմ (թառսիզմ), որովհետև այս կրոնական ուղղության առաջնորդ Զան Դաոլինին կոչում են Երկնային ուսուցչի: Երկնային ուսուցչի դասսիզմը (թառսիզմ) Զանից անցել է նրա որդուն՝ Զան Շենին, այնուհետև Զան Լուին՝ վերջինիս որդուն: Զան Լուն Զան գետի տարածքում հիմնեց դասսական արքայությունը, որը կառավարեց մոտ երեսուն տարի: Ի վերջո Ցան պարտության մատնեց նրան, և նա հնազանդվեց Ցանին: Զան Լուի որդին՝ Զան Շենը, փախավ Զյանսիի Լունիու սար, որտեղ դարձավ չորրորդ սերնդի Երկնային ուսուցչի: Ներկայում դասսիզմի (թառսիզմ) այս ուղղությունն արդեն փոխանցվել է վաքասունինգերորդ սերնդին: Երկնային ուսուցչի վաքասունչորսերորդ սերունդը Թայվանում է: Նրա օգտագործում էր դասսական կրոնը գյուղացիների մեծածավալ ավանդություն՝ որպես Երկնային ուսուցչի վաքասունինգերորդ սերնդի ներկայացուցիչ: Այս Երկնային ուսուցչը, որը քանձն անց Երիտասարդ էր, եկավ իմ տուն՝ դասսական կրոնն ուսումնասիրելու:

«Յարուստների հինգ բուշել դպրոցի հիմնումից հետո Յանում (Յերեյ), Ցիում (Չանդում), Զյանում (Զյանսու) և Յուայում (Յուայիե), Անհուեյ Զան Զյան հիմնեց դասսական կրոնի մեկ այլ ուղղություն, որը կոչվում էր Թայփին դասսիզմ (թառսիզմ): Զան Զյաայն օգտագործում էր դասսական կրոնը գյուղացիների մեծածավալ ավաստամբություն կազմակերպելու համար: Երբ այն ճնշվեց, Թայփին դասսիզմը (թառսիզմ) հիմնականում նահանջեց:

Երեք թագավարությունների և Արևմտյան Զին ժամանակաշրջաններում (մթ. Երրորդ դար) դասսական կրոնը ճնշվում էր կայսերական կառավարիչների կողմից և գրեթե չէր զարգանում: Սակայն Արևմտյան Զին ժամանակաշրջանում (մթ. չորրորդ դար) դասսական կրոնն արագործեն զարգանում էր, և քաղմաթիվ ազնվականներ սկսեցին հարել դրան: Օրինակ, ժամանակի ամենահայտնի ազնվական ընտանիքները մի քանի սերունդ հարում էին դասսիզմին (թառսիզմ): Չինաստանի պատմության մեջ ամենահայտնի գեղագիր Վան Սինչին նույնական դասսական կրոնի հետևորդ էր: Ըստ մի պատմության՝ Վան Սինչին մասնավորապես սիրում էր սագեր և ցանկություն ուներ շուրջ մեկ տասնյակ սագ գնել, որոնց բուժել

Էր մի դառսական քահանա: Քահանան չէր ցանկանում վաճառել, և Վանը մի քանի անգամ կրկնեց իր խնդրանքը: Ի վերջո, քահանան ասաց, որ եթե Վանն արտագրի «Դառ Ղե Չինը» (Թառ Թե Չին), ինքը կվաճառի սագերը: Ուստի Վանն արտագրեց ամբողջ գիրքը:

Դետաքրքիր զարգացում էր նկատվում Թան ժամանակաշրջանում (618-907), որի կառավարիչների ազգանունը լի էր: Այս անգամ դառսական կրոնի առաջնորդները փնտում էին առասպելական կերպար, որին կարելի էր մեծարել՝ որպես կրոնի հիմնադիր, և նրանը ընտրեցին Լաոցիին (Լառ Ցու), որի անունը լի էր: Սա զուգադիպություն չէր: Նախ և առաջ, նույնիսկ դառսական կրոնի պաշտոնական հաստատումից առաջ Լաոցիին (Լառ Ցու) վերածվել էր առասպելական կերպարի: Երկրորդ, Յան դինաստիայում կոնֆուցիական միտքը մեծարվում էր՝ որպես տարածված տեսություն, որն, անշուշտ, պաշտում էր Կոնֆուցիոնին: Դառսականները պնդում էին, որ Լաոցիին (Լառ Ցու) Կոնֆուցիոնի ուսուցիչն էր՝ հուսալով, որ այդպիսով կարող են հաղորդական կոնֆուցիականներին: Այժմ, ըստ «Շիձիի», Լաոցիին (Լառ Ցու) կոչում էին լի ազգանունով և երի անունով: Քանի որ Թան կայսրերը կրում էին լի ազգանունը, նրանք, իրենց սեփական կարևորությունն ավելացնելու համար, ասում էին, որ Լաոցիի (Լառ Ցու) հետնորդներն են: Այդ պատճառով Թան կայսրերը համեմատաբար լուրջ էին ընդունում դառսական կրոնը. կայսր Սյունացունը նույնիսկ իր սեփական մեկնաբանություններն է գրել «Դառ Ղե Չինի» (Թառ Թե Չին) մասին:

Մի կողմից, հաստատումից հետո դառսական կրոնը պայքարում էր բուդդայականության դեմ, իսկ մյուս կողմից յուրացնում էր բուդդայական միտքը: Բայց դառսական կրոնը նաև ունի որոշակի առանձնահատկություններ: Բազմաթիվ կրոններ ձգտում են հասկանալ կամ պատասխանել մի շարք հարցերի, օրինակ՝ ի՞նչ է պատահում մարդ արարածների հետ մահից հետո: Օրինակ, բուդդայականները ձգտում են պատասխանել հետևյալ հարցին՝ ի՞նչ կարող են անել մարդիկ մահից հետո, որպեսզի չվերածնվեն այս աշխարհում: Սակայն դառսականները ձգտում են պատասխանել հետևյալ հարցին՝ մարդիկ ինչպես կարող են խուսափել մահից: Ըստ դառսական կրոնի իդեալի՝ մարդիկ «կերկարածգեն իրենց կյանքը և չեն մահանա», որպեսզի «հենց այս մարմնով թռչեն վեր», այսինքն՝ անմահանան:

Ինչ վերաբերում է այս հարցին, դառսական կրոնը որոշ տեսություններ ունի: Դառսականները պնդում են, որ մարդիկ ունեն թե՛ հոգի կամ ոգի, թե՛ մարմին, և երկուսն էլ կառուցվում են ցիից: Ցին, որից կազմվում է ոգին կամ հոգին, կոչվում է հոգու ցի: Ցին, որից կազմվում է մարմինը, կոչվում է ձեկի ցի: Միայն երբ հոգու ցին և մարմնի ցին միավորվում են մեկ մարդու մեջ, մենք կյանք ենք առնում: Մարդիկ պետք է երկու ձգտում ունենան՝ ապրել հավերժ և ձեռք բերել բարի բախտ: Եթե մեռնում ես, ամեն ինչ ավարտվում է, ուստի կյանքը երկարացնելու համար պետք է ձեռք բերել մարմին, որը չի քայքայի, և որտեղ կհանգրվանի ոգին կամ հոգին: Դեռ նրանք որոնում են մեթոդ, որպեսզի ոգին մնա մարմնի հետ, այլապես մարդը կմահանա և ի վիճակի չի լինի հասնել բարեախտության:

Այդ պատճառով էլ դառսականները փնտրում են մարմինն ու հոգին միավորելու ուղիներ, և դառսիզմը (քառսիզմ) ունի այս նպատակն իրագործելու զանազան մեթոդներ: Սրանցից ամենահիմնականները երկու տեսակ են՝ արտաքին հարը և ներքին հարը: Արտաքին հարը կապված է զանազան հանքային նյութերից, հատ-

Կապես սնդիկից դեղափոշի պատրաստելու հետ: Դառսականները հույս ունեն, որ զանազան դեղափոշիներ ընդունելու դեպքում կարելի է մարմինը պաշտպանել քայլայումից, և հոգին ընդմիշտ կապրի այդ մարմնի մեջ: Նրանք պնդում են, որ եթե բրոնզի փոշի քսես ոտքերիդ և երկար պահես ջրի մեջ, մարմինը չի քայլայվի: Եթե կարողանաս գտնել այսպես կոչված ոսկե հարը և կուլ տաս, ողջ մարմինը հավերժ կապրի՝ առանց քայլայվելու:

Ներքին հարը բարկացած է մի շարք գործողություններից, որոնք ստիպում են, որ մարդու մարմնի ցին շրջանառվի հասունություններով: Սա կոչվում է «աշխատել սեփական ցին վրա» և նույնն է, ինչ ներկայում հայտնի է ցիզուն անունով: Եթե ցին շարունակ շրջանառվի մարդու մարմնում, ապա ողջ մարմինը կողղովի հրաշալի ցիզով: Մարմինն ինքնին կդառնա ցին պես թերեւ, և մարդը կկարողանա երկինք բարձրանալ. սա կոչվում է «հենց այս մարմնով թռչել վեր»:

Երբ դառսիզմը (թառսիզմ) վերածվեց կրոնի, այն պետք է ունենար պաշտամունքի արժանի սեփական աստվածությունները: Սկզբում ամենաշատ մեծարանքի արժանացող՝ աստվածությունն առասպելական Լաոցին էր (Լոռ 8ու), որին կոչում էին «Լաոձուն» կամ «Թայշան Լաոձուն»: Յետագայում, բուդդայականության ազդեցության ներքո ավելացան բազմաթիվ աստվածություններ: Ի սկզբանե բուդդայականության մեջ Շալյամունին համարվում էր Բուդդա, բայց հետագայում ասում էին, որ Շալյամունից առաջ գոյություն էին ունեցել յոթ այլ բուդդաներ: Յուսիսային և Յարավային դինաստիաների պարտին մոտ Թառ Յունձին անունով մի դառսական քահանա գրեց «Ձենլին Վեյյեն Թու» վերնագրով մի գիրք, որտեղ դառսական աստվածությունները դասավորեց յոթ մակարդակով: Ամենաբարձր մակարդակում երեք աստվածություն կար: Կենտրոնականը կոչվում էր Յուանչի Թյանդա: Նրանից ծախս Գաոշան Դառձունն էր, իսկ նրանից աջ՝ Յուանհուան Դառջունը: Լաոցին (Լոռ 8ու) կամ Թայշան Լաոձունը ներքեւում էր՝ չորրորդ մակարդակից ցածր: Այսօր դառսական տաճարներում պաշտոնական սրահը կոչվում է Երեք մաքուր Էռլույնների սրահ, և աղանդների մեծ մասը երկրպագում է այս Երեք աստվածություններին: Սակայն ոչ բոլոր դառսական աղանդներն են նման իրար: Նրանց մի մասը դեռևս Թայշան Լաոձունին համարում է բարձրագույն աստվածություն՝ ասելով, որ նա գոյություն է ունեցել մինչ այն ժամանակները, երբ մարդիկ սկսեցին վախենալ Երկնքից ու Երկրից, և որ տարրեր ժամանակներում նա տարրեր նպատակներ է ունեցել: Ի սկզբանե նա Փանցու Սյանշենն էր: Նա առանձնացրել էր Երկինքն ու Երկիրը և օժտված էր զանազան հոգեւոր ուժերով:

Դառսական կրոնն ունի մեկ իգական աստվածություն, որն օժտված է յուրահասուկ ուժով. նրա անունը Սիվան Մու է Արևմուտքի թագուիի մայր: Սիվան Մուն որպես աստվածություն գոյություն է ունեցել մինչ դառսական կրոնի հիմնումը: «Շահնայինում» (մթա. չորրորդից Երկրորդ դար) Սիվան Մուն ոչ թե իգական աստվածություն է, այլ չտարբերակված կամ արական սեռ: Միայն «Մությանցի Զուանինց» հետո Սիվան Մուն դարձավ կին աստվածություն: Այս գիրքը պատմում էր Զուի արքա Մուի մասին (մթա. մոտավորապես 1000 թ.), որը գնաց Կունլուն սարերը՝ Սիվան Մուին փնտրելու: Դառսական հնագույն սուրբ գրքերում, սակայն, որտեղ ասվում է, որ «Մի» տառը աստվածության երկար կյանքի պացույցն է, Սիվան Մուն ընդամենը երկարակեցության աստվածություն է: Այսպիսվ, «Մուն» միշտ չէ, որ նշանակում է կին աստվածություն: Միայն Զին և Յուսի-

սային և Չարավային դինաստիաներում, երբ դառսական կրոնը սահմանեց Դուռվան Գունին՝ որպես Սիվան Մուհի կրկնօրդ, Սի-Վան Մուն ի հայտ Եկավ՝ որպես կարևոր կին աստվածություն:

Դառսական կրոնը շատ լուրջ էր վերաբերվում մարդկային մարմնին և նրա զարգացմանը, հատկապես այն հարցերին, որոնք վերաբերում են դեղերին, ներքին և արտաքին հարերին և ցիգունին: Այդ պատճառով էլ այն մեծ ազդեցություն ուներ ամտիկ շրջանում թշշկության, դեղագիտության, քիմիայի և մարդու մարմինը սնուցելու վրա: Բազմաթիվ մեծ դառսական առաջնորդներ, ինչպիսիք են Գե Յունը, Թառ Յունձինը և Սուն Սիմյան, Յին Չինաստանի լուրջ գիտնականներ էին: Այդ պատճառով այսօր մարդիկ, որոնք հետազոտում են չինական գիտության և տեխնոլոգիայի պատմությունն ու գարգացումը, այլընտրանք չունեն, քան ուսումնասիրել դառսական կրոնը: Գիտության անգլիացի պատմաբան Ջոզեֆ Նիդիեն իր «Գիտությունն ու քաղաքակրթությունը Չինաստանում» գրքում մեծապես հենվել է դառսական կրոնի երկերի վրա:

Դառսականները գրել են բազմաթիվ երկեր: Դառսական երկերի հնագույն ժողովածուն, որ կրում է «Ձենթուն Դաոցան» վերնագիրը, կազմված է 5000 հատորից: Այն կազմվել է 1445 թվականին՝ Մինի Ձենթուն կայսեր կառավարման տասներորդ տարում: Ավելի ուշ՝ Կանլի ժամանակաշրջանում, ի հայտ Եկավ նրա հավելվածը: Մրանք չինական կրոնի պատմության ուսումնասիրության կարևոր աղյուրներ են:

Ժամանակակից Չինաստանում դառսիզմը (թառսիզմ) կարևոր կրոններից մեկն է: Մոտ 3000 մարդ պաշտոնապես դարձել է դառսական քահանաներ, և մի շարք կարևոր դառսական տաճարներ են վերականգնվել: Պեկինում կա դառսական տաճար, որ կոչվում է Սպիտակ ամպերի տաճար (Բայյուն Գուան). այն հիմնվել է Յուան դինաստիայում (տասներեքերորդ դար) և պատկանում է դառսիզմի (թառսիզմ) Գուանչեն աղանդին: Երեք մաքուր եւրիունների նրա սրահը հրաշալի է, կազմված է երկու տարածքից, որոնք նախատեսված են դառսական կրոնի պատմական առարկաների ցուցարդության համար: Սիչուանի Չենդրու քաղաքում կա Կանաչ այծի պալատ, իսկ Ուիհանում՝ Յավերժական գարնան տաճար, և երկուսն էլ հրաշալի վերակառուցվել են և պատկանում են Գուանչեն դառսական աղանդին: Սյանում Լոուգուան Թայ դառսական տաճարը պատկանում է դառսիզմի (թառսիզմ) Յանսիսային աղանդին: Այն նախ կառուցվել է Յուսիսային Ձոռու դինաստիայում (մթ. հինգերորդ դար), բայց այն, ինչ գոյություն ունի հինա, վերակառուցվել է Մին դինաստիայում (տասնինգ-տասնմեցերորդ դարեր): Ասում են, որ Լոուգուան Թայում Լաոցին (Լաո Յու), մինչ արևմտը հեռանալը, «Դառ Դէ Չինի» (Թառ Թէ Չին) տեքստը թելադրել է իսի անունով իր դրնապանին:

Զյանսիի Լունիու սարը դառսիզմի (թառսիզմ) Ձենի աղանդի ծննդավայրն է: Զյանսուի Սաղշանը Թառ Յունձինի Մաոշան աղանդի ծննդավայրն է: Յանցոուի Գելին քաղաքում կա դառսական տաճար, որտեղ, ըստ առասպելի, Գե Յունը հարեր էր պատրաստում: Այս դառսական տաճարներից յուրաքանչյուրում կան դառսական քահանաներ՝ ծեր ու երիտասարդ, տղամարդ ու կին: Պեկինի Սպիտակ ամպերի տաճարը, որը դառսական կրոնի դպրոց է, քահանաներին սովորեցնում է կարդալ դառսական սուրբ գրքերը: Պեկինում կա նաև դառսական ընկերակցություն. այս ազգային կազմակերպությունը հրատարակում է «Չինական դառսական ընկերակցության ամսագիրը»: Սիչուան համալսարանի կրոնի ուսումնասի-

րության ինստիտուտը նվիրված է միայն դառսական կրոնին. համալսարանում խմբագրվում է դառսական բառարան: Պեկինի համալսարանում իհմնադրվել է դառսական կրոնի պատմության ուսումնասիրության ինստիտուտ, որտեղ դասավանդում են և ես: Պեկինի հասարակական գիտությունների չինական ակադեմիայի համաշխարհային կրոնների ուսումնասիրության ինստիտուտը կազմում է դառսական կանոնի 5000 հատորանոց ընդհանուր տեսություն: Դառսական կրոնի ուսումնասիրությանը նվիրվել է երկու ազգային գիտաժողով, որոնցից մեկն անց է կացվել Պեկինի համալսարանում: Այսպիսով, դառսիզմի ուսումնասիրությունը ներկայում շատ արագ է զարգանում:

## ԳԼՈՒԽ 14

### Չինական և արևմտյան մշակույթները միմյանց կապելու<sup>85</sup> Մաթեռ Ռիչի փորձը<sup>86</sup>

Այլ երկիր կամ ազգ մուտք գործելու դեպքում օտար մշակույթը բախվում է այն խնդրին, թե ինչպես պետք է վերաբերվի այդ մշակութային ավանդույթին: Եթե այն ցանկանում է հետությամբ տարածվել և ազդեցություն ունենալ այն երկրում, ուր ներմուծվել է, պետք է նույնանա այդ երկիր տեղական մշակույթի հետ: Չետևաբար, քանի որ Մաթեռ Ռիչի վերաբերմունքը ավանդական չինական մշակույթի հանդեպ կապված է չինական և հատկապես կոնֆուցիական մշակույթի հետ հաղորդակցվելու իր միսիոներական նպատակների հետ, նա խոր գիտելիքներ ծեռք բերեց այդ մշակույթի մասին և ճանաչեց նրա խիստ դրական արժեքը: Չետևաբար, նրա քարոզչական աշխատանքը կապված էր մշակույթի պատմության մի կարևոր հիմնախնդրի հետ. ոչ միայն արդյունավետ կերպով միաձուլել, այլև հաղորդակցություն ստեղծել տարբեր պատմություն ունեցող երկու մշակութային ավանդույթների միջև: Սա մշակութային փոխառության հությունն է: Թերևս նա կարևորում էր խնդրի լուծումը և ընդհանուր առնամբ դրական էր տրամադրված կոնֆուցիական մշակույթի նկատմամբ: Այս խնդրը կարող ենք դիտարկել երկու տեսանկյունից. մեկը խնդրի նրա սեփական նկարագրությունն է, մյուսը՝ ինչպես էին նրա ժամանակակիցները կամ ավելի ուշ շրջանի ուսյալ մարդիկ վերաբերվում Մաթեռ Ռիչին:

Մաթեռ Ռիչին ոչ միայն հրաշալի տիրապետում էր չինարենին, այլև շատ բան գիտեր չինական սովորույթների և վարպելակերպի մասին: Նա ոչ միայն հազարամյուն էր կոնֆուցիական ոճով և իրեն կոչում «արևմտյան կոնֆուցիական» (սիժու) և գլխին քառակուսի գլխանոց էր կրում, այլև այցելուներին հանդիպելիս հետևում էր չինացի գիտնականների վարպելակերպի կանոններին: Նա մանրանասն ուսումնասիրում էր անտիկ չինական դասական երկերը, արձանագրությունները, և համարում էր, որ Կոնֆուցիոսը մեծ մարդ է՝ մեծ գիտելիքով: Իր թարգմանած «Չորս գրքերի (սիշու)» մասին գրում էր, որ «այդ գրքերը գրվել են չորս մեծ փիլիսոփաների կողմից և լի են խոհեն երիկական մտքով»<sup>86</sup>: Նրա կարծիքով՝ «մեր կրթությունը իմաստ չունի, եթե այն չի ներառում նրանց մշակույթի իմացությունը»<sup>87</sup>:

Բայց նա ինչպես էր վերաբերվում չինական մշակույթին: 1609 թվականի փետրվարի 15-ին մեկ այլ միսիոների ուղարկած նամակում նա գրում է. «Ինչպես նկարագրել եմ, նրանք (չինացիները) նաև բարձր են գնահատում որդիական բարեպահության սկզբունքը, չնայած տեսակետները տարբեր են: Նրանք հավատարմորեն հետևում են բնության օրենքին նրա սկզբնավորումից ի վեր՝ հնագույն ժամանակներում, ճիշտ այնպես, ինչպես մենք մեր երկրում: 1500 թվակա-

85. Կոնֆուցիականություն, բուդդայականություն, դառսիզմ, քրիստոնեություն և չինական մշակույթ, 1991:147-157

86. Մեջբերված է Լուլ Գուանից, Մաթեռ Ռիչի (չինարեն. Թայփեյ):

87. Մեջբերումը՝ նույն աղբյուրից, 208-209 էջեր:

նին այս ազգը պարզապես չէր երկրպագում որևէ կուռքի: Չնայած նրանք երկրպագում էին դրանցից ոմանց, այս կուռքերն այնքան նողկալի չէին, որքան մեր, եգիպտացիների, հույների և հռոմեացիների երկրպագած կուռքերը: Աստվածներից ոմանք նույմիսկ շատ բարոյական էին և հայտնի էին իրենց լավ վարքով: Ըստ եւրյան, ուսյալներն իրենց հնագույն և ամենահեղինակավոր աշխատություններում նիայն երկրպագում էին երկինքն ու Բնությունը և իրենց ընդհանուր վարպետին: Այս բոլոր աշխատությունները մանրամասն ուսումնասիելու ռեաքտում կարող ենք գտնել մի շարք երևույթներ, որոնք դեմ են բանականությանը, բայց, փոխարենը, դրանց մեծամասնությունը համապատասխանում է բանականությանը: Իսկ նրանց բնական փիլիսոփաները բոլորովին չեն գիշում որևէ մեկին<sup>88</sup>:

Վերը բերված մեջբերումներից պարզ է դառնում հետևյալը. (1) Ոիչին շատ լավ գիտեր ավանդական, հատկապես կոնֆուցիական մշակույթը: Ինչպես անտիկ հասարակության մեջ, Չինաստանը վերահսկվում էր նահապետական կլանային համակարգի կողմից, և մեծ բարոյական կարևորություն էր տրվում որդիական բարեպաշտությանը՝ հիմնվելով արյունակցական կապերի սկզբունքի և «բնական օրենքի» վրա: Չինաստանում Երկնքի և Բնության երկրպագությունը նաև բարոյական, և հետևաբար, բնականաբար «բանական» հասկացություն է: Յրաշալի տիրապետելով չինական մշակույթին՝ Ոիչին կոնֆուցիականությունը համարում էր ոչ թե կրոնի տեսակ, այլ «բնական օրենքի» վրա հիմնված կրոն: (2) Ոիչին բարձր էր գնահատում Չինաստանի կոնֆուցիական մշակույթը: Նա հասկանում էր, որ կռապաշտությունն անտիկ չինական մշակույթում տարբերվում էր եգիպտացիների, հույներին և հռոմեացիների մշակույթից, և հետևաբար անտիկ չինական փիլիսոփայությունը մարդկային էության և երկնային սկզբունքների մասին խոսելիս անցնում էր արևմտյան փիլիսոփայության սահմանները: Սա երևում է Սու Գուանցիի հարցին իր տված պատասխանից. «Դիմա, եթք գերիշխում են առաքինությունը, ծեսը և մշակութային մասունքները, Չինաստանն իսկապես մշակութային ծաղկում է ապրում, կարծես ցրել է ամպերը, և դարձյալ տեսնում է արլի լույսը<sup>89</sup>:» Սա գուցե պայմանավորված է այն փաստով, որ որպես կաթոլիկ՝ նա մեծ նշանակություն էր տալիս կռապաշտությանը հակադրվելուն և բարոյականությունը պաշտպանելուն: Մաքեն Ոիչին խիստ դեմ էր բուդդայականության և դառսիզմի (թաոսիզմ) կռապաշտությանը, բայց կոնֆուցիական երկրպագությունը չէր համարում կռապաշտության մի տեսակ: Այսպիսով, կարող ենք ասել, որ ընդհանուր առանձն Մաքեն Ոիչին համաձայն էր չինական մշակույթի ուղղափառ կոնֆուցիական մտքի հետ և գնահատում էր այն:

Քանի որ Սու Գուանցին հավատում էր կաթոլիկությանը Ոիչիի հետ իր շփման շնորհիվ, նա Ոիչիին հարգում էր թե՝ նրա ուսմունքի, թե՝ բարոյականության համար: Նա նշում էր, որ Ոիչիի խոսքում «անհնար է գտնել գեր մի բառ, որը հակադրվում է հավատարմության և բարեպաշտության սկզբունքին, չենք կարող

88. Սաքեն Ոիչի, «Lettere dalla China», թարգմ.՝ Յե Գառօձի և ուրիշներ: (Զումհուաշու, Չինաստան. Չինաստան հրատարակչություն, 1983), էջ 687:

89. Տես «Քսանհինգ ասույթ Էպիկուսուսից» գրքի վերջաբանը, Սու Ցունմյան, խմբ. «Դատվածներ Մին և Ցին դինաստիաների բողոքականների թարգմանած երկերից», (Պեկին. Չինաստան հրատարակչություն, 1949), էջ 329:

90. Մեջբերումը՝ նույն աղբյուրից, էջ 328:

նաև գտնել մի բան, որ վնասում է ժողովրդի և աշխարհի կամքին»<sup>90</sup>: Այս, որ Սու Գուանցին հատուկ կարևորություն է տալիս «հավատարմության ու բարեպաշտությանը», բացատրվում է նրանով, որ նա մեծապես ազդված էր ավանդական չինական գաղափարներից, և հենց սրա հիման վրա է, որ Մաքեն Ոիչին քարոզում էր կաթոլիկ ուսմունքները և ընդունում չինական մշակույթը: Իր «Տասը տրամասություն՝ պարադոքսային մարդու կողմից» գրքի մի հատվածում նա նկարագրում է Մաքեն Ոիչին մասին Գուա Դացամի կարծիքը.

Լսելով նրա իմաստուն խոսքերը՝ ես զգում եմ, որ Չինաստանի և նրա երկրի կոնֆուցիական դասական երկերը փաստերով հիմնավորում են իրար: Ուստի, նրանք, որ հավատում են իրական իմաստուններին՝ լինի Արևելքից, թե Արևմուտքից, Չյուսիսից թե Չարավից, իրականում նույն են<sup>91</sup>:

Վերը հիշատակված բոլոր գիտնականները կարծում են, որ այն, ինչ Ոիչին քարոզում էր, համապատասխանում էր ավանդական չինական մտքին, հատկապես կոնֆուցիականությանը, որի ամենահիմնարար կապող օղակը «հավատարմության և բարեպաշտության սկզբունքն է»: Որքանով մեզ հայտնի է, ժամանակի չինացի մտավորականները կարևորում էին Ոիչին իմացությունը աստղագիտության, օրացուցմերի, գիտության ու տեխնոլոգիայի ոլորտում, բայց ավելի բարձր էին գնահատում արևմտյան և չինական մշակույթները համադրելու նրա փորձը: Սա թերևս «չինական ուսմունքը մարմնի, արևմտյան ուսմունքը՝ օգտագործման համար» սկզբունքի հնագույն դրսնորումներից է: Այս խնդիրը մենք կքննարկենք հետագայում:

## 14.1 Արևելյան և արևմտյան մշակույթների կապակցման եղանակները

Դատելով վերը նշված երկու տեսանկյունից՝ մենք տեսնում ենք, որ Չինաստանում իր միսիոներական գործունեության ընթացքում Մաքեն Ոիչին իրականում փորձում էր կապակցել արևելյան և արևմտյան մշակույթները: Յիմնվելով սրա վրա՝ կարող ենք եզրակացնել, որ նա փորձում էր «որդեգրել «կաթոլիկությունը կոնֆուցիականության հետ կապելու» մեթոդները (հերու), «կաթոլիկ ուսմունքները օգտագործելով որպես կոնֆուցիականության լրացում (բուրու), «որոշ առումներով ստիպելով, որ կաթոլիկ ուսմունքներն անցնեն կոնֆուցիական ուսմունքների սահմանները (չառու)», և «որոշ դեպքերում վերանայել կաթոլիկ ուսմունքները, որպեսզի դրանք հաճապատասխանեն կոնֆուցիական ուսմունքներին (ֆուրու): Կարծ ասած՝ Ոիչին փորձում էր վերը նշվածի հիմքերով բացահայտել այն ընդիանուր կետերը, որոնցով արևելյան և արևմտյան մշակույթները կարող էին կապվել միմյանց:

### 14.1.1 Կաթոլիկության կապակցումը կոնֆուցիականության հետ (Շերու)

Մաքեն Ոիչին երեք կարևոր գիրք է գրել կաթոլիկ ուսմունքների մասին՝

91. Տես «Տասը տրամասություն՝ պարադոքսային մարդու կողմից» (Յանջոռուֆու. «Կաթոլիկ» հրատարակություն, 1930), հատոր II, էջ 76:

«Երկնքի տիրոջ ծշմարիտ նշանակությունը», «Տասը տրամասություն պարագորսային մարդու կողմից» և «Քսանիինգ ասացվածք Եպիկտետուսի կողմից»: Առաջին գիրքը սկզբում վերնագրված էր «Երկնքը ծանաչելու ծշմարիտ նշանակությունը»: Ակնհայտ է, որ նա նախ որոշել է խուսափել «Երկնքի տեր» բառակապակցությունից, որովհետև Չինաստանում նաման երևույթ չկա. այդպես նա հեշտացրել է չինացիների կողմից եզրույթի ընկալումը: Ֆան Ինձինը նախարանում դա բացատրում է հետևյալ կերպ:

Այս գիրքը Մաքեն Ոչչին և նրա ընկերների և իննօք չինացիների միջև հարցուայտասխան է: Ի՞նչ է Երկնքի տերը: Նա Աստված է: Նա գոյություն ունի:

«Երկնքի Աստծո ծշմարիտ նշանակությունը» գիրքը Մին դինաստիայում հաճախ «Երկնքի տեր» կամ «Գերագույն տեր» բառակապակցությունների փոխարեն օգտագործում էր «Աստված» և «Երկինք» բառերը, մինչդեռ ներկա հրատարակությունը հաճախ օգտագործում է «Երկնքի տեր» և «Գերագույն տեր» վերնագրերը այն պարզ պատճառով, որ Ոչչին այս վերնագրերն օգտագործում էր, որպեսզի դրանք հեշտությամբ ընդունվեն չինացիների կողմից: Այսպիսով, անտիկ ժամանակներում չինացիները երկրագում էին Երկինքը, իրենց պետությունն ու իրենց նախահայրերին, բայց ոչ «Երկնքի տիրոջը»: Նա փորձում է հարմարվել սրան մեջբերելով դասական երկերը և ցույց տալով, որ անտիկ Չինաստանում «Երկնքի տերը» հենց Աստված է: Չինական դասական երկերը, որ նա մեջբերում է, ներառում են «Երգերի գիրքը (շի)», «Պատմության գիրքը (շու)», «Ծեսերի գիրքը (լի)», «Փոփոխությունների գիրքը (ի)» և «Սիջինի ուսմունքը (ջունյուն)»: Այս մեջբերումները հաճախ են հանդիպում «Երկնքի տիրոջ ծշմարիտ նշանակությունը» գրքում: Օրինակ, Երկրորդ հատորի 6-րդ տրամասության մեջ, որտեղ նա պատասխանում է «բարին պարզեատելու և չարը պատժելու» հարցին, մի քանի անգամ մեջբերում է չինական դասական երկերի օրինակները՝ հաստատելու, որ անհրաժեշտ է կաթոլիկության ուսմունքները համադրել կոնֆուցիականության ուսմունքների հետ: (1) Մաքեն Ոչչին բավական տեղյակ է անտիկ Չինաստանում գերագույն անհատական «Աստծո» գոյության մասին, որի առնչությամբ պնդում է, որ «Երկնքի տերը» արևմտյան կաթոլիկության մեջ և «Աստված» Չինաստանում նույն են՝ տարբեր անուններով: (2) Քննադատելով Զու Սիի բացատրությունը՝ նա պնդում է, որ գոյություն ունի միայն մեկ «գերագույն տեր», և ոչ Երկուսը (Երկինք և Երկիր): «Երկնքի տիրոջ ծշմարիտ նշանակությունը» գրքի իր նախարանում նա նշում է, որ ինն ինաստումն իրեն խորհուրդ է տվել, որ հպատակը պետք է հավատարիմ լինի, բայց նա չի կարող հավատարիմ լինել երկու տիրոջ: Երեք գլխավոր առաջնորդներից առաջինը հպատակին առաջնորդող կառավարիչն է. եթե նա կանգնած է պետության գլխին, Երկինքն ու Երկիրն ինչպես կարող են չունենալ իրենց տերը: Եթե պետությունը պետք է միավորված լինի, Երկինքն ու Երկիրն ինչպես կարող են երկու տեր ունենալ: Այս բոլոր գաղափարներն ակնհայտորեն ցույց են տալիս կաթոլիկ ուսմունքների և կոնֆուցիականության առնչության նրա մեկնաբանությունները: (3) Մեջբերելով անտիկ դասական գործերը՝ նա նաև պնդում է, որ Աստված կամենում է Երջանկություն և դժբախտություն գործադրել մարդկության վրա: (4) Ուստի Աստված ունի իր սեփական «ոլորտը» (թին), որը բնության մեջ տարբերվում է «Երկնքից» (թյան): Այս ամենից մենք հասկանում ենք, որ Մաքեն Ոչչին փորձում է ապացուցել, որ կաթոլիկությունը համընկնում է կոնֆուցիականության և անտիկ չինական դասական երկերի հետ:

### 14.1.2 Լրացնելով կոնֆուցիականությունը (Բուրու)

«Lettere dalla China» գիրքը Մաթեո Ոհչիի նորերն են, որ նա Չինաստանում գրել է իտալերենով: Ավելի ուշ մի բրիտանացի միսիոներ այն իտալերենից թարգմանել է լատիներեն և ավելացրել որոշ տարրեր, որոնք վերաբերում էին ինչպես միսիոներական աշխատանքի պատմությանը, այնպես էլ միսիոներ Մաթեո Ոհչիին: Այն ուժի նաև հավելված, որը վերաբերում է քարոզչի ետմահու փառքին: Գրքի մի հատվածը հետևյալն է:

Պատասխանելով այն հարցին, թե որն է քրիստոնեության հիմնական բովանդակությունը՝ դրկտոր Սու Գուանցին հստակ ամփոփում է չինական չորս սկզբունքների միջոցով, որոնք կարելի է թարգմանել հետևյալ կերպ: «Դուքս մղել բուդդայականությունը և լրացնել կոնֆուցիականությունը» (ցյուֆուբուժու): Սա նշանակում է, որ նա ցանկանում է հեռացնել բուդդայականության կուռքերին և ինչ-որ բան ավելացնել կոնֆուցիականության ուսմունքներին<sup>92</sup>:

Քանի որ ցանկացած կրոն բնութագրվում է մյուսներին բացառելով, Ոհչին քննադասում էր բուդդայականությունն ու դառսիզմը (թառսիզմ), հատկապես առաջինը, քանի որ ցանկանում էր կարոլիկությունը բերել Չինաստան: Արա նշանները երևում են նրա բոլոր աշխատություններում: Սուրբ Ավգուստինը մի անգամ նշել է, որ հեթանոսական կրօնի հիմնական բովանդակությունից պետք է վճռականորեն հրաժարվել, բայց որոշ հեթանոս փիլիսոփաների առաջադրած գաղափարները պետք է նկատի առնվելն, ընդունվեն կամ ապացուցվեն, եթե դրամը իսկապես խելամիտ են: Մաթեո Ոհչին այս մոտեցումը կիրառում էր կոնֆուցիականության ուսմունքների դեպքում: Նա հայտարարում էր, որ կոնֆուցիականությունը ոչ մի կապ չունի կրօնի հետ, բայց այն ավելի շատ փիլիսոփայության տեսակ էր: Նա մասնավորապես բարձր էր գնահատում կոնֆուցիականությունը՝ նշելով, որ քանի որ կոնֆուցիոն ապրել է Չինուս Քրիստոսի ծնունդից հիմգ դար առաջ, նա չէր կարող ինանալ, թե ինչ է պատահելու 500 տարի անց: «Ոհչին իր հսկ սեփական եզրույթներով է մեջբերում կոնֆուցիականության դասական գործերը՝ ոչինչ չասելով այն մասին, թե դրամք ինչպես պետք է վերաարժեռվեն կոնֆուցիոնի մահից հետո<sup>93</sup>: «Տասը տրամասություն պարադոքսային մարդու կողմից» գործում տեղ է գտել մի հատված, որում Գուն Դանայը Ոհչիի հետ քննարկում է այն հիմնախնդիրը, թե «արդյոք նահից հետո մարդը պարզեւարվում է բարությանը, թե չարիքով»: Գունը նախ նշում է, որ քանի որ կայսր Ցին Շիհուանը կոնֆուցիոնի մահից հետո այրում էր գրեթե ու հետապնդում գիտնականներին, չինական դասական երկերում կորան արձանագրությունները դրախտի, դժոխքի ու հատուցման մասին, սակայն դրամք դեռևս լավ պահպանված են արևմուտքում: «Այսախով, դրախտի դժոխքի մասին պատմությունները լավ են պահպանվել»: Չինաստանում հատուցման պատմությունը հետագա դարերում «թե՛ անորոշ, թե՛ տարօրինակ է գիտնականների համար, որոնք կիսով չափ հավատում են նրա գոյությանը, կիսով չափ կասկածում դրան»: Գունը նաև փորձում է ապացուցել դրախտի հավանական գոյությունը՝ մեջբերելով անտիկ դասական երկերը, բայց

92. «Lettere dalla China», էջ 663:

93. Մեջբերումը՝ նույն աղբյուրից, նաև՝ հմմտ. էջ 693:

նա դեռ կասկածի տակ է առնում այն գաղափարը, որ «բարեգործություն անելը պետք է պարզեաւատրվի երկար կյանքով»: Ոիչին բացատրում է, որ կաթոլիկության ուսմունքների համաձայն, բարեհաճություն շնորհողի հատուցումը կազմված չէ միայն «տեղից» կամ «կյանքի տևողությունից»: Աշխարհում ապրող մարդը պետք է զանք ու եռանդ չխնայի երկնքի տիրոջ համար՝ առանց նտածելու իր կյանքի ընթացքում պարզեաւորվելու մասին. նա պետք է վստահ լինի, որ ի վերջո հայտնվելու է դրախտում: Յետևաբար, պատասխանելով Սու Գուանցիին, նա ասում է. «Երանք, որոնք տառապում են միայն հանուն շահի, օգուտի կամ փառքի, պաշտոնական դիրքի կամ ցանկասիրության, և ոչ սուրբ գործի, հրականում դժբախտ են: Բայց նրանք որոնք տառապում են՝ հանուն երկնքի տիրոջ, ակնհայտորեն երջանիկ են և, թվում է, ապրում են դրախտում»<sup>94</sup>. Ակներև է, որ նա ցանկանում է կաթոլիկ ուսմունքների միջոցով լրացնել կոնֆուցիականության միտքը, բայց նրա որդեգրած մոտեցումը չի ենթադրում Ժիստել կոնֆուցիական դասական երկերը, այլ ընդայնել և զարգացնել դրանք, որպեսզի ցույց տա, որ կոնֆուցիական գաղափարները ոչ միայն չեն հակադրվում արևմտյան կրոններին, այլև կարող են լրացվել նրանց կողմից:

«Երկնքի տիրոջ ծշմարիտ նշանակությունը» գրքում բազմաթիվ հատվածներ վերաբերում են «բարու և չարի հատուցմանը»: Վեցերորդ տրամասության մեջ, որը վերաբերում է նրան, որ «մահից հետո մարդը պարզեաւորվում է դրախտով կամ պատժվում դժիխոռով», նա քիչ թե շատ լրացնում և վերանայում է կոնֆուցիական այն հասկացությունը, որ «ընտանիքը, որը միշտ բարիք է գործում, բախտավոր կլինի, մինչդեռ ընտանիքը, որ չար արարքներ է գործում, դատապարտված է դժբխտության»: Ըստ նրա՝ հատուցումը լինելու է ոչ միայն կյանքի ընթացքում կամ ժառանգների հետ (նա կարծես դեմ է, որ հատուցման արժանանան նաև ժառանգները): Այստեղ ամենակարևորը հետմահու հատուցումն է. նրանք, որոնք բարիք են գործում, մահից հետո կիայտնվեն դրախտում և չեն ուղևորվի դժոխք: Բայց քանի որ նրանց նպատակը սա չէ, Ոիչին ավելացնում է.

Բոլոր նրանք, որոնք բարիք են գործում, սովորաբար ունեն երեք մտադրություն. (1) գնալ դրախտ՝ դժոխքի փոխարեն, (2) հատուցել երկնքի տիրոջ շնորհած բարության համար և (3) պարզապես հետևել երկնքի տիրոջ բարձրագույն հրամանին<sup>95</sup>:

Առաջին մտադրությունը ծառայում է՝ որպես կամուրջ, որի միջոցով մարդը կիասնի երրորդին. այսինքն բարիք գործելու ի վերջո գերազույն հրովարտակին հետևելու է: Սակայն կոնֆուցիականները չգիտեին այդ մասին և նույնիսկ քննադատում էին Դրախտի և Դժոխքի հասկացությունները լոկ այն պատճառով, որ չեն հասկանում դրանց խոր նշանակությունը: «Կոնֆուցիականները քննադատում են Դրախտի և Դժոխքի հասկացությունները, որովհետև չգիտեն ծշմարտությունը»<sup>96</sup>: Մենք անզեն աչքով տեսնում ենք կաթոլիկության և Չինաստանի կոնֆուցիական ավանդույթի տարբերությունը: Քանի որ կոնֆուցիականները խոսում են «բարու կամ չարի հատուցման» մասին միայն անձնական բարոյական զարգաց-

94. Բոլոր մեջքերումները «Տասը տրամասություն պարադոքսային մարդու կողմից» գրքի 2-րդ հատորից են, էջ 57-79:

95. Տե՛ս «Երկնքի տիրոջ ծշմարիտ նշանակությունը (Թյեն չու շիհ), էջ 52

96. Մեջքերումը՝ նույն աղբյուրից, էջ 55:

ման տեսանկյունից, բոլորն էլ պետք է «հետևեն ինքնազարգացմանը» կամ «բարոյականությանը» միայն ներքին բարոյական կատարելության հասնելու նպատակով: Այս իմաստով, այն հետապնդում է որոշակի «ներքին անդրանցականություն»: Բայց բարիք գործելու կաթոլիկության հասկացությունը ի վերջո, «Երկնքի տիղօ» համար է, ինչը «արտաքին անդրանցականության» մի ձև է: Ուստի այն հետապնդում է կամ հետևում է «արտաքին անդրանցականությանը»: Այս հարցը կը նարկենք հետագայում:

#### **14.1.3 Անդրանցելով կոնֆուցիականությունը (Չառորու)**

Չինաստանի կոնֆուցիական տեսության նպատակը «ներքին անդրանցականության» հետապնդումն էր, իսկ կաթոլիկության նպատակը «արտաքին անդրանցականության» հետապնդումն էր: «Երկնքի տիղօց ծշմարիտ նշանակությունը» գրքում Մարեն Ռիչին մատնամշում է կոնֆուցիականության այս թերությունը և քննադատում է այն<sup>97</sup>:

Որքանով մեզ հայտնի է, ավանդական չինական փիլիսոփայությունը և մասնավորապես կոնֆուցիական փիլիսոփայությունը խիստ տարրերվում է արևնտյան փիլիսոփայությունից և կրոնից: Պլատոնի և Արիստոտելի հունական փիլիսոփայությունն աշխարհն արդեն բաժանել էր երկու մասի՝ «իրերն իրենց մեջ» հասկացությունը և իրական աշխարհը: Այնուհետև քրիստոնությունը մտահոգված էր հատկապես արտաքին անդրանցական Աստծոն կերպարով, մինչեւ ավանդական չինական փիլիսոփայությունը բնութագրվում էր «ներքին անդրանցականությամբ»: Այն, ինչ նկատի ունի Կոնֆուցիոսը «Երկնքի եռթյուն և ուսմունք» ասելով, ներքին անդրանցականության հարց է, իսկ այն, ինչ Մենցիոսը նկատի ուներ «խոր մտածիր՝ ճանաչելով բնությունն ու Երկինքը» արտահայտությամբ, նաև «ներքին անդրանցականության» հարց էր: «Սիցի» գրքում կարելի է գտնել հետևյալ նախադասությունը. «Երբ իգական (ին) ու արական (յան) հավասարվում են խոսքին, և նրանց հետևում է առաքինությունը (շան), այն ունենում է եռթյուն»: սա «ներքին անդրանցականության» հարց է: Ըստ դրա՝ կարելի է հասնել մի ոլորտի, որն առաջնորդում է դեպի «Երկնքի անդրանցական ճանապարհ» մարդու սեփական ներքին բարոյական զարգացման միջոցով, առանց արտաքին անդրանցական ուժի օգնության: Բայց ըստ Ռիչի՝ մարդը հազիվ թե հասնի գերագույն ոլորտին ներքին բարոյական զարգացման միջոցով: մարդուն պետք է առաջ մղի արտաքին անդրանցական ուժը կամ Աստված: Ուստի անհրաժեշտ է հավատալ Աստծուն: Սա նշանակում է, որ Ռիչի կարծիքով՝ կաթոլիկության ուսմունքներն ավելի կատարյալ են, քան կոնֆուցիականության ուսմունքները:

#### **14.1.4 Յամապատասխանություն կոնֆուցիականության հետ (Ֆուլրու)**

Այս հասկացությունը նշանակում է, որ անհրաժեշտ է վերանայել կաթոլիկ ուսմունքները կամ զիջել մի շարք կոնֆուցիական գաղափարների՝ Չինաստանի ավանդական կոնֆուցիական մտքի հետ համաձայնության գալու կամ ներդաշ-

97. Մեջբերումը՝ նույն աղբյուրից, էջ 71:

նակություն հաստատելու համար:

«Lettere dalla China» գրքի 1978 թվականի ֆրանսիական հրատարակության խմբագրի առաջաբանում գրված է.

Ոիչիի մահից անմիջապես առաջ նրա գլխավորած չինական միսիոներական խմբի որդեգրած մեթոդների շուրջ քննարկումներ էին ընթանում թե՛ երկրում, թե՛ նրա սահմաններից դուրս: Դրանք վիճարկվում էին երկու տեսանկյունից: Գործնականում նրան մեղադրում էին, որ ավելի մեծ ուշադրություն է դարձնում կոնֆուցիական վերնախավի հետ իր հարաբերությունները զարգացնելուն, քան առաքելական նպատակներն առաջ տանելուն: Տեսականորեն, նրան նաև քննադատում էին կոնֆուցիականության դրական գնահատման համար: Որոշ մարդիկ նույնիսկ նշում էին, որ այս պահվածքը վտանգավոր է, որովհետև արատավորում է քրիստոնեության նարգությունը: Միայն ուժեղ կրոնական շեշտի միջոցով միսիոններները կարող են մարդկանց մեջ զանգվածներին քարոզել ավետարանը և ընդգծել քրիստոնեության առանձնահատկությունները»<sup>98</sup>: Ես արդեն նշել եմ, որ Մաքեն Ոիչին որոշակի կարծիք ուներ Չինաստանի կոնֆուցիական ավանդույթի մասին և փորձում էր միմյանց կապել արևմտյան և արևելյան մշակույթները: Բնականաբար, նա հստակ գիտեր, որ կոնֆուցիականության և կաթոլիկության միջև գոյություն ունեն բազմաթիվ տարբերություններ և բախումներ, և հավանաբար կարողանար լուծել դրանք «կոնֆուցիականությունը լրացնելու» և «կոնֆուցիականությունը անդրանցելու» մեթոդներով: Եթե նրա քարոզչական աշխատանքը լիարժեք համապատասխաներ կարողիկ ուսմունքներին, այնուամենայնիվ, նա կրախվեր ավելի շատ դժվարությունների: Դետևաբար, նա ստիպված էր բազմից վերանայել կարողիկ ուսմունքները, որպեսզի սպասարկեր չինական ավանդույթին, և տարօրինակ չէ, որ նրան քննադատում էին: Ինչ վերաբերում է նրան, թե նա ինչպես էր կաթոլիկությունը հարմարեցնում կոնֆուցիականությանը, ապա կարելի է նշել հետևյալ դրույթները.

ա. Կաթոլիկությունը չինական հասարակության պահանջներին հարմարեցնելու համար նա բացատրում էր նրա և չինական հասարակության տարբերությունները: «Lettere dalla China» գրքի իտալական հրատարակության մեջ կա մի հատված, որտեղ նա նկարագրում է, թե կոնֆուցիականն ինչպես է գոհեր մատուցում աստվածներին:

Սակայն ըստ իին օրենքի՝ յուրաքանչյուր խոշոր քաղաքում կա մեծ կոնֆուցիական տաճար, որտեղ հավաքում են ուսյալ մարդիկ. նրա կերպարն ու անունը փայփայվում է՝ որպես սրբություն. ուսյալ մարդիկ տարեկան չորս անգամ գոհ են մատուցում նրան, մոտ են վառում և կենուանի զոհաբերում: Սակայն, քանի որ նրան չեն համարում աստված և նրանից ոչինչ չեն խնդրում, այսպիսի ծեսը չի կարող կոչել իրական նվիրաբերություն<sup>99</sup>:

Մաքեն Ոիչիի գրքերում կաթոլիկության՝ ընդդեմ կրապաշտության բազմաթիվ նշաններ կան. մասնավորապես ուժեղ է բուդդայական կրապաշտության քննադատությունը: Սակայն նա երբեք չի քննադատում կոնֆուցիականների՝ ինաստումին արված նվիրաբերությունները, և ոչ էլ քննադատում է չինացիների նվիրաբերություններն իրենց նախնիներին: Նվիրաբերությունների այս հիմնախնդի-

98. Տե՛ս «Lettere dalla China», էջ 660:

99. Մեջբերումը՝ նույն աղբյուրից, էջ 659:

որ կարևոր պատճառ է, թե ինչու հետագայում Չինաստանն արգելեց կաթոլիկության քարոզը: 1704 թվականին Վատիլիկանը հրամաններ արձակեց, ըստ որի չինացի կաթոլիկները չպետք է հետևեին ավանդական չինական ծեսերին, որոնք չեն համապատասխանում կաթոլիկությանը: Ակնհայտ է, որ ինչպես Կոնֆուցիոնին, այնպես էլ նախնիներին զոհեր մատուցելու հատկապես հակադրվում է կաթոլիկությանը. սա հանգեցրեց նրան, որ չինական կառավարությունը սահմանափակեց և նույնիսկ արգելեց կաթոլիկության քարոզը: Քանի որ Մաթեո Ոչչին հրաշալի հասկանում էր չինական պայմանները, նա որդեգրեց չինական ավանդույթի հետ փոխզհջման գնալու մեթոդ՝ հանուն չինական հասարակության հարմարեցման, ինչպես նաև իր քարոզչական աշխատանքի, չնայած նրա գործությունները չին համապատասխանում կաթոլիկության ուսմունքին:

թ. Նա որոշ կաթոլիկ գաղափարներ հարմարեցնում էր ավանդական չինական կոնֆուցիական մտքին, որպեսզի չինացիներին հնարավորություն տար ընդունել կաթոլիկություն: Ինչպես արդեն իսկ նշվեց, «Երկնքի տերը» կաթոլիկության մեջ, անշուշտ, գերազույն անձնավորված Աստված է, բայց Ոչչին «Երկնքի տիրոջ ճշմարիտ իմաստը» գիրքը նկատի չունի սա, եթե նկատի առնենք նրա նախնական վերնագիրը: Այդ գրքում նա հաճախ օգտագործում է չինական ծագում ունեցող մի շաբթ բառեր, օրինակ՝ «Աստված» և «Երկինք»՝ «Երկնքի տեր» արտահայտության փոխարեն: Ըստ Ֆան Հաոյի՝ «Չինական կաթոլիկության պատմության մասին Էսսեների ժողովածովի» վերջին հրատարակության, ի տարբերություն Մին դինաստիայի հրատարակության, 79 տեղ «Աստված» կամ «Երկինք» բառերը Մին դինաստիայում փոխարինված են «Երկնքի տեր» կամ «Գերազույն տեր» բառակապակցություններով<sup>100</sup>: Չինարենում արդեն իսկ գոյություն ունեն «Աստված» (շանդի) և «Երկինք» (թյան) բառերը, բայց ավանդական չինական մտքում թյանը մի քանի իմաստ ունի: Այդ իմաստներից Ոչչին վերցնում է «Աստված», «Երկինք» և գերազույն անձնավորված Աստված խոսքերի իմաստները, բայց չինացի ժողովորի համար գուցե դրանք նաև այլ իմաստներ ունեն: 1715 թվականին՝ Ոչչին մահից հետո, Պապը հրովարտակ արձակեց, որ «Երկնքի տեր» անունը օրինական է, իսկ այնպիսի անուններ, ինչպիսիք են «Աստված» և «Երկինք», այլև չպետք է կիրառվեն, որովհետև կարող են մեկնարանվել տարբեր ձևերով:

Բացի այդ, ըստ պրոֆեսոր Լուտ Գուանի, Ոչչին իր «Քսանիինգ ասացվածք Եայկուտուսից» գրքում գրում է. «Այս գիրքն իրականում կազմված է 25 գլխից: գլուխներից յուրաքանչյուրը կարծ է ու հակիրճ: Այն մարդկանց խորհուրդ է տալիս ապրել պարզ կյանքով և սահմանափակել ցանկություններն ու գացմունքները: Երջանկությունը մարդու ապահով վիճակն է, որի հանգատությունը չի խաթարվում ոչ բարեբախտությամբ, ոչ դժբախտությամբ: Մարդկային կյանքի նպատակը հնագանությունն է Երկնքի աստծուն»: Ուստի ակնհայտ է, որ գիրքը նախատեսված է չինական պայմաններին համապատասխանելու համար:

գ. Ոչչին վերանայեց «մեղքի գաղափարը», որպեսզի այն ավելի սերտ մոտենա «առաքինության գաղափարին» Չինաստանի կոնֆուցիական ավանդույթի մեջ: Ինչպես ենթադրում է «մեղքի գաղափարը» կաթոլիկության մեջ, մարդկային

100. Տես «Չինական կաթոլիկության պատմության մասին Էսսեների ժողովածով», էջ 4-8:

ԷՌԵՋՈՒՆԸ չի կարող համարվել «առաքինի», և սա միանգամայն տարբերվում է «մարդկային էռլեյան առաքինի լինելու գաղափարից» Չինաստանի ավանդական կոնֆուցիական մտքի տիրույթում: Ըստ Սուրբ Ավգուստինի մեկնաբանության՝ մարդը ծնվում է «մեղավոր» իր ռացիոնալ ընտրության պատճառով: Վերջնական վերլուծության մեջ, այն, ինչ մարդուն դրդում է բանականությամբ ընտրել չարիքը, նրա ունայնությունն է կամ եսակենտրոն ցանկությունը, որով նա իրեն գերադասում է Աստծու: Այսպիսի ցանկությունը սովորաբար նրան մղում է հետևել իր սեփական մտադրությանը և արհամարիել Աստծո ՎՃԻՐԸ, որը հատկապես ակնհայտ է մարդու ցանկություններում: Ապա Ավգուստինն ավելացնում է, որ քանի որ մարդը միտումնավոր է ընտրում չարիքը և մեղեքը է գործում՝ խախտելով Աստծո կամքը, երբեք չի կարող իր սեփական ցանքերով վերականգնել իր սկզբնական վիճակը: Քանի որ այսպիսի «մեղքը» անխուսափելիորեն այլասերում է նրան, նա դառնում է բնույթով եսակենտրոն իր կամքի ու ցանկությունների մեջ և ունակ է միայն ընտրել «մեղքը» կամ «չարիքի» հակումը:

Այս առումով «Երկնքի տիրոջ ճշնարիտ ինաստը» գրի 7-րդ տրամասության մեջ Ոիչին կարծիք է հայտնում, որ «մարդկային էռլեյունը» վերաբերում է նրան, թե ինչն է մարդուն տարբերակում մետադից ու քարից, խոտից ու փայտից, թռչնից, գազանից ու նույնիսկ հոգուց՝ այն, որ մարդը «կարող է կշռադատել»: Ուստի նա ասում է. «Միայն նա, ով կարող է կշռադատել, կոչվում է մարդ արարած, և դրանով էլ տարբերվում է այլ արարածներից»: «Առաքինությունն ու բարոյականությունը հաջորդում են բանականությանը, որն ինքնին կախյալ է և ինքնին մարդկային էռլեյուն չի»: Այսպիսով, «կշռադատելը» վերաբերում է միայն առաքինությանը և «մարդկային էռլեյունը առաքինի է ծնվում» արտահայտությանը: Սա ակնհայտորեն ծառայում է կոնֆուցիական գաղափարներին: Բայց քանի որ Մաթեն Ոիչին չէր կարող ամբողջությամբ խախտել Երկնքի տիրոջ ուսմունքները, նա կարծում էր, որ մարդն «ի վիճակի է կշռադատել»: Մարդն ինչպես կարող է ծերք բերել այդ ունակությունը: Ինչպես ազարակատերերը սերմը ցանելուց առաջ վարում, քաղիանում են, հեռացնում են քարերը և ոռոգում են հողը, որպեսզի լավ բերք ստանան, այնպես էլ «սովորողները պետք է նախ և առաջ ազատվեն չարիքից, և դրանից հետո կկարողանան առաքինի լինել: Միայն երկրային հաջողությունից հեռու մնալու դեպքում կարող են հաջողակ լինել»: Քանի որ այս գաղափարը կաթոլիկության մեջ կապված է «մեղքի» գաղափարի հետ, այն չէր կարող չիհակադրվել այսպես կոչված «լավ ունակության» գաղափարին: Ուստի, բավական բարդ է մի մշակութային ավանդույթը հաշտեցնել մյուսի հետ:

Վերը նշված չորս կենտրից տեսմուն ենք, որ Մաթեն Ոիչին քարոզում էր կաթոլիկության ուսմունքները՝ արևելյան և արևմտյան մշակույթները միմյանց կապելու նպատակով: Մենք գնահատականներ չենք տա այն նասին, թե արդյոք նրա փորձը հաջողվեց, թե ձախողվեց, բայց միանշանակ պատմական կարևորություն ունի այն, որ նա այսպիսի փորձ կատարած առաջին արևմտացին էր:

#### **14.2 «Մարմին և կիրառում» և չինական ու արևմտյան ներդաշնակության հարաբերակցությունը**

Փորձելով կապակցել արևմտյան և չինական մշակույթները՝ մենք հաճախ բախվում ենք «մարմնի և կիրառման» (թիյուն) խնդրին, որն առկա է թե՝ չինական,

թե՝ արևամտյան ուսմունքներում: Չինաստանում կաթոլիկություն քարոզելով՝ Մաթեն Ոիչին չէր կարող հաշվի չառնել իր կապը ավանդական չինական մտքի և մշակույթի հետ: Նույն եկեղեց նաև կաթոլիկությունն ընդունելով՝ չինացիները ստիպված էին հաշվի առնել այս կապը: Ես արդեն ընճարկել եմ, թե նա ինչպես վարվեց այս խնդրի հետ: Այժմ եկեղեց պատկերացնենք, թե ժամանակի չինացի մտավորականներն ինչպես էին ընդունում կաթոլիկությունը: Ին կարծիքով՝ այն ժամանակի կաթոլիկությունը ընդունած այնպիսի մտավորականներ, ինչպիսիք են Սու Գուանցին, Լի Զիցաոն և այլք, արևամտյան ուսմունքն ընդունելիս կամ ուսումնասիրելիս որդեգրում էին հետևյալ մոտեցումը՝ «չինական ուսմունքը՝ որպես մարմին, արևամտյան ուսմունքը՝ կիառնան համար. մենք գիտենք, որ չնայած բողոքականներն այն ժամանակ ակտիվ էին նույնիսկ արքունիքում՝ Պեկինում, բայց «չինական արքունիքը կիրառում էր միայն նրանց տեխնիկական մեթոդները»: «Օրինակ, Ոիչին մի ժամանակ ժամացույցներ ու այլ սարքեր էր նորոգում արդունիքում, և Թամ Շուտվանը և Նան Յուայժենը ստանձնել էին օրացույցը Վերանայելու գործը»: «Չինաստանի ուսյալ մտավորականները մասնավորապես հետաքրքրված էին նրանց գիտությունն ու գիտելիքը ծեռք բերելու հարցով»: «Սրանք մեծ հաջողության հասան Չինաստանի մտավորականների ձևավորման գործում»<sup>101</sup>, քանի որ մի շարք չինացի մտավորականներ ընդունում էին կաթոլիկության ուսմունքները: Քանի որ դրանք ընդունվել էին գլխավորապես շնորհիվ ավանդական չինական մտքի, հատկապես կոնֆուցիական բարոյականության հետ կապի, Ոիչին փորձը կարելի է դիտարկել՝ որպես «չինական ուսմունք՝ մարմին, իսկ արևամտյան ուսմունքը՝ կիրառում» սկզբունքի մեկ այլ, ավելի վաղ ծև, որը ձևակերպվել էր 1860-ականներին:

Դետագա դարերի ընթացքում զանազան փորձեր են եղել միմյանց հետ հարաբերել «չինական ուսմունքը» և «արևամտյան ուսմունքը»՝ «մարմնի կամ (հիմքի)» (թի) և «կիրառման» (յուն) հետ. օրինակ, նրանք, ովքեր ընդունում էին «չինական ուսմունքը՝ որպես հիմք, իսկ արևամտյան ուսմունքը՝ կիրառման համար», «արևամտյան ուսմունքը՝ որպես հիմք, իսկ չինական ուսմունքը՝ կիրառման համար» և նույնիսկ «երկու ուսմունքները՝ որպես հիմք, իսկ չինական ուսմունքը՝ կիրառման համար» սկզբունքները, կոչվում են «ամբողջությամբ արևամտանու» (ցյուանփան սիհուա փայ): Այն մարդիկ, որոնք պաշտպանում էին «չինական ուսմունքը՝ որպես հիմք, իսկ արևամտյան ուսմունքը՝ կիրառություն» կոչելու սկզբունքը, համարվում էին «չինական մշակույթի գերիշխանության աջակիցներ» (գործուցույ փայ): Այսպիսի խառնաշփոթի պատճառը «չինական» և «արևամտյան» ուսմունքների հարաբերությունը «մարմնի և կիրառման» միջոցով նկարագրելու փորձն է: Ըստ Էռլյան, վերը նշված գաղափարներից ոչ մեկը հասկանալի չէ:

Որպես չինական փիլիսոփայության պատմության երկու կարևոր կարգ՝ «մարմնն» ու «կիրառումը» ոչ թե էական կարգեր, այլ հիմնարար հարաբերություններ են: «Մարմինը» (թի) առհասարակ վերաբերում է «ներքին անդրանցական ոգուն» կամ «անդրանցական նոումենին» (իր մեջ): Այն համապատասխանում է նրան, ինչ Սենցինոսը նկատի ունի «խիղճ» (լյանջի կամ լյաննեն) և Վան Յանմինը՝ «միտք» ասելով, և այլն. վերջինս համապատասխանում է «Աստծո կամքին»

101. Տե՛ս «Lettere dalla China» գրքի չինական տարրերակի ներածությունը, էջ 23:

(թյանմին), «Թայձիին», «Աստծո խոսքին» (թյանլի), «Լոգոսին» (դառ) և այլն: «Կիրառումը» (յուն) վերաբերում է ննան «Ներքին անդրանցական ոգու» կամ «անդրանցական նոումենի» դրսնորած բազմազան գործառույթներին: Ըստ ավանդական չինական փիլիսոփայության՝ թին և յունը միավորված են, և առաջինը ներկայացնում է երկրորդը, ինչպես Վան Բին Վեյ-Զին դինաստիաներում նշում էր, որ առանց թիի չի լինի հաճապատասխան յուն: «Չինական ուսմունքը որպես մարմին, արևմտյան ուսմունքը՝ օգտագործման համար» հասկացությունը «ոչ այլ ինչ է, եթե ոչ չինական ավանդույթում ներքին անդրանցական նոումենը պահպանելու ջանք՝ արևմտյան ոգին ներժելու նպատակով: Բայց մենք ինչպես կարող ենք «օգտագործել արևմտյան ուսմունքը», եթե դա անհրաժեշտ լինի: Նոյն կերպ նաև ամենայ է ընդունել «արևմտյան ուսմունքը՝ որպես մարմին, և չինական ուսմունքը՝ կիրառման համար»: Առաջինն անխուսափելիորեն կիանգեցնի «չինական ուսմունքը՝ թե՛ որպես մարմին, թե՛ կիրառման համար», իսկ վերջինը՝ «արևմտյան ուսմունքը՝ թե՛ որպես մարմին, թե՛ կիրառման համար» սկզբունքներին:

Ինչ վերաբերում է «Երկու ուսմունքը՝ փոխադարձաբար որպես հիմք և կիրառման համար» հասկացությանը, ապա այն կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ. Եթե շինական ուսմունքում կա որևէ դրական կողմ, ապա այն պետք է յուրացնել՝ «շինական ուսմունքը՝ որպես հիմք, արևմտյան ուսմունքը՝ կիրառման համար» սկզբունքի միջոցով։ Եթե արևմտյան ուսմունքում կա որևէ դրական կողմ, ապա այն պետք է յուրացնել՝ «արևմտյան ուսմունքը՝ որպես հիմք, շինական ուսմունքը՝ կիրառման համար» սկզբունքով։ Այսպիսի գաղափարն ակնհայտորեն անհասկանալի է։ Այն պարզապես երկու մոտեցումները ներառում է այսպես կոչված «Երկու ուսմունքը՝ փոխադարձաբար որպես հիմք և կիրառման համար» հասկացության մեջ, որն ընտրողական բնույթ է կրում։ Պրոֆեսոր Ֆան Քելին ինքն էլ հայտնվում է շփոթության մեջ, չնայած քննադատում է վերը նշված երկու մոտեցումները՝ «շինական ուսմունքը՝ որպես հիմք, արևմտյան ուսմունքը՝ կիրառման համար» և «արևմտյան ուսմունքը՝ որպես հիմք, շինական ուսմունքը՝ կիրառման համար»<sup>102</sup>։

Եթե մենք օգտագործենք թիյունի հարաբերությունը՝ չինական և արևատյան մշակույթների հարաբերությունը բացատրելու համար, սա կհազեցնի նրան, որ «մի մշակույթը գաղտնի կփոխարինվի մյուսով»: Եթե չբարելավենք մշակութային դաշտը և չապահովենք այլ հանգամանքներ, այլ ծածուկ մի մշակույթը փոխարինենք մյուսով, մշակութային հիմքն ամուր չի լինի: Այսպիսով, իմ կարծիքով, մեր արդի հասարակությունը պետք է ունենա արդի ոգի և այս ոգին մարմնավորող գանձական համակարգեր: Եթե օգտագործենք թիյունի հարաբերությունը՝ այս խնդիրը բացատրելու համար, մենք թերևս «արդի ոգին կհամարենք մարմին կամ հիմք, իսկ այդ ոգին մարմնավորող համակարգերն ու նրանց գործառույթները՝ կիրառություն»: Այս դեպքում գուցեն հարց ծագի: ՞ո՞ր ն է «արդի ոգին» և «որո՞նց են ոգին մարմնավորող համակարգերն ու նրանց գործառույթները:

Այստեղ ես կանդրադառնամ պարոն Յան Ֆոլի առաջ քաշած տեսակետին, որը մի ժամանակ քննադատում էր «չինական ուսունքը՝ մարմին կամ հիմք, իսկ արևմտյան ուսունքը՝ կիրաօման համար» գաղափարը: Նա մատնանշում է, որ

102. Տե՛ս «Փիլիսոփայության ուսումնասիրություններ», 9 (1987), 29-35:

մարմինը կամ հիմքը և նրա կիրառումը պետք է միավորվեն, և ոչ թե երկիրեղկվեն։ Նա մասնավորապես շեշտում է գիտության կարևորությունը և առաջ քաշում մի շատ նշանակալի հիմնավորում՝ «ազատությունը՝ որպես մարմին կամ հիմք, ժողովրդավարությունը՝ կիրառման համար»։ Ես կարծում եմ, որ նրա այս գաղափարը թերևս որոշակի արդիական նշանակություն ունի։ Ուստի իմ կարծիքով՝ «ազատությունը» արդի ոգու կենտրոնացված մարմնավորումն է կամ ներքին ոգին՝ արդի դարաշրջանում։ Սա համընդիմուր գաղափար է, որին արդի աշխարհում ձգտում են բոլոր մարդիկ, մինչդեռ «ժողովրդավարությունը» բաղկացած է արդի հասարակության բազմազան համակարգերից, որոնք ապահովում են «ազատագրությունը» և չեն վերաբերում ժողովրդի միայն որոշակի խնդի։ Ներկայում մենք ապրում ենք չինական հասարակության մեջ։ Ուստի ամենակարևոր խնդիրներն են՝ ապահովել բոլորի «ազատությունը» և ունենալ ժողովրդավարական համակարգերի շարք, որոնք ապահովում են դրա իրականացումը, եթե իհարկե ցանկանում ենք արդիացման հնարավորություն տալ մեր հասարակությանը։ Միայն այսպես մարդիկ կկարողանան լիարժեք օգտագործել իրենց խանդավառությունն ու ստեղծագործական մոտեցումը, իսկ մեր երկիրը կկանգնի ոչ միայն «չորս արդիականացման», այլև համապարփակ արդիականացման ճանապարհին։

## ԳԼՈՒԽ 15

### Չինական մշակույթի հնարավոր կողմնորոշումները համաշխարհայնացման (գլոբալիզացիա) համատեքստում<sup>103</sup>

Այսօր՝ համաշխարհայնացման համատեքստում, մարդկային մշակույթը դեռևս բազմազան է: Պատճառն այն է, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից ի վեր, գաղութային համակարգի փլուզմանը զուգահեռ նախկին գաղութները և ճնշված ժողովուրդները կանգնել են բոլոր առումներով իրենց անկախ կարգավիճակն անրապնդելու հրամայականի առաջ. ազգին բնորոշ մշակույթը (լեզու, կրոն, արժեքներ և այլն) այս կարգավիճակի հաստատման կարևորագույն սյուներից մեկն է, և հետևաբար այն պայմաններ է տրամադրում աշխարհի մշակույթի բազմազան զարգացման համար: Ի լրումն դրա, նտրի հետմոդեռնիստական վերելքն արևատյան աշխարհում նախորդ դարի վերջին և նրա հսկայական ազդեցությունը հստակության, դետերմինացիայի, ծայրահեղ արժեքի և տեսական համակարգի արդիական օաղափարների վրա հանգեցրին հակադետերմինացիայի, անկարգության և ապակենտրոնացման, որն անրապնդեց բազմամշակութայնության զարգացումը: Չինական մշակույթը՝ որպես մարդկային մշակույթի բաղադրիչ, պետք է դուրս գա «Չինաստանը ընդդեմ արևամուտքի» և «անտիկ ընդդեմ ժամանակակցի» բանավեճերից, որոնք տևում են արդեն ավելի քան հարյուր տարի, և մոտենա չորս հեռանկարների գիտելիքին, որպեսզի չինական մշակույթը փոփոխություններ կրի: Ներկայում, շնորհիվ համաշխարհային մշակույթի բազմազանության, չինական մշակույթը նաև ձևավորել է իր սեփական բազմազանության կաղապարը:

Չինաստանի պատմության մեջ եղել են երկու նշանակալի մշակութային ներմուծումներ, որոնցից մեկը հնդկական բուդդայական մշակույթի մուտքն է առաջին դարից ի վեր, իսկ մյուսը՝ արևատյան մշակույթի ներմուծումը տասնվեցերորդ դարից ի վեր, հատկապես տասնիններորդ դարի կեսին:

Չնդկական բուդդայականության ներմուծումը Չինաստան անցել է երեք պատմական փուլով: (1) Արևամտյան Յան դինաստիայի վերջին շրջանից մինչև արևելյան Չին դինաստիա. բուդդայականությունը նախ Յան դինաստիայում կցվեց աստղագիտությանն ու աստղաբանությանը, իսկ հետագայում՝ Վեյ և Չին դինաստիաներում, մետաֆիզիկային: (2) Արևելյան Չին դինաստիայից հետո չինական և հնդկական մշակույթների միջև առաջացան հակասություններ ու բախումներ, որոնք պայմանավորված էին մշակութային տարրերություններով, սակայն երկուսն էլ փոխադարձաբար ազդում էին միմյանց վրա և կլանում միմյանց: (3) Սույ և Թան դինաստիաներից ի վեր կյանքի կոչվեցին մի շադր չինականացված բուդդայական աղանդներ, օրինակ՝ Թյանթայը, Չուայանը և Չանը, իսկ հնդկական բուդդայական մշակույթը Չինաստանում ենթարկվեց կոնֆուցիականության և դառսիզմի ազդեցությունը: Միևնույն ժամանակ դարձյալ ի հայտ եկավ կոնֆու-

103. Չինական մշակույթ և համաշխարհայնացում. Պատմություն և մարտահրավերներ 21-րդ դարի համար, 2009: 33-40

ցիականությունը, որն ընդգծում էր ավանդական չինական սուբյեկտիվությունը, իսկ դառսիզմը կլանում էր բուդդայականությունը: Կարելի է հաստատել, որ մինչ Սույն դինաստիա հնդկական բուդդայական մտքերն ամբողջությամբ միախառնվել էին չինական մշակույթին: Չնդկական բուդդայական մշակույթի Չինաստան մուտք գործելու այս պատմական գործընթացը կարելի է վկայակոչել որպես փորձառությունների և ոգեշնչման կաղապար արևմտյան մշակույթի մուտքը Չինաստան ուսումնասիրելիս:

Եթե տասնվեցերորդ դարի վերջին արևմտյան մշակույթը մուտք գործեց Չինաստան, այն նույնպես կցվեց չինական կոնֆուցիական մշակույթին, որն ընդհատվել էր հայտնի Ծեսերի անհանաձայնության պատճառով: Միայն տասնիններորդ դարի կեսերին արևմտյան մշակույթը, արևմտյան ինպերիալիստների ներխուժման հետ մեկտեղ, հեղեղեց Չինաստանը: Մեկ դարից ավելի բանավեճեր էին ընթանում «Չինաստանն ընդդեմ Արևմտատքի» և «անտիկն ընդդեմ ժամանակակցի» թեմաների շուրջ, որոնք իրականում հակառակ են «ընդիանուր արևմտացումը» և «գոյաբանական մշակույթը»: Այս ամենը ցույց է տալիս, որ միտում է եղել «անտիկը» հակադրել «ժամանակակակցին», իսկ «Չինաստանը»՝ արևմտատքին: Միջմշակութային իիմնախնդիրների հետ առնչվելու այս պարզեցված ձևը վնասակար է մշակույթի առողջ ու բանական զարգացման համար: Ներկայում մենք պետք է դադարենք «անտիկը» «ժամանակակակցին» և «Չինաստանը» «արևմտատքին» հակառակություն և դադարեցնենք այս բանավեճերը: Մենք կարող ենք պնդել, որ մշակութային զարգացումները ժամանակակից Չինաստանում հնդկական բուդդայականության ներմուծման երկրորդ փուլից (Յարավային և Յյուսիսային դինաստիաներ) անցում են կատարում երրորդ փուլ (Սույ և Թան դինաստիաներ), այլ կերպ ասած՝ երկու մշակույթների միջև մշակութային հակադրությունների ու բախումների փուլից անցնում են մի փուլ, եթե տեղական մշակույթը սկսում է կլանել արևմտյան մշակույթը: Այս երրորդ փուլում չինական մշակույթի զարգացումը հեռանում է «Չինաստանն ընդդեմ արևմտատքի» և «անտիկն ընդդեմ ժամանակակցի» բանավեճերից և թևակոծում մի փուլ, եթե մենք կլանում և միաձուլում ենք արևմտյան մշակույթը ամբողջությամբ և խորությամբ, ինչը կօգնի, որ չինական մշակույթը ավանդականից վերափոխվի արդի մշակույթի՝ զարկ տալով բազմամշակութային զարգացմանը: Ես այս կողմնորոշումը կնկարագրեն չինական փիլիսոփայության օրինակով: Յավատացած եմ, որ այս հանգամանքներում գոյություն ունի արդի չինական փիլիսոփայության կառուցման առնվազն երեք կողմնորոշում:

Ա. Արևմտյան փիլիսոփայության կլանման և միաձուլման հիմքով կարող ենք «շարունակել» ավանդական չինական փիլիսոփայությունը: Ֆեն Յուլանը բարձրացրել է «շարունակելու» և «հետևելու» հիմնախնդիրները: Նրա կարծիքով՝ իր «Նոր կոնֆուցիական փիլիսոփայությունը» ավելի շատ շարունակում է Սույն և Սին դինաստիաների ներկոնֆուցիականությունը, քան հետևում դրան: Նույն կերպ նաև Սույն և Սին դինաստիաների փիլիսոփայությունը, այսպես կոչված նեռ-կոնֆուցիականությունը, կյանքի կոչվեց հնդկական բուդդայական փիլիսոփայության յուրացման և միաձուլման արդյունքում. վերջինս մեծ ազդեցություն ուներ նրա վրա: 1930-ականների և 1940-ականների որոշ փիլիսոփաներ, ինչպիսիք են Սյոն Շիլին, Ֆեն Յուլանը, Յե Լինը, Չին Յուելինը, Զան Դունսունը և Զան Շեն-ֆու, կառուցեցին արդի չինական փիլիսոփայությունը՝ վերջինիս ազդեցության

Աերքո կլանելով արևմտյան փիլիսոփայությունը:

Մենք կարող ենք որպես օրինակ բերել Ֆեն Յուլանին: Նրա կոնֆուցիական փիլիսոփայությունը նոր է, որովհետև չինական փիլիսոփայություն է ներմուծում Պլատոնի «ընդիանուրի» և «մասնավորի» գաղափարը, ինչպես նաև նոր ռեալիզմի փիլիսոփայության «քարենված» միտքը: Նա աշխարհը բաժանում է «ճշմարտության» (կամ «գաղափար» կամ «թայ չի») և իրականության: Իրականության մեջ նյութը է դառնում՝ հենվելով «գաղափարի» վրա: Այս միջոցով էլ նրա նոր կոնֆուցիական փիլիսոփայությունը մի կողմից շարունակում է Սուն և Մին դինաստիաների ներկոնֆուցիականության այն միտքը, որ «սկզբունքը մեկն է, որսկորումները՝ բազմաթիվ», իսկ մյուս կողմից չինական փիլիսոփայության մեջ կիրառում է «ընդիանուրի» և «մասնավորի» գաղափարը արևմտյան փիլիսոփայությունից, ինչն էլ լուրջ խթան է չինական փիլիսոփայության արդի ձևափոխության համար: Իրականում 1930-1940-ականների գիտնականները հենց այսպես էին մտածում:

Անշուշտ, Ֆեն Յուլանի «Նոր կոնֆուցիական փիլիսոփայությունը» նույնպես չի լուծել այս հիմնախնդիրները: Ինչպես նշված է «Չինական փիլիսոփայության նոր պատմություն» (Արդի չինական փիլիսոփայության պատմություն) գրքի յոթերորդ հատորում Ֆենը հաստատում է, որ այս գաղափարը մի դեպքում չգոյություն է, մյուս դեպքում՝ «գոյություն»: Այստեղ պարզ հակադրություն կա: Յետևաբար, եթե փորձենք առաջ տանել չինական փիլիսոփայության զարգացումը, պետք է շարունակենք «Նոր կոնֆուցիական փիլիսոփայությունը», և ոչ թե Սուն և Մին դինաստիաների ներկոնֆուցիականությունը: Այս նպատակին հասնելու անհրաժեշտ պայմաններից մեկն է՝ խորությամբ կլանել և յուրացնել արևմտյան փիլիսոփայությունը և օգնել, որ չինական փիլիսոփայությունն ավելի համընդիմուր կարուրություն ունենա Չինաստանի և արևմտատրի երկխոսություններում: Միաժամանակ պետք է ավելի շատ ուշադրություն դարձնենք չինական փիլիսոփայության ուժեղ կողմերին և հաստատենք մեր իսկ սեփական առանձնահատկությունները, որպեսզի հասուկ ավանդ ունենամք նարոկային մշակույթի ոլորտում: Մենք կարող ենք նաև նշել, որ չնայած ավանդական չինական փիլիսոփայության մեջ կա «գիտելիքի և գործողության հարաբերության» քննարկման ավանդույթ, և որ «գիտելիքի և գործողության միասնության» ուսունքը մի ժամանակ գերակա դիրք էր գրավում, այս ուսմունքը հաճախ կապվում էր բարոյականության և բարոյագիտության հետ և զուրկ էր ճանաչողական հիմքից: Այս հիմնախնդիրը 1930-ականներին բարձրացրեց Յեն Լիմը՝ սահմանելով՝ «Գիտելիքի և գործողության» հիմնախնդրի ոչ քննարկատական ուսումնասիրությունը և նշելով, որ բարոյականության ուղղակի քննարկումը միանշանակ կիանգեցնի դոգմատիկ բարոյագիտության: Բարոյագիտությունն ուսումնասիրում է վարքագիր կանոնները և բարու և ճշմարտի կապը, ուստի եթե մենք չենք չենք ուսումնասիրում հասանելի գիտելիքը և ճշմարտության և բարու կապը, միանշանակ կրնկնենք անհիմն դոգմատիզմի ծուլակը»: Յետևաբար, մենք «պետք է խորությամբ հետազոտենք բարոյագիտության հիմքը<sup>104</sup>: Ինչպես տեսնում ենք, 1930-1940-ականների այնպիսի չինացի փի-

104. Յեն Լիմ, «Գիտելիքի և գործողության միասնության նոր ընկալումը» Չինական փիլիսոփայության մեջ հիսուն տարիների ընթացքում (Լյաոնին կրթական հրատարակություն, 1989):

լիսովաներ, ինչպիսիք են Զան Դունսունը, Սյոն Շիլին, Յե Լինը, Զին Յուդինը և Ֆեն Յուլանը, նկատում էին «ճանաչողական» տեսության բացակայությունը ավանդական չինական փիլիսոփայության մեջ և փորձում էին սովորել արևմտյան փիլիսոփայությունից, որպեսզի լրացնեն այս բացը: Ուստի, իրական արդի չինական փիլիսոփայության հիմնումն անհնար է առանց արևմտյան փիլիսոփայության: Սա նշանակում է, որ արևմտյան փիլիսոփայությանը մշտապես ուշադրություն դարձնելով ու նրանց սնվելով անհրաժեշտ միջոց է, որով չինական փիլիսոփայությունը կարող է զարգանալ և մուտք գործել աշխարհ:

Բ. Մենք կարող ենք շարունակել արևմտյան փիլիսոփայության օգնությամբ կառուցել չինական փիլիսոփայություն՝ վերջինիս գաղափարական ռեսուլսները ներմուծելով առաջինի տիրույթը: Չինաստանի պատմության ընթացքում եղել է հնդկական բուդդայական փիլիսոփայությունը շարունակելու փորձառությունը: Չինաստանում Սույ և Թան դինաստիաների ընթացքում կյանքի կոչվեցին մի շարք չինականացված բուդդայական առանդներ, ինչպիսիք են Զանը, Թյանբայը և Յուայանը: Նրանք յուրացրին կոնֆուցիականության և դառսիզմի մտքերը՝ դառնալով չինական բուդդայական փիլիսոփայություն, որը տարբերվում էր հնդկական բուդդայական փիլիսոփայությունից: Մենք կարող ենք պնդել, որ երբ հնդկական բուդդայական փիլիսոփայությունը ներմուծվեց Չինաստան, չինական փիլիսոփայությունը մեծապես օգտվեց դրանից:

Ավելի քան մեկ դար արևմտյան փիլիսոփայության զանազան դպրոցներ մեկը մյուսի ետևից մուտք են գործել Չինաստան և մեծ ազդեցություն թողել չինական փիլիսոփայության վրա: Արդյո՞ք չինացի փիլիսոփաները, բախվելով հզոր արևմտյան փիլիսոփայությանը, կարող էին չինական փիլիսոփայական մտքերը ներմուծել արևմտյան փիլիսոփայություն՝ արևմտյան փիլիսոփայության մի շարք չինականացված դպրոցներ հիմնելու համար, ինչպես տեղի էր ունեցել Սույ և Թան դինաստիաներում: Այստեղ ես խնդիրը նկարագրելու համար օրինակ կրերեմ հերմենևստիկան: Ներկայում արևմուտքում նկատվում է «հերմենևստիկ մտքերի միտում», և 1980-ականներից ի վեր չինական ակադեմիայի զանազան գիտակարգերի գիտնականներ արևմտյան հերմենևստիկան օգտագործում են չինական մշակույթի տարբեր կողմերը հետազոտելու համար. այսպիսով, որոշ չինացի գիտնականներ (այդ թվում և արտասահմանում ապրողները) փորձել են կառուցել «չինական հերմենևստիկան»: Քանի որ Չինաստանում գոյություն ունի դասական երկերի մեկնաբանության երկար պատմություն և մտքի հարուստ պահոցներ, չինական հերմենևստիկան կառուցվել է արևմտյան հերմենևստիկայի ազդեցության մերձության մեջ:

Իր «Չինական փիլիսոփայության արդի մեկնաբանությունները» գրքում պրոֆեսոր Զին Յայքենը ներկայացնում է չորս մարդու՝ Ֆու Վեյսուն, Չեն Զումին, Յուան Զումինի և Թան Իծեյ, որոնց միջոցով ներկայացնում է չինական հերմենևստիկա ստեղծելու ջանքերը: Ֆուի «ստեղծարար հերմենևստիկան» փիլիսոփայի մտածողությունը բաժանում է հինգ մակարդակի՝ չինական հերմենևստիկան կառուցելով հերմենևստիկ մեթոդաբանության տեսանկյունից: Այն բնութագրվում է թառապական փիլիսոփայության մտածողության մեթոդաբանության (օրինակ, Լառ Զուանի փիլիսոփայության) և չինական բուդդայական փիլիսոփայության (օրինակ՝ Զանի) տարրերը հերմենևստիկա ներմուծելով: Չենը Ֆուից տարբերվում է նրանով, որ շեշտը դնում է մեթոդաբանության հերմենևստիկ տեսության վրա՝ հա-

տուկ ուշադրություն դարձնելով մեկնաբանությունների գոյաբանական իմաստներին: Նա գլխավորապես հերմենուսիկա է ներմուծում «Փոփոխությունների գրքի» մտքերը՝ հավատալով, որ չինական գոյաբանական հերմենուսիկան տարբերվում է արևմտյան հերմենուսիկայից, որը բնութագրվում է «գոյաբանության կայուն մեկնաբանությամբ» կամ «գոյաբանության դինամիկ մեկնաբանությամբ», որը հիմնված է «կյանքի գոյաբանության» վրա, և որի շրջանակներում գիտելիքը միասնական է մտքի հետ: Հիմնվելով Մենցիոսի մտքերի մասին նրա մեկնաբանության և Մենցիոսի մտածողության մասին նրա ուսումնասիրության վրա՝ Յուանը բացահայտում է Չինաստանում դասական երկի մեկնաբանության բնութագիրը: Թանն առանձնացրել է Չինաստանում դասական երկերի մեկնաբանության պատմությունը՝ վերլուծելով Ցին շրջանին նախորդող փիլիսոփայության մեկնաբանությունների տարբեր տեսակները: Չնայած այս բոլոր փորձերին՝ դեռևս ջանքեր են անհրաժեշտ՝ «չինական հերմենուսիկա» ստեղծելու համար:

Սակայն այս բոլոր փորձերն ամեն դեպքում մեծ նշանակություն ունեն, քանի որ դրանք հարստացնում են հերմենուսիկ տեսությունը: Իրականում վերջին դարում որոշ գիտնականներ փորձել են ստեղծել «չինական ֆենոմենոլոգիան և չինական նշանագիտությունը»: Այս առօսմով Չինաստանի ներկա փիլիսոփայական շրջանակները, թերևս, չինական փիլիսոփայական մտածողության աղբյուրներն ավելացնում են արևմտյան փիլիսոփայության ճյուղերին՝ վերջինիս որոշ չինականացված ճյուղերը ստեղծելու համար, ինչպես կատարվում էր Սույ և Թան դինաստիաներում: Չինացի փիլիսոփաների՝ չինական փիլիսոփայական մտածողությունն արևմտյան փիլիսոփայության մի ճյուղում ներառելու այս փորձը, որի նպատակը վերջինից տարբերվող փիլիսոփայական հանակարգի ստեղծումն էր, մի կողմից կիարստացնի արևմտյան փիլիսոփայությունը (ինչպես Չանը, Թյանթայը և Յուայանը արեցին Սույ և Թան դինաստիաներում), իսկ մյուս կողմից ավելի ընդարձակ տարածություն կրացի չինական փիլիսոփայության զարգացման համար (ինչպես ներկոնքուցիականությունը Սուն և Սին դինաստիաներում): Օգնելով, որ չինական փիլիսոփայությունն ավելի հաջողությամբ մուտք գործի աշխարհի բազմազան փիլիսոփայության ոլորտ:

Գ. Մենք պետք է ստեղծենք մարքսիստական փիլիսոփայություն՝ չինական առանձնահատկություններով. մարքսիզմն ի սկզբանե արևմտյան փիլիսոփայության ճյուղ էր: Անհրաժեշտ է առանձին ուսումնասիրել մարքսիզմը, որովհետև քաններորդ դարում այն ահօնի ազդեցություն է ունեցել չինական հասարակության վրա: Այստեղ կցանկանայի ներկայացնել վաղամեռիկ փիլիսոփա Ֆեն Ցիի օրինակը: Ֆենը փորձեց մարքսիստական փիլիսոփայությունը համապատասխանեցնել չինական բնութագրին՝ կլանելով ավանդական չինական փիլիսոփայությունը և արևմտյան վերլուծական փիլիսոփայությունը: Իր «Երեք քննարկում իմաստության մասին» գրքի նախաբանում նա պնդում է. «Այս գիրքը նպատակ ունի հասկանալ մարդկությունն ու բնությունը՝ հիմնվելով պրակտիկայի ծանաչողական գործընթացի տրամախոսության (դիալեկտիկա) վրա, մասնավորապես «գիտելիքը իմաստության վերածելու» միջոցով»:

Նախ և առաջ, Ֆենը նպատակ ունի լրիտեր ոչ թե արևմտյան փիլիսոփայության, այլ չինական փիլիսոփայության «մարդկության և բնության» խնդիրը գործնական, նյութական դիալեկտիկայի միջոցով: Երկրորդ, նա կարծում է, որ «գիտելիքը իմաստության վերածելը» (մասնավորապես իմաստության ներզմբռնումը)

խնդիրը լուծելու ճանապարհ է: «Գիտելիքն իմաստության վերածելը» փոխառված է բուդդայականության բառապաշարից, որը պահանջում է, որ «գիտելիքը» պետք է բարձրացվի «իմաստության» մակարդակի, որպեսզի հասնի անդրանցականության հոգևոր ոլորտ: Երրորդ, նա հավատացած է, որ փիլիսոփայության նպատակն է աշխարհի և սեփական եսի ընկալման գործընթացները նույնացնել տեսությունները մեթոդների և առաքինությունների վերածելու գործընթացի հետ: Ըստ մարքսիզմի՝ միավորվում են տեսություններն ու մեթոդները, մինչդեռ չինական փիլիսոփայության պնդմամբ՝ միավորվում են «տեսություններն» ու «առաքինությունները»: Ֆեն Ցին պահանջում է, որ միավորվեն «տեսությունները», «մեթոդներն» ու «առաքինությունները»: Նա բացատրում է, որ ինչ-որ առումով փիլիսոփայական տեսությունները պետք է «ձևափոխվեն մտածողության մեթոդների և գործարկվեն իրենց սեփական գործունեության և հետազոտության ոլորտներում»: Բայց ի լրումն դրա, նրանք պետք է նաև «վերածվեն սեփական առաքինությունների և սեփական պրակտիկայի միջոցով մարմնավորվեն՝ որպես սեփական անհատականություններ»:

Ուստի և, չնայած Ֆենի փիլիսոփայությունը հիմնված է մարքսիստական մատերիալիստական տրամասության վրա, այն նպատակ ունի լուծել չինական փիլիսոփայության հիմնախմնդիրը կյանքի իդեալական բարոյական ոլորտին հասնելու միջոցով՝ բուդդայական մտածողությունը ներմուծելով չինական փիլիսոփայության տիրուսը («գիտելիքի ձևափոխումը իմաստության»): Անկասկած, սա մարքսիստական փիլիսոփայություն է, որն ունի չինական «քննութագիր»: Ավանդական մարքսիզմի չինականացումը կստիպի, որ մարքսիզմը Չինաստանում ավելի դարակազմիկ և ազգային բնութագիր ունենա, ինչպես, օրինակ, վերջին դարի արևմտյան մարքսիզմը (օրինակ՝ Ֆրանկֆուրտի դպրոցը):

Անշուշտ, ավելի քան մեկ դար չինական ակադեմիայում գոյություն են ունեցել մշակույթը «վերածնողներ»: Առաջին համաշխարհային պատերազմից հետո Եվրոպա վերադառնալով՝ Լյան Ցիշանոն պնդեց, որ արևմտյան մշակույթը նահանջել է, և միայն չինական մշակույթը կփրկի այն. «Չինական մշակութային գոյարանության դեկլարացիան» նույնպես ի հայտ եկավ 1930-ականներին: Չատկապես քսանմեկերորդ դարում որոշ չինացի գիտնականներ բարձրացրին «չինական կոնֆուցիականության վերահաստատման» հիմնախմնդիրը: Նրանք պնդում էին, որ «կոնֆուցիականության համակողմանի երիտասարդացումը պետք է իրագործել՝ ի պատասխան արևմտյան քաղաքակրթության առաջ ծառացած մարտահրավերների», և որ «կոնֆուցիականության երիտասարդացումը հրատապ խնդիր է չինական ազգի երիտասարդացման համար»: Չետևաբար, նրանք պաշտպանում էին կոնֆուցիականությունը՝ որպես պետական կրոն Չինաստանում՝ պետության և հնագույն ժամանակներից ի վեր դավանվող կրոնի այսպես կոչված միավորնան համար: Կարծում եմ՝ սեփական մշակույթը մեկուսացնելու և արևմտյան մշակույթին առանց վերլուծության բացառելու այս փորձը միանշանակ անցանկալի է, դեմ է համաշխարհայնացման ընթացիկ միտումին և չի կարող իրականացվել:

Չինական փիլիսոփայության զարգացման՝ վերը նշված երեք հնարավոր կողմնորոշումները, թերևս, միջոցներ են, որպեսզի չինական փիլիսոփայությունը դուրս գա «Չինաստանն ընդդեմ Արևմուտքի» և «անտիկն ընդդեմ ժամանակակցի» վեճերից և հասնի մի նոր ճանապարհի, որը կմիաձուլի թե՝ Չինաստանի, թե՝

արևմուտքի հին և ժամանակակից գիտելիքը և փիլիսոփայական մտքի զանազան դպրոցներին թույլ կտա ծավալվել ավելի ընդարձակ ոլորտներում։ Սա նշանակում է, որ արդի չինական փիլիսոփայությունը կառուցելու համար մենք պետք է մի կողմից աջակցենք չինական փիլիսոփայության առանձնահատկությանը, մյուս կողմից լավ յուրացնենք արևմտյան փիլիսոփայության էությունը։ Դրա համար անհրաժեշտ է ոչ միայն շարունակել ավանդական չինական փիլիսոփայությունը, այլև քաջություն ունենալ և պահպանել նաև արևմտյան փիլիսոփայությունը կամ արևմտյան փիլիսոփայության չինականացված ճյուղը։ Մենք չպետք է պահպանենք չինական և արևմտյան փիլիսոփայություններն այնպես, ինչպես դրանք գոյություն ունեին պատմության մեջ, այլ կրենք մեր մեջ, ինչը նոր հեռանկարներ կբացի փիլիսոփայության զարգացման համար։

## ԳԼՈՒԽ 16

### Չինական փիլիսոփայության պատմության ուսումնասիրության հեռանկարները և ճշմարիտի, բարու ու գեղեցիկի հիմնախնդիրը Չինաստանի ավանդական փիլիսոփայության մեջ<sup>105</sup>

Այժմ չինական փիլիսոփայության ուսումնասիրության մեջ մենք բախվում ենք հեռանկարների խնդրին, այն է՝ ինչպես գնահատել ավանդական փիլիսոփայությունը Չինաստանում:

Չինաստանը մեծ երկիր է, ունի երկար պատմություն և մշակութային ավանդույթ: Չինաստանի ավանդական փիլիսոփայությունն ունի հարուստ բովանդակություն և աչքի է ընկնում իր յուրահատկությամբ: Դասարակությունը զարգացել է, իսկ Չինաստանը ավելի քան 100 տարի ետքնթաց է ապրել, և քանի որ մեզ չի հաջողվել գիտական վերաբերմունք որդեգրել Չինաստանի ավանդական մտքի և մշակույթի ուսումնասիրության մեջ, բավական երկար ժամանակ չենք կարողացել խորությամբ հասկանալ Չինաստանի ավանդական փիլիսոփայության արժեքը կամ պարզել, թե որոնք են նրա թերություններն ու խնդիրները: Սակայն վերջին տարիներին այս դաշտում իրավիճակը կտրուկ փոխվել է:

Դիմելով Մարքսի մահվան 100-րդ տարեկան ոգեկոչման միջոցառման մասնակիցներին՝ Չինական կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար ընկեր Յու Յաորանն ասաց. «Պետք է հրաժարվել մարքսիզմը մարդկության մշակութային ձեռքբերումներից տարանջատելու և մեկը մյուսին հակադրելու սխալ միտունից. մենք պետք է հարգենք գիտության և մշակույթի ինացությունը»: Նկատենք, որ վերջին տարիներին շատ կարևոր երևույթ է այն, որ Չինաստանի թերթերում և պարբերական մամուլում իրական կյանքի խնդիրներին վերաբերող բազմաթիվ հոդվածներերում մեջբերվում են Յին Չինաստանում արված փիլիսոփայական դիտարկումները:

Օրինակ, «Գուաննին Ժիրան» («Բրայթ» օրաթեր) այս տարվա փետրվարի 19-ին տպագրել էր երկու կարճ հոդված: Մեկը վերնագրված էր «Տոկուն եղիր նույնականացնելու համար անգամ սրբելուց և տասը հազար անգամ ծեծվելուց հետո»: Սա Ձեն Բանցյանի «Բանրուկի մասին» բանաստեղծության տողն էր, որը հոդվածում օգտագործվել էր՝ մարդկանց մեջ համառություն քարոզելու համար: Մեկ այլ հոդված, որ վերնագրված էր «Վեյ արքան սպանեց նրանց, որոնք ճանաչուն էին իրեն, և կեղծ Վեյ արքային», անդրադառնում էր Յաոյի կասկածամիտ բնավորությանը: Յոդվածը «Ձենգուանի թագավորության ժամանակագրությունից» մեջբերում էր, թե թան դինաստիայի Թայցուն կայսրն ինչ է ասում Յեն Ռեյին. «Յոսող ջրի վճիռ կամ կեղտոտ լինելը կախված է նրա աղբյուրից: Կայսրը կառավարման աղբյուրն է, և հասարակ մարդիկ նման են ջրի: Եթե կայսրն ինքը անազնիվ չէ, բայց ստիպում է, որ խորհրդականներն ազնիվ դրսևորեն իրենց, նույն է, ինչ սպասել, որ

<sup>105.</sup> Կոնֆուցիականություն, բուդդայականություն, դառսիզմ, քրիստոնեություն և չինական մշակույթ, 1991: 5-16

ցեխուտ աղբյուրից վճիռ ջուր կհոսի. սա անխոհեմություն է»: Նույն երևույթը կարելի է նկատել բազմաթիվ գրական երկերում: Վերցնենք, օրինակ, «Պսակ՝ բարձր լեռան լանջին» հակասական կարծ պատմվածքը, որը նկարագրում է, թե մի հրամանատար ինչպես է քննադատում մի բարձրաստիճան պաշտոնյայի տիկնոջը: Որպես հանդիմանանք՝ հրամանատարը մեջքերում է Դու Մուի «Ե-Փանի պալատի էպոսը» գործից՝ ասելով. «Ցինի ժողովուրդը սգալու ժամանակ չուներ, և նրանց մահը սգում էին ուղիշները, Ցինից հետո: Եթե Ցինից հետո մարդիկ սգային, բայց չընդունեին գգուշացումը, ապա նրանցից հետո եկողները կսգային նրանց մահը»:

Այսպիսի բազմաթիվ օրինակներ կարելի է գտնել ամենուր՝ թերթերում ու պարբերական մամուլում: Այս ամենի արդյունքում ծագում է հետևյալ հարցը. քանի որ բազմաթիվ հին ասացվածքներ դեռևս մեծ կարևորություն ունեն մեզ համար այսօր՝ ժամանակակից Չինաստանում, և ծառայում են՝ որպես իրական կյանքում մեր վարժագիր անփոխարինելի ուղեցույց, ապա առհասարակ ի՞նչ արժեք ունի Չինաստանի ավանդական փիլիսոփայությունը: Երևում է՝ կարիք կավերարժնորել Չինաստանի ավանդական փիլիսոփայությունը:

Եթե ընդունենք, որ փիլիսոփայական գաղափարները կարող են մարմնավորել ծշմարիտի, բարու և գեղեցիկի խնդիրները, ապա արդյո՞ք ավանդական չինական փիլիսոփայությունը որևէ արժեքավոր կամ յուրահատուկ արդյուր ունի: Կարծում եմ՝ ունի, և այն նշանակալի է: Մենք կարող ենք հիմնախնդիրն նոտենալ երկու կողմից. մեկը մտածողության բովանդակությունն է, մյուսը՝ կյանքի հանրեալ մոտեցումը, և այս երկու կողմերը սերտորեն կապակցված են:

## 16.1 Չինական փիլիսոփայությունը՝ որպես եռակի միացում

Ծշմարիտի, բարու և գեղեցիկի հիմնախնդրի վերաբերյալ ավանդական չինական փիլիսոփայությունն ունի երեք հիմնավորում, որոնք մեծ ազդեցություն ունեն չինական մտածողության վրա. «Երկնքի միացումը մարդուն», որն ուսումնասիրում է աշխարհի միասնությունը. «Գիտելիքի միացումը պրակտիկային». սա երիկական չափանիշների խնդրին է. «զգացնութիւնը միացումը պատկերին». սա առնչվում է արվեստի գործերի ստեղծմանն ու գնահատմանը:

### 16.1.1 Երկնքի միացումը մարդուն. Ծշմարիտը

Տարբեր փիլիսոփաներ տարբեր կերպ են սահմանում «Երկինք» և «մարդ» երկու հասկացությունները: Այնուամենայնիվ, «Երկնքի ճանապարհը» վերաբերում է տիեզերքի հիմքին կամ ամբողջ տիեզերքին: «Մարդու ճանապարհը» հաճախ վերաբերում է մարդկային հասարակությանը կամ հենց մարդուն: Երկնքի ու մարդու հարաբերությունը մշտապես եղել է չինացի մտածողների ուսումնասիրած հիմնարար խնդիրը:

Սիմա Ցյանը իր «Պատմական արձանագրություն» երկն անվանում է գիրք, որը «հետազոտում է Երկնքի և մարդու հարաբերությունները»: Դուն Չունշուն նկարագրել է, որ նկատի ուներ գիտելիքի մի ճյուղ, որն «ուսումնասիրում է, թե մարդն ինչպես է կապվում Երկնքի հետ»: Վեյ և Չին դինաստիաների մետաֆիզիկայի հիմնադիրներից մեկը՝ Յե Յանը, մեկ այլ հիմնադիր՝ Վան Բիին համարում

Էր որակավորված փիլիսոփա, որն «ի վիճակի է քննարկել Երկնքի և մարդու հարաբերությունները»: Չինաստանի դառսիզմի (թառսիզմ) խսկական հիմնադիր Թառ Յունձինն ասում էր, որ միայն դառսական առաջնորդ Յան Յուանն էր հասկանում, որ «ինքը նկատի ուներ Երկնքի և մարդու» խնդիրը: «Երկնքի և մարդու» հարաբերությունն ավանդական չինական փիլիսոփայության մեջ բացատրվել է տարբեր տեսությունների միջոցով: Օրինակ, Չուանցին պահանջում էր, որ «պետք է տարբերակում մտցնել Երկնքի և մարդու» միջև և տեսականորեն հիմնավորում էր, որ «նրանք, որ անտեղյակ են Երկնքից, ոչինչ չգիտեն մարդու մասին»: Ավելին, «Երկնքի և մարդու հարաբերությունների» խնդիրը հաճախ իր արտահայտությունն է գտնել «քննության» և «կոնֆուցիական էթիկական վարքագծի» հարաբերության քննարկման մեջ: Այնուամենայնիվ, ավանդական չինական փիլիսոփայության հիմնական ուղղության գլխավոր խնդիրը «Երկնքի և մարդու միավորման» ցուցադրումը կամ բացատրությունն է:

Կոնֆուցիոսն ավելի շատ խսել է «մարդկային գործերի» և ավելի քիչ՝ «Երկնքի իշխանության» մասին: Այնուամենայնիվ, նա նաև հավատում էր, որ «սուրբն ասում է»՝ պետք է «պահպանել Երկնքի իշխանությունը»: Կարելի է ասել, որ Մենցիոսն այն փիլիսոփան է, որն առաջինը տվեց «Երկնքի և մարդու» միասնության համապարփակ գաղափարը: Օրինակ, նա ասում էր. «Գործիր սրտով, ինացիր շատ և հասկացիր Երկնքը», «Եղիր Երկնքին և Երկրին համընթաց՝ վերևում և ներքևում»: Չնայած Սունցին պաշտպանում էր «Երկնքի և մարդու տարբերակումը», նրա հիմնական նպատակն էր՝ «Երկնքի կամքը ծառայեցնել մեր շահերին», որպեսզի «Երկնքը» միանա մարդուն: Լաոցին (Լառ Ցու) դառսական դպրոցից պնդում էր. «Մարդը հետևում է Երկրին, Երկիրը՝ Երկնքին, Երկինքը հետևում է ճանապարհին, իսկ ճանապարհը՝ բնությանը»:

Նոյնիսկ Չուանցին, որը «տեղյակ չէր Երկնքից և ոչինչ չգիտեր մարդու մասին», ասում է. «Երկինքն ու Երկիրը կողք կողքի ապրում են ինձ հետ, և Երկրի վրա ամեն ինչ նույնացվում է ինձ հետ»: Նա նաև ասում էր, որ գերագույն մարդը կարող է «հաղորդակցվել Երկնքի, Երկրի և ոգու» հետ: Դուն Չունշուն քարոզում էր այն գաղափարը, որ «Երկինքն ու մարդը պատասխանում են մինյանց», և ըստ նրա փաստարկի՝ այս Երկուսը միավորված են: Վեյ և Չին դինաստիաների մետաֆիզիկան հիմնականում քննարկում է «քննության» և «կոնֆուցիական էթիկական վարքագծի» հարաբերությունը: Չնայած Զի Քանը (Զի Քան) և Յուան Չին պնդում էին, որ «պետք է անտեսել էթիկական վարքագիծը և հետևել բնությանը», մետաֆիզիկական դպրոցի հիմնական ուղղությունը շեշտում էր, որ «էթիկական վարքագիծը» պետք է հաշտվի «քննության» հետ: Եթե Վան Բին ընդունում էր այն գաղափարը, որ «ներքինն ու արտաքինը մեկն են», նա պնդում էր, որ պետք է քաջալել, որ «հիմնականները (բնությունը և Երկնքի ծանապարհը)» կառավարեն ոչ հիմնականներին (էթիկական վարքագիծի կանոնները և աշխարհիկ հարցերը): Ընդգծելով, որ «ներքինն ու արտաքինը մեկն են», Գուռ Սյանը հավատացած էր, որ «չկա ներքին՝ արտաքինից անդին» և, հետևաբար, եզրակացնում էր, որ «Երկինքն ընդհանուր եզրույթ է Երկրի վրա ամեն ինչի համար»:

Մինչև Սուն դինաստիայի սկիզբը կոնֆուցիական փիլիսոփա Չոու Դունին նշում էր ավելի պարզ եզրույթներով. «Սուրբն իր առաքինությունը բաշխում է Երկնքին և Երկրին» և «սուրբը Երկինք է տենչում»: Չան Ցայն իր «Արևամտյան գրություններ» գրում գրում է. «Այն, ինչ արգելափակում է Երկինքն ու Երկիրը, ին-

Աերքինն է. այն, ինչ տնօրինում է Երկինքն ու Երկիրը, իմ բնավորությունն է»: Երկու Չենը տեսականորեն բացատրում է, որ «ներքինն ու արտաքինը բխում են նույն աղբյուրից» և պնդում. «Երկնքում այն ծակատագիր է, մարդու մեջ՝ բնավորություն, իսկ մարմինը տնօրինողը սիրտն է: Իրականում դրանք նույն են»: Չու Սին պնդում էր, որ «Երկինքը մարդ է, մարդը՝ Երկինը: Մարդը ծագում է Երկնքից: Երբ այս մարդը ծնվում է, Երկինքը հաճգրվանում է նրա մեջ»: Ապա ավելացնում է. «Սուրբը... միանում է Երկնքին»: Վան Յանմինն ասում է. «Սիրտը Երկինք է: Սրտի կարևորության ընդգծումը խրախուսում է Երկինքը, Երկիրը և ամեն բան»: «Մարդն իրականում նույնանում է Երկնքի, Երկրի ու ամեն ինչի հետ»: «Սիրտը չունի ներքին, բայց Երկնքի, Երկրի և այլ իրերի արձագանքը համարում է ներքին»: Ավելի ուշ Վան Ֆութին առաջ է քաշում այն գաղափարը, որ մարդը շարժվում է Երկնքի գոլորշացմանը զուգահեռ, որով էլ բացատրում է Երկնքի և մարդու միասնության սկզբունքը: Նա ասում է. «ճակատագիրն իրագործվում է օրերի ընթացքում, բնավորությունը ծևակորպվում է օրերի ընթացքում»: «Չկա մի օր, որ Երկնքը չնտածի ծակատագիր մասին, և չկա մի օր, որ մարդն իր ծակատագիրը չիանձնի Երկնքի ծեռքը»:

Ինչ Վերաբերում է ավանդական չինական փիլիսոփայությանը, խոշոր փիլիսոփաները՝ թե՛ մատերիալիստները, թե՛ իդեալիստները, խոսում էին «Երկնքի և մարդու միավորման» խնդրի մասին: Վերլուծելով նրանց տեսությունները՝ կարող ենք մոտավորապես հանգել հետևյալ եզրակացություններին. նախ, ավանդական չինական փիլիսոփայության մեջ «Երկնքի և մարդու միացման» հասկացությունն արտահայտում է իրերը իրենց ամբողջության մեջ դիտարկելու գաղափարը: Սա ավելի շատ ուղղակի նկարագրություն է, քան մանրամասն վերլուծություն. մենք կարող ենք դա կոչել ուղղակիորեն ընկալված «ընդհանուր հասկացություն»: Երկրորդ, ավանդական չինական փիլիսոփայության մեջ «Երկնքի և մարդու միավորման» գաղափարի հիմնական փաստարկը հետևյալն է՝ «Ներքինն ու արտաքինը մեկ են». Երկնքի ճանապարհների և մարդու միասնությունը «թե՛ ներքին է, թե՛ արտաքին»: Երկնքի ճանապարհը ծառայում է՝ որպես ներքին, իսկ մարդու ճանապարհ՝ արտաքին: Սա կարելի է կոչել «միասնության բացարձակ հասկացություն»: Երրորդ, ավանդական չինական փիլիսոփայությունը «մարդու ճանապարհը» չի դիտարկում քարացած իրողություն. ավելին, այն նաև նկատում է «Երկնքի ճանապարհի աշխուժությունն ու անվերջ կենսունակությունը: «Երկինքը շարժվում է առողջ ճանապարհով, և մարդը պետք է անդադար ջանք գործադրի բարեփոխվելու համար»: Այն, որ մարդկային հասարակությունը պետք է շարժվի առաջ, և մարդը պետք է աշխատի իր վլա, պայմանավորված է «Երկնքի ճանապարհ» զարգացումից հետ չննալու անհրաժեշտությամբ: Սա կարելի է կոչել «անսահմանափակ զարգացման հասկացություն»: Չորրորդ, ավանդական չինական փիլիսոփայության մեջ «Երկնքը» օրինակ է, իսկ «մարդու ճանապարհ» պետք է համապատասխանի «Երկնքի ճանապարհին»: Սակայն «մարդը» Երկնքի ու Երկրի սիրտն է. նա պետք է ողջ սրտով նվիրվի Երկնքին ու Երկրին: Առանց «մարդու» Երկինքն ու Երկիրը զուրկ կլինեին կենսունակությունից, բանականությունից կամ բարոյականությունից: Սա կարելի է կոչել էթիկայի «մարդափրական գաղափար»: Վերը նշված չորս հասկացությունները ներկայացնում են «Երկնքի և մարդու միասնության» գաղափարի ընդհանուր առնչությունը ավանդական չինական փիլիսոփայության մեջ:

### 16.1.2 Գիտելիքի միացումը պրակտիկային. բարին

«Գիտելիքի և պրակտիկայի» խնդիրը գիտելիքի տեսության հիմնախնդիր է. ավանդական չինական փիլիսոփայության մեջ, սակայն, այս խնդիրն ավելի շատ առնվազում է եթեկային ու բարոյականությանը: Եթե ավանդական չինական փիլիսոփայության մեջ գիտելիքի տեսության հարցը չի կապվել եթեկայի հարցին, ապա բարդ կլինի այն փոխանցե՛ որպես ավանդական փիլիսոփայության մի մաս: Յետևաբար, գիտելիքի տեսության խնդիրը հաճախ նաև եթեկայի խնդիր է: Սա է պատճառը, որ փիլիսոփաների կարծիքով՝ մարդը ոչ միայն պետք է ձգտի «գիտելիք» ստանալ, այլև պետք է հատուկ ուշադրություն դարձնի նրա «կիրարանը» (պրակտիկա):

Ի՞նչ է «բարին (լավը)»: «Բարու (լավի)» չափանիշը տարբեր է, բայց ըստ ավանդական չինական փիլիսոփայության՝ «գիտելիքի» և «գործնական կիրարանան» միասնությունը նրա անհրաժեշտ նախապայմանն է: Չինական փիլիսոփայության պատմության մեջ կարող ենք հանդիպել գիտելիքի և վարժագծի հարաբերության բազմաթիվ տարբեր բացատրություններ: Ըստ «Դասական պատմություն» գրքի (գլուխ 1, «ճակատագրի մասին»)` վաղուց հայտնի է, որ «դժվար չէ իմանալ, բայց դժվար է կիրառել իմացածը»: Ավելի ուշ երկու Չեն գիտնականներ փաստում են, որ «գիտելիքը նախորդում է պրակտիկային»: Զու Սին այն կարծիքի էր, որ «գիտելիքն ու նրա գործնական կիրառումը» փոխադարձաբար ծնունդ են տալիս միմյանց»: Վաճ Ֆուչին տեսության միջոցով բացատրում էր, որ «պրակտիկան է նախորդում գիտելիքին», իսկ Սուն Չունչանը առաջ էր քաշում այն գաղափարը, որ «ինչ-որ բան իմանալը ավելի դժվար է, քան իրագործելը» և այլն: Ընդհանուր առմանք կարող ենք ասել, սակայն, որ «գիտելիքի և պրակտիկայի միացման» գաղափարը նկատելի է ավանդական չինական փիլիսոփայության ողջ ընթացքում՝ սկզբից մինչև վերջ:

Կոնֆուցիոսի ժամանակներից սկսած՝ «խոսքերի համաձայնությունը արարթ ների հետո» մշտապես օգտագործվել է որպես եթեկական չափանիշ՝ ազնվականին ոճրագործից տարբերակելու համար: Կոնֆուցիոսն ասում է. «Ազնվականն ամորի զգացում է ունենում, երբ չի կարողանում խոսքերը համաձայնեցնել գործողությունների հետ»: Մենցիոսն ընդգծում էր «ներըմբռնողական գիտելիքը» և «ներըմբռնողական կարողությունը»: Չնայած նա չորս գործոնները, այդ թվում և «ափսոսանքի զգացումը» համարում էր ներհատուկ, նրա կարծիքով՝ անհրաժեշտ է «խթանել և խրախուսել» բարեգործությունը, արդարանտությունը, ծեսն ու իմաստությունը, որոնք արդեն իսկ դարձել են բարոյական չափանիշներ: Քանի որ դրանք կարելի է ձեռք բերել միայն բարոյական պրակտիկայի միջոցով, նա փաստում էր, որ «ազնիվ հոգին պետք է զարգացնել»: Զուանցին շեշտում էր, որ «պրակտիկան» «գիտելիքի» որոնման նպատակն է. միևնույն ժամանակ նա խոստովանում էր, որ առաջնորդող «գիտելիքը» հող է նախապատրաստում «գործնականում նրա կիրառության» համար: Նա ասում է. «Ով գործնականում կիրառում է, գիտի: Նա, ով գիտի, սուրբ է»: Յետևաբար, որպես սուրբ՝ մարդը պետք է «միավորի գիտելիքն ու փորձը»:

Սինչ Սուն դիմաստիայի սկիզբը կոնֆուցիական փիլիսոփա Չեն Ին, չնայած իր այն կարծիքին, որ «գիտելիքը նախորդում է պրակտիկային», պնդում էր, որ բարոյականության և ինքնազարգացման տեսանկյունից «նա, ով գիտի, բայց չի

Կարող կիրառել գործնականում, իրականում չգիտի»: Յետևաբար, Յուան Ցունսին նշում էր. «Պարոն Չենն արդեն իսկ գաղափար ուներ գիտելիքը պրակտիկայի հետ միավորելու մասին» (Սուն և Յուան դիմաստիաների ակադեմիական քարտարաններ, հատոր 75): Զու Սին ժառանգել էր Չեն իի տեսությունը, որ «գիտելիքը նախորդում է պրակտիկային», բայց նա մասնավորապես շեշտում էր, որ «Երկուսն էլ փոխադարձաբար կախյալ են» և «գիտելիքի և պրակտիկայի ուղղությամբ ջանքերը պետք է կողք կողքի լինեն»: Նա բացատրում է. «Ինչ վերաբերում է հերթականությանը, ապա գիտելիքը նախորդում է. ինչ վերաբերում է կարևորությանը, ապա պրակտիկան ավելի կարևոր է»: Յետևաբար, որոշ մարդիկ Չենի և Զուի տեսակետները նկարագրում էին՝ որպես «գիտելիքի և պրակտիկայի միացման տեսություն, որտեղ շեշտը դրվում է վերջինիս վրա»: Զնայած «գիտելիքը» «պրակտիկայի» հիմքն է, «գիտելիքը մակերեսային է, եթե միայն ձեռք է բերվել, բայց դեռևս չի կիրառվել գործնականում»: «Երբ մարդն անձանք փորձարկում է իր գիտելիքը, այն դառնում է ավելի խոր և տարբերվում է նրանից, ինչ նա գիտեր նախկինում»: Այն, որ Զու Սին շեշտում էր «պրակտիկան», պայմանավորված էր նրանով, որ նա «գիտելիքը» և «պրակտիկան» հաճարում էր բարոյականության խնդիր: Եվ հենց այդ պատճառով էլ նա դիտարկում է. «Որտեղ էլ որ լինի, մարդը պետք է գործնականում կիրառի բարին: Երկար ժամանակ այն կիրառելուց հետո այն կնույնանա սեփական եսի հետ, իսկ երբ նույնանա, կդառնա սեփական եսի մասը: Եթե մարդուն չի հաջողվում կիրառել այն, լավը մնում է լավ, իսկ անձը՝ անձ. Նրանք ոչ մի կապ չեն ունենում միմյանց հետ»:

Ավանդական չինական փիլիսոփայությունը հաճախ պաշտպանում էր «ճանապարհի» (Դառ) գործնականում կիրառելու» գաղափարը: Գաղափարը թերևս երկակի ներիմաստ ունի. առաջինը «ճանապարհով կիրառելը», այսինքն՝ գործնականում լրջորեն կիրառել «ներիմը»: Յետևաբար, սա միայն ընկալման խնդիր չէ: Ինչ վերաբերում է «գիտելիքի և պրակտիկայի միասնության» Վան Յանմինի տեսությանը՝ բնականաբար բոլորս էլ գիտենք այդ մասին. սակայն, պարզվում է, որու ընկալումն ամբողջությամբ ճիշտ չէ: Մեջքերելով նրա դիտարկումը՝ «պրակտիկան սկսվում է, երբ միտք է հղացվում», մարդիկ հաճախ այն նկարագրում էին «պրակտիկան գիտելիքին վերագրելու» և «գիտելիքը որպես պրակտիկա ընկալելու» միջոցով: Իրականում Վան Յանմինը հավասարության նշան չէր դնում «գիտելիքի» և «փորձի» միջև: Այն դիտարկումը, որ «պրակտիկան սկսվում է այն ժամանակ, երբ գաղափար է հղացվում», արվել է բարոյականության և ինքնազարգացման համատեքստում: Դրանից անմիջապես հետո նա ավելացնում է. «Եթե գաղափարը լավը չէ, պետք է ճնշել այն: Պետք է ավելի ու ավելի ճնշել այն, որպեսզի այդ վաս գաղափարը չքարնվի մեր սրտերում»: Նա նաև ասում է. «Խոր ու ծանրակշիռ գիտելիքի հիմքում ընկած է փորձը, իսկ գիտակից և ծշգրիտ փորձի հիմքում՝ գիտելիքը: Գիտելիքի և փորձի վրա ծախսած ջանքերն ի սկզբանե անբաժանելի են: Միայն հետագա դարերի գիտնականները դրանք բաժանեցին երկու մասի և կորցրին գիտելիքի և փորձի եռլրյունը»:

Ինչ վերաբերում է գիտելիքի և պրակտիկայի հարաբերություններին, Վանը հստակ բացատրում է. «Գիտելիքը գաղափար է տալիս պրակտիկային, իսկ վերջինս գիտելիքի բափած ջանքն է: Գիտելիքը պրակտիկայի սկիզբն է, իսկ պրակտիկան՝ գիտելիքի վերջնական արդյունքը»: Գիտելիքի տեսության տեսանկյու-

նից կարելի է կարծել, որ Վան Յանմինը «պրակտիկան ներառում էր գիտելիքի մեջ»: Սակայն բարոյականության և ինքնազարգացման տեսանկյունից շեշտը գիտելիքի և պրակտիկայի միասնության վրա» դրական նշանակություն ունեցավ:

Մինչ Մին և Ցին դինաստիաների հատման կետը Վան Ֆուշին առաջ էր քաշում այն գաղափարը, որ «պրակտիկան նախորդում է գիտելիքին», իսկ «փորձով նույնական կարելի է գիտելիքը ձեռք բերել»: Սակայն նա դեռևս շեշտում էր «գիտելիքի և պրակտիկայի միասնությունը», երբ անդրադառնում էր բարոյագիտության հիմնախնդիրն: Նա կարծում էր, որ «Երբ դրանք լրացնում են իրար, գործընթացը կոչվում է կիրառում, իսկ երբ երկուսն էլ կողք կողքի առաջընթաց են ապրում, գործընթացը կոչվում է ձեռքբերում»: Նա քննադատում էր Վան Յանմին՝ «գիտելիքի և պրակտիկայի միասնության» գաղափարը և ասում, որ Վանը «տեղյակ չէ այն փաստից, որ երկուսն էլ ունեն իրենց առանձին կիրառությունը և լրացնում են իրար»: Ինչևէ, Վան Ֆուշին նույնական պաշտպանում էր «գիտելիքի և պրակտիկայի միասնությունը»: Նա ասում էր.

Երբ ասում ենք, որ ինչ-որ մեկը օքաղվում է գիտելիքով և նրա գործնական կիրառությամբ, նկատի ունենք, որ նա իրեն նվիրում է գիտելիքի որոնումներին և զանք չի խնայում փորձ ձեռք բերելու համար: Իր նվիրումի և զանքերի շնորհիվ նա ձեռքբերումներ է գրանցում և կիսում ուրիշների հետ: Քանի որ կարելի է ձեռքբերումներ ունենալ և կիսել դրանք, հնարավոր է սահմանել իրերի հաջորդականությունը: Երբ իրերի հաջորդականությունը սահմանված է, նախորդն ու հաջորդ կարող են լրացնել իրար: Գիտելիքից մարդու իմանում է, թե ինչն է կիրառվում գործնականում, իսկ կիրառությունից իմանում է, թե ինչն է կիրառում գործնականում: Այսպիսով, կարել է ասել, որ երկուսն էլ համատեղ առաջընթաց են ապրում ու հետևաբար, ձեռքբերումներ գրանցում:

Այն, որ գիտելիքն ու փորձը կարող են առաջընթաց ապրել կողք կողքի, ցույց է տալիս, որ, ըստ Վերջնական վերլուծության, երկուսն էլ բարոյական հիմնախնդիր են: Ըստ Վան Ֆուշին՝ «իմաստունը նա է, ով գիտի ծեսերը: Ծեսերին տեղյակ մարդը գործնականում կիրառում է գիտելիքը: Գիտելիքը գործնականում կիրառելու դեպքում բոլոր ծիսակատարությունները պատշաճ կերպով կկատարվեն. ծեսերն իմանալու դեպքում կծնվեն բոլոր հիմնական մտքերը: Այդպիսով մարդը յուրաքանչյուր անցնող օրվա հետ կրարենիսի իրեն, և դա անվերջ կլինի»: Սուլրը «իր իմացությունը համադրում է անկեղծության հետ: Նա գործնականում կիրառում է այն, ինչ գիտի, և այն, ինչ նա կիրառում է, դառնում է գիտելիք»: Ահա թե ինչպես պետք է գործի մարդը՝ ըստ ավանդական չինական փիլիսոփայության:

Այժմ ավանդական չինական փիլիսոփայության մեջ գերակշռում է այն տեսակետը, որը հաստատում է, որ «Սուն և Մին դինաստիաներից ի վեր ներկոնֆուցիականները, գիտելիքն ու փորձը քննարկելիս, հաճախ գիտության տեսության այս հիմնախնդիրը շփոթում էին բարոյագիտության հիմնախնդիրի հետ»: Ըստ նրա՝ ինց այստեղ են չինական անտիկ փիլիսոփաների սահմանափակումներն ու սխալները: Այս իմաստով երկու հարցերն էլ արժանի են քննարկման:

Նախ, Սուն և Մին դինաստիաներից ի վեր ներկոնֆուցիականները, ըստ Էռլյան, գիտելիքն ու պրակտիկան չէին համարում միայն գիտելիքի տեսության հիմնախնդիր: Նրանք կարծում էին, որ հիմնախնդիրը կարևոր է, որովհետև այն կապված էր բարոյականության և ինքնազարգացման հետ: Գիտելիքի և պրակտիկայի հարաբերությունների նրանց քննարկման վերջնական նպատակը բարոյա-

կան զարգացումն էր: Յետևաբար, կասկածից վեր է, որ նեռկոնֆուցիականները գիտելիքի տեսության հիմնախնդիրը շփոթում էին բարոյականության տեսության հետ: Երկրորդ, չի կարելի ասել, որ որպես բարոյականության և ինքնազարգացման հիմնախնդիր՝ գիտելիքի և նրա գործնական կիրառման միասնության տեսությունը և գիտելիքի և փորձի միասնության տեսակետը չունեն դրական նշանակություն: Էթիկայի տեսանկյունից, գիտելիքն ու պրակտիկան չեն կարող բաժանվել երկու մասի: անհրաժեշտ է, որ «գիտելիքը միանա պրակտիկային»: Վաս Յանմինի այն դիտարկումը, որ «գիտելիքը պրակտիկայի նպատակն է, իսկ պրակտիկան՝ գիտելիքի հիմքը, գիտելիքը պրակտիկայի սկիզբն է, իսկ պրակտիկան՝ գիտելիքի վերջնական արդյունքը», կարծես թե լավագույն ամփոփումն է, որ չինացի անտիկ փիլիսոփաներն արել են այս հիմնախնդիրի վերաբերյալ:

### 16.1.3 Զգացմունքի միացումը պատկերին. գեղեցիկը

Սա գեղագիտական հիմնախնդիր է, որը Վաս Գուլվեյը խորությամբ քննարկել է իր «Պատահական գրուցներ պոեզիայի նախն» գրքում: Նա ասում է. «Ոլորտը պոեզիայի բարձրագույն որակն է: Ոլորտ ունենալու դեպքում բանաստեղծությունը կարող է ունենալ բարձր որակ և հայտնի տողեր»:

Ի՞նչ է նշանակում «ոլորտ»: Վաճառ բացատրում է, որ «ոլորտը չի վերաբերում միայն պատկերին: Բերկրանքը, բարկությունը, վիշտը և ուրախությունը նույնպես մարդու սրտի ոլորտն են: Յետևաբար, երբ բանաստեղծությունը կարողանում է ներկայացնել ծշմարիտ պատկեր և ծշմարիտ զգացմունքներ, կարելի է ասել, որ այն ունի ոլորտ: Յակառակ դեպքում, կարելի է ասել, որ այն գուրկ է ոլորտից: Ակնհայտ է, որ «ոլորտ» եզրույթը վերաբերում է ոչ միայն պատկերին, այլև «զգացողություններին»: «Չյալինի ձեռագրերը, որոնք քննարկում են պոեզիան» գործում Յե Չյահնը մատչելի բացատրում է Վաս Գուլվեյի «ոլորտի տեսությունը» Ըստ Յեի՝

Ոլորտի առաջացումն ամբողջությամբ կախված է մեր ընկալման զգացողությունից: Ոլորտի գոյությունն ամբողջությամբ կախված է նրանից, թե ինչի կարող է հասնել մեր ընկալունք: Յետևաբար, արտաքին աշխարհը չի կարելի կոչել ոլորտ, քանի դեռ մենք չենք չենք կարողացել վերարտադրել այն մեր ընկալման զգացողության գործառույթի միջոցով: Դատելով այս եզրակացությունից՝ ոլորտի տեսությունը, որը պաշտպանում է Վաճառ, ըստ Էության, նույն ծագումն ունի, ինչ Յանլանի հետաքրքրության տեսությունը և Յուան Թինցիի ռոնանտիկ գրավչության տեսությունը:

Վաս Գուլվեյից հետո Բու Յենթուն իր «Յարցեր և պատահսամներ նկարչության մեթոդների նախն» գրքում գրում է. «Բնանկարչությունն իրականում զգացմունքի և պատկերի նկարչությունն է, իսկ զգացմունքն ու պատկերը ոլորտ են»: Սա է պատճառը, որ Վաս Գուլվեյը դիտարկել է. «Երբ մարդիկ անցյալում քննարկում էին պոեզիան, նրանք չափածոն բաժանում էին երկու խմբի՝ պատկեր նկարագրող և զգացմունք պատկերող: Նրանք չգիտեին, որ պատկեր նկարագրող բոլոր բանաստեղծությունները զգացմունք են պատկերում»: Ակնհայտ է, որ Վաս Գուլվեյը բարձրածաշակ ստեղծարար գործ էր համարում այն գրական ստեղծագործությունները, որոնք «զգացմունքն ինտեգրում են պատկերին»: Սակայն «զգացմունքի՝ պատկերի հետ միավորման» այս գեղագիտական տեսակետը չի

**Ակսվել Վաճ Գուլվեյից:**

Ընդհանուր առնամբ, միայն Վեյ և Չին դինաստիաների ժամանակահատվածում էր, որ Չինաստանի գրականության և արվեստի տեսությունն իսկապես անկախացավ՝ որպես կրթության ճյուղ, և այդ ժամանակ «զգացմունքի և պատկերի միավորնան» գաղափարն արդեն իսկ գոյություն ուներ: «Պոեզիայի աստիճանների ներածություն» գրքում Զուն Ժունն ասում է.

Այն բանաստեղծությունները, որոնց յուրաքանչյուր տողում կա չորս նշան, կարող են օգտակար լինել, միայն եթե քիչ բառերով շատ իմաստ արտահայտեն և կառուցվեն գերազանց գրական ստեղծագործությունների օրինակով: Սակայն խնդիրն այն է, որ դրանք հաճախ պարունակում են բազմաթիվ բառեր, բայց՝ աղքատիկ բովանդակություն: Յետևաբար, քիչ մարդիկ կարող են նման բանաստեղծություններ գրել: Այն բանաստեղծությունները, որոնց յուրաքանչյուր տողում կա հինգ նշան, առաջնային տեղ են զբաղեցնում գրականության մեջ և աչքի են ընկնում՝ որպես բազմազան գրական ժանրերից ամենաընդունելին՝ այսպիսով արժանանալով համընդիանուր գովեստների: Արդյո՞ք պատճառն այն չէ, որ դրանք ամենայն մանրամասնությամբ և ճշմարտացիորեն պատճում են իրադարձություններ, արթնացնում պատկերներ ու զգացմունքներ և պատկերում երևույթներ: Յետևաբար, գոյություն ունի պոեզիա գրելու երեք մոտեցում. առաջինը՝ ենթադրություն, երկրորդ՝ համենատություն, երրորդ՝ պատում: Ենթադրություն ասելով նկատի ունենք բանաստեղծությունը, և ոչ թե բառերը, որոնցից այն կազմված է: Սեփական մտադրությունը ներկայացնելու համար մեջբերումներ անելը համեմատություն է: Իրադարձության ուղղակի նկարագրությունը, որը մարմնավորում է գաղափարը, պատում է: Նկատի առնենք այս երեք մոտեցումները և ընտրենք ամենահարմարը՝ նրան ավելացնելով հմայք և ուժ, այն հղկելով գույնով, որպեսզի ընթերցողները հայտնաբերնեն նրա անսահման հմայքը, իսկ ունկնդիրները հուզվեն: Սա կլինի բարձրակարգ բանաստեղծություն:

«գլուխգործոցը», «գերազանց գործը» պետք է «զգացմունքը պատկերի հետ ինտեգրելու» գաղափարի նախատիպն է: Սյե Չենը՝ Մին դինաստիայի հետագա յոթ գիտնականներից մեկը, ասում է «Չորս ծովերի բանաստեղծական քննարկումներ» գործում. «Պոեզիան կազմված է զգացմունքից և պատկերից: Մեկը չի կարող առանց մյուսի, մեկը չի կարող բախվել մյուսին»: Նա նաև ասում է. «Պոեզիան զգացմունքն ու պատկերը ներկայացնելու գործիք է: Զգացմունքը հալվում է ներս, հոսում խոր ու երկար. պատկերը փայլում է դրսում, տարածվում հեռու ու լայն»: «Բանաստեղծական քննարկումներ՝ Չինջըր ստուդիայից» գրքում Վաճ Ֆուչին ավելի պարզ է ներկայացնում խնդիրը. «Զգացմունքն ու պատկերը երկու տարբեր բառեր են, բայց իրականում անբաժան են»:

Հնուտ բանաստեղծները փայլուն գործեր ստեղծելու անսահմանափակ հնարավորություններ ունեն: Ինքնատիպ բանաստեղծություններում «պատկերը զգացմունքի մեջ է, զգացմունքը՝ պատկերի»: «Զգացմունքը ծնվում է պատկերի մեջ, իսկ պատկերն առաջանում է զգացմունքից: Սա է պատճառը, որ կարող ենք ասել՝ պատկերը զգացմունքի պատկերն է, իսկ զգացմունքը՝ պատկերի զգացմունքը»: «Երբ զգացմունքը միանում է պատկերին, անմիջապես ի հայտ են գալիս սրամիտ արտահայտություններ»: Այս վերջին նախադասությունը թերևս արվեստի ու գրականության Չինաստանի ավանդական տեսության գլխավոր հիմ-

նավորումն է, որն արտահայտում է «գեղեցկության» մասին նրա հիմնական տեսակետը: Չինաստանի ավանդական մտածողության մեջ այն, ինչ գեղեցիկ է, մշտապես կապվել է լավի կամ բարու գաղափարի հետ: «Յիմնականը գեղեցիկ է» արտահայտությունը վերաբերում է հոգևոր ոլորտին, որտեղ մարդն ազնիվ հաճույք է ապրում: Լսելով «Ուի» (ոչինչ, օրինակ՝ հնչյունին հաջորդող լուսաբանը) երաժշտությունը՝ Կոնֆուցիոսը մեկնաբանել է. «Այն ամբողջությամբ գեղեցիկ է, բայց ամբողջությամբ բարի չէ», իսկ «Շաոյի» (քիչ) երաժշտությունը լսելուց հետո նշել է. «Այն ամբողջությամբ բարի է և նաև՝ ամբողջությամբ գեղեցիկ»: Միայն երաժշտությունը, որ «ամբողջությամբ բարի է ու նաև ամբողջությամբ գեղեցիկ», կարող է հանարվել բարձրագույն և ամենաինեալական երաժշտություն: Սա վերաբերում է երաժշտությանը և պետք է կիրառվի նաև այլ արվեստների դեպքում: Այն արվեստը, որն «ամբողջությամբ բարի է ու նաև ամբողջությամբ գեղեցիկ», ստեղծված է՝ մարդու հոգևոր ոլորտը բարձրացնելու համար և օգնում է, որ այն առաջանա գեղեցկության բարձրագույն վայելքից: Այս պատճառով էլ, արվեստի և գրականության գործեր արարողը պետք է ունենա «ոլորտ», և նրա ստեղծագործություններում «զգացմունքը պետք է միանա պատկերին»:

## 16.2 Չինական փիլիսոփայության ուսումնասիրությունը և մարդ լինելու պատճառը

Ինչու՞ ավանդական չինական փիլիսոփայությունը հետևողականորեն հետապնդում է այս երեք՝ ծշմարիտի, բարու և գեղեցիկի «միասնությունը»: Ին կարծիքով՝ պատճառն այն է, որ չինական փիլիսոփայության հիմնական եռթյունն է՝ ստվորեցնել, թե իրեն ինչպես պետք է դրսնորի մարդը: «Մարդ» լինելու համար» պետք է սահմանել որոշակի պահանջ, ունենալ ծշմարիտի, բարու և գեղեցիկի ինեալական ոլորտը: Նա, ով հասել է այսպիսի ինեալական ոլորտի, որտեղ «Երկինքը միավորվում է մարդու», «գիտելիքը՝ պրակտիկայի» և «զգացմունքը՝ պատկերի հետո», սուրբ է: Յետևաբար ավանդական չինական փիլիսոփայության հեռանկարը «մարդ» լինելու այս պահանջը համապատասխանեցնում է արդիականացման ծրագրին՝ այդպիսով իրականություն դարձնելով այն: Մարդկային ինեալն իր արտահայտությունը կարող է գտնել միջոցների հսկա բազմազանության մեջ. այնուամենայնիվ, մարդը պետք է ունենա ինեալ և ազնիվ հոգևոր ոլորտ: Երեք միասնությունները, որոնք առաջ է քաշում և պաշտպանում ավանդական չինական փիլիսոփայությունը, իրականում «մարդ» լինելու համար անհրաժեշտ միասնական ոլորտն են: Նրանք չեն կարող առանձնացվել, առնվազն տեսական մակարդակում:

«Երկրի հետ մարդու միացում» հիմնավորումը, չնայած ստեղծվել է մարդու և ողջ տիեզերքի հարաբերությունները նկարագրելու համար, արվել է՝ մարդուն տիեզերքի կենտրոն դիտարկելու տեսանկյունից: «Միջին օրենքը» պնդում է. «Ազգավությունը Երկնքի ճանապարհն է. ազնիվ լինելը՝ մարդու ճանապարհը»: «Ազնիվ մարդը, որն առանց դժվարության հարվածում է թիրախին, առանց չարչարանքի հասնում է ծիշտ գաղափարին և առանց շտապողականության հասնում է ճանապարհին, սուրբ է»: Մրրի դերը հետևյալն է՝ փայփայել սիրտը՝ հանուն Երկնքի ու Երկրի, կյանք տալ կենդանի արարածների, բարձրագույն ուսմունքները հանձնել ժառանգներին և խաղաղություն ստեղծել գալիք հազարավոր սերունդների համար»: Յետևաբար, «մարդը» (հիմնականում սուրբը) պետք է գործի Երկնքի ճանա-

պարհի պահանջներին համապատասխան և դրանց իրագործումը համարի իր պատասխանատվությունը: Աշխարհում ապրող մարդը չպետք է անտարբեր վերաբերմունք դրսնորի. հակառակը, նա պետք է «անխոնց աշխատի, որպեսզի հղկի ինքն իրեն» և մարմնավորի հսկայական տիեզերքի էկուուցիան: Այսպես մարդն իր առաջ պահանջ է դնում, գտնում է իր գոյության պատճառը և փայփայում ազնիվ հոգևոր ոլորտը: Երբ մարդը պահանջ է դնում իր առաջ և գտնում է ապելու պատճառը, նրա համար ամենակարևորը «գիտելիքի և փորձի միասնությունն» է: Մարդը պետք է ունենա այս երկուսը միավորող բարոյագիտական տեսակետ: Երեք ծրագրերը և ութ առարկաները, որոնք ներառված են «Սեծ ուսմունքներում», մեզ տալիս են սրա կոնկրետ պատճառը, որը ներկայացված է ստորև.

Մեծ ուսմունքի ճանապարհը լույս է սփռում պայծառ սկզբունքների վրա, մոտ է մարդկանց, և նրա հանգրվանը ամենաբարին է: Ճնագույն ժամանակներում նրանք, որ ցանկանում էին լույս սփռել պայծառ սկզբունքների վրա՝ հանուն աշխարհի, նախ պետք է կարգուկանոն հաստատեին իրենց սեփական բազավորություններում: Թագավորություններում կարգուկանոն հաստատելու համար նախ պետք է կարգի բերեին իրենց տները: Տներում կարգուկանոն հաստատելուց հետո նրանք պետք է զարգացնեին իրենց սեփական բարոյական կերպարը: Բարոյական կերպարը զարգացնելու համար պետք է նախ շտկեին իրենց միտքը: Միտքը շտկելու համար պետք է փայփայեին անկեղծ ցանկությունը: Անկեղծ ցանկությունը փայփայելու համար նրանք պետք է նախ գիտելիքը հասցնեին բարձրագույն աստիճանի հասցնելու համար պետք է նախ հետաքրքրվեին իրերի հատկություններով: Իրերի հատկությունները պարզելուց հետո միայն նրանք ի վիճակի էին բարձրագույն աստիճանի հասցնել գիտելիքը: Գիտելիքը բարձրագույն աստիճանի հասցնելուց հետո նրանք կարող էին փայփայել անկեղծ ցանկությունը: Անկեղծ ցանկությունը փայփայելուց հետո նրանք ի վիճակի էին շտկել իրենց միտքը: Միտքը շտկելուց հետո կարող էին զարգացնել սեփական բարոյական կերպարը: Սեփական բարոյական կերպարը զարգացնելուց հետո ի վիճակի էին կարգի բերել իրենց տները: Տները կարգի բերելուց հետո ի վիճակի էին կարգի բերել իրենց թագավորությունները: Թագավորությունները կարգի բերելուց հետո ամբողջ աշխարհը կապրեր խաղաղության մեջ:

«Գիտելիքը» պետք է միավորվի «փորձի» հետ: «Իրերի հատկությունները պարզելուց հետո գիտելիքը բարձրագույն աստիճանի հասցնելուց» մինչև «իրենց թագավորությունները կարգի բերելն ու աշխարհում խաղաղություն հաստատելը»՝ ճանաչողության և, որն ավելի կարևոր է, բարոյական պրակտիկայի գործընթաց է: Մարդը պետք է իդեալ ունենա: Բարձրագույն իդեալն է՝ «հասնել խաղաղության» և մարդկային հասարակությանը հնարավորություն տալ հասնել «Սեծ ներդաշնակության» ոլորտ: Հասարակության կողմից «Սեծ ներդաշնակության» հիմնական պահանջն այն է, որ յուրաքանչյուր ոք պետք է իր առաջ պահանջ ոմի, գտնի «ապելու պատճառը» և «ուրիշների հետ վարվի այնպես, ինչպես կցանկանա, որ իր հետ վարվեն»: Կոնֆուցիոն ասում էր. «Ին ճանապարհը հետևողական է. այն ոչ այլ ինչ է, քան ազնվություն և համբերատարություն»: Այս աշխարհում ապրելու համար պետք է քեզ պահես «մարդուն» վայել, վայելես «մարդ լինելու» հաճույքը և գնահատես տիեզերքի արարումը:

Տիեզերքի արարումն անկեղծ գնահատելու համար անհրաժեշտ է ունենալ «տիեզերքի արարման» վերաբարդության միջոցով մարդու ստեղծարարությունը ցուցադրելու ունակություն: Պետք է ցուցադրել մարդու հոգևոր ոլորտը, ինչու

և ինչպես մարդը պետք է գոյություն ունենա՝ որպես մարդ. սա հնարավորություն է տալիս գիրը վերածել «գլուխգործոցի», նկարը՝ «արվեստի հրաշալի գործի», իսկ երաժշտությունը՝ «քնության հնչյունների»: Յետևարար, արվեստը պահանջում է «զգացմունքի և պատկերի նիհանություն», որպեսզի «զգացմունքն առաջանա պատկերի, իսկ պատկերը՝ զգացմունքի մեջ»: Արարման ոլորտում մարդը հասնում է մի իրավիճակի, որտեղ ծշմարիտը, բարին ու գեղեցիկը միավորվում են. իենց սա է կյանքի ինաստն ու մարդու բարձրագույն իդեալը: Կոնֆուցիոնը հաստատում էր: «Յորանասուն տարեկանում ես կարող եմ ամել այն ամենը, ինչ սիրու կցանկանա, եթե դա չի հակասում կանոնին»: Այն, ինչ նա նկարագրում է, թերևս այն ոլորտն է, որտեղ այն ամենը, ինչ մարդն անում ու ասում է, ներդաշնակ է տիեզերքի, մարդկային հասարակության, այլոց և իենց իր՝ թե՛ մարմնի, թե՛ մտքի իւն, թե՛ ներսից, թե՛ դրսից: Կյանքի այս ոլորտն, անշուշտ, սրբության ոլորտ է:

Ավանդական չինական փիլիսոփայությունը դեռևս կրում է էքզիստենցիալ արժեքը, քանի որ մեզ ներկայացնում է մարդ լինելու պատճառը: Մարդ լինելը բոլորվին էլ հեշտ չէ, նույնիսկ ավելի դժվար է ներդաշնակ լինել քնության, հասարակության, այլ մարդկանց և իենց սեփական անձիդ հետ՝ թե՛ մարմնի ու թե՛ մտքի, թե՛ ներսից ու թե՛ դրսից: Բայց մի՞թե դա պետք չէ ժամանակակից աշխարհին: Մենք չենք կարող թերագնահատել ավանդական չինական փիլիսոփայությունը և անտեսել նրա ծցգրիտ արժեքը: Քանի որ ավանդական չինական փիլիսոփայությունը մեզ ասում է մարդ լինելու միակ պատճառը, տեղին չէ անպատեհ պահանջներ դնել նրա առաջ նաև այլ հարցերի առնչությամբ, ուստի մեզ համար բոլորվին անակնկալ չէ, որ այն կիրառելի չէ որոշ ոլորտներում: Օրինակ, այն չի ընդգծում ոչ տրամաբանության և գիտելիքի տեսության հիմնախնդիրները, և ոչ էլ տրամադրում է իր իսկ տեսության մշակած կառուցվածքը. մենք պետք է ընթրունումով մոտենանք սրան: Արդյո՞ք այսպիսի հանգամանքներում կարող ենք էլ ավելի զարգացնել ավանդական չինական փիլիսոփայությունը՝ միաժամանակ զբաղվելով նրա արժեքի ուսումնասիրությամբ: Կարող ենք և պետք է անենք: Նկատենք, որ «Փոփոխությունների գործից» բացի Ցին դինաստիային նախորդող շրջանում կոնֆուցիականները հազվադեպ էին անդրադարձում գոյարանության խնդիրներին: Սակայն բուդդայականության ազդեցության ներքո Սուն և Մին դինաստիաների նեղունֆուցիականները ստեղծեցին գոյարանության շատ նշանակալի տեսություն, որը մեծ առաջընթաց ապրեց և վերածվեց նեղունֆուցիականության: Ինչպես Չինաստանի ավանդական փիլիսոփայության հիմնական ուղղությունը, մտածողությունը և մշակույթը, այնպես էլ կոնֆուցիական փիլիսոփայությունն այսօր շատ ավելի խոր ազդեցություն ունի, քան անցյալում: Այն խորությամբ վերլուծելուց հետո մենք այժմ վերանայում ենք նրա արժեքը: Արդյո՞ք անհնար է դարձյալ զարգացնել այն, կամ գուցե հնարավո՞ր է նոր ազդեցության պայմաններում ստեղծել գիտելիքի նոր տրամաբանություն և տեսություն: Ավանդական չինական փիլիսոփայությունը պետք է թևակոփի զարգացման երրորդ փուլ, որովհետև «մարդը պետք է մարդ լինելու պատճառ ունենա»: Արդյոք այն կկարողանա զարգանալ, թե ոչ, կախված է նրանից, թե արդյոք նրան կհաջողվի հիմնել գիտելիքի տրամաբանության և տեսության նոր համակարգ: «Մարդը կարող է կատարելագործել ճանապարհը, և ոչ թե ճանապարհը՝ մարդուն»: Արդյունքը կախված է մեր ջանքերից:

## ԳԼՈՒԽ 17

### Ավանդական չինական փիլիսոփայության կարգային համակարգին վերաբերող հարցեր<sup>106</sup>

Արիստիտելի «Կատեգորիաներ» աշխատությունն ուրվագծում էր Յին Յունաստանի փիլիսոփայական կարգերը՝ առաջ քաշելով և մանրամասն ուսումնասիրելով տասը կարգերը: Յեգելի «Տրամաբանությունն» ուրվագծում էր ժամանակակից արևմտյան փիլիսոփայական կարգերը համեմատաբար լիարժեք կարգային համակարգի միջոցով: Արդյո՞ք Չինաստանի ավանդական փիլիսոփայությունը (Չինաստանի անտիկ փիլիսոփայություն) ուներ կարգային համակարգ: Ինչու՞ և ինչպես պետք է ուսումնասիրենք ավանդական չինական փիլիսոփայության հասկացություններն ու կարգերը: Այս էսսեն փորձում է քննարկել այդ խնդիրը:

#### 17.1 Ավանդական չինական փիլիսոփայության համակարգի ուսումնասիրության կարևորությունը

1. Ավանդական չինական փիլիսոփայության կարգային համակարգի ուսումնասիրությունն ունի ընդհանուր և մասնավոր նշանակություն: Ընդհանուր նշանակությունը կարելի է ներկայացնել առնվազն հետևյալ երեք կետով. նախ, եթե փիլիսոփայության պատմության ուսումնասիրությունն անհրաժեշտաբար պահանջում է փիլիսոփաների և փիլիսոփայական դպրոցների պատմական գործառույթի ուսումնասիրություն, ապա այդպիսի ուսումնասիրության գիտակող արժեքն այն անհրաժեշտ տրամաբանության բացահայտումն է, որի հիման վրա պատմության ընթացքում զարգանում են փիլիսոփայության մտածողությունները: Օրինակ, ո՞րն է Ցին դինաստիայից առաջ փիլիսոփայական մտածողության զարգացման անհրաժեշտ տրամաբանությունը՝ սկսած Կոնֆուցիոսից մինչև Մենցիու և Մենցիուսից մինչև Սունցի: Փիլիսոփայության գիտական պատմությունը, որի առաջնորդող միտքը մարդսիզմն է, պետք է բացահայտի ոչ միայն փիլիսոփայական մտքի զարգացման պատճառները, այլև նրա զարգացման մերքին տրամաբանությունը: Քանի որ փիլիսոփայությունը բնության, հասարակության, մարդկային մտքի ամենաընդհանուր օրենքների գիտություն՝ ներկայացված վերացարկումների ձևով, փիլիսոփայական մտքի բովանդակության զարգացումը, հետևաբար, հասկացությունների և կարգերի շարունակական առաջխաղացման և նրանց մշտական պարզաբանման, հարստացման և զարգացման պատմությունն է: Մենք պետք է ուսումնասիրենք, թե փիլիսոփայության պատմության մեջ ինչպես էին առաջնում հասկացություններն ու կարգերը, ինչպես էր նրանց բովանդակությունը դառնում ավելի պարզ, ավելի հարուստ ու ավելի համակարգված, և ինչպես կարգա-

106. Կոնֆուցիականություն, բուդդայականություն, դառսիզմ, քրիստոնեություն և չինական մշակույթ, 1991: 17-37

Այս էսսեում ներկայացված գծագրերը վերցված են «Դասարակագիտությունը Չինաստանում» ամսագրից (Պեկին. Դասարակական գիտությունների հրատարակչություն, համար 4, 1982), III համապատասխանաբար 204 և 210:

յին համակարգը դարձավ ավելի բարդ, ու բազմակողմանի. մենք պետք է կատարենք հասկացությունների և կարգերի զարգացման ճշգրիտ վերլուծություն: Սա մեզ հնարավորություն կտա բացահայտել փիլիսոփայական մտքի զարգացումը կառավարող օրենքները և նրա ներքին տրամաբանությունը:

Երրորդ, երբ ասում ենք, որ փիլիսոփայության պատմությունը մատերիալիզմի և իդեալիզմի պայքարն է, նկատի չունենք, որ այս պայքարը և մարդու ճանաչողության զարգացումը երկու տարրեր գործընթացներ են: Սա միևնույն գործընթացն է, որի միջոցով մատերիալիզմի և իդեալիզմի պայքարի ընթացքում զարգացել է մարդու իմացությունն աշխարհի մասին. սա մարդու գիտելիքի զարգացման օրենքն է: Քանի որ գիտելիքի գործընթացը պահանջում է օգտագործել հասկացություններն ու կարգերը, փիլիսոփայության պատմության զարգացման յուրաքանչյուր փուլ ուղեկցվում է որոշ հիմնական հասկացությունների և կարգերի տարաբնույթ բացատրություններով, որոնցից էլ ծագել են նաև մատերիալիզմը և իդեալիզմը: Չինական փիլիսոփայության պատմության մեջ, օրինակ, պայքարը մատերիալիզմի և իդեալիզմի միջև Ցին դինաստիայից առաջ ընդհանրապես կենտրոնանում էր երկնային կյանքի և մարդկային կյանքի, անվան և բովանդակության, գիտելիքի և վարքի, և փոփոխականի և հաստատումի տարրեր բացատրությունների շուրջ: Վեյ և Չին դինաստիաների ընթացքում այն կենտրոնանում էր հասկացությունների այնպիսի գույգերի շուրջ, ինչպիսիք են կեցությունն ու չկեցությունը, էությունն ու գործառույթը, խոսքն ու գաղափարը, բարոյական վարքագիծն ու ինքնարերությունը (կամ ինքնարությունը): Սուն և Մին դինաստիաների ընթացքում այն կենտրոնացած էր սկզբունքի և ուժի, մտքի և նյութի, մտքի և բնության, սուրյեկտի և օբյեկտի վրա: Չասկացությունների և կարգերի զարգացման ուսումնասիրությունն այն օրենքի մեկնաբանությունն է, որը կառավարում է պայքարը մատերիալիզմի և իդեալիզմի միջև:

Ավելին, այս ուսումնասիրությունը մեզ հնարավորություն կընծերի հասկանալ ճանաչողական պատմության որոշակի հասկացությունների և կարգերի առաջացման անհրաժեշտությունը և փոխել իդեալիզմի նկատմամբ խիստ պարզեցված և բացասական վերաբերմունքը, որն առկա էր փիլիսոփայության պատմության անցյալի ուսումնասիրություններում: Վան Բին իդեալիստ փիլիսոփա էր, բայց հենց նա է առաջադրել որոշ կարգեր, ինչպիսիք են էությունն ու գործառույթը, մեկն ու բազումը, խոսքն ու գաղափարը, «որոնք մեզ օգնում են ճանաչել բնական երևույթների ամենաառանձքային կետը և տիրապետել դրան»: Չնայած կարգերի այս սիսալ ներկայացման՝ նրանց զարգացումը կարևոր էր մարդու իմացության համար, ուստի հարկ ենք համարում զնահատել նրա դերը փիլիսոփայության պատմության մեջ: Սիան այն բանից հետո, երբ Վան Բին առաջին անգամ առաջ քաշեց «չկեցությունը որպես էություն» և «հասկացությունը ընկալելուն պես մոռանալ բառերը» գաղափարները, ի հայտ եկան Ուույան Չյանի՝ «Բառն արտահայտում է հասկացությունը (Յան ծին ի լում) և Փեյ Վեյի «Կեցության փառաբանման մասին» (Չուն յոու լում) տեսությունները: Չետևաբար, փիլիսոփայության պատմության մեջ հասկացությունների և կարգերի և նրանց զարգացման ուսումնասիրությունը այն պարտադիր կապող օղակն է, որը ճիշտ գնահատում է մատերիալիզմն ու իդեալիզմը փիլիսոփայության պատմության մեջ:

Երրորդ, Ենգելսը հավատացած էր, որ անցյալի փիլիսոփայությունների ուսումնասիրությունը տեսական մտածողությունը կոփելու միակ ձևն է: Փիլիսոփա-

յության գիտական պատմությունը միանշանակ կարող է այսպիսի դեր խաղալ, և մարդու իմացության պատմությունն ըստ էության հասկացությունների և կարգերի գարգացման պատմությունն է: Քանի որ փիլիսոփայության պատմության մեջ հասկացություններն ու կարգերն արտացոլում են մարդու գիտելիքը, երբ ուսումնասիրությունը կարգացնելու գործընթացը: Անշուշտ, մի կողմ ենք դնում պատահական և երկրորդական գործոնները և կառչում էական, նորմատիվային բովանդակությունից: Վերանայման այս գործընթացն անխուսափելիորեն խորացնում է մեր միտքը: Դասկացությունների և կարգերի գարգացման մեր ուսումնասիրության ընթացքում մենք ոչ միայն վերապրում ենք այն գործընթացը, երբ մարդկությունը, օգտագործելով հասկացություններն ու կարգերը, փորձում էր հասկանալ աշխարհը, այլև օգտագործում ենք բոլոր մեթոդները՝ դրանք նորովի պատկերացնելու համար: Այդ մեթոդը կարելի է կիրառել միայն հասկացությունների ու կարգերի բովանդակության, նրանց հարաբերությունների և գարգացման տրամաբանական կապերի տեսական վերլուծության համար: Վերլուծության նման գործընթացն ինքնին տեսական մտածողության մի տեսակ է: Այս ինաստով, ուսումնասիրությունը կարող է օգնել մեզ բարելավել տեսական մտածողության մեր ունակությունը:

Վերոնշյալ երեք կետերը ներկայացնում են միայն փիլիսոփայական հասկացությունների և կարգերի ընդհանուր նշանակությունը, քանի որ այն գոյություն ունի ցանկացած փիլիսոփայության պատմության, օրինակ՝ արևմտյան կամ հնդկական փիլիսոփայության կարգերի և նրա գարգացման պատմության ուսումնասիրությունը նույնպես ունի իր մասնավոր կարևորությունը. մասնավորապես այն մեզ հնարավորություն է տալիս հասկանալ ավանդական չինական փիլիսոփայության առանձնահատկություններն ու գարգացման մակարդակը: Արևմտյան փիլիսոփայությունն ունի կարգերի իր համակարգը. նրա առանձնահատկությունները և փիլիսոփայական մտածողության գարգացման տարրեր մակարդակները տարրեր պատմական փուլերում արտացոլվել են գարգացման մեջ՝ Արիստոտելի «Կատեգորիաներից» մինչև Չեգելի «Տրամաբանությունը»: Նախնական հնդկական բուդդայականության մեջ օգտագործված կարգերը և Մահայանայի Կունյա և Բհավա աղանդների կարգերը, միմյանց հաջորդելով և յուրաքանչյուրը՝ իր ապշեցուցիչ առանձնահատկություններով, ներկայացնում են հնդկական բուդդայականության այն բարձր մակարդակը, որին այն հասնում է տրամաբանական մտքի և կարգային վերլուծության միջոցով: Ավանդական չինական փիլիսոփայությունն ունի իր սեփական հասկացություններն ու կարգերը, որոնք աստիճանաբար կազմել են բավական բազմակողմանի համակարգ: Այս պատճառով, արդարացի չէ դրանք ներկայացնել՝ որպես արևմտյան փիլիսոփայության հասկացություններ և կարգեր, ինչպես նաև դրանք դիտարկել միայն մարքսիստական փիլիսոփայության հասկացությունների ու կարգերի տեսանկյունից:

Բացի հնդկական բուդդայականությունից վերցված մի շարք հասկացություններից, չինական փիլիսոփայության երկար պատմության ընթացքում ձևավորված հասկացություններն ու կարգերը հիմնականում անկախ են գարգացել, հետևաբար ունեն որոշակի առանձնահատկություններ: Օրինակ, երկնային ճանապարհը (թյան դառ) և մարդկային ճանապարհը (ժեն դառ)՝ որպես կարգերի գույգ, շատ կարևոր էին չինական փիլիսոփայության պատմության մեջ: Չետևաբար,

ավանդական չինական փիլիսոփայությունը ոչ միայն գգալի ուշադրություն էր դարձնում Երկնքի և մարդու հարաբերությունների ուսումնասիրությանը, այլև մեծ ուշադրությամբ էր վերաբերվում մարդու և մարդու (հասարակություն) հարաբերությունների ուսումնասիրությամբ։ Մյուս օրինակը թի և յուն կարգերի գոյացն է, որը պարունակում է ոչ միայն նոումնենի ու երևոյթի հմաստները, այլև հիմքն ու գործառույթը, ամբողջն ու մասը, վերացականն ու կոնկրետը։ Չասկացությունների ու կարգերի գոյացն այսպիսի շարժերն արտացոլում են ոչ միայն ավանդական չինական փիլիսոփայության առանձնահատկությունները, այլև տեսական մտածողության մակարդակը պատճական զարգացման որոշակի փուլում։ Կարելի է ոչ այնքան տեղին համեմատություն անել. ավանդական չինական բժշկությունն, անշուշտ, ունի իր մասնավոր ավանդույթը՝ տեսական համակարգ, բժշկական եզրույթներ և հասկացություններ։ Չնայած մենք հստակ գիտական բացատրություններ չենք գտել որոշ տեսությունների և ծերքերումների մասին, այնուամենայնիվ այս բժշկությունը լավ արդյունքների է հասնում բուժօգնության ոլորտում, ուստի պետք է որ արտացոլի օրյեկտիվ իրականության որոշ կողմեր և պարունակի խոր ճշմարտություն։ Քանի որ հասկացություններն ու կարգերն անհրաժեշտ պայման են գիտելիքի ծևավորման համար և առանցքային դեր են խաղում սուբյեկտիվն ու օրյեկտիվը միմյանց կապելու գործում, որոշ հասկացություններ ու կարգեր արտացոլում են այն կոնկրետ ծերքերումները, որոնց մարդու հասել է իր տեսական պրակտիկայի միջոցով օրյեկտիվ իրականության որոշ կողմեր ճանաչելու գործում։ Ուստիև, տարբեր հասկացություններն ու կարգերը ցույց են տալիս մարդու ճանաչողության տարբեր խորությունները։ Չետևաբար, երբ ուսումնասիրում ենք հասկացություններն ու կարգերն ավանդական չինական փիլիսոփայության զարգացման տարբեր փուլերում, տեսնում ենք ավանդական մտածողության մակարդակը Չինաստանի պատճության զարգացման տարբեր ժամանակաշրջաններում։

Չինական փիլիսոփայության պատճության մեջ գոյություն ունեն երեք ժամանակաշրջաններ, որոնց ընթացքում դպրոցները խոշոր ներդրում են ունեցել ավանդական չինական փիլիսոփայության կարգային համակարգի ծևավորման գործում, մասնավորապես՝ Ցին դինաստիային նախորդած բազմազան դպրոցները, Վեյ և Փին դինաստիաների մետաֆիզիկական դպրոցը (սյուանյուե) և Սուն և Մին դինաստիաների նեոկոնֆուցիականությունը (Լիսյուե)։ Երբ համեմատում ենք ավանդական չինական փիլիսոփայության կարգային համակարգի երեք փուլերը արևմտյան փիլիսոփայության հետ, ապշուն ենք նրա հստակ առանձնահատկություններից և բավական բարձր մակարդակից։ Ավանդական չինական փիլիսոփայության և այլ երկրների, ազգերի ու տարածաշրջանների փիլիսոփայության կարգային համակարգերի այս համեմատությունը կարևոր նյութ է համեմատական փիլիսոփայության համար։

## 17.2 Ինչպես ուսումնասիրել ավանդական չինական փիլիսոփայության հասկացություններն ու կարգերը

Սկզբունքորեն ավանդական չինական չինական փիլիսոփայության հասկացությունների և կարգերի ուսումնասիրությունը պահանջում է նարքսիզմի գիտական վերլուծական մեթոդ։ Զուտ չինական փիլիսոփայության պատճության մեջ օգտագործ-

Ված հասկացություններն ու կարգերը ներկայացնելը կիհակասի մեր ուսումնախրության նպատակին, որովհետև չի բացահայտի փիլիսոփայական մտքի զարգացումը կառավարող օրենքները, ինչպես նաև չի օգնի մեզ ավելի լավ հասկանալ մատերիալիզմի և իդեալիզմի միջև պայքարի օրենքները, չի բարձրացնի տեսական մտածողության մակարդակը. այսինքն՝ մենք չենք կարողանա հասկանալ ավանդական չինական փիլիսոփայության առանձնահատկություններն ու նակարդակը: Մեր նպատակին հասնելու համար անհրաժեշտ է օգտագործել մարդուզմի գիտական վերլուծության մեթոդ (1) հասկացությունների և կարգերի իմաստը վերլուծելու, (2) այդ իմաստների զարգացումն ուսումնասիրելու, (3) փիլիսոփաների կամ փիլիսոփայական դպրոցների հասկացությունների և կարգերի համակարգերը վերլուծելու և (4) չինական և օտարերկրյա փիլիսոփայությունների հասկացությունների և կարգերի միջև նմանություններն ու տարբերությունները ուսումնասիրելու համար: Միայն այսպիսի վերլուծության հիման վրա էլ հինարավոր է չինական փիլիսոփայության պատմության ուսումնասիրությունը տանել գիտական ճանապարհով:

### 17.2.1 Հասկացությունների և կարգերի վերլուծություն

Հասկացություններից (կարգեր) մեկի կամ զույգի զարգացումը մարդու՝ աշխարհի ընկալման մակարդակի ցուցիչն է, ուստի մեր խնդիրն է վերլուծել այդ հասկացության կամ հասկացությունների զույգի իմաստը: Երբ անտիկ փիլիսոփաներն առաջ էին քաշում նոր հասկացություն, նրանք այնքան հստակ չէին հասկանում և գիտականորեն չէին հիմնավորում նրա իմաստն այնպես, ինչպես այսօր. սա մասնավորապես ծիշտ է այն հասկացությունների առումով, որոնք նրանք օգտագործում էին՝ աշխարհի ծագումը բացատրելու համար: Օրինակ, Լաոցին (Լաո Ցու) առաջին մարդու էր, որն առաջ քաշեց «ճանապարհի» (դառ) գաղափարը՝ որպես իր փիլիսոփայական համակարգի բարձրագույն կարգ: Նա «ճանապարհի» այս հասկացությունը առաջ էր քաշում՝ որպես «Երկինքը հարգելու» ժամանակակից հասկացության հակառեզ: «ճանապարհն» ընդունելով՝ որպես աշխարհի սկզբնավորում, Լաոցին (Լաո Ցու) միանշանակ բարձրացրեց անտիկ չինական փիլիսոփայական մտածողության մակարդակը: Բայց ո՞րմ էր «ճանապարհի» իմաստը: Լաոցին (Լաո Ցու) ինքն էլ դժվարանում էր հստակ սահմանում տալ: Նա ասում էր. «Ես չգիտեմ նրա անունը: Կոչում եմ Դառ: Եթե անհրաժեշտ լինի անուն տալ նրան, կկոչեմ Սեծ»: Դետևաբար, նա բազմաթիվ մակդիրներ էր օգտագործում՝ «ճանապարհը» նկարագրելու համար, օրինակ՝ «անձայն ու անձն», «խուսափող և անորոշ» և «խոր և անհասկանալի»: Ակնհայտ է, որ օբյեկտիվ պայմանների սահմանափակման և իրենց գիտելիքի մակարդակի պատճառով անտիկ փիլիսոփաները դժվարանում էին տալ աշխարհի սկզբնավորման հստակ սահմանումները:

Ուստի, մեզ համար անհրաժեշտ է ուսումնասիրել «ճանապարհ» հասկացության իմաստը Լաոցիի (Լաո Ցու) համատեքստում<sup>107</sup>: «Ինքնաբերություն» (ցիժան) եզրույթը լայնորեն կիրառվում էր անտիկ չինացի փիլիսոփաների կողմից,

107. Տե՛ս «Կյանքի և մահվան, հոգու և ծեփի վաղ դառսական տեսությունները», «Զեսյուտե Յամձու», 1 (1981)

բայց նրանցից յուրաքանչյուրն ուներ իր սեփական սահմանումը: Լաոցին (Լաո Ցու) նույնպես առաջինն էր, որ օգտագործեց «ինքնաբերությունը»՝ որպես փիլիսոփայական հասկացություն, և նա նկատի ուներ առհասարակ անգործությունը: Վասն Չունը Յան դինաստիայից շարունակեց կիրառել այն: Նա գրում է. «Երկնքի ճանապարհն ինքնաբուխ անգործություն է»: Մինչ Վեյ և Չին դինաստիաների սկիզբը այս գաղափարի կողմնակիցները, օրինակ՝ Վան Բին և Սյահոու Սյուանը, մասնավորապես «ինքնաբերություն» կամ տարերայնություն հասկացությունը օգտագործում էին «ճանապարհի» փոխարեն, այսինքն՝ որպես տիեզերքի առաջնային նյութ: Սյահոու Սյուանը գրում է. «Երկնքն ու երկիրը գործում են ինքնաբուխ, և իմաստունն էլ գործում է՝ հետևելով ինքնաբերության օրենքին: Ինքնաբերությունն ի սկզբանե չուներ անուն, և Լաոցին (Լաո Ցու) ստիպված էր անուն տալ դրան»:

Նույնիսկ նույն փիլիսոփան մի քանի սահմանում էր տալիս «ինքնաբերությանը»: Մենք կարող ենք որպես օրինակ ներկայացնել Գուո Սյանի՝ «ինքնաբերության» սահմանումները: Նա գտել է «ինքնաբերության» առնվազն իմաց լրացուցիչ իմաստ: Նախ, Երկնքի և մարդու գործողություններն «ինքնաբուխ» են: Զուանցիի գործի իր ծանոթագրություններում («Մեծ ուսուցիչը» գլուխը) նա գրում է. «Սա, ով գիտի թե՛ Երկնքի ու թե՛ մարդու արարքները, իմաստուն է: Սա նշանակում է, որ Երկնքի ու մարդու արարքներն իմանալը ինքնաբերություն է»: Այսպիսով, Գուո Սյանն ուսումնասիրում էր ոչ միայն բնական երևոյթները, այլև մարդու արարքները՝ որպես ինքնաբուխ քայլ. ի՞նչ իմաստ կարող է ունենալ սա: Երկրորդ, «աշխատել սեփական անձի համար» (ցիվեյ) հասկացությունը «ինքնաբերություն է»: Գուո Սյանն ասում է. «Երբ նյութն ինքնաբուխ է, դա նշանակում է անգործություն»: Նա նաև գրում է. «Մենք գնահատում ենք այս անգործությունը և սեփական անձի համար աշխատելը»: Այդ դեպքում ինչու՞ «սեփական անձի համար աշխատելն» անգործության մի տեսակ է: Երրորդ, «կամակորությունը» ինքնաբերություն է: Գուո Սյանը նշում էր, որ «սեփական անձի համար աշխատելը» «ինքնաբերություն է», բայց այն նշանակում է ոչ թե գործել կամքի թելարդանքով, այլ «հետևելով սեփական էռլթյանը», մասնավորապես՝ «գործել սեփական էռլթյան համաձայն». սա նույնպես ինքնաբերություն է, ուստի կոչվում է բնույթ (սին): «Ինքնաբերության համաձայն» նշանակում է «սեփական էռլթյան համաձայն», այսինքն՝ չստիպել ուրիշներին ենթարկվել թեզ և չենթարկվել ուրիշներին: Չորրորդ, «ամիսուսափելիությունն» «ինքնաբերությունն» է: Գուո Սյանը գրում է. «Իմանալով ճակատագրի իրականությունը՝ մարդը չի ձգտի նրան, ինչ դրանից անդին է, այլ ուղղակի կիրագործի իր բնույթը»: Նա, ով «գիտի իր ճակատագիրը», չի խնդրի այն, ինչ անհնար է իրականացնել. սա «ինքնաբերությունն» է: Այստեղ ճակատագիրը նշանակում է «ամիսուսափելիություն»: Յինգերորդ, «հնարավորությունը ինքնաբերությունն է»: Գուո Սյանը գրում է. «Բոլոր իրերն ինքնաբուխ են, գործում են՝ առանց իմանալու, թե ինչու»: Եթե գործողության պատճառը գոյրություն չունի, ապա «ինքնաբերությունը» նշանակում է «պատահականություն»: Յետևաբար, Երբ փիլիսոփաները փորձում էին բացատրել «իրերի ինքնուրույն առաջացումը», նրանք սովորաբար օգտագործում էին այնպիսի եզրույթներ, ինչպիսիք են «հանկարծ» կամ «կտրուկ»: Սա նշանակում է, որ իրերը գոյություն ունեն առանց պատճառի, և անհնար է բացատրել դրանց պատճառահետևանքային կապը:

Ըստ Գուր Սյանի՝ «ինքնաբերությունը» պարունակում է վերոնշյալ հինգ փոխկապակցված իմաստները, որոնցից վերջին երկուսն ամենակարևորն են, այսինքն՝ «ինքնաբերությունը» ունի թե՝ «անխուսափելիության», թե՝ «պատահականության» իմաստը: Իրականում, դրանք հակադիր հասկացությունների մի զույգ են, դիալեկտիկական տեսանկյունից, փոխկապակցված են, մեկը ծևափոխվում է մյուսի, և անխուսափելիությունը դրսնորվում է պատահականության միջոցով: Գուր Սյանը «ինքնաբերություն» եզրույթն օգտագործում էր՝ թե՝ «անխուսափելիությունը», թե՝ «փոփոխությունը» բացատրելու համար, որովհետև տեսնում էր դրանց փոխադարձ կախվածության հարաբերությունը. այն, որ նյութը գոյություն ունի, «անխուսափելի է», մի կողմից որովհետև «իրերը առաջանում են համկարծակի»: Գուր Սյանի փիլիսոփայական համակարգում իրերը պետք է ունենան այս երկու կողմը: Գուր Սյանի՝ «ինքնաբերություն» հասկացության սահմաննան վերլուծությունից հասկանում ենք նրա փիլիսոփայության ընդհանուր առանձնահատկություններն ու նակարդակը:

### **17.2.2 Հասկացությունների և կարգերի իմաստի զարգացման վերլուծություն**

Միմյանցից տարբերվում են ոչ միայն տարբեր ժամանակների տարբեր փիլիսոփաների առաջադրած հասկացություններն ու կարգերը, այլև դրանց նշանակությունը: Այնուամենայնիվ, եթե փիլիսոփայական մտքերը հետևեն մեկը մյուսին, նշտապես հնարավոր է բացահայտել այս հասկացությունների և կարգերի հաջորդականության հարաբերությունը: Նրանց զարգացման ուսումնասիրությունը խիստ կարևոր է մարդու գիտելիքի զարգացման օրենքները հասկանալու համար: Հաջորդիկ մենք կվերլուծենք ցի (հաճախ թարգմանվում է նյութական ուժ, երերային կամ հեղուկ, թարգմ. ծան.) հասկացության զարգացումն ավանդական չինական փիլիսոփայության մեջ:

Դեռևս գարնան և աշնան ժամանակաշրջանում որոշ մտածողներ արդեն իսկ քննարկում էին ցիի ներգործությունը մարդու վրա: Օրինակ, Յուլ Զուանը Լուի Զառ դրսի կառավարման առաջին տարում (մթ. 541) արձանագրված բժշկական տեսության մեջ հիշատակում է «վեց ցի»: Մինչ Պատերազմող պետությունների ժամանակաշրջանը ցին դարձել էր ընդհանուր հասկացություն: Մարդիկ ոչ միայն հավատում էին, որ մարդու մարմինը կազմված է ցիից, այլև ոմանք վստահ էին, որ մարդու հոգին նույնպես կազմված է ցիից: «Գուանցի» գրքի «Սպիտակ սիրտ», «Ներքին գործառույթ» և «Սրտի մեխանիզմը» գլուխներում գրված է. «Ինչ վերաբերում է էությանը (ծին), այս ցիի էությունն է», «բոլոր իրերի ցին փոխվում է՝ այդպիսով կյանքի կոչվելով», «Երբ ցին ընկնում է հողի մեջ, հատիկ է աճում, իսկ երբ նետվում է երկինք, հանաստեղություններ են ծնվում. Երբ սավառնում է օդում, վերածվում է ուրվականների ու հոգիների, երբ տեղափորվում է մարդու սրտում, մարդն իմաստում է դառնում» և «հետաքար, երբ կա ցի, կա կյանք, երբ ցի չկա, մահն է իշխում» և այլն: Ըստ այս մտածողների՝ «ցին» ունի մի տարատեսակ, որը կոչվում է «էական ցի» կամ կյանք պարզեցող: Երբ նման «էական ցին» նույթը է գործում մարդու մարմին, մարդն իմաստնանում է և դառնում իմաստում:

Պատերազմող պետությունների ժամանակաշրջանում «էական ցիի» այս հակագիտական տեսությունն օգտագործվում էր՝ մարդու ոգին բացատրելու հա-

մար: Եթե սա համարենք մատերալիստական մոտեցում, ապա այս տեսակետն ունի լուրջ թերություններ, և իդեալիստները որոշ հանգանանքներում օգտագործում էին այդ թերությունները՝ դրանք դարձնելով իրենց համակարգի բաղկացուցիչ մաս: Այն կարող էր օգտագործվել նաև նատուրալիստների կողմից, որոնք այն օգտագործում էին որպես հիմք՝ «կյանք, որ չունի վերջ» հասկացությունը բացատրելու համար: Մենք գիտենք, որ Մենցիոսը նույնպես խոսում էր ցի մասին և ներկայացնում ցիի մի տեսակ, որը կոչվում է «կյանության ցի» (հառ ժամ ցի ցի): «Գուանցի» գրքի «Սպիտակ սիրտ» գլխում հիշատակվում է «էական ցին», որը կարող է ինաստություն հաղորդել մարդուն. այս ցին չի կարելի ստուգել ամրությամբ, այլ պետք է հարմարեցվի ուժով (ղե), ինչը նշանակում է, որ ցին ինքնին ունի իմացություն, որը պետք է ամրապնդվի բարոյական ուժով: Մենցիոսի տեսության մեջ «կյանության ցին» ծեռք է թերվում արդարանտությունն ընդգծելու միջոցովք: Ակնհայտ է, որ ցին Մենցիոսի տեսության մեջ արդեն իսկ հոգենոր երևույթ է:

Մինչ Դան դինաստիայի սկիզբը Դուն Չունչուն մի քայլ առաջ գնաց և բարոյական և առեղջվածային հատկանիշներ վերագրեց ցիին, որը դարձավ Աստծոն կամքի և ուժի դրսնորում: Դուն Չունչուն պնդում էր, որ ցին ունի պատժելու և պարզեատրելու իշխանություն, որ գոյություն ունի բարի և չար ցի, և որ ցին ունի այնպիսի զգացմունքներ, ինչպիսիք են երջանկությունը, զայրույթը, վիշտն ու ուրախությունը: Ուստի ցին, դեռևս պահպանելով նյութական արտաքինը, արդեն իսկ կորցրել էր նյութական էությունը: Ավելի ուշ՝ Դան ժամանակաշրջանում, գոյություն ունեին ցիի ամենատարբեր սնահավատ բացատրություններ, որոնք իսկապես ծագել են Դուն Չունչուի տեսակետից:

Տին դինաստիային նախորդած ժամանակահատվածի և Դան դինաստիայի պատմական տվյալներն ուսումնասիրելով՝ տեսնում ենք, որ ցի հասկացությունը սերտորեն կապված է հոգու և ծեփի հարցերի հետ, և այդ առունով մեծ կապ ունի առողջության պահպանման հարցի հետ, որը հաճախ սրբություն դաշնալու միջոց էր: «Զուանցիում»՝ «Ծճմարիս մարդը» (Ժենժեն), «հոգևոր մարդը» (Ժենժեն) և այլք հաճախ նկարագրվում էին՝ որպես «ոգի, որը հսկում է ծեփ՝ երկարակեցության հասնելու համար», «ցող խմել և կլանել քանու շունչը՝ հացահատիկ ուտելու փոխարեն», «միավորել բնույթն ու պահպանել նրա ցին»: Նրանք իրենց հոգին միավորում էին ծեփի հետ, որպեսզի կարողանան իրականացնել նպատակը, այն է՝ «կատարյալ պահել ծեփ և լրացնել հոգին երկնիքի ու երկրի հետ միավորվելու համար»: «Լյու Շի Չուն Ցյուն» գիրքը ներառում է բազմաթիվ քննարկումներ, որոնք վերաբերում են «առողջության պահպանմանը», և նշում է, որ «Երկարակեցության հասնելու համար», ցին «պետք է մշտապես հոսի մարդու մարմնում» և «եթե ամեն օր նորացնես էական ցին, չար ցին կվերանա, և մարդը կհասնի լիարժեք կյանքի. սա կոչվում է ծճմարտություն»: «Հուայ Նան Ցի» գրքում ցիի, ծեփի և բնույթի պահպանումը նույնն է. ավելին դրանք մինչանց կապված են ցիով: Այս երկու գրքերի հեղինակները կրում էին «էական ցիի տեսության» ազդեցությունը՝ «Սպիտակ սիրտ» գրքում և այլ փիլիսոփայական աշխատություններում: Բոլորն էլ այն կարծիքին էին, որ «հոգին» (Ժինշեն) նույնպես ցիի մի տեսակ է կամ «էական ցի, որը կարող է հանգրվանել մարմնում կամ լքել այն, ու եթե ոգին ու մարմինը մեկ տեղում լինեն, կյանքը երկար կտևի»:

Տին դինաստիայից առաջ և Դան դինաստիայի ժամանակաշրջանում որոշ փի-

լիսովաներ արտահայտում էին ցիի մատերիալիստական տեսակետը և համարում, որ ցին այն նյութն է, որից կազմված է աշխարհը: Սունցիի կարծիքով՝ տիեզերքում ամեն ինչ, այդ թվում և մարդը, կազմված է ցիից: Նա գրում է. «Ձուրն ու կրակն ունեն ցի, բայց չունեն կյանք, բույսերն ունեն կյանք, բայց չունեն զգացողություններ, թքուններն ու գազաններն ունեն զգացողություններ, բայց չզիտեն՝ ինչ է արդարանությունը, իսկ մարդն ունի ցի, կյանք, զգացողություններ և նաև արդարանություն»: «Յուայ Նան Ցի» գրքի «Յոգու մասին» գլուխն ասում է, որ տիեզերքն ի սկզբանե նախնական ցիից կազմված խավար մարմին էր՝ առանց ձևի, և որ հետագայում դրական և բացասական ուժերի փոխազդեցությունը ծնունդ տվեց ամեն ինչի, ուստի «կեղսոտ ցին վերածվեց որդերի, իսկ մաքուր էական ցին՝ մարդ արարածների»: Վաճ Չունն ավելի հստակ է շարադրել այս միտքը: Նա գրում է. «Երկնքի և երկրի ցիի միաձուլումը ծնունդ տվեց ամենայն ինչի»: սա ցիի շարժման արդյունքն էր: Նա ասում է. «Երբ երկինքը շարժվում է, այն ծնունդ է ցի... Ցին դրւս է զալիս և ծնունդ է տալիս ամեն ինչին»: Դուն Չունի՛ ցիի իդեալիստական տեսակետին հակադրվելու համար Վաճ Չունը մասնավորապես նշում էր, որ ցին չունի կանք, չունի նպատակ: Նա ասում է. «Ցին զուրկ է փառասիրությունից, նպատակից կամ նախագծից», «ցին նման է ծիսի և ամպի, ինչպե՞ս կարող է ականջ դնել մարդու խնդրանքին»: Այնուամենայնիվ, ինչպես «Յուայ Նան Ցի» գրքում, Վաճ Չունը մարդու հոգին (կամ կյանքի ֆենոմենը) համարում է «էական ցի»: Նա ասում է. «Մարդն ապրում է, որովհետև ունի էական ցի. Երբ մարդը մահանում է, էական ցին անհետանում է»: Ցի հասկացության բովանդակության վերլուծությունն անտիկ չինական փիլիսոփայության պատճության մեջ հստակ բացահայտում է այս հասկացության զարգացումը: Վերոնշյալ երեք ուսումնական աշխատանքները, ավելի կոնկրետ՝ սահմանումները, սակայն, Արևելյան Հան դինաստիայի վերջում միաձուլվեցին դառսիզմում (թառսիզմ), սակայն մենք այստեղ չենք քննարկի դա:

### 17.2.3 Փիլիսոփաների (կամ փիլիսոփայական դպրոցների) հասկացությունների և կարգերի համակարգային վերլուծություն

Պատմության ընթացքում խոշոր փիլիսոփաները, սահմանելով իրենց փիլիսոփայական համակարգերը, մշտապես օգտագործել են հասկացությունների և կարգերի շարքեր: Այսպիսով, այս հասկացությունների և կարգերի միջև հարաբերությունների ուսումնասիրությունն անհրաժեշտ է, որպեսզի ամբողջական վերլուծության ենթարկենք նրանց տեսական համակարգերը: Մակարդակը, որին հասնում է փիլիսոփայի միտքը, հաճախ որոշվում է նրանով, թե նրա հասկացություններն ու կարգերն ինչ խորությամբ ու համակարգվածությամբ են արտացոլում էական հարաբերությունները տարբեր առարկաների միջև: Ցին փիլիսոփաների կամ փիլիսոփայական դպրոցների ուսումնասիրության ընթացքում երբեմն տարամետ տեսակետներ են ի հայտ են զալիս այդ փիլիսոփայի կամ փիլիսոփայական դպրոցի հասկացությունների ու կարգերի բազմակողմանի և համակարգված ուսումնասիրության բացակայության պատճառով: Օրինակ, եթե նկատի առնենք միայն Գուռ Սյանի «կեցություն» և «չկեցություն» գաղափարները և նրանց հարաբերությունը, կարող ենք եզրակացնել, որ նա մատերիալիստ էր: Սակայն Գուռ Սյանի փիլիսոփայությունը Վեյ և Չին մետաֆիզիկական դպրոցի կիզակետն

Էր ոչ թե այն պատճառով, որ նա «կեցության» և «չկեցության» հարաբերության իմաստով առաջադրում էր Վան Բիից տարբերվող տեսակետ, այլ որովհետև ուներ միանգամայն լիարժեք փիլիսոփայական համակարգ, որի վերլուծությունից պարզ է դառնում, որ այն մերկայացնում է հիմնական հասկացությունների չորս խումբը: (Չնայած Գուոյի փիլիսոփայական համակարգը պարունակում է նաև այլ կարևոր հասկացություններ, այստեղ մենք դրանց չենք անդրադառնա):

«Կեցություն» և «չկեցություն». Վեյ և Զին դինաստիաների մետաֆիզիկների քննարկման գլխավոր թեման «ծագման և արդյունքի, կեցության և չկեցության» հարցն է: Կարելի է համարել, որ Գուո Սյանի փիլիսոփայությունը ծագել է այս թեմայի քննարկումից: Գուուն հավատացած էր, որ «կեցությունը (ամեն ինչի կեցությունը)» միակ երևույթն է, որ գոյություն ունի. այն մշտապես ներկա է: Չնայած կեցությունը ենթարկվում է անսահման փոփոխությունների ու ձևափոխությունների, այն ոչ մի դեպքում չի կարող դառնալ «չկեցություն». «Սենք ասում ենք, որ Երկինքն ու Երկիրը մշտապես գոյություն ունեն, որովհետև չի եղել մի ժամանակ, երբ նրանք գոյություն չեն ունեցել»: Ինչ վերաբերում է «չկեցությանը», նրանք նշում են, որ «կեցությունից» կամ «չկեցությունից» վեր արարչին, որ ծառայում է որպես նոումեն, չկեցություն է, այսինքն՝ «ոչինչ»: Այսպիսով, նա ասում է. «Չկեցությունը ուղղակի չկեցություն է, այն չի կարող կեցություն ստեղծել»: «Ես հանդգնում եմ հարցնել՝ արդյո՞ք կա արարիչ, թե ոչ: Եթե չկա, նա ինչպե՞ս կարող է ինչ-որ քան ստեղծել», -ասում է Սյանը: Յետևաբար, ամենասկզբից, Գուո Սյանը հերքում էր «արարչի» գոյությունը «ամեն ինչից» կամ «չկեցությունից» վեր, որը «կեցության» հակաթեզն է և որպես նախնական նյութ՝ դառնում է կեցության գոյության հիմք: Այնուամենայնիվ, Գուո Սյանի փիլիսոփայությունը կանգ չառավ այդտեղ, այլ գնաց առաջ:

«Բնույթ» և «ճակատագիր». քանի որ իրերի գոյությունը հիմնված չէ «չկեցության» վրա՝ որպես նախնական մարմնի, ապա արդյո՞ք իրերի գոյությունն ունի ներքին պատճառ: Ըստ Գուո Սյանի՝ չի կարելի ասել, որ «ամեն ինչի» կեցությունն անհիմն է: Քանի ոեռ իրերը գոյություն ունեն, նրանց գոյությունն էլ հենց այդ գոյության հիմքն է:

Դարկ է նշել, որ նրանց գոյության հիմքը նրանց սեփական «էությունն» է. «Ամեն ինչ ունի իր սեփական բնույթը, իսկ ամեն բնույթ ունի իր սահմանը»: «Բնույթ» ասելով Գուո Սյանը նկատի ուներ «պատճառը, թե իրերն ինչու են այնպիսին, ինչպիսին կան»: այս հարցն առնչվում է «անհրաժեշտության» զգացողության հետ: Ուստի, նա ասում է. «Յուրաքանչյուր ոք ստանում է այն, ինչին արժանի է ըստ իր բնույթի. անհնար է խուսափել նրանից կամ ավելացնել այն»: Նա նաև ասում է. «Իրերն ունեն իրենց սեփական բնույթը, ուստի իմաստունն իմաստուն է մնում մինչ կյանքի վերջին օրը, մինչդեռ բրամիտը բրամիտ է մնում մինչ ի մահ, և ի վիճակի չէ փոխվել կես ճանապարհից»: Ինչ վերաբերում է «ճակատագրին», Գուո Սյանը այն սահմանում էր՝ որպես «անխուսափելիություն»: Ըստ նրա՝ ճակատագիրը նշանակում է, որ բոլոր իրերը գործում են ինքնարուխ, և ոչինչ չի ագդում նրանց վրա», ուստի պետք է «իմանալ անհնարինի սահմանը»: Ակնհայտութեն, «բնույթն» ու «ճակատագրիը» այն երկու հասկացություններն են, որոնք նա օգտագործում էր՝ ապացուցելու, որ միայն «կեցությունը» գոյություն ունի, և որ «չկեցությունը» որպես արարող կամ առաջնային մարմին բացարձակապես անգու է:

«Ինքնաստեղին» և «ինքնարավ». իրերի «բնույթը» նրանց գոյության հիմքն է, բայց ինչպես է ծագում այս «բնույթը»: Արդյո՞ք նրա ծագումն ունի որևէ նպատակ կամ պայման: Գուռ Սյանն ասում է. «Իրերը գոյություն ունեն ինքնին, առանց սկզբնաղբյուրի. սա է Երկնքի ճանապարհը», և «իրերն ի հայտ են զալիս նրանց համաձայնությունից անկախ: Եթե իրի «բնույթը» ինքնին չի առաջացել, ապա այն պետք է տրվի ուրիշների կողմից կամ էլ միտունավոր ստեղծվի արարչի կողմից: Սակայն սա դառնում է սա, իսկ նա դառնում է նա ոչ այն պատճառով, որ ինչ-որ մեկը ստիպել է, որ այն ծագի ու գոյություն ունենա, և ոչ էլ այն ինքնուրույն է առաջացել. հետևաբար, «ինքնաստեղծումը» կարող է տեղի ունենալ ինքնին՝ «անսպասելիորեն», «կտրուկ» և «ինքնարուխ»: Եթե երևույթի ծագումը կամ գոյությունը ունի որևէ պատճառ կամ նպատակ, ապա այն անխուսափելիորեն հանգեցնում է այն ստեղծողի գոյությանը: Այդ դեպքում ինչպիսի՞ հարաբերություններ կան «ինքնաստեղին» իրի և մեկ այլ «ինքնաստեղին» իրի միջև: Ըստ Գուռ Սյանի՝ ամեն ինչ «ինքնաստեղին է», իսկ գոյությունն «ամբողջությամբ հետևում է սեփական բնույթին», հետևաբար «ինքնարավ» է (ուղայ): Մյուս կողմից, «ինքնարավությունը» հնարավոր է, որովհետև «իրերը ստեղծում են իրենք իրենց», «իրերը ստեղծում են իրենց՝ առանց որևէ այլ բանի վրա հենվելու»: Մյուս կողմից, ցանկացած բան կարող է լինել «ինքնարավ», եթե «համապատասխանում է իր իսկ բնույթին» և «զոհի է իր սեփական բնույթից». «Եթե զոհի ես քո սեփական էռլյունից, հսկայական հեքիաբային թռչունը չի արհամարհում ճնճղուկին, իսկ ճնճղուկը չի տեմչում երկնային լճակ, և երկուսն էլ զոհի են: Այսպիսով, մեծ թե փոքր, բոլորն էլ ապրում են գոհության մեջ»: Ուստի, եթե պնդենք, որ իրը ստեղծում է ինքն իրեն՝ առանց որևէ այլ բանի վրա հենվելու, ապա պետք է ընդունենք, որ այն «ինքնաստեղին» է և «ինքնարավ»:

«Ինքնածկափոխություն» և «փոխադարձ անփոխարինելիություն». «ինքնաստեղին» և «ինքնարավ» հասկացությունները պահպանելու համար անհրաժեշտ է լուծում տալ մեկ այլ հարցի: Ենթադրենք, որ ամեն ինչ գոյություն ունի ինքնին, սա սա է, իսկ նա՝ նա, մեկը տարրերվում է մյուսից. այդ դեպքում արդյո՞ք իրերը փոխապակցված չեն: Ենթադրենք, որ բոլոր իրերը հարաբերական են, այդ դեպքում արդյո՞ք դրանք սահմանափակ չեն: Ենթադրենք, որ սահմանափակ են, այդ դեպքում արդյո՞ք «ինքնարավ» (յոու դայ) չեն: Այս հարցին պատասխանելու համար Գուռ Սյանն առաջ է քաշում «ինքնածկափոխում» (յոուհուա) հասկացությունը: Ինքնածկափոխում ասելով նա նկատի ուներ, որ ամեն ինչ ի հայտ է զալիս ու առաջանում անկախ. հետևաբար, «ինքնարավությունը» բացարձակ է: Եթե փորձենք գտնել իրերի ի հայտ գալու և ծննդի պատճառը ու հիմքը, գուցե անսահման քննարկենք այս հարցը, բայց ի վերջո կիանգենք միայն «ինքնարավություն» հասկացությանը: Ուստի, նա ասում է. «Եթե փորձենք պարզել, թե ինչի վրա է հենվում մարդը, և որն է նրա ստեղծման պատճառը, դա անվերջ կլինի, և ի վերջո մենք կիանգենք ինքնարավության զալափարին, իսկ ինքնածկափոխման զալափարն ակնհայտ կդառնա»: Նրա «(Չուանցիի) «Ցի Ու Լուն» գրքի ծանոթագրություններում» Գուռ Սյանը մեջբերում էր մի բացարձակ օրինակ: Նա ասում էր, որ մարմնական ծևը, ստվերը և կիսաստվերը բոլորն էլ բացարձակ անկախ երևույթներ են, քանի որ «երբ անցնում ես իրերի ոլորտի միջով, ամեն ինչ, նույնիսկ կիսաստվերը «ինքնածկափոխվող» է:

Եթե մի բան անկախ գոյություն չունի, ապա ոչինչ էլ անկախ չէ. սա անխուսա-

Վելիորեն հանգեցնում է առաջնային մարմնի (կամ արարչի) գոյությանը, որի «ամեն ինչից» վեր է և ծառայում է՝ որպես նրանց գոյության հիմք և անխուսափելիորեն ճանաչվում «արարման և ծննդի պատճառ»: Չնայած իրերը գոյություն ունեն անկախ և ինքնարավ, քանի դեռ ամեն բան լիարժեք իրականացնում է իր «բնույթը», լիարժեք օգտագործում է այն», և «իմաստունը իմաստուն է մնում մինչ իր կյանքի վերջին օրը, իսկ բթամիտը մինչ ի մահ բթամիտ է մնում», ապա հասանելի է դառնում իիեալական լորտուր, որտեղ «Երկիմքն ու Երկիրը Երկարատև չեն, այլ ապրում են ինձ հետ համընթաց, և աշխարհում իրերը տարամետ չեն, այլ նույն են, ինչ ես»: Այս իրողությունը մնացած յուրաքանչյուր երևույթի կապելը մարդու մեծագույն գործառույթն է. այսինքն՝ «փոխադարձ անփոխարինելիության մեծագույն գործառույթը ինքնածնափոխման կատարելագործումն է: Այլ տեսանկյունից դիտարկելիս ամեն ինչ անփոխարինելի է, քանի դեռ գոյություն ունի: Գուռ Սյանն ասում է. «Մարդը, որն ընդամենը յոթ ոտնաչափ բարձրություն ունի, օժտված է իինգ կայուն առաքինություններով. այսպիսով, տիեզերքում լոկ մարմինն է ապահովված ամեն ինչով: Աշխարհում ոչ մի երևույթ չի կարող փոխարինվել մյուսով: Մեկի բացակայության դեպքում կյանքի միջոցներ չեն լինի. մեկ օրենքի բացակայության դեպքում կյանքը չի կարող գնալ բնական ճանապարհով»: Այսպիսով, գոյություն ունեցող ամեն ինչ ռացինալ է, անխուսափելի և փոխադարձար չբացառվող: Այս տեսակետը կարծես թե հակասում է «ինքնածնափոխման» ուսմունքին, բայց այդպես չէ: Ըստ Գուռ Սյանի՝ ամեն ինչ, որ գոյություն ունի, ռացինալ է, անխուսափելի և փոխադարձարար չբացառող հենց այն պատճառով, որ, օգտագործում է ամեն ինչի գոյության պատճառները, ինչպես նաև լիարժեքորեն և բացարձակ գործի է դնում իր «բնույթը», ստեղծում է ինքն իրեն և ծննդում է ինքնարավ:

Գուռ Սյանի՝ փիլիսոփայական կարգերի համակարգի այս ուսումնասիրությունից տեսնում ենք, որ նրա փիլիսոփայությունն ի վերջո հանգում է «ինքնածնափոխման» ուսմունքին, իսկ «մեծարված կեցության» (չունյողու) հասկացությունն ընդամենը կամուրջ է, որ տանում է դեպի «ինքնածնափոխություն»: Ավելին, Գուռ Սյանի համակարգում, միայն «ինքնածնափոխման» ուսմունքի հաստատումից հետո կարելի է պաշտպանել «վեհ կեցությունը» և ամեն ինչից վեր «չկեցությության» համեմատարար հիմնավոր հերքումը՝ որպես վերջինիս գոյության հիմք:

Եթե ցանկանաք իմանալ, թե արդյոք փիլիսոփան մատերիալիստ է, թե իդեալիստ, հասկանալ նրա փիլիսոփայության բնութագիրը, զաղափարախոսական հարաբերությունները իր նախորդների և հաջորդների միջև և նրա տեղը պատմության մեջ, պետք է նախ վերլուծենք նրա կարգային համակարգը:

#### **17.2.4 Չինացի և օտարերկոյա փիլիսոփաների հասկացությունների և կարգերի նմանությունների ու տարբերությունների վերլուծություն**

Չինական և օտարերկոյա փիլիսոփայությունների կարգային համակարգերի համեմատությունը մեզ հնարավորություն է տալիս ավելի լավ պատկերացում կազմել ավանդական չինական փիլիսոփայության առանձնահատկությունների և մակարդակի մասին: Այս թեմայի ընդարձակության և այս հեղինակի սահմանափակ ուսումնասիրության պատճառով մենք կարող ենք միայն բավական մակե-

րեսային համեմատություն անել Վեյ և Զին դինաստիաների մետաֆիզիկայի և այդ ժամանակահատվածում Զինաստան ներմուծված պրաշնա բուդդայական ուսմունքի միջև։

Վեյ և Զին դինաստիաների մետաֆիզիկայի կենտրոնական թեման «կեցության և չկեցության, ծագման և արդյունքի» հարցն է։ Դետևաբար, «կեցությունը» և «չկեցությունը» երկու հիմնական կարգեր են Վեյ և Զին դինաստիաների մետաֆիզիկայում։ Բուդդայական պրաշնա ուսմունքը նաև քննարկում էր «կեցության» և «չկեցության» (կամ «դատարկություն, կուն») հարցը. ուստի, Դառ-անը ասում է. «Տասներկու գրքերից Վայփուլյան ամենաճոխն է, իսկ կեցության և չկեցության դատարկության մասին նրա ուսմունքը նման է Լաոզգի (Լաո Ցու) և Չուանցիի ուսմունքներին, ուստի Սահայանայի ուսմունքը հեշտությամբ տարածվեց Զինաստանում»։ Բուդդայական պրաշնա դպրոցի «դատարկություն» (կամ չկեցություն) հասկացությունն իրականում տարբերվում է «չկեցություն» գաղափարից, որը պաշտպանում է Վան Բինը և այլ չինացի մետաֆիզիկներ, թեև արտաքուստ երկու գաղափարները նման են իրար։ Սկզբնական չկեցության բուդդայական հասկացությունը, կամ սանսկրիտում Թարհաթան ունի հետևյալ ինաստը՝ «բոլոր տարբեր դիարմաներն իրենց նախնական բնույթով ունայն են ու դատարկ», և բոլոր իրերը չունեն սկզբնական իրական ձևեր։ Վան Բին և այլ մետաֆիզիկներ նաև խոսում էին «սկզբնական չկեցության» մասին, որով, սակայն, նկատի ունեին, որ ամեն ինչ «հիմնված է չկեցության՝ որպես սկզբնաղբյուրի վրա»։ Չնայած «սկզբնական չկեցության» երկու հասկացությունները չի կարելի համարել ամբողջությամբ տարբեր, նրանց ինաստների միջև հսկայական տարբերություններ կան։ Վեյ և Զին դինաստիաների մետաֆիզիկայի ոլորտում Վան Բին շարունակեց Լաոզգի (Լաո Ցու ուսմունքները։ Նրա փիլիսոփայական համակարգում «չկեցություն» կարգը հավասար է «ծանապարհին» կամ «սկզբունքին». ահա թե նա ինչ է ասում. «Մեծության ծայրահեղությունը ճանապարհն է, որ կա... չնայած կարևոր է, որ օժտված լինի չկեցությամբ, բայց չի կարող գոյություն ունենալ առանց չկեցություն նոումնի»։ «Առանց սկզբունքի ոչինչ գոյություն չունի, ամեն ինչ գործում է ըստ իր սեփական օրենքի»։ Ակնհայտ է, որ Վան Բին օգտագործած «չկեցություն» հասկացությունը ոչ թե «ունայնություն» կամ «չգոյություն» է, այլ իրի «եղություն»։ Բուդդայական պրաշնա ուսմունքի «սկզբնական չկեցությունը» միայն նշանակում է, որ «բոլոր տարբեր դիարմաներն իրենց սկզբնական բնույթով ունայն են ու դատարկ»։ Նրանց անդմամբ՝ ամեն ինչ գուրկ է բնույթից, բայց ստեղծվել է հետուալատյայահի գուգորդմանը։ Այստեղ պարզ է դառնում, որ բուդդայական պրաշնա դպրոցը ունայնության մասին իր տրամասության մեջ անդրադառնում է ոչ թե «նյութին», այլ «չգոյությանը»։ Ինչ վերաբերում է «կեցության» բովանդակությանը, Վեյ և Զին դինաստիաների մետաֆիզիկմերը սովորաբար նկատի ունեին «համընդհանուր կեցությունը», մասնավորապես իրականում գոյություն ունեցող իրերի բոլոր տեսակները, մինչդեռ, մյուս կողմից, բուդդայական գրերի բարգմանության մեջ «կեցության» գոյություն եզրույթի բոլոր տարբեր ինաստները բարգմանվում էին «կեցություն» եզրույթով։

Զինաստան մուտք գործելուց հետո բուդդայականությունը նախ Արևելյան Հան դինաստիայի ընթացքում կցվեց դառսական նեկրոմանսիային, իսկ հետո՝ Վեյ և Զին դինաստիաների մետաֆիզիկային։ Արևելյան Զին դինաստիայի չինացի վանականների կողմից ձևավորված պրաշնա ուսմունքի գանազան դպրոց-

Աերն ընդհանուր առնամբ դեռևս կիրառում էին մետաֆիզիկական միտքը՝ պրած-նայի ուսմունքները բացատրելու համար, մինչ Չինաստան ժամանեց Կունարա-ջիվան, որի՝ «Մահապրաճնապարամիտասաստրայի» «Մոդիյամիկասատրա», «Սատասաստրա» և «Դվադասա-միկայա սաստրա» ուսմունքների թարգմանությունը չինացի բուդյայականներին նյութ տրամադրեց բուդյայականության ճշ-մարիտ ինաստր հասկանալու համար: Վանական Զառյի «Ոչ իրական զգոյության մասին» աշխատությունը քիչ թե շատ մոտ է բուդյայական պրածնա ուսմունքի «ոչ կեցություն, ոչ չկեցություն» գաղափարի սկզբնական ինաստին:

Չինական և օտար փիլիսոփայական հասկացությունների և կարգերի համե-մատությունը և վերլուծությունը, հետևաբար, կարող է ցույց տալ նրանց առանձ-նահատկությունները և զարգացման մակարդակը, ինչպես նաև տեղական ավանդական մշակույթի վրա օտար մշակույթի ազդեցությունը և այն գործընթա-ցը, որում օտար մշակույթը ուժանում և դաշնում է նի բաղադրիչը այն երկրի, ագ-գի կամ տարածաշրջանի մշակույթի, ուղ ներմուծվել է:

### 17.3 Ավանդական չինական փիլիսոփայության համակարգի փորձնական տեսություն

Կարգ եզրույթն անթիվ-անհամար սահմանումներ ունի արևմուտքի փիլիսո-փայության պատության մեջ: Արիստոտելն իր «Կատեգորիաներ» («Կարգեր») աշխատության մեջ այն համարում էր կեցության հիմնական կերպ և առաջ քաշ-ում տասը կարգ, որոնք են՝ նյութը, քանակը, որակը, կազմը, տեղը, ժամը, վիճա-կը, գործողությունը և կիրքը: Իսկ Կանտը 12 կարգերը նկարագրում է՝ որպես ճա-նաչողության հետ կապված սկզբունքներ կամ փորձը հաստատող նպաստավոր մասն: Ենթադրու ասում է. «Կարգերը տարբերակման, այսինքն՝ աշխարհը ճանաչելու փուլեր են, առանցքային կետեր, որոնք օգնում են նրան ճանաչել և տիրապետել այն»<sup>108</sup>: Սովետական Միությունում հրատարակված «Փիլիսոփայության բառա-րանում» կարգ եզրույթը սահմանվում է՝ որպես «հիմնական հասկացություն, որն արտացոլում է իրականության տարրեր երևույթերի և գիտելիքի ամենաընդհա-նուր և ամենաէական բնույթը, կողմը և հարաբերությունը»:

«Կարգ» հասկացությունն ընդհանուր առնամբ բացատրվում է երկու կողմից՝ գոյության և իրականության իմացության. գոյության դիտանկյունից այն սահման-վում է՝ որպես «գոյության հիմնական կերպ» կամ «իրական երևույթների ամենա-ընդհանուր և ամենաէական բնույթ, կողմ և հարաբերություն». գիտելիքի տե-սանկյունից այն սահմանվում է՝ որպես «փորձ կազմող նախապայման» կամ «ցանցի առանցքային կետ, որն օգնում է ճանաչել և տիրապետել այն»: Գիտելի-քի համար անհրաժեշտ նախապայմանը միանշանակ «գոյության հիմնական կեր-պի» արտացոլումն ու դրսերումն է, մինչդեռ «գոյության հիմնական կերպն» ինաստ ունի միայն մարդու գիտելիքի գործընթացում: Վերը նշվածից տեսնում ենք «կարգի» և «հասկացության» հարաբերությունները. կարգը հիմնական հաս-կացություն է, մինչդեռ հասկացությունը ոչ միշտ է կարգ: Այսիսով, մենք այստեղ

108. Վ.Ի.Լենին, «Լիակատար աշխատություններ» (Մոսկվա, Օտար լեզուների հրա-րանականություն, 1961), XXXVIII, 92

քննարկում ենք, թե որոնք են ավանդական չինական փիլիսոփայության կարգերը կամ հիմնական հասկացությունները: Եթե, օգտագործելով դասական չինական փիլիսոփաների հիմնական հասկացությունները, կարողանանք ձևավորել համակարգ, որը ցույց է տալիս, թե ավանդական չինական փիլիսոփայությունն ինչպես էր հասկանում և բացատրում «գոյության հիմնական կերպը», և ինչպես են բացահայտվում ավանդական չինական փիլիսոփայական մտքի զարգացման ուղղությունները, ապա կապացուցենք, որ ավանդական չինական փիլիսոփայությունն ունի կարգային համակարգ: Սա ներկայացված է նախ գծագրի միջոցով, ապա բացատրվում է ստորև:

Այս գծագրում հիմնական հասկացությունների 20 գույգերը կազմում են ավանդական չինական փիլիսոփայության կարգային համակարգը: Սա միանշանակ խիստ նախնական պնդում է: Սակայն, չնայած նրա բազմաթիվ հնարավոր թերություններին, այն նպատակ ունի քննարկել և ուսումնասիրել այս հարցը: Այստեղ հեռինակը կցանկանար բացատրել նի շարք կենտեր.


1 Գծագրը բաժնաված է երեք խոշոր մասի: Առաջին մասը նպատակ ունի ցույց տալ, թե ինչ հիմնական հասկացություններ են օգտագործվում ավանդական չինական փիլիսոփայության մեջ աշխարհի գոյությանը վերաբերող հարցի առնչությամբ: Երկրորդ մասը ցույց է տալիս, թե ինչ հիմնական հասկացություններ են կիրառվում կեցության ձևը ներկայացնելու համար, իսկ երրորդ մասը նպատակ ունի ցույց տալ, թե ինչ հիմնական հասկացություններ են օգտագործվում՝ մարդու գոյությունն ու գիտելիքը արտահայտելու համար: «Երկնքի» (կամ երկնային ճանապարհ) և «մարդու» (կամ մարդու ճանապարհ) միջև հարաբերությունները մշտապես եղել են ավանդական չինական փիլիսոփայության քննարկման կիզակետում, և հենց այս հարցի շուրջ չինական փիլիսոփայության պատմության մեջ մշտապես պայքար է ընթացել մատերիալիզմի և իդեալիզմի միջև:

8ի Քանը առաջին չինացի փիլիսոփան էր, որն իր հիմնավորումը ներկայացրեց երկուսի հարաբերությունների մասին: Նա գրում է. «Երկնքի ճանապարհը հեռու է, իսկ մարդու ճանապարհը՝ մոտ»: Կոնֆուցիոնը մեծ նշանակություն էր տալիս «Երկնքի իշխանությանը», բայց ավելի մեծ ուշադրության էր արժանացնում «մարդու գործերը»: Չնայած նա նշում էր, որ «Երկնքի իշխանությունը ճանաչեց հիսուն տարեկանում», հազվադեպ էր քննարկում այս հարցը: «Վարպետը հագվաղեալ էր քննարկում բնության և երկնային ճանապարհի հարցը», -հայտնում են «Տարեգրքերը», որոնք, սակայն, ներկայացնում են Կոնֆուցիոնի բազմաթիվ ասուլյեները «մարդու ճանապարհի» մասին: Մենցիոսը խոսում էր «բնությանը հնագամնդելու և ճակատագիրն ու Երկինքը» ճանաչելու, ինչպես նաև «Միջինի ուսմունքի» մասին՝ ասելով. «Անկեղծությունը Երկնքի ճանապարհն է. անկեղծությունը ճանաչելը՝ մարդու ճանապարհը»: Սունցին ասում է. «Ընկալիր Երկնքի և մարդու ճանապարհը»: Դասից հիմնադիր Լաոցին (Լաո Ցու) ասում է. «Երկնային ճանապարհն ինքնարուխ անգործություն է»: Նա անտեսում է «մարդասիրության և արդարամտության» (մարդու ճանապարհը) կարևորությունը: «Երկինքը մոլորեցրեց Զուանցիին, և նա չճանաչեց մարդուն»: Յան դինաստիայի կոնֆուցիական վարպետ Դուն Զունչուն իր հետազոտությունը նկարագրում էր՝ որպես «Երկնքի և մարդու» հարաբերության ուսումնասիրություն: Սինա Ցյանը, որը կրում էր դառսական մտածողության ազդեցությունը, ասում էր, որ իր «Պատմական արձանագրություններ» աշխատությունը «Երկնքի և մարդու հա-

## Իձյե ԹԱՆ

Կոնֆուցիականությունը, բուդդայականությունը, դառսիզմը, քրիստոնեությունը և չինական մշակույթը

բարերությունների և անցյալ ու ներկա փոփոխությունների հետազոտություն է»: Վեյ և Զին դինաստիաների մետաֆիզիկները կենտրոնանում էին «ինքնաբերության (Երկնքի ճանապարհը)» և «բարոյագիտության (Էթիկա)» (մարդու ճանապարհը) հարցի վրա: Այսպիսով, Յե Յան ասում է. «Միայն Վան Բիի նման մարդկանց հետ կարող ես քննարկել Երկնքի և մարդու հարաբերությունների հարցը»:



Սուլ դինաստիայի թե՛ Սկզբունքի դպրոցի (Լիսյուե), թե՛ Մտքի դպրոցի (Սինսյուե) նեղունֆուցիականները միանգամայն հավատացած էին. «Գերագույն ծայրակետը (Երկնքի սկզբունքը) պարզապես բացարձակ գերազանց և հրաշալի նորմատիվային սկզբունք է». գերագույն ծայրակետը «այն ամենն է, ինչ բարի է Երկնքուն և Երկրի վրա, մարդկանց և իրերի մեջ»: «Երկնքի սկզբունքները» և «մարդու ցանկությունները» դեռևս Երկնքի և մարդու հարաբերության հարց են: Նույնիսկ Վաճ Ֆուչժին այն համարում էր իր փիլիսոփայական տրամասության առանցքային կետ: Նա պնդում էր, որ «Ծեսերը, անկախ նրանից, թե որքան անբասիր են, ընդամենը Երկնքի սկզբունքների արտահայտությունն են, որոնք անխուսափելիորեն հայտնվում են մարդու ցանկություններում», և որ «մարդու ցանկությունը, երբ հասնում է գերագույն այլասիրության (ալտրուիզմ), Երկնքի սկզբունքի կատարելագործումն է»: Այսպիսով, ավանդական չինական փիլիսոփայությունն առաջ է գնացել զույգ կարգերի քննարկումից. Երկնքի (ճանապարհը) և մարդու (ճանապարհը) ավանդական չինական փիլիսոփայության կենտրոնական հիմնախնդիրն ու հատուկ բովանդակությունն է:

(2) Այս գծագիրը ցույց է տալիս ավանդական չինական փիլիսոփայության կարգերի և դրանց հարաբերությունների զարգացումը: Սկզբնավորվելով Երկնքի և մարդու հարաբերությունների ուսումնասիրությունից՝ ավանդական չինական փիլիսոփայությունը բաժնավում է Երկու ճյուղի՝ դասուիզմ (թառոսիզմ) և կոնֆուցիականություն: Լաոզին (Լաո Ցու) առաջ է քաշում «Ճանապարհի, և «բոլոր իրերի» հարաբերությունը: Նա ասում է. «Ճանապարհը ստեղծում է մեկ, մեկը Երկու, Երկուսը Երեք, Երեքը՝ բոլոր Երևույթները»: Նա նաև ասում է. «Աշխարհում բոլոր իրերը ստեղծվում են կեցությունից, իսկ կեցությունը՝ չկեցությունից. հետևաբար, «Ճանապարհի» և «իրի» հարաբերությունը նույնական ներկայացված է «կեցություն» և «չկեցություն» զույգ կարգերի միջոցով: Սակայն կոնֆուցիական դպրոցը «Մեկնաբանություններ Փոփոխությունների գործի մասին» աշխատության մեջ առաջարկում էր «Ճանապարհի» և «գործիքի կամ միջոցի» կարգերը՝ ասելով. «Այն, ինչ ծևավորում է և վերևում, կոչվում է ճանապարհ, իսկ այն, ինչ ծևավորում է և ներքևում է, կոչվում է գործիք» և ավելացնում է. «Փոփոխությունը պարունակում է գերագույն ծայրակետը, որը ստեղծում է Երկու ծայրահեղություն» և «ինի և յանի հաջորդականությունը կոչվում է ճանապարհ»: Այսպիսով, ճանապարհի և միջոցի հարաբերությունն արտացոլված է գերագույն ծայրակետի և ինի ու յանի կարգերում: Յան դինաստիայում տեղի ունեցավ փիլիսոփայական մտքի որոշակի զարգացում, բայց այն գործնականորեն չհանգեցրեց նոր և ազդեցիկ փիլիսոփայական կարգի առաջացմանը. Վեյ և Զին դինաստիայի մետաֆիզիկները պաշտպանում էին Երեք փիլիսոփայական դասերը՝ Լաոզի (Լաո Ցու), Զուանցի և Չոռու ի, որի արդյունքում դասուիզմ (թառոսիզմ) աստիճանաբար սկսեց ծոլվել Զոռուի իի համակարգի կոնֆուցիականության հետ: Այն ճանաչում էր առաջնային մարմնի՝ որպես տիեզերքի սկզբնադրյուրի տեսությունը, Լաոզի (Լաո Ցու) տեսությունը և Զուանցիի միտքը՝ որպես հենք: Վեյ և Զին դինաստիաների մետաֆիզիկները «Էռություն» և «գործառույթ», «արմատ և ճյուղ», «մեկը» և «բազումը» կարգերն օգտագործում էին՝ «չկեցությունը» (նախնականը) և «կեցությունը» (ամեն ինչ կամ այս նյութի զանազան դրսերումները ներկայացնելու համար: Նրանք օգտագործում էին «ինքնարերությունը» (եռթյուն) և էրիկան (գործառույթ)՝ «տիեզերքի յուրօրինակության» (նախնական մարմնի) և «մարդկային հա-

սարակական հարաբերությունների (զանազան հասարակական դիրքեր և օրենսգրքեր) հարաբերությունը ներկայացնելու համար, իսկ «գաղափար» և «խոսք» գույքը՝ տիեզերքի նյութի ընկալմանն ուղղված հարցերը բացատրելու համար։ Վեյ և Չին դինաստիաներից և Յուսիսի և Յարավի դինաստիաներից սկսած՝ ավանդական չինական փիլիսոփայական միտքը, Յնդկաստանից ներմուծված բուդդայականության ազդեցության ներքո, Սուն դինաստիայում զարգացված և վերածվեց ներկոնֆուցիականության։ Եթե Վեյ և Չին դինաստիաների նյութի մետաֆիզիկական ուսմունքն ընդգրկում է Լաոզգի (Լաո Ցու) և Չուանցիի միտքը՝ որպես հենք, ապա Սուն-Մին դինաստիաների ժամանակահատվածում ներկոնֆուցիականությունը հաջորդաբար հիմնված էր օրյեկտիվ իդեալիզմի (ներկայացված է Չու Սիի կողմից), սուբյեկտիվ իդեալիզմի (ներկայացված է Վան Յանմինի կողմից) և բարձրակարգ մատերիալիզմի (ներկայացված է Վան Ֆուժի-ի կողմից) վրա։ Այս ժամանակաշրջանի փիլիսոփայական կարգերը հաջորդեցին Վեյ և Չին դինաստիաների մետաֆիզիկային և նաև Սույ և Թան ժամանակաշրջաններում յուրացրեցին թան բուդդայական միտքը։ Այսպիսով, կոնֆուցիականությունը, դառսիզմը (թառսիզմ) և բուդդայականությունը միախառնվեցին կոնֆուցիականության կաղապարի մեջ։ Ժամանակի ամենահիմնական փիլիսոփայական կարգերը դարձան «սկզբունք» և ցի, «միտք» և «նյութ»։ «մտքի» և «բնության» հարցը վերածվեց նրա, թե արդյոք «միտքն է սկզբունք», թե «բնությունն է սկզբունք»։ «Սուբյեկտ» և «օրյեկտ», «իդերի հետազոտություն» և «սկզբունքի իդագործում» կարգերն օգտագործվեցին գիտելիքի հարցի քննարկումներում, իսկ «Երկնային սկզբունք» և «մարդկային ցանկություն» կարգերը՝ հասարակական հիմնախնդիրներ քննարկելու համար։

Լենինն իր «Դիալեկտիկայի հարց» շուրջը՝ աշխատության մեջ գրում է.

Փիլիսոփայության «շրջանները»։ (անձերի ժամանակագրությունը էակա՞ն է։ Ո՞չ։ Անտիկ։ Դեմոկրիտից մինչև Պլատոն և Յերակլիտի դիալեկտիկա։

Արդի. Յոլբախ - Շեգել (Բերքլիի, Յուլի և Կանտի միջոցով)։ Շեգել - Ֆոյերբախ - Մարքս<sup>109</sup>։

«Շեգելի «Փիլիսոփայության պատմության դասախոսություններ» գրքի համառուտագրում» նա գրում է. «Փիլիսոփայության պատմության համեմատությունը շրջանի տեսքով... շրջանը՝ առհասարակ մարդկային մտածողության զարգացման մեջ շրջանի (պարույր) մի մաս»<sup>110</sup>։ Շրջանի միջոցով փիլիսոփայության պատմության Շեգելի համեմատությունը, ինչպես մատնանշում է Լենինը, փիլիսոփայական մտքի զարգացման օրենքի արտացոլումն է։ Սա մեծ կարևորություն ունի ավանդական չինական փիլիսոփայական մտքի զարգացման մեր ուսումնասիության համար։

Վերը նշված գծագրից կարող ենք տեսնել, որ ավանդական չինական փիլիսոփայության զարգացումն ընդհանուր առմամբ կազմված է երեք պարուրածն շրջանից, առաջինը ներառում է Ցին դինաստիային նախորդած ժամանակաշրջանը. կոնֆուցիական դպրոցը, ներառյալ Կոնֆուցիոնը, Մենցիոնը և Չուանցին (կամ Փոփոխությունների գրքի մեկնաբանությունները), դառսիզմը (թառսիզմ), ներառյալ Լաոզգին (Լաո Ցու), Շուսյայի դպրոցը, (այն է՝ «Սպիտակ սիրտ և այլ

109. Մեջբերումը՝ նույն աղբյուրից, էջ 362:

110. Մեջբերումը՝ նույն աղբյուրից, էջ 247:

երկեր), և Չուանցին, իսկ Յան դինաստիան ձևավորել է անցումային ժամանակաշրջանը: Երկրորդ շրջանը Վեյ և Չին դինաստիաներն են, որ ներկայացնում էին Վան Բի-Սյան Սյուլ-Գուռ Սյանը (կամ Վան Բի-Գուռ Սյան-Սեն Զառն): Բուդդայականությունը նորածն էր Յուլսիսային և Յարավային դինաստիաներից մինչև Սույ և Թան դինաստիաներ, իսկ զարգացման շրջանից հետո բուդդայականությունը Չինաստանում զարգացավ և բաժանվեց մի շարք ուղղությունների, ինչպիսիք են Յուայան աղանդը (Ավատանսակա) և Չան (Չեն) ուղղությունը: Երրորդ շրջանը ներառում է Սուն և Մին դինաստիաները, որոնք ներկայացնում եր Չան Ցայ-Չու Սի Վան Ֆուջին:

(3) Գծագրի երկրորդ այլնակում ներառված է կարգերի միայն երեք գույգ, որոնցից ամենահիմնարարը «պասիվություն» և «շարժում» գույգն է, որը դրսկորվում է «հաստատում» և «փոփոխական» գույգով, չնայած իրականում «դրականն» ու «բացասականը» նույնպես «պասիվության» և «շարժման» յուրահատուկ դրսկորումներ են: Չնայած բազմաթիվ չինացի ավանդական փիլիսոփաները քննարկում էին «պասիվության» և «շարժման» հարցը, չինացի փիլիսոփաները (բացի Ցին դինաստիային նախորդող շրջանի Անունների դպրոցի փիլիսոփաներից և ուշ Մոհիստուկան դպրոցի փիլիսոփաներից) հազվադեպ են քննարկել «ժամանակի» և «տարածության» հարցը: Ավանդական չինական փիլիսոփայության փիլիսոփայական հիմնավորումները կարծես թե չեն սահմանափակվում ժամանակով կամ տարածությամբ, և նրանք մեծ ուշադրություն չեն դարձնում այն հարցին, թե արդյոք շարժումը տեղի էր ունենում ժամանակի և տարածության մեջ: Դա է պատճառը, որ մենք մեր գծագրում չենք ներառել ժամանակի և տարածության կարգերը:

(4) Մարդու հարցը (մարդու ժամապարհը) շատ է քննարկվել ավանդական չինական փիլիսոփայության մեջ, որը հատկապես բնութագրվում էր «բարոյագիտության» (եթիկա) տեսանկյունից: Յետևաբար, պետք է գգուշորեն նոտենալ այն հարցին, թե ինչ կարելի է ներառել ավանդական չինական փիլիսոփայության կարգային համակարգում: Այս գծագրում (այլնակ III) կարգերի հիմնագույգերը (ըստ երթյան ոչ բոլորն են կապված մարդու ժամապարհի հետ) կարծես թե բավարար են՝ հիմնական հասկացությունները կոչվելու համար: «Ոգին» և «ծեր» կամ հոգու և մարմնի հարաբերությունները օգտագործվում են մարդկային կյանքի երևույթների ուսումնասիրության համար: Սա քննարկվում էր դեռևս Ցին դինաստիայից առաջ, եթե՛ մատերիալիստներն ու իդեալիստները տարբեր տեսակետներ ունեին: «Բնույթի» և «զգացմունքի» հարցը կարելի է դիտարկել՝ որպես առանցքային բարոյագիտական հիմնախնդիր: «Բնույթի» հարցի մասին տարատեսակ կարծիքներ են եղել՝ Ցին դինաստիային նախորդող ժամանակաշրջանում. դրանցից էին «մարդը ծնվում է բարի երթյամբ», «մարդը ծնվում է չար երթյամբ», «մարդը ծնվում է թե՛ բարի, թե՛ չար երթյամբ», «մարդը ծնվում է ոչ բարի, ոչ չար երթյամբ» և «մարդը ծնվում է բարի կամ չար երթյամբ, և ամեն ինչ կախված է տվյալ մարդուց» և այլն: Ինչ Վերաբերում է բնույթի և զգացմունքի հարցին, ըստ որոշ տեսակետների՝ «բնույթը լավ է, զգացմունքը՝ վատ», «բնույթը պասիվ է, զգացմունքը՝ ակտիվ» և այլն: Վեյ և Չին դինաստիաների մետաֆիզիկները մեծ ուշադրություն էին հատկացնում այս հարցին, բայց կենտրոնանում էին իմաստումի և հասարակ մարդու տարրերության և նմանության քննարկման վրա: Սուն և Մին դինաստիաների ներկոնքուցիականները բնույթը բաժանում էին

«համընդհանուր բնույթի» և «իմունային բնույթի». առաջինը ծագել է «Երկնքի սկզբունքից», երկրորդը՝ մարդու ներհատուկ զգացմունքից և ցանկությունից, կամ ցիից, ինչից է կազմված է մարմինը: Այսպիսով, սա դեռևս բնույթի և զգացմունքի հարց է, և բարոյագիտական կրթության կարևորագույն խնդիրն է՝ «պահպանել Երկնքի սկզբունքը և ճնշել մարդկային ցանկությունը»: «Գիտելիքի» և «գործողության» հարցը նույնպես կարևոր դիրք է գրադեցնում ավանդական չինական փիլիսոփայության մեջ: Անցյալում չինացի փիլիսոփաները գերազանցապես կարևորում էին թե՝ «ճանաչումը», թե՝ «գործողությունը», և կարծում էին, որ վերջինս շատ ավելի կարևոր է: «Անվան» և «ակտուալության» կարգերը մշտապես ներառված էին ավանդական չինական փիլիսոփայության մեջ, իսկ «սուրյեկտ» և «օբյեկտ» կարգերը փոխառվում էին բուդդայականությունից, բայց չորսն էլ կապված էին գիտելիքի հարցի հետ: Յետևաբար, գծագրի երրորդ սյունակի կարգերը ներառում են նաև գոյությունն ու գիտելիքը:

## 17.4 Քննարկում

Քանի որ ավանդական չինական փիլիսոփայության կարգային համակարգը բավական բարդ և խճակած է, այն լուրջ և համակողմանի քննարկման կարիք ունի: Ներկայացնում ենք միայն նախնական տեսակետներ հարցերից մի քանիսի մասին.

(1) Արդյո՞ք կարգային համակարգում կարգերը պետք է ներկայացված լինեն գոյությունում:

Այս հարցը պետք է քննարկվի երկու կողմից: Մի կողմից, փիլիսոփայության պատմության մեջ փիլիսոփայի օգտագործած կարգերը կարող են և ներկայացված չլինել գոյագերով: Օրինակ, «ինքնարերություն» հասկացությունը, որն օգտագործում էր Լաոցի (Լաո Ցու), կարծես թե չունի իր հակադրությունը «Լաոցգի» (Լաո Ցու) գրքում: Ցի հասկացությունը, որը «Գուանցիի» գրքի «Սպիտակ սիրտ» գլխում օգտագործվում է՝ որպես ամենաընդհանուր հասկացություն, կարծես թե նույնպես չունի հականիշ: Ինչու, նկատի առնելով ավանդական չինական փիլիսոփայության զարգացումն ամբողջությամբ՝ պետք է ասել, որ կարգերը գոյագերով են: Օրինակ, «ինքնարերություն» հասկացությունը գուգակցվում է «բարոյագիտության» հետ, «սկզբունքը»՝ «ցիի» հետ: Մյուս կողմից, ամեն ինչ հակասական է. երկու հակասական կողմ, որոնցից մեկն առանց մյուսի գոյություն չունի: Յետևաբար, կարգերը, որոնք արտացոլում են իրերի եական հարաբերությունները, պետք է ներկայացված լինեն հակասությունների գոյագերով: Ավանդական չինական փիլիսոփայության փիլիսոփայական հասկացություններից ու կարգերից մի քանիսն, անշուշտ, կարծես թե չունեն հակադրի իմաստներ. այդպիսին է, օրինակ «միջինի կարգը»: Մենք միանցանակ չենք կարող ասել, որ գոյություն ունի «հակամիջին»: Սակայն միջինի իմաստի վերլուծությունը գուցե և հանգեցնի այս հարցի լուծմանը: Կոնֆուցիոսն առաջ էր քաշում «միջինի ուսմունքը», որը հակադրվում էր «չափազանցությանը»: Նա ասում է. «Ավելցուկը հանգեցնում է անբավարարության»: Այսպիսով, «միջին» բառն ունի «մեջտեղ» կամ «ճիշտ» իմաստները: Յետևաբար, ավանդական չինական փիլիսոփայության մեջ «դրական» և «բացասական» հասկացությունների գոյությունն արդեն իսկ բավարար է, քանի որ «միջինը» ներառված է «դրականի» իմաստի մեջ:

Արևմտյան փիլիսոփաների օգտագործած ոչ բոլոր կարգային համակարգերն են արտացոլում հակադիր հասկացությունների միասնությունը: Արիստոտելի տասը կարգերից մի քանիսը կարելի է գուգակցել այնպիսի հակադիր իմաստների հետ, ինչպիսիք են «որակն» ու «քանակը», բայց, օրինակ, «նյութը» չունի հատուկ հակադիր իմաստ, չնայած մյուս ինը կարգերը կարելի է համարել «նյութի» հակադիր իմաստներ: Կանոնի 12 կարգերը և Յեգելի «Տրամարանության» կարգային համակարգը հիմնականում կազմված է հակադիր իմաստների գույգերից: Չնայած կարգային համակարգի մասին իրենց տարամետ տեսակետների՝ բոլոր մարքսիստ փիլիսոփաները համաձայնում են, որ կարգերը ներկայանում են գույգերով, օրինակ՝ նյութ և երևույթ, բովանդակություն և ծն, անհրաժեշտություն և հնարավորություն, հավանականություն և ակտուալություն և այլն: Ըստ մարքսիստական փիլիսոփայության՝ կարգերը պետք է պահպանվեն հակադրությունների գույգերով. սա միանշանակ ծիշտ տեսակետն է և արտացոլում է իրերի իրականությունը: Յետևաբար, երբ մենք այսօր ուսումնասիրում ենք ավանդական չինական փիլիսոփայության կարգային համակարգը և ծգոտում, որ այն ավելի համակարգված և գիտականորեն արտացոլի ավանդական չինական փիլիսոփայության առանձնահատկություններն ու մակարդակը, պետք է փորձենք պարզել նրա կարգային համակարգի հակադրությունների միասնության օրենքը:


(2) Քանի՞ կարգ պետք է ներառի ավանդական չինական փիլիսոփայության կարգային համակարգը, որպեսզի բավարար լինի՝ բացատրելու համար «կեցության իիմնական կաղապարը» կամ ներկայացնելու «իիմնական հասկացությունները, որոնք արտացոլում են ամենահիմնարար առանձնահատկությունները, կողմերը, երևույթների հարաբերությունները և իրականության իմացությունը»:

Ավանդական չինական փիլիսոփայության կարգային համակարգի հիմնական հասկացությունների 20 գույգերն ընդամենը փորձնական առաջարկություն են: Դրանք հիմնականում ցույց են տալիս, թե ինչ է «աշխարհը», և ինչ է «մարդը». օրինակ, «աշխարհի» գոյությունը ներկայացնում է «սկզբունքն» ու ցին, իսկ «մարդու» գոյությունն» ընդգրկում է «հոգին» ու «ձևը»: Արևմտյան փիլիսոփաների առաջարկած կարգերը, սակայն, ընդհանուր առմամբ ցույց են տալիս գոյության կերպը և «գիտելիքի սկզբունքները»: Մարքսիստական փիլիսոփայության ժամանակակից կարգերն ամբողջությամբ ցույց են տալիս կեցության առանձնահատկություններն ու կողմերը և չեն ներառում ամենահիմնական հասկացությունները, ինչպիսիք են «միտքն» ու «իրը» կարգային համակարգում: Այս չափանիշով էլ պերը թվարկված կարգերից մի քանիսը չպետք է ներառվեն ավանդական չինական փիլիսոփայության կարգային համակարգում, իսկ որոշ այլ հասկացություններ էլ պետք է ավելացվեն: Սակայն ավանդական չինական փիլիսոփայության համակարգի մեր նկարագրությունը կարող է դիտարկվել որպես մոտեցում, որովհետև գծագրում ներկայացված զանազան կարգերը ցույց են տալիս «գոյության իիմնական կերպը», նրանց բովանդակությունը. նրանք նարդու իմացության «ցանցի առանձքային կետերն են»: Այդ դեպքում մի՞թե մեր ներկայացրած եղանակն ավելի հարմար է ավանդական չինական փիլիսոփայության առանձնահատկություններն ու մակարդակն արտացոլելու համար: Անշուշտ, շատ ավելի լավ կլիներ, եթե կարողանայինք ավելի քիչ հիմնական հասկացությունների միջոցով ցույց տալ ավանդական չինական փիլիսոփայությունը, ինչպես ներկայացված է հաջորդ էջի գծագրում:

(3) Արդյո՞ք «ավանդական չինական փիլիսոփայության կարգային համակարգը» կարող է արտացոլել նրա առանձնահատկություններն ու նակարդակը:

Սա մեծ հարց է, որովհետև լուրջ հետազոտություն և լիարժեք քննարկում է անհրաժեշտ ավանդական չինական փիլիսոփայության առանձնահատկությունները և նակարդակը հստակեցնելու համար: Արդյո՞ք կարելի է ասել, որ կարգային համակարգի մեր գծագիրը քիչ թե շատ արտացոլում է ավանդական չինական փիլիսոփայության առանձնահատկություններն ու նակարդակը: Ակնհայտ է, որ ավանդական չինական փիլիսոփայությունը հատուկ ուշադրություն էր հատկացնում գոյության հիմնական կերպին, մարդու գոյությանը, իրերի միջև հարաբերություններին, այն է՝ իրերի ինքնության ուսումնասիրությանը, հետևաբար՝ ստեղծվում էին բազմազան հասկացություններ, ինչպիսիք են՝ «Երկինքն ու մարդը միավորվում են», «գիտելիքն ու գործողությունը միավորվում են», «էռությունն ու գործառությը նման են իրար», «չկեցությունը ծագում է կեցությունից», «հոգին և ձևը միավորվում են» և «միտքն ու նյութը մեկ ամբողջություն են»: Չնայած ավանդական չինական փիլիսոփայության մեջ շատ չեն քննարկվել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են ժամանակն ու տարածությունը, պատճառն ու ազդեցությունը, որոնք ներառված չեն մեր գծագրում, այնուամենայնիվ, որպես կարգային համակարգ՝ ավանդական չինական փիլիսոփայությունն արդեն իսկ ձեռք է բերել բավական բարձր մակարդակ, եթե համեմատենք անտիկ արևմտյան և հնդկական փիլիսոփայությունների հետ, այն իմաստով, որ այն անդրադառնում է գաղափարների լայն շրջանակի, արտահայտվում է բոլոր հիմնական հասկացությունների գույգերի միջոցով և աշխարհն ավելի ու ավելի մեծ խորությամբ արտացոլող հասկացական իմաստների գարգացմանը:

Ավանդական չինական փիլիսոփայության կարգային համակարգը դեռևս լայնորեն չի քննարկվել և բավական նոր թեմա է: Այստեղ հեղինակը հանդգնել է առաջարկել որոշ նախնական առաջարկություններ՝ նպատակ ունենալով հետաքրքրություն արթնացնել այս նյութի քննարկման շուրջ և հուսալով, որ չինական փիլիսոփայության պատճության ուսումնասիրությունը, մարքսիզմի առաջնորդությամբ, կշարունակվի ավելի գիտական հիմքերի վրա:



## ԳԼՈՒԽ 18

### Նոր առաջընթաց Չինական փիլիսոփայության պատմության ուսումնասիրության մեջ<sup>111</sup>

Վերջին տարիներին չինական փիլիսոփայության պատմության ուսումնասիրությունը մեծ զարգացում է ապրել Չինաստանում: Չիննադրվել է Չինական փիլիսոփայության պատմության միություն, որը հրատարակում է երկու ամսագիր՝ «Չինական փիլիսոփայության պատմության ուսումնասիրություն» և «Չինական փիլիսոփայություն», որոնք գրադպում են այս ոլորտում հետազոտությունների արդյունքների հրատարակությամբ: Դրատարակվել են այս թեմային նվիրված մի շարք գրքեր, անց են կացվել տասնյակ գիտաժողովներ, որոնք քննարկել են հատուկ հիմնախնդիրներ: Այսպիսով, ի հայտ են եկել բազմազան տեսակետներ, որոնք վերաբերում են չինացի փիլիսոփաներին՝ Կոնֆուցիոսից մինչև Սուն Յաթսեն: Այս ամենն ազդարարում է չինական փիլիսոփայության պատմության ուսումնասիրության նոր առաջընթացը: Ինչևէ, ես չեմ առաջարկում այստեղ քննարկել կոնկրետ հիմնախնդիրներ, փոխարենը կցանկանայի խոսել ուսումնասիրության մեջ գերակա միտումների մասին, քանի որ դրանք կարող են ավելի լավ պատկերացում տալ այս ոլորտում նկատվող առաջընթացի և այն նոր հեռանկարային կետերի մասին, որոնք դեռևս կրացվեն ուսումնասիրություններում: Այս լույսի ներքո կցանկանայի անդրադառնալ չորս փոխկապակցված հիմնախնդիրների:

#### 18.1 Չինական փիլիսոփայության պատմությունը՝ որպես չին ազգի գիտելիքի պատմություն

Անցյալում գոյություն է ունեցել մի տեսություն, որը ելնում էր այն դասական եզրակացությունից, որ փիլիսոփայության պատմությունը մատերիալիզմի և իդեալիզմի միջև պայքարի պատմական արձանագրությունն է, իսկ փիլիսոփայության պատմության ուսումնասիրություն՝ մարդու գիտելիքի և տեսական մտածողության զարգացումը կառավարող օրենքների զարգացում: Սակայն, փիլիսոփայության պատմությունը զուտ որպես մատերիալիզմի և իդեալիզմի միջև պայքարի պատմական արձանագրություն դիտարկելու բազմաթիվ տարիների պրակտիկան ոչ միայն հաճացեցրեց այնպիսի թերությունների, ինչպիսիք են գերպարզեցումն ու անխտրական նոտեցումը, այլև նրան չհաջողվեց ճանաչել ցանկացած հասկացություն, որը կանոնավոր բնույթ էր կրում: Ինչպես պետք է լուծել այս խնդիրը: «Էրեալիզմի գնահատման» և «փիլիսոփայության պատմության ուսումնասիրության առարկայի» շուրջ քննարկումները չկարողացան հանել մեզ այս բարդ հրավիճակից: Այսպիսի հանգանանքներում մարդիկ սկսեցին իրենց ուշադրությունը կենտրոնացնել ուսումնասիրության վրա, թե ինչպես փիլիսոփայու-

111. Կոնֆուցիականությունը, բուդդայականություն, դառսիզմ, քրիստոնեություն և չինական մշակույթ, 1991: 39-48

թյունը՝ որպես տեսական մտածողություն, զարգացավ պատմության մեջ և չկցվեց միայն առանձին փիլիսոփաների դասակարգային խորապատկերին և պատմության մեջ նրանց գրանցեցրած տեղին:

Փիլիսոփայական գաղափարը, որ մի ժամանակ կարևոր դեր էր խաղում մարդու գիտելիքի զարգացման գործում, բնականաբար տեղ ուներ պատմության մեջ: Բայց լայնանասշտար քննարկումը մատերիալիզմի և իդեալիզմի հարաբերական գերազանցության կամ ստորադասության մասին անտեղին է, որովհետև այն, թե երկուսից որն է ավելի լավ, կարելի է հաճախատ որոշել՝ պարզելով, թե նրանցից յուրաքանչյուրն ինչ ազդեցություն է թողնում մարդու գիտելիքի զարգացման վրա: Չինական փիլիսոփայության պատմության ուսումնասիրությունը մասնավորապես հակված էր ընդգծել որոշակի փիլիսոփայի կամ փիլիսոփայական դպրոցի դերը պատմության մեջ, և թե նրանք ինչպես էին կապված այն ժամանակ ընթացող դասակարգային և քաղաքական պայքարի հետ: Անշուշտ, նմանատիպ ուսումնասիրությունները նույնպես կարևոր են. չնայած եթե խիստ դատենք, սրանք այն խնդիրներն են, որոնց լուծնան համար էլ ի վերջո ստեղծված է փիլիսոփայության պատմական ուսումնասիրությունը: Այսպիսի պատմական ուսումնասիրության վերջնական նպատակն է՝ բացահայտել տեսական մտածողության զարգացման տրամաբանական անխուսափելիությունը, ինչպես և պատահեց պատմության մեջ: Արդյո՞ք Ցին դինաստիային նախորդող ժամանակաշրջանում անխուսափելի էր Կոնֆուցիոսի գաղափարների զարգացումը Մենցիոսի և Սունցիի գաղափարների միջոցով:

Ներկայում ավելի ու ավելի շատ մարդիկ են ուսումնասիրում չինական փիլիսոփայության պատմությունը՝ որպես գիտելիքի պատմություն: Օրինակ, «Չինական փիլիսոփայության զարգացման պատմություն» վերնագրով բազմահատոր գիրքն այժմ կազմվում է պրոֆեսոր Ժենուի Վերահսկողությամբ, որի խոսքերով՝ գիրքը նպատակ ուներ հասկանալ չինացիների գիտելիքի զարգացման պատմությունը: «Չինական փիլիսոփայության պատմություն» գիրքը, որը կազմվել է Ուիհան և Չունչան համալսարանների համատեղ ջանքերով, նույնպես առաջնորդվում էր այս գաղափարով: Նախարարությունը Սյաո Չեֆուն (Չսիաո Չեֆու) Ուիհան համալսարանից դիտարկել է. «Փիլիսոփայության պատմությունը ներկայացնում է, թե ինչպես են զարգացել փիլիսոփայական գիտելիքի հակասությունները. սա տեսական մտածողության ձևով արտահայտված, բնությունը, հասարակությունը ու մտածողության շարժումները կառավարող ընդհանուր օրենքների մարդու ընկալումն է»:

Չեն Չունմինը Շաանսիի մանկավարժական համալսարանից գրում էր, որ «փիլիսոփայության պատմության ուսումնասիրությունը ըստ եռթյան գիտություն է, որը փորձում է պարզել մարդու փիլիսոփայական ընկալման դիալեկտիկական շարժումը»: «Չինական փիլիսոփայության պատմության ծավալի, թիրախի և խնդիր մասին» հոդվածում Զան Դայնյանը դիտարկում է. «Փիլիսոփայության պատմությունը գիտելիքի պատմությունն է՝ իր ամբողջության մեջ»: «Սա պատմություն է այն մասին, թե ինչպես է զարգանում մարդու գիտելիքը, այսինքն՝ գործնթաց, որտեղ հարաբերական ծշմարտությունները զարգանում են մարդկության կուտակման ու ավելացման արդյունքում, իսկ նորերը փոխարինում են հներին»: Որպեսզի ամբողջությամբ հասկանան չինական փիլիսոփայության զարգացումը կառավարող օրենքը, չինական փիլիսոփայական շրջանակները նաև

իրենց ուշադրությունը սևոել են Յեգելի՝ «փիլիսոփայության պատմությունը շրջանների նմանեցնելու» գաղափարի վրա: Վերջերս հրատարակակված «Չինական փիլիսոփայության պատմություն» նոր տարբերակ» գրքի նախաբանում Ֆեն Յուլանը հատուկ հղում է անում այս հիմնախնդրին:

Վերջերս Պեկինում անցկացվեց երկու գիտաժողով. մեկը նվիրված էր Յան և Թան դինաստիաների փիլիսոփայությանը և կազմակերպվել էր «Չինական փիլիսոփայության պատմության ուսումնասիրություն» ամսագրի խմբագրակազմի կողմից, իսկ մյուսը նվիրված էր Յան դինաստիայի փիլիսոփայությանը և անցկացվեց Չինական փիլիսոփայության խմբագրական բաժնի հովանու ներքո: Երկու հանդիպումների ընթացքում էլ ես աճրոջությանը ներկայացրի ավանդական չինական փիլիսոփայության զարգացման ընթացքը. այն կազմված է մեծ պարուրածն շրջափուլից, որն էլ իր հերթին բաղկացած է երեք ավելի փոքր պարուրածն զարգացման շրջափուլերից: Առաջին շրջափուլը ներկայացնում է 8ին դինաստիային նախորդած փիլիսոփայությունը: Որպես ելակետ ընդունելով Կոնֆուցիոնի փիլիսոփայությունը՝ այն հասնում է Մենցիոսին ու Սունցիին, ապա՝ «Փոփոխությունների գրքին» (նաև ուսումնասիրում է Տրամաբանության դպրոցի այլ վարպետների գործերը) և այսպիսով կազմում չինական փիլիսոփայության պատմության առաջին շրջափուլը: Երկրորդ շրջափուլը կերպ և Զին դինաստիաների և Յուսիսային և Յարավային դինաստիաների փիլիսոփայությունն է: Սկսելով «զրոն գնահատելու» գաղափարից, որը պաշտպանում էին Վան Բին և Յե Յանը, այն զարգանում է՝ անցնելով «նյութը հարգելու» գաղափարին, որը պաշտպանում էին Սյան Սյուն և Գուռ Սյանը, հասնում Մեն Փիի «ոչ-անօդության ուսմունքին», որը «ոչ որևէ բան էր, ոչ ոչինչ»: Երրորդ շրջափուլը սկսվում է Զան Ցայով և շարժվում Զու Սիից մինչև Վան Ցուօչի:

Երեք շրջափուլերի մեջտեղում երկու Յան դինաստիաների կոնֆուցիական դասականների և Սույ և Թան դինաստիաների բուդդայական ուսումնասիրություններն էին, ինչը ցույց է տալիս անցումը մի շրջափուլից մյուսին: Պարուրածն շարժումների երեք շրջափուլերը կազմում էին ավանդական չինական փիլիսոփայության մեծ շրջափուլը: Մասնավորապես, 8ին դինաստիային նախորդող շրջանի և երկու Յան դինաստիաների փիլիսոփայությունից, որի հիմքը կոնֆուցիականությունն էր, այն հասնում Վեյ-Զին ժամանակաշրջանների և Սույ և Թան դինաստիաների մետաֆիզիկային, որը կառուցված էր Լաո-Չուանի տեսությունների հիման վրա: Աստիճանաբար այն ձուլվեց բուդդայականությանը (Յուա Յան աղանդը, Զան աղանդը ) և ի վերջո վերածվեց Սուն և Մին դինաստիաների նեռկոնֆուցիականության՝ կոնֆուցիականության մի նոր դպրոցի, որը կլանել էր բնակչությանը պատճենագործությանը և հասել ավելի բարձր մակարդակի: Թվում է, թե զարգացման այս կաղապարը ավանդական չինական փիլիսոփայության ծշգրիտ առանձնահատկությունն է. այն ցույց է տալիս կոնֆուցիականության տեղը ավանդական չինական փիլիսոփայության մեջ և նաև այն խոր ազդեցությունը, որ բուդդայական և դառսական զարգափարները թողել են փիլիսոփայության վրա:

## 18.2 Ավանդական չինական փիլիսոփայության հասկացությունն ու կարգը

Եթե մտադրվել ենք ուսումնասիրել փիլիսոփայության պատմությունը՝ որպես մարդկային գիտելիքի պատմություն, և բացահայտել պատմության մեջ տեսական մտածողության զարգացման օրենքը, պետք է մանրամասն ուսումնասիրենք հասկացության ու կարգի հիմնախմբիրը: Որպես տեսական մտածողություն՝ փիլիսոփայությունն անխուսափելիորեն դրսևորվում է մի շարք հասկացությունների, կարգերի և փիլիսոփայական հիմնավորումների միջոցով, որոնք ձևավորվում են հասկացություններից և կարգերից: Սա վերաբերում է փիլիսոփայությանն առհասարակ և մասնավորապես կարևոր է ավանդական չինական փիլիսոփայության հասկացությունների ուսումնասիրության տեսանկյունից: Ինչպես նշում է Շեգելը, «Մշակութային տարրերությունն առհասարակ ձևավորվում է գաղափարախոսական կարգերի տարրերությունների հիման վրա, և դրա պատճառն ավելի շատ փիլիսոփայության տարրերությունն է»: Շետևաբար, ավանդական չինական փիլիսոփայության հասկացությունների ու կարգերի ուսումնասիրությունը և նրա զարգացման պատմությունը մեզ կօգնեն հասկանալ Չինաստանի ավանդական փիլիսոփայության առանձնահատկությունները և նրա զարգացման մակարդակը:

Բացի մի շարք հասկացություններից, որոնք ներմուծվել են Չնդկաստանի բուդդայականությունից, մինչ արդի ժամանակները Չինաստանում փիլիսոփայական գիտությունը հիմնականում զարգացել է անկախ և այդպիսով պահպանել է իր խիստ հստակ նկարագիրը: Եվ քանի որ ավանդական չինական փիլիսոփայությունն ունի իր սեփական հասկացություններն ու կարգերը և աստիճանաբար ձևավորվել ու վերածվել է պարտում համակարգի, տեղին չէ այն ուսումնասիրելիս պարզունակ ձևով կիրառել արևանտյան փիլիսոփայության հասկացություններն ու կարգերը. նաև հնարավոր չէ դրանք ուղղակի հավասարեցնել մարքսիստական փիլիսոփայության հասկացություններին ու կարգերին: Օրինակ, Շեն հասկացությունը ավանդական չինական փիլիսոփայության մեջ ունի մի շարք ներիմաստներ: Այն կարող է վերաբերել աստծուն և ուրվականներին. թերևս սա նկատի ուներ Կոնֆուցիոնը, երբ ասում էր. «Երկրպագիր աստծուն այնպես, ասես նա քո առջևն է»: Շենը կարող է նշանակել նաև «հոգի» կամ «ոգի»: Շենց սա նկատի ուներ Սուլնցին, երբ ասում էր. «Շենը (հոգի կամ ոգի) վտանգվում է, երբ նյութը ձև է ստանում»: Այնուամենայնիվ, ավանդական չինական փիլիսոփայության մեջ Շենը իմաստի շատ ավելի խոր շերտ ունի, այսինքն՝ «նուրբ փոփոխություն»: Այս գաղափարը նկատելի էր «Փոփոխությունների արձանագրություն» գրքում, որն ասում էր. «Երբ հնարավոր չէ պարզել՝ ին է, թե յան, այն կոչում ենք «շեն»: Չնայած «Շենը» ենթադրում է բազմազան գաղափարներ, ներիմաստները կապված են միմյանց հետ: Մյուս օրինակը յունի հակադրությունն է ավանդական չինական փիլիսոփայության մեջ: Այն նույնպես բազմաթիվ ներիմաստներ ունի. այն ներառում է ոչ միայն «նյութ» և «աջակցություն», այլև «ամբողջը» և «վերացականը» հասկացությունները: Մեկ հասկացության մեջ մարմնավորված բազմաշերտ և փոխկապակցված ներիմաստները ներկայացնում են ավանդական չինական փիլիսոփայության առանձնահատկությունները և նրա զարգացման մակարդակը:

Ավանդական չինական փիլիսոփայությունն ունի իր հատուկ հասկացական կարգերը, բայց արդյո՞ք այն ունի հատուկ կարգային համակարգ: Ես այս հիմնախնիրը քննարկել եմ իմ «Ավանդական չինական փիլիսոփայության կարգային համակարգի խնդիրների մասին» հոդվածում, որը, հիմնվելով չինական փիլիսոփայության պատճական զարգացման վրա, ուրվագծում էր նրա կարգերի համակարգը: Ըստ հոդվածի՝ այս համակարգը կազմված է 20 կամ 12 գույգ կարգերից: Նրանց շարքում ամենակարևոր գույգը «Երկնքի ճանապարհ» և «մարդու ճանապարհ» գույգն է: «Երկնքի» և «մարդու» այս խնդիրը դեռևս ավանդական չինական փիլիսոփայության առանցքային հիմնախնդիրն է: Կոնֆուցիոսի «Երկնքի ճանապարհ և կյանքը» տեսությունից սկսած՝ այն անցել է Սենցիոսի գաղափարների միջով՝ «գործի՛ր ողջ սրտով, հասկացիր ճակատագիրդ և ինացիր Երկնքի մասին», «ազնվությունը Երկնքի ճանապարհն է, ազնիվ լինելը՝ մարդու ճանապարհը», որոնք ձևակերպված են «Միջինի ուսմունքում»: Այն ուսումնասիրում էր նաև «Երկնքի ճանապարհը կառուցելու» և «մարդու ճանապարհը կառուցելու» գաղափարը, որն առաջադրում է «Փոփոխությունների արձանագրությունը», ինչպես նաև Յան դինաստիայի մեջ կոնֆուցիական Դուն Չունչուին, որն իր ուսումնասիրությունները նկարագրում էր՝ որպես «մարդու և Երկնքի կապը» հետազոտող ուսմունք: Նույնիսկ Սինա Ցյանը, որը կրում էր դառսական գաղափարների մեջ ազդեցությունը, ասում էր, որ իր «Պատճական արձանագրություններ» գիրքը հետազոտում է, թե «ինչ կապ կա Երկնքի ու մարդու միջև, և ուսումնասիրում էր անցյալի ու ներկայի փոփոխությունները»: Վեյ և Չին դինաստիաների մետաֆիզիկայի հիմնադիր Յե Յանը մետաֆիզիկայի մեկ այլ հիմնադիր Վան Բիին նկարագրում էր՝ որպես «մարդ, որն ի գորու է խոսել այն մասին, թե ինչ կա Երկնքի ու մարդու միջև»: Նույնիսկ Յուլսիսային և Յարավային դինաստիաների դառսիզմի վարպետ Թաո Յունձինն էր այն կարծիքին, որ դառսիզմը (թառսիզմ) ուսումնասիրում է «Երկնքի և Երկրի հարաբերությունը»: Սինչ Սուն դինաստիայի ժամանակները կոնֆուցիականները քննարկում էին այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են «բանականության և ճանապարհի բաժանումը», «ճանապարհի սիրտը», «մարդու սիրտը», «Երկնքի բանականություն», «մարդու ցանկություն» և այլն, որոնք առաջացել են «Երկնքի» և «մարդու» հիմնախնդիրի զարգացման արդյունքում: Յետևարար, «Երկնքի» և «մարդու» հարաբերությունների ընկալումը նշանակում է հասկանալ ավանդական չինական փիլիսոփայության հիմնախնդիրը:

Դատելով ներկա իրավիճակից՝ պետք է ասել, որ առհասարակ չինական փիլիսոփայության հասկացությունների կարգերը քննարկող հոդվածների թիվն ավելանում է: Բացի իմ հոդվածից, տպագրվել են նաև մի շարք այլ հոդվածներ՝ «Բացահայտենք չինական փիլիսոփայության մերհատուկ հասկացությունների կարգերի ուսումնասիրությունը»՝ պրոֆեսոր Զան Դայնյանի հեղինակմանը [«Չինական փիլիսոփայության պատճության ուսումնասիրություն», հունվար, 1982թ.], «Բացահայտենք չինական փիլիսոփայության պատճության կարգերի ուսումնասիրությունը» Ֆան Քելիի հեղինակմանը [«Ժողովուրդ» օրաթերթ, 3 սեպտեմբեր, 1982], «Չինական փիլիսոփայության պատճության մեթոդաբանության նախնական քննարկում» Սյաո Ջեֆուի (Յսիառ Չե-ֆու) հեղինակմանը [Ուիթքար համալսարանի ամսագիր, համար 3, 1982թ.] և այլն: Սակայն գոյություն ունեն բազմաթիվ այլ թերթեր ու հրապարակումներ, որոնք քննարկում են առանձին

Վիլխովիաների կամ Վիլխովիայական հասկացությունների առանձին գույգերի կարգային համակարգերը: Օրինակ, «Զու Սիի մտածողության ուսումնասիրություն» հոդվածում Զան Լիվենը հատուկ ուսումնասիրության է ենթարկում Զու Սիի Վիլխովիայության տարրեր կարգերի հարաբերությունները: Իր «Չինական Վիլխովիայության պատմության գիտելիքի և պրակտիկայի հայեցակերպեր» գրքում Ֆան Քելին պատմական զարգացման տեսանկյունից վերլուծում է գիտելիքն ու պրակտիկան՝ որպես հասկացությունների գույգ: «Չինական Վիլխովիայության պատմության ուսումնասիրություն» ամսագիրը յուրաքանչյուր համարում հատուկ սյունակ է նվիրում ավանդական չինական Վիլխովիայության կարգերի զանազան ուսումնասիրություններին: Մենք պետք է մասնավորապես հիշատակենք Փան Փուի «Սամի (Երեք) մասին» հոդվածը, որտեղ նա «սամի» զանազան ներիմաստների տեսանկյունից քննարկում է «Երեքի» յուրահատուկ դիրքը չինական մշակույթում և եռալիզմի հատուկ Վիլխովիայական նշանակությունը: Պարզ է, որ ավանդական չինական Վիլխովիայության ուսումնասիրությունը կարող է առաջընթաց ունենալ միայն չինական Վիլխովիայության կարգերի և համակարգի նմանատիպ հետազոտությունից հետո:

### **18.3 Ավանդական չինացի և օտարերկրյա Վիլխովիաների համեմատությունն ու վերլուծությունը**

1980 թվականի հոկտեմբերի վերջին Գուլիխնում անցկացվեց «Չինական և օտար Վիլխովիայությունների համեմատական ուսումնասիրության գիտաժողով»: Գիտաժողովի ընթացքում չիաջողվեց որևէ արդյունքի հասնել, սակայն նրա բարձրացրած հիմնախնդիրը գրավեց բոլորին ուշադրությունը: Ըստ Էռլիյան, չինական Վիլխովիայության հասկացությունների կարգերի ուսումնասիրությունը, բնականաբար, պետք է հանգեցներ այսպիսի հարցի, բայց չինական Վիլխովիայության հասկացությունների կարգերը կարելի է ճանաչել միայն օտար Վիլխովիայության հետ համեմատության միջոցով: Այն, որ քիչ ուշադրություն է հատկացվել չինական և օտար Վիլխովիայությունների նմանություններին և տարբերություններին, պայմանավորված է բազմազան հանգամանքներով: Ինչ վերաբերում է ինքնին պատմության կամ Վիլխովիայության ուսումնասիրությունը, ապա կարևորագույն պատճառներից մեկն ավանդական չինական Վիլխովիայության առանձնահատկությունների լիակատար անտեսումն է: Մենք փորձել ենք կամ բացատրել այն արևմտյան Վիլխովիայության լույսի ներքո կամ մեխանիկորեն կիրառել մարքսիստական ծածկալեզուն: Այսպիսով, այլևս անհմաստ էր դարձել ուսումնասիրել չինական և օտար Վիլխովիայությունների նմանություններն ու տարբերությունները: Այս հարցի շուրջ ուսումնասիրությունները շատ չեն: Յետազորություններն արհասարակ անց են կացվել որոշ առանձին թեմաների շուրջ: Օրինակ, ժողովրդական համալսարանի Վիլխովիայության բաժինն անցկացրեց քննարկում, որի նպատակն էր համեմատել և վերլուծել Զու Սիի «Թայիծ» [մեծ ծայրակետը] և Յեգելի պաշտպանած «բացարձակ ոգի» գաղափարները:

Չինական և օտարերկրյա Վիլխովիայությունների համեմատության ընթացքում ի հայտ եկած հետաքրքիր երևույթներից մեկն այն էր, որ մի շարք մարդիկ, այդ թվում և որոշ գիտնականներ, վերլուծել են «կենսունակության» չինական տեսությունը և պարզել, որ այն ծշմարտության պես է պարունակությունը:

կում, ուստիև ավելի բարձր է «ատոմի» արևոտյան տեսությունից: Ըստ նրանց՝ «կենսունակության» հասկացությունը, որը տեսական հիմք է ստացել Չինաստանում, պարունակում է ոչ միայն «հիմնական մասնիկը», այլև «ամբողջի» ներիմաստը. այլ կերպ ասած՝ այն երկակի բնույթ ունի. թե՛ ալիք է, թե՛ մասնիկ»: Չինաստանի գիտությունների ակադեմիայի տեսական ֆիզիկայի ինստիտուտի պրոֆեսոր Չե Ցուոյունը «Չինական գիտություն» ամսագրում հրապարակեց «Կենսունակության մատերիալիստական տեսությունը» վերնագրով հորված, որում ասում էր. «Կենսունակությունը շարունակականության հիմքն է: Այն մոտ է այն «դաշտին», որը քննարկվում է արդի գիտության ոլորտում»: «Կենսունակության տեսությունը քվանտային դաշտի ժամանակակից տեսության նախակարապետն է: Չինական փիլիսոփայության տիրույթում քննարկվող «կենսունակության» տեսությունը հատուկ արժեք ունի այն իմաստով, որ տարբեր երևույթների փոխազդեցությունը «կենսական էներգիայի» ազդեցության արդյունք է:

Բայց եթե այս թեզը ծշմարտության հնչ-որ հատիկ է պարունակում, այն նաև որոշ թերություններ ունի, մասնավորապես բոլոր տարբեր երևույթները ներկայացնում է «կենսական էներգիա» կամ «կենսական էներգիայի ազդեցություն» հասկացությունների անվան տակ՝ ուշադրությունը երևույթների վերլուծության վրա կենտրոնացնելու փոխարեն: «Ատոմի տեսությունը», որը գերակշռում էր Չին Չունաստանի մշակույթում, պահանջում է հայտնաբերել ամենափոքր, անտեսանելի մասնիկները և դրանք կոչել «ատոմներ»: Թեև սա, անշուշտ, սխալ էր, կոնկրետ նյութի ուսումնասիրության համար նրա կիրառած մեթոդը, պետք է ասել, լուրջ առավելություն էր արևմտյան փիլիսոփայության համար: Ինչ վերաբերում է մտածողության մեթոդին, ապա ավանդական չինական փիլիսոփայությունը կարծես թե ավելի շեշտել է իրերի հարաբերությունները և նրանց բազմաթիվ կողմերի միասնությունը: Ի հակադրություն դրա, արևմտյան փիլիսոփաները իին ժամանակներում թերևս ավելի մտահոգ էին տարբեր իրերի տարբերակնամբ և շեշտում էին նրանց զանազան կողմերի վերլուծությունը:

Քանի որ չինական և արևմտյան փիլիսոփայությունների համեմատությունը հայտնվել է համընդհանուր ուշադրության կենտրոնում, չինական և օտար կրոնների համեմատությունը նույնապես ավելի մեծ ուշադրության է արժանանում, քան նախկինում: Ավելի շատ ուսումնասիրություններ են անցկացվում դառսիզմի (թառոսիզմ)՝ չինացիների կրոնի վերաբերյալ: Գոյություն ունեն դառսական ուսումնասիրությունների ինստիտուտներ, օրինակ՝ Կրոնի ինստիտուտը Սիչուանի համալսարանում մասնագիտացած է դառսիզմի (թառոսիզմ) ուսումնասիրության մեջ: Ներկայում դառսիզմի (թառոսիզմ) հասուկ դասընթացներ են առաջարկվում համալսարաններում, հատուկ թիմեր են կազմվում՝ «Դառսական ժողովածուների ուրվագիծ» կազմելու համար, և հրատարակվում են հոդվածներ, որոնք համեմատում են դառսիզմը (թառոսիզմ) և բուդդայականությունը: «Փիլիսոփայական ուսումնասիրություններ» ամսագրի 1981 թվականի հունվարի համարում հոդված էր տպագրվել «Կյանքի, մահվան, հոգու և մարմնի վաղ դառսական տեսության նախնական քննարկում» վերնագրով. պատմական տվյալների վրա հիմնված դառսիզմի (թառոսիզմ) և բուդդայականության այս հատուկ հասկացությունների ուսումնասիրությունը վեր էր հանում դառսիզմ (թառոսիզմ) կրոնի առանձնահատկությունները:

Վերջին շրջանում բարձրացվում է չինական և օտարերկրյա փիլիսոփայու-

թյունների համեմատության տեսանկյունից կարևոր երկու հարց: Առաջինը, նկատի ունենալով չինական և արևմտյան հասարակությունների զարգացման նակարդակների տարրերությունը՝ ոմանք հարցնում են, թե արդյոք գոյություն ունի «մտածողության ասիական կերպ»: Արդյո՞ք ավանդական չինական փիլիսոփայության որոշ խոշոր հիմնավորումներ չեն արտահայտում չինական մտածողության բնութագիրը: Վերջին մի քանի տարիներին բազմաթիվ հոդվածներ անդրադարձել են այնահին հիմնավորումների, ինչպատճեն են «Երկնքի և մարդու հնտեղությունը», «Աներքինի և արտաքինի նույնացումը», «Գիտելիքի և պրակտիկայի հնտեղությունը» և «զգացմունքն ու պատկերը կատարյալ ներդաշնակության մեջ»: Արդյո՞ք այս բոլոր հիմնավորումները մարմնավորում են «միասնության» որոնումները, և արդյո՞ք սա ավանդական չինական փիլիսոփայության մտածողության կերպի հիմնական առանձնահատկությունն է: Եթե այդպես է, ապա կարո՞ղ ենք կանխատեսել, որ երբ տրամաբանական վերլուծության և մեկնաբանության պակասը լրացվի, չինական փիլիսոփայությունը կզարդանա միասնության այս որոնումներին համընթաց: Երկրորդ հարցը հետևյալն է՝ որն է չինական մշակույթի ազգային ոգին: Այս հարցի պատասխանը կարելի է գտնել միայն չինական փիլիսոփայությունը օտար փիլիսոփայությունների հետ համեմատելու միջոցով:

#### **18.4 Համակարգ ստեղծելու համար ավանդական չինական փիլիսոփայության կիրառած մեթոդը**

1983 թվականին «Հան և Թան դինաստիաների փիլիսոփայությանը» նվիրված գիտաժողովի և Հան դինաստիայի փիլիսոփայությանը նվիրված քննարկման ընթացքում առաջարկվեց փիլիսոփայական համակարգ ստեղծելու մեթոդ, և Զին Չուն Ֆենն առաջինն էր, որ անդրադարձավ այս հիմնախնդրին: Նա ասում է, որ Հան դինաստիայի փիլիսոփաներն առհասարակ փիլիսոփայական համակարգի սահմանման հարցում կիրառում էին պոգիտիվզմի մեթոդը. Վեյ և Զին դինաստիաներում օգտագործվում էր այլ մեթոդ, բայց նա չգիտեր, թե ինչպես սահմանի այն. Սուն և Մին դինաստիաներում նեղունքուցիականների օգտագործած մեթոդը կարելի է կոչել էթիկական ռացիոնալության մեթոդ: Խմբագրական կոմիտեի՝ 1981 թվականին «Չինական փիլիսոփայության պատմության ուսումնասիրությանը» նվիրված ընդլայնված նիստի ընթացքում ես առաջարկեցի, որ այս հարցն ընտրովի՝ որպես առանձին ուսումնասիրությունների թեմա: Փիլիսոփայությունն ունի երկու կողմ՝ «քովանդակություն» և «մեթոդ»: Թե՛ «քովանդակությունը», թե՛ «մեթոդ» արտացոլում են փիլիսոփայության տեսական մտածողության մակարդակը: Ցին դինաստիային նախորդած շրջանից մինչև Վեյ և Զին դինաստիաներն ընկած ժամանակահատվածը ավանդական չինական փիլիսոփայությունը ներկայացնում էր երկու խոշոր համակարգ՝ կոնֆուցիականություն և դառսիզմ (թասուիզմ): Այս երկու դպրոցները զգալիորեն տարբերվում էին միմյանցից ոչ միայն բովանդակությամբ, այլև իրենց համակարգերը ստեղծելիս կիրառած մեթոդների առումով:

Կարծ ասած՝ կոնֆուցիականների օգտագործած մեթոդը հիմնականում վերաբերում էր փորձին, այն է՝ օգտագործել փորձը՝ ցուցադրելու համար այն, ինչն անցնում է փորձի կամ այլ փորձի սահմանները: Փորձի մեթոդ ասելով նկատի ունենք, որ փիլիսոփայական գաղափարի ռացիոնալությունը կարող է ապացուցվել

Վիործի միջոցով: Կոմֆուցիոն ասում է. «Մտ երևույթի հետ համեմատություն անելը կարելի է կոչել բարեգործության մեթոդ»: Սենցիոսը դիտարկում է. «Դասակարգեք և թվարկեք այն առարկաները, որոնք նման են»: Սունցին նշում է. «Նոյն կարգում ընդգրկված երևույթները չեն հակասում իրար. նոյնիսկ երկար ժամանակ անց կիսում են նոյն ռացիոնալությունը»: «Փոփոխությունների արձանագրությունը» հիշատակում է «մոտիկ վիործ ծեռք բեր քո սեփական անհատականությունից, հեռու վիործ՝ այլ երևույթներից», «գուշակություն արա՝ բնույթն ուսումնասիրելու համար» և «ուսումնասիրի աստղագիտական երևույթները՝ ներքեւում» գաղափարներ՝ մտածողության սկզբունքները լուսաբանելու համար: Դուն Զունշուն առաջ էր քաշում այն գաղափարը, որ «իրերը, որոնք հնարավոր է հաշվել, պատկանում են երկրորդ թվի, իսկ իրերը, որոնք հնարավոր չեն հաշվել, պատկանում են երկրորդ կարգի»: այսպես նա ցույց էր տալիս, որ «իրերը կարելի է գուգադրել կարգի միջոցով, և երկինքը կմիավորվի մարդու հետ»:

Մինչ Վեյ և Զին դիմաստիաների մետաֆիզիկական դպրոցի հիմնադրումը այս մեթոդը ենթարկվել էր որոշակի փոփոխության: Իրականում մետաֆիզիկան կառուցված էր Լու-Չուանի մտածողության կաղապարով, և, հետևաբար, փիլիսոփայական համակարգ հաստատելիս նրա օգտագործած մեթոդը կարելի է կոչել «դիալեկտիկական մտածողություն», որը բնութագրվում է վիործի մեջ առկա իրերի ռացիոնալությամբ և վիործի սահմաններն անցնող իրերի ներկայացմամբ: Վաճ Բին ասում է. «Մոռացի բառերը, երբ գաղափարն ընկալված է»: Գու Սյանն ասում է. «Բառերը տեղավորիր գաղափարի կաղապարի ներսում», իսկ Զի Քանը (Չի Քան) դիտարկում է. «Բառերը չեն կարող ամբողջությամբ արտահայտել գաղափարը»: այս բոլորն էլ նոյն իմաստն ունեն: Վաճ Բին մեջքերում է «իրերը ծագում են ճանապարհից» միտքը, որպեսզի նկարագրի «նախարարները ենթարկվում են արքային» գաղափարը: Գու Սյանը վիործում էր ապացուցել, որ «իրական աշխարհից անդին» գոյություն չունի «հերիաթային աշխարհ» («ուղևորվիր դեպի արտաքին աշխարհ, որպեսզի ուժեղացնես ներքին աշխարհը»), «ներսն ու դրույթը փոխադարձաբար անորոշ են»): «Դիալեկտիկական մտածողության» մեթոդն օգտագործվել է այս բոլոր գաղափարներում:

Սուն և Մին դիմաստիաների մեռկոնֆուցիականությունը երկու դպրոցների գուգակցությունն է և նրանց բարեւավումը: Նրանց մեթոդը թերևա կարելի է կոչել «էթիկական ռացիոնալության ներհայեցողություն»: Անկախ նրանից՝ դա Զեն իի և Զու Սիի առաջադրած «կերպարը ռացիոնալություն է», թե Լու Զյույուանի ու Վաճ Յանմինի առաջադրած «սիրտը ռացիոնալություն է» գաղափարն էր, նրանք բոլորն էլ ռացիոնալությունը [թայծի] անփաստական բարյականությունը, ընկալում էին որպես իիմանական բովանդակություն: Զու Սին ասում է. «Թայ Զին ծայրահեռ բարու սկզբունքն է: Յուրաքանչյուր մարդ ունի թայ ծի, և յուրաքանչյուր իր ունի թայ ծի»: Լու Զյույուանը դիտարկում է. «Նրանք, որոնք գիտեն ուրիշներից առաջ, գիտեն պատճառը, իսկ նրանք, որոնք իմանում են ուրիշներից առաջ, տեղյակ են պատճառի մասին»: Սա է պատճառը, որ մարդ սիրում է իր մոտ հարազատին ու հարգում ավագ եղողոր»:

Երկու տարրերակում էլ՝ «ճանապարհը, որը հարցականի տակ է դնում ուսումը» և «հարգել առաքինությունն ու բնավորությունը», կարող ենք լիարժեք ընկալել «Երկնքի բանականությունը» բարյական ներհայեցողության միջոցով:

Ինչու՝ բարձրացվեց այս հարցը: Բանն այն է, որ այն ժամանակ մենք մտածում էնգելսի դիտարկման մասին. «Տեսական մտածողությունը միայն բնության կողմից շնորհված ունակություն է, այն պետք է զարգացնել և մարզել: Մարզելու համար մինչ այժմ գոյություն չի ունեցել որևէ այլ մեթոդ, բացի անցյալի փիլիսոփայություններն ուսումնասիրելուց»: Տեսական մտածողությունը պահանջում է մի շարք փիլիսոփայական հասկացությունների ձևակերպում և մի շարք փիլիսոփայական հիմնավորումների ձևավորում՝ փիլիսոփայական հասկացությունների հենքի վրա: Փիլիսոփայական համակարգի հասկացություններն ու հիմնավորումները, ինչպես նաև ինքնին համակարգը ձևավորելու համար պարտադիր է օգտագործել որոշակի մեթոդ, որն ինքնին պետք է լինի վերացական նոտածողության որոշակի տեսակ: Վերացական նոտածողությունը, որ նարդը մարզում է փիլիսոփայական համակարգ հիմնելիս, միանշանակ կրարելավի տեսական մտածողության մարդու մակարդակը: Եթե կարողանանք բացահայտել պատմության ընթացքում զանազան փիլիսոփաների ու փիլիսոփայական դպրոցների կիրառած մեթոդները և հստակ վերլուծության ենթարկենք դրանք, դա մեծապես կօգնի մեզ ուսումնասիրվող փիլիսոփաներին ու փիլիսոփայական դպրոցները վերլուծելու հարցում: Ի դեպ, պրակտիկան չի տարբերվում մեթոդից, որն օգտագործվում է մարզվելու և նրանց տեսական մտածողության մակարդակը բարձրացնելու համար, և, հետևաբար, շատ կարևոր է:

Դատելով վերը թվարկված խնդիներից՝ մեզ կարծես թե հաջողվում է ընկալել զարգացման այս միտումը. մասնավորապես, մարդկանց գուցե հետաքրքրի հետևյալ հարցը. որո՞նք են ավանդական չինական փիլիսոփայության հեռանկարները, կամ, այլ կերպ ասած, արդյո՞ք չինական փիլիսոփայության շարունակական գոյությունն ամբողջությամբ որևէ արժեք ունի: Եթե այս հարցը բարձրացվել է, և կան պատշաճ պայմաններ, ապա կարելի է կատարել չինական փիլիսոփայության բազմակողմանի և համակարգված վերլուծությունը այսօրվա տեսանկյունից: Բայց ներկայում բազմաթիվ մարդիկ շարունակում են բացասական վերաբերմունք տածել ավանդական չինական փիլիսոփայության վրա: Անկախ հանգամանքներից, նրանք ավանդական չինական փիլիսոփայությունը համարում են ինն ժամանակների արգասիք, ֆեոդալական և նույնիսկ ստրկատիրական հասարակության գաղափարախոսություն: Այսուամենայնիվ, փիլիսոփայության որոշ գաղափարներ դեռևս մեջբերվում են առօրյա կյանքում: Մենք տեսնում ենք, որ հատկապես «հոգևոր քաղաքակրթությանը» վերաբերող գրքերում հաճախ տպագրվող բազմաթիվ հոդվածներում մեջբերվում են անտիկ Չինաստանի գրքերից հատվածներ կամ անտիկ ժամանակների պատմական եղելություններ, որոնք հիմնականում մարմնավորում են ավանդական չինական փիլիսոփայական մտածողությունը:

Ո՞րն է այս հակասության պատճառը: Արդյո՞ք «արժեքը» որևէ կապ ունի այս-տեղ: Ո՞րն է ավանդական չինական փիլիսոփայության հիմնական ոգին: Արդյո՞ք այս ոգին դեռևս արժեք ունի այսօր: Այս խնդիրի ուսումնասիրությունը, հետևելով ավանդական չինական փիլիսոփայության զարգացման օրենքին, ին կարծիքով, հստակ ցույց կտա, որ այն շարունակ աշխատում է մի խոշոր խնդիր, մասնավորապես «Երկնքի ճանապարհի» և «մարդու ճանապարհի» և նրանց հարաբերությունների արժեքի ուղղությամբ:

Այս խնդիրը պետք է լուծվի մարդու հոգևոր ոլորտը շարունակաբար բարձ-

րացնելու միջոցով. չինական փիլիսոփայության մեջ սա մի հասկացություն է, որը պահանջում է, որ մարդն անցնի «իր եսի» սահմանները և իրեն նույնացնի «Երկնքի ճանապարհի» հետ: Այսպիսի ոլորտին հասնելուց հետո, եթե «Երկինքն ինտեգրվում է մարդու հետ» և «մարդը հաջորդում է ճանապարհին», անհատը կարող է դառնալ սուրբ, իսկ հասարակությունը՝ «Մեծ ներդաշնակության աշխարհ»: Ինչ վերաբերում է նրան, թե ինչպես և արդյոք հնարավոր կլինի իրականացնել այդպիսի իրեալը, գոյություն ունեին տարբեր տեսակետներ, որոնք պայմանավորված են պատմական պայմանների և միջավայրերի տարբերությամբ: Այնուամենայնիվ, չինական պատմության մեջ փիլիսոփաները հակված են ընդունել հետևյալ նշանաբանը՝ «Երկինքը շարժվում է առողջ ճանապարհով, իսկ ազնվականը պետք է անդադար ջանք գործադրի՝ ինքն իրեն բարելավելու համար»: Դժվար է կանխատեսել, թե իրերն ինչ զարգացում կունենան. մենք մարգարեներ չենք և ոչ էլ հավատում ենք մարգարենությանը: Բայց եթե իրերը մշտապես զարգանում են օրենքի համաձայն, ինչպես կարող ենք կանխատեսել ապագա զարգացումը՝ ուսումնասիրելով ու վերլուծելով նախորդ փորձը, և արդյո՞ք փիլիսոփայության զարգացումը կարող է կանխատեսել, թե ինչ կպատահի չինական փիլիսոփայության հետ ապագայում: Կարծում եմ՝ դա հնարավոր է:

Չնայած ես առաջարկեցի նկարագրել Չինաստանուն ավանդական չինական փիլիսոփայության պատմության ուսումնասիրության ոլորտում նկատվող ներկայիս առաջընթացը, իիմնականում քննարկեցի իմ անհատական տեսակետները փիլիսոփայական ուսումնասիրությունների նոր միտումների վերաբերյալ: Գույց սա մեկ դպրոցի գաղափար է:

## ԳԼՈՒԽ 19

### «ճշմարիտի, բարու և գեղեցիկի» հարցի վերանայումը ավանդական չինական փիլիսոփայության մեջ<sup>112</sup>

Ո՞րն է հոգևոր կյանքի բարձրագույն իդեալը, որին ձգտում են մարդ արարածները: Ես հավատացած եմ, որ դա «ճշմարիտի, բարու ու գեղեցիկի» գաղափարն է և այս երեքի միասնությունը մեկ համակարգում: Անշուշտ, փիլիսոփաների գաղափարները տարբերվում են այն հարցում, թե ինչից է կազմված այս երեք իդեալներից յուրաքանչյուրը: Ինչ վերաբերում է այն հարցին, թե նրանք ինչպես կարող են միավորվել մեկ համակարգում, կարծիքները տարբեր են: Այս քննարկումը չի կարող ունենալ որևէ վերջնական եզրահանգում, և իրականում դրա կարիքը չկա: Ինչ վերաբերում է մարոկանց՝ ճշմարտության, բարության ու գեղեցկության որոնումներին, ապա մտածողներն անկասկած հակված են կառուցել այս հասկացությունները միավորող համակարգեր: Իմ կարծիքով՝ չինական ավանդական փիլիսոփայության մեջ կյանքի հոգևոր ոլորտի որոնումները նման են անտիկ փիլիսոփաների՝ «ճշմարիտի, բարու և գեղեցիկի» որոնումներին: Ես գրել են «ճշմարիտի, բարու և գեղեցիկի հարցը ավանդական չինական փիլիսոփայության մեջ»<sup>113</sup> վերնագրով մի հոդված, որը հիմնականում հարցի մասին կոնֆուցիական տեսակետի պատճական քննարկում է: Այս հոդվածը, սակայն, չի սահմանափակվում կոնֆուցիակաների քննարկումներով և չի կիրառում պատճական մոտեցում, քանի որ նման մոտեցման դեպքում հոդվածը կլիներ չափազանց ապակենտրոնացած և երկարաշունչ: Յետևաբար, մենք կվերլուծենք ու կքննարկենք մի շարք ականավոր մտածողների կարծիքները:

Չինաստանի Ցին դինաստիային նախորդող ժամանակաշրջանի փիլիսոփաները, որոնց շարքում անենաազդեցիկները Կոնֆուցիոսը, Լաոցին ու Չուանցին էին, մշտապես մեծ ազդեցություն են ունեցել չինական փիլիսոփայության զարգացման վրա: Եթե առանձնացնենք այս երեքին և նրանց միջոցով քննարկենք կյանքի այլ հոգևոր ոլորտի հարցը (ժենշեն ծինճյե), որն առաջ էին քաշում զանազան ավանդական չինական փիլիսոփայություններ, ապա թերևս կարողանանք համակողմանի պատկերացում կազմել կյանքի հոգևոր ոլորտի մասին, որն առաջադրում էր ավանդական չինական փիլիսոփայությունը:

Քառասուն տարի առաջ Շեն Ցուինը, որը հետազոտական աշխատանք էր իրականացնում Օրսֆորդի համալսարանում, գրեց Չինաստանում գտնվող իր ընկերներին.

Կանտի և Յեգելի արժեքի տեսությունները մի կարևոր տարբերություն ունեն, որը կարող ենք ներկայացնել հետևյալ կերպ:

| Կանտ | Բարին (բար) |  | Շեյցելը |  | Ճշմարիտը    |
|------|-------------|--|---------|--|-------------|
| Գրիզ | Ճշմարիտը    |  | Շեյցելը |  | Բարին (բար) |

112. «Զումգուու Շեհուեյ Քեսյուե» ամսագրից, 1990 թ. համար 3:

113. «Զումգուու Շեհուեյ Քեսյուե», 1984, թիվ 4:

Այստեղից կարող ենք եզրակացնել, որ Կանտը թերևս ավելի մոտ էր չինական, իսկ Չեգելը՝ հնդկական կամ հունական մտածողությանը<sup>114</sup>:

Պարոն Շենի այս եզրակացությունը մասնավորապես խորաթափանց է ու նորարարական: Կոնֆուցիոսի միտքը, որն ավանդական չինական փիլիսոփայության զարգացման հիմնական ուղղությունն էր, հուչում է, որ այս գծագիրն աշխատում է, բայց եթե ուսումնասիրենք մտքի ու փիլիսոփայությունների տարրեր դպրոցները, որոնք կազմում են ավանդական չինական փիլիսոփայությունը, կպարզենք, որ այն արդյունավետ չէ: Ըստ իս՝ ավանդական չինական փիլիսոփայության մեջ իրականում գոյություն ուներ երեք տարրեր համակարգ, որոնք միմյանց էին միացնում ծշմարիտը, բարին ու գեղեցիկը: Կոնֆուցիոսի, Լաոցիի ու Զուանցիի համակարգերը ներկայացված են հետևյալ կերպ:

| Կոնֆուցիոս | Բարին (քավ) |  | Չեգելի      |  | Ճշմարիտ |
|------------|-------------|--|-------------|--|---------|
| Լաոցի      | Ճշմարիտ     |  | Բարին (քավ) |  | Չեգելի  |
| Զուանցի    | Չեգելի      |  | Բարին (քավ) |  | Ճշմարիտ |

Այս գծագրի հիման վրա համարանություններ վեր հանելով՝ կարող ենք ընդհանուր առնամբ ասել, որ ճշմարիտի, բարու և գեղեցիկի հարցում Կոնֆուցիոսը մոտ է Կանտին, Լաոցիին՝ Չեգելին, իսկ ինչ-որ առումներով Զուանցին մոտ է Շելինգին կամ Արիստոտելին: Անշուշտ, նման համարանությունները սահմանակակ են, և մենք չենք կարող դրանք տարածել այս մտածողների գաղափարների բոլոր կողմերի վրա, բայց դրանք կարևոր ուղղություններ են, որոնց շուրջ կարելի է մտորել:

## 19.1 Կոնֆուցիոսի պահանջները կյանքի ոլորտից

«Տարեգրերի» այն բաժնում, որը վերմագրված է «Վեյ Զեն» (Գործող կառավարություն), հետևյալ հիմնավորումը վերագրվում է Կոնֆուցիոսին.

Տասնինգ տարեկանում ես ողջ հոգով տարվեցի ուսմանք, երեսուն տարեկանում արդեն ինքնահաստատվել եմ, բառասուն տարեկանում չեմ ենթարկվում կասկածների, իհսուն տարեկանում ճանաչեցի Երկնքի հրամանները, վարսուն տարեկանում կարող եմ անմիջապես տարերակել այլոց խոսքերի ծշմարտությունն ու կեղծիքը, իսկ յոթանասուն տարեկանում հետևում է սրտիս թելադրանքին, բայց չեմ իսկախտում օրենքները:

Մենք գիտենք, որ Կոնֆուցիոսն ու ավելի ուշ շրջանի կոնֆուցիականները հավատացած էին, որ կյանքն ու մահը կամ հարստությունն ու պատիվը ձեռք չեն բերվում միայն անհատական ջանքերով, ըստ նրանց՝ մարդու բարոյականության կամ կրթվածության մակարդակը տարբերվում էր միայն անհատական ջանքերի շնորհիվ: Կոնֆուցիոսի այս խոսքերը միևնույն ժամանակ կյանքի ընթացքի նկարագրություն են, նրա հետապնդած ինքնակրթության գործընթաց և ծշմարիտի, բարու և գեղեցիկի որոնումների և ընկալման համրագումար: 15-ից 40 տարեկանը կարելի է դիտարկել որպես իմաստության հասնելու նախապատրաստական

114. «Զեսոյն Փինլում», հատոր 10, թիվ 6:

փուլ, իսկ այն հիմնավորումը, որ նա «չէր ենթարկվում կասկածների» և կարողանում էր «հետևել» իր «սրտի թելադրանքին ու չխախտել օրենքները», բացահայտում է այն խոր գործընթացը, որի ընթացքում նա ձեռք բերեց ինաստություն: Այն հիմնավորումը, որ նա «ճանաչեց Երկնքի հրամանները», բացատրում է, թե նա ինչպես է ձեռք բերել «Երկնքի գիտելիքն ու ընկալումը (կյանքի ու տիեզերքի ծայրահեղ հարցերը), որոնք թերևս ընդգրկված են Ծշմարտության որոնումների դաշտում: Այստեղ Կոնֆուցիոսը Երկնքը դիտարկում է՝ որպես իմացական օրյեկտ և դեռևս չի հասել այն փուլին, երբ «մեկ մարմին կդառնա Երկնքի» հետ, բայց նաև դեռևս միասնություն չի կազմել: «Զուանցի նախարանում» Գուռ Սյանը գրում է.

Կարելի է ասել, որ Զուանցին գիտեր սկզբնաղբյուրը... չնայած նա ասում էր, որ չունի այդ ընկալումը, միայն ինքն էր պատասխանում այդ հարցին: Առանց ընկալման պատասխանել, սակայն, նշանակում է կարիք չունենալ ջանք թափել:

Երկնքի, Երկրի ու անթիվ-անհամար իրերի նոումնեին պատասխանելու կարողությունը կարելի է համարել «արմատների բացահայտում», բայց սա հանգեցնում է նրան, որ ճանաչողական սուբյեկտն առանձնանում է Երկնքի, Երկրի ու անհամար իրերի նոումնեից. Վերջինս որպես ճանաչողության առարկա ընդունելը, բնականաբար, նշանակում է, որ մարդը դեռևս չի միավորվել նրա հետ: Եթե այս նոումնը գոյություն ունի ավելի բարձր ոլորտում, ապա Զուանցին դեռևս ի վիճակի չէ «հետևել» իր «սրտի թելադրանքին և չխախտել օրենքները»:

Կոնֆուցիոսի այն հիմնավորումը, որ վաթուն տարեկանում «կարող էր անմիջապես տարրերակել այլոց խոսքերի ծշմարտությունը կամ կեղծիքը» (յուշի էր էրշուն), իրականում դարեր շարունակ ենթարկվել է զանազան մեկնարանությունների: Յան Բոզունը, որի՝ «Լունյու հջու» («Տարեգրքեր», թարգմանություն և ծանոթագրություն տեղական լեզվով. Պեկին, Չունհուա Չուզու, 1958) մեկնարանությունը օգտագործված է այստեղ, գրում է, որ չափազանց դժվար է բացատրել «Էրշուն» արտահայտությունը: Շատերն են փորձել տարրերակեր գտնել, բայց զգում եմ, որ նրանց բոլոր բացատրություններն «հարկադրված» են...» Ես հավատում եմ, որ Յանի մեկնարանությունն իր հմաստով մոտ է Կոնֆուցիոսի այս հիմնավորմանը: Յանի մեկնարանությունը թերևս հիմնված է Զին դինաստիայից Լի Չունի բացատրության վրա, որը գրում էր, որ էրշուն նշանակում է «սիրտն ու ականջը հետևում են իրար» (սինյուէր սյանցուն): Սուն Չուն նույնպես Զին դինաստիայից տրամադրում է ավելի մետաֆիզիկական բացատրություն.

Երշուն նշանակում է իրաժարվել տրամաբանությունից, որը կառավարում է լսողությունը, ներըմբռնել իմաստի առեղծվածը և չհետապնդել, բայց, այնուամենայնիվ, ձեռք բերել. այն, ինչ կարելի է անգիտակցաբար ու առանց իմանալու կոչել գերագույն սկզբունք:

Սա ներըմբռնողական ընկալումն է, որն ամցնում է տիեզերքը կառավարող բոլոր սկզբունքների սահմանները և հայտնվում «ներքին անդրանցականության» ոլորտում: Ըստ ժամանակակից հերմենուսիկայի տեսակետի՝ մեր նախնիների գաղափարների բոլոր բացատրությունները հենց բացատրողի գաղափարներն են. ըստ էության, պետք է որ որոշակի կապ լիներ բացատրություն տվիդ մարդու և նրա միջև, ինչ նա բացատրում է: Դարերի ընթացքում տարբեր մտածողների կողմից Կոնֆուցիոսի մտքերի բացատրություններն ապացուցում են, որ սա ճիշտ է: Ես կցանկանայի վերադառնալ Կոնֆուցիոսի այս խոսքերին, որոնք մեկնարանել է Չու Սին: Նա գրում է.

«Երբ մուտք են գործում հնչյունները, սիրտը հաղորդակցվում է նրանց հետ, նրանց մեջ ոչինչ չի գտնում՝ խուսափելու կամ դիմադրելու համար, հետևաբար հասկանում է նրանց ծայրագույն զգացողությունը առանց մտածելու»:

Զու Սիի «հնչյունները» կապված են ձայնի (շենին) հետ և ընդգրկում են թե՝ «արտաքերված» (յոուշեն ջի ին), և թե՝ «չարտաքերված հնչյունները» (ուշենջի ին): «Երանց ծայրագույն զգացողության ընթացքումը» պետք է անցնի այն ոլորտի սահմանները, որում Կոնֆուցիոսը ճանաչում էր Երկնքի հրամանները, և այսպիսիով այս ոլորտը, որ «ձեռք է բերվում՝ առանց որևէ մտքի» անցնում է գիտելիքի սահմանը: Ես հավատացած եմ, որ սա կարելի է բացատրել՝ որպես ներմքոնված գեղագիտական ոլորտ, իսկ այն, ինչ ձեռք է բերվել՝ ներմքոնված պատկեր, որն անցնում է փորձի սահմանը: Սա կարելի է բացատրել նաև՝ որպես ստեղծագործական ոլորտ, «գեղեցկության» ոլորտ: Կոնֆուցիոսի հիմնավորման այս բացատրությունը գուցե և «հարկադրված» է, բայց ինչպես Յան Բոջունն է հաստատում, պատմության ընթացքում այս ուղղության բացատրությունների մեծամասնությունը հարկադրված է եղել, ուստի չեմ կարծում, թե այս ժառանգության վրա տեսակետ կառուցելը կարող է վնասակար լինել: Բայց ես նաև հավատում եմ, որ այսպիսի բացատրությունն ունի հիմք, մասնավորապես փիլիսոփայության տեսանկյունից, որում այն կարող է որևէ նոր իմաստ ունենալ: Մենք գիտենք, որ Կոնֆուցիոսն երաժշտությունը համարում էր զարգացման ձև, և «Երբ Ցիի թագավորությունում լսեց Շաոյի երաժշտությունը», «Երեք ամիս շարունակ ի վիճակի չէր միս համտեսել». այս մանրությունը բացահայտում է, որ նա մուտք էր գործել բարձր գեղագիտական ոլորտ, որը «ձեռք է բերվում առանց որևէ մտքի»: Կոնֆուցիոսն այս ոլորտի իր սեփական բացատրությունն ուներ. «Ես չէի սպասում, որ երաժշտությունն ինձ կհասցներ այս վիճակի»: Այսպիսով, նա ոչ դիտավորյալ հասավ մի ոլորտի, որտեղ վայելում էր անդրանցական գեղեցկության ձևը:

Զու Սին հետևյալ կերպ էր մեկնաբանում Կոնֆուցիոսի՝ «յոթանասուն տարեկանում սրտի թելադրանքին հետևելու, բայց օրենքները չխախտելու» մասին հիմնավորումը.

(Զուն) ատաղծագործի գործիք է, որով չափում են կաղապարները, բայց այստեղ այն վերաբերում է ընդհանրապես կաղապարին կամ սովորությին: Իր սրտի թելադրանքին հետևելիս Կոնֆուցիոսը չէր խախտում կաղապարի սահմանները, ուստի հանգիստ էր իր արարքներում ու նպատակներին հասնում էր առանց ջանք գործադրելու:

«Տարեգրեթից» այս հատվածը, որը մեկնաբանվում է այստեղ, հետևաբար, վերաբերում է մի ոլորտի, որը նույնանում է Երկնքի, Երկրի ու անքիվ-անհամար իրերի հետ. այստեղ մարդը «գիտի ծշմարտությունը» (ջի ջեն), «ձեռք է բերում գեղեցկություն» (իտ մեյ), ապա մուտք է գործում «ծայրագույն բարության» (ջիշան) կատարյալ ոլորտ: Կոնֆուցիոսը հավատացած էր, որ «կատարյալ գեղեցկությունը» չի կարող համեմատվել «կատարյալ գեղեցկությամբ համադրված կատարյալ բարության հետ»: «Տարեգրեթից» «Ութ ի» բաժնում համդիպում ենք հետևյալ հատվածին.

Շաոյի երաժշտությունը քննարկելիս Կոնֆուցիոսը մեկնաբանում էր. «Այն օժտված է կատարյալ գեղեցկությամբ, ինչպես նաև կատարյալ բարությամբ»: Իսկ արքայի երաժշտությունը մեկնաբանում է հետևյալ կերպ՝ «Այն օժտված է կատարյալ գեղեցկությամբ, բայց ոչ կատարյալ բարությամբ»:

Երբ ինչ-որ երևույթ օժտված է կատարյալ բարությամբ, ապա այն ինչ-որ չափով (առնվազն կոնֆուցիականների համար) կապված է բարոյագիտական արժեքին վերաբերող դատողության հետ: Մենցիոն ասում է. «Լիարժեք ճշմարտացիությունը կոչվում է գեղեցկություն»:

Այստեղ «գեղեցկությունը» ներառում է եթիկական գնահատման գաղափարը: Զու Սին այս տողում թողնում է հետևյալ ծանոթագրությունը.

Երբ մարդը ջերմեռանդորրեն կուտակի իր բարությունը այնքան, որ այն ափեափ լցվի ու ճշմարտություն դառնա, այնժամ գեղեցկությունը կիանգրվանի նրա մեջ և կախում չի ունենա արտաքին հանգամանքներից:

«Բարությունն» այստեղ յուրացված «գեղեցկության» մի ձև է, կերպարի բարձրագույն գեղեցկություն: Երևում է՝ Զու Սին հավատում էր, որ «բարությունը» ինչ-որ չափով կարող է ընդգրկել նաև «գեղեցկության» գաղափարը: «Կատարյալ բարությունն» ավելի բարձր է «կատարյալ գեղեցկությունից», որովհետև «կատարյալ բարությունն» իրականում թե՝ «կատարյալ բարություն է, թե՝ կատարյալ գեղեցկություն»: Դիմա մենք կարծես կարող ենք հիմնավորել, որ Կոնֆուցիոնի կյանքի ոլորտը (կամ իմաստնությունը) հիմնված է «ճշմարտությունը ծանաչելու» և «գեղեցկությունը ծանաչելու» գաղափարի վրա: Ապա նա հասնում է կատարյալ բարության ոլորտ, որում «մարդը կարող է հանգիստ լինել իր արարքների մեջ և առանց ջանքերի հասնել նպատակի»: Այլ կերպ ասած՝ «ճշմարտությունից» անցնում ենք «գեղեցկության», ապա վերջապես ծեռք ենք բերում «բարություն»:

«Բարի - գեղեցիկ - ճշմարիտ». սա Կանտի փիլիսոփայության առանձնահատկությունն էր: Կանտի պատկերացմանը՝ գործնական փաստարկումը գերազանցում էր մտահայեցողական փաստարկումը: Նրա «Kritik der reinen Vernunft» («Զուտ բանականության քննադատություն») աշխատության ուսումնասիրության առարկան երևութական (ֆենոմենալ) աշխարհն է, և այն ենթարկվում է բնության անհրաժեշտության օրենքների հսկողությանը: Իր «Գործնական բանականության քննադատություն» աշխատության ուսումնասիրության առարկան ռացիոնալ գործառնության նոումնեն էր, որը չէր ենթարկվում անհրաժեշտության օրենքներին, ուստի ազատ էր: Առաջինը բնությունն է, երկրորդը՝ բարոյականությունը: Առաջինը պատկանում էր տեսական գիտելիքի, երկրորդը՝ բարոյագիտական հավատքի ոլորտին, և չկար այս երկուսը միմյանց ուղղակիորեն կապող օղակ: Դեռևսարար, հարցը հետևյալն է՝ ինչպես կամքջել ծանաչողության տեսությունը և եթիկական համոզմունքը կամ բարոյագիտությունը. այս երկուսի կապի խնդիրը լուծելու նպատակով Կանտը գրեց իր «Kritik der Urteilskraft» (Դատողունականության քննադատություն) գիրքը, որը սկսվում է այսպես.

Ուստի հսկայական անդունդ է առաջանում բնության հասկացության՝ զգայականի և ազատության հասկացության՝ գերզգայականի միջև, ուստի զգայունից գերզգայուն անցումն անհնար է (բանականության տեսական կիրառման միջոցով): ասես դրանք երկու տարբեր աշխարհներ են, և առաջինը չի կարող որևէ ազդեցություն ունենալ երկրորդի վրա: Սակայն երկրորդը պետք է ազդի առաջինի վրա, այսինքն՝ ազատություն հասկացությունը պետք է իրականանա զգացողությունների աշխարհում, որտեղ նպատակը դեկավարվում է օրենքներով: Դեռևսարար, հնարավոր է, որ բնության օրենքները ծևով ներդաշնակվեն առնվազն այն նպատակների հետ, որոնց մենք պետք է հասնենք բնության մեջ՝ ըստ ազատության օրենքների: Ուստի ի վերջո պետք է լինի հիմք, որը կմիավորի

գերզգայունը, այսինքն՝ այն, ինչ ընկած է բնության հիմքում, և գերզգայունը, որը գործնականում ներառում է ազատության հասկացությունը: Չնայած այս հիմքի հասկացությունը չի հասնում ոչ տեսական, ոչ գործնական ճանաչողության և չունի իր սեփական տիրույթը, այն հնարավոր է դարձնում անցումը մեր մտածողության բնության սկզբունքներից դեպի մեր մտածողության ազատության սկզբունքները»<sup>115</sup>:

Կանտը հավատացած է, որ դատողության ուժմ է միավորում բանականությունը (զուտ բանականություն) և ռացիոնալությունը (գործնական բանականություն), ու թեև դատողությունն ընդգրկում է բանականության այս ծներից յուրաքանչյուրի հատկությունները, չի նույնանում նրանց հետ: Կանտը մարդու ոգին բաժանում էր իմացության, զգացմունքի ու գաղափարի: Իմացության ճանաչողական ունակությունը զուտ բանականությունն է, գաղափարի ճանաչողական ունակությունը ռացիոնալությունն է կամ գործնական բանականությունը, որն անցնում էր փորձի սահմանները, և զգացմունքի ճանաչողական ունակությունը այն է, ինչ Կանտը կոչում էր «դատողություն»: Քանի որ զգացմունքը միջանկյալ դիրք էր զբաղեցնում իմացության ու գաղափարի միջև, այն շարժվում էր արտաքին խթանների օգնությամբ, ինչպես իմացությունը, և արտաքին իրերի նկատմամբ զբաղեցնում էր իր դերը, ինչպես գաղափարը: Այսպիսով, դատողությունը միջնորդ էր բանականության ու ռացիոնալության միջև:

Ինչո՞ւ առումնվ դատողությունը, ինչպես և բանականությունը, դիմադրում էր թերի կողմերին: Այլ տեսամկյունից, ինչպես ռացիոնալությունը, այն նպատակ ուներ թերի կողմերը հաշտեցնել ամբողջության հետ: Յետևաբար, հակադիր թերի կողմերի ընկալումը և ռացիոնալությունը, որը վերաբերում է ամբողջին, հանդիպում են դատողության մեջ, և դատողությունը ձգտում է ամբողջի մեջ ներգրավել մասերը, իսկ հետո դրանք ենթարկել արտացոլման, ուստի դատողությունն ի գորու է կամքել բանականությունն ու ռացիոնալությունը<sup>116</sup>: Այսպես Կանտը կառուցում էր «բարի-գեղեցիկ-ծշմարիտ» իր փիլիսոփայական եռերգությունը:

Անշուշտ, թեև արժեքային նմանություններ կան Կոնֆուցիոնի և Կանտի փիլիսոփայությունների միջև, փիլիսոփայությունները կառուցելու նրանց նպատակները տարբեր են: Կոնֆուցիոնը հիմնեց կյանքի փիլիսոփայությունը, մինչդեռ Կանտը կառուցեց լիարժեք ռացիոնալ փիլիսոփայական համակարգ: Թերևս սա է չինական և արևմտյան փիլիսոփայությունների տարբերություններից մեկը: Եթե համեմատենք Կոնֆուցիոնի գործընթացը, երբ նա սկզբում իմացավ երկնքի հրամանները, ապա անմիջապես կարողացավ տարբերակել այլոց խոսքերի ծշմարտացիությունը կամ կեղծիքը, հասավ «սրտի թելադրանքին հետևելում՝ առանց օրենքները խախտելու», որտեղ հիմնական թեմնան ծշմարտության, բարու և գե-

115. Կանտ, «Պանդուանկի Պիփան» (Զուտ բանականության քննադատություն, չինական հրատարակություն, Պեկին. Շանու հն շուզուամ, 1964, էջ 13: [Խմանուիլ Կանտ, «Դատողության քննադատություն», թարգմ.՝ Վերմեր Ս.Փլուհար: Յաքեթ հրատարակություն, 1987, 15-16 էջեր]):

116. Լի Ցեհոու, «Փիպան Ձեսյուե դե Փիպան» (Քննադատական փիլիսոփայության քննախոսություն), ժենմին Չուրամշե, 1984, 368-370 էջեր, Զյան Կունյամ, «Դեգու Գուրյան Սեյսյուե» (Դասական գերմանական գեղագիտություն), Շանվու Ինչուգուամ, 1981, 67-68 էջեր:

ղեցիկի գաղափարն էր ավանդական չինական փիլիսոփայության մեջ, ապա կարող ենք ասել, որ Կոնֆուցիոսի «հիսուն տարեկանում ինացա Երկնքի հրաման-ները» հիմնավորումն այն փուլն է, որտեղ մարդը ծգտում է «Երկնքի ու Մարդու միասնությանը» (թյան ժեն հեի): Նրա այն պնդումը, որ «Վարսուն տարեկանում կարողանում էր անմիջապես տարբերակել այլոց խոսքերի ծննարտացիությունն ու կեղծիքը», նշանավորում է «օգացմունքի ու պատկերի» (ցին ձին հեի) փուլը, իսկ «յոթանասուն տարեկանում հետևում էր սրտիս թելադրանքին, բայց չէի խախտում օրենքները» պնդումը այն փուլն է, երբ նա ի վիճակի է իրագործել «գիտելիքի և գործողության միասնությունը» (ջի սին հեի):

Երկնքի ու Մարդու միասնությունը պատկանում է «հմացության» (գիտելիք) տիրությին: Զգացմունքի ու պատկերի միասնությունը պատկանում է «գնահատման» (զգացմունք) տիրությին, իսկ գիտելիքի և գործողության միասնությունը՝ գաղափարի կամ մտադրության ոլորտին: Ըստ կոնֆուցիականների՝ այս երեքն անբաժանելի են: Մարդ լինելը ենթադրում է տիեզերքի և արարման ընկալում, ինչպես նաև տիեզերքի և արարման ձեռքբերումները գնահատելու ունակություն: Ավելին, իր կյանքի ընթացքում մարդը պետք է վերադրսնորի տիեզերքի կատարյալ գեղեցկությունն ու կատարյալ բարությունը: Կոնֆուցիոսի նկարագրած գործնթացն այն պահանջների շարքն է, որ մարդն իր առաջ դնում է կյանքի ընթացքում: Սա ծննարիտի, գեղեցիկի ու բարու Կոնֆուցիոսի անձնական որոնումների հանրագումարն է:

## 19.2 Լաոցիի որոնումները կյանքի ոլորտում

Լաոցին կարծես թե պաշտպանում է մերժողական մոտեցումը մարդկանց մեծանասնության (այդ թվում և կոնֆուցիականների)՝ ծննարիտի, բարու և գեղեցիկի պահանջներին: «Ինաստուններին անտեսելու և գիտելիքը դեն նետելու» (ծյուշեն-ցիշի), գաղափարը կարծես հասարակ գիտելիքի որոնումների մերժումն է: Նրա այն հիմնավորումը, որ «իինգ գույմերը կուրացնում են մարդու տեսողությունը» (ուստ լին ժեն մու ման) գեղեցկության ընդհանուր որոնումների հակադրությունն է. այն պնդումը, որ «Երբ Մեծ ծանապարհը թերվում է, կյանքի են կոչվում կարելցանքն ու արդարամտությունը» (դադան Փեյ, յոու ժեն ի) բարության ընդհանուր բարոյական հասկացության հակադրությունն է: Յետևաբար, արդյո՞ք Լաոցին չի վիճակում ծննարիտի, բարու և գեղեցիկի ցանկացած որոնում մարդկային ոլորտում: Ես համաձայն չեմ այս հիմնավորման հետ: Նա կոչ է անում ձգտել այնպիսի իդեալների, որոնք անցնում են ծեծված երևությունների սահմանները. այս ծգտումը, ըստ նրա, «Երկնքի հետ հավասար» տիրություն է (թունյու դառ): Մենք տեսնում ենք, որ Լաոցին «ճանապարհը» դիտարկում է՝ որպես ծննարիտի, բարու և գեղեցիկի միասնություն:

«Դառ Դէ Զինի» (ճանապարհի և իշխանության դասական») 25-րդ գլխում կարելի է գտնել հետևյալ հատվածը.

Մարդու մողելը Երկիրն է, Երկրի մողելը՝ Երկինքը, Երկնքի մողելը ճանապարհն է, իսկ ճանապարհի մողելը՝ Բնությունը:

Սա Լաոցիի՝ կյանքի ոլորտի որոնումների տեսակետի նկարագրությունն է: Նա հավատացած էր, որ մարդու բարձրագույն իդեալը ճանապարհի նմանակումն է, մինչեւ ճանապարհն ինքնին բնական է և ինքնարուիս: Ո՞րն է նրա դի-

տարկած ճանապարհը: «Դառ Դե Չինը» ներկայացնում է մի շարք սահմանումներ, բայց ամենահիմնականը անդրանցական բարձրագույն չափանիշն է<sup>117</sup>: Դասականի 14-րդ գլուխն ասում է:

Երբ մայում ես, չի երևում, ուստի նկարագրվում է՝ «գույնից անդին», երբ ականջ ես դնում, չի լսվում, ուստի նկարագրվում է՝ «հնչողությունից անդին», երբ շոշափում ես, չի շոշափվում, ուստի նկարագրվում է՝ որպես «անձն»: Այս երեքը երևակայությունից անդին են, և բոլորն էլ մեկ քառսային ամբողջի մասերն են: Վերևում լույս չի արձակում, ներքևում՝ խավար: Անվերջ է, ուստի չի նկարագրվում բառերով և վերադառնում է ոչնչին: Զե է, որ չունի ծե, կաղապար է առանց նյութի, ուստի կոչվում է թվայալություն: Նրան հանդիպելիս՝ տեսնում են՝ ոչ սկիզբ ունի, ոչ վերջ: Յասիր հավերժական ճանապարհին, որպեսզի կառավարեն այն, ինչ գոյություն ունի ներկայում. եթե մարդը կարողանա հասկանալ իր հին ծագումը, ապա կգտնի ճանապարհը կառավարող օրենքները:

Ուսումնասիրելով այս հատվածը՝ պարզում ենք, որ այն ընդգրկում է իմաստի երեք մակարդակ.

(1) «ճանապարհն» անցնում է զգայական փորձի սահմանները, և այս անդրանցականությունը նկարագրվում է «գույնից անդին», «հնչունից անդին» և «ձևից անդին» բնորոշումներով: Կանական Դեցինը Մին դինաստիայում գրում է իր «Դառ Դե Չին Չյե» (ճանապարհի և իշխանության դասական բացատրություն): «Մեծ քառսային ամբողջությունը», որը հնարավոր չէ երևակայել, ճանապարհն է»:

(2) Թեև ճանապարհն անդրանցական է, այն, այնուամենայնիվ, հիմնված է իրական երևույթների վրա, օրինակ՝ «ծե առանց ծեի, կաղապար՝ առանց նյութի»: Այս տողում Վան Բին մեկնարանում է.

Դրանից կարող են ծևավորվել բոլոր «իրերը», որոնք առանձնահատկություններ ունեն:

Գուցե ցանկանաք ասել, որ այն ոչինչ է, բայց նրանից կարող են իրեր ծևավորվել. գուցե ցանկանաք ասել, որ այն գոյություն ունի, բայց հնարավոր չէ տեսնել նրա ծեր...

Այն, ինչ չունի ծե ու անուն, անթիվ-անհամար երևույթների հիմնական սկզբունքն է:

«Թվայալությունը», որը «անձն ծե է ու առանց նյութի կաղապար», կարող է ծևավորել բոլոր ծեերն ու կաղապարները կազմող գոյության հիմնական սկզբունքը: Վան Բին մեկնարանում է, որ մարդը չի կարող «շոշափել ու սահմանել թվայալությունը»:

Այլ կերպ ասած՝ ճանապարհն առանձնահատկություն չունի: Առանձնահատկություններ ունեցող բոլոր իրերն ընդգրկվում են փորձի ոլորտում, իսկ այն, ինչ գուրկ է առանձնահատկությունից, անդրանցում է փորձը: «Դառ Դե Չինի» 21-րդ գլուխն ասում է.

Այս ճանապարհը թվայալություն է, բայց այս թվայալության մեջ ծեերը կարող են լինել նկատելի, իսկ իրական երևույթները կարող են գոյություն ունենալ:

117. Թաճ Իծյե, «Նամբեյչառ Շիցի դե Դառջյառ (Թառսիզմը Վեյ, Չին, Յյուսիսային և Յարավային դինաստիաների ժամանակաշրջանում), Ծաանսի Շիֆան Դասյու Չուբանչե, 1988, 56-57 էջեր:

Այս մթության մեջ էություն կա: Այս էությունը բացառապես իրական է և կարող է հաստատվել:

Չետևաբար, եթե ճանապարհը գուրկ է առանձնահատկություններից, ապա նրանից կարող են ծևավորվել առանձնահատկություն ունեցող բոլոր «իրերը», ուստի այն, լինելով իրերի նոումեն, կազմում է իրական գոյության մեջ մասը:

(3) ճանապարհը բոլոր իրերի գոյության հիմքն է և անդրանցականության բարձրագույն չափանիշը: «Ճանապարհը կառավարող օրենքները» համարվում են «սկզբունքներ»<sup>118</sup>: «Ճանապարհը կառավարող օրենքները» արտահայտության մեջ ճանապարհը անթիվ-անհամար երևույթների բարձրագույն չափանիշն է՝ իին ժամանակներից նինչև մեր օրերը:

Վերը նշված երեք կետերը ցույց են տալիս, որ Լաոցիի փիլիսոփայությունը Երկնքի, Երկրի ու անթիվ-անհամար իրերի ծագման որոնումն է, ինչպես նաև նրանց գոյության հիմքը, որից էլ նա ստեղծեց փիլիսոփայական համակարգ, որտեղ ճանապարհն անդրանցականության բարձրագույն չափանիշն էր: Լաոցիի՝ տիեզերքի նոումենի քննարկումն իրականում ճշմարտության որոնումների տիրույթում է:

Ճանապարհը բարձրագույն կարգն է Լաոցիի փիլիսոփայական համակարգում: Եթե մարդը հասնում է ճանապարհին, ապա հասնում է ճշմարտությանը, և սա իրականում կյանքի նպատակն է: Այսպիսով, Լաոցիի համար «ճանապարհի հետ նույնանալու» գաղափարը կյանքի բարձրագույն նպատակն է: Նա ասում է. «ճանապարհին ծառայել նշանակում է նույնանալ ճանապարհի հետ»:

Վաճ Բին մեկնարանում է.

Ճանապարհը հիմնվում է ծեփ և գործողության բացակայության վրա և ստեղծում անթիվ-անհամար երևույթներ: Երբ ճանապարհին ծառայելիս հիմնվես անգործության վրա, ապա կլինես գերագույն մարդ և կսովորեցնես առանց խոսքերի: Թվացյալ գոյության շարունակականության մեջ իրերը կիետևեն իրականությանը, իսկ ճանապարհը կնույնանա մարմնի հետ: Սա կոչվում է նույնանալ ճանապարհի հետ:

«Ճանապարհի հետ նույնանալը», հետևաբար, համարժեք է ճանապարհի հետ մեկ մարմնին լինելուն: Նկատելի է, որ Լաոցին հավատում էր, որ մարդու և ճանապարհի հարաբերությունը չի հանգեցնում նրան, որ մարդը սկսում է ճանապարհը համարել ճանաչողության հասարակ առարկա (որովհետև ճանապարհը չունի անուն ու ծեփ): Ավելին, այն ենթադրում էր մարդու նույնացումը ճանապարհի հետ: Չետևաբար, ճանապարհի հետ մեկ մարմնին լինելն ընդամենը բարձրագույն ոլորտն է, որ լինում է մարդու կյանքում, ոլորտ, որտեղ նա կարող է անցնել երկրային կյանքի սահմաններն ու «հասնել ճանապարհին» (դե Դաո): Սա գերագույն ոլորտն է, որին ծգուում էր Լաոցին:

Այդ դեպքում Լաոցին ինչպես էր վերաբերվում բարու և գեղեցիկի գաղափարներին: Մենք գիտենք, որ Լաոցին ճանապարհի հիմնական առանձնահատկությունը համարում էր «քննությունն ու անգործությունը» (ցիժան ուվեյ), ուստի սա բարության և գեղեցկության նրա չափանիշն էր: Նա ասում է. «Երբ Մեծ ճանապարհը թեքվում է, գլուխ են բարձրացնում կարեկցանքն ու ճշմարտացիու-

118. «Սանգամ Ուծի», «Բարիոը Թունի»

թյունը»: Քանի որ բարոյական հասկացությունները, ինչպիսիք են կարեկցանքն ու ճշմարտացիությունը, ստեղծվում են մարդու կողմից, նրանք ոչ միայն անհամեմատելի են «քնության և անգործության» սկզբունքների հետ, այլև քայլայում են ճանապարհը: Միայն երբ այս մարդածին երևույթները վերանում են, մարդը կարողանում է հասնել ճշմարդիտ «բարության»: Դետևաբար, նա ասում է. «Միայն երբ կարեկցանքը դադարում է, իսկ ճշմարտացիությունը՝ անհետանում, մարդիկ կարողանում են վերադառնալ անկեղծ որդիական բարեպաշտության և բարության»: Միայն երբ բոլոր մարդածին բարոյական հասկացությունները հեռացվում են, մարդիկ կարողանում են վերադառնալ իրենց բնական հարաբերություններին: «Դառ Դե Չինի» ութերորդ գլխում կարելի է կարդալ հետևյալ հատվածը.

Նրանք, որ օժտած են գերագույն բարությամբ, նման են ջրի: Ջուրը ծառայում է անթիվ-անհամար երևույթներ սնելու համար ու չի վնասում նրանց. եթե մարդն ամենացածր տեղում է, որից մարդկանց մեջ մասը նողկում է, նա ամենամոտն է ճանապարհին:

Բարոյական անձինք բնույթով նման են ջրի: Ջուրը կարող է օգտակար լինել բազմաթիվ երևույթների համար, բայց չի ծփուում հասնել բարձունքների: Գոհ է, եթե նույնիսկ ամենացածր տեղում է, ու հետևաբար մոտենում է ճանապարհին: 66-րդ գլխում մենք կարդում ենք հետևյալ տողերը. «Գետերն ու օվկիանոսները ջրուղիների արքաներն են, որովհետև նրանք ընտրում են ամենացածրադիր վայրերը: Քանի որ ամեն ինչ հոսում ու լցվում է նրանց մեջ, օվկիանոսներն ու հզոր գետերը կոչվում են հովիտների կառավարիչներ»:

Սիա Լաոցիի բացատրությունն այն մասին, որ բարոյականությամբ օժտված անձինք մոտ են երկնքի ոլորտին, բայց միևնույն ժամանակ մեկ մարմին չեն ճանապարհի հետ: Ֆեն Յուլանի՝ «չորս ոլորտների» մեկնաբանությունը «Սին Յու-անմժեն» (Մարդու նոր մեկնաբանություն) գրքում հիշատակում է. «Նրանք, որ օժտված են բարձրագույն բարությամբ, պատկանում են միայն «բարոյականության ոլորտին», մինչեւ նրանք, որ նույնանում են ճանապարհի հետ, պատկանում են «Երկնքի ու Երկրի ոլորտին»: Այսպիսով, ինչ վերաբերում է արժեքին, ապա բարին ավելի ցածր մակարդակի վրա է, քան ճշմարիտը:

«Դառ Դե Չինի» 12-րդ գլխում կարդում ենք.

Չինգ գույները շլացնում ու կուրացնում են աչքերը. իինգ հնչյունները խլացնում են ականջները, իինգ բույրերը թմրեցնում են քիմքը. նրանց հետապնդումը հանգեցնում է ցրվածության ու խենթության:

Կան Բին մեկնաբանում է.

Աչքերը, բերաններն ու սրտերը հետևում են իրենց սեփական էությանը. եթե մարդը գործում է՝ չհետևելով նրանց էությանը, վնասում է բնույթյունը, որը հանգեցնում է կուրության, խլության, թմրության ու խենթության:

Այլ կերպ ասած՝ իինգ գույները, իինգ հնչյունները և իինգ համերը «մարդածին» են և կորցրել են իրենց նախնական բնույթը: Լաոցին հասարակ պարզությունը համարում էր գեղեցկություն (Չյան սու բառ փու) <sup>119</sup>: Մարդը պետք է հետևի նրան, ինչ բնական է: Յնարքների դիմելու դեպքում նախնական գեղեցկությունը

119. «Զուանցի» գրքի «Թյանդառ» գլխում կարդում ենք հետևյալ հատվածը. «Մաքուր պարզությամբ աշխարհը չի կարող մրցել գեղեցկության հետ»: Այս հատվածը բացարձու է ձամսու բառին արտահայտությունը:

կորչում է, իսկ հակառակ դեպքում բնական գեղեցկությունը պահպանվում է: Ուստիև, «Դառ Դե Չինի» 41-րդ գլխում հանդիպում ենք հետևյալ հատվածին.

Գերագույն նոտան չունի հնչյուն, գերագույն պատկերը չունի ծև, ճանապարհ կորչում է անանունության մեջ, մինչդեռ միայնության մեջ այն գերազանց է ու լիարժեք:

Վան Բին մեկնաբանում է.

Մարդն ականջ է դնում գերագույն նոտային, բայց չի կարողանում լսել, որովհետև այն չունի հնչողություն: Նոտան, որ հնչողություն ունի, անպայման կդառնա հնդատոնի առաջին կամ երկրորդ հնչյուն: Եթե այն առանձնանում է, չի կարող համախմբել: Յետևաբար, նոտան, որն ունի հնչողություն, գերագույն նոտան չէ:

Եվ.

Եթե պատկերն ունի ծև, ապա այն կարելի է տարբերակել, իսկ եթե կարելի է տարբերակել, ապա այն կամ տաք է, կամ այրվում է: Եթե չի այրվում, սառն է: Ուստի պատկերը, որն ունի ծև, գերագույն պատկերը չէ:

Եվ.

Այս ամենը ստեղծել է ճանապարհը: Ինչ վերաբերում է պատկերին, այն գերագույն պատկերն է բոլոր պատկերների շարքում. այս պատկերը չունի ծև: Ինչ վերաբերում է նոտային, ապա այն գերագույն նոտան է նոտաների շարքում, այն է՝ լրության նոտան:

Երաժշտությունը, որը մեկ մարմին է կազմում ճանապարհի հետ, գերագույն երաժշտություն է, իսկ պատկերը, որը մեկ մարմին է կազմում ճանապարհի հետ, գերագույն պատկեր է: Գերագույն երաժշտությունը ներառում է երաժշտության բոլոր տեսակները, իսկ գերագույն պատկերը՝ բոլոր ծևերը: Երաժշտությունը կախված է հնչյունից, իսկ նկարը՝ ծևից, բայց Լաոցիի համար գերագույն երաժշտությունը չունի հնչյուն, իսկ գերագույն նկարը զուրկ է բոլոր ծևերից: Քանի որ հնչյունի կամ ծևի բացակայությունը ներդաշնակվում է «քնության ու անգործության» սկզբունքների հետ, նրանք կազմում են ծշմարիտ գեղեցկություն: Այստեղից հասկանում ենք, որ ըստ Լաոցիի՝ բարին ու գեղեցիկը ծագում են ծշմարիտից (ճանապարհ) և ճանապարհի յուրահատուկ դրսևումներն են:

«Դառ Դե Չինի» վերջին՝ 81-րդ գլխում հանդիպում ենք հետևյալ հատվածին.

*Նողկալի բառերը գեղեցիկ չեն,  
Գեղեցիկ բառերը նողկալի չեն:  
Բարի մարդիկ չեն վիճում,  
Նրանք, որ վիճում են, բարի չեն:  
Գիտելիք ունեցողները խորք չունեն,  
Նրանք, որ խորք ունեն, չեն ձգում գիտելիքի:*

Ես հավատացած եմ, որ այս հատվածն արտահայտում է Լաոցիի՝ բարու, ծշմարիտի ու գեղեցիկի կարգային համակարգը: «Գեղեցիկի» մասին խոսվում է խոսքի տեսանկյունից (սա վերաբերում է գրականությանը), «բարության» մասին խոսվում է արարքների կամ գործողությունների համատեքստում, իսկ «իմանալը» վերաբերում է իմացության ոլորտին: «Ծշմարիտ իմացությունը» գերազանցում է «ծշմարիտ բարությունը», որն իր հերթին գերազանցում է «ծշմարիտ գեղեցկությունը»՝ այդպիսով ստեղծելով չափանիշների աստիճանական շարք: Սա

Լաղջիի որոնումների մոդելն է կյանքի ոլորտում:

Եթե ասում ենք, որ «բարու, ճշմարիտի ու գեղեցիկի» մասին Լաղջիի տեսակետը որոշ ընդհանրություններ ունի Յեգելի փիլիսոփայության հետ, հաստատում ենք, որ որոշ նմանություններ կան արժեքի կողմնորոշման այս երեք չափանիշների դասավորության մեջ: Յեգելի փիլիսոփայական համակարգում «բարոյականությունը», «արվեստն» ու «փիլիսոփայությունը» պատկանում են հոգևոր փիլիսոփայության ոլորտին: Յոգևոր փիլիսոփայությունը Յեգելի փիլիսոփայական համակարգի երրորդ մասն է. այն կազմում է ինքնազարգացման երրորդ մեծ փուլ, որը տանում է դեպի մաքուր հոգ, այսինքն՝ հոգևոր փուլի նկարագրություն: Յոգևոր փուլը տրամաբանական և բնական փուլերի միասնությունն է, այն ինքնագոյն է և գործում է ինքնուրույն: Ինքնազոյությունից ինքնուրույնության անցնելիս ոգին անցնում է բարդ զարգացման գործընթացով, որը բաղկացած է երեք փուլից. (1) սուբյեկտիվ հոգի, (2) օբյեկտիվ հոգի և (3) բացարձակ հոգի: «Բարոյականությունը» պատկանում է օբյեկտիվ հոգուն: Օբյեկտիվ հոգին նշանակում է, որ այն ինքնադրսնորվել է արտաքին օբյեկտիվ աշխարհում՝ ոչ թե բնական, այլ միայն հոգևոր աշխարհի, ասենք, հասարակական կյանքի ու նարդկության պատմության տարրեր ոլորտներում: Այն բաղկացած է զարգացման երեք փուլից. (1) վերացական օրենք (սեփականության օրենք), (2) բարոյականություն և (3) էթիկա (ընտանիք, քաղաքացիական հասարակություն, երկիր): Օբյեկտիվ հոգին զարգացման փուլում ստորադասվում է բացարձակ հոգուն, ուստի նաև ստորադասվում է «արվեստին» ու «փիլիսոփայությանը», որոնք պատկանում են բացարձակ հոգուն: Յեգելի համար թե՛ սուբյեկտիվ, թե՛ օբյեկտիվ հոգին մասնակի են. սուբյեկտիվ հոգին՝ ոգին, զգացողությունը, գիտակցությունը, միտքը, կամքը և այլն, անհատների ներքին գիտակցից վիճակ է, բայց այն դեռ չի իրագործվել և ծեռք չի բերել գոյություն: Օբյեկտիվ հոգին՝ սեփականությունը, օրենքը, բարոյականությունը, քաղաքականությունը, ընտանիքը, հասարակությունը, երկիրը, և այլն, օբյեկտիվ են, չնայած չունեն ինքնազիտակցություն: Յոգու էությունը անսահմանափակ է, բացարձակ ու ազատ. հետևաբար, այն պետք է շարունակի զարգանալ՝ սուբյեկտիվ և օբյեկտիվ հոգիների մասնակիությունից խուսափելու, ինչպես նաև նրանց հակասությունները կանխելու համար, որպեսզի հոգին հասնի զարգացման բարձրագույն փուլ: Բացարձակ հոգին լիարժեք է և ամբողջությամբ իրագործելի: Այն թե՛ օբյեկտիվ է, թե՛ սուբյեկտիվ, և ինքն իրեն օբյեկտ համարելուց և ինքնազիտակցաբար իր էությունը դրսնորելուց բացի չունի այլ նպատակ, հետևաբար այն իսկապես անսահման է, բացարձակ ու ազատ: «Արվեստ», «կրոն» և «փիլիսոփայություն». բացարձակ հոգու զարգացման այս երեք փուլերը նույնական են իրենց բովանդակության առումով, որովհետև նրանց տարբերությունները միայն ծեռք են: Յեգելն ասում է. «Յամընդիհանուր ոգու գոյության [Դասենք] տարրը ներըմբռնում է. պատկերը արվեստում, զգացմունքն ու ներկայացուցական միտքը՝ կրոնի մեջ, մաքուր և ազատ միտքը՝ փիլիսոփայության մեջ»<sup>120</sup>: Թվարկելով բացարձակ հոգու այս երեք փուլերը՝ Յեգելը փորձում է բացատրել, որ նրա իրագործումը նույնպես համապատասխանում է գործընթացին,

120. Յեգել, «Ֆա Ձեսու Յուանլի», Ծանվու հնշուգուամ, 1961, էջ 351: [Գ.Վ.Ֆ. Յեգել, «Ճշմարիտի փիլիսոփայության տարրեր», բարգմ.՝ Հ.Բ.Սիսրեթ, խմբ. Ալեն Վ. Վուդ, Քեմբրիջի համալսարանի իրատարակչություն, 1991, թիվ 341, էջ 372]:

որը սկսվել է զգացական ներըմբռնումից, անցել ներկայացուցչական մտքի միջով (նա այն կոչում էր նաև «պատկերավոր մտածողություն») և հասել վերացական մտածողության: Յետևաբար, փիլիսոփայությունը բացարձակ հոգու ամենաբարձր, ամենաազատ, ամենաիմաստում վիճակն է: Նա ասում է.«Գիտելիքի ամենակատարյալ մեթոդը սկսվում է նաքուր մտքից. և այստեղ մարդու վերաբերմունքը ամբողջությամբ ազատ է»<sup>121</sup>: «Մտքի մաքուր ձև» ասելով՝ նա նկատի ունի մաքուր գաղափարն ու տրամարանական կարգը: Արվեստի զգացական ձևը չի կարող լիարժեքորեն մարմնավորել բացարձակ հոգու (գաղափար) անսահմանությունը, բացարձակությունը և ազատությունը, որովհետև այն սահմանափակվում է միայն զգացական ձևով: «Սա միևնույն ժամանակ հստակեցնում է այն գաղափարը, որ ծշմարտության դրսևորումը իր զգացական ձևի մեջ իրականում համարժեք չէ հոգուն»<sup>122</sup> Միայն փիլիսոփայությունն է «ծշմարտությունն» իրագործելու կատարյալ ձևը: Յեգելի մտքի փիլիսոփայության տեսանկյունից «փիլիսոփայությունը» ծշմարտության ամենաավարտուն, ամենագերազանց ձևն է. «գեղեցկության» («արվեստ») նրա որոնումները, որոնք գաղափարի զգացական դրսևորում են, միայն զարգացման փուլում են, և ակնհայտորեն զիջում են «փիլիսոփայությանը»: Որպես ներքին վարքագիծ, որը կարող է ենթարկվել կամ լավին, կամ վատին, «քարոյականությունը» նույնիսկ ավելի ցածր է «արվեստի» զարգացող փուլից<sup>123</sup>: Սա նշանակում է, որ, արժեքի հարցում Յեգելի գաղափարը «ծշմարտի», բարու ու գեղեցիկի» հաջորդականության նաևին կարելի է նկարագրել հետևյալ կերպ: «Ծշմարիտը - գեղեցիկը - բարին»: Այս իմաստով, նրա տեսակետը տարբերվում է Լաոցիի փիլիսոփայությունից, բայց նրանք կիսում են նույն տեսակետը, որ «ծշմարիտը» գերազանցում է թե «գեղեցիկը», թե «քարին»: Ինչպես արդեն ասել ենք, չինական ավանդական փիլիսոփայությունը հակված է իրականում հասնել «ծշմարիտի», բարու ու գեղեցիկի» հոգևոր ոլորտին, մինչեւ արևմտյան փիլիսոփայությունը փորձում է հիմնել մտքի մի այնպիսի համակարգ, որը ռացիոնալացնում է «ծշմարիտի», բարու ու գեղեցիկի» արժեքը: Մենք կարող ենք ասել, որ առաջինը ձգտում է լուսավորականության մի ձևի, իսկ երկրորդը միայն քննարկում է նրա «գիտելիքի» հարցը:

121. Յեգել, «Սյան Լոութի», Սամու Յինչուգուան, 1980, էջ 87 գ.Վ.Ֆ. Յեգել, Յեգելի տրամարանությունը. Փիլիսոփայական գիտությունների համրագիտարանի առաջին մաս, թարգմ.՝ Վ.Ուլյասի, Օքսֆորդ, Օքսֆորդի համալսարանական իրատարակչություն, 1975, համար 24, նշում:

122. Յեգել, «Սեյ Սյուե», հատոր 1, Շանկու Ինչուգուան, 1979, էջ 133: Գ.Վ.Ֆ. Յեգել, Գեղագիտություն. Գեղարվեստի դասախոսություններ, հատոր 1, բարգմ.՝ Թ.Ա.Նորս, 123. Յեգելի փիլիսոփայության քննարկումը վերաբերում է հետևյալ գրքին՝ Չեն Սյուչայ, Յան Ցուրատ, «Օուզոու Չեսյուե Շիգաոն», (Եվրոպական փիլիսոփայության պատմություն) Յուրեյ Ժենմիհն Չուրանշե, 1983, 553-558, Զյան Կունյան, 219-220 էջեր. Սյուե Յուա, «Յագելեր Յու Իշու Նամթի», (Յեգելը և արվեստի խնդիրը) Զունգուե Շեհուեյ Քեսյուե Չուրանշե, 1986, 25-27 էջեր:

### 19.3 Զուանցիի որոնումները կյանքի ոլորտում

Ինչպես Լաոցին, այնպես էլ Զուանցին ճանապարհը համարում էր իր փիլիսոփայության բարձրագույն կարգ, բայց Զուանցիի փիլիսոփայությունը չէր կենտրոնանում անսահմանությունը, բացարձակությունն ու ճանապարհի հավերժությունը ապացուցելու վրա (չնայած նա իր երկերում բավական մեծ տեղ էր հասկացնում այս հարցերին), այլ կենտրոնանում էր ճանապարհին հասած կատարելագործված մարդկանց, հոգիների ու իմաստունների հոգենոր անսահմանությունը, բացարձակությունն ու հավերժությունը ապացուցելու վրա:

Նրա «Զուանցի» գրքի առաջին գլուխը վերնագրված է «Ազատ թափառում» (Սյայայան Յոու), և այս գլխում քննարկվում է այն հարցը, թե մարդն ինչպես կարող է հասնել բացարձակ հոգենոր ազատության: Ըստ Զուանցիի՝ եթե փեն արարածի թիվ երկարությունը երեք հազար լի էր, և նա կարող էր բարձրանալ իննասուն հազար լի, իսկ Լյեցին կարող էր թիվ վրա սլանալ օրական ավելի քան ութ հարյուր լի (գործողություններ, որոնք, թվում է, բավական ազատ էին), նրանք իրականում ծշմարիտ ազատության մաս չեն: Եթե հեքիաթային թռչունը թռչում է իննասուն հազար լի, ապա նրան ընդարձակ տարածություն է անհրաժեշտ. այդ ութ հարյուր լին անցնելու համար Լյեցին ստիպված էր հույսը դնել քանու ուժի վրա: Այս գործողությունները «պայմանական» էին (յոուդայ), և միայն «ոչ պայմանականը» (ուդայ) կարող էր նկարագրվել՝ որպես ծշմարիտ ազատության ձեռքբերում: Ուստի, նա ասում է.

«Եթե մարդն ի վիճակի է հետևել բնության օրենքներին, հասկանալ վեց շնչերի ծևափոխություններն ու ազատ թափառել անսահման տիրություն, ապա ինչի՞ վրա պետք է դմի իր հույսը: Ոչնչի վրա չինչնելուն ու «ազատ թափառելը» «ոչ պայմանական» գործողություն է: Այն ծևափորում է բացարձակ ազատություն: Բայց մարդն ինչպես՞ ս կարող է հասնել այս տիրությին: Զուանցին հավատացած էր, որ հասարակ մահկանացուները չեն կարող հասնել այս ոլորտին: Միայն կատարելագործված մարդիկ, սրբություններն ու իմաստունները կարող են ամել դա, որովհետև «կատարելագործված մարդիկ չունեն սեփական ես, աստվածությունները ջանք չեն գործադրում, իսկ իմաստուններն անուն չգիտեն»: Սեփական ես չունենալը (ու ծի) նշանակում է «ոչնչացնել սեփական եսը (սան վո). «Երերի հավասարության քննարկում» հոդվածում (Ցիվու Լու՛) Զուանցին գրում է. «Այժմ ես ոչնչացրել եմ ինքս ինձ»: «Մեծ վարպետ» (Դա Ցունշի) գլխում կա մի հատված, որը նկարագրում է «մոռացության գիրկն ընկնելը» (ցուովան), որը կարելի է համարել «սեփական ես չունենալու» նկարագրություն բացարձակ ազատության այս տիրություն:

-Ես առաջընթաց ունեմ,-ասում է Յան Յուեյը:

-Ինչպե՞ս,-հարցնում է Կոնֆուցիոսը:

-Մոռացել եմ բարեգործությունն ու ծշմարտացիությունը,-պատասխանում է Յան Յուեյը:

-Լավ է, բայց բավական չէ,-ասում է Կոնֆուցիոսը:

Մի քանի օր անց Յան Յուեյը դարձյալ տեսնում է Կոնֆուցիոսին ու ասում.

-Ես առաջընթաց ունեմ:

-Ինչպե՞ս,-հարցնում է Կոնֆուցիոսը:

-Մոռացել եմ ծեսերն ու երաժշտությունը,-պատասխանում է Յան Յուեյը:

-Լավ է, բայց բավական չէ,- ասում է Կոնֆուցիոսը:

Եվս մի քանի օր է անցնում, ու Յան Չուեյը դարձյալ տեսնում է Կոնֆուցիոսին ու հայտարարում.

-Ես առաջընթաց ունեմ:

-Ինչպե՞ս,- հարցնում է Կոնֆուցիոսը:

-Մոռացության գիրկն են ընկել,- պատասխանում է Յան Չուեյը:

-Ինչպե՞ս ես մոռացության գիրկն ընկել,- տագնապած հարցնում է Կոնֆուցիոսը:

Յան Չուեյը պատասխանում է.

-Վերջույթներս թուլացան, ես մի կողմ նետեցի իմացությունս, լքեցի մարմինս ու մոռացա այն ամենը, ինչ գիտեի: Ես միաձուվեցի Մեծ ճանապարհի հետ: Յենց դա նկատի ունեի, երբ ասում էի՝ մոռացության գիրկն ընկա:

-Անթիվ-անհամար իրերի հետ մեկ մարմին լինելու ու նախապատվություններ չունենալը, անթիվ-անհամար իրերի ձևափոխություններին մասնակցելու ու ոչ մի բանից կախում չունենալը նշանակում է, որ իմաստուն ես դարձել: Ես ցանկանում եմ գնալ քո հետքերով:

Երբ Զուանցին «մոռացության գիրկն է ընկնում», սա այն վիճակն է, երբ մարդն «անցնում է եսի սահմանները» կամ «ոչնչացնում է եսը»: Վերը մեջբերված տեքստում Յան Չուեյը սկսում է աշխարհիկ բարոյականությունը մերժելուց, հետո մուտք է գործում մի վիճակ, որտեղ զանազան շղթաները, որ մարմինն անց է կացնում հոգու վրա, և գիտելիքը, որ բթացնում է հոգին, վերանում են: Յետո նա վերջապես հասնում է մտավոր ոլորտ, որտեղ «նրա մարմինը ննան է ջրազրկված փայտանյութի, իսկ միտքը՝ սառը մոխրի», մի ոլորտ, որն անցնում է նյութական շահի, բարոյականության, կյանքի ու մահվան սահմանները, և որտեղ չկան սահմանափակումներ ներքին և արտաքին ծշմարտությունից ու ստից, համակրանքից ու ատելությունից, գեղեցկությունից ու տգեղությունից: Ավելին, այդ ոլորտը բնորոշվում է «Երկնքի ու Երկրի միասնությամբ» և «ճանապարհի միասնությամբ»: Այդ ոլորտի ամենանշանակալի առանձնահատկությունը «գիտելիքի մերժումն է», որը բոլոր խստրական, հասկացական ու ճանաչողական գործողությունների վերացումն է. Զուանցին ուրիշ դեպքերում այն կոչում էր «մտավոր պաս պահելը» կամ «հետևել ականջի ու աչքի ներքին ալիքներին, բայց միևնույն ժամանակ լինել մտքի իմացությունից անդին»:

Կատարելագործված մարդիկ, սրբություններն ու իմաստունները, ըստ Զուանցիի, բոլորն էլ այսպես են անցել առօրեական աշխարհի սահմանները և հասել բացարձակ հոգևոր ազատության, որին հասուլ են «մոռացության գիրկն ընկնելն» ու «մտավոր պաս պահելը»: «Թյան Ցիֆան» գլխում մենք կարդում ենք հետևյալ տողերը. «Կատարելագործված մարդը ցած է նայում վերկից՝ կապույտ երկնքից, թաքնվում է ներքևում՝ Դեղին աղբյուրների մեջ, և ճախրում բոլոր ուղղություններով, ու նրա արտահայտությունն անփոփոխ է մնում»: «Սրբությունները» նկարագրված են «Երկինք և Երկիր» գլխում. «Գերագույն սրբությունները սավանում են լույսի վրա, ու նրանց ձևն անհետանում է: Սա կոչվում է դատարկվող տարածություն: Կյանքը վատնել և ցրել զգացմունքները, կիսել Երկնքի ու Երկրի բերկրանքը և չծանրաբեռնվել անթիվ-անհամար Երևույթներով, որպեսզի վերջիններս էլ վերադառնան իրենց ծշմարիտ զգացմունքներին. սա կոչվում է ծուլվել մոռայլ առեղծվածի հետ»: «Միտքը սանձելով» գլխում կարդում

ենք. «Իմաստունը կյանքում շարժվում է Երկնքի հետ, իսկ մահվան մեջ ծուլվում է արտաքին նյութին... նա հերքում է ողջ գիտելիքն ու խարեւությունը և հետևում բնության անփոփոխ օրենքներին... նա դատարկ է ու անտարբեր և մեկ մարմին է կազմում Երկնքի իշխանության հետ»: Ժամանակի ու տարածության սահմաններն անցնելու և տարածության սահմանագծերից անդին ազատ թափառելու կատարելագործված մարդկանց, սրբությունների ու իմաստունների ունակությունը նրանց «մարմինը լրելու և գիտելիքը դեռ նետելու», «ամեն հարցում բնության ու անգործության վրա հենվելու և իրական կյանքի ոչ մի պահանջ չդնելու նրանց ունակության արդյունքն է: Այսպիսով, նրանք ի վիճակի էին ազատ թափառել «ոչնչի երկրուն»: Իհարկե, այսպիսի թափառումները կարող էին տեղի ունենալ հոգում: Բացարձակ ազատության այս հոգենոր ոլորտում տեղ էր ուներ միայն արվեստի գեղագիտական դաշտը:

«Զիի ուղևորությունը դեպի Չյուսիս» (Զի Բեյ Յոու) հատվածում կարդում ենք.

«Երկինքն ու Երկիրն ունեն մեծ գեղեցկություն, բայց ոչ մի լեզվով չեն խոսում: Եղանակները փոխվում են հստակ օրենքների համաձայն, որոնք նրանք չեն ըն-նարկում: Անթիվ-անհամար արարածներն ունեն ապրելու պատճառ, բայց չեն խոսում: Իմաստունները կարող են զնալ Երկնքի ու Երկրի մեծ գեղեցկության աղբյուրի մոտ և հաղորդակցվել անթիվ-անհամար արարածների հետ. կատարելագործված մարդկի այսպես են համում անգործության: Սեծ իմաստունները չեն գործում, ուստի ճաշակում են Երկնքի ու Երկրի բանականությունը»:

Իսկ «Թյան Ցիֆանն» ասում է.

«Այդ ոլորտին հասնելը նշանակում է ծեռք բերել գերազույն գեղեցկություն և գերազույն ուրախություն: Գերազույն գեղեցկության հասնելն ու գերազույն ուրախության մեջ թափառելը սահմանում է իմաստունին»:

Վերը նշված հատվածում «ճշմարտության» հասնելը նշանակում է, որ իմաստունը մուտք է գործում մի ոլորտ, որտեղ «նա կարող է թափառել ու հասնել սկզբին»: Սա բնության անհոդաբաշխ անգործության ոլորտն է: Գեղեցկության բարձրագույն ձևը «Երկնքի ու Երկրի գերազույն գեղեցկությունն է»: «Իմաստունները, կատարելագործվածներն ու սրբերը» սպասում են, թե «Երբ են զնալու դեպի Երկնքի ու Երկրի գեղեցկության աղբյուրը» կամ «պատրաստ են Երկնքի ու Երկրի գեղեցկությանը: Բնույթի ու անգործության պատճառով էլ «ձևը լրելով ու գիտելիքից հրաժարվելով», մարդը կարող է ծեռք բերել «ծայրագույն գեղեցկություն» ու թափառել ծայրագույն հաճույքի մեջ», «ծայրագույն գեղեցկության ու ծայրագույն հաճույքի» այս ոլորտը նաև արվեստի բարձրագույն գեղագիտական ոլորտն է:

Զուանցիի փիլիսոփայության մեջ «ճշմարտության» և «գեղեցկության» հարաբերությունը նույնպես քննարկվում է: «Աշնանային հեղեղաջրեր» (ցյուշով) գլխում մի հատված կա.

«Զիերն ու ցլերը չորս սմբակ ունեն, որոնք Երկնքից են: Զիուն սամձելն ու ցլի ռունգերը ծակելը մարդ արարածի գործն է: Ուստի մենք ասում ենք. մի՛ օգտագործիր մարդկային ուժերը՝ Երկինքը ոչնչացնելու համար, մի՛ օգտագործիր բանականությունը՝ բարի անունը ոչնչացնելու համար, և մի՛ օգտագործիր շահը՝ մարդկանց վնասելու համար: Եթե մարդը ջանասիրաբար հետևի այս օրենքին ու չկորցնի այն, հավատարիմ կմնա Դաոյին»:

Զուանցիի շեշտը «Երկինքը նմանակելու և ճշմարտությունը հարգելու» վրա (ֆարյան գույջեն) բոլոր «մարդկային գործողությունների» (ժենվեյ) հակադրությունն էր, որը դիմադրում է նախնական եւրյանը: Զիու եւրյունը «խոտ արածելն ու ջուր խմելն է, սմբակները բարձրացնելն ու թափահարելն է», բայց եթե ծիուն սանծում են, իսկ ցի ռունգերին օդակ անցկացնում, ծիերն ու ցլերը կորցնում են իրենց սկզբնական բնույթը (եւրյունը), կորցնում են իրենց ազատությունը, հետևաբար կորցնում են գեղեցկությունն ու ճշմարտությունը: Ծշմարտությունն ու գեղեցկությունն Զուանցիի փիլիսոփայության մեջ նույնն են, բայց ճշմարտությունը «պետք է հետևի բնության ճանապարհին (Դառ):»: «Ծշմարտությունը» սահմանվում է «Պատկառելի ծկնորսը» գլխում՝ որպես «հոգու գագաթնակետ, իսկ այն, ինչ հոգի չէ, անկեղծ չէ, ուստի չի կարող ազդել մարդու զգացմունքների վրա»: «Մարդու զգացմունքների վրա ազդելու» ունակությունը գոյություն ունի, երբ կան ճշմարդիտ զգացմունքներ, որոնք մարդուն ստիպում են գնահատել գեղեցկությունը: «Ավարտուն գեղեցկությունը չի միավորվում ճանապարհի հետ», բայց ամենաավարտուն գեղեցկությունը միտումնավոր չի ստեղծվել և ի վիճակի է ազատորեն դրսեսրել իր եւրյունը: Յետևաբար, Զուանցիի «ճշմարտության որոնումները» նույնպես «ձգտում են գեղեցկության»: Եթե չկա գեղեցկություն, ապա չկա նաև ճշմարտություն: «Ճշմարտության որոնումը» անսանձ ազատության հոգևոր ոլորտի որոնումն է:

Զուանցին հազվադեպ էր խոսում բարոյականությունից, ու կարծիք կար, որ նա որդեգրել է հակաբարոյագիտական միտում: Նա հավատացած էր, որ բոլոր երիկական սահմանափակումները «մարդածին» են, և որ նրանք ոչնչացնում են մարդու եւրյունը: Յետևաբար, նա հակադրվում էր «մարդու բնույթը ծևափոխելու համար մարդասիրությունն ու ճշմարտացիությունն օգտագործելու» գաղափարին: Զուանցին հավատացած էր, որ անհատի ազատության իրազործումը ոչ միայն «մեծ գեղեցկություն է» (դամեյ), այլև «բարոյականության» (դե) և գերագույն բարության (շան) բարձրագույն ծև: «Միտքը սանձելով» (թե Ի) գլխում մենք կարողում ենք. «Եթե չենք կոփում իմացությունը, բայց ազնիվ ենք, եթե չենք օգտագործում մարդասիրությունն ու ճշմարտացիությունը, բայց ինքնակրթվում ենք, եթե չունենք մեծ ծեռքբերումներ, բայց կառավարում ենք, եթե չունենք գետեր ու օվկիանոսներ, որտեղ կարող ենք թափառել, բայց թափառում ենք այնպես, ասես ունենք, եթե գործնականում չենք կիրառում շնչառական տեխնիկա, բայց երկարակյաց ենք, մոռանում ենք ամեն ինչ ու ծեռք չենք բերում ոչինչ, ապա չունենք սահմաններ, և ողջ գեղեցկությունը մերն է: Սա Երկնքի ու Երկրի ճանապարհն է և լիաժտեր իմաստուն առաքինությունը»:

Չեն Սյուանինը բացատրում է. «Երբ ոչ մի խոչընդոտ չի խանգարում սրտին, և մբության ճանապարհները լրացնում են Հինգ տարրերը, ապա հասնում ենք անսահմանափակ խաղաղության, դատարկ ենք ու ընդարձակ, հասնում են ճանապարհին, որը չի կարող ավարտվել: Ծշմարդիտ առաքինության գեղեցկությունը հետևում է սեփական եսին ու հանգրվանում նրա մեջ»: Սրանով նա մկատի ունի, որ երբ միտքը բանտված չէ, հետևում է բնությանը և չի կիրառում անգործության սկզբունքը, ապա մարդը հայտնվում է մոռացության և համընդհանուր ազատության մեջ: Այսպիսով, մարդը հասնում է ծայրագույնին, մինչդեռ յուրաքանչյուր գեղեցկություն հետևում է սեփական եսին: Սա Երկնքի ու Երկրի բնական ինքնաբերության շարժումն է, ինչպես նաև այն արահետը, որի միջոցով իմաստունը կա-

տարելագորում է իր բարությունը: Ըստ այս մեկնաբանության՝ «բարու» գաղափարը Զուանցիի մոտ ներառում է բարձրագույն գեղեցկությունը («մեծ գեղեցկություն»):

Վերոնշյալ քննարկումից տեսնում ենք, որ Զուանցիի փիլիսոփայության մեջ «ճշմարիտը, բարին ու գեղեցիկը» միասնություն են, և նրանք միանում են հոգևոր ազատության գեղագիտական ոլորտում: Զուանցին, ինչպես և Լաոցին, ծգուում էր «ճանապարհի հետ ամքողջության», բայց ճանապարհի հետ միասնության Լաոցիի գաղափարը համգեցնում էր ճանապարհը հասկանալուն ու գիտակցելուն, և երկուսն էլ գոյաբանական խնդիրներ էին, ինչպես նաև փիլիսոփայական լուսավորականության ձև: Մինչդեռ Զուանցիի համար «ճանապարհի հետ միասնությունը» հենց ճանապարհի գնահատականն էր և նրա արտացոլումը, որն ուղղակի գեղագիտական ընկալում է: Այստեղից կարող ենք հասկանալ, որ «ճշմարիտի, բարու ու գեղեցիկ» հարցը Զուանցիի փիլիսոփայության մեջ տարբերվում էր Լաոցիի փիլիսոփայությունից, և Զուանցիի համար «գեղեցիկը» կարևորագույն նշանակություն ուներ:

Նկատելի է, որ բարու, ճշմարիտի և գեղեցիկի որոնումներն արևմտյան փիլիսոփայության արժեհամակարգում որոշ ընդհանրություններ ունեն Զուանցիի տեսակետների հետ: Արիստոտելի և հատկապես Շելիմփի փիլիսոփայությունն այս հարցում կարծես ավելի մոտ է Զուանցիի մտածողությանը:

Ինչ վերաբերում է ճշմարտության, բարության ու գեղեցկության որոնումներին, Արիստոտելը ամրում էր. «Գեղեցկությունը բարություն է, և այն սուր ընկալում ունի այն պարզ պատճառով, որ բարի է»: Բայց լավ կարող ու գեղեցիկ արվեստի դրսարուումը պահանջում է իրերի ճանաչողական հիմք: Արժեհամակարգի տեսանկյունից Արիստոտելը նույն կերպ չէր կարևորում բարությունը, ճշմարտությունն ու գեղեցկությունը: Սարդկային գործունեությունը սահմանազատելով՝ նա հավատում էր, որ այդ երեք գործունեություններից՝ ճանաչողություն, պրակտիկա և արարում, ճանաչողությունը բարձրագույն ձևն է, որովհետև հենց նրա պատճառով էլ մարդը կարող է դիմարդել բարձրագույն ճշմարտություններին: Բայց գործունեության այս երեք ձևերից բխող արդյունքների տեսանկյունից Արիստոտելը հավատացած էր, որ «ճշմարտության որոնումների» պատուղմները տեսական գիտություններ են (օրինակ՝ մաթեմատիկա, ֆիզիկա կամ մետաֆիզիկա), գիտելիք հանուն գիտելիքի: Բարության ու գեղեցկության որոնումները գիշում են կիրառական գիտություններին (բադաբականություն և բարոյագիտություն) և ստեղծագործական գիտություններին (պոեզիա և հոեստորաբանություն). այս բոլորն ավելի բարձր արտաքին նպատակներ ունեն: Առաջինն ուղղորդում է գործողությունը, երկրորդը՝ արարումը: Արիստոտելը հավատում էր, որ արվեստի հիմնական բնույթն արարումն է: Նա ասում է. «Արվեստը ստեղծագործական ունակության մի ձև է, որը ներառում է եղրահանգումների ճշմարիտ գործընթացը»: Այստեղ ստեղծագործական է դառնում այն գործունեությունը, որն ի վիճակի է իրագործել մարդու հիմնական էությունը, այն է՝ տրամաբանական բանականությունը (Արիստոտելը մարդու բնույթի չափանիշները սահմանում էր՝ որպես ռացիոնալություն): Համապատասխանաբար, կարող ենք ասել, որ Արիստոտելի փիլիսոփայության մեջ ստեղծագործական արարումը, որն ինքնին կարող է դրսերել գեղեցկություն, ծեռք է բերում բարձրագույն արժեք, որին հաջորդում են արտաքին նպատակ ունեցող գործողություններ (ինչպիսիք են բարոյական պրակտիկան,

որը պատկանում է «բարո՛» ոլորտին), ապա դրան հետևում է գիտելիքը հանուն գիտելիքի, որը «ծշմարտության որոնումների» մի մասն է<sup>124</sup>:

Շելինգն առաջարկում է «բացարձակ միասնության» փիլիսոփայական խնդիրը: Նրա տեսակետի համաձայն՝ «բացարձակ միասնությունը» ոչ սուրյեկտ է, ոչ օրյեկտ, այլ «թե՝ սուրյեկտի և թե՝ օրյեկտի բացարձակ չտարբերակված միասնություն»: Այս «միասնությունը» կարող է իրականություն դառնալ միայն «ինտելեկտուալ ուղղակի ընկալման» մեջ: «Ինտելեկտուալ ուղղակի ընկալումն» այն գործունեությունն է, որը ստեղծում է ուղղակիորեն ընկալվող օրյեկտ: Այս երկուսի՝ սուրյեկտի և օրյեկտի միասնությունն իրականում ուղղակի ընկալման գործունեություն է: Ուղղակի ընկալման միջոցով էգոն միավորում է եսն ու տիեզերական հոգին, որն անգիտակցաբար ստեղծել է բնական աշխարհը: Շելինգը հավատում էր, որ նույնիսկ «ինտելեկտուալ ուղղակի ընկալման» գործունությունը, որը հնարավոր է միայն փիլիսոփայական հանճարների, բայց ոչ ցանկացած մարդու դեպքում, չի կարող համարվել սուրյեկտի և օրյեկտի բացարձակ միասնության ձեռքբերում, որովհետև ներևս հակասություն կա ուղղակի ընկալողի և ուղղակիորեն ընկալվող առարկայի միջև (չնայած այս ուղղակիորեն ընկալվող առարկան ստեղծվում է ուղղակի ընկալողի ազատ գործողության արդյունքում): Այսպիսով, Շելինգը նաև հավատում էր, որ միայն «արվեստի ուղղակի ընկալման» դեպքում միայն սուրյեկտի և օրյեկտի միջև կարող էր հաստատվել իսկապես չտարբերակված բացարձակ միասնություն:

Այս «իսկապես չտարբերակված բացարձակ միասնությունը» որոշ առումներով ննան է Զուանցիի «ոլորտ» հասկացությանը, որը հնարավոր էր դառնում «մտավոր պասի» և «մոռացության գիրկն ընկնելու» միջոցով: Շելինգը հավատացած էր, որ «արվեստի ուղղակի ընկալումն» առաջ է գալիս ոգեշնչումից և ներքին հոգու տիրություն մեջ ներքին իշխանության լարված ձգտումից: Սա կարելի է նկարագրել՝ որպես ուղղակի ընկալման առեղծվածային հոգևոր ոլորտ: Այսպիսով, Շելինգի համար արվեստը գերագույն չտարբերակված իդեալական աշխարհ է: Յիմնվելով այն տեսակետի վրա, որ «արվեստի ուղղակի ընկալումն» ավելի բարձր «ինտելեկտուալ ուղղակի ընկալում է», Շելինգը «գեղեցկությունը» համարում էր բարձրագույն արժեք: Նրա տեսանկյունից «ծշմարտությունն» անհիրաժեշտության հարց է, «բարությունը»՝ ազատության, իսկ «գեղեցկությունը» այս երկուսի համադրությունն է: Արվեստում «գեղեցկությունը» համադրում է «ծշմարտության» գիտական ինացությունն ու «բարության» բարոյագիտական վարքագիրը: Շելինգն ասում է. «Ես հավատում եմ, որ բարձրագույն իդեալական գործունեությունը ներառում է ողջ իդեալականացված գեղագիտական գործունեությունը: Նշանառությունն ու բարությունը կարող են ընդամենը մոտենալ գեղեցկությանը: Փիլիսոփաները, ինչպես և բանաստեղծները, պետք է ունենան գեղագիտական ուժեր»: Այսպիսով, արժեքի տեսության տեսանկյունից, «գեղեցիկը» Շելիի կարծիքով կազմված է ավելի բարձր արժեքից, քան «ծշմարդիտը» կամ «բարին»<sup>125</sup>: Այս ծրագիրը որոշ ննանություններ ունի այս արժեքների մասին Զուանցիի տեսակետի հետ:

124. Զու Գուանցյան, «Սիֆան Մեյսյուե Շի» (Արևմտյան գեղագիտության պատմություն), Պեկին. Ժենմին Վենսյուե Զուրանչե, 1963, 55-56 էջեր:

125. Տես Չեն Սյու Սյուայ, Յան Ցուրառ, էջ 481, 488, Չյան Կունյան, 140-142 էջեր:

## 19.4 Չակիրճ ամփոփում

1. Մարդկային աշխարհում Կոնֆուցիոսը, Լաոցին և Զուանցին ծգտում էին երեք տարրեր արժեքների, և նրանց փիլիսոփայությունները դրսեւրում էին երեք տարրեր արժեքային կողմնորոշում: Ես հավատացած եմ, որ ցանկացած արժեք մարմնավորող փիլիսոփայական համակարգերում մենք կգտնենք ճշնարտության, բարության ու գեղեցկության միասնության դրոնումներ, բայց փիլիսոփայաները տարրեր տեսակետներ ունեն առ այն, թե ինչպես ազդել այս միասնության վրա կամ հասնել նրան: Մարդկային մշակույթի օարգացման տեսանկյունից մենք չենք կարող պահանջել, որ փիլիսոփաները նույն կերպ մտածեն: Չինաստանում Ցին դինաստիային նախորդող ժամանակաշրջանում փիլիսոփայությունը մեծ ծաղկում էր ապրում արժեքային կողմնորոշման այս բազմազանության պատճառով: Այն ժամանակ փիլիսոփաներն ի վիճակի էին կյանքի բարձրագույն հարցերին մտնենալ անսովոր լայն տեսանկյունից, և սա չինական փիլիսոփայությանը հնարավորություն տվեց իր տեղը գրավել այլ մեծ ժամանակակից մշակույթների շարքում, ինչպես հնդկական և հունական մշակույթներն են: Բանն այն է, որ չինական մշակույթը խրախուսում է բազմակարծությունը: Այն կարող է տիեզերքի ու կյանքի կարևորագույն հիմնախնդիրներին մոտենալ տարրեր տեսանկյուններից: Եթե Ցին դինաստիային նախորդող ժամանակաշրջանի փիլիսոփայությունը որոշակի արժեք ունենար մեր օրերում, հավատացած եմ, որ նրա կարևորագույն առավելություններից մեկը բազմակարծությունը կիհներ: Բազմակողմանիությունը լիարժեք օարգացման է փիլիսոփայությունը, իսկ «կենտրոնացումն» ի վերջո միայն շնչահեղձ է անում նրա կենսունակությունը: Ներկայում համաշխարհային մշակույթի և փիլիսոփայության մեջ նկատելի է բազմակողմանի օարգացման միտումը հանընդհանուր գիտակցության հովանու ներքո: Չինական արդի փիլիսոփայությունը հիմնելիս կարող ենք հետևել օարգացման այս ուղղությանը:

2. Եթե ցանկանում ենք, որ պատմական փիլիսոփայությունները կիրառվեն մեր իրականության և մեր հասարակության մեջ, ապա պետք է ժամանակակից մեկնարանություն տանք նրանց: Կոնֆուցիոսի, Լաոցիի և Զուանցիի փիլիսոփայական մտքի մեկնարանությունը դրա փորձն է: Նրանց մտքի մեկնարանությունը «թե նրանց փիլիսոփայությունն է, թե նրանց փիլիսոփայությունը չէ»: Այն, ինչ մենք արդեն նշել ենք այս հոդվածում, ծագել է Կոնֆուցիոսի, Լաոցիի և Զուանցիի փիլիսոփայությունից: Նրա հիմքը Կոնֆուցիոսի, Լաոցիի և Զուանցիի փիլիսոփայությունն է. ուստի կարող ենք ասել, որ սա հենց նրանց փիլիսոփայությունն է: Կարող ենք նաև ասել, այս «մեկնարանությունը ծագել է Կոնֆուցիոսի, Լաոցիի ու Զուանցիի փիլիսոփայությունների՝ այլ գիտականների կողմից արված մեկնարանություններից»: Հետևաբար, սա ամբողջությամբ Կոնֆուցիոսի, Լաոցիի ու Զուանցիի փիլիսոփայությունը չէ: Միայն այսպես կարող ենք ընդլայնել Կոնֆուցիոսի, Լաոցիի ու Զուանցիի փիլիսոփայության ներիմաստները: Մեր օրերում նրանց փիլիսոփայությունը ստացել է արդի մեկնարանություն և դարձել փիլիսոփայական մտածողություն: Կոնֆուցիոսի, Լաոցիի ու Զուանցիի փիլիսոփայության համեմատական ուսումնասիրությունն արժեհամակարգի տեսանկյունից և նրանց փիլիսոփայության տարրեր կողմնորոշումների բացահայտումը ոչ միայն ցույց է տալիս, որ «բազմակարծությունն» նշանակալի դեր ունի մշակութային ու փիլիսոփայական օարգացումներում, այև կարող է դառնալ փիլիսո-

փայական համակարգի և կյանքի արժեքի համապատասխան կողմնորոշման հատկանշական օրինակ, և միևնույն ժամանակ կարող է ցույց տալ այսօր «ճշմարիտի, բարու ու գեղեցիկի» հանդեպ մեր ուշադրությունն ու այս գաղափարների մեր ընկալումը: Անկասկած, սա մեծ նշանակություն ունի ժամանակակից փիլիսոփայական գիտության համար:

3. Կարուոր է հասկանալ (մեկնաբանել, ուսումնասիրել) չինական փիլիսոփայության բնութագիրը՝ հիում անելով արևմտյան փիլիսոփայությանը: Ավանդական չինական փիլիսոփայության պատմության մեջ մենք հազիվ թե գտնենք որևէ փիլիսոփա, որը քննարկել է մասնավորապես «ճշմարիտի, բարու և գեղեցիկի» գաղափարները, բայց չի կարելի ասել, որ այդ մտքերը տեղ չեն գտել մեր փիլիսոփայության մեջ: Վկայակոչելով արևմտյան փիլիսոփայությունը՝ կարող ենք ասել, որ չինացի փիլիսոփաների՝ «ճշմարիտի, բարու ու գեղեցիկի» ուսումնությը Չինաստանի պատմության մեջ նույնպես հարուստ բովանդակություն ունի: Մի կողմից, ավանդական չինական փիլիսոփայությունն իր իմաստով հեռացել է արևմտյան փիլիսոփայության ելակետից: Մյուս կողմից, արևմտյան փիլիսոփայությունն իր իմաստով հեռացել է չինական փիլիսոփայության ելակետից: Չնայած թե արևմտյան, թե՛ չինական փիլիսոփայությունն ունի իր մասնավոր նշանակությունը, նրանց տարրերությունները համեմատելով կարող ենք գտնել նրանց հեռանկարային առանձնահատկությունները, որոնք գուցե ինչ-որ ձևով կարողանան լրացնել միմյանց: Եթե «ճշմարիտի, բարու ու գեղեցիկի» մասին այս արևմտյան փիլիսոփաների քննարկման մեջ մասը պատկանում է գիտելիքի (կամ հավատքի, օրինակ՝ քրիստոնեության) հիմնախնդրին, ապա «ճշմարիտի, բարու ու գեղեցիկի» չինացի փիլիսոփաների որոնումները գերազանցապես պատկանում են հոգևոր ոլորտին: Յետևաբար, թե՛ չինական, թե՛ արևմտյան փիլիսոփայությունն իրենց հեռանկարային իմաստով կարող են փոխլրացնել և հարստացնել միմյանց:

### Չինարեն տառանշաններ

| Լանգզի          | 老子    | Զումհուա Շուձու   | 中华书局  | ուշեն ջի ին | 无声之音 |
|-----------------|-------|-------------------|-------|-------------|------|
| Ջուանցի         | 庄子    | Էրչուն            | 耳顺    | Ջու         | 矩    |
| Ժենշեն ծինձյե   | 人生境界  | Լի Չուն           | 李充    | Ջի չեն      | 知真   |
| Շեն Յուուին     | 沈有鼎   | Սիմյուեր սյանցուն | 心与耳相从 |             |      |
| Վեյ Ջեն         | 为政    | Սուն Չուո         | 孙绰    |             |      |
| Գուու Սյան      | 郭象    | Ջու Սի            | 朱熹    |             |      |
| Մուշի էր Էրչուն | 六十而耳顺 | շեն               | 声     |             |      |
| Յան Բոծուն      | 杨伯峻   | շենին             | 声音    |             |      |
| Լունյու Իջու    | 论语译注  | յոուշեն ջի ին     | 有声之音  |             |      |

## ԳԼՈՒԽ 20

### Չինական ավանդական մշակույթներ և համատեղ կառավարում<sup>126</sup>

Մաքս Վերերի մեկնարանություններն առ այն, որ կոնֆուցիական գաղափարախոսությունն ու չինական ավանդական մշակույթը կարող են արգելակել արդի արդյունաբերացման զարգացումը, ապացուցվել են պատմությամբ: Բայց 1983 թվականին՝ Փիլիսոփաների 17-րդ համաժողովի ժամանակ, Կանադայի՝ Մոնրեալի համալսարանի պրոռեկտոր, պրոֆեսոր Սի Քենչի խոսքով՝ «Վերջին երկու հարյուր տարիների ընթացքում, տնտեսական և տեխնոլոգիական ձեռքբերումների հաջողությամբ պայմանավորված, արևմտյան երկրներն իրենց հռչակել են առաջադեմ կարգավիճակ ունեցող: Այժմ անջրապետը Արևելքի ու Արևմուտքի միջև այնքան է նեղացել, որ արևելյան տնտեսությունը հակված է գերազանցել արևմտյան տնտեսությունը: Ենշտ ժամանակն է սկսել սովորել Արևելքից. «Ելնելով վերջին 30 տարիների զարգացումներից՝ նրա կարծիքը տրամաբանական է ու խելամիտ: Տապոնական տնտեսության արդյունաբերացումը 1970-ականներին և Չորս փոքր վիշապների սրբնթաց վերելքը Ասիայում 1990-ականներին կարող են հանգեցնել արևելյան և արևմտյան երկրներում տնտեսական զարգացման ավելի բարձր մակարդակի: Ինչպես կարող ենք բացատրել վերոնշյալ փաստարկները, որոնք թե՛ հակասական են, թե՛ ճիշտ: Իմ կարծիքով՝ սա կարելի բացատրել ճապոնացի սոցիոլոգ Տոմիտայի մեկնարանությունների միջոցով:

1986 թվականին հրատարակված «Սոցիոլոգիայի հիմունքներ» գրքում նա մեկնարանում է. «Արևմտյան երկրների արդյունաբերացումն ու արդիացումը խթանվում է ներսից. սա պատճական փաստ է, և այն հնարավոր չէ վիճարկել: Ուստի, բոլոր ոչ-արևմտյան հասարակությունները չեն կարող կախում ունենալ իրենց սեփական ներքին ուժեղությունը, որպեսզի արդյունաբերացնեն և արդիացնեն իրենց հասարակությունները»: Բայց նա պնդում է, որ Վերերի մեկնարանության թերությունն այն կետն է, երբ նա խոսում է արդիացման նպատակով մշակույթի տարածնան մասին. նա արևելյան աշխարհի արդիացման գործընթացը դասակարգում էր՝ որպես «արտաքին կրթություն»: Սա շատ խոհեմ մեկնարանություն է: Ինչու՞: Ըստ Տոմիտայի՝ պատճառն այն է, որ «հանրությունը ձգտում է խուսափել ավանդականությունից և ներկայացնում է արևմտյան գաղափարը, որը պետք է գոյակցի իր ավանդական մշակույթի հետ»: Նրա մեկնարանությունները հաստատվել են վերջին 30 տարիների ընթացքում աշխարհի պատճական զարգացման: Դրանք ներկայացրել են արևմտյան քաղաքակրթությունը և այն գորգակցել իրենց տեղական ավանդական մշակույթների հետ. արդյունքում արևելքի երկրների տնտեսությունները գերազանցել են արևմուտքի տնտեսությունները: Ո՞րն է պատճառը: Իմ կարծիքով, սա ինչ-որ չափով կապված է արևելյան մշակույթի (կոնֆուցիականություն) հետ:

126. «Եվրո Ասիա» ամսագիր, 11 (հուլիս 1996): 19-22

Այստեղ կցանկանայի զարգացնել իմ փաստարկը, որպեսզի այն օգտակար լինի արևելյան երկրների համար՝ ձեռարկությունների կառավարման և նույնիսկ հասարակության զարգացման համար, եթե նրանց հաջողվի ավելի լավ օգտագործել կոնֆուցիականության և թաոսիզմի փիլիսոփայությունը արևմտյան հասարակությունից սովորած մեթոդարանական և տեսական հիմքի վրա:

Եթե չինական կոնֆուցիականությունն ու թաոսիզմը չեն կարող նախաձեռնել աղոթացման և աղոյունաբերացման գործնթացը, արդյո՞ք այն երկրների համար, որոնք պահպանում են կոնֆուցիականության և թաոսիզմի ավանդույթները, ցանկալի է ինտեգրել այս երկու փիլիսոփայությունների որոշ հասկացություններ՝ տնտեսության հետագա զարգացման նպատակով։ Ես կարծում եմ, որ սա ոչ միայն հնարավոր է, այլև պարտադիր։ Ավանդական չինական մշակույթում գոյություն ունի երկու կարևոր հասկացություն։ Մեկը «ներդաշնակության» հասկացությունն է, որը վերցված է «Չառոսիից»։ Այն կարելի է բացատրել՝ որպես «կատարյալ ներդաշնակություն»։ Կոնֆուցիոն այս հասկացությունը ներմուծել է հասարակություն։ Նա ասում է. «Նախընտրելի է օժտված լինել ներդաշնակությամբ և պահպանել քաղաքավարության կանոնները»։ «Քաղաքավարությունը» վերաբերում է ավանդական արարողություններին ու ծիսակարգերին, որոնք անհրաժեշտ են՝ հասարակական կարգը պահպանելու համար, իսկ «ներդաշնակությունն» ամենակարևոր սկզբունքն է։ Մյուսը «բնույթի» հասկացությունն է։ Ամեն ինչ պետք է հետևի այս սկզբունքին, որը կոչվում է «գերագույն բնույթ»։

Եթե կոնֆուցիականության երթյունը «ներդաշնակություն» է, որը կարգավորում ու պահպանում է զանազան հարաբերությունները հասարակության մեջ, ապա «գործնականը պետք է հետևի բնույթին» սկզբունքը նպատակ ունի կարգավորել մարդու և բնության միջև հարաբերությունները։ Մենք կհասկանանք, թե հասարակության էվոլյուցիան ինչ դրական ու բացասական կողմեր է տալիս մարդկությանը, եթե ուսումնասիրենք քաններորդ դարի պատմությունը։ Առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների բռնկումը և բնական միջավայրի ոչնչացումը մարդկության և բնության հարաբերությունների խաթարման հետևանք են։ Դրանք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են ծեռնարկությունների գործունեության հետ։

Արդյո՞ք մեկ ծեռնարկության զարգացումը, մեկ երկրի ծեռնարկատիրական համակարգը և աշխարհի զանազան ծեռնարկությունները նկատի չեն առնում քաղաքացիների ու հասարակության հարաբերությունները։ Իմ կարծիքով՝ դրանց գործարկումն ու զարգացումը, եթե դրված է խելամիտ, առողջ ու հետևողական ուղղությունում վրա, պետք է հաշվի առնի այն ներքին միջավայրը, որում ներառված են գործատունները, աշխատողները, զանազան բաժիններն ու կապը հենց բաժինների միջև, ինչպես նաև արտաքին միջավայրը, որը ներառում է հաճախորդներին, արդյունաբերական միջավայրը և հասարակության ու ազգի շահերը։ Եթե ծեռնարկության ներսում չկա ներդաշնակ հարաբերություն, այն կրախվի բազմաթիվ խնդիրների և նույնիսկ կարող է փակվել։ Եթե չկա ներդաշնակ արտաքին հարաբերություն, այն կրախվի բազմաթիվ անսպասելի խոչընդոտների կամ նույնիսկ կսնամկանա։ Ուստի ես հավատացած եմ, որ կոնֆուցիականության «ներդաշնակության զանձ» հասկացությունը կարող է արժեքավոր լինել ծեռնարկությունների կառավարման համար թե՛ իինա, թե՛ ապագայում։ Չինական կոնֆուցիականության դասականներից մեկը՝ «Մեծ ուսմունքը», նախատեսում

էր, որ ընտանիքի, երկրի ու աշխարհի ներդաշնակության հիմքը մարդու ներքին ներդաշնակությունն է: Ըստ կոնֆուցիականության՝ մարդու ներքին ներդաշնակությունը կարող է ազդել ուրիշների վրա, իսկ այլոց, երկրի ու հասարակության հետ ներդաշնակությունն ընդգրկում է նաև եսի ու այլոց հարաբերությունները, ինչից էլ առաջ է գալիս նաև իշխանության և պարտականության խնդիրը: Ուստի, կոնֆուցիոնը խրախուսում է հինգ հարաբերությունները: Քանի դեռ հնարավոր է կառավարել փոխադարձ հարաբերությունները, մարդիկ կարող են համագործակցել: Սա վերաբերում է նաև ձեռնարկություններին: Ձեռնարկությունների բարգավաճումը հնարավոր է միայն այն դեպքում, եթե բավարար ուշադրություն դարձվի արտաքին ու ներքին հարաբերություններին: Սա կարող է մեղմել արևմտյան տնտեսությունների մրցակցամետ մշակույթի բերությունները: Կոնֆուցիականության շեշտը ինքնուրույնության ու զարգացման վրա նպատակ ունի պահպանել խնդի փոխադարձ զարգացումը: Կատարելագործումը ձեռնարկությունների համար ավելի լավ միջավայրի ստեղծման պայման է:

1992 թվականին 1575 հասարակագետներ հրապարակեցին «Խորհուրդ մարդուն՝ գիտնականներից» վերնագրով մի գեկույց, որն ասում էր. «Մարդն ու բնությունը առաջ են գնում հակադիր ծանապարհներով»: Իմ համոզմամբ՝ այս զգուշացումը շատ ճիշտ է: Տեխնոլոգիաների առաջննաբացը կարող է զարգացնել հասարակությունը, բայց նաև լուրջ սպառնալիք դառնալ մարդկանց կյանքի համար: Բնությունը չարաշահելու պատճառով լրջանում են շշակա միջավայրի աղտոտման, օգնային շերտի նոսրացման ու կենսարաբանական հավասարակշռության վերացման խնդիները: Մշակութային տեսանկյունից թառսիզմի «բնությունը նախընտրելի է» ասացվածքը կարող է մեղմել մարդու և բնության հարաբերությունները: Ըստ թառսիզմի՝ մարդը ներդաշնակ նարմին է, և թառն ներկայացնում է այս բնական ներդաշնակությունը: Դասարակությունը խնդիրներ չի ունենա, իսկ թառոյի օգնությամբ կայսրը կկառավարի խաղաղ երկրում: Ցուն Ցուն կարծում է, որ մարդը պետք է հետևի բնական զարգացմանն ու չընդհատի այն, որպեսզի այն հասնի մարդու և տիեզերի միավորման փուլին: Մենք տեսնում ենք, որ թառսիզմը մեծ կարևորություն է տալիս մարդու և բնության ներդաշնակությանը:

Ավանդական չինական կոնֆուցիականության և թառսիզմի մշակույթները ավելի քան երկու հազար տարի զարգացման գործընթաց են անցնում: Այս ժամանակահատվածում դրանք կրել են հնդկական բուդդայականության ազդեցությունը: Ցուն դինաստիայում բուդդայականության ազդեցությունը հասարակության վրա համատարած ու նշանակալի էր, բայց չինական ավանդական մշակույթը կարողացավ համակողմանի և լիարժեք զարգացում ունենալ Շաո դինաստիայում բուդդայական մշակույթը յուրացնելուց հետո: Սրանով կարելի է բացատրել ավանդական թառսիզմի ու կոնֆուցիական մշակույթի հարմարվողականությունը մշակութային հեռանկարների հիման վրա: Ինչպես ասում է Մաքս Վերերը, կոնֆուցիական և թառսական մշակույթները չեն կարող ձեռնարկել արդիացման և արդյունաբերացման գործընթացը, բայց թառսիզմից որպես հիմք ժառանգած ավանդական մշակույթի և կոնֆուցիական փիլիսոփայության հենքի վրա, ինչպես նաև արևմտյան արդի և արդյունաբերական տնտեսության պահանջներին հարմարվելուց հետո, մարդկության և բնության հարաբերությունների թառսական և կոնֆուցիական սկզբունքները՝ «ներդաշնակության գանձը» և «բնությունը նախընտրելի է» սկզբունքը, կկարողանան հրաշալի առաբելություն իրակա-

նացնել՝ ստանալով արդիական ինքնություն:

Այս երկու հասկացություններն ինաստ ունեն միայն մարդկային հասարակության և ձեռնարկությունների կառավարման գործում: Եթե անհրաժեշտ լինի ուսումնասիրել նրանց գործառույթները՝ դրանք կիրառելով հասարակական կյանքում և ձեռնարկությունների կառավարման մեջ, ապա դա բարդ գործընթաց է: Պետք է կատարել բազմաթիվ գործողություններ: Այս հասկացություններն ինքնարերաբար չեն վերածվում գործնական հասկացությունների. Եթե չլինեն ինաստալից կարծիքներ կամ հասկացություններ, որոնք կարելի է առաջ տանել, ապա չեն լինի այս ինաստալից հասկացություններն իրագործելու գործնական և գիտական լուծումներ:

Պատմությունից մեզ պարզ է դաշնում, որ արդիացման և արդյունաբերացման գործընթացը տեղի է ունեցել արևմուտքում, իսկ արևելքն արևմուտքից սովորել է այս փորձը: Յինա Արևելքի որոշ երկրներ իրենց ավանդական մշակույթում արդի սահմանում են տալիս որոշ հասկացությունների և գործնականում կիրառում են դրանք: Երևույթը նկատվում է արևմուտքի որոշ գիտնականների կողմից. նրանք հայտարարում են, որ այդ փորձը պետք է սովորել Արևելքից: Սա ցույց է տալիս արևմտյան և արևելյան մշակույթների գոյակցության կարևորությունը, ինչպես նաև բացատրում է, որ կոմֆուցիականության ու թառսիզմի որոշ հասկացություններ շատ կարևոր են արդի ձեռնարկությունների տնտեսական զարգացման համար:

1920-ականներին Չինաստան կատարած այցից հետո արևմտյան փիլիսոփա Ռասելը գրեց «Արևելյան և արևմտյան մշակույթների համեմատություն» վերնագրող հոդված: Յոդվածում մասնավորապես ասվում է. «Անցյալում բազմիցս ապացուցվել է, որ մշակութային փոխանակումը մեծ նշանակություն ունի մարդկային քաղաքակրթության գործընթացի համար: Յունաստանը սովորել է Եգիպտոսից, Յոռմը՝ Յունաստանից, արաբները՝ հռոմեացիներից, իսկ Եվրոպան միջին դարերում հետևել է արաբներին: Այս բոլոր փոխանակումների ընթացքում զարգացող երկրները գերազանցել են առաջադեմ երկրներին, ինչպես ուսանողն է գերազանցում ուսուցիչն: Չինաստանի և օտար երկրների փոխազդեցության գործընթացում Չինաստանն ի վերջո առաջ կանցնի մյուս բոլոր պետություններից, որոնք ավելի զարգացած են: Շասելի փաստարևները շատ խորիմաստ են: Չինաստանը դեռևս զարգացող երկիր է և փորձում է մեկնարկել արդիացման գործընթացը: Անհրաժեշտ է սովորել ու փոխանցել արևմտյան տնտեսության փորձը, բայց երբ արևմտյան երկրները բախվում են զանազան խնդիրների, որոնք վերաբերում են մարդկության և բնության հարաբերություններին, ցանկալի է նաև ներմուծել որոշ արևելյան հասկացություններ: Այն արևելյան ձեռնարկատերերը, որոնք ջանք ու եռանդ չեն խնայում՝ արդիացման գործընթացն իրականացնելու համար, պետք է մտածեն, թե արդյոք բավարար ուշադրություն են դարձել այս գոյություն ունեցող հասկացությունների նշանակությանը: Կարծում եմ՝ սա հետաքրքիր թեմա կլինի չինացի և Եվրոպացի ձեռնարկատերերի քննարկման համար:

## ԳԼՈՒԽ 21

### Չինաստանի մշակութային զարգացման հարցի ուսումնասիրություն<sup>127</sup>

Վերջերս Շենչենի համալսարանում անցկացվեց «Արևելյան և արևմտյան մշակույթների համեմատական ուսումնասիրությունների» իմաստի ու նշանակության քննարկումն էր: Ինչո՞ւ քննարկեցինք այս խնդիրը: Արևելյան և արևմտյան մշակույթների համեմատական ուսումնասիրությունների մասին արվում է հետևյալ հարցը լուծելու համար՝ ինչպես է զարգացել ու զարգանում Չինաստանի մշակույթը: Բնականաբար, այս հարցը չի կարող լուծվել կարճ ժամանակում, ինչպես նաև հնարավոր չէ արագորեն համաձայնության գալ այս հիմնախնդիրի շուրջ: Այնուամենայնիվ, այս թեման դարակազմիկ նշանակություն ունի մեզ համար ներկայում, և, հետևաբար, պետք է քննարկվի և ենթարկվի մանրամասն և լուրջ ուսումնասիրության:

Քանի որ գիտաժողովի մասնակից գիտնականների մեծ մասը չինական ինտելեկտուալ պատմության կամ չինական փիլիսոփայության պատմության մասնագետներ էին, «մշակույթը» քննարկելիս մենք հակված էինք ուսումնասիրել հասկացության միայն մի սահմանում՝ մասնավորապես այն, որը վերաբերում էր հասկացական կազմություններին, կամ, այլ կերպ ասած, մենք չինական մշակույթի ուսումնասիրում էինք Չինաստանի ավանդական մտքի տեսանկյունից: Մեր քննարկումների ընթացքում եկանք այն համաձայնության, որ չինական մշակույթն ուսումնասիրելու առաջարկը թե՛ Չինաստանում, թե՛ նրա սահմաններից դուրս տեղի ունեցող հասարակական- տնտեսական և մշակութային զարգացումների ամխուսափելի ու բնական հետևանքն է: Ինչ վերաբերում է պայմաններին Չինաստանի ներսում, ապա այստեղ գոյություն ունի ուսումնասիրության երկու ուղղություն՝ ուղղահայաց և հորիզոնական:

Ուղղահայաց դիտարկման դեպքում, այսինքն՝ պատմության զարգացման տեսանկյունից՝ ինն ժամանակներից մինչև մեր օրերը, մենք հոգատարությամբ ենք վերաբերվել այն հանգամանքին, որ մեր երկիրն այժմ անցնում է արդիացման փուլը և ենթարկվում է տնտեսական համակարգի բարեկիրխումներին: «Արդիացում» նշանաբանն օգտագործվում էր ավելի քան կես դար՝ Մայիսի շորսի շարժումից ի վեր, սակայն արդիացման գործընթացը ժամանակ առ ժամանակ ընդհատվում է: Ինչո՞ւ: Գուցե պատճառն այն է, որ գլխավոր խնդիրը ճշգրիտ կամ պատշաճ կերպով չի լուծվել: Արդիացումը չի կարող սահմանափակվել գիտության և տեխնոլոգիայի մակարդակով. շատ ավելի կարևոր է մշակույթի ենթակա-

127. Ժամանակակից չինական միտք, 1986, 17 4: 16-34:

Թան Իծյե, «Գուանյուու Ձունգուու վենհուա ֆաջան վենթիդե բանթառ», Աերկայացվել է Չինական փիլիսոփայությամ չորրորդ միջազգային համաժողովի ժամանակ, Սթոումի Բրուք, Սյու Յուր, հուլիս 15-18, 1985 թ.:

ուղղվածքի արդիացումը: Սա ընդգրկում է արժեքային հասկացություններ, մտքի կերպեր, մեր ավանդական մշակույթի պատմական վերանայում և այլն: Եթե արդիացնենք միայն գիտությունն ու տեխնոլոգիան, բայց ոչ մարդկանց, ապա արդիացումը կլինի ընդամենը դատարկ կարգախոս: Դրա հիմնալի օրինակը այն իրականությունն է, որ գերիշխում է Միջին Արևելքի և Մերձավոր Արևելքի որոշ տարածքներուն:

«Արդիացումը» շատ բարդ խնդիր է: Եթե դիտարկենք նրա կարգախոսը, ապա կտեսնենք, որ այն արտացոլում է այն իրողությունը, որ մենք դեռևս նախարդիացման կամ չարդիացման պատմական դարաշրջանում ենք: Յետևաբար, նախ և առաջ պետք է լուծենք «արդիացման» և «ավանդույթի» խնդիրը: Սա ընդգրկում է արժեքների հասկացություններին վերաբերող խոր խնդիրներ, և այս խնդիրներն անխուսափելի են կապված են ավանդական մշակույթի հետ: Յետևաբար, չենք կարող շրջանցել արդիացման հիմնախնդիրը. մենք չենք կարող խստել միայն բնական գիտությունների մերորդերի մակերեսային նշանակության մասին, այլ պետք է որոշ գործոններ մերմուծենք մշակութային ենթահամակարգ: Եթե հետ ենք նայում և ուսումնասիրում վերջին դարը կամ առհասարակ մեր պատմությունը, տեսնում ենք, որ «չինական էություն, արևմտյան գործառույթ» (Զունթի սիյուն) կամ «չինական կրթությունը՝ էության, արևմտյան կրթությունը՝ գործառական կիրառության համար» (Զուն սյուն վեյ թի, Սի սյուն վեյ յուն) կարգախոսների մերմուծունից ի վեր «անցյալի ու ապագայի, չինականի ու օտարի» (գու ծին Զուն վայ) շուրջ բանավեճը շարունակվում է: «Լիարժեք արևմտացման» (ցյուան փան սի հուա) և «չինական հիմնական և սկզբնական մշակույթի պահպանման» (բենթի վենհուա) շուրջ քննարկումները սկսվել են Մայիսի չորսի ժամանակաշրջանից և տևել մինչև 1930-1940-ականներ: Խնդիրն իրականում երբեք էլ չի լուծվել, պարզապես հետաձգվել է: Մենք պետք է հարցնենք ինքներս մեզ. մի՞թե այս-տեղ խնդիրը արդիացումը արևմտացման հետ չփորելը չէ: «Գիտությունն ու ժողովրդավարությունը» արևմուտքի արդիացման նշանաբանն էր. այն արևմտյան մշակույթի հետագա զարգացման անխուսափելի հետևանքն էր, որը հիմնված էր միջնադարյան աստվածաբանության և աստվածապետության վրա: Չինաստանը Մայիսի չորսի շարժման ժամանակ պարզապես վերցրեց այս նշանաբանը և որդեգրեց այն: Ինչպես երևում է, այստեղ նկատվում էր և դեռևս նկատվում է որոշ-ակի անհրաժեշտ միջամկյալ կապող օղակի բացակայությունը: Ուստի բնական է, որ մենք վերադառնում ենք արևելյան և արևմտյան մշակույթների համեմատական ուսումնասիրությանը:

Ավելի քան կես դար մարդիկ փորձել են գտնել արդիացման ավելի կարծ ճա-նապարհներ՝ պարզապես արևմուտքի գիտությունն ու տեխնոլոգիան և նրանց մեթոդները Չինաստան մերմուծելով: Այնուամենայինվ, Չինաստանի արդիաց-ման ուղին անհարթ է ու ոլորապտույտ: Պատճառն այն է, որ արդիացման առա-ջնաթագը շարունակ կասեցվել է, և մարդիկ ստիպված են եղել ուսումնասիրել չի-նական հասարակության ինֆրահամակարգը՝ պահանդական մշակույթը, և այդ դիրքերից էլ կենտրոնանալ պատմությունը վերանայելու վրա: Նրանք հաշվի են առել իրողությունների տարրերություններն ու զանազան մշակույթների էությունը համեմատելու անհրաժեշտությունը: Արևելյան և արևմտյան մշակույթների հա-մեմատական ուսումնասիրությունը և Չինաստանի պահանդական մշակույթի վե-րաբժնումը խնդիրները, և այն, թե Չինաստանի մշակույթը ինչպես է առաջըն-

թաց ապրել և ինչպես կզարգանա, բնականաբար ներկայացված են պատմության ուղղահայաց զարգացման նակարդակում:

Յորիգոնական դիտարկման դեպքում, Յոնգ Քոնգի Չինաստան վերադառնալու հարցը մեզ ստիպում է բախվել երկու համակարգ ունեցող մեկ ազգի իրողությանը: Այստեղ խնդիրն այն է, թե երկու խիստ տարբեր համակարգերն ինչպես կարող են գոյակցել մեկ երկրի ներսում, և այս իրավիճակն ինչպես կարող է երկար ժամանակ պահպանել համեմատական կայունությունը: Սա բարձրացնում է մեկ այլ հարց. եթե մենք լուծենք այս խնդիրն այնպես, որ այն համապատասխանի պատմական զարգացմանը, ապա արդյո՞ք մեզ պետք է գաղափարախոսական հիմք: Եթե բացասական պատասխան տանք այս հարցին, ապա ինչպես կարող ենք երաշխավորել, որ այս խնդիրը կշարունակի համապատասխանել պատմական զարգացմանը: Յետևաբար, պարզ է դառնում, որ պետք է մտածենք մի ինչ-որ ժամանակահատվածում «գաղափարախոսության ընդհանուր հիմք» գտնելու անհրաժեշտության մասին: Գաղափարախոսության այս ընդհանուր հիմքը պետք է և հնարավոր է գտնել միայն որոշակի ընդհանուր մշակույթի մակարդակում: Սա վերաբերում է ազգային մշակույթի առանցքային խնդիրն: Այն հասկանալու համար մենք պետք է ոչ միայն լրջորեն ուսումնասիրենք ընթացիկ մշակության խնդիրները, այլև պատմության տեսանկյունից վերանայենք ավանդական մշակույթի հիմնախնդիրը:

Եվ հենց այս ուղղահայաց և հորիզոնական գծերի հատման կետում է, որ ավանդական մշակույթի պատմական վերանայման դասերն ու արևելյան ու արևմտյան մշակույթների համեմատական ուսումնասիրությունը դարակազմիկ նշանակություն են ծեռք բերում:

«Չի Չիում» (Պատմության արձանագրություն) կարդում ենք հետևյալ նախադությունը. «Մենք ապրում ենք ժամանակակից աշխարհում, մինչդեռ չենք բաժանվում անցյալից. հետևաբար նրանք, որոնք մտորում են իրենց կյանքի մասին, բազմաթիվ տարբեր պատկերներ են առաջարկում»: Զյա Ին «Գուռ Ցին լուն» եստում (Ցինի սիսալմերի տրամաստություն) մեցբերում է մի հին ասացվածք. «Եթե չմորանանք անցյալը, այն հիմանական ուսուցիչ կլինի մեզ համար հաջորդ դարերում»: Անշուշտ, մենք չենք կարող անցյալի բոլոր իրողություններն ընկալել՝ որպես ապագայի զարգացման օրինակներ կամ կաղապարներ, բայց արդյո՞ք չենք կարող պատմությունը վերլուծելով և ուսումնասիրելով հայտնաբերել որոշ կանոնավոր իրողություններ, որոնք ենթարկվում են որոշակի օրենքների և կարող են մտորումների առիթ դառնալ մեզ համար: Եթե չենք կարող, ապա բոլորովին իմաստ չունի ուսումնասիրել կամ վերանայել պատմությունը: Յետևաբար, հավատացած եմ, որ «այն հիմանական ուսուցիչ կլինի մեզ համար հաջորդ դարերում» ասացվածքն ի վերջո ճշմարտության որոշակի հատիկ է պարունակում:

Չինաստանի պատմական զարգացումը ցույց է տալիս, որ օտար մշակույթի երեք խոշոր ներկոսք եղել դեպի Չինաստան. առաջինը հնդկական մշակույթի, հիմնականում հնդկական բուդդայականության ներմուծումն էր մթ. առաջին դարից սկսած: Այն մեծ ազդեցություն թողեց չինական մշակույթի վրա: Երկրորդն արևմտյան քաղաքակրթության ներմուծումն էր տասնյոթերորդ դարում և դրանից հետո (Մին դինաստիայի երկրորդ կեսից ի վեր): Սկզբում այն գերազանցապես արևմտյան քաղաքակրթություն էր, որը ներմուծում էին արևմտությի միահինները, օրինակ՝ Մաքեն Ուիչին: Երրորդ ներհոսքը մարդսիզմի ներմուծումն էր Չինաս-

տան Մայիսի չորսի շարժումից առաջ և դրանից հետո: Կախված պատմական պայմաններից, ժամանակահատվածից, ձևից ու բնույթից՝ օտար մշակույթի Չինաստան ներմուծվելու այս երեք դեպքերը տարբեր ազդեցություն ու ներգործություն են ունեցել Չինաստանի վրա: Ես ի գորու չեմ բազմակողմանիորեն հետազոտել այս խնդիրը: Պարզապես ցանկանում եմ որոշ երևույթներ ուսումնասիրել հնդկական բուդդայականության ներմուծման պատմական գործընթացը հետազոտելու միջոցով, որոնք ի հայտ են եկել օտար և բնիկ մշակույթների շփումների արդյունքում, և տեսնել, թե արդյոք հնարավոր է ինաստալից եզրահանգումներ անել այս երևույթներից:

Ինչպես գիտենք, հնդկական բուդդայականության ներմուծումը Չինաստան ընդհանուր առնամբ հաջորդեց այս գործընթացին. նախ, այն կցվեց Չինաստանի տեղական, բնիկ մշակույթին ու հետևաբար մեծ մասսայականություն ստացավ: Ապա այն հակասության մեջ մտավ ու բախվեց Չինաստանի ավանդական մշակույթի հետ, և, ի վերջո, կամքեց չինական մշակույթի կողմից և ծովլվեց նրա հետ: Այսպիսով, այն կարևոր դեր էր իր խաղում Չինաստանի մշակույթի զարգացման խթանման համար: Ես կցանկանայի ինչ-որ կերպ զարգացնել ու բացատրել այս գործընթացը:

1. Երբ հնդկական բուդդայականությունը ներմուծվեց Չինաստան, սկզբում այն կցվեց Չինաստանի բնիկ մշակույթին և այդ ընթացքում դարձավ մասսայական ու ազդեցիկ:

Երբ բուդդայականությունը ներմուծվեց Չան դինաստիա, այն նախ կցվեց դառնուին (դառսականների տեխնիկան), որը հայտնի էր նաև ֆանշու անունով. հետագայում՝ Վեյ և Չին դինաստիաներում, այուանայուե մետաֆիզիկական ուսումնքը մեծ տարածում գտավ, և բուդդայականությունը միացավ նրան: Չան դինաստիայում մարդիկ հակված էին Ֆոռութուն (Բուդդա) հավասարեցնել Չուան-Լաոյին: Օրինակ, ասում էին, որ Չուի ին արքայազնն «արտասանում է Չուանի ու Լաոյի թաքնված խոսքերը և մեծարում Ֆոռութունի բարերար տաճարները»: Կայսր Չուանին «պալատում սրբավայրեր էր կառուցել Չուան-Լաոյի ու Ֆոռութուի պատվին»: Անշուշտ, նույնիսկ ժամանակի բուդդայականներն իրենց կոչում էին դառչու [–ի աշակերտներ]: Օրինակ, «Լի լու լունում» (Սկզբունքը շփոթմունքից առանձնացնելու տրամասությունը): Մոտ 875 բուդդայականությունը համարում էր դառչուի իննասունվեց տեսակներից մեկը: Նա ասում էր. «Գոյություն ունի դառչուի իննասունվեց տեսակ: Դրանցից ամենահարգվածն ու ամենամեծը հենց ֆորդառն է (Բուդդայականության ճանապարհ): «Սիշի էր ջան ձինը» (42 գլխից կազմված սուտրա) նաև ֆորդյան (Բուդդայի ուսմունքը) կոչում էր ֆորդա: Այն ժամանակներում բուդդայական ուսմունքի բովանդակությունն ընդհանրապես կազմված էր «ոգու անխորտակելիություն» ու «պատճառ, ազդեցություն և հատուցում» գաղափարներից: Իրականում նրանք կարծես թե ոչինչ չէին հասկանում ու վոյի (Եսի մերժում) գաղափարից, որը մարմնավորված էր հնդկական բուդդայականության մեջ: Ոգու անխորտակելիության գաղափարն ի սկզբանե չինական էր և արտահայտվում էր ուրվականների կամ հոգիների գոյության ամենատարբեր տեսություններում: Օրինակ, «Ծի ձին» գրքի (Ներբողմերի գիրք) Դայա հատվածի «Ֆու վան» (Չայր-արքա) բանաստեղծության մեջ հանդիպում ենք սան հոռ ցայ թյան (Երեք ամուսինները Երկնքում են) տողին, որն արտահայտում է հիմնական հիգու վսեմացման տեսությունը: «Չուայ նան ցի» գրքի «Չին շեն սուն» (Չոգու

առարկայի հորդորներ) գլխում հանդիպում ենք հետևյալ ասացվածքին. «Այսպիսով, ձևը կարող է քայլավել բայց հոգին չի վերանա»: Եվ հենց սա է պատճառը, որ երկու Չան դինաստիաների ընթացքում գոյություն են ունեցել այնպիսի տեսություններ, ինչպիսիք են Չուան Թանի «Երբ ձևը ոչնչանում է, հոգին նույնպես մարում է» և Վան Չունի «Երբ մարդը մահանում է, չի վերածվում ուրվականի կամ հոգու» գաղափարները: Միևնույն ժամանակ, այն գաղափարը, ըստ որի «հոգու անխորսակելիությունը» կախված էր մարմինն ու միտքը մարգելուց և սնելուց, արդեն իսկ շրջանառվում էր Չինաստանում: Ինչ վերաբերում է «պատճառի, արդյունքի ու հատուցման» տեսությանը, չնայած այստեղ բուդդայականության մեկնաբանությունները տարբերվում են Չինաստանում արմատավորված տեսություններից, այնուամենայնիվ, ինքու բարինը (պատճառի, ազդեցության և հատուցման համապատասխանություն), որը տարածվեց բուդդայականության կողմից, հստակ կապված էր ֆու շան հուր ինի (բարի բախտը բարի մարդկանց, աղետները՝ անօրեններին) գաղափարի հետ, որը նույնպես արմատավորված էր Չինաստանում: Օրինակ, «Իծինի» (Փոփոխությունների գիրք) «Կունզուա» (Կունի եռագիր) բաժնի «Վեն յան» (Տեքստ-մեկնաբանություն) գլխում հայտնաբերում ենք հետևյալ մարգարեական հայտարարությունը. «Ընտանիքը, որը կուտակում է բարի գործեր, կպարգևատրվի տոնելու բազում առիթներով, մինչդեռ այն ընտանիքը, որտեղ հավաքվել են չար արարքներ, տառապանքի բազում պատճառներ կունենա»:

Չան դինաստիայի ավարտին և Վեյ դինաստիայի վաղ շրջանում բուդդայական սուտրաների բարգմանություններն օրեցօր ավելանում են: Բուդդայականությունը մասսայականություն էր վայելում Չինաստանում իր երկու խոշոր ճյուղերով. մեկը Ան Շի Գաոյի իհմնած համակարգն էր, որը Չինայանա բուդդայականության դպրոց էր և ընդգծում էր դիյանայի (կամ Չանի) կամ խորասուզման (մեդիտացիա) մեթոդը: Մյուսը Զի-լոռու-ծյա-ցյանի համակարգն էր, որը ներկայացնում էր Մահայանա դպրոցը և ընդգծում էր պրածուայի (մտածողություն և իմաստություն) ուսմունքները: Ան Շի Գաոյն բարգմանել էր բազմաթիվ սուտրաներ, որոնց շարքում ամենաազդեցիկը «Ան-բոշոո-իծինն» էր (Մուտք գործել՝ ծածուկ պահպանման միջոցով) սուտրան էր: Առաջինը սովորեցնում էր շնչառական մեթոդներ և մարդու միտքը կայունացնելու կամ պահպանելու միջոցներ: Սա շատ նման էր շնչառական տեխնիկայի (ներշնչելու և արտաշնչելու) ուսմունքին, որը հասուկ էր Չինաստանի դառսականներին և Անմահության դպրոցին (Շեն սյան ծյա): Երկրորդը բացատրում էր բուդդայական տերմինաբանությունը և հասկացությունները և իր ոճով շատ նման էր տեքստարանությանը, որով Չան դինաստիայի գիտակները ծանոթագրում էին չինական դասական երկերը: «Ին չիտու ծինը», քննարկելով տիեզերքն ու մարդկային կյանքը, յուանցին (նախնական շնչառություն) համարում էր արմատ և ասում էր, որ յուանցին հավասար է ուսինին (Չինգ տարր): Ապա նա սա օգտագործում էր ուինը (Չինց բացասական կողմ) քննարկելիս (ավելի ուշ այն բարգմանվեց ույուն՝ թաքնված կամ ներքին որակներ): Այն նաև բացատրում էր սե (արտաքին), շոու (ընդունում), սյան (միտք), սին (գործողություն) և շի (գիտելիք կամ ըմկալում) բուդդայական կարգերը՝ որպես յուանցիի արդյունք: Այսպիսով, մենք տեսնում ենք, որ Չինայանայի դյանա մեթոդը, որը տարածում էր Ան Շի Գաոյն, պարզորեն կցվեց դառշու մտքին, որն արդեն իսկ մեծ մասսայականություն էր վայելում Չինաստանում, և որ նա օգտագործում էր դա-

ոշում՝ բուդդայականությունը չինացիներին բացատրելու համար:

Զի-լոու-ծյա-ցյանի դպրոցը, մյուս կողմից, պատկանում էր Մահայանա բուդդայականության պրածուա ուսմունքներին: Այն շեն-ֆան բեն-ջենը (հոգին սկզբնական ծշմարտության վերադարձնելը) համարում է մարդկային կյանքի կարևորագույն, ամենահիմնարար ծշմարտություն: Այն նաև դիտարկվում էր՝ որպես վերադարձ և կապի վերահաստատում դառյի (բնական ճանապարհի) հետ: Այստեղ կարող ենք նկատել, որ այն Լառ Ցի և Չուան Ցի մտքերի ազդեցության տակ էր: Զի-լոու-ծյա-ցյանի երրորդ սերնդի աշակերտ Զի-ցյանը թարգմանեց հնդկերեն (սանսկրիտ) Պրաջնապարամիտա սուտրան՝ որպես «Դա մին դու ուժի ծին» (Սուտրա մեծ լուսավորության միջոցով անվերջ ծայրակետին հասնելու մասին): Այստեղ նա դասական «Լառ Ցիում» պրածուան (իմաստություն) թարգմանել է դա մին (մեծ լուսավորություն), որը միանշանակ առաջացել է զի չան յուե մին (հաստատումի իմացությունը լուսավորություն կամ լուսավորականություն է) զաղափարից [Թարգմանչի ծանոթագրություն]: Այս հոդվածի չինարեն տեքստը, որը հնչում է այսպես՝ «Զի չան ժի մին (ժին «որդին» է), սխալ է: «Լառ Ցի» կամ «Դառդինի» համապատասխան նախադասությունը հետևյալն է՝ «Զի չան յուե մին», որը թարգմանվում է այնպես, ինչպես ներկայացված է այստեղ]: Նա նաև պարամիտան (անցում հեռավոր ափեր) թարգմանեց դու ուժի (անցում դեպի ծայրակետը), որը նույնպես արտահայում է դառյի հետ անբողջության վիճակի զգացողությունը («Լառ Ցիում» «Վերադարձը» թարգմանված է ուժի կամ ծայրակետ»):

Վեյ և Զին դինաստիաներում սյուանսյուե գոյաբանությունը, որը ձևավորվել էր «Լառ Ցի» և «Չուան Ցի» զաղափարների հիման վրա, շատ տարածված էր: Սյուանսյուե քննարկումների հիմնական շեշտը բեն-մո (սկիզբ և վերջ) և յոու-ու (կեցություն և չկեցություն) հարցերն են: Բուդդայական պրածուա գիտության կենտրոնական հարցը նաև կունի (սունյա կամ ունայնություն) և յոուի (իրականություն կամ կարևորություն) հարցն էր, որը բավական մոտ էր սյուանսյուեին: Յետևարար, ժամանակի բուդդայականներն ընդհանրապես օգտագործում էին սյուանսյուեն՝ բուդդայականության սկզբունքները բացատրելու համար, և որդեգրում էին գեի (սահմանող իմաստներ) և յան լեյ (կապող կարգեր) մեթոդները: Օրինակ, վանական Դառ Անը «Բի-նայ-յե սու» էսսեում (Վինայա Պիտակայի նախաբան) ասում է. «Սուլր գրքերի տասներկու հատվածներից ամենածավալունը վայփույան է [այն է՝ սուտրաները]: Պատճառն այն է, որ այս երկրում [Զինաստան] մարդիկ օգտվում էին Լառյի և Չուանի զաղափարներից՝ բուդդայական ուսմունքը տարածելու համար: Նրանց ուսմունքները [այսինքն՝ Լառյի և Չուանի] բավական նման են ֆան դենի [Մահայանա վայփույա] սուլր գրքերի ուսմունքներին: Յետևարար, աշակերտները փոխում էին իրենց կրոնական ուղղությունը՝ ըստ գերակա ավանդույթի: Այստեղ կարող ենք տեսնել, որ նույնիսկ ժամանակի ականավոր բուդդայական վանականներն ընդունում էին, որ բուդդայականության մասսայականությունը կախված էր Լառ Ցի և Չուան Ցիի զաղափարներից: «Չի շուր սին յու (ժամանակակից կյանքում գերակշռող նոր ասույթներ) գրքի «Վենայուե» (գրականություն) հատվածն ասում է. «Զենիիի թագավորության տարիներին Վան Բին և Յե Յանը շեշտում էին սյուանշենի (մետաֆիզիկական տրամասություն) քննարկումները Լառ Ցիի և Չուան Ցիի գործերում, և այն ժամանակի մարդիկ սկսեցին գնահատել այս քննարկումները: Այսպիսով բուդդայա-

կան ուսմունքը շատ ավելի մեծ տարածում գտավ»: Արևելյան Զին դինաստիայի սկզբնական շրջանում պրաջուագիտությունը, որն արդեն իսկ մեծ մասսայականություն էր վայելում Չինաստանում, ավելի մեծ ու լայն տարածում գտավ: Գոյություն ունեին այսպես կոչված Վեց տներ և Յոթ դպրոցներ: Նրանց քննարկած խնդիրներն իրենց եռթյամբ դեռևս նման էին բեն-մո և յոու-ու խնդիրներին: Այսպես կոչված բեն-ու (սկզբնական չկեցություն) ուսմունքը զարգացել էր գուեյ-ու (չկեցությունը մեծաբենու) ուսմունքի հիման վրա, որն առաջարկում էին Վան Բին և Յե Յանը: Մյուս կողմից, սին-ու ուսմունքը (նտքի չկեցություն) մոտ էր Սի Քանի և Շուան Զիի ու-սին (չմիտք) գաղափարին: Ավելին, ջի-սե (մոտենալ արտաքինին) ուսմունքը, որը ժամանակի բուդդայական ուսմունքի մեկ այլ զարգացումն էր, միանշանակ կապ չուներ Գու Սյանի ցուն-յոու (կեցության մեծաբուռ) գաղափարի հետ:

Ինչպես ի հայտ եկան այս բոլոր պայմանները: Ինչպես գիտենք, յուրաքանչյուր մշակույթ ունի իր պահպանողական կողմը, որով պաշտպանվում է օտար ու ներմուծված մշակույթից: Յետևաբար, յուրաքանչյուր ներմուծված մշակույթ պետք է նախ հարմարվի տեղական գաղափարախոսական կամ մտավոր մշակույթի որոշակի պահանջներին և կցվի նրան: Ներմուծված մշակույթի այն տարրերը, որոնք նման կամ մոտ են բնիկ մշակույթին, միշտ ավելի հեշտությամբ են տարածվում: Միայն այս դեպքում ներմուծված մշակույթի տարրերը, որոնք տարբերվում են նախնական բնիկ մշակույթից, աստիճանաբար գտում են բնիկ մտավոր մշակույթը ու ազրեցություն և նույնիսկ ներգործություն ունենում տեղի մտավոր մշակույթի վրա:

2. Արևելյան Զին դինաստիայից հետո Չինաստանում հնդկական բուդդայականության տարածումը հանգեցրեց ներմուծված հնդկական մտավոր մշակույթի և Չինաստանի սեփական ավանդական մտավոր մշակույթի հակասության ու բախմանը: Այս հակասությունն ու բախումն էլ խթանեցին Չինաստանի մտավոր մշակույթի զարգացումը:

Արևելյան Զին դինաստիայի սկզբնական շրջանում բուդդայականության պրաջուագություն ուսմունքները դեռևս կցված էին Լառ Ցզիի և Զուան Ցիի սյուանսյուե ուսմունքին, և մենք կարող ենք դրանք կոչել ֆո սյուան (բուդդայական սյուանսյուե): Արևելյան Զին դինաստիայի վերջում և Լյու-Սուն դինաստիայի առաջին տարիներին Չինաստան մուտք գործեցին բուդդայական ուսմունքի բազմաթիվ դպրոցներ ու աղանդներ, ինչպես Յինայանա, այնպես էլ Մահայանա ճյուղից: Սա հանգեցրեց բուդդայական սուտրաների կամ սուլը գրքերի մեծ թվով տարատեսակ մեկնաբանությունների, ինչպես նաև ի հայտ եկավ սուտրաների վարպետների քարոզական ոճը: Այսուամենայնիվ, հնդկական մշակույթն ու բնիկ չինական մշակույթը, ի վերջո, երկու առանձին ու խիստ տարրեր մշակութային ավանդություններ են, և առաջինը չի կարող մշտապես կցված լինել երկրորդին: Յետևաբար, Արևելյան Զին դինաստիայից հետո բուդդայական սուտրաների թարգմանությունների ամենօրյա ավելացմանը և նրա ավելի ու ավելի համակարգված բնույթով պայմանավորված, ի վերջո նկատելի դարձավ, որ որոշ առումներով բուդդայականությունն անշուշտ գերազանցում էր չինական ավանդական մշակույթը: Արդյունքում տարրեր ավանդական խորապատկեր ունեցող այս երկու մշակույթների միջև հակասությունն անխուսափելի էր:

Ըստ «Քայ յուան լուի» (Քայյուանի տարիների գրացուցակ)՝ Յան դինաստիա-

յի վերջից մինչև Արևմտյան Զին դինաստիայի վերջն ընկած 250 տարիների ընթացքում բուդյայական սուտրաների 1420 հատոր թարգմանվեց չինարեն: Արևմտյան Զին ժամանակաշրջանում (ներառյալ ժամանակակից հյուսիսային Չինաստանը Յին դինաստիայի ուշ շրջանում, Արևմտյան Յինում, նախկին Լյանում և Յյուսիսային Լյան վարչակարգերի օրոք) թարգմանվեց 1716 հատոր: Այլ կերպ ասած՝ այդ 100 տարիների ընթացքում կատարված թարգմանությունները քանակով գերազանցում էին նախորդող 250 տարիների ընթացքում արված թարգմանությունները: Մասնավորապես այս վերջին ժամանակահատվածում գոյություն ունեին թե՛ Մահայանա, թե՛ Յինայանա դպրոցների սուտրաների, վինայաների ու սաստրաների լայնածավալ և համենատարար ճշգրիտ թարգմանություններ, որոնք արվել էին Կունարաջիվայի կողմից: Սա մարդկանց թույլ էր տալիս բազմակողմանիորեն հասկանալ հնդկական բուդյայական մշակույթի նախնական իմաստը: Այս ընթացքում ոչ միայն Յինաստան եկած օտարերկրյա բուդյայական վանականները, այլև հենց Յինաստանի բուդյայական վանականները սկսեցին ընկալել բուդյայական այն ուսմունքները, որոնք ավելի մոտ էին բուն նշանակությանը: Բուդյայականության նախնական մտադրությունների ճշգրիտ ընկալմանն ուղղված այս գործընթացի արդյունքում չինացի բուդյայականների շրջանում մի ընդհանուր խնդիր ծագեց: Արդյո՞ք նրանք պետք է շարունակեն ընթառնել բուդյայականությունը բնիկ չինական գաղափարների համաձայն: Կամ արդյո՞ք նրանք պետք է բուդյայականություն դասավանդեն Յինաստանում՝ սովորեցնելով հնդկական բուդյայականության նախնական իմաստը: Մուանից էլ առաջ եկավ բախումը երկու մշակույթների միջև:

Յյուսիսային և Յարավային դինաստիաների ժամանակաշրջանում բուդյայականության և Յինաստանի բնիկ մշակույթի միջև բախումն արտահայտվեց և դրսևորվեց բազմաթիվ ոլորտներում, այդ թվում և քաղաքական և տնտեսական շրջանակներում, ինչպես նաև փիլիսոփայությանը, կրոնին ու բարոյագիտությանը վերաբերող հարցերում:

Պատմությունը մեզ պարզել է մի շատ կարևոր գիրք, որն ընդհանուր առնամբ նկարագրում է ներմուծված հնդկական բուդյայականության և Յինաստանի ավանդական մշակույթի բախման ու հակասությունների պայմանները Յյուսիսային-Յարավային դինաստիաների ժամանակաշրջանում: Սա «Հունմին ջի» գիրքն է (Սեծ լուսավորության ժողովածու): Այս գրքից մեզ համար պարզ է դառնում այս երկու մշակույթների հակասություններին ու բախմանն առնչվող հարցերի շարքը: Օրինակ, բանավեճ կար այն հարցի շուրջ, թե արդյոք հոգին կարելի է ոչնչացնել: Բանավեճ էր ընթանում նաև այն հարցի շուրջ, թե արդյոք գոյություն ունեն այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են ին-գուռն (պատճառ և ազդեցություն) և բառինը (հատուցումներ), որոնք ներառում էին պատճառի և ազդեցության և ցիժանի (բնության իշխանությունը կյանքի վրա, այն է՛ ճակատագիրը) փիլիսոփայական խնդիրները: Տարածայնություն կար նաև կունի (սունյա կամ չկեցություն) և յուի (կեցություն) միջև հարաբերության հարցի շուրջ: Ներկայացված է նաև քննարկում այն մասին, թե արդյոք շամենը (բուդյայական վանականներ և նվիրյալներ) պետք է հարգեն գահն ու արքայազնին, ինչպես նաև այն հարցը, թե ինչ է նշանակում լինել չուշի (աշխարհիկ կյանքից հեռացած և կրոնին միացած) և ժուշի (մնալ աշխարհիկ կյանքում կամ մուտք գործել այնտեղ): Տարածայնություններ կային նաև մարդկության և ջունշենի (կյանքի այլ ձևեր) հարաբերու-

թյունների շուրջ: Յե Չենթյանը, իր փաստարկը կառուցելով Զոռու իի (Փոփոխությունների Զոռու դասականը) վրա, պնդում էր, որ մարդկությունը, Երկինքը և Երկիրը սանձայ են (Երեք հատուկ ունակություններով օժտված) և հերքում էր բուդդայականությունը, որովհետև Վերջինս մարդկությունը դնում էր ջուն-շենի հետ նույն մակարդակի վրա: Այս բանավեճը կապված էր կոնֆուցիականության ավանդույթի պաշտպանության հետ:

Այս շրջանում մրցակցություն առաջացավ Յուայի (չինացիներ) և իի (բարբարոսներ) միջև: Յե Չենթյանը «[Կանական] Ցուն Բինին պատասխան նամակում» գրում է. «Անշուշտ, տարբերություններ կան Յուայի և իի միջև»: Ինչ վերաբերում է նրանց բնույթին, նա ասում է. «Չինաստանի ժողովուրդն ունի մաքրության (ցին) և ներդաշնակության (հե) ներհատուկ ոգի (ցի). նրանք ընդգրկում են բարեգործության (ժեն) և սկզբունքայնության (ի) իդեալները: Այդ պաճառով էլ Զոռուն (այն է՝ Զոռու կոմսը) և Կունը (Կոնֆուցիոն) առաջարկում էին սովորույթների ուսունացք՝ հիմնվելով ժողովորդի բնույթի վրա (սին սի ջի ծյառ): Մյուս կողմից, այլ ազգերի աշակերտներն էությամբ կոպիտ են ու վճռական (գանցյան). նրանք ազահ են ու ցանկասեր, զայրացկոտ ու կրվարաբ: Դա է պատճառը, որ Սակյանանին (բուդդայականության հիմնադիրը) խիստ էր Յինգ բարբարոսներին (ու յուն) կարգի հրավիրելու հարցում»: Իր «Էսյա լուն» (Տրամասություն բարբարոսների և չինացիների մասին) գրքում Գու Քուանն ասում է, որ Յուայան (չինացիներ) ծեսերի (լի) ու սկզբունքների (հ) ազգ են, և չպետք է հեռանան իրենց չինական արմատներից և բռնեն բարբարոսների ճանապարհը: Ընդհանուր առմանք նրա տրամաբանությունը որոշ նմանություններ ուներ Յե Չենթյանի հետ: Բուդդայական ուսունացների դեմ արշավանքները, որոնք կազմակերպել էին Թայուլին Յյուսիսային Վեյ դինաստիայից և Ուէին Յյուսիսային Զոռու դինաստիայից, ունեին ոչ միայն քաղաքական ու տնտեսական պատճառներ, այլև ինտելեկտուալ ու մշակութային արմատներ:

Ի լրումն կոնֆուցիականության և բուդդայականության բախնան՝ այս ժամանակահատվածում սրվում էին հակամարտությունն ու հակասությունները բուդդայականության և Չինաստանի բնիկ ազգային կրոնի՝ դառսիզմի (Դաոձյառ) միջև: Նախ, տարածայնություններ կային այն լեգենդի պատճականության կամ պատմական վավերականության ու օրինականության վերաբերյալ, ըստ որի Լառ Ցզին զնացել է բարբարոսների մոտ ու դարձել նրանց ուսուցիչը (Լառ Ցզի հուա հու): Տարածայնություններ կային նաև մի շաբթ հիմնախնդիրների՝ շենսի (կյանքի ու մահվան իմաստը), շենսին (ոգի և ծև), չուշի և ժուշի ինչպես նաև ի և սյա հասկացությունների տարանջատման հարցի շուրջ:

Այս բոլոր տարածայնությունները դրսերում են Երկու տարբեր մշակույթների միջև հակասությունն ու հակամարտությունն: Նրանց մի մասը պահպանվեց նույնիսկ Սույ և Թամ դինաստիաների ողջ ընթացքում: Սակայն կարիք չկա ուսումնասիրել այս հարցը:

Վերը նշված այս պայմաններից պարզ է դառնում, որ Երբ Երկու տարբեր մշակույթները հաղորդակցվում են մինյանց հետ, նրանց միջև հակասություններն ու հակամարտություններն անխուսափելի են: Յարցը հետևյալն է՝ մարդիկ ինչպես էին լուծում այս հակասություններն ու հակամարտությունները: Արդյո՞ք նրանք քաղաքական ուժ էին օգտագործում՝ ներմուծված մշակույթը մերժելու համար: Թե՝ հակասությունների ու հակամարտությունների միջոցով կլանում էին ներ-

մուծված մշակույթի տարրերը և յուրացնում դրանք՝ ձուլելով բնիկ մշակույթի հետ: Սա շատ լուրջ հարց է: Ինչպես երևում է, Յուլիսիսային-Դարավային դինաստիայի ժամանակաշրջանից մինչև Սույ-Թան ժամանակահատվածը, չնայած Չինաստանի տեղական մշակույթի և ներմուծված հներկակալական մշակույթի միջև հակասություններին ու հակամարտություններին, չինացիները չմերժեցին ներմուծված մշակույթը, այլ իրենց կարողության չափով կլանեցին ու յուրացրեցին այն: Սա ցույց է տալիս ազգի ինքնավատահությունն ու սեփական մշակույթի արժեքի զգացումը: Եվ քանի որ երկու մշակութային ավանդույթների միջև գոյություն ունեին այսպիսի հակասություններ ու հակամարտություններ, իսկ ազգային ավանդական մշակույթն այդ նույն հակասությունների ու հակամարտությունների համատեքստում շարունակում էր յուրացնել հներկական մշակույթը, մեր ազգային մշակույթի զարգացումը մեծ ուժով առաջ էր գնում: Այս ժամանակահատվածում մեր ազգային մշակույթը աշխույժ էր և քարգավաճում էր փիլիսոփայության և մտքի, գրականության և արվեստի, ճարտարապետության ու քանդակագործության և նույնիսկ գիտության, տեխնոլոգիայի, բժշկության ու առողջապահության ոլորտներում: Սա միանշանակ և անխուսափելիորեն պայմանավորված էր ներմուծված հներկական մշակույթի համեապ համեմատաբար լավ վերաբերունքով:

3. Սույ-Թան շրջանից հետո չինական մշակույթը կլանեց հներկական բուդրայականությունը: Սկզբում ի հայտ եկան բուդրայականության չինականացված աղանդեր: Նետագայում՝ Սույն դինաստիայում, բուդրայականությունն իրականում դարձավ չինական ավանդական մշակույթի մի մաս և ամբողջությամբ կլանվեց Չինաստանի ավանդական մշակույթի կողմից՝ ձևավորելով Սույն-Մին դինաստիաների լիսյուե դպրոցը կամ ներկոնֆուցիականությունը:

Սույ-Թան ժամանակահատվածում Չինաստանում ի հայտ եկան մի շարք (նոր) բուդրայական աղանդներ: Նրանց շարքում Թյանքայ (Երկնային տանիք), Յուայան (Ծաղկեպսակ) և Չան (Խորասուլզում) աղանդները բոլորն էլ ըստ էռության չինականացված բուդրայականության աղանդներ էին: Այս երեք ուղղությունների քննարկած խոշոր հիմնախնդիրները սինսինի (միտք և բնություն) և լիշի (սկզբունք և նյութ) հարցերն էին: Սինսինի հարցը լուրջ խնդիր էր Չինաստանի ավանդական փիլիսոփայության մեջ: Այն սկիզբ էր առել դեռևս Կոնֆուցիոսի և Մենցիոսի ժամանակներից: Եթե Մենցիոսն առաջարկում էր «ընդլայնել միտքը, ճանաչել մարդու ներքին բնույթը ու հետևաբար ճանաչել երկինքը» (զին սին զի սին զի թյան) նա անդրադառնում էր սինսինի հարցին: Բուդրայականության վերը նշված երեք ուղղությունները քննարկում էին ֆուսինի (Բուդրայի էռություն) և բեն սինի (նախնական միտք) հարցերը: Յատկապես Չան աղանդի դեպքում սինսինի խնդիրը մանրամասն էր քննարկվում: Ըստ այս աղանդի՝ Բուդրայի բնույթը իսկապես համարժեք է «նախնական մտքին»: Չանը որոշակի տեսանկյունից զարգացնում էր սինսինը, որն արդեն իսկ գոյություն ուներ Չինաստանում: Ինչ վերաբերում է լիի (սկզբունք) և շիի (նյութ) հարաբերությանը, ապա Յուայան աղանդն առաջարկում էր, որ «լիի և շիի չմիջամտեն միմյանց», և «շիի և շիի չմիջամտեն միմյանց»: Սա կապված էր Վեյ-Չին ժամանակահատվածի սյուանյուե մետաֆիզիկայի հետ: Վեյ-Չին ժամանակաշրջանի սյուանյուե ուսմունքում արդեն իսկ գոյություն ուներ «էռության և գործառույթի» միասնության զարգափարը (թի յուն ժո ի): Օրինակ, կան Բին խոսում էր այն մասին, որ ուի (չկեցություն)

պատճառը յուր է (կեցություն): Նա ասում է. «Նույնիսկ երբ մենք առնչվում ենք մեծ ծեռարկության, հսկայական հարստության ու ճանաչման հետ, (բոլոր իրերի յուր վան ու), հասկանում ենք, որ իրերից յուրաքանչյուրն ունի իր դեն (մետաֆիզիկական, ոչ ֆիզիկական, էություն). չնայած մենք մեծարում ենք ուն (չկեցություն)՝ որպես յունի (գործառույթ, այն է՝ չինություն) նյութ, մենք չենք կարող ունենալ թի (էություն), եթե ամբողջությամբ անտեսենք ուն»: Այստեղ նա օգտագործում էր «միասնություն կամ էության ու գործառույթի միասնություն» հասկացությունը՝ կեցության և չկեցության հարաբերությունները բացատրելու համար: Ուստիև, լի շի ու վայ գաղափարը (սկզբունքը, այն է՝ էության հիմնախնդիրը և նյութը, այն է՝ գործառույթի կամ երևույթների հիմնախնդիրը, չեն միշտամտում միմյանց) միանշանակ կապված է Վան Բիի գաղափարների հետ: Ինչ վերաբերում է շի շի ու վայ (նյութը չի միշտամտում այլ նյութի գաղափարին), այն հավանաբար կրում էր Գուռ Սյանի եզակիհացման (դու հուա լուն) գաղափարի ազդեցությունը: Դետագայում Չինաստանում Շուայան աղանդն ու Չան աղանդը շատ կարևոր ազդեցություն կամ փիլիսոփայական միտք ծեռք բերեց: Պատճառն այն էր, որ դրանք չինականացված բուդդայականության ճյուղեր էին: Ի հակադրություն սրա՝ վեյ շի (Դիարմալակսանա աղանդը կամ Միայն գիտակցության դպրոցը) ուսմունքը, որը չնայած Թան դինաստիայի վաղ շրջանում տարածվում ու մեկնաբանվում էր մեծ վարպետ Սյուան Չանի կողմից, ընդամենը 30 տարի մեծ տարածում ունեցավ, ապա արագորեն գիշեց դիրքերը: Պատճառն այն է, որ վեյ շի դպրոցի արմատները գալիս էին հնդկական բուդդայականությունից:

Սուն դինաստիայի ընթացքում լիսյուտ փիլիսոփայությունը հակադրվում էր բուդդայականությանը, բայց ինչ վերաբերում է փիլիսոփայական մտավոր գարգացմանը, այն ամբողջությամբ գրավեց բուդդայականության տեղը: Սա, անշուշտ, պատահական չէ: Սկզբում Չինաստանի ավանդական մտածողությունը նպատակ ուներ մուտք գործել աշխարհիկ կյանք (և ոչ թե լքել այն) (ժուշի), կամ կարող ենք ասել, որ այն կենտրոնանում էր «Երկրին կայուն կառավարություն, իսկ աշխարհին կարգուկանոն ապահովելու» (զի գուռ փին թյանայա) իրական աշխարհի համատեքստում սկզբունքի իրագործման վրա: Այս կետում այն հիմնովին տարբերվում էր աշխարհիկ կյանքից սեփական անձը հեռացնելու բուդդայական գաղափարից (ժուշի): Սակայն, դրա արդյունքում, այն հարցը, թե ինչպիսի հիմքեր են պետք անդելու համար, որ հնարավոր է հաստատել իդեալական հասարակություն, և այն հարցը, թե ինչպես ջի գուռ փին թյանսայի իդեալը կարող է իրականություն դառնալ, լուրջ խնդիր են: Այսպիսով առաջ քաշվեց «Երկնքի սկզբունք» (թյան լի) հասկացությունը: Չեն Շաոն ասում է. «Չնայած իմ ուսմունքի մեջ կան կետեր, որոնք վերցված են մի շարք նախկին ուսուցիչներից, թյան լի գաղափար՝ այս երկու բառերը, ինքու են քաղել իմ սեփական փորձից և իմ սեփական գիտակցությունից»: «Երկնքի սկզբունքը» ոչ թե «դաստարկության սկզբունք» է (կուն լի), այլ էության սկզբունքը (շի լի). այն համարվում էր ծայրակետի արտաքին էություն կամ մեծագույն բարիք» (զի շան ջի թյառդե): Ինչ վերաբերում է «Երկնքի» (թյան լի կամ Երկնքի սկզբունք) և «մարդկության» (ժենսին կամ մարդկային բնույթ) հարաբերություններին, Սուն դինաստիայի մեռկոմֆուցիական գիտնականները խոսում են կամ սին ջի լիի (բնությունը հավասար է սկզբունքին) կամ սին ջի լի (միտքը հավասար է սկզբունքին) գաղափարների մասին: Այսպիսով, սինսինի հարցը դառնում է Սուն-Մին դինաստիաների լիսյուտ ներկոն-

Փուցիականության հիմնարար խնդիր: Թե՛ սինգ ջի լի ձևակերպումը, թե՛ սին ջի լի ձևակերպումը պարունակում են Երկնքի և մարդկության (թյան ժեն գուանսի) հարաբերության հարցը, և, հետևաբար, Սուն-Մին դինաստիաների լիսյուն գիտնականները հաստատում էին «Երկնքի ու մարդկության միասնություն» տեսակետը (թյան ժեն հե ի) գոյաբանության դիտանկյունից: Երկու Չեն եղբայրները կիրառում էին «Ենթյունն ու գործառույթը բխում են նույն աղբյուրից. նրանց միջև չկա տարանջատում, թե ինչն է դրսևովկում, իսկ ինչն է թաքնված» (թիուն ի յուան, սյան վեյ ու ձյուան) ասացվածքը՝ Երկնքի և մարդկության հարաբերությունները նկարագրելու համար: Մյուս կողմից, Զու Սին կիրառում էր «յուրաքանչյուր մարդ ունի իր ծայրակետը, յուրաքանչյուր առարկա ունի իր ծայրակետը» (ժեն ժեն յուու ի թայ ծի, ու ու յոու ի թայ ծի) ձևակերպումը՝ նույն նպատակի համար: Լու Զին-յուանն ասում է. «Տիեզերքը իմ միտքն է. իմ միտքը տիեզերքն է» (յու ցոու բյան շի ու սին, ու սին բյան շի յու ցոու), իսկ Վան Շոուենն ասում է. «Միտքը Երկինք է. Երբ խոսում ենք մտքի մասին, ապա Երկինքը, Երկիրն ու բոլոր իրերն արդեն իսկ հիշատակվում են»: Այստեղ Երկուսն էլ խոսում են այն սկզբունքի մասին, որ «Երկինքն ու մարդկությունը նույն ենթյունը կամ նույն մարմինն ունեն» (թյան ժեն ի թի): Այս բոլոր մարդիկ պաշտպանում էին մի գաղափար՝ հասնել «Երկնքի ու մարդկության միասնության» (թյան ժեն հե ի) իդեալական վիճակի և այդպիսով իրագործել «ազգին ապահովել լավ կառավարությամբ, աշխարհին՝ կարգուկանոնվ» խոսքերը (ջի գուու փին թյանսյա). մարդու տեսանկյունից (ժեն) մենք պետք է նարում գիտակցենք Երկնքի սկզբունքը, իսկ որա համար պետք է զարգացնենք մեր իսկ բարոյական չափանիշները, որպեսզի հասնենք «գիտելիքի ու գործողության միասնության» (ջի սին հե ի) բարձունքին և ինչպես կարգավորենք, այնպես էլ դաստիարակենք մեր միտքն ու ենթյունը: Միտքն ու ենթյունը սնելու և կարգավորելու այս ուսմունքի տեսանկյունից Սուն-Մին դինաստիաների լիսյուեն ևս մեկ անգամ ինչ-որ ձևով կապվեց սյույան գունֆու գաղափարին (կարգապահության և դաստիարակելու վարժություններ կամ ջանքեր), որը պաշտպանում էր Չան բուրյայականությունը: Կարևորագույն խնդիրը բարոյական կամ եթիկական պրակտիկայի նպատակն էր, որը լիսյուեի տեսանկյունից վերաբերում է ոչ թե անհատի՝ Բուդդա դաշնալուն, այլ նրա՝ ներդաշնակ հասարակության իդեալը իրագործելուն: Սուն և Սին դինաստիաներում լիսյուեն քննադատում էր բուդդայականությունը, բայց նաև որոշ գաղափարներ էր վերցնում բուդդայականությունից և միաձուլում իր սեփական ուսմունքների հետ՝ չինական փիլիսոփայությանը տրամադրելով՝ պետի լիարժեք գոյաբանական տեսություն, արժեքի տեսություն և լեబենսփիլօսօրի (կամ կյանքի փիլիսոփայության) համակարգ: Այսպիսով, Երկու Չան դինաստիաներից ի վեր մինչև Սուն և Սին դինաստիաներ՝ չինական փիլիսոփայությունը, ներմուծված մշակույթի ազդեցության ներքո, իրագործեց «դրականի և բացասականի համադրման» իր առաջին սիլոգիստական գործնթացը (ժեն ֆան-հե), և սա խթանեց չինական փիլիսոփայության հետագա զարգացումը: Ի՞նչ բացահայտումներ կարող ենք անել այս գործընթացից: Ես հավատացած եմ, որ մենք կարող ենք սովորել առնվազն չորս բան:

(1) Չինական մշակույթի կողմից հնդկական մշակույթի յուրացումը տևել է մի քանի դար: Սա ապացուցում է, որ ներմուծված մշակույթի մշակութային ավանդույթի յուրացումն ու միաձուլումը չի կատարվում մեկ օրվա ընթացքում: Դրա համար անհրաժեշտ են որոշ ժամանակ և կոնկրետ պայմաններ: Ինչ վերաբերում

Է հնդկական մշակույթին, առաջինից մինչև ի հններորդ և տասներորդ դարերը հնդկական բուդդայականությունը մեծ մասսայականություն էր վայելում Չինաստանում, բայց միևնույն ժամանակ Չինաստանի ավանդական մշակույթը նաև դրսևորում էր իր չափազանց մեծ կենսական ուժը: Վերը նշված երեք փուլերից յուրաքանչյուրում Չինաստանի ավանդական մշակույթի կենսական ուժը դրսևորվում էր՝ անկախ նրա գտնվելու վայրից և արժեքից. բացի այդ, սա հստակ ցույց է տալիս այս ներմուծված մշակույթը իշխանարքը ընդունելու, յուրացնելու և միաձուլելու ունակությունը: Յետևարար, մենք հանգում ենք մի վիճակի, երբ մշակույթը «ազատական» (քայֆան) վերաբերմունք է որդեգրում ներմուծված մշակույթի հանդեպ. սա ապացուցում է այն փաստը, որ այս ազգային մշակույթն ինքնին հղոր կենսական ուժ ունի: Այս մշակույթի արագ զարգացման կարևոր պայմանը ներմուծված մշակույթն ամբողջությամբ կլանելու և նրա հետ միաձուլվելու ունակությունն է: Այն ազդեցությունը, որ ներմուծված մշակույթը թողնում է տեղական մշակույթի զարգացման վրա, նոր խթան է դառնում: Եղր ներմուծված մշակույթը ծեռնոց է նետում կենսական ուժով օժտված մշակույթին, վերջինս ոչ միայն չի մերժում, այլև յուրացնում է այն, որպեսզի իր իսկ զարգացման գործընթացն ավելի արագ ու ավելի առողջ ընթանա: Յետևարար, այնպիսի գաղափարներ, ինչպիսիք են «սեփական մշակութային չափանշների պահպանությունը» (բեն վեյ վենհուա) կամ «ազգային եռեթենականությունը» (գուր ցու ջուի) ոչ միայն վնասակար են ազգի մշակույթի զարգացման համար, այլև այդ ազգային մշակույթի անկաման դրսևորումն են:

(2) Մենք միայն այսօր ենք հասկանում մեր երկրի բնիկ մշակույթի և հնդկական մշակույթի շփումից առաջացած անթիվ երևույթների ուսումնասիրությունը: Պատմության զարգացման ընթացքում մարդիկ դա չին հասկանում: Երբ մենք այսօր ուսումնասիրում ենք զարգացման այս գործընթացը, դիտարկում ենք հետևյալ երևույթը. այն փուլը, որն անմիջապես հաջորդում է օտար մշակույթի ներմուծմանը, հաճախ առաջ է գալիս ինքնարերաբեր, ինչ-որ ձևով հարմարվում է տեղական մշակույթին պահանջներին և կապող, միավորող կամուրջներ է գտնում իր և բնիկ մշակույթի միջև: Օրինակ, Յան դինաստիայում բուդդայականությունը կենտրոնանում էր այնպիսի երևույթների քարոզի վրա, ինչպիսիք են հոգու անխախտելիությունը (ծին լին բու մյե) և պատճառ-ազդեցություն-հատուցում (ին գուր բառ ին) հասկացությունը, իսկ հետազայտ հարմարվեց նաև Վեյ-Զին դինաստիաների սյուանսյու մետաֆիզիկայի պահանջներին՝ այսպիսով կյանքի կոչելով այսպես կոչված ֆո սյուանը (բուդդայական մետաֆիզիկա): Այս երևույթը պատահական չէ: Արդյո՞ք մենք կարող ենք դիտարկել, որ սա ընդհանուր կամուն կամ օրենք է: Կարծում եմ՝ կարող ենք և պետք է այդպես վարդենք: Եթե ներմուծված մշակույթը չի արմարվի տեղական ավանդական մշակույթին (գուցե պետք է ասել՝ ավանդական մշակույթի որոշ հատվածներին), բայց փորձի գրավել նրա տեղը, այն պետք է ամբողջությամբ մերժի ավանդական մշակույթը: Սա նշանակում է մասնաւել պատմությունը և այն բաժանել հատվածների՝ մոռանալով այն հոգևոր սյունը, որի վրա երկար ժամանակ հենված է եղել ազգի գոյությունը: Այս պայմաններում ներմուծված մշակույթը պարտավոր է ուսումնասիրել այն ազգի կամ երկրի մշակույթը, ուր այն ներմուծվել է. այս մշակույթը չունի արմատներ և այս ձևով չի կարող երկար շարունակել իր գոյությունը: Մյուս կողմից, ներմուծված մշակույթի մուտքը գործելուց անմիջապես հետո մենք կարող ենք որոշակի

ընդհանրություններ հայտնաբերել նրա և բնիկ մշակույթի միջև, որպեսզի ներմուծված մշակույթն արագորեն և ավելի մեծ հաջողությամբ հարմարվի այն ազգի կամ երկրի զարգացնան չափանիշներին, ուր այն ներմուծվել է: Այս դեպքում այն ոչ միայն կօգնի հարստացնել ու զարգացնել բնիկ մշակույթը, այլև կստիպի, որ բնիկ մշակույթը ներմուծված մշակույթի ազդեցության ներքո ծերք բերի իր զարգացնան ուղղությունները փոխելու որոշակի հնարավորություններ:

(3) Յուրաքանչյուր մշակույթ պետք է ունենա իր բնութագիրը, որով այն տարբերվում է այլ մշակույթներից: Եթե այն գոյություն է ունեցել լոկ որպես յուրահատուկ մշակույթ, ապա պետք է պահպանի հիմնական առանձնահատկությունները, այլապես շուտով կվերածվի պատմության մասունքի և չի կարողանա պահպանել իր արդյունավետ գոյությունը՝ որպես ժամանակակից մշակույթ: Յնդկական բուդդայականության համեմատ՝ Զինաստանի ավանդական մշակույթի ամենաակնառու առանձնահատկությունն այն է, թե նա ինչպես է մարդկանց սովորեցնում իրական կյանքում իրագործել չի գույ փին թյանյա իրեալը: Ժուշի հոգու (աշխարհիկ կյանք մուտք գործելու) այս տեսակը խիստ տարբերվում էր հնդկական բուդդայականության չուշի (հնքն իրեն հեռացնել աշխարհիկ կյանքից) գաղափարից: Զինաստան մուտք գործելուց հետո հնդկական բուդդայականությունը խոր ազդեցություն ունեցավ չինացի ժողովրդի վրա և, անշուշտ, բազմաթիվ առօւմներով փոխեց նրանց կյանքը, բայց ներմուծված հնդկական մշակույթին չհաջողվեց փոխել չինական մշակույթի ժուշի հիմնական ոգին: Այսպիսով, որպես անկախ մշակութային համակարգ՝ Զինաստանի մշակույթը շարունակում էր պահպանել գոյությունը և զարգանալ: Այն հարցը, թե արդյոք Զինաստանի այս ավանդական մշակույթը կարող է այսուհետ զարգանալ, կախված է երկու պայմանից: առաջինը, այն պետք է կարողանա պահպանել իր հատուկ նկարագիրը, և, երկրորդ, պետք է բավական խիզախ լինի, որպեսզի կլանի ներմուծված մշակույթը և այն համապատասխանեցնի իրական հասարակական կյանքի զարգացնան պահանջներին: Առաջին կետը ցույց է տալիս, թե այն որպես մշակութային ավանդույթ ինչպիսի յուրահատուկ արժեք ունի ողջ մարդկային քաղաքակրթության համար: Եթե այս մշակութային ավանդույթը չկարողանա պահպանել իր յուրահատուկ նկարագիրը, ապա կանհետանա պատմությունից: Երկրորդ կետը ցույց է տալիս, որ կենական ուժով օժտված մշակույթը, պահպանելով իր հատուկ նկարագիրը, կարող է զարգացնել ու կլանել նոր իրողություններ: Եթե դա հաջողվի, ապա այն անպայման կզարգանա: Բայց եթե այն կորցնի նոր իրողություններ կլանելու իր ունակությունը, ապա չի կարող շարունակել գոյությունը լոկ իրեն հատուկ բնույթը պահպանելով: Զինաստանի ավանդական մշակույթի զարգացնան պատմության տեսանկյունից դիտարկելիս կարելի է ասել, որ այն բավարարում է այս երկու պայմանը:

(4) Եթե հնդկական մշակույթը մուտք գործեց Զինաստան, ինչ-որ փուլում այնպիսի տպավորություն ստեղծվեց, որ բուդդայականության ազդեցությունը հասարակական կյանքի վրա այնքան մեծ է, որ այն դուրս է մղում բնիկ ավանդական մշակույթը: Օրինակ, «Սույ շի» (Սույ դինաստիայի պատմություն) գրքի «Զին զի զի» (Գրքերի և փաստաթղթերի արձանագրություն) գլուխը պատմում է մեզ, որ արքաների ու կայսրերի աջակցության շնորհիկ բուդդայականությունն այնքան է բարգավաճել որ «մարդիկ մրցում էին՝ իրենց երկրպագությունն ապացուցելու համար, իսկ բուդդայական սուրբ գրքերի թիվը հասարակության մեջ տասյակ

Կամ նույնիսկ հարյուրավոր անգամ ավելի շատ էր, քան Վեց դասականները։ Դետևաբար, գաղափարախոսական մշակույթի զարգացումը Սույ-Թան ժամանակաշրջանում մեծապես պայմանավորված էր բուդդայականության զարգացմանը։ Ժամանակի բազմաթիվ կարևոր մտածողներ բուդդայական վաճականներ էին, իսկ որոշ բուդդայական աղանդներ ներգրավված էին չինական փիլիսոփայության զարգացման մեջ։ Սա թերևս անխուսափելի էր երկու տարբեր ավանդական մշակույթների հարաբերությունների որոշակի փուլում, երբ նրանք արդեն որոշ ժամանակ սերտ շիման մեջ էին միմյանց հետ։ Այնուամենայնիվ, այստեղ նշանակալի հանգամանք է այն, որ չինական բուդդայական աղանդների զարգացումը չէր կարող ստիպել, որ Չինաստանի հասարակական կյանքը հոգևոր ոլորտում հարմարվի հնդկական մշակույթի պահանջներին, այլ, հակառակը, բուդդայականությունը գնում էր չինականացման ուղղությամբ։ Մասնավորապես Չան աղանդի առաջացումը թուլացրեց բուդդայականության դիրքերը՝ որպես կրոն։ Այն ոչ միայն չէր ստիպում արտօսանել սուտրաներն ու երկրպագել Բուդդային, այլ նույնիսկ բարեպաշտներին թույլ էր տալիս հանդիմանել Բուդդային, վարպետներին և ցեղապետներին։ Բուդդայականությունը ենթադրում էր, որ ամենօրյա կյանքում հնարավոր է իրագործել Բուդդա դառնալու իդեալը՝ «անկախ նրանից՝ «ջուր ես բերում, թե վառելափայտ կոտրում, կյանքը հրաշալի է»։ Դետևաբար, միայն մեկ քայլով մարդը կարող է դարնալ սուրբ կամ ինաստուն, եթե «որդիական բարեպաշտությամբ ծառայի հորը, իսկ հավատարմությամբ՝ միապետին»։ Սա նշանակում էր, որ Չինաստանի ավանդական մշակույթը կարող էր գրադեցնել բուդդայականության տեղը։

Ներկայում, պատմական զարգացման պահանջների արդյունքում, մեր օրակարգում դարձյալ հայտնվել է այն հարցը, թե չինական մշակույթն ինչ ուղղությամբ պետք է զարգանա։ Մենք դարձյալ բախվում ենք ամենատարբեր արևմտյան գաղափարների և մտքի միտումների ներգործությանը։ Ինչպես վերանայենք Չինաստանի ավանդական մշակույթի արժեքը։ Ինչպես ս բարեփոխենք ու զարգացնենք, որպեսզի այն հարմարվի արդիացման ընթացիկ միտումներին։ Այս խմբիները մեզ մղում են շարունակել պատմության այս նոր դասերի ուսումնասիրությունը։ Բուդդայականության՝ Չինաստան մուտք գործելու պատմությունից մենք բացահայտեցինք, թե ինչ տեղի ունեցավ, երբ Չինաստանի մշակույթը ենթարկվեց ներմուծված մշակույթի ներգործությանը։ այս հանգամանքն արժեքավոր հղում է մեզ համար, երբ փորձում ենք ուսումնասիրել, թե այսուհետ զարգացման ինչ ընթացք պետք է ունենա Չինաստանի մշակույթը։

## ԳԼՈՒԽ 22

### Լուսավորականությունը և նրա բարդ ուղևորությունը Չինաստանում<sup>128</sup>

Այսօր Չինաստանում նկատվում է երկու ինտելեկտուալ և ազդեցիկ միտում. (1) «ազգային էության» կամ «ազգային բնութագրի» ձգտում և (2) կառուցողական հետմոդեռնիզմ: Այս երկու միտումները, մարքսիստական մտածողության առաջնորդմամբ, կարող են ոչ միայն արմատավորվել Չինաստանում, այլև այնպես զարգանալ, որ Չինաստանին հաջողվի համեմատաբար հեշտությամբ իրականացնել իր «Առաջին լուսավորականությունը», այն է՝ արդիացումը, ինչպես նաև արագորեն մուտք գործել «Երկրորդ լուսավորականության» շրջան՝ դաշնալով հետմոդեռնիստական հասարակության չափանիշների կրողը:

#### 22.1 Տասնութերորդ դարի եվրոպական «Լուսավորականության շարժումը» և տասնվեցերորդ դարի՝ Մին դինաստիայի ուշ շրջանի «Ստքի լուսավորական միտումը» Չինաստանում

Կանտը (1724-1804) պաշտպանում էր «քանականությունն օգտագործելու հանդմություն» հասկացությունը՝ որպես «Լուսավորական շարժման» նշանաբան: Նետարար, կարող ենք ասել, որ ռացիոնալությունը սկիզբ դրեց Եվրոպայի լուսավորականության շարժմանը: Այս շարժման մտածողներն օգտագործում էին «քանականությունը»՝ քրոմեական կաթոլիկ եկեղեցու սնահավատությունը և աշխարհիկ քնահաճույքները չեզոքացնելու համար, ինչը հանգեցրեց Եվրոպական կապիտալիստական դասակարգային հասարակության ստեղծմանն ու նրա հեղափոխական շարժումներին: Այս շարժումը ոչ միայն հանգեցրեց բնական գիտությունների մեջ վերելքի, այլև ազդեցություն ունեցավ արևոտությի հասարակական գիտությունների վրա (քաղաքագիտություն, տնտեսագիտություն, սոցիոլոգիա և այլն)՝ ամրացնելով մտավոր հետազոտությունների հիմքերը: Եվրոպական փիլիսոփայության, քաղաքագիտության, տնտեսագիտության, իրավագիտության ու սոցիոլոգիայի տեսությունները հանգեցրին 1789 թվականին Ֆրանսիայում կապիտալիստական դասակարգի հեղափոխությանը, որը տապալեց ֆեոդալական կարգերը: Մինչ 1793 թվականը «Մարդու իրավունքների և քաղաքացիների իրավունքների հոչակագիրն» արդեն ընդունվել էր, և այն տաճում էր դեպի սահմանադրական միավետություն: Ֆրանսիական կապիտալիստական դասի հեղափոխական շարժումը տապալեց Եվրոպական ֆեոդալիզմը և կապիտալիստական դասակարգի հեղափոխական շարժումները հիմնելու ընթացքում ենթարկվեց այլ Եվրոպական ազգերի հզոր ազդեցությանը: Այսպես սկսվեց Եվրո-

128. Յոդվածն առաջին անգամ հրապարակվել է Շամհայում (文汇报 (Վեն Յուեյ Բաո), 2011 թվականի նոյեմբերի 14-ին: «Վեն Յուեյ Բաոն» հիմնադրվել է ձախ մնավորականների կողմից 1938 թվականին: Թերթի տպաքանակն օրական ավելի քան երկու միլիոն օրինակ է: Գործընթացային հեռանկարներ, գարուն 2012, 34 (2): 1, 3-5:)

պական լուսավորականությունը, որն ի վերջո հանգեցրեց Եվրոպական կապիտալիստական երկրների ստեղծմանը (հանրապետական կառավարում) և ժողովրդավարական հաստատությունների հիմնադրմանը:

Ներկայում, Չինաստանի գիտական շրջանակները հաճախ են հղում անում տասնվեցերորդ դարին ու Մին դինաստիային, որտեղ հակաֆեոդալական ամբողջատիրական բռնապետական կարգը վերահսկում էր չինական հասարակությունը՝ «երկնային կարգ» անվան տակ, և իր ծիսական հասարակական կյանքում «վերացնում էր մարդկային ամբարտավանությունը»: Հակաֆեոդալական շարժումը հարձակվում էր ճգնակյացության, անձի վսեմացման գաղափարների վրա և բարձրացնում էր այն անհատականության ոգին, որը չի հարմարվում որևէ մեկին կամ հասարակական նորմերին, իսկ ցանկասիրությունը դիտարկվում էր որպես նոր արժեք և մարդասիրական ոգու իրագործում. այս շարժման բնույթը նկարագրելու համար հաճախ կիրառվում էին այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են՝ «լուսավորականության միտում», «լուսավորական միտք», «լուսավորականության մշակույթ», «լուսավորականությունը՝ ըստ էության» և այլն: Որոշ գիտնականներ Մին դինաստիայի ուշ շրջանի հակաֆեոդալական ծիսական հանրայնացումը համարում էին «լուսավորական մտածողություն» կամ լուսավորականությունը՝ որպես գաղափարախոսության տեսակ»: Նրանք առաջ էին քաշում 泰州 թայ Չոռու դպրոցի ճյուղը, որը ներկայացնում էր դրամատուրգ Թան Սյանցուն (湯顯祖, 1550–1616). Վերջինս ընդգծում էր «ներքին զգացմունքի»՝ որպես «խոր լուսավորված մտածողության» կարևորությունը: Սա կարող է հանգեցնել նրան, որ մարդիկ տասնվեցերորդ դարի Մին շրջանի հակաֆեոդալական շարժումը (որը մղվում էր ընդդեմ ծիսական հասարակության և հանուն անհատի ազատագրման) նմանեցնեն տասնութերորդ դարի Եվրոպայի լուսավորականությանը: Սակայն, իմ կարծիքով, վերը նկարագրված այս երկու շարժումները տարբերվում են ոչ միայն արտաքնապես, այլև բնույթով և էությամբ: Տասնութերորդ դարի Եվրոպական լուսավորական շարժումը բանականությանը կենտրոնական տեղ հատկացնելու կոչի արձագանքն էր, մինչդեռ տասնվեցերորդ դարի Մին դինաստիայի ուշ շրջանի հակաֆեոդալական շարժումն արձագանքում էր մարդու ներքին զգացմունքն ազատագրելու կոչին: Առաջինի արդյունքները խոշոր հայտնություն էին բնական գիտություններում, հասարակական գիտությունների հիմքերի հաստատման և կապիտալիստական և ժողովրդավարական հասարակությունների համակարգերի համար: Երկրորդ շարժման արդյունքները այլ են: Չնայած փոքրաթիվ մտածողներ դեռևս պաշտպանում էին հակաֆեոդալական ամբողջատիրական բռնապետական կառավարումը, Ցինի կողմից Չինաստանի նվաճումն անրապնդեց ֆեոդալական հսկողությունը չինական հասարակության վրա և ճնշեց այն գիտնականներին, որոնք քննադատաբար էին վերաբերվում ֆեոդալական համակարգին, և, ի վերջո, հակաֆեոդալական հոսանքը տեղի տվեց:

## 22.2 Տասնիներորդ դարակեսի չինական հասարակությունն արևմուտքի «Լուսավորականության» տիրույթում և նրա պայքարը՝ զանազան խոչընդոտմեր հաղթահարելու ճանապարհին

1840-ական թվականներին, երբ Չինաստանը Պարտվեց Ափիոնային առաջին պատերազմում, կայսերական արևմուտքի (ինչպես նաև արդյունաբերացված արևելքի, ինչպես դիտարկում են ճապոնիայում) հետ հակամարտություններում, չինացիները հասկացան, որ իրենց երկիրը թույլ է, չինական կառավարությունը՝ ապաշնորի ու կաշառակեր, մինչդեռ արևմուտքի երկրների կառավարություններն ուժեղ են ու առաջադեմ: Խորքային պատճառն այն էր, որ չինական մտածողությունը հնացած էր, իսկ նրա կառավարությունը՝ շփոթված և անուժ: Չինաստանի առաջադեմ մտավորականների մի փոքր խումբ, այդ թվում և կառավարության պաշտոնյաներ, ենթարկվում էին Լուսավորականության պասիվ ազդեցությանը, որը գալիս էր ուղղակիորեն արևմուտքից, նրա մտածողությունից ու քաղաքական համակարգից: Այս ժամանակահատվածում արևմուտքի գաղափարներն ու քաղաքական համակարգը Չինաստան մուտք էին գործում հրապարակումների և թարգմանությունների միջոցով: Արևմուտքի կապիտալիստ մտածողները տարածում էին ժողովրդավարությունը, ազատությունը, մարդու իրավունքների և մտածողության բոլոր տեսակները, որոնք ընդգծում էին հավասարությունը: Այս ամենը նպաստում էր մարդկության առաջընթացին, որը թեև դանդաղ, բայց, անկասկած, հսկայական ազդեցություն ունեցավ Չինաստանի վրա:

Չինաստանի բանինաց մարդիկ հասկանում էին, որ արևմտյան երկրների ուժը հիմնված է գիտության և տեխնոլոգիայի առաջադեմ ինացության վրա: Յետևարար, նրանք պաշտպանում էին «սովորի թշնամուդ ուժը, որպեսզի վերահսկես նրան» գաղափարը, ապա հիմնեցին այսպես կոչված «սովորենք արևմուտքից» շարժումը, որը վերաբերում էր գիտությանը և տեխնոլոգիային: Բայց այս շարժումը չէր կարող անցնել 中学为体, 西学为用 -ի Զուն այուն վեյ թի, սի սյուն վեյ յուն հասկացության («Չինական էություն, արևմտյան կիառություն») սահմանները: Այն կարող էր անջատվել 8ին դինաստիայի ամբողջատիրական բռնապետական կառավարման հիմքից: Ավելի առաջադեմ մտավորականներն ու կառավարության պաշտոնյաները Լուսավորականության իրենց ավելի խոր ըմբռնման և կառավարման պայմանների տեսանկյունից պնդում էին, որ Չինաստանը պետք է փոխի իր քաղաքական համակարգը, եթե ուզում է լինել ուժեղ և տնտեսապես կենսունակ երկեր: Փոփոխություններ մտցնելու նպատակով փորձ արվեց բարեփոխումներ անցկացնել 1898 թվականին ընդունված սահմանադրության միջոցով, բայց դա ոչ մի ազդեցություն չունեցավ, և 8ին դինաստիայի կառավարության ուղղահայց ճնշման ներքո բարեփոխումներ իրագործելու թույլ ջանքերն ամրողությամբ ծախտողվեցին:

Այսպիսի անելանելի իրավիճակում դրկտոր Սուն Յաթսենը 8ին դինաստիայի կառավարությունը տապալելու նպատակով հեղափոխություն նախաձեռնեց: 1911 թվականի հեղափոխությանը հաջողվեց վերացնել ընտրախավային ֆեռդալիզմը և հիմնել Չինաստանի Յանրապետությունը: Չնայած Սունի հեղափոխությունը հաջողություն ունեցավ, այն չլուժեց չինական հասարակության հիմնարար խնդիրը: Մի կողմից, Չինաստանը դեռևս կայսերական երկրների ճնշումների տակ էր, մյուս կողմից, երկու փորձ արվեց վերականգնել հին կայսերական

համակարգը, բայց մտքի հին քարացած համակարգն ու իշխանությունը շարունակում էին դիմադրել և արգելակել բարեփոխման ցանկացած փորձ: Չինաստանի ժողովրդավարական Հանրապետությունն իրականում այդպես էլ չիմնադրվեց, և իրողություն է այն, որ չինացի ժողովուրդը պետք է լուծի այս վաղեմի խնդիրները:

### **22.3 Չինաստանի Լուսավորականությունը և նրա «Գիտություն և ժողովրդավարություն» կարգախոսը. արդյո՞ք դրանք իրականություն են դարձել**

Ինչ վերաբերում է Մայիսի չորսի շարժմանը (1919), ապա ըստ չինացի մտավորականների՝ գոյություն ունեն բազմաթիվ տարրեր մեկնաբանություններ, և դրանք այնքան շատ են, որ ես չեմ կարող ներկայացնել բոլորը: Բայց նաև չեմ կարող ասել, որ ոչ մի կապ չկա այս միանգամայն տարրեր բնույթ ունեցող երկու շարժումների՝ Մայիսի չորսի և Նոր մշակույթի շարժման միջև: Գուցե կարող ենք ասել, որ առաջինը հակաավանդական մտածողության և մշակութային լուսավորականության մի տեսակ է: Երկրորդը կարելի է դիտարկել՝ որպես ազգը փրկելուն ուղղված շարժում: Միայն նոր մշակութային շարժումը կարող է չինացի ժողովրդին հնարավորություն տալ ունենալ նոր հեռանկարներ և նոր արժեհամակարգ, ինչպես նաև գիտակցել, թե որքան հետ է իրենց երկիրը, և սա, անկասկած, հույս է տալիս, որ ապագայում Չինաստանը տնտեսապես կամրանա և կիարտանա:

Բացի այդ, Մայիսի չորսի շարժումը և նրա հայրենասիրական բնույթը չինացի ժողովրդին հնարավորություն է տալիս գիտակցել, որ կառավարությունը պետք է լինի ժողովրդավարական և թույլ տա մտքի ազատություն՝ հնարավոր դարձնելով լուսավորականության իրագործումը Չինաստանի հասարակական կյանքում: Յետևաբար, թե՛ Նոր կյանքի շարժումը, թե՛ Մայիսի չորսի շարժումը նույն գործընթացի անբաժան մասերն են: Լուսավորականությունն առաջ է քաշում փրկության հարցը, իսկ փրկությունն ամրացնում է Լուսավորականության դիրքերը: Այս ընթացքում 国民党 Գուլոմինդանը (Ազգայնական կուսակցություն) հանդես եկավ «Մեկ առաջնորդ», մեկ գաղափարախոսություն և մեկ կուսակցության բռնապետություն» գաղափարով, ինչը հանգեցրեց երկու շարժումների հակադրության: Ազգի փրկությունն որպես կենտրոնական գաղափար օգտագործելուն գուգահեռ ժողովրդավարությունը, ազատությունը, մարդկային իրավունքները ճնշվում էին: Այս պատճառով էլ ազգի փրկության գաղափարը նախորդում էր լուսավորականությանը, որովհետև լուսավորականություն կարող է լինել միայն ազգի փրկության պարագայում: Այսպիսին էր լուսավորականության և ազգի փրկության մակերեսային ընկալումը տեսական և գործնական մակարդակում: Այս պահին մեզ անհրաժեշտ է նկատի առնել թե՛ Նոր կյանքի շարժման, թե՛ Մայիսի չորսի շարժման լուսավորականության ձգումները: Արդյո՞ք դրանք գիտակցել են ներկայիս հասարակության մեջ: Սա, անշուշտ, չափազանց մեծ խնդիր է: Յետևաբար, այս հարցի առնչությամբ ես մի օրինակ կբերեմ:

1985 թվականին Շենչենում մասնակցում էի «Մշակույթի հարցերը համակարգող ընկերակցության» գիտաժողովին: Այս գիտաժողովին մասնակցում էին 20-ից ավելի գիտնականներ Պեկինից, Ուհանից, Սյանից ու Շենչենից: Գիտաժողո-

Վի ընթացքում մենք եկանք այն ընդհանուր եզրահանգման, որ ընկեր Դեն Սյաո-փինի կողմից տնտեսական զարգացման առաջարկը կենտրոնական դեր ունի, և որ չորս արդիացումների իրագործումը ճիշտ որոշում է. մենք լիովին աջակցում էինք դրան: Միևնույն ժամանակ, բարձրացնում էինք հետևյալ հարցը՝ արդյոք արդիացման խնդիրը պետք է ընկալվի միայն արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության ու տեխնոլոգիայի և ազգային պաշտպանության տեսանկյունից, որովհետև մեր պատկերացման՝ առանց մտքի արդիացման այս գործընթացը ոչ մի հաջողություն չի ունենա: Այս հարցը մեզ ստիպեց հասկանալ, որ լուսավորականության գործընթացը պետք է շարունակվի և դեռ շատ անելիք ունի Չինաստանում: Այլ կերպ ասած՝ չինական հասարակության արդիացումն ամբողջական գործընթաց է և ներառում է հասարակության բոլոր հատվածները: Լուսավորականությունը մեզ անհրաժեշտ է՝ որպես շարունակական, հարատև գործընթաց:

## 22.4 Ո՞րն է Լուսավորականության տեղը չինական հասարակության մեջ

Ավելի քան 160 տարի է անցել այն ժամանակից, երբ արևմուտքի լուսավորականության միտումը մուտք գործեց Չինաստան: Սակայն Չինաստանին դեռևս չի հաջողվել ամբողջությամբ իրագործել արդիացման գործընթացը: Այդ հանգամանքը մեծամասամբ պայմանավորված է նրանով, որ նախորդ դարի վերջին հատվածում՝ 1990-ականներին, Չինաստանում ի հայտ եկավ երկու միտում. (1) միակարծության (ի հակադրություն բազմակարծության) դիմադրությունը, որի մասին վկայում է հետմոդեռնիստական ուղղության՝ մոդեռնիզմի թերությունների քննադատությունը: (2) չինական մշակութային ավանդույթի վերածնունդը՝ ի խույզ չինական ազգային երթյան կամ նկարագրի: Արևմուտքում ավելի քան երկու դար տևած զարգացումից հետո մոդեռնիզմի մեջ ի հայտ եկան ամենատարբեր թերություններ, որոնք դրսարվեցին «գիտությունը՝ որպես դարման» սկզբունքի մերժմանը, ինչն էլ հանգեցրեց «քանականությունը՝ որպես գործիք», գաղափարին, ինչպես նաև բնական միջավայրի քայլայնանը: Բացի այդ, անկառավարելի տնտեսական զարգացումը, որը բնութագրվում էր հարստության և իշխանության կուտակմանը ու ազահությամբ, սուր հակասություններ և փոխադարձ թշնամություն առաջ բերեց անձանց ու ազգերի միջև: Այս ամենի արդյունքը մարդկային բարոյականության մերժումն էր: Ինչ վերաբերում է մարդկության փրկությանը, ապա արդիության բացասական հետևանքները պետք է վերացվեն:

1960-ականներին ապակառուցողական հետմոդեռնիզմի միտումը դարձավ հետմոդեռնիստական շարժման մասը և վերլուծում էր մոդեռնիզմի թերությունները (ի հակադրություն միակարծության և նրա հեղինակավոր հիմնավորումների), և բոլոր հեղինակությունների ջախջախման հարցը: Անկասկած, այն իր ներդրումն ունի մարդկության պատմության մեջ, սակայն ապակառուցողական հետմոդեռնիզմը չէր կարող արդյունավետ կառուցողական այլընտրանք լինել: Այդ պատճառով էլ նախորդ դարի վերջին գործընթացային մտածողության միջոցով ի հայտ եկավ կառուցողական հետմոդեռնիզմը, որը բացահայտեց Առաջին լուսավորականության (այն է՝ լուսավորականության միտումները տասնյոթերորդ և տասնութերորդ դարերից ի վեր) երթյունը և նրա բացասական արդյունքները:

Երկրորդ լուսավորականության մասնակից այս մտածողները պնդում էին, որ հետմոդեռնիստական ժամանակաշրջանը հարմար պահ է մարդու և մարդու, մարդու և բնության միջև ներդաշնակություն հաստատելու և հետմոդեռնիստական աշխարհի կարևորությունը հասկանալու համար: Այս նոր դարաշրջանում նրա նպատակը կյանքի, բանական արարածների և բնական կարգի կառուցումն է: Ըստ նրանց՝ եթե Արածին լուսավորականության նշանաբանը «սեփական եսի ազատագրում» էր, ապա երկրորդ լուսավորականության նշանաբանը պետք է լինի «ուրիշների մասին հոգ տանելը, բազմազանությունը հարգելն ու պատվելը»: Ներկայում կառուցողական հետմոդեռնիզմի ազդեցությունը դեռ թույլ է արևմուտքում, բայց ես հավատացած եմ, որ ժամանակի ընթացքում այն մեծ կարևորություն ծեռք կրերի թե՛ արևելքում, թե՛ արևելքում:

Չինաստանում ազգային խառնվածքի որոնումները դուրս են եկել չինացի ժողովրդի գաղափարախոսության սահմաններից: Չինացի ժողովրդի վերածնունդը պետք է հիմնվի նրա մշակույթի վերածննդի վրա: Յետևարար, մեր խնդիրն է՝ թողնել անցյալի մշակութային ավանդույթի կույր քննադատությունը և վերադառնալ ընթացիկ պայքարին, որպեսզի պահպանենք 5000 տարվա փառավոր պատմություն ունեցող չինական մշակույթը, և որպեսզի այն հավուր պատշաճի բարեփոխսվի մեր ժամանակի շնչին համընթաց: Մշակութային արժեքների այսպիսի վերանայումը վերջ դնի բնական աշխարհի շարունակական ոչնչացմանը: Չինացի գիտնականների մի խումբ պաշտպանում է 天人合一 թյան ժեն հե ի «միավորված երկինք ու մարդ» դասական կոնֆուցիական գաղափարը: Սա կարող է նշանակել, որ մարդ արարածների և բնության ներդաշնակությունը բոլոր հարաբերությունների իմաստալից աղբյուրն է: Կոնֆուցիոսը պաշտպանում էր «Երկինքը ճանաչելու» սկզբունքը, որը նաև ենթադրում էր «Վախենալ երկնքից»: ճանաչել երկինքը նշանակում է ծիշտ օգտվել բնությունից, վախենալ երկնքից նշանակում է հարգել ու պաշտպանել բնական աշխարհը՝ որպես պարտականություն: Չինական կոնֆուցիական «միավորված երկինք ու մարդ» հասկացությունն արտացոլում է կառուցողական հետմոդեռնիզմի այն դիրքորոշումը, որ մարդ արարածներն ու բնությունը մեկ մարմնին են: Ավելի քան մեկ դար կոնֆուցիականությունը աղավաղելուց և քննադատելուց հետո այսօր Չինաստանի բանիմաց գիտնականները պաշտպանում են չինական մշակույթի վերածննդի, այդ թվում և Չինաստանում կոնֆուցիականության կարևոր կարգավիճակի վերականգնման գաղափարը: Գոյատևման և զարգացման իր նպատակներում Չինաստանն ինքնաբերաբար հեռացել է իր իսկ մշակութային ավանդույթից: Բոլորս գիտենք, որ կոնֆուցիոսի առանցքային խնդիրը ժեն սյուեն է 仁学 կամ «սովորել մարդ լինել»: Ֆան Ցին հարցնում է. «Ի՞նչ է 仁»: Կոնֆուցիոսը պատասխանում է 爱人 նշանակում է այժմն («սիրել մարդկանց»): Որտեղից է մարդկանց հանդեպ սիրո այս տեսակը (Մեծ ուսմունք): Եթե մեջբերենք Կոնֆուցիոսին, ապա 仁者 ժեն ջին («մարդը կան անձը») մարդ արարած է, որը մեծացնում է հարաբերությունների շրջանակները: Յարաբերությունների մեջ սերը առաքինություն է, որը ներհատուկ է մարդ արարածներին: Յարազատներին սիրելը այդ սիրո հիմքն է: Բայց ըստ Կոնֆուցիոսի՝ սերը հարաբերությունների մեջ չի կարող սահմանափակվել մարդու միջանձնային հարաբերություններով. այն պետք է եսից տարածվի ուրիշների, իսկ ավելի լայն շրջանակներում՝ սերը մտերմիկ հարաբերություններից

պետք է փոխանցվի ողջ մարդկությանը: Մենցիսսն ասել է, որ սերը պետք է տարածել մարդկության վրա, իսկ մարդկությունից՝ ամբողջ հասարակարգի վրա: «Սիրային կապերի» կոնֆուցիական եւթյունը կառուցողական հետմողեռնիզմի երկրորդ լուսավորականության և «ուրիշների մասին հոգ տանելու» զաղափարի ճշգրիտ համարժեքը չէ: Մեղեդիները կարող են տարբեր լինել, բայց թեման մեկն է: Այս շեշտերը միասին կարող են լուծել արդիականության բազմազան խնդիրները՝ պաշտպանելով նորի բոլոր գամձերն ու հասարակության բարությունը, միևնույն ժամանակ վերացնելով նրա բոլոր թերություններն ու բացասական հետևանքները:

Մենք լիովին իրազեկ ենք, որ Չինաստանում գոյություն ունեն գիտնականներ, որոնք ոչ միայն շարժվում են կառուցողական հետմողեռնիզմի սկզբունքներով, այլև սկսել են համագործակցել միմյանց հետ: Կառուցողական հետմողեռնիզմի ներկայացուցիչներին հետաքրքրում են ավանդական չինական մշակույթը, նրա արժեքը, ինչպես նաև նրա թողած ավանդի ըմբռնումը: Միևնույն ժամանակ, Չինաստանում գիտնականներն արդեն հետաքրքրվում են կառուցողական հետմողեռնիզմով, որը մարդկությանը հնարավորություն կտա դուրս գալ ներկայի բարդ ու անախործ իրադրությունից: Մարքսիզմի առաջնորդությանք այս երկու ինտելեկտուալ միտումները կարող են ձգտել օրգանական համադրությամ: Եթե այս հիբրիդային միտումն արմատավորվի և զարգանա Չինաստանում, գուցե Չինաստանը կարողանա իրագործել իր առաջին Լուսավորականությունը և համեմատաբար հեշտությամբ հասմի նաև արդիացման նպատակներին: Բացի այդ, Չինաստանը րոպե առաջ մուտք կգործի երկրորդ լուսավորականության շրջան ու կդառնա հետմողեռնիստական հասարակության չափանիշների կրող: Սա նշանակում է, որ ներկայիս իրականության դեպքում Չինաստանի լուսավորականությունը հարուստ աղբյուր կլինի մարդկային հասարակության զարգացման համար:

## ԳԼՈՒԽ 23

### Մշակութային բազմազանության գոյակցությունը. ներդաշնակության արժեքը բազմազանության պայմաններում<sup>129</sup>

#### 23.1 Ներածություն

Թեև ժամանակակից աշխարհում ոչ բոլոր հակամարտություններն են մշակութային բախումների հետևանք, այնուամենայնիվ, դրանք միանշանակ կապված են մշակութային ոլորտի հետ: Աշխարհում մշտապես բանավեճ է ընթանում մշակութային բախումների շուրջ, և սատ տարածված տեսակետի՝ մշակութային գոյակցությունը կարող է հանգեցնել ավելի մեծ փոխընթացքներ, հանդուրժողականության ու խաղաղության, իսկ մշակութային մեկուսացումն ու գերիշխանությունը (հեգեմոնիա)<sup>129</sup> քաղաքական բախումների: Երկու դեպքում էլ այս բանավեճն իր ներգործությունը կունենա քսանմենելորդ դարի մարդկության վրա: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո գաղութատիրության քայլայման պատճառով արևմտյան մշակութային իմպերալիզմն աստիճանաբար քայլայվեց, և աշխարհում խորացավ մշակութային բազմազանությունը: Վերջին հիսուն տարիների ընթացքում համաշխարհային առևտուի և հաղորդակցության ոլորտի զարգացումները հանգեցրին տարբեր ժողովուրդների, ազգերի ու տարածաշրջանների միջև ավելի հաճախակի մշակութային փոխազդեցության, և աշխարհը վերածվեց անբաժանելի ամբողջությամ: Համաշխարհային մշակույթի ներկայիս փուլում առաջացել է երկու տարբեր միտուն. որոշ արևմտացի տեսաբաններ, պաշտպանելով իրենց ավանդական շահերն ու սովորույթները, շարունակում են պահպանել արևմտակենտրոն հեռանկարը: Մյուսները, միևնույն ժամանակ որդեգրելով տեղաբնիկների ռոնանտիկ վերաբերնունքը անկախ կամ վերածնված ժողովրդի հանդեպ, հիմնում են ազգայնականությունը, որը կոչ է անուն վերադառնալ արժանական և պահպանել տեղական մշակույթն ու պահպանողականությունը՝ վերականգնելով անցյալի ավանդույթները: Որոշ արևելաասիացի գիտնականներ, տեսնելով, թե արևմտյան մշակույթը ինչ տառապանք է բերել ողջ աշխարհին, և նկատի առնելով անձանք իրենց դեմ գործադրված ճնշումները, նույնիսկ առաջարկում են մշակութային հեռանկար, որը կենտրոնանում է Արևելյան Ասիայի վրա: Այժմ մեր առաջ ծառացած խոշորագույն խնդիրն այն է, թե ինչպես թույլ չտանք, որ այս երկու հակադիր միտունները զարգանան և վերածվեն լայնամասշտար հակամարտության, և ինչպես վերացնենք հակասությունները: Միևնույն ժամանակ, մենք պետք է զգուշորեն վերաբերի մշակությունները:

129. Առաջին անգամ հրատարակվել է «Կուա վենհուա դույիուա» առաջին հատորում (Միջմշակութային երկխոսություն, հատոր 1) Յուն Դայյուն, խմբ. (Չանհայ. Չանհայ Վենհուա Շուրանշե, 1998): Թարգմանությունը հրապարակվում է հեղինակի թույլտվությամբ:

Մշակութային փոխազդեցության ուսումնասիրություններ Արևելյան Ասիայում. նոր մերուներ և հեռանկարներ, մարտ 31, 2012: 229-234

րին, որոնք կարող են ծագել Արևատյան և Արևելյան Ասիայի միջև՝ պայմանավորված մշակույթների և ավանդույթների տարբերություններով:

## 23.2 Ներդաշնակություն բազմազանության մեջ

Ինչպես կարող ենք տարբեր մշակութային ավանդույթներ ունեցող ժողովուրդներին, ազգերին ու տարածաշրջաններին հնարավորություն տալ համատեղ զարգանալ՝ միևնույն ժամանակ պահպանելով իրենց յուրահատկությունը, և այդպիսով ստեղծել ընդհանուր գիտակից միջավայր, որը կնպաստի մշակութային բազմազանության զարգացմանը: Կարծում եմ՝ բազմազանության մեջ ներդաշնակության (հե էր բութուն) չինական սկզբունքը դրա իրագործման արժեքավոր աղբյուր է:

Լու Չան կոմսի կառավարման 20-րդ տարվա (մթա.520 թ.) մասին «Գարնան և աշնան տարեգործերի» Ցույի մեկնարանությունը ներկայացնում է հետևյալ գրույցը Ցիի մարկիզ Չինի և Յան Ինի միջև: Ցիի մարկիզն ասում է Յան Ինին: «Արդյո՞ք միայն Լյանցու Չուն է [մարկիզի մտերիմ պաշտոնյա] ինձ հետ ներդաշնակ»: Յան Ինը պատասխանում է: «Չուն հարմարվում է պահանջներին: Ինչպես կարելի է ներդաշնակության (հե) հասնել հարմարվողականության (թուն) միջոցով»: Մարկիզն ասում է: «Արդյո՞ք ներդաշնակությունը տարբերվում է հարմարվողականությունից»: Յան Ինը պատասխանում է: «Այս: Ներդաշնակությունը նման է համեղ ապուրի բաղադրիչները խառնելուն: Խոհարարը բոցավառվող կրակի վրա մսի թանձի ապուր պատրաստելու համար օգտագործում է զանազան համեմունքներ, խառնում է դրանք, փորձում համը, ավելացնում, որ քողարկի թերությունները, և դատարկում է ավելցուկը: Ազնվականն ուտում է ապուրը, որ խաղաղությի միտքը: Կառավարչի ու նախարարի հարաբերությունները նման են սրան... Դժմա Չուն այսպես չի գործում: Չուն հավանություն է տալիս նրան, իճշին հավանություն ես տալիս դու, և մերժում է այն, ինչ մերժում ես դու: Սա նման է ջրի վրա ջուր ավելացնելուն: Ո՞վ կուտի այն ապուրը, որի միակ բաղադրիչը ջուրն է: Սա նման է միայն մեկ նոտա նվազող երաժշտական գործիքի: Ո՞վ կլսի այդ «Երաժշտությունը»: Նման բոլոր դեպքերում նույնությունը կամ հարմարվողականությունը (թուն) անընդունելի է: Նաև «Պետությունների տրամասություններ» (Գուլոյու) գործի «Ձենի տրամասություններ» գլխում հանդիպում ենք Շի Բոյի պատասխանը Ձենի Հուան դրսին (մթա. 771 թ.): «ԱՅՃՄ, զանազան նյութեր խառնելով (հե), իրականում կարող ենք բազմաթիվ երևույթներ ստանալ, մինչեւ նույն նյութից (թուն) իրերը լավ չեն պահպանվում: Մի նյութը մյուսի հետ հավասարակշռելը կոչվում է միախառնում: Այս ճանապարհով ստացված երևույթները հարուստ են ու երկարատև, բացի այդ, նյութերը բնական ճանապարհով են միախառնվում: Մի նյութը նույն նյութով լրացնելիս ոչ մի օգտակար բան չի ստացվում: Ուստի, անցյալում արքաները կավը խառնում էին մետաղի, փայտի, ջրի ու կրակի հետ՝ ամեն տեսակ կերամիկական նյութեր պատրաստելու համար»: Այս երկու հատվածները ցույց են տալիս, որ հեն և թուն միանգամայն տարբեր իմաստ ունեն: Կոնֆուցիոնը դա շատ ավելի հստակ էր ասում. «Արժանիք ունեցող մարդը ներդաշնակում է առանց հարմարվելու (հե էր բութուն): Նեղմիտ մարդը հարմարվում է առանց ներդաշնակվելու (թուն էր բուինե)» (Տարեգործեր, «Ցիլու»): Վերը նշված հատվածներից կարելի է նկատել, որ «Ներդաշնակություն

բազմազանության մեջ» (իե էր բութում) գաղափարը կարևոր է այնքանով, որ երբ մշակութային շիման և երկխոսության միջոցով երկու տարբեր մշակութային ավանդույթները հասնում են համընդհանուր ընկալման, նրանք իրենց տարբեր տեսանկյուններից հասնում են մի ինչ-որ ընդհանրության: Այս ընդհանրությունը կազմված է երկու կողմից, որոնցից մեկը չի ճնշում մյուսին, բայց և չի վերածվում մյուսի, այլ երկուսն էլ ընդհանուր հատման կետեր են գտնում տարբեր ավանդույթներում և այս հիմքի վրա էլ զարգացնում են դրանք: Դեմք այստեղ է ներդաշակության ուժը: Այս ազդեցությունը նկատելի է չինական մշակույթի զարգացման մեջ:

Կոնֆուցիականները ձգտում էին սահմանել քաղաքավարության կանոններ և ստեղծել երաժշտություն՝ հասարակության ներդաշնակությունը ակտիվորեն պահպանելու (յոռ վեյ) համար: Ի հակադրություն դրա՝ դառսականները ձգտում էին հետևել բնությանը՝ հասարակության մեջ խաղաղությունը պասիվորեն պահպանելու համար (ու վեյ): Այս երկու ի սկզբանե խիստ տարբեր մշակութային ավանդույթները զարգացման գրեթե 2000 տարիների ընթացքում շարունակական երկխոսության միջոցով հասան որոշակի ընդհանուր ըմբռնման: Արևմտյան Զիմ ժամանակաշրջանում (265-317թ.) Գուռ Սյանը, ջանալով ներդաշնակություն հաստատել կոնֆուցիական և դառսական ավանդույթների միջև, առաջադրում էր այն միտքը, որ ակտիվ կառավարումը (յոռ վեյ) պասիվ կառավարման (ու վեյ) ձև է: «Չօւանցի» գրքի «Աշնանային հեղեղներ» գլուխը մեկնաբանելով՝ նա գրում է. «Արդյո՞ք մարդիկ, որոնք ձգտում են ապրուստ հայքայթել, կիրաժարվեն ցլերով դաշտը հերկելուց կամ ծիեր վարելուց: Դերկելիս և ծիավարելիս մարդը չի կարող խուսափել ցլի ռունգերին օղակ անցկացնելուց կամ ծիուն սանձելուց: Ցուլը չի դիմադրում, երբ նրա ռունգերին օղակ են անցկացնում, իսկ ձին չի դիմադրում, երբ իրեն սանձում են, որովհետև երկնքի կամքն է դա: Եթե սա երկնքի իշխանությունն է, ապա, չնայած այս բեռնակիր կենդանիները ծառայում են մարդուն, միևնույն է, սա է երկնքի կամքը»: Այս հատվածի հմաստն այն է, որ չնայած ցլի ռունգերին օղակ են անցկացնում են, իսկ ծիուն՝ սանձում, մարդու ակտիվ ջանքերի (յոռ վեյ) արդյունքում այս հարաբերությունները հարմարվում են նրան, ինչ բնական է (ու վեյ): Թե՛ կոնֆուցիականները, թե՛ դառսականները կարող էին ընդունել Գուռ Սյանի այս հայեցակերպը, չնայած այն ուղղակիորեն չի ներառվում ոչ նախնական կոնֆուցիական, ոչ նախնական դառսական ավանդույթի մեջ: Ակտիվ ներգրավվելը (յոռ վեյ) և պասիվ հետևելը (ու վեյ) միանգամայն տարբեր հասկացություններ են: Եթե այս հեռանկարները պետք է ինչ-որ չափով ընդունվեն, ապա երկու կողմն էլ բանակցությունների միջոցով պետք է գտնին ընդհանրություններ (ներդաշնակության կետեր): Այս ընդհանրությունները կարող են ծառայել՝ որպես համընդհանուր սկզբունքներ, որոնք երկուստեք կընդունվեն: Այս համընդհանուր սկզբունքները կարող են ընդունվել՝ առանց երկու կողմերից որևէ մեկի առանձնահատկությունների մերժման: Այս իրավիճակն, անշուշտ, բազմազանության մեջ ներդաշնակության վառ օրինակ է:

Մենք կարող ենք ապացուցել, որ բազմազանության մեջ ներդաշնակության կարևորությունը առաջացել է ավանդական չինական մշակույթի և օտար մշակութային ավանդույթի բախնանը հաջորդող զարգացումների արդյունքում: Ի սկզբանե, հնդկական բուդդայական մշակույթը և ավանդական չինական մշակույթը (կոնֆուցիականություն, դառսիզմ և այլն), հստակ տարբերվում էին, բայց Յան

ոդինաստիայից (մթա.206-200թթ.) մինչև Թան ոդինաստիա (618-907թթ.) չինական մշակույթը շարունակաբար ձգողում էին ընդունել և փոփոխել օտար մշակույթը՝ բուդդայականությունը, իսկ հնդկական բուդդայականությունն էլ իր հերթին շարունակ ձգողում էր փոփոխել իր առանձնահատկությունները, որոնք չին համապատասխանում չինական հասարակության պահանջներին: Արդյունքում գրեթե 1000 տարիների ընթացքում, մինչ հնդկական բուդդայականությունը տեղափոխվում էր Չինաստան, չինական մշակույթը մեծապես օգտվեց հնդկական բուդդայականությունից: Վերջինս խոր ազդեցություն թողեց չինական փիլիսոփայության, գրականության, արվեստի, ճարտարապետության ու տարածված սովորույթների վրա: Միևնույն ժամանակ հնդկական բուդդայականությունը կարողացավ զարգացնել ու կատարելագործել հնքն իրեն չինական հսկայական կայսրության ողջ տարածքում: Սույ (581-618թթ.) և Թան ոդինաստիաների ընթացքում, օրինակ, ձևավորվեցին բուդդայականության և մի քանի ուղղություններ, որոնք ավելի մոտ էին չինական ավանդույթին (Թյանքայ, Յուայան և Չան ուղղությունները): Սակայն չինական մշակույթը չփոխեց իր եռթյունը և չկորցրեց իր առանձնահատկությունները, չնայած որդեգրեց հնդկական բուդդայականությունը: Այսպիսի մշակութային փոխանակումն ու փոխներգործությունը «բազմազանության մեջ ներդաշնակության» սկզբունքի գերազանց օրինակ են: Ըստ եռթյան, Եվրոպական մշակույթի զարգացումը նույնպես այս սկզբունքի մարմնացումն է: Բերտրան Ռասելը «Չինաստանի Խնդիրը» (1992) գրքում գրում է. «Յունաստանը սովորեց Եօփալոսից, Յոհոն՝ Յունաստանից, արաբները սովորեցին Յոհոնեական կայսրությունից, միջին դարերի Եվրոպան՝ արաբներից, իսկ Վերածնունդի Եվրոպան՝ բյուզանդացիներից»: Այն, որ մի մշակույթը կարող էր որդեգրել մեկ այլ մշակույթ, հաճախ պայմանավորված էր նրանով, որ «ներդաշնակություն բազմազանության մեջ» գաղափարն արմատավորված էր երկու մշակույթների հաղորդակցության մեջ և բանակցություններում:

### **23.3 Մշակութային ավանդույթների ընդիհանրությունները**

«Ներդաշնակություն բազմազանության մեջ» սկզբունքը կարող է ի հայտ գալ երկու տարբեր մշակութային ավանդույթների փոխազդեցության տարբեր համգանաքններում: Մեկն այն է, որ մշակույթներում միջև բանակցություններում պարզ է դառնում, որ երկու մշակույթներում կան նմանատիպ հասկացություններ: Օրինակ, քրիստոնեության մեջ գոյություն ունի մարդկության հանդեպ սիրո, բուդդայականության մեջ՝ կարեկցանքի, իսկ կոնֆուցիականության մեջ՝ զանգվածների մասին հոգ տանելու հասկացությունը: Վերացական իմաստով այս բոլոր հասկացությունները նշանակում են սեր: Այսպես, սերը կարող է դառնալ համընդհանուր սկզբունք, որը կընդունվի այս բոլոր տարբեր մշակութային ավանդույթների կողմից: Միևնույն ժամանակ, մարդկության հանդեպ սերը, կարեկցանքը և զանգվածների մասին հոգ տանելն այնպիսի հասկացություններ են, որոնք պահպանում են համապատասխան ավանդույթների առանձնահատկությունները: Մյուս համգանաքնն այն է, որ երկու մշակույթների հաղորդակցության ընթացքում պարզ է դառնում, որ նրանցից մեկը գուրք է այն կարևոր գաղափարներից, որոնք առկա են երկրորդ մշակույթում, և որ այս գաղափարները կարող են ընդունվել առաջին մշակույթի կողմից: Ընդունող մշակույթը կարող է հարստանալ մշակու-

թային հաղորդակցության միջոցով նոր գաղափարներ ընդունելով, դրանք ձևափոխելով և իր մշակույթին հարմարեցնելով: Օրինակ, Չինաստանի սկզբանե գործէ էր անակնկալ լուսավորականության հստակ գաղափարից, բայց մինչ Սուն (960-1127) և Մին (1368-1644) դինաստիաները Չեն Շաոն, Չեն Ին և Չու Սին արդեն իսկ այդ գաղափարը ներմուծել էին նեղկոնֆուցիականության ռացիոնալ դպրոց, իսկ Լու Չյույուանն ու Վան Շոուտենը Յանմին՝ նեղկոնֆուցիականության Մտրի դպրոց: Երրորդ հանգամանքն այն է, որ մեկ այլ մշակույթի հետ հաղորդակցության մեջ մշակույթը բացահայտում է, որ նրանում բացակայում են կարևոր գաղափարները, որոնք առկա են երկրորդ մշակույթում, ու թեև այս նոր գաղափարներն անհամեմատելի են ընդունող մշակույթի որոշ գաղափարների հետ, հաղորդակցություն այլ մշակույթի հետ ստիպում են մոռանալ իին գաղափարները և ընդունել նոր օտար գաղափարներ, որոնք կիսթանեն նրա զարգացումը: Օրինակ, երբ ժողովրդավարության գաղափարը ներթափանցեց Չինաստան, այն ստիպված եղավ հրաժարվել այնպիսի ավանդական գաղափարներից, ինչպիսիք են «երեք ուղեցույցները» (սամցան, կառավարիչն առաջնորդում է նախարարին, հայրը՝ որդուն, իսկ ամուսինը՝ կնոջը): Չորրորդ հանգամանքն այն է, որ երկու կամ ավելի մշակույթների հաղորդակցության ընթացքում այս մշակույթները քննարկումների արդյունքում բացահայտում են նոր կարևոր գաղափարներ, որոնք նախկինում գոյություն չունեին իրենց մշակույթներում: Այդպիսի գաղափարներ են խաղաղ գոյակցությունը և մշակութային բազմազանությունը. բազմազան մշակույթների համակարգի համատեքսում դրանք, ամկասկած, կարող են նշանակալի դեր ունենալ անհատական մշակույթների համար: Անշուշտ, կան նաև այլ հանգամանքներ, որոնք հանգեցնում են մի մշակույթի կողմից մյուսի յուրացմանը, բայց ես չեմ պատրաստվում ավելի խորանալ այդ թեմայի շուրջ: Երբ տարբեր մշակույթները, ինչպես նկարագրվեց վերևում, ստեղծում են ընդհանրություններ և ներդաշնակեցնում իրենց տարբերությունները, երբ նրանք ընդհանուր սկզբունքներ են գտնում տարբերությունների մեջ և հանգում են ընդհանուր ընկալումների, մշակութային հաղորդակցության և բանակցությունների միջոցով հաստատվում է «ներդաշնակություն բազմազանության մեջ» գաղափարը:

### **23.4 Տարածաշրջանային բազմազանությունը և մշակութային ընտրության երկկողմանի բնույթը**

Ներդաշնակություն բազմազանության մեջ» գաղափարը, որը տարբեր մշակույթների հաղորդակցության սկզբունքն է, ներառում է հիշատակության արժանի երկու կետ: Սեկզ մշակութային զարգացման տարածաշրջանային տարբերություններն են, մյուսը՝ մշակութային՝ ընտրության երկկողմանի բնույթը: Երկար ժամանակ դիմադրելով կամ բախվելով որևէ հատուկ խնդրի՝ մշակույթը կարող է քայլացնել կամ նույնիսկ վերանալ որևէ մասնավոր տարածաշրջանում կամ ժողովրդի շրջանում և շարունակել իր զարգացումը այլ տարածաշրջանում կամ մեկ այլ ժողովրդի շրջանում: Օրինակ, բուդդայականությունը, որը Յնդկաստանում փոխանցվել էր իհնգերորդ և վեցերորդ դարերում, լճանում էր, բայց Չինաստանում, յուրացնելով չինական մշակույթի առանձնահատկությունները և Սույ և Թան դինաստիաներում զարգանալով նշանավոր վանականների հսկողության ներքո, ձեռք բերեց չինական հատկանիշներ: Յնտո այն Չինաստանից տեղափոխվեց

Կորեական թերակղզի և ճապոնիա, որտեղ միախառնվեց տեղական մշակույթների հետ: Ճատկապես ճապոնիայում ձևավորվեցին բուդրայականության որոշ տեղական ուղղություններ: Այս պատճառով էլ հաստատում ենք, որ չինական մշակույթը մեծապես օգտվել է հնդկական բուդրայականությունից, և որ հնդկական բուդրայականությունը զարգացել ու կատարելագործվել է Չինաստանում: Զարգացման այսպիսի տարածաշրջանային տարբերություններ նկատվում են ոչ միայն Չինաստանում, այլև Եվրոպայում: Ինչպես Ռասեն է ասել վերը մեջբերված հատվածում, ժամանակակից Եվրոպական մշակույթը սկիզբ է առել Եգիպտոսում, փոխանցվել Յունաստան, անցել հռոմեացիների և արաբների երկրներով և դարձյալ մուտք գործել Եվրոպա: Մշակույթի այսպիսի տարածաշրջանային զարգացումը ուղենային նշանակություն է ունեցել մարդկային քաղաքակրթության զարգացման մեջ: Այսպիսի զարգացման պատճառ այն է, որ երբ Ա մշակույթը ներմուծվում է Բ մշակույթ, այն կարող է ձեռք բերել Բ մշակույթի որոշ հատկություններ: Այս ձեռք բերված հատկությունները, հնարավոր է, ի սկզբանե գոյություն չեն ունեցել Ա մշակույթում, կամ գուցե պատշաճ կերպով չեն զարգացել: Ա մշակույթին ավելացվելուց հետո այս հատկանիշներն առաջնորդում են Ա մշակույթի զարգացումը Բ մշակույթի տիրույթում: Այսպիսի մշակութային զարգացումը համապատասխանում է բազմազանության մեջ ներդաշնակության սկզբունքին և հրաշալի օրինակ նրա, որ «տարբեր նյութերը խառնելով կարելի է ստեղծել բազմաթիվ նոր իրեր, մինչեւ նոյն նյութից կազմված իրերը լավ չեն պահպանվում» («Զենի տրամասություններ»):

Ինչ վերաբերում է մշակութային ընտրության երկկողմանի բնույթին, ինչպես գիտենք, սա այն դեպքը չէ, երբ ցանկացած օտար մշակույթ, ցանկացած ժամանակ և ցանկացած հանգամանքների դեպքում փոխանցվելով այլ տարածաշրջան կամ այլ ժողովրդի, մշտապես ընդունվում և զարգանում է: Օրինակ, Սույ և Թան դինաստիաների ընթացքում բուդրայականությունը ոչ միայն հսկայական ազդեցություն ունեցավ չինական հասարակության վրա, այլև «քուդրայական սուտրաները հանդության շրջանում իրենց մասսայականության առումով տասն անգամ գերազանցում էին կոնֆուցիական դասական երկերը» (Սույ շու [Սույի գիրք], Չինցի ջի [Դասականների և գրքերի քննախոսություն]): Այս անգամ նեստորականությունը (քրիստոնեության մի տեսակ) փոխանցվեց Չինաստան և որոշակի ներգործություն ունեցավ, բայց չկարողացավ հաստատվել այնտեղ: Այս ձախողումը պայմանավորված էր մշակույթի ընտրության երկկողմանի բնույթով: Նոյնիսկ հնդկական բուդրայականության տարբեր աղամները տարբեր կերպ էին դրսևորվում Չինաստանում: Օրինակ, էղոթերիկ (թանթրիկ) բուդրայականությունը մի շրջան ծաղկում էր Յան դինաստիայի տարածքում Թան դինաստիայից հետո. այս փաստը հաստատում են Ֆամեն տաճարի ստորգետնյա պալատից պեղված մասունքները: Բայց ավելի ուշ էղոթերիկ բուդրայականությունը թուլացավ, և նրա ազդեցությունը Յան դինաստիայի հասարակության շրջանում նվազեց: Մինչեւ Տիբեթում հնդկական էղոթերիկ բուդրայականությունը միաձուլվեց տեղական կրոնի հետ, և ստեղծվեց տիբեթյան բուդրայականությունը, որը մինչ այսօր պահպանվել է՝ որպես տիբեթիների կրոն:

Ինչո՞վ էր պայմանավորված այս տարբերությունը: Երբ բուդրայականության առաջին տեսակը մուտք գործեց Յան դինաստիայի հասարակություն, այն բարկացած էր Թերավադա խորասուզման տեխնիկայից, որը նոյնացվում էր Ան Ծի-

գաղոյի հետ (168 թ.): Ավելի ուշ Լոկակսենմաման (147 թ.) Չինաստան բերեց Պրաջնա բուդդայականությունը: Զին դինաստիայից սկսած (265-420թթ.)՝ բուդդայականությունը էր, և ոչ թե Թերավադա խորասուզման տեխնիկան: Պրաջնա բուդդայականությունն էր, և ոչ թե Թերավադա խորասուզման տեխնիկան: Պատճառն այն է, որ Պրաջնա բուդդայականությունը նման էր նեռ-դառսիզմին (որի առանցքային ուսմունքները մոտ էին Հանգահին ու Չուանցիհին). Չան բուդդայականությունը (որը զարգացել էր Թան դինաստիայի ընթացքում այն բանից հետո, երբ Պրաջնա բուդդայականությունը յուրացվեց Արևելյան Զին դինաստիայի [317-420] և Յարավային դինաստիաների [420-589] ընթացքում) տարբերվում էր հնդկական խորասուզման տեխնիկայից, որովհետև նրա փիլիսոփայական հիմքը ծագել էր դեռևս պրաջնա բուդդայականությունից: Չան բուդդայականությունը որդեգրեց ոչ միայն դառսականության, այլև կոնֆուցիականության որոշ տարր, որպեսզի համապատասխանի չինական հասարակության պահանջներին: Այստեղ մենք տեսնում ենք մշակույթների փոխադարձ ընտրություն: Ավելին, մշակույթների միջև այս փոխադարձ ընտրությունը «ներդաշնակություն բազմազանության մեջ» սկզբունքի մեկ այլ բնորոշ դրսնորում է:

### 23.5 Անփոփում

Թան դինաստիայի վաղ շրջանում Սյուանցանը (602-664) տարածում էր Մտքի գիտակցական դպրոցի գաղափարները, բայց մտքի այս դպրոցը տևեց ընդամենը 30 տարի: Այն չարժանացավ չինացիների համակրանքին, որովհետև մտքի այս կերպն իր ոճով ամբողջությամբ հնդկական էր և միանգամայն տարրերվում էր չինական մտածողությունից: Ի հակադրություն դրա՝ Չան բուդդայականությունն արագորեն տարածվեց Թան դինաստիայի կեսերից. Չանի մտածողությունը նման էր չինական մտքին, ուստի ձևավորեց չինական բուդդայականությունը: Յետագայում՝ Սուն և Սին դինաստիաների ընթացքում, այն շարունակեց իր ազդեցությունը մեռկոնֆուցիականության ռացիոնալ դպրոցի վկա: Սա ցույց է տալիս, որ երկու տարրեր մշակույթների փոխազդեցության ընթացքում հաճախ տեղի է ունենում փոխադարձ ընտրություն, և այս փոխադարձ ընտրությունն ինչ-որ չափով «ներդաշնակություն բազմազանության մեջ» սկզբունքի դրսնորում է: Սին այն մշակույթների միջև բազմազանության առկայության դեպքում զանազան տարրերի միջև կարող է լինել ընտրություն: Եթե երկու մշակույթների մտածողությունն ամբողջությամբ նոր է, ընտրության տարրերակներ չկան, իսկ միանգամայն նույնարձեք միտքը չի կարող որևէ նոր գաղափար ավելացնել արդեն իսկ գոյություն ունեցող մտքին, ուստիև չի կարող խթանել կամ արագացնել արդեն իսկ գոյություն ունեցող մտքի զարգացումը: Այսպիսով, մենք տեսնում ենք, որ «ներդաշնակություն բազմազանության մեջ» սկզբունքը մեծ նշանակություն ունի միմյանց վրա փոխազդող մշակույթների երկողմանի ընտրության համար:

Մենք արդեն տեսել ենք, որ «ներդաշնակություն բազմազանության մեջ» սկզբունքը կարող է խթանել առողջ մշակութային փոխանակումը և արագացնել մշակույթի ռացիոնալ զարգացումը, ինչը համապատասխանում է մշակութային բազմազանության ներկա համաշխարհային միտումներին: Եթե ցանկանում ենք, որ չինական մշակույթն ավելի լավ զարգանա, իր ներդրումն ունենա ապագա համաշխարհային քաղաքակրթության մեջ, ապա պետք է մոտենանք այլ ժողովուրդ-

Աերի, ազգերի ու տարածաշրջանների մշակույթին՝ նկատի առնելով բազմազանության մեջ ներդաշնակության սկզբունքը, ինչպես նաև յուրացնենք այլ մշակույթների ծեռքբերումները, և բարեփոխենք մեր իսկ ավանդական մշակույթը, որպեսզի կարողանանք ստեղծել արդի հասարակական կյանքին հարմար նոր մշակույթ:

## ԳԼՈՒԽ 24

### Մարդկային քաղաքակրթությունների բախման և գոյակցության մասին<sup>130</sup>

#### 24.1 «Քաղաքակրթությունների բախումը» և «Նոր կայսրության» տեսությունը

1993 թվականին «Քաղաքակրթությունների բախում» վերնագրով մի էսետ տպագրվեց ԱՄՆ-ի «Արտաքին գործեր» ամսագրի ամառային համարում. էսսեի հեղինակը Սամյուել Ջանթինգը նշում էր: 1994 թվականին ես «Փիլիսփայական ուսումնասիրություններ» ամսագրում «Քաղաքակրթությունների բախման Ջանթինգը մի անդրադարձը» հոդվածով քննադատեցի Ջանթինգը ներկայացրած ամերիկյան գերիշխանությունը<sup>131</sup>: Առաջին և երկրորդ տպագրությունների միջև ընկած ժամանակահատվածում Ջանթինգը տեսությունը լայնորեն քննարկվում ու քննադատվում էր բոլոր առօլներով թե՛ Չինաստանի, թե՛ նրա սահմաններից դուրս ապրող գիտնականների կողմից: Այս մարտահրավերներին դիմակայելու, ինչպես նաև իր տեսությունն ուժեղացնելու և վերաներկայացնելու համար Ջանթինգը 1996 թվականին տպագրեց իր գլուխգործոցը՝ «Քաղաքակրթությունների բախումն ու աշխարհի կարգի փոփոխությունը» հոդվածը, որում նկատելի է նրա փաստարկների որոշակի փոփոխություններ. օրինակ, նախարարություն, որն ընթերցել են չինարեն թարգմանությամբ, նա գործում է. «Չինացիսարիային քաղաքականությունը մարդկության պատմության մեջ առաջին անգամ դարձել է բազմաթեսության մասնաւոր գործություն»<sup>132</sup>: «Քաղաքակրթությունների ընդհանրություններ» հատվածում նա նշում է. «Որոշ ամերիկացիներ Ամերիկայում պաշտպանում են բազմամշակութայինությունը, ուրիշներն արտասահմանում առաջ են տանում համընդհանրականությունը. ոճանք էլ հանդես են գալիս այս երկուսի դիրքերից: Բազմամշակութայինությունը հայրենիքում սպառնում է Միացյալ Նահանգներին և արևմուտքին, համընդհանրականությունը արտասահմանում սպառնում է արևմուտքին ու աշխարհին: Երկուսն էլ մերժում են արևմտյան մշակույթի յուրահատկությունը: Միամանշակութայինության կողմնակիցներն ամբողջ աշխարհում ցանկանում են, որ աշխարհը ննան լինի Ամերիկային: Բազմամշակութայինության հայրենական կողմնակիցները ցանկանում են, որ Ամերիկան ննան լինի աշխարհին: Բազմամշակութային Ամերիկան անհնար է, որովհետև ոչարևմտյան Ամերիկան ամերիկյան երկիր չի լինի: Բազմամշակութային աշխարհն անխուսափելի է, որովհետև համաշխարհային կայսրության հաստատումն անհնար է: Միացյալ Նահանգների և արևմուտքի պահպանման համար անհրաժեշտ է վերանայել արևմտյան ինքնությունը: Աշխարհի անվտանգությունը պահանջում է

130. «Փրըսիդիա. հասարակական և վարչաբանական գիտություններ», 2010 (2): 7381-7391:

131. <<评亨廷顿<文明的冲突?>>, 载<<哲学研究>>, 1994 年第3期。

132. 中文版序言>>, 亨廷顿: <<文明的冲突与世界秩序的重建>>, 周琪、刘绯、王圆译, 新华出版社, 1999 年。

ընդունել համաշխարհային բազմաժակութայնությունը<sup>133</sup>:

Չնայած վերը նշված պարբերության մեջ դեռևս կան վիճելի կետեր, այն կարծիքը, որ «աշխարհի անվտանգությունը պահանջում է ընդունել համաշխարհային բազմաժակութայնությունը», անկասկած բավական խոհեմ գաղափար է: Ինչու՞ Հանրինգրընի տեսակետում այսպիսի փոփոխության ենթարկվեց: «Պատճառն այն է, որ նա գգացել էր, որ համաշխարհային մարտահրավերներն ու սպառնալիքները վտանգում են արևմտյան (կամ փաստացի՝ ամերիկյան) գերիշխանությունը, իսկ երկրում ի հայտ են եկել ռասիզմի հետ կապված մի շարք, ուստի նա առաջարկում էր «փոխել աշխարհի կարգը»: «Արևմուտքի նորացում» բաժնում Հանրինգրընը պնդում է.

Ակնհայտ է, որ արևմուտքը տարբերվում է մյուս բոլոր քաղակրթություններից, որոնք երբեք գոյություն են ունեցել, այն իմաստով, որ այն հսկայական ազդեցություն ունի 1500 թվականից ի վեր գոյություն ունեցող բոլոր մյուս քաղաքակրթությունների վրա: Այն նաև սկիզբ է դրել արդիացման և արդյունաբերացման գործնթացին, որոնք տարածվել են ամբողջ աշխարհում, և արդյունքում մյուս բոլոր քաղաքակրթությունների հասարակությունները փորձել են հետ չմնալ արևմուտքից թե՛ հարստության, թե՛ արդիականության հարցերում: Արդյո՞ք արևմուտքի այս առանձնահատկությունները ցույց են տալիս, որ որպես քաղաքակրթություն՝ նրա էվոլյուցիան ու դիմանիկան հիմնովին տարբերվում են մյուս բոլոր քաղաքակրթություններում գերիշխող կաղապարներից: «Պատմության վկայությունները և քաղաքակրթությունների համեմատական պատմության մասնագետների դատողությունները հակառակ տեսակետում են պնդում: Արևմուտքի զարգացումը մինչ օրս շատ չի շեղվել էվոլյուցիայի կաղապարներից, որոնք պատմության ընթացքում ընդհանուր են եղել քաղաքակրթությունների համար: Իսլամի վերածնունդը և Ասիայի տնտեսական դիմանիկան ցույց են տալիս, որ այլ քաղաքակրթությունները աշխույժ են ու կենսունակ և առնվազն հնարավոր վտանգ են սպառնում արևմուտքին: Կա լայնամասշտար պատերազմի հավանականություն, որում ներգրավված կլինեն Արևմուտքը և այլ քաղաքակրթությունների հիմնական պետությունները: Հակառակ դեպքում արևմուտքի հաջորդական և անկանոն թուլացումը, որը սկսվել է քսաներորդ դարի սկզբում, կարող է շարունակվել տասնամյակներ և գուցե դարեր շարունակ: Կամ Արևմուտքը կարող է վերածնվել, վերականգնել իր նվազող ազդեցությունը համաշխարհային հարաբերություններում և վերահստատել առաջնորդի իր դիրքը, որին պետք է հետևեն ու ննանակեն այլ քաղաքակրթությունները<sup>134</sup>:

Մեջբերումից եզրակացնում ենք, որ մի կողմից Հանրինգրընը գգացել է աշխարհում արևմուտքի առաջնորդության «աստիճանական ու անկանոն թուլացումը, ինչպես նաև հավանական սպառնալիքը արևմուտքին, որը գալիս է արդիացման և արդյունաբերացման գործնթացին ենթարկված և ենթարկվող պետություններից, որոնք փորձում են նմանակել արևմուտքին: Անշուշտ, այս իրողությունն անընդունելի է նրա և որոշ այլ արևմտյան գիտնականների, ինչպես նաև որոշ քաղաքական առաջնորդների (օրինակ, Ամերիկայի նախագահ Ջորջ Վ. Բուչ-

133. Հանրինգրըն (1996):

134. Մեջբերումը՝ նոյն աղբյուրից, էջ 302:

ի) համար, որոնք ներգրավված են այս բարդ խնդիրը լուծելու գործում. ինչու՝ այս վերածնված իսլամական շարժումները կամ հաօնող արևելյան երկրները, որոնք ընտրել են արդիացման և արդյունաբերացման արևմտյան ուղին, սպառնալիք կրտառնան արևմուտքի համար: Ըստ նրանց՝ այս երկրները պետք է և կարող են խաղալ միայն արևմուտքի հետևողների կամ հավատարին հպատակների դերը բոլոր, հատկապես քաղաքականության և մշակույթի ոլորտում: Այնուամենայնիվ, իրականությունը հեռու է նրա ակնկալիքներից, ինչի արդյունքում էլ արևմտյան միտքը դարձյալ փոթորկվել է: Մյուս կողմից, Հանթիմգթըն իսկապես փայփայում է այն ծածուկ երազանքը, որ «արևմուտքը կնորանա» և «կվերահաստատի առաջնորդի իր դիրքը, որին պետք է հետևեն և նմանակեն մյուս բոլոր քաղաքակրթությունները»: Բուշի վարչակազմի պահվածքը սեպտեմբերի 11-ի իրադարձությունների ժամանակ այս տեսանկյունից կարելի է համարել այլ քաղաքակրթություններին առաջնորդող ամերիկյան գերիշխանությունը վերահաստատելու փորձ:

Հանթիմգթընի «Քաղաքակրթությունների բախումը և աշխարհի կարգի փոփոխությունը» հոդվածից հետո 2000 թվականին իրատարակվեց մեկ այլ գիրք՝ «Կայսրություն. համաշխարհային քաղաքական կարգ», որի համահեղինակներն են Անթոնի Նեգրին (Խտալիա) և Մայք Հանդթը (ԱՍՍ): Այս աշխատանքի հիմնական տեսակետն ընթացիկ համաշխարհային իրավիճակի մասին հետևյալն է՝ «կայսրությունը նյութականանում է մեր աշքերի առաջ». սա նշանակում է վարչակարգի կառավարում՝ առանց տարածքային կամ ժամանակային սահմանափակումների: «Ինքնիշխանության այս նոր, համաշխարհային ծևան այն է, ինչ մենք կոչում ենք Կայսրություն», «քաղաքական սուբյեկտ, որն արդյունավետ կերպով կարգավորում է այս համաշխարհային փոփոխությունները, միապետություն, որը կառավարում է աշխարհը<sup>135</sup>»: Ընդունելով այս ուսմունքը՝ Միացյալ Նահանգներում քազմաթիվ գիտնականներ տարածում են «Նոր կայսրության» տեսությունները: Օրինակ, Չիկագոյի համալսարանի քաղաքագիտության պրոֆեսոր Զոն Ջ. Միլոշեյմերը իր «Մեծ տերությունների քաղաքականության որբեգություն» (Խոր Յորը 2002) գրքում առաջ է քաշում հետևյալ տեսությունը. «Քանի որ յուրաքանչյուր պետություն ծգտում է առավելագույնի հասցնել համաշխարհային իշխանության իր բաժինը, հավասարակշռող կառույցի գոյությունն անհնար է դառնում, և լավագույն պաշտպանությունը հարձակումն է (սա նախագահ Բուշի «կանխարգելիչ հարվածի» տեսական հիմք է): «Նետմողեռնիստական պետության» մեկ այլ տեսաբան՝ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլերի արտաքին գործերի խորհրդական Ռոբերտ Գուփերը բոլոր պետությունները բաժանում է երեք տեսակի՝ առաջինը հետմողեռնիստական պետություններն են, օրինակ՝ հյուսիսամերիկյան և Եվրոպական երկրները և ճապոնիան, երկրորդը՝ արդի պետությունները, օրինակ՝ այնպիսի ազգային պետություններ, ինչպիսիք են Չինաստանը, Ճապաստանը, Բրազիլիան ու Պակիստանը, և երրորդը նախանդեռնիստական պետություններն, օրինակ՝ աֆրիկյան և միջինարևելյան երկրները և Աֆղանստանը: Քուփերի առաջադրած հասկացությունը «նոր իմպերիալիզմն է», որը նշանակում է, որ հետմողեռնիստական պետությունները պետք է օգտագոր-

135. Հանդթ և Նեգրի (2000):

ծեն իրենց ազգային ուժը (ինչպես նաև ռազմական ուժը), որպեսզի վերահսկեն արդի պետությունները, ինչպես նաև զայտեն նախանդեռնիստական պետություններում առկա այնպիսի բարբարոսական գործողություններ, ինչպիսիք են մասսայական սպանությունները<sup>136</sup>: Ավելի մարտական տրամադրված ամերիկյան նեոպահպանողականները քանամեկերորդ դարում առաջադրում ու պաշտպանում էին երեք առանցքային համոզմունք. (1) ռազմական ուժի ծայրահեղ երկրապագություն, (2) ամերիկյան «մեղմ գերիշխանության» պնդումը և (3) ամերիկյան ժողովրդավարության և արժեքների արտահանում: Այս նույն տոնայնության մեջ 2002 թվականի հունիսին Ուեսթ Փոյնթում նախագահ Ջորջ Վ.Բուշը հանդես եկավ ելույթով, որը կարելի է ամփոփել երեք հիմնական սկզբունքներով. նախ, Ամերիկան պետք է շարունակի «կանխարգելիչ հարվածի» քաղաքականությունը, երկրորդ, ամերիկյան արժեքները համընդհանուր են, և երրորդ, Միացյալ Նահանգները պետք է շարունակի մնալ անժխտելի ռազմական ուժ<sup>137</sup>: Այս «Նոր կայսրության» ուսմունքը անխուսափելիորեն կիանզեցնի այլ քաղաքակրթությունների, պետությունների ու ազգերի «քախումների»: Նրա հիմնական դրույթներն արդեն իսկ արտացոլվել էին Հանրինգթընի «քաղաքակրթությունների բախնան» տեսության մեջ: Վերջինս «Քաղաքակրթությունների բախում» գրքում ներկայացում է երկու հիմնական առաջարկություն. (1) «սահմանափակել ռազմական ուժի տարածումը իսլամական և կոնֆուցիական պետություններում», «արևելքում և հարավարևմտյան Ասիայում արևմուտքի ռազմական գերիշխանությունը պահպանելու» և «հիմնական և կոնֆուցիական պետությունների տարրերություններն ու բախումները ճնշելու համար» և (2) «ամրապնդել միջազգային հաստատությունները, որոնք արտացոլում և օրինականացնում են արևմտյան շահերն ու արժեքները և ընդլայնել ոչ արևմտյան պետությունների ներգրավվածությունը այս հաստատություններում»<sup>138</sup>: Այս առաջարկներից մենք եզրակացնում ենք, որ արևմուտքի կողմից հրահրված, Միացյալ Նահանգների կողմից դեկավարվող «քաղաքակրթությունների բախումների» պատճառով, որոնք ծագում են մշակութային տարրերություններից օրինակ՝ արժեքներից, աշխարհի վերածվել է դժոխվի, որտեղ բռնկվում են նորանոր տարածաշրջանային պատերազմներ:

Արդյո՞ք քաղաքակրթությունները պետք է գոյատևեն «քախումների» պայմաններում և իրազործեն «Նոր կայսրության» համընդհանուր ուսմունքը: Ինչո՞ւ նրանք չեն կարող «գոյակցել» խաղաղության մեջ:

136. 佩里·安德森 (*Փերի Անդերսոն*) 等: <<三种新的全球化国际关系理论>> : («Նամաշխարհայնացման դրաշշումնում միջազգային հարաբերությունների վերաբերյալ վերջին երեք տեսությունները»), <读书>> 2002 年第10 期。

137. 陈光兴: <<帝国>与去帝国化问题>>ii («Կայսրությունը և ապակայսրացման խնդիրը»), <<读书ii 2002 年7期:崔之元: <<布什原则、西方人文传统、新保守主义>> («Բուշի սկզբունքները, արևմտյան մարդասիրության ավանդույթը և նեոպահպանողականությունը»), <<读书ii 2003 年8期。<<布莱尔的自由帝国主义理论奏效吗?>> («Արդյո՞ք Բլերի ազատական ինպերիալիզմն արդյունավետ լիինի»), Թոնի Բլերի ելույթից。« Սեր անվտանգության լավագույն երաշխիքը մեր արժեքների տարածումն է»: Սանդի Թելեզրաֆ, (մայիս 30, 2004 թ.):

138. Հանրինգթըն (1993):

## 24.2 «Քաղաքակրթությունների գոյակցությունը» և Նոր առանցքային դարաշրջանը

Մարդկության պատմությունն ականատես է եղել քազմաթիվ դեպքերի, երբ պետությունները, ազգերը կամ տարածաշրջանները քախվել են միմյանց մշակութային (կամ կրոնական) տարրերությունների պատճառով։ Ինչևէ, նկատի առնելով պատմության ընդհանուր միտումը, հասկանում ենք, որ քաղաքակրթությունների գարգացումը տարբեր պետություններում, ազգերում ու տարածաշրջաններում պետք է դեկավարվի փոխադարձ յուրացման և համադրման սկզբունքով։ Ին կարծիքով՝ այս պետությունների, ազգերի և տարածաշրջանների միջև պատերազմների պատճառները մշակութային տարրերությունները չեն։ Քանի որ արևմտյան մշակույթի (թե՛ քաղաքակրթությունը, թե՛ մշակույթը առնչվում են ազգի քազմակողմանի կենսակերպին։ Ուստի քաղաքակրթությունը խոշորացված մշակույթն է) մասին իմ իմացությունը սահմանափակ է, ես լիազորված չեմ խսել այս իհմնախնդրի մասին։ այստեղ կցանկանայի մեջքերել Բերտրան Ռասելին, որպեսզի արդարացնեն այն իհմնավորումը, որ ներկայիս արևմտյան քաղաքակրթությունը ծևավորվել է մի շարք մշակութային տարրերի յուրացման և հաշտեցման միջոցով։ 1922 թվականին Ռասելը Չինաստան այցելությունից հետո գրեց «Չինաստանի և արևմտյան քաղաքակրթության հակադրությունը» էսսեն, որի մի հատվածը ներկայացնում ենք սկզբունքը։

Տարբեր քաղաքակրթությունների շփումներն անցյալում դարձել են մարդկային առաջնորդացի նշանակութեր։ Չունաստանը սովորել է Եգիպտոսից, Չոռմը՝ Չունաստանից, արաբները՝ Չոռմեական կայսրությունից, միջնադարյան Եվրոպան՝ արաբներից, իսկ Վերածննդի Եվրոպան՝ բյուզանդացիներից<sup>139</sup>։

Չնայած վիճելի է, թե արդյոք Ռասելը ծցգրիտ էր իր բոլոր տեսակետների մեջ, բայց նրանցից երկուսը, այնուամենայնիվ, անկասկած ճիշտ են. 1. շփումները տարբեր մշակույթների միջև կարևոր նշանակություն ունեն մարդկային քաղաքակրթությունների առաջադիմության համար, 2. Եվրոպական մշակույթն այսօր յուրացրել է այլ ազգային մշակույթների քազմաթիվ տարրեր, այդ թվում և արաբական մշակույթից։ Մեկ այլ դիտարկում է, որը հիմնված է չինական մշակույթի առաջնորդացի վրա, շատ ավելի հզոր է և կարող է ապացուցել, որ քաղաքակրթությունների քախումները մշտապես ժամանակավոր բնույթ են կրել, մինչդեռ փոխադարձ յուրացումն ու հաշտեցումը շատ ավելի կարևոր են։

Գարնան և աշնան և Պատերազմող պետությունների ժամանակաշրջաններում Չինաստանում գոյություն ունեին տարբեր տեղական մշակույթներ, այդ թվում Կենտրոնական տարածքի (Յենան) մշակույթը, Ցի-Լու (Չանդուն) մշակույթը, Ցինլուն (Չաանսի) մշակույթը, Չինչու (Չաարավային) մշակույթը, Ու-Յուն (Չաարավարևմտյան) մշակույթը և Բա-Չու (Չաարավարևմտյան) մշակույթը։ Բոլորն էլ հետագայում ծովլվեցին միասնական չինական (Չուայայ) մշակույթի մեջ։ Երկու մշակույթների գոյակցության հնարավորությունը հատկապես ակնհայտ դարձավ մթ. առաջին դարում հնդկական բուդդայականության ներմուծման ժամանակ։ Բուդդայական մշակույթի տարածումը Չինաստանում խաղաղ անցավ։ տեղական

139. Ռասել (1922):

Կոնֆուցիականության կամ թառսիզմի և բուդդայականության մշակութային տարրերությունները երեք աշակերտներին չնշեցին պատերազմի: Չինական կայսերական արքունիքները միայն երեք անգամ ճնշեցին բուդդայականությունը, և դա պայմանավորված էր բացառապես քաղաքական կամ տնտեսական գործոններով: Ընդհանուր առմանը, կոնֆուցիական, թառսական և բուդդայական մշակույթները հրաշալի գոյակցում են Չինաստանում: Մի հայտնի ֆրանսիացի չինագետ (Քրիստոֆեր Շիփիեր) մի ամգամ հարցրեց ինձ. «Ինչո՞ւ՝ է Չինաստանը բազմամշակութային երկիր»: Ես փոքր-ինչ նտորեցի, ապա պատասխանեցի, որ պատճառները, թերևս, երկուսն են. նախ, զաղափարախոսական տեսանկյունից, չինացիները մշտապես պաշտպանում են «ներդաշնակություն բազմազանության մեջ» գաղափարը (和而不同), այս է՝ բազմազան մշակույթների ներդաշնակ գոյակցությունը: Երկրորդ, ինչ վերաբերում է քաղաքական համակարգերին, չինացի կայսրը բարձրագույն իշխանությունն էր, որը վճռում էր կրոնական, փիլիսոփայական և բարոյագիտական մշակույթների ճակատագիրը: Դանուն հասարակական կայունության՝ կայսրը դեմ էր մշակութային տարրերությունների պատճառով ծագած հակասություններին կամ պատերազմներին: Այսպիսով, նա սովորաբար պաշտպանում էր «երեք դպրոցների գոյակցությունը»՝ կոնֆուցիականության, թառսիզմի և բուդդայականության ներկայացուցիչ գիտնականներին կոչ անելով բանավիճել կայսերական արքունիքում՝ իրենց համապատասխան տեսակետները պաշտպանելով վեճի ընթացքում, և թույլ չտալ, որ որևէ հակասություն կամ նույնիսկ պատերազմներ բռնկվի:

Վերը նշված փաստարկներից ու պատմական փորձից եզրակացնում եմ, որ Չանքինգթը մի «քաղաքակրթությունների բախման» տեսությունը ցանկացած դեպքում, միակողմանիորեն ծառայում է միայն Ամերիկայի միջազգային քաղաքականությանը: Նա ասում է.

Ըստ իմ վարկածի՝ բախման հիմնարար աղբյուրը նոր աշխարհում գաղափարախոսական կամ տնտեսական բնույթ կկրի: Մարդկության խոշոր բաժանումների և բախման հիմնական պատճառը կարող է լինել նաև մշակություն: Ազգ - պետությունները կշարունակեն խաղալ համաշխարհային քատերաբեմի ամենահզոր դերերը, բայց համաշխարհային քաղաքականության հիմնական բախումներ տեղի կունենան տարբեր քաղաքակրթությունների, ազգերի ու խմբերի միջև: Քաղաքակրթությունների բախումը կգերիշխի համաշխարհային քաղաքականության մեջ: Քաղաքակրթությունների միջև թույլ տված սիսամերը ապագայում կվերածվեն ռազմաճակատի գծերի<sup>140</sup>:

Չանքինգթը դիտարկումը որոշ առումներով խորաթափանց է, մասնավորապես Միջին Արևելքում պահեստինախսրայելական հակամարտության, Կոստովյի հակամարտության կամ նույնիսկ Իրաքի պատերազմի համատեքստում, որտեղ որոշ մշակութային (կրոնական և բարոյագիտական) տարբեր նպաստում էին պատերազմների բռնկմանը: Մինչեւ ավելի մանրամասն վերլուծության դեպքում պարզվում է, որ պատերազմների կամ հակամարտությունների հիմնական պատճառները ոչ թե մշակութային են, այլ քաղաքական և տնտեսական պահեստինախրայելական հակամարտությունը տարածաշրջանային գերիշխանության մր-

140. «Քաղաքակրթությունների բախում՝ էջ 22:

ցույք էր, Իրաքի պատերազմը մղվում էր գերազանցապես նավթի, իսկ Կոստովյի հակամարտությունը՝ իշխանության քաղաքական ռազմավարության համար: Բայց մյուս կողմից, մշակութային տարբերությունները հակամարտությունները չառաջացրին բազմաթիվ ազգերի միջև, օրինակ՝ չին-հնդկական, չին-ռուսական կամ նույնիսկ չին-Եվրոպական հարաբերություններում: Իրականում, նրանց միջև չեն եղել լուրջ հակամարտություններ կամ պատերազմներ, հատկապես վերջին տասնամյակում: Այսպիսով, «քաղաքակրթությունների բախման» տեսությունը չի տեղափորվում ներկա իրավիճակի համատեքստում և չի կարող լինել մարդկության ապագա հեռանկար: Փոխարենը, «քաղաքակրթությունների գոյակցությունը» պետք է լինի մարդկային հասարակության միակ ելքը և ապագայի նպատակ, որին պետք է ձգտենք բոլորս:

Գուցե մեր դարաշրջանի ավելի հստակ պատկերն օգնի նկարագրել այս խնդիրը: Ին կարծիքով մենք հայտնվել ենք մի նոր, առանցքային դարաշրջանում:

Առանցքային ժամանակի գաղափարն առաջարկել է գերմանացի փիլիսոփա Կառլ Յասպերսը (1883-1969): Ըստ նրա տեսության՝ մթա. շուրջ 500 թվականին գրեթե միաժամանակ մեծ մտածողներ ի հայտ եկան Յին Յունաստանում, Խորայելում, Յնդկաստանում և Չինաստանում, և նրանք իրենց յուրահատուկ գաղափարներով մեծ ավանդ ունեցան այն խնդիրների լուծման մեջ, որոնք խիստ մտահոգում էին մարդկությանը: Ապա ձևավորվեցին հստակ մշակութային ավանդույթներ համապատասխանաբար Սոկրատեսի և Պլատոնի կողմից՝ Յին Յունաստանում, Լաոցիի ու Կոնֆուցիոսի կողմից՝ Չինաստանում, Շակյամունիի կողմից՝ Յնդկաստանում և հրեա մարգարեների կողմից՝ Խսրայելում, և սա, ավելի քան 2000 տարի տևած առաջընթացից հետո դարձավ մարդկային մտավոր հարստության իմանական մաս: Այս տարածաշրջանային մշակութային ավանդույթներն անկախ էին իրենց ծննդի ու զարգացման հանգամանքներից և զուրկ էին փոխադարձ ներգրությունից: «Մինչ այսօր մարդկությունն ապրել է նրանով, ինչ տեղի ունեցավ Առանցքային դարաշրջանում, ինչ մտածվեց ու արարվեց այդ ժամանակաշրջանում: Ամեն անգամ վերելք ապրելիս մարդկությունը հիշողության թևով վերաբանում է այս ժամանակաշրջան և նորովի բոցավառվում նրա կրակներից: Այն ժամանակներից ի վեր Առանցքային դարաշրջանի հնարավորությունները՝ վերածնունդները, հոգևոր խթան են դարձել<sup>[141]</sup>: Օրինակ, Եվրոպացիները Վերածնույթի շրջանում ուսումնասիրել են իրենց մշակույթի ծագումը՝ սկսած դեռևս Յին Յունաստանից, որը վերածնեց Եվրոպական քաղաքակրթությունը և իր հետքը բողեց համաշխարհային պատմության մեջ: Նույն կերպ նաև Չինաստանում Սուն և Մին դինաստիաների կոնֆուցիական մտածողները, հնդկական բուդդայականության ազդեցության ներքո, բացահայտեցին Կոնֆուցիոսին և Մենցինին և նոր բարձունքի հասցրին բնիկ չինական փիլիսոփայությունը: Ինչ-որ առումով համաշխարհային մազմանշակութայնության ներկայիս զարգացումը, որը հիմնված է 2000 տարի առաջ Առանցքային դարաշրջանում ստեղծված արժեքների վրա, կարող է առաջընթացի լուրջ քայլ լինել: Արդյո՞ք ժամանակակից մարդկային մշակույթները ստեղծել են կամ կստեղծեն նոր առանցքային դարաշրջան: Եթե դատենք որոշ վկայություններից, ապա կարող ենք հանգել այս-

141. Յասպերս (1953):

պիսի եղուակացության՝

Նախ և առաջ, Երկրորդ համաշխարհային պատերազմից ի վեր, գաղութային կառավարման դանդաղ փլուզումից հետո, երբեմնի գաղութացված և ճնշված ազգերն իրենց առաջ հրատապ խնդիր են դրել՝ ամեն գնով վերահաստատել իրենց անկախ ինքնությունը։ Դրա միակ արդարացումը յուրահաստուկ մշակութային ավանդույթներն են (ինչպիսիք են լեզուները, կրոնները և հասարակական արժեքները)։ Մենք գիտենք, որ Առաջին համաշխարհային պատերազմից հետո Մալայզիան պնդում էր, որ ազգային լեզվի օգտագործումը կարևոր է ազգը միավորելու գործում։ Խրայելի իիմնումից հետո խրայելցիները որոշեցին Երրայերենը վերականգնել՝ որպես խոսակցական լեզու, չնայած անցյալում երկար ժամանակ Երրայերենն օգտագործվում էր միայն կրոնական արարողությունների ժամանակ։ «Յանկացած մշակույթի կամ քաղաքակրթության հիմնական տարրերն են՝ լեզուն և կրոնը»<sup>142</sup>։ Արևելյան Երկրների որոշ քաղաքական առաջնորդներ և գիտնականներ նաև առաջ են քաշել «ասիհական արժեքները», որոնք, հիմնված են համայնքի գաղափարի վրա և դրանով էլ տարրերվում են արևմտյան «համընդհանուր արժեքներից», որոնք կենտրոնացած են անհատի գաղափարի վրա և այլն։ Նույնիսկ Չանդինգը ներկայացնելու առաջարկը վերահաստատում են իրենց մշակույթների արժեքը»<sup>143</sup>։

Երկրորդ, Առանցքային ժամանակաշրջանը՝ մթա. մոտ 500 թ., այն ժամանակն էր, երբ հիմնական քաղաքակրթությունները մուտք գործեցին Երկարե դար, և մեծ առաջընթաց նկատվեց արտադրողականության ոլորտում, ինչն էլ հետագայում ծնունդ տվեց մեծ մտածողների։ Այժմ մենք արդեն մուտք ենք գործել Տեղեկատվության դարաշրջան, երբ ականատես ենք մարդկային հասարակության և մեկ խոշոր վերելքի։ Տնտեսական համաշխարհայնացման, գիտության և տեխնոլոգիայի միավորնան, տեղեկատվական ցանցի առաջընթացի շնորհիվ ողջ աշխարհում տարրեր տարածաշրջաններ սերտորեն կապվել են միմյանց հետ, և տեղական մշակութային առաջընթացն այլևս չի կարող պահպանել այն անկախությունը, որը մի ժամանակ՝ 2000 տարի առաջ այժմեական էր «Առանցքային դարաշրջանում»։ Փոխարենը, դրանք կզարգանան տարածանությունների ու հակամարտությունների համատեքստում և փոխադարձ ներգործության կամ փոխադարձ յուրացման արդյունքում։ Յուրաքանչյուր մշակույթի ինքնարմներում, անկանած, սահմանափակ է, ինչպես նկարագրում է Սու Շի (1037-1101) հայտնի բանաստեղծությունը։

Նրանք չեն ճանաչում Լուչան սարի իրական դեմքը,  
Քանի դեռ շարունակում են մնալ նրա գրկում<sup>144</sup>։

Այս տողերը մեկ այլ մշակութային համակարգի հեռանկար են, այսինքն՝ մշա-

142. «Քաղաքակրթությունների բախումը և համաշխարհային կարգի փոփոխությունը», էջ 59։

143. Մեցքերումը՝ նոյն աղբյուրից, էջ 20։

144. 苏轼:<<题西林壁>>: “不识庐山真面目, 只缘身在此山中。”

Կութային «այլություն», որը կարող է ավելի բազմակողմանի պատկերացում տալ մեզ մեր իսկ մշակույթի մասին: «Ինչու՝ Չինաստանն անհրաժեշտ է մեզ՝ արևմուտքիներին, փիլիսոփայություն ուսումնասիրելիս», - գրում է ֆրանսիացի գիտնական Ֆրանսուա Շուլիենը: «Մենք ընտրել ենք հեռավոր կետ, որպեսզի տարածությունը թույլ տա մեզ հեռվից պատկերացում կազմել իրականության մասին: Այս քայլը բոլորովին էլ տարօրինակ չէ: Նոյն կերպ փորձել ենք ուսումնասիրել Չունաստանը, որը չնայած ժամանակի հորժի պատճառով դուրս է մեր ինացության սահմաններից, բայց մերն է ու ժառանգված է ծննդյան իրավունքով: Այս գաղափարը խթանելու համար մենք ստիպված ենք կտրել այս պորտալարը և անկախ տեսակետ կազմել»<sup>145</sup>: Միջմշակութային ուսումնասիրության այս տեսակը ներսությեւնկիվության, ինչպես նաև սեփական մշակույթը «այլ» մշակույթի դիտանկյունից դատելու մեթոդանություն է, որն աստիճանաբար ընդունվում է թե՝ չինացի, թե՝ արտասահմանցի գիտնականների կողմից: Ի՞նչ կարիք կա դիտարկել մեր մշակույթը այլ մշակույթի տեսանկյունից: Պարզապես որովհետև ցանկացանում ենք ժառանգելու զարգացմել մեր իսկ մշակութային ավանդույթը: Այս դեպքում, անկասկած, լուրջ խնդիր է ծագում. ինչպես հավուր պատշաճի պահպանել մշակույթը և շարունակել նրա կյանքի ընթացքը: Ինչպես գիտենք, տնտեսությունը կարող է համաշխարհայնացվել, գիտությունն ու տեխնոլոգիան՝ ինտեգրվել, բայց քաղաքակրթությունները երբեք չեն կարող միջամշակութային բնույթը կրել: Մինչ այսօր մարդկային հասարակության առաջընթացի պատմության մեջ ցանկացած մշակույթի համար թե՝ ամենայ է, թե՝ անխոհեմ մերժել բոլոր արտաքին ազդեցությունները, բացառությամբ այն դեպքերի, երբ տեղական մշակույթը խորն է, կարող է ավելի լավ յուրացնել օսար մշակույթները և դրանցով սնել հայրենական մշակույթը: «Հարունակելով հաղորդակցությունն ու փոխանակումները արևմտյան աշխարհի հետ,-ասում է պարոն Ֆեյ Սյաոթունը,- մենք պետք է մեր իսկ գանձերը դարձնենք համաշխարհային մշակույթի ժառանգության մի մաս: Նախ արմատավորում, ապա՝ համաշխարհայնացում»<sup>146</sup>: Սա նշանակում է, որ պետք է պահպանել մեր սեփական մշակույթի արմատները՝ միաժամանակ դասեր առնելով այլ մշակույթից: Այսպիսով, քսանմեկերորդ դարի մշակութային առաջընթացը, որը վերաբերում է բոլոր մարդկային հասարակություններին, պետք է լինի թե՝ ազգային, թե՝ համաշխարհային:

Երրորդ, դատելով մարդկային հասարակությունների ու մշակույթների ստատուս քվոյից՝ արդեն իսկ ձևավորվել ու ձևավորվում է մշակութային բազմազանության նոր կաղապար, որն օժտված է համաշխարհային գիտակցությամբ: Թերևս քսանմեկորդ դարում գերիշխում է չորս հիմնական մշակութային համակարգ. Եվրոպաներիկյան, արևելասահական, հարավասահական և իսլամական (միջնարևելյան և հյուսիսաֆրիկյան): Չորս մշակույթներից յուրաքանչյուրն ունի

145. Քանի որ թարգմանչին չհաջողվեց գտնել այս էսսեի ֆրանսերեն տարբերակը, այս տեքստը հիմնված է չինարեն բարգմանության վրա:  
<<为什么我们西方人研究哲学不能绕开中国?>>, , հրապարակվել է <<跨文化对话>>, , 5-րդ համարում,

էջ 146 上海文化出版社, , հունվար 2001: Թարգմանչի ծանոթագրություն:

146. Ֆեյ Սյաոթուն: (1999): Ֆեյ Սյաոթուն վենցի 〔Ֆեյ Սյաոթունի երկերի ժողովածու〕 (հատոր 14): Պեկին. Ցույնան չուրամշե:

Երկար ավանդույթ և մեկ միջլարդից ավելի բնակչություն: Անշուշտ, գոյություն ունեն նաև այլ մշակույթներ, որոնք ազդեցություն են թողնելու մարդկային հասարակության ապագայի վրա քանի քերորդ դարում, օրինակ՝ լատինաամերիկյան և աֆրիկյան մշակույթները: Այնուամենայինվ, առնվազն ներկա ժամանակներում, այս մշակույթների ազդեցությունը շատ ավելի թույլ է, քան վերը նշված չորս հիմնական մշակույթների ներգործությունը: Եթե մարդկային հասարակությունը հույս ունի վերջ տալ ներկա քառասային իրավիճակին, պետք է հատկապես քննադատի մշակութային գերիշխանությունն ու մշակութային առանցքային դարաշրջանի դեմքը, այլև ջանք ու եռանդ չխնայի՝ տարբեր մշակութային ավանդույթներին պատկանող պետությունների կամ ազգերի միջև երկխոսություն ծավալելու համար, որպեսզի բոլոր մշակույթները ներգրավվեն մարդկային հասարակության առաջ ծառացած ընդհանուր խնդիրների լուծման գործում: Անկասկած, ներկայիս մարդկային հասարակության հսկայական պատասխանատվության բեռջ այս չորս հիմնական մշակույթների ուսերին է: Ներկայուն մարդկային հասարակությունը պատմության շրջադարձային փուլում է, և յուրաքանչյուր ազգ կամ երկիր պետք է լրջորեն վերանայի իր մշակույթը պատմական տեսաննելյունից: Սա հատկապես իրատեսական է Եվրո-ամերիկյան, արևելաասիական, հարավասիական ազգերի կամ հյուածական մշակութային տարածաշրջանների դեպքում, քանի որ դրանք կարևոր գործառույթներ են կատարում ժամանակակից մարդկային քաղաքակրթության մեջ: Վերանայման այս տեսակն, անշուշտ, միանգանցայն անհրաժեշտ է մարդկային հասարակության ապագայի համար: Մշակութային ավանդույթը փաստացի իրականություն է յուրաքանչյուր ազգի կամ պետության համար, և հատկապես այն ազգերի ու պետությունների, որոնք ունեն երկարատև պատմություն և վծուական ներգործություն ժամանակակից մարդկային հասարակության վրա, քանի որ այն խոր արմատներ ունի իր ժողովրդի սրտերում և կազմում է մասնավորապես այդ ազգի կամ պետության հոգևոր ապավենը:

Եկեք վերաբառնանք մեր մշակութային ավանդույթին, այն դարձնենք ելակետ և և նրա մեջ փնտրենք մեր իշխանության ու հոգևոր ապավենի աղբյուրը, զարգացնենք մեր ժամանակակից մշակույթն ու լուծենք մարդկային հասարակությանը ճնշող խնդիրները: Այս իմաստով Եվրո-ամերիկյան, արևելաասիական, հարավասիական և հյուածական մշակույթները, իրենց երկարատև պատմական ավանդույթներով, կարող են օգնել զարգացնել քանի քանի դարի մարդկային հասարակությունը և հասցնել այն «Նոր առանցքային դարաշրջանի» մակարդակի, որը հնարավոր կլինի համեմատել 2500 տարի առաջ տիրող իրավիճակի հետ: Այս նոր առանցքային դարաշրջանում տարբեր մշակութային ավանդույթներ կպահպանեն իրենց գոյությունը, որովհետև նրանց դավանող հանրությունը հսկայական է: Նույնիսկ պատերազմների դեպքում ազդեցությունը կլինի շատ թույլ կամ ժամանակավոր: Այսպես, քաղաքակրթությունների գոյակցությունն արդեն իսկ կամխատենելի է:

## 24.3 Չինական մշակույթը կարո՞ղ է ավանդ ունենալ քաղաքակրթությունների գոյակցության գործում

Եթե չինացի ժողովուրդը ցանկանում է ժամանակակից մարդկային հասարակության մեջ իր ներդրումն ունենալ «քաղաքակրթությունների գոյակցության» գործում, նախ պետք է հրաշալի իմանալ սեփական մշակույթը, ինչզ նշանակում է՝ ունենալ մշակութային ինքնագիտակցություն։ Այսպես կոչված մշակութային ինքնագիտակցությունը նշանակում է որոշակի մշակութային ավանդույթի տիրություն մարդկանց կողմից լուրջ վերաբերմունք սեփական մշակույթի սկզբնավորմանը, պատմությանը, առանձնահատկություններին (այդ թվում և արժանիքներին ու թերություններին), ինչպես նաև առաջընթացի միտումներին և վերջիններիս խոր ուսումնասիրություն։ Արդարացի կլիմի ասել, որ չինացիները ազգային վերածննդի շեմին են։ Այս նպատակին հասնելու համար մենք պետք է տեղյակ լինենք չինական մշակույթի մասին, հավուր պատշաճի գնահատենք նրա տեղը մարդկային քաղաքակրթությունների շարքում և փորձենք անրապնդել այս հնագույն մշակույթի անկեղծ ոգին, որպեսզի այն իր ծշմարիտ է ությանը ներկայանա ժամանակակից մարդկային հասարակությանը։ Մյուս կողմից, պետք է վերլուծենք մեր իսկ մշակույթի թույլ կողմերը, որպեսզի ավելի լավ յուրացնենք այլ մշակույթների էությունը, արդի միջոցներով վերամեկնաբանենք չինական մշակույթը, որպեսզի այն հարմարվի արդի հասարակության զարգացման ընդհանուր միտումներին։ Միայն այս ճանապարհով մեր երկիրը կրառնա համաշխարհային մշակույթի զարգացման առաջամարտիկ և այլ մշակույթների հետ համատեղ կստեղծի նոր աշխարհ։ Կոնֆուցիականությունն ու բառսիզմը ավանդական չինական մշակույթի և մտածողության երկու հիմնական դպրոցներն են և փոխվրացնում են միմյանց։ Անշուշտ, հնդկական բուդդայականության՝ Չինաստան մուտք գործելուց ի վեր բուդդայականությունը նույնպես կարևոր է ներ է խաղացել չինական հասարակության մեջ և մշակույթում։ Այժմ կցանկանայի քննարկել, թե արդյոք կոնֆուցիական և բառսական մտածողությունը կարող է իմաստալից աղբյուր լինել «քաղաքակրթությունների գոյակցության» ուսմունքի համար։

### 24.3.1 Ժենի (仁, բարեգործություն, առաքինություն) կոնֆուցիական ուսմունքը մտածողության աղբյուր է, որը դրական նշանակություն է տալիս «Քաղաքակրթությունների գոյակցությանը»

«ճանապարհը ծագում է զգացմունքից» (道始于性), «ճակատագիրը մարդկային բնույթի աղբյուրն է» (性自命出). այս մասին է վկայում «Գուտոյյան բամբուկից մագաղաթների» ձեռագիր տեքստը (<<郭店竹簡>>): Այստեղ «ճանապարհը» նշանակում է «Մարդկության ճանապարհ» (人道), այսինքն՝ սկզբունքներ, որոնք կապված են մարդկային (կամ, այլ կերպ ասած՝ հասարակական) հարաբերությունների հետ, որը տարբերվում է «Երկնքի ճանապարհից» (天道), այն է՝ բնության կամ տիեզերքի օրենքներից։ Մարդկային հարաբերությունները հիմնվում են զգացմունքի վրա, որը կոնֆուցիական ժեն ուսմունքի ելակետն է։ Մի անգամ Ֆան Չի անունով մի աշակերտ հարցնում է Կոնֆուցիոսին. «Ի՞նչ է ժենը»։ Կոնֆուցիոսը պատասխանում է՝ «սիրել մարդկանց»։ Ո՞րն է «մարդկանց սիրելու»

գաղափարի սկզբնաղբյուրը: «Միջինի ուսմունքում» մեջբերված են Կոնֆուցիոսի հետևյալ խոսքերը. «Ժենը մարդկության հիմնական բնութագրիչ տարրն է, և նրա մեծագույն դրսարրումը հարազատների հանդեպ սերն է»<sup>147</sup>: Բարեգործության և սիրո հոգին (仁爱) արմատավորված է մարդկային երթյան մեջ, և հարազատին սիրելը նրա ամենահիմնական դրսերումն է: Բայց ժենի երթյունը անցնում է այս սահմանը: Ներկայացնենք մի մեջբերում «Գոռույան բամբուկից մագաղաքներից»: «Սիրել ու ամսահման սիրել. դա սեր է, իսկ երբ հոր հանդեպ սերը տարածվում է այլ մարդ արարածների վրա, այն կոչվում է ժեն»<sup>148</sup>: «Որդիական բարեպաշտության ընդլայնումը ենթադրում է սեր երկնքի տակ բոլոր մարդկանց հանդեպ»<sup>149</sup>: Այս խոսքերից հասկանալի է, որ կոնֆուցիական ժեն ուսմունքը պահանջում է ընդլայնել «հարազատների հանդեպ սերը», որպեսզի այն վերածվի «մարդկանց հանդեպ բարեգործության», այսինքն՝ «սեփական անձի հանդեպ մտահոգվելուց զատ հոգ տանել նաև ուրիշների մասին» (推己及人), «պատկառանքով վերաբերել ընտանիքի տարեցներին, որպեսզի այլ ընտանիքների տարեցներն էլ նույն վերաբերմունքի արժանանան, բարությամբ վերաբերվել ընտանիքի երիտասարդներին, որպեսզի այլ ընտանիքների երիտասարդներն էլ արժանանան նոյնային վերաբերմունքի»<sup>150</sup>: սա ժենի գաղափարն է: Յեշտ չէ իրագործել «սեփական անձի հանդեպ հոգատարությունը այլոց վրա տարածելու» ուսմունքը, որը պահանջում է «ժենի» գործնական կիրառում, ինչն էլ արմատավորված է «հավատարմություն և ներողաճանություն» (忠恕之道), հասկացության մեջ, այսինքն՝ «ուրիշների հետ վարվիր այնպես, ինչպես կցանկանաս, որ թեզ հետ վարվեն»<sup>151</sup>: Այս համատեքստում ուշագրավ են նաև հետևյալ գաղափարները՝ «ցանկանալով ինքնահաստատվել՝ նա ուրիշներին է օգնում ինքնահաստատվել, ցանկանալով զարգանալ՝ նա ուրիշներին է օգնում զարգանալ»<sup>152</sup>, «Յավատարմությունը անձի լիակատար նվիրումն է, ներողաճանությունը՝ սեփական եսի հանդեպ հոգատարության նվազումը» 朱熹: <<四书集注>> ):

Եթե ժենը տարածվի ողջ հասարակության վրա, ապա դա կնճանվի Կոնֆուցիոսի ասուլյթին. «Կատարյալ առաքինություն է ճնշել սեփական եսը և վերադառնալ առաքինության օրենքներին: Եթե ջունսին (君子 ջենթլեն, ազնվական) կարողանա մեկ օր ճնշել սեփական եսը և վերադառնալ առաքինության օրենքներին, երկնքի տակ ամեն ինչ կվերադառնա ժենին (նրա օրինակով): Արդյո՞ք ժենը գալիս է հենց մարդուց, թե՞ ուրիշներից»<sup>153</sup>: «Ճնշել սեփական եսը» ու «վերադառնալ առաքինության օրենքներին» սովորաբար մեկնարանվում է՝ որպես երկու զուգահեռ ուսմունք, բայց ես չեմ համարում, որ սա այս ուսմունքի լավագույն բացատ-

147. <<中庸>>: “仁者，人也，亲亲为大。”《Միջինի ուսմունք》，գլուխ 20

148. <<郭店竹简q五行>>: “亲而笃之，爱也。爱父，其攸爱人，仁也”

149. <<郭店竹简q唐虞之道>>: “孝之放，爱天下之民”

150. Մենցին, գլուխ 2:

151. Տարեգործեր, գլուխ 12:

152. Տարեգործեր, գլուխ 6:

153. <<论语q颜渊>>: “克己复礼曰仁”《Տարեգործեր》，գլուխ 12:

րությունն է: «ճնշել սեփական եսն ու վերադառնալ առաքինության օրենքներին կատարյալ առաքինություն է» արտահայտությունն իրականում վերաբերում է «առաքինության օրենքներով առաջնորդվելուն». սա իմանված է «սեփական անձի ցանկությունները ճնշելու վրա» վրա և համարվում է ժեն: Պարոն Ֆեյ Սյառթունը իր սեփական մեկնարանությունն ուներ այս ուսմունքի մասին. «Միայն սեփական եսը ճնշելուց հետո մարդը կարող է վերադառնալ առաքինության օրենքներին: Վերջինս հասարակություն մուտք գործելու և հասարակության անդամ դառնալու նախադրյալ է: Թերևս հենց այս կետում էլ արևնտյան և արևելյան քաղաքակրթությունների ուղիները բաժանվում են՝ «ինչպես ընդարձակել կամ ճնշել սեփական անձը<sup>154</sup>»: Կարծում եմ՝ պարոն Ֆեյի դիտարկումը մեծնշանակություն ունի: Զու Սին նույնպես տալիս է այս ուսմունքի իր մեկնարանությունը: «Ճնշել նշանակում է նվաճել,-ասում է նա,-իսկ սեփական եսը մարդու անձնական ցանկություններն են: Վերադառնալ նշանակում է վերականգնել, իսկ առաքինությունը երկնքի սկզբունքի օրենքներն ու կաղապարներն են»: Ըստ այս մեկնարանության՝ մարդը պետք է ճնշի իր անձնական ցանկությունները, որպեսզի ապրի վայելչության ու հասարակական չափանիշների համաձայն: Ժենը մարդու բնական առաքինությունն է («Սերը ծնվում է բնության մեջ»<sup>155</sup>), իսկ վայելչության օրենքները՝ մարդու վարքագիծը կառավարող արտաքին սովորույթները, որոնց գործառույթը հասարակական հարաբերությունների շուկումն է, որպեսզի մարդիկ կարողանան ապրել ներդաշնակության մեջ, ինչպես անփոփում է Կոնֆուցիոնը իր հին ասույթներից մեկում. «Վայելչության ամենաարժեքավոր գործառույթը ներդաշնակությունն է»<sup>156</sup>: Սիայն երբ մարդը պատրաստականորեն ապրում է ըստ վայելչության օրենքների և հասարակական չափանիշների, այսինքն՝ մարդկանց սիրելու ներքին կամքով, կարող է իրականացնել ժենի պահանջները: Այսպիսով, Կոնֆուցիոնը հարցում է. «Արդյո՞ք ժենի պրակտիկան հենց մարդուց է, թե ուրիշներից»: Նա տարբերակում է ժենի և վայելչության միջև. «Եթե մարդը գուրկ է ժենից, ապա ի՞նչ կապ ունի նա վայելչության ծեսերի հետ: Եթե մարդը գուրկ է ժենից, ի՞նչ կապ ունի երաժշտության հետ»<sup>157</sup>: Նա, որ կատարում է ծեսերը կամ երաժշտությունը առանց բարեգործ ու սիրող սրտի, փարիսեցի և ծառայում է խարեւությանը: Այս իմաստով էլ Կոնֆուցիոնը կարծում էր, որ եթե մարդիկ ինքնագիտակցարար հետևեն ժենին և կատարեն այն, ինչ պահանջում է բարեգործ ու սիրող սիրտը՝ ըստ առօրյա կյանքի վայելչության օրենքների, ապա հասարակության մեջ կրարգավաճի ներդաշնակությունն ու խաղաղությունը. «Եթե ջունցին կարողանա մեկ օր ճնշել ինը իրեն ու վերադառնալ առաքինության օրենքներին, երկնքի տակ ամեն ինչ կվերադառնա ժենին»: Իմ կարծիքով՝ Կոնֆուցիոնի այս

154. Ֆեյ Սյառթուն: (2002, փետրվար): Մարդու և բնության հարաբերությունների վերանայում մշակութարանության տեսակյունից: Չինաստումի Սոցիոլոգիական հետազոտությունների և զարգացման ուսումնասիրությունների կենտրոնի (CSR DSC) աշխատություն, Սոցիոլոգիայի բաժին, Սոցիոլոգիայի և մարդաբանության ինստիտուտ, Պեկինի համալսարան, Պեկին:

155. <<郭店竹简·语丛二>>: “爰生于性”

156. <<s论语·学而>>: “礼之用、和为贵 《Swartekopfեր》, գլուխ 1:

157. h论语·八佾ii: “人而不仁如礼何?人而不仁如乐何 《Swartekopfեր》, գլուխ 3:

ուսմունքն միանգամայն իմաստալից է, հատկապես պետության քաղաքական առաջնորդների կամ զարգացած երկրների (մասնավորապես Միացյալ Նահանգների) կառավարող դասի համար: «Ժենի քաղաքականությունը» (仁政) կամ «ողջախոհ կայսեր ճանապարհը» (王道), ի տարբերություն «գերիշխանության ճանապարհի» (王道), անհրաժեշտ պայման է «պետությունը կառավարելու» (治國) և «Երկնի տակ ամեն ինչ ներդաշնակեցնելու» (平天下) համար: Եթե «Ժենի քաղաքականությունը» կամ «ողջախոհ կայսեր ճանապարհը» կիրառվի, ապա տարբեր մշակույթներն ի վիճակի կիհնեն խաղաղ գոյակցել ու զարգանալ, իսկ «գերիշխանությունը» կիանգեցնի «քաղաքակրթությունների բախման», որի արդյունքում էլ կիաստատվի միանշակությանություն և մշակութային գերիշխանություն: Եթե կոնֆուցիականության ժեն ուսմունքը օգտագործվում է միջնակութային հարաբերությունները կարգավորելու համար, ապա նրա շնորհիվ հնարավոր կիհնի խուսափել քաղաքակրթությունների բախմանց կամ պատերազմներից, և քաղաքակրթությունները կարողանան խաղաղ գոյակցել:

Անշուշտ, նույնիսկ ժենի կոնֆուցիական ուսմունքն այն կախարդական դեղափոշին չէ, որը կլուծի ժամանակակից հասարակության մեջ քաղաքակրթությունների բոլոր խնդիրները: Այնուամենայնիվ, որպես Բարեգործության և Սիրո վրա հիմնված քարոյական ինքնակարգավորումների շարք, այն, անկասկած, որոշ քաղաքական նշանակություն ունի քաղաքակրթությունների գոյակցությունը ներդաշնակեցնելու հարցում, եթե կիրառվի՝ որպես միջնակութային և մշակութային հարաբերությունները կարգավորող սկզբունք:

Դեշտ չէ ապահովել ներդաշնակությունը տարբեր մշակույթների միջև՝ այդպիսով ապահովելով տարբեր մշակութային ավանդույթներին դավանող պետությունների ու ազգերի խաղաղ գոյակցությունը: Յավանաքարտ «Ներդաշնակություն քազմազանության մեջ» (和而不同)<sup>158</sup> կոնֆուցիական ուսմունքը կարող է մտածողության աղբյուր լինել մեզ համար: Ըստ Կոնֆուցիոնի՝ «Ողջախոհները (չունցի) ներդաշնակության են հասնում առանց միմյանց հետ համաձայնելու. անխոհեմները (սյաստեն) համաձայնում են ուրիշների հետ՝ առանց ներդաշնակության»<sup>159</sup>: Զունցին՝ քարոյական կարգապահությամբ առաջնորդվող մտավորականները, որոնք գնում են Յավանատարմության ու ներդաշնակության ճանապարհով, պետք է փորձեն լեզու գտնել ուրիշների հետ ներդաշնակության մեջ՝ ի հեճուկս կարծիքների տարբերության. բայց նրանք, որոնք գործ են քարոյականությունից կամ կարգապահությունից, մշտապես ուրիշներին ստիպում են ընդունել իրենց տեսակետը, ուստի չեն կարող ներդաշնակ հարաբերություններ պահ-

158. Այս համատեքստում են քարգմանում եմ «Ներդաշնակություն քազմազանության մեջ», և ոչ թե «Միասնություն քազմազանության մեջ». վերջինս այս եզրույթի քարգմանության մեկ այլ տարածված տարբերակ է: Թուն (同) նշանակում է Յամաձայնություն, եթե խոսքը վերաբերում է մարդկային հարաբերություններին, և նույնություն կամ միասնություն, եթե խոսքը վերաբերում է նյութական առարկաներին: Այսպիսվ, քարգմանիչն ընտրում է այն տարբերակը, որը համապատասխանում է համատեքստին, և «不同» քառ քարգմանում է քազմազանություն, անհամաձայնություն կամ տարատեռություն, և այլն:

159. <<论语·子路>>: “君子和而不同, 小人同而不和。” «Տարեգոքեր», գլուխ 12:

պանել ուրիշների հետ: Եթե «Ներդաշնակություն բազմազանության մեջ» ուսմունքը հնարավոր լինի որպես սկզբունք կիրառել միջմշակութային ու մշակութային հարաբերություններում, այն կարող է խստ դրական դեր խաղալ պետությունների կամ ազգերի հակամարտություններում: Այն հատկապես օգտակար կլինի պետությունների կամ ազգերի միջև մշակութային տարրերությունների (օրինակ՝ կրոնական համոզմունքների կամ հասարակական արժեքների) արդյունքում առաջացած անհամաձայնություններն ու հակասությունները հարթեցնելու համար, եթե «Ներդաշնակություն բազմազանության մեջ» սկզբունքը կիրառենք՝ որպես այս հակամարտությունները լուծելու սկզբունք:

«Ներդաշնակությունն» ու «նույնություն» ընդհանրապես ավանդական չինական մտածողության մեջ համարվում են երկու տարրեր հակացություններ: Չինաստանի պատմության մեջ քննարկումներ են եղել «Ներդաշնակություն և նույնություն» հասկացությունների շուրջ: Ինչպես պատմում է «Ցուոչուանը», մի անգամ Ցի դուքսը հարցնում է Յան-ցիին. «Միայն Զու՞ն է կարողանում իմ հետ ներդաշնակ գոյակցել»: Յան-ցին պատասխանում է. «Զուն պարզապես արտահայտում է Զերդ մեծության կարծիքը. ինչպես սկարելի է այդ երևույթը ներդաշնակություն կոչել»: «Խոկ հ՞նչ տարրերություն կա ներդաշնակության և նույնության միջև», -հարցնում է դուքսը: Դրանք միանգամայն տարրեր են, -բացատրում է Յան-ցին: «Ներդաշնակությունը նման է լավ եփած ուտեստի. ծուկը և միսը պետք է պատրաստել ջրով, կրակով, քացախով, մածուկով, աղով ու սալորով, ապա եփել կրակի վրա: Խոհարարը ներդաշնակեցնում է այս համերը, որպեսզի դրանք չափավոր լինեն: Եթե համը շատ թույլ է, ապա պետք է աղ ավելացնել եթե չափազանց աղի է, անհրաժեշտ է ջուր ավելացնել: Երբ Զունցին ճաշակում է այս ուտեստը, նրա սիրտը խաղաղվում է: Սա նման է Արքայի ու նրա դատավորների հարաբերություններին: Բայց Զուն տարրերվում է դրանից: Երբ Զերդ մեծությունն ասում է, որ ինչ-որ բան ծիշտ է, նա համաձայնում է: Երբ Զերդ մեծությունը հակառակն է ասում, նա նորից համաձայնում է: Սա նույնն է, ինչ եթե ջուրն ավելացնես ջրի վրա. ո՞վ կարող է այդպիսի ուտեստ ճաշակել: Կամ նույնն է, ինչ եթե երաժշտական գործիքը նույն մեղեդին նվազի. ո՞վ հաճույք կստանա այս երաժշտությունից: Ահա այս պատճառով էլ նույնությունը տարրերվում է ներդաշնակությունից»: Շիբոյի (史伯) մեկ այլ ասույթ պատմում է. «Իրականում միայն ներդաշնակությունը կարող է խթանել կյանքի օարգացումը, իսկ նույնությունը՝ հակառակը, արգելակել այն: Ներդաշնակությունը չափավորում է ամեն ինչ տարածեն երևույթների միջոցով. միայն այս դեպքում կյանքը փթթում է ու գտնում է այն, ինչ պատկանում է իրեն: Եթե մի նյութ լրացնես նոյն նյութով, ապա այն ոչ ոքի չի հետաքրքի: Այսպիսով, հնագույն ժամանակների ողջախոհ կայսրերը «համեմում» էին երկիրը Մետաղով, Փայտով, Ջրով ու Կրակով<sup>160</sup>, որպեսզի այնտեղ տարրեր կյանքեր հայտնվեմ<sup>161</sup>»: (<<国语·郑语>>) Վերը նշված մեջրերումից հասկանում

160. Անտիկ չինական փիլիսոփայության մեջ Մետաղը, Փայտը, Ջուրը, Կրակը և Հողը հինգ գործընթացներ են (五行), այսինքն՝ հինգ հիմնական տարրեր, որոնցից կազմված է աշխարհը. Թարգմանչի ծամորագրություն:

161. <<国语·郑语>>: “史伯曰:夫和实生物, 同则不继。以他平他谓之和, 故能丰长而物归之; 若

以同裨同, 尽乃弃之。故先王以土、与金、木、水、火杂, 以成百物”

ենք, որ ներդաշնակությունն ու նույնությունը միանգամայն տարբեր հասկացություններ են: Միայն տարբերության և հարաբերակցության դեպքում կարելի է իրերը «չափավորել տարասեռությամբ», և տարբեր երևույթները համատեղ ներդաշնակ առաջընթաց կունենան: «Ինչ-որ բան միասեռությամբ լրացնել» նշանակում է նույնություն, որը միայն շնչահեղձ է անում մարդուն: Ավանդական չինական մշակույթի գերագույն իդեալն այն է, որ «բազմազան կյանքերը զարգանան միասին՝ առանց միմյանց վնասելու. բազմազան ճանապարհներն օգտագործվեն միասին՝ առանց միմյանց չեղոքացնելու»<sup>162</sup>: «Բազմազան կյանքերը» և «բազմազան ճանապարհները» վերաբերում են առհասարակ բազմազանությամբ: «Առանց միմյանց վնասելու» և «առանց միմյանց չեղոքացնելու» հասկացությունները վերաբերում են ներդաշնակությամբ: Այս ուսմունքը բազմազան մշակույթների գոյակցության մասին մտածելու անսպառ աղյուր է մեզ համար:

Այժմ արևմտյան երկրներում ներըմբռնումով օժտված մարդիկ արդեն իսկ ընդունել են քաղաքակրթությունների գոյակցության հնարավորությունը, և այն, որ պետք է խուսափել միայն մշակութային տարբերությունների հետևանքով առաջացած բախումից կամ պատերազմից: Նրանք հավատացած են, որ տարբեր ագգերն ու պետությունները պետք է կարողանան ընդհանուր հայտարարի գալ մշակութային փոխանակումների, երկխոսությունների ու քննարկումների միջոցով: Սա «բազմազանությունից» դեպի փոխըմբռնում գործընթացն է: Այս փոխըմբռնումը չի նշանակում ոչնչացնել կամ ծովալել անհատական մշակույթները, այլ ենթադրում է գտնել երկու տարբեր մշակույթների հատման կետը և այն որպես հիմք օգտագործել՝ երկու մշակույթների առաջընթացի համար. սա է «ներդաշնակության» գործառույթը: Բազմազան մշակույթների տարբերությունների պատճառով էլ մարդկային քաղաքակրթություններն այնքան բազմագույն են դարձել, որ մարդկային պատմության հարահոս գետում աստիճանաբար ծևավորվուն է լրացնիչ և միմյանց հետ հաղորդակցվող մշակույթներ: Մշակութային տարբերությունները կարող են հանգեցնել բախումների կամ նոյնիսկ պատերազմների, բայց ոչ բոլոր տարբերություններն են ի գործու բախումների կամ պատերազմների պատճառ դառնալ: Հատկապես այն դարաշրջանում, երբ գիտությունն ու տեխնոլոգիան արագորեն զարգանում են, մասսայական պատերազմը կարող է հեշտությամբ ոչնչացնել մարդկությունը: Ուստինք, մենք պետք է ձգտենք պահպանել ներդաշնակ գոյակցությունը միջնշակութային երկխոսությունների միջոցով: Չինաստանում և նրա սահմաններից դուրս բազմաթիվ գիտնականներ հասկանում են փոխըմբռնան կարևորությունը, որը հասանելի է տարբեր մշակույթների երկխոսությունների միջոցով: Օրինակ, Հարերմասը սկսում է ընդգծել արդարության ու համերաշխության հասկացությունները: Իմ կարծիքով՝ դրանք կարևոր սկզբունքներ են միջազգային մշակութային հարաբերություններում: Հարերմասի «Արդարության սկզբունքը» կարելի է հասկանալ հետևյալ կերպ. յուրաքանչյուր ազգային մշակույթ իրավունք ունի պաշտպանել իր անկախությունն ու ինքնավարությունը և ազատ զարգանալ՝ ըստ իր ժողովրդի կամքի: Նրա «համերաշխության սկզբունքը», մյուս կողմից, կարելի է մեկնարանել՝ որպես այլ ազգային մշակույթները համակրելու, հասկանալու ու հարգելու պարտավորություն: Տար-

162. <<中庸>>: “万物并育而不相害。道并行而不相悖。《Միջինի ուսմունքը》, գլուխ 30:

բեր ազգային մշակույթների միջև անընդհատ վարվող երկխոսությունների ու հաղորդակցության շնորհիվ վաղ թե ուշ հնարավոր կլինի ձևավորել շփումների դրական շրջափուլ<sup>163</sup>: Այս սկզբունքի մյուս հետևողը գերմանացի փիլիսոփա Գաղամերն է: Նա առաջարկում էր, որ «ընկալումը» պետք է հասցնել «համընդհանուր երկխոսության» նակարդակի: Այս ընդլայնման շնորհիվ սուբյեկտի հարաբերությունը (որպես հնացական կամ քերականական հասկացություն) հնարավոր է անհավասարությունից տանել դեպի հավասարության. այլ կերպ ասած՝ երկխոսություններն ինաստալից ու արդյունավետ կլինեն, եթե անցկացվեն հավասար հիմքի վրա: Գաղամերի՝ սուբյեկտի և օբյեկտի միջև հավասարության գիտակցությունը և «մշակութային երկխոսության» նրա տեսությունը կարեռ գաղափարներ են, որոնց կարիքը խիստ զգացվում է մեր ժամանակներում<sup>164</sup>, և որոնք մեզ բավական հստակ, պատշաճ ու խոր պատկերացում են տալիս Չինաստանի և այլ ազգերի միջև մշակութային կամ ազգային հարաբերությունների մասին: Այնուամենայնիվ, թե՛ Յարեղնասի արդարության և համերաշխության սկզբունքների, թե՛ Գաղամերի համընդհանուր երկխոսության տեսության դեպքում ընդհանուր կանխադրույթը պետք է լինի «Բազմազանության մեջ ներդաշնակության» սկզբունքը, քանի որ միայն տարբեր մշակութային ավանդույթներ կրող ազգերի ու պետությունների ներդաշնակ գոյակցության դեպքում նրանք կարող են ձեռք բերել հավասար իրավունքներ ու պարտավորություններ, և միայն այդ դեպքում նրանց միջև «համընդհանուր երկխոսությունը» կարող է ինաստալից ու արդյունավետ լինել: Յետևաբար, «Ներդաշնակություն բազմազանության մեջ» սկզբունքը, որը հիմնված է այն համոզմունքի վրա, որ «ներդաշնակությունը ամենաարժեքավորն է»<sup>165</sup>, պետք է կիրառվի՝ որպես միջմշակութային հարաբերությունները կարգավորող հիմնական սկզբունքը: Եթե այս սկզբունքը որդեգրվի բոլոր պետությունների և ազգերի կողմից, այն դրական գործոն կլինի ոչ միայն ահամաձայնությունները, հակամարտությունները և նույնիսկ պատերազմները չեզոքացնելու գործում, այլև կարևոր խթան կդառնա փոխանակումների և հաղորդակցության միջոցով բոլոր պետությունների ու ազգերի զարգացման համար: Յենց այս ինաստով է Բերտրան Ռասելն ասել է. «Տարբեր քաղաքակրթությունների միջև շփումներն անցյալում հաճախ դարձել են մարդկային առաջընթացի նշանողեր»: Ժամանակակից մարդկային հասարակությանը անհրաժեշտ են տարբեր մշակույթներ՝ փոխադարձ յուրացման և միավորման միջոցով իրենց ավանդական առանձնահատկությունները զարգացնելու և նոր հիմքի վրա քաղաքակրթությունների գոյակցությունն ապահովելու համար:

#### **24.3.2 ճանապարհի (թառ) թառսական ուսմունքը կարող է մտքի**

163. Յուե Դայում: (2002): *Մշակութային հարաբերականություն և համեմատական գրականություն: Միջմշակութային կամուրջ: Պեկին. Պեկինի համալսարանի հրատարակչություն:*

164. Փան Դեժում. «Գաղամերի փիլիսոփայական ժառանգությունը»: Քսանմեկերորդ դար, ՀԿ, ապրիլ, 200, Յու Ցիշի: «Փիլիսոփայական մարդասիրության զարգացումը»: Քսանմեկերորդ դար, ՀԿ, օգոստոս, 2002:

165. <论语·学而>: “和为贵 «Տարեգրեր», գլուխ 1: Նաև՝ ժամոթագրություն 23:

## նշանակալի աղբյուր լինել «Քաղաքակրթությունների բախումը» կանխելու համար

Եթե Կոնֆուցիոսը «առաքինի մարդ է» (仁者), ապա Լաոցին «իմաստուն մարդ է» (智者): ճանապարհը հիմնարար հասկացություն է Լաոցիի «Թառ Թե Չինում», իսկ «ինքնարերությունն ու անգործությունը» (自然无为: Ենթարկվել բնության օրենքներին՝ առանց դրանք խախտելով) ճանապարհի հիմնական առանձնահատկություններն են: «Ինքնարերությունն ու անգործությունը Երկնքի ճանապարհն են», - ասում է Վան Չունը իր «Լուն Շեն» գործում<sup>167</sup>: ժամանակակից մարդկային հասարակության ամենատարբեր հակամարտություններն, ամկասկած, առաջացել են իշխանության ու հարստության ազահ ձգտումներից: Այդ հզոր տերությունները, եսասիական շահերի հետապնդման և իշխանության ընդլայնման իրենց ձգտումներում, չարաշահում են չզարգացած երկրների ռեսուրսներն ու օգտագործում քաղաքական իշխանությունը, որը համաշխարհային քառոսի հիմնական պատճառն է: Լաոցիի «ինքնարերության և անգործության» ուսումնար կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ՝ չանել ոչինչ, ինչը կարող է սպառնալ հասարակության և աշխարհի խաղաղությանը: Լաոցին մի անգամ մեջբերել էր մի իին իմաստունի խոսքը. «Եթե ես ոչինչ չանեմ, մարդիկ ինքնուրույն կրարեփոխսվեն. եթե սիրեմ լրությունը, նրանք ինքնուրույն կպահպանեն կարգուկանոնը, երբ խուսափեմ խնդիրներից, մարդիկ ինքնուրույն կրարգավաճեն, երբ ցանկություն չունենամ, նրանք ինքնուրույն կապրեն ասկեսության մեջ»<sup>168</sup>: Սա նշանակում է, որ քաղաքական իշխանություն ունեցող կառավարիչը չպետք է միջամտի իր ժողովրդի կյանքին (անգործություն), և չպետք է խանգարի նրանց առօրյա կյանքը (հանդարտություն պահպանել), չպետք է գործի նրանց կամքին հակառակ (խուսափել խնդիրներից), չպետք է ազահորեն չարաշահի նրանց (չունենալ ոչ մի ցանկություն). այսպիսով, մարդիկ ինքնուրույն կրարեփոխսվեն, ինքնուրույն կարգուկանոն կպահպանեն և ինքնուրույն կորոշեն ապրել զուսպ կյանքով: Եթե մենք արդի մեկնաբանություն տամբ այս ուսմունքին և այն կիրառենք ժամանակակից հասարակությանը կառավարելու մեջ, այն ոչ միայն խաղաղություն կրերի երկրին, այլև զգալի դեր կունենա քաղաքակրթությունների բախումը կանխելու գործում: Մենք կարող ենք վերը նշված ուսմունքը մեկնաբանել հետևյալ կերպ: միջազգային քաղաքականության մեջ որքան երկիրն ավելի է միջամտում այլ երկրների գործերին, այնքան աշխարհն ավելի քառային է դառնում. որքան մեծ տերությունները ռազմական ուժով սպառնում են մյուսներին, այնքան ավելի փոթորկուն ու ամենազ է դառնում աշխարհը. որքան մեծ տերությունները շահագործում են չզարգացած երկրները միջազգային օգնության պատրվակով, այնքան չզարգացած երկրներն ավելի են աղքատանում. որքան զարգացած երկրները կրվում են՝ հարստության և համաշխարհային գերիշխանության համար, այնքան աշխարհն ավելի անբարո ու ահարեկված է դառնում: Շետևաբար, ին կարծիքով,

167. 王充: *hh論衡.初稟>>。*

168. <<道德經>>第57章: 我无为而民自化, 我好静而民自正, 我无事而民自富, 我无欲而民自朴 『Թառ Թե Չին», գլուխ 57:

«անգործության կամ ոչինչ չանելու» ուսմունքը կարող է արդյունավետ դեղատոմս լինել այսպես կոչված նոր կայսրության առաջնորդների համար: Եթե նրանք ընդունեն այս դեղատոմսը, աշխարհը խաղաղություն կվայելի: Այնուամենայնիվ, «նոր կայսրությունը» միշտ շահագործում է այլ պետություններն ու ագգերը «կանխամտածված գործողությունների» (有为) միջոցով, ինչպիսիք են միջամտությունը, չարաշահումը կամ ռազմական սպառնալիքը, որոնք, անկասկած, բնորոշվում են նրա կայսերական ազահությամբ: Ըստ Լաոցիի՝ «Չկա ավելի մեծ աղետ, քան դժգոհությունը: Չկա ավելի մահացու մեղք, քան ցանկասիրությունը: Նա, ով գործակալ գիտի, միշտ գործ կլի կլինի»<sup>169</sup>: Արդյո՞ք «նոր կայսրությունը» դժգոհ ու ցանկասեր չէ: Լաոցին դարձյալ ասում է. «Մի՞թե Երկնքի ճանապարհը նման չէ կոտրված աղեղի: Վերևի մասը սեղմված է, իջեցված ներքև, ներքևի մասը բարձրացել է, պարանը դուրս է ընկել տեղից ու լայնացել: Իսկ Երկնքի վերցնում է նրանց ափսեները, ովքեր բավականաչափ կերել են, ու լցոնում է նրանց ափսեները, որոնք անորի են: Բայց մարդու ճանապարհն այլ կերպ է շարժվում. մարդոիկ, որոնք ունեն ավելին, քան պետք է, այլասերված են, որովհետև տուրք են տալիս հարստության ու հագեցմանը»<sup>170</sup>: Ինչու՞ այսօր մեր աշխարհում մարդկային հասարակությունը փորորկում ու խառնաշփոր վիճակում է: Արդյո՞ք դրա միակ մեղավորները հենց իրենք՝ մարդ արարածները չեն, հատկապես «նոր կայսրության» այն առաջնորդները, որոնք գործում են «Երկնքի ճանապարհի» դեմ և մոռանում «մարդկանց սրտերը», ինչու՞ են արհամարհում նրանց, որ կարիքավոր են ու քաղցած, ու տուրք տալիս նրանց, որ հարուստ են ու հագեցած: Մի՞թե սա չէ ժամանակակից աշխարհի բոլոր տարածայնությունների, հակամարտությունների ու պատերազմների արմատը: Այսպիսով, մենք բացահայտում ենք, որ «քաղաքակրթությունների բախման» տեսությունը սերտորեն կապված է «նոր կայսրության» տեսության հետ, որը խնամքով բացված է:

Լաոցին խիստ դեմ էր հանուն աշխարհի խաղաղության մղվով պատերազմներին: «Թառ թե Չինի» 31-րդ գլուխուն նա ասում է. «Զենքերը վատ նախանշաներ են, որից նողկում են բոլորը: ճանապարհի հետևորդները խուսափում են դրանցից»<sup>171</sup>: Պատերազմների ընթացքում մշտապես մարդիկ են սպանվում, արտադրությունն ընդհատվում է, հասարակական կարգը՝ խախտվում. ուստի, Լաոցին կարծում է, որ պատերազմը չարիք է, որովհետև մարդիկ ատում են այն, իսկ առաքինի պետական գործիչները չպետք է իրեն Երկիրը ներգրավեն պատերազմի մեջ՝ իրենց եսասիրական խնդիրները լուծելու համար: Դարձյալ Լաոցին ասում է. «Թույլ մի՛ տվեք, որ նրանք իրենց ռազմիկների հետ փորձեն նվաճել աշխարհը. Երկինքը վերմիշնդիր կիհնի դրա համար: Այն ճանապարհներին, որոնցով բանակներ են անցել, փշավարդեր են ածում: Պատերազմներին հաջորդում են սովի ու չարիքի տարիներ»<sup>172</sup>: Ընդհանուր առմամբ, սա բոլոր ազգերի ծննարիտ պատմությունն է: Յուրաքանչյուր խոշոր պատերազմից հետո Չինաստանի բնակ-

169. <<道德经>>第46章: “祸莫大于不知足,咎莫大于欲得,知足之足,常足矣” 《Թառ թե Չինի》, գլուխ 46:

170. <<道德经>>第77章: “天之道”,其犹张弓欤?高者抑之,下者举之;有余者损之,不足者补之。

天之道, 损有余而不足, 人道则不然, 损不足以奉有余。 《Թառ թե Չինի》, գլուխ 77:

171. <<道德经>>第31章: “夫兵者, 不祥之器, 物或恶之, 故有道者不处。” 《Թառ թե Չինի》, գլուխ 31:

172. <<道德经>>第74章: “民不畏死, 奈何以死惧之?” 《Թառ թե Չինի》, գլուխ 74:

չությունը զգալիորեն նվազում էր, հողերն ամայանում էին, արտադրությունը՝ ընդհատվում, և երկիրը ողողվում էր կողոպտիչներով ու գողերով: Երկու համաշխարհային պատերազմներն էլ պատրվեցին նույն ձևով, և Միջին արևելքի ներկայիս պատերազմը բացառություն չէ: Ամեն անգամ, երբ «մեծ կայսրության» առաջնորդները որևէ տեղ պատերազմ են հրահրում, ոչ մի հաջողության չեն հասնում, որովհետև նվաճված երկրների ժողովուրդները չեն հանձնվում, և նրանք կրվում են մահվան վախը մոռացած: Ինչպես ասում է Լաոցին. «Մարդիկ բոլորովին չեն վախենում մահից. այդ դեպքում ի՞նչ իմաստ ունի նրանց սպառնալ մահով» և «Խակ նրանք, որ հաճույք են ստանում սպանությունից, երբեք չեն ազատվի այն աշխարհից, որին ձգտում են»<sup>173</sup>: Պատմությունից մեզ պարզ է դառնում, որ այս բոլոր պատերազմները հրահրուդները, չնայած հնարավոր ժամանակավոր հաջողություններին, ի վերջո ծախողվել և անվանարկվել են: Այդպիսի վառ օրինակ է Չիտլերը, ինչպես նաև ճապոնական միլիտարիզմը: Որպես «իմաստում մարդ»՝ Լաոցին կարողացել էր իր իմաստությամբ դիտարկել այս հարցի թաքնված կողմը: Նա ասում է. «Բարեբախստությունը միշտ բաքնվում է բարեբախստության վրա, իսկ դժբախստությունը միշտ բաքնվում է դժբախստության մարդիկ տառապում են, բայց դա անհրաժեշտ նախապայման է, որն ապագայում պիտի երաշխավոր նրանց ազգի վերածնունդը: Եթե, օրինակ, դժբարկենք Չինաստանի պատմության վերջին հարյուր տարիները, պարզ կդառնա, որ երկիրը մշտապես տառապանքներ էր կրում, և դա, ի վերջո, արթնացրեց չինացի ժողովորդին: Այսօր կարող ենք ասել, որ չինացիները մեծ վերածննդի շեմին են: Իմ կարծիքով՝ բոլոր երկրների և հատկապես «նոր կայսրության» առաջնորդները պետք է դասեր քաղեն «Թառ Թե Չին» իմաստուն ուսմունքից և հասկանան, որ վաղ թե ուշ մեծ տերությունների քաղաքականությունն ու գերիշխանությունը ապագա չի ունենալու: Դետևաբար, կարծում են, որ Լաոցիի մտածողությունն արժեքափոր նշանակություն ունի «քաղաքակրթությունների բախման» տեսությունները և «նոր կայսրության» մտածողությունը մերժելու համար: Մենք պաշտպանում ենք «քաղաքակրթությունների գոյակցության» տեսությունը և համաձայն ենք «ոչինչ չանելու» Լաոցիի զաղափարի հետ, որն առաջարկում է սպասել ներդաշնակության աշխարհի, որը խաղաղություն, անվտանգություն, ընդհանուր առաջընթաց կապահովի ողջ մարդկությանը: Անշուշտ, քանի որ Լաոցին ծնվել է 2000 տարի առաջ, նրա փիլիսոփայությունը չի կարող լուծել այն խնդիրները, որոնք ծառացել են ժամանակակից մարդկային հասարակության առաջ, այդ թվում և տարածայնություններն ու բախումները ազգերի միջև, բայց նրա իմաստությունը պետք է կարևոր արժեք լինի մեր ճանապարհին: Մեր խնդիրն է՝ վերանայել ու զարգացնել նրա մտածողության եռթյունը, արդի մեկնարանություն տալ նրան, որպեսզի հանրությունը կարողանա օգուտ քաղել ինչ չինական փիլիսոփայության գանձարանից:

Կրոնական համոզմունքների, արժեքների և մտածողության տարբերությունները կարող են բախումների պատճառ դառնալ ազգերի ու պետությունների միջև, իսկ բախումներն էլ կարող են հանգեցնել պատերազմների: Սակայն մեզ

173. <<道德经>>第31章: “夫乐杀人者, 则不可得志于天下矣。《Թառ Թե Չին》, գլուխ 31:

174. <<道德经>>第58章: “祸兮, 福之所倚; 福兮, 祸之所伏。” 《Թառ Թե Չին》, գլուխ 58:

հարց է տանջում. մի՞թե այս բախումներն անխուսափելի են: Մի՞թե հնարավոր չէ լուծել այդ բախումները խաղաղ ճանապարհով, առանց մշակութային տարբերություններով պայմանավորված պատերազմների: Անհրաժեշտ է ազգային բոլոր մշակույթներում գտնել մտածողության ընդիմանուր աղբյուր, որը պաշտպանում է քաղաքակրթությունների գոյակցությունը, ինչն էլ հնարավորություն կտա խուսափել ցանկացած հնարավոր բախումից կամ պատերազմից: Ինչպես նշվեց վերևում, չինական մշակույթը՝ կոնֆուցիականությունը և բառսիզմը, կարող են մտածողության կարևոր աղբյուր լինել, որոնք կիրագործեն քաղաքակրթությունների խաղաղ գոյակցության գաղափարը: Ես հավատում եմ, որ այդպիսի աղբյուրներ կարելի է գտնել նաև այլ ազգերի ու պետությունների մշակույթներում: Քսանմեկերորդ դարում մենք պետք է զգուշորեն ընտրություն կտարենք. արդյո՞ք ազգերի ու պետությունների միջև ծագած խնդիրները կարգավորելիս պետք է օգտվել «քաղաքակրթությունների բախման» տեսությունից, թե՝ ապահովել մարդկային հասարակության խաղաղությունը «քաղաքակրթությունների գոյակցությունը» քարոզող տեսության միջոցով: Մարդկությունը մեծապես կշահի, եթե ընտրենք ոչ թե քաղաքակրթությունների բախման, այլ խաղաղ գոյակցության տարբերակը: «Պատմության գիրքն» ուսուցանում է. «Երկնքի տակ բոլոր պետությունները պետք է ներդաշնակվեն»<sup>175</sup>: Ինչպես բազմաթիվ այլ ազգեր, չինացիները հզոր են և ունեն պատմության ու մշակույթի տևական ու փայլուն ավանդույթ: Չինական մշակույթն, անկասկած, մարդկության ամենաարժեքավոր գանձերից է: Ունենալով այսպիսի մշակութային ժառանգություն՝ մենք պիտի կարողանանք խոշոր ներդրում ունենալ մարդկային քաղաքակրթությունների խաղաղ գոյակցությունն ապահովելու, մշակութային փոխանակումները խթանելու գործում, որպեսզի ներդաշնակություն ու խաղաղություն տիրի բազմազան մշակույթներով հագեցած այս աշխարհում:

## ԳԼՈՒԽ 25

175. <<尚书堯典>>: “协和万邦”。

## «Չինական փիլիսոփայության» կառուցումը չին-Եվրոպական մշակութային փոխանակումների համատեքստում<sup>176</sup>

2002 թվականի դեկտեմբերին ես հրատարակեցի «Էրջի Շիջի Սիֆան Զեսյուէ Դունձյան Ծի» (Արևմտյան փիլիսոփայության տարածումը Չինաստանում 20-րդ դարում) 14-հատորանոց մատենաշարը<sup>177</sup>: Ես նախաձեռնեցի այս ուսումնասիրությունը, քանի որ ցանկանում էի վերանայել արևմտյան փիլիսոփայության՝ Չինաստան տեղափոխվելու պատմությունը, որպեսզի ավելի բազմակողմանիորեն հասկանած «չինական փիլիսոփայություն» գիտակարգի զարգացումը:

Չինարեն լեզվում գոյություն չի ունեցել «փիլիսոփայություն» կամ «զեսյուէ» բառը: Զեսյուէ եզրույթը հնարել է ճապոնացի գիտնական Նիշի Ամանեն (1829-1897), որը միացրել է երկու չինարեն տառ՝ չե («ինաստություն») և սյուէ («ուսումնասիրություն»): Արանք նշանակում էին Յին Յունաստանում և Յունոնում ձևավորված «փիլիսոփայությունը»: Այս նոր եզրույթը Չինաստան ներմուծվեց չինացի գիտնական Յուան Ցունյանի (1848-1905) կողմից և ընդունվեց չինացի գիտնականների շրջանում: Չնայած այս ջեսյուէ եզրույթը չինացի գիտնականների կողմից ընդունվեց տասնիներորդ դարի վերջին, հարցը, թե արդյոք Չինաստան ունեցել է «փիլիսոփայություն», և թե արդյոք այդ փիլիսոփայությունը համեմատելի է արևմտյան փիլիսոփայության հետ, դեռ պատասխան չի գտել: Այս հիմնախնդրի շուրջ բանավեճերն, անշուշտ, դեռ շարունակվում են գիտության այս ոլորտում:

Արևմտյան փիլիսոփայությունը Չինաստան ներմուծվեց տասնիներորդ դարի վերջին: Նրա խոշորագույն և ամենաազդեցիկ կողմնակիցներից մեկը՝ Յան Ֆուն (1853-1921) չինարեն էր թարգմանել բազմաթիվ արևմտյան փիլիսոփայական տեքստեր, հատկապես նրանք, որ վերաբերում էին էվոլյուցիոն տեսությանը: Կանտի, Դեկարտի, Շոպենհաուտերի և Լիցշեի տեքստերը մեկը մյուսի ետևից մուտք գործեցին Չինաստան: Որոշ չինացի գիտնականներ բացահայտեցին, որ չնայած «փիլիսոփայություն» անկախ գիտակարգ չէր, դասական չինական կանոնագրերը՝ «Շան Շուն» (Պատմության գիրք), «Ի Չին» (Փոփոխությունների գիրք), «Լունթուն» (Կոմֆուցիական տարեգրեր), «Լաոցին» և «Չուանցին», որոնք կարելի էր համեմատել արևմտյան փիլիսոփայական գրքերի հետ, ներառում էին բազմաթիվ փիլիսոփայական թեմաներ և հարցեր: Այս կանոնների և արևմտյան փիլիսոփայության տեսությունների միջև կային զգալի տարբերություններ, և այդ տարբերությունների ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի գիտության համար:

Մենք պետք ենք ընդունենք, որ արևմտյան փիլիսոփայության ներմուծումից առաջ գոյություն չուներ չինական փիլիսոփայության ինքնուրույն գիտական ուսումնասիրություն՝ որպես ոլորտ, որը տարբերվում էր «կանոնների ուսումնասի-

176. Չինական փիլիսոփայության ամսագիր, 2007, 34: 33-42:

177. Թաճ Իծյե, խմբ. «Արևմտյան փիլիսոփայության տարածումը Չինաստանում 20-րդ դարում [Էրջի Շիջի Սիֆան Զեսյուէ Դունձյան Ծի], 14 հատոր: (Պեկին. Շոուլդու շիֆան դասյուէ չուբանչե, 2002):

րությունից» (ծին սյուե) և «վարագետների ավանդույթներից» (ցի սյուե): Քսաներորդ դարի առաջին կեսից արևմտյան փիլիսոփայության տարբեր ուղղությունների մեջ ալիք հասավ Չինաստան՝ մարքսիզմ, պրագմատիզմ, ռեալիզմ, վերլուծական փիլիսոփայություն, անտիկ հունական փիլիսոփայություն և տասնիններորդ դարի գերմանական փիլիսոփայություն: Սա հումքու ազդեցություն ունեցավ Չինաստանի գիտական դաշտի վրա: Չինացի գիտնականները, ուսումնասիրելով արևմտյան փիլիսոփայությունը և նրա կառուցվածքը, փորձեցին կազմել դասական կանոնների և մեկնաբանությունների բազմահատող ժողովածուներ, որոնք առնչվում էին Կունցիին (Կոնֆուցիոս), Լաոցիին, Զուանցիին և այլն, որի նպատակը «չինական փիլիսոփայություն» գիտակարգ ստեղծելն էր: Վաղ փուլերում այս ուսումնասիրությունները կենտրոնացած էին միայն մասնավոր անհատների կամ առանձին թեմաների վրա: Քսաներորդ դարի սկզբին, սակայն, հիմնվեց չինական փիլիսոփայություն գիտությունը, որի հիմքը չինական ինտելեկտուալ պատմության ընթացքում արված ուսումնասիրություններն էին: Այս ընթացքում տպագրվեցին «Չինական փիլիսոփայության պատմության» մի քանի հատորներ, այդ թվում և Յու Շիհի (Յու Շի) «Զունգու Զեսյուե Շի Դագան» (Չինական փիլիսոփայության պատմության ուրվագծեր<sup>178</sup>) և Ֆան Յուլանի «Զունգու Զեսյուե Շի» (Չինական փիլիսոփայության պատմություն<sup>179</sup>) գրքերը: Նրանց հեղինակները ձգուում էին ցույց տալ, որ չինական փիլիսոփայությունը ծագել է յեռևս 8ին դինաստիայից առաջ (մթա.221 թվականից առաջ): Այլ կերպ ասած՝ այս չինացի մտածողները գիտակցարար փիլիսոփայական ուսումնասիրությունները տարանջատում էին դասական և վարպետների վերահսկողությամբ արվող ուսումնասիրություններից և սահմանում էին չինական փիլիսոփայությունը՝ որպես անկախ գիտակարգ: Այնուամենայնիվ, չինական ինտելեկտուալ պատմության այս բոլոր գնահատականները կրում էին արևմտյան փիլիսոփայության ազդեցությունը և կրկնում էին վերջինիս կառուցվածքը:

1930-ականներից չինացի փիլիսոփաները չինական փիլիսոփայության իրենց գնահատականներում յուրացնում և հարմարեցնում էին արևմտյան փիլիսոփայությունը: Սա հանգեցրեց չինական փիլիսոփայության մի շարք արդի տարրերակների ստեղծմանը: Այս ժամանակաշրջանի կարկառուն մտածողներն էին Սյուն Շիլին, Զան Դունսունը, Ֆեն Յուլանը և Չին Յուլինը: Յավոր, 1949 թվականից հետո, արդի չինական փիլիսոփայության ուղղությունները ստեղծելու նմանատիպ փորձերը, ինչպես նաև չինական և արևմտյան մտածողությունների միջև երկխոսության ձգտող ուսումնասիրությունները կտրուկ դադարեցին:

Միայն 1980-ականներին, երբ Չինաստանում իրագործվեցին բարեփոխումներ, որոնք նպատակ ունեին կառուցել ավելի բաց հասարակություն, չինական փիլիսոփայության ուսումնասիրության արգելքը վերացավ: Էքզիստենցիալիզմի,

178. Յու Շիի, «Չինական փիլիսոփայության պատմության ուրվագծեր» (Պեկին. Դուն Ֆան հրատարակչություն, 1996), ի սկզբանե վերնագրված էր «8ին շրջանին նախորդող ստիլամի պատմություն [Մյան 8ին Մինսյուե Շի], գրվել է 1915-1917թթ. և առաջին անգամ հրատարակվել է 1922 թ.:

179. Ֆեն Յուլան, «Չինական փիլիսոփայության պատմություն, հասոր մեկ (առաջին անգամ հրատարակվել է 1931 թ.) և հասոր Երկու (առաջին անգամ հրատարակվել է 1934 թ.)» (Պեկին. Զուն Յուլան, 1962):

արևմտյան մարքսիզմի, ֆենոմենոլոգիայի, կառուցվածքաբանության, հերմենուսիկայի, հետմոդեռնիզմի, նշանագիտության և բազմաթիվ այլ ուսմունքներ ներմուծվեցին Չինաստան: Սա ոչ միայն լայնացրեց չինացի փիլիսոփաների մտահորիզոնը, այլև բազմաթիվ տարրեր հեռանկարներ տրամադրեց չինական փիլիսոփայության ավելի հարուստ, ավելի խոր հետազոտության համար:

Արևմտյան փիլիսոփայության Չինաստան ներմուծման պատմության համառոտ ակնարկից հետո կցանկանայի անել հետևյալ առաջարկները՝ հետագա քննարկում ծավալելու համար:

## **25.1 Արևմտյան փիլիսոփայությունը և չինական փիլիսոփայությունը՝ որպես անկախ գիտակարգեր**

Ինչպես արդեն ասացինք, Չինաստանում չկար ջեսյուե եզրույթը, ինչպես նաև չինական փիլիսոփայություն անկախ գիտակարգը: Միայն արևմտյան փիլիսոփայության հետ բախումից հետո փիլիսոփայական գաղափարներն ու փիլիսոփայական հարցերը ի հայտ եկան չինական երկերում: Այսպիսով, «չինական փիլիսոփայությունը», որը զարգացել էր այս ժամանակահատվածում, գերազանցապես կառուցվել էր՝ ըստ արևմտյան փիլիսոփայության հարացույցների և կաղապարների: Վերցնենք, օրինակ, Ֆեն Յուլանի «Չինական փիլիսոփայության պատմությունը»: Նրա կառուցվածքը, տերմինարանությունն ու տեսակետները հիմնականում փոխառված էին արևմտյան փիլիսոփայության իրենց համարժեքներից: Դրանք ներառում էին այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են իդեալիզմը և մատերիալիզմը, գոյաբանությունն ու տիեզերաբանությունը, մոնիզմն ու դուալիզմը կամ բազմակարծությունը, էմայիրիկն ու անդրանցականը, երևույթն ու էությունը, ընդհանրականն ու մասնավորը, միտքն ու գոյությունը և այլն: Այս հասկացութենական կաղապարները չինական մտքի մեջ բացատրում են որոշակի գաղափարներ, այդ թվում դառն, թյանը և սինը: Գոյություն ունեցող գաղափարները, հիմնախնդիրները, տերմինարանությունը, հասկացություններն ու տրամաբանությունը ձևավորվեցին արևմտյան փիլիսոփայության օգնությամբ: Բարեբախտաբար, արդյունքում ավելի մեծ հստակություն նտցվեց հիմնախնդիրների տարրերակման և հասկացությունների ուրվագիծման հարցում, ինչպես նաև ավելի մեծ ճշգրտություն նտցվեց տրամաբանության մեջ: Ես կարծում եմ, որ սա անհրաժեշտ քայլ էր «չինական փիլիսոփայությունը» կենսունակ դարձնելու ուղղությամբ:

1930-1940 թվականների արդի չինական փիլիսոփայությունը կազմված էր գիտական աշխատություններից, որոնք շարունակում են չինական փիլիսոփայության ավանդական տրամասությունը, և ոչ թե հետևում դրան: Սա նշանակում է, որ արևմտյան փիլիսոփայության ուսումնասիրության և հարմարեցման գործընթացում չինացի փիլիսոփաները ձևափոխում էին չինական փիլիսոփայության բնույթը՝ ավանդականից դարձնելով արդիական: Չինական փիլիսոփայության այս չինդիատվող զարգացումը պետք է բավարարեր արևմտյան փիլիսոփայության չափանիշները. «չինական և արևմտյան փիլիսոփայությունների զուգադրումը» նախապես ենթադրում էր չինական գիտության թերությունները արևմտյան գիտությամբ լրացնելու տարրը: Թույլ տվեք ցոյց տալ դա երկու ուշագրավ օրինակով: Առաջինը Սյուն Շիլիի՝ Սեո-Վեյշի Լուն (Յոգաքարա բուրդայականու-

թյուն)<sup>180</sup> ուսմունքն է, երկրորդը՝ Ֆեն Յուլանի նեոկոնֆուցիականությունը (սին-լիսյուն):<sup>181</sup>

Սյուն Շելիլ Նեո-վեյշի Լունը կիսատ է: Լրացված հատվածը՝ «Զինի ուսմունք» (ձին լուն), քննախոսությունն է, որը ներառում է արևմտյան փիլիսոփայության գոյաբանության ոլորտի (թենթի լուն) թենաներ, որոնք, սակայն, ունեն որոշ չինական առանձնահատկություններ: Մյուս հատվածը, որը նա ի սկզբանե նախատեսել էր գրել, «Հյանի ուսմունքն» էր (յան լուն): Եթե այն գրվեր, Վերաբերելու էր մի ոլորտի, որը համարժեք է արևմտյան փիլիսոփայության ճանաչողության տեսությանը (ժենշի լուն): Նրա մյուս աշխատությունները մեզ հնարավորություն են տալիս ծանոթանալ նրա տեսակետին չինական և արևմտյան փիլիսոփայությունների հարաբերության հարցում: Սյունը հավատացած է, որ ավանդական չինական փիլիսոփայությունը հակված էր ավելի շեշտել փորձառական իմաստությունը (թիժեն), քան ռացիոնալ դատողությունը կամ վերլուծությունը (սիրյան): Սյունի կարծիքով՝ արևմտյան փիլիսոփայության մեջ ճանաչողության տեսության մասին քննարկումները կարող են օգտակար լինել չինական փիլիսոփայության համար. նա հետազոտում էր ճանաչողական մոտեցումը, որը փորձառական իմաստությունը համադրում էր ռացիոնալ վերլուծության հետ:

Իր նեոկոնֆուցիական մոտեցման մեջ Ֆեն Յուլանը պնդում էր, որ պետք է ոչ թե հետևել Սուն (960-1280) և Մին (1368-1644) դինաստիաների նեոկոնֆուցիականությանը, այլ շարունակել այն: Ֆենի մոտեցումը հանգեցրեց նրան, որ չինական փիլիսոփայությունը մուտք գործեցին պլատոնական փիլիսոփայության «ընդհանուրն» (գուն սյան) ու «մասնավորը» (շու սյան), ինչպես նաև նեո-ռեալիզմի գաղափարները (սին շից լուն): Այս ծրագիրը կիրառելու դեպքում աշխարհը բաժանվում է «ծշմարտության» (ժենձի կամ սկզբունք (լի) կամ մեծ ծայրակետ (թայձի)) և «հրականության (շիձի): Դանապատասխանաբար, իրականության մեջ իրերը դաշնում են այն, ինչ կամ՝ ըստ իրենց եռթյան կամ սկզբունքի: Որդեգրելով ծշմարտության ու իրականության երկրևո հասկացությունները՝ Ֆենը կարողացավ շարունակել «շատերը կիսում են մեկը» նեոկոնֆուցիական ուսմունքը: Ֆեն Յուլանի մեկ այլ նեոկոնֆուցիական աշխատություն՝ «Բառերի նոր ընկալումը» (Սին Ձի Յան)<sup>182</sup>, քննարկում է փիլիսոփայական մեթոդաբանության հարցը և նրա կապը ճանաչողության տեսության հիմնախնդիրների հետ: Ըստ Ֆենի՝ արևմտյան փիլիսոփայությունը գերազանցում է վերլուծության, իսկ ավանդական չինական փիլիսոփայությունը՝ ներըմբռնման ոլորտում: Նեոկոնֆուցիականության հանդեպ նրա վերաբերմունքը համադրում էր այս երկու մոտեցումները և օգտվում նրանց պտուղներից:

Թե՛ Սյուն Շիլին, թե՛ Ֆեն Յուլանը չինական փիլիսոփայությունը դուրս են բերել

180. Թաճ Իծյե և Սյուն Չյեֆու, խմբ. «Սյուն Շիլի Լունջու Չի Ֆի. Սին Վեյշի Լուն [Սյուն Շիլի երկերի ժողովածու. [1] Միայն գիտակցության դպրոցի նոր ուսմունք] (Պեկին. Չուն-հուա Շուջու, 1985):

181. Ֆեն Յուլան, Սին Լի-սյուն Խոր ռացիոնալ փիլիսոփայություն] (Չանչա. Կոմերժի-ոն հրատարակություն, 1939):

182. Ֆեն Յուլան, «Սին Ձի յան» [Բառերի նոր ընկալում] (Չանհայ. Կոմերժի-ոն հրատարակություն, 1946):

ավանդական չինական մտածողությունից: Սակայն նրանք շարունակել են արևմտյան փիլիսոփայություն հենք ընդունելու ավանդույթը: Ցավոր, չինական փիլիսոփայության այս հուզախօռվ զարգացումները կանխվեցին արտաքին հանգամանքների պատճառով: Վերը նշված քննարկումից պարզ է դառնում, որ անկախ նրանից՝ հասկանում ենք չինական փիլիսոփայությունը չինական ինտելեկտուալ պատմության վաղ շրջանի պատմության տեսանկյունից, թե նկատի ենք առնում նրա շարունակական զարգացումը չինական պատմության արդի շրջանում, պետք է ընդունենք, որ նրա մեջ մասը ձևավորվել է արևմտյան փիլիսոփայության օգնությամբ և նրա ազդեցության ներքո:

## **25.2 Արևմտյան փիլիսոփայության հարացույցներն ու շրջանակները և Չինական փիլիսոփայության հավանական խնդիրները**

Որպես մարդ արարածներ՝ մենք ունենք ընդհանրություններ, որոնք անցնում են տարրեր քաղաքակրթությունների ու մշակույթների սահմանները: Սակայն յուրաքանչյուր քաղաքակրթություն կամ մշակույթ յուրահատուկ է աշխարհագրական, պատմական և այլ առումներով: Բնական է, մենք ակնկալում ենք, որ արևմտյան փիլիսոփայությունը պետք է ունենա հստակ առանձնահատկություններ, ինչը պայմանավորված է որոշակի հասարակական-մշակութային միջավայրում նրա զարգացմամբ: Խույն կերպ նաև չինական փիլիսոփայությունն անպայմանորեն ենթարկվում է հասարակական ու մշակութային գործոնների, ուստիև ձեռք է բերում որոշակի յուրահատկություններ: Այսպիսով, չինական փիլիսոփայության անխոհեմ ու անզուսպ ձևավորումը՝ ըստ արևմտյան փիլիսոփայության կառուցվածքի, անխուսափելիորեն առաջացնելու էր մի շարժ լուրջ խնդիրներ: Կարծում եմ՝ գոյություն ունի առնվազն երկու հիմնարար խնդիր:

Առաջին խնդիրը վերաբերում է չինական փիլիսոփայության առանձնահատկությունների ոչնչացմանը, որը կարող է յուրահատուկ նշանակություն ունենալ փիլիսոփայական ուսումնասիրությունների տեսանկյունից: Ես կքննարկեն չինական փիլիսոփայության երկու առանցքային հատկություն, որոնք կօգնեն մկարագրել խնդիրը: Արևմտյան փիլիսոփայությունը հին հույնների և հատկապես Դեկարտի ժամանակներից ի վեր բարձր է գնահատում փիլիսոփայական գիտելիքի համակարգային կառուցվածքը: Ի հակադրություն դրա՝ պահանջական չինական մտածողներն ավելի շեշտում են որոշակի ուղիների կամ նպատակների հետապնդումը, որոնք նպաստում են առաջինության կամ ազդեցության իրագործմանը (ծինշեն ծինծյե): Կոնֆուցիական «Տարեգրքերի» մի հատված բացահայտում է կոնֆուցիականների շեշտը «Անքին», անհատական հաճույքի վրա, որը կապված է ուսման հետ. «Կարպետն ասաց՝ նրանք, որ գիտեն ծշմարտությունը, հավասար չեն նրանց, որ սիրում են ծշմարտությունը, իսկ նրանք, որ սիրում են այս, հավասար չեն նրանց, որ հաճույք են ստանում նրանից: (Տարեգրքեր 6:18<sup>183</sup>): Կյանքի վերջնական նպատակը ոչ միայն գիտելիք կամ հմտություններ ձեռք բերելն է: Կոնֆուցիոսի սիրելի աշակերտը՝ Յան Յուեյը, ներդաշնակեցրել էր ուս-

183. Ձերմա Լեզզ, բարգմ. «Չորս գրքերը» (Թայվան. Մշակութաբանական գրքի ընկերություն, 1981թ.), 195:

ման հանդեպ իր սերն ու անձնական կյանքը (Տարեգրքեր 6:3): Յան Յուեյի դեպքում մարմինն ու միտքը՝ արտաքինն ու ներքինը, կատարյալ ներդաշնակության մեջ էին:

Դառսական փիլիսոփա Զուանցին իր գրքի առաջին գլխում, որ վերնագրված է «Սյաոյա յու»<sup>184</sup>, գրում է ինքնաբուլս ծինշեն ծինյեի մասին, որին չեն խանգարում պայմանական ցանկություններն ու արժեքները: Նույն կերպ նաև մի հայտնի բուդդայական բանաստեղծություն պատմում է ծինշեն ծինյեի մասին, որը հարմարավետ է գգում տարբեր միջավայրերում:

*Գարնան ծաղիկներն ու աշնան լուսինը,*

*Ամռան զեփյունն ու ձմռան ծյունը:*

*Եթե անօգուտ մտքերը չեն սավառնում քո գլխում,*

*Վայելում ես կյանքի լավագույն օրերը*<sup>185</sup>:

Այսպիսի փիլիսոփայությունը, որը բնութագրվում է անհատական ռեֆլեկտիվ ներգրավվածությամբ և ներրմբունումով, տարբերվում է արևմտյան փիլիսոփայության մեջ գերիշխող միտումներից, բայց չի կարելի թերագնահատել նրա արժեքը մարդկության կյանքում:

Ավանդական չինական մտածողության մյուս հիմնարար ու տարբերակիչ առանձնահատկությունը ամբողջական ու անհատական մոտեցումների հավասարակշռություն է: Ավանդական չինական փիլիսոփայության առանցքային գաղափարները ներառում են «Երկնքի ու մարդկության միասնությունը» (թյան ժեն հեի), «անթիվ-անհամար իրերը՝ մեկի մեջ» (վաճու իրեն), և «մարմնի ու մտքի, արտաքինի ու ներքինի միասնությունը» (շենսին նեյվայ հեի): Այս հիմնարար հարացույցները հակադրվում են արևմտյան, մասնավորապես անգլիական փիլիսոփայության մեջ գերիշխող առարկայամետ մոտեցումներին և սուբյեկտ-օբյեկտ երկվությանը: Եթե առարկայամետությունը և նրան կից երկվագաղտական կաղապարներն օգտագործվեն որպես հղումներ, որոնք կիեշտացնեն չինական փիլիսոփայության լմկալումը, վերջինիս տարբերակիչ առանձնահատկությունները բավարար կերպով չեն ընդգծվի: Մյուս կողմից, կարևոր է նշել, որ չինական փիլիսոփայության մեջ նախկինում ուսումնասիրված թեմաներն ըստ էության և մոտեցումներով ավելի մոտ են մայոցանաքային եվրոպական փիլիսոփայությանը, օրինակ՝ երևութարանության ոլորտում, որը շեշտում է աշխարհի գործերին անհատի մասնակցության սուբյեկտիվ բնույթը (հուցության): Սակայն ամենակարևորն այն է, որ ավանդական չինական մտածողության այս առանձնահատկությունները մեծապես օգտակար կլինեն թե՛ չինական, թե՛ արևմտյան փիլիսոփայությունների համար:

184. Անգուս Ս. Գրեիեմ, թարգմ. «Չուան-Ցու. Ներքին գլուխները (Ինդիանապոլիս. Յեթեր, 2001թ.), 43-47: Գրեյեմը «Սյաոյա յու» անվանումը թարգմանում է «Ձբուննել դեպի վերջին հանգրվան»:

185. Ումեն Յուեյքայ (Մումոն Էքայ), «Անդարպաս դարպաս» (Ումեն գուամ՝ չինարեն, Մումոնքամ՝ ճապոներեն): Անգլերեն թարգմանությունը՝ Կացուկի Սեկիդայի, Երկու Ձեն դասական. Անդարպաս դարպասն ու Կապույտ ժայռի արձանագրությունը (Քոսթոն. Համրհալա հրատարակություն, 2005թ., նախկինում հրատարակվել է 1995 թ. Ուելքրիի հրատարակությունում):

Չավաճական խնդիրների երկրորդ աղբյուրը կապված է չինական եզրույթների ու արտահայտությունների անգլերեն թարգմանությունների հետ: Ավանդական չինական մտքում գոյություն ունեն այնպիսի գաղափարներ, ինչպիսիք են թյանը դառն, սինը սյուն, ուն և ցին, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատուկ իմաստը և որոշակի փիլիսոփայական կաղապարներում դժվար է գտնել նրա համարժեքը արևմտյան փիլիսոփայության մեջ: Օրինակ, թյանը, որը հաճախ թարգմանվում է միայն «Երկինք», ունի առնվազն երեք իմաստ:

(ա) Գերազույն և ծայրագույն Երկինք, որը երբեմն նշանակում է աստված:

(բ) բնապաշտական Երկինք, որը մարմնավորում է բնական միջավայրի գգացողությունը:

(գ) Երկինքը նույնացվում է անդրանցական կարգի հետ. սա նորմատիվային սկզբունքների (իլի) հիմքն է, որը կարող է ունենալ նաև բարոյագիտական վարքագիր ներիմաստներ:

Մյուս օրինակը ցին է, որը կարելի է մեկնաբանել առնվազն երեք տարբեր ձևով:

(ա) Այութական գոյություն

(բ) Կենսունակություն և գիտակցություն, օրինակ, Սենցիոնի մոտ՝ եռանդում և դինամիկ ցի (հույս ցի չի ցի) կամ Գուանցիի հիմնական ցին (ձինցի)

(գ) ծայրակետը, օրինակ, «մեկ ցին, որի մեջ ներառված է Երեքը» (իցի հուասանցին) թեման, որը շոշափվում է դասուական մտքի մեջ:

Դեշտ չէ արևմտյան փիլիսոփայության մեջ գտնել ցիի այս բոլոր իմաստների համարժեքները: Կարծ ասած՝ նրանցից մի քանիսն ընդհանրապես հնարավոր չէ թարգմանել, ուստի առաջարկում եմ նման դեպքերում դիմել տառադարձումների օգնությանը, օրինակ՝ այստեղ կցանկանայի ներկայացնել տառադարձնան մի հաջող օրինակ, որի նպատակը եզրույթի նախնական ներիմաստի պահպանումն է: Երբ բուդդայական միտքը ներմուծվեց Չինաստան, որոշ կարևոր գաղափարներ, այդ թվում և «այրաջնան» (բռ-ժե) և «Նիրվանան» (նյեփան) միայն տառադարձվում էին: Ժամանակի ընթացքում այս տառադարձումները ներմուծվեցին չինարեն, և գտնվեցին նրանց հնդկական բուդդայական իմաստների համարժեքները: Կարևոր է նշել, որ Դիարնայի մեկնաբանող Սյուան Ցանը (600-664) միտումնավոր ձևակերպեց «անթարգմանելիության» հինգ սկզբունքները (ու բուժան), որոնք կապված էին բուդդայական կանոնների ու հասկացությունների հետ<sup>186</sup>: Սենք կարող ենք հետևել այս օրինակին ու չինական փիլիսոփայության մեջ պահպանել որոշ առանձնահատուկ գաղափարների ներուժն ու յուրահաստկությունը,

186. Ըստ Սուն դինաստիայի գիտնական Ձոռու Դումիի՝ Սյուան Ցանի «ու բուժան» խորհուրդ է տալիս միայն տառադարձել սանսկրիտի եզրույթները, և ոչ թե թարգմանել դրանք հետևյալ իրավիճակներում՝ 1. Երբ եզրույթները խորհրդավոր են, օրինակ՝ հմայախոսությունների դեպքում, դրանք կարող են ունենալ բազմաթիվ նշանակություններ: 2. Երբ չինարենում չկա համարժեք բառ, այս եզրույթներմ ավանդաբար տառադարձվում են ու չեն թարգմանում, 3. և եթե թարգմանությունը կարող է անհասկանալի դարձնել որևէ խոր հասկացություն, անհրաժեշտ է դիմել տառադարձնան օգնությանը (Ձոռու Դուլի, Ֆայ Մինի Սու. Բուդդայական եզրույթների բացատրության ներածությունը [Պեկին. Շանվու Ինչուգուան, 1984], 54. 1055):

և ոչ թե ծովել դրանք՝ ըստ արևմտյան տերմինաբանության կանոնների: Սակայն արևմտյան փիլիսոփայության կարգերի ու հարացույցների որոշ անխտրական հարանշանակություններ արդեն իսկ չեն կիրառվում, իսկ նրանց յուրահատկությունները չինական մտածողության մեջ ամենատարածված են: Պետք է զգուշորեն վերաբերվել այդ հասկացություններին, նաև մեծ ուշադրություն դարձնել թարգմանության ու տառադարձնան խնդիրներին, որպեսզի սխալմանք չսահմանափակենք նրանց իմաստները: Խնամքով և սրտացավ վերաբերմունքն այս խնդիրներին կմեծացնի չինական փիլիսոփայության ներդրումը ժամանակակից փիլիսոփայական երկխոսություններում:

### 25.3 Չինական փիլիսոփայության ապագա զարգացումները

Իմ կարծիքով՝ չինական փիլիսոփայության մասնագետները պետք է շարունակեն արևմտյան փիլիսոփայության լուրջ ու համակարգված ուսումնասիրությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով նրա նոր միտուններին: Մասնավորապես այս նոր զարգացումներն արտացոլում են ժամանակակից մտահոգությունները, որոնք կապված են համաշխարհայնացման և մարդկային ընկալումների հետ նրա առնչություններին, գիտության և տեղինուղղակի առաջընթացին և շրջակա միջավայրի վրա դրա ներգործությանը, բարոյական զարգացմանն ու մարդկային բարօրության խնդիրներին: Այստեղ ես ցանկանում եմ ապագա հետազոտության առաջարկ անել:

Ես ուզում եմ բոլորի ուշադրությունը հրավիրել բուդդայականության և չինական մշակույթի փոխադարձ հարմարեցման և համադրության վրա, որպեսզի ցույց տամ, թե ինչպես կարող ենք մոտենալ չինական և արևմտյան փիլիսոփայությունների գորգադրմանը: Սույ և թան դինաստիաների ընթացքում (Վեցից ութերորդ դարեր), որոշ չինականացված բուդդայական դպրոցներ ի հայտ եկան Չինաստանում: Այս դպրոցները զարգացրին չինական բուդդայականության ուսունքը՝ նրանում ներառելով կոմֆուցիական և դասական գաղափարներ:

Չինական և արևմտյան փիլիսոփայությունների համադրությունն ուսումնասիրելիս կիրառվում է մի կարևոր մեթոդաբանական մոտեցում, այն է՝ չինական մտքում առկա թեմաներն ու հասկացությունները բացատրել ու գեղեցկացնել արևմտյան փիլիսոփայության գաղափարներով: Ուսումնասիրության այս ձևը ոչ միայն կը նույնականացնի արևմտյան փիլիսոփայության շրջանակը, այլև նոր ներդրում կլինի փիլիսոփայություն գիտության զարգացման համար: Դիմա մենք գիտենք, որ այս մոտեցումն իրենց թեզերում կիրառում են այն գիտնականները, որոնք քննություն են չինական հերմենուստիկան, չինական երևութաբանությունը, նշանագիտությունը և այլն: Այս տեսանկյունից «չինական փիլիսոփայություն» արտահայտությունը վերաբերում է ոչ միայն «չինական փիլիսոփայությանը», այլև այն փիլիսոփայությանը, որը մեծ ու լուրջ ազդեցություն ունի ժամանակակից քննարկումներում:

Այս մեթոդը կարելի է համեմատել կառուցողական ռազմավարության հետ, որը 1930-1940-ականներին կիրառվում էին մի շարք չինացի գիտնականներ, որոնց ես ավելի վաղ եմ անդրադարձել: Օրինակ, արձագանքելով արևմտյան փիլիսոփայական թեմաներին ու հասկացություններին՝ Սյուն Շիլին ու Ֆեն Յուլանը ստեղծեցին չինական փիլիսոփայական ավանդույթները, որոնք ապագա-

յում վերածվելու էին արդի չինական փիլիսոփայության: Անշուշտ, իհմա գիտնականները հավանաբար կարող են շարունակել Սյուն Շիլիի և Ֆեն Յուլանի աշխատանքը, ինչպես շարունակում են Կոնֆուցիոսի, Մենցիոսի, Զու Սիի և Վան Յանմինի ավանդությունները և առնչությունները արևմտյան փիլիսոփայության հետ: Կարծ ասած՝ չինական փիլիսոփայության գիտակները պետք է պահպանեն չինական ավանդությի անուր իհմքերը և արդյունավետ կերպով յուրացնեն ու ներմուծեն ժամանակակից արևմտյան փիլիսոփայության նոր գաղափարներ: Ժամանակակից չինա-արևմտյան մշակութային փոխանակումների երկխոսություններում մենք պետք է հավասար բարձր դիրք ունենանք այլ փիլիսոփայությունների հետ: Սա թույլ կտա, որ փիլիսոփայական քննարկումները զգալիորեն զարգանան նաև քսանմեկերրորդ դարում: Ակտիվ ներգրավվածությունն այս քննարկումներում կխորացնի չինական և արևմտյան փիլիսոփայության զարգացումը համաշխարհայնացված աշխարհում:

### Չինական եզրույթների բառարան

|                                     |                 |
|-------------------------------------|-----------------|
| Բո-ժե                               | 般若              |
| Բենթի լուն                          | 本体论             |
| Դառ                                 | 道               |
| Էրշի Շիձի Սիֆան Ջեսյուե Դունձյան Շի | hh二十世纪西方哲学东渐史ii |
| Ֆանի Մինի Սու                       | hh翻译名義序i        |
| Ֆեն Յուլան                          | 冯友兰             |
| Գուն սյան                           | 共相              |
| Գուանցի                             | hh管子i           |
| Հուան Ցունսյան                      | 黄遵宪             |
| Հուո ցի ջի ցի                       | 活气之气            |
| Հու Շի                              | 胡适              |
| Հու ջու թի սին                      | 互主体性            |
| Զին լուն                            | 镜论              |
| Զին ցի                              | 精气              |
| Զինշեն ձինձյե                       | 精神境界            |
| Զին սյուե                           | 经学              |
| Զին Յուեին                          | 金岳霖             |
| Լաոցի                               | 老子              |
| Լի                                  | 理               |
| Լյան լուն                           | 量论              |
| Լուն Յու                            | h论语ii           |
| Նյեփան                              | 涅槃              |

|                    |        |
|--------------------|--------|
| Ցի                 | 气      |
| ԺԵՆՇԻ ԼՈՒՆ         | 认识论    |
| ՉԱՆ ՉՈՒ            | h 尚书ii |
| ՉԵՆՍԻՒՆ ՆԵՐՎԱՅ ԻԵՒ | 身心内外合  |
| ՉԻԾԻ               | 实际     |
| ՉՈՒ ՍՅԱՆ           | 殊相     |
| ՍԻԲՅԱՆ             | 思辨     |
| ԹԱՅՃԻ              | 太极     |
| ԹԵՐԱՆ              | 天      |
| ԹԻԺԵՆ              | 体认     |
| ՎԱՆՈՒ ԻՐԵՆ         | 万物一本   |
| ՎԵՐԺԻ              | 唯识     |
| ՈՒ                 | 无      |
| ՈՒ ԲՈՒՖԱՆ          | 五不翻    |
| ՈՒՄԵՆ ՀՈՒԵՐՎԱՅ     | 无门慧开   |

## Ի՞նչեւ ԹԱՆ

# ԿՈՆՖՈՒՑԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԲՈՒԴԴԱՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԴԱՌՍԻԶՄԸ, ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՉԻՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Թարգմանություն անգլերենից՝  
Աստղիկ ԱթԱբԵԿՅԱՆԻ

Գլուխների թարգմանիչներ.

Յուան Այլին, Յան Սին, Ցյու Յուան, Լի Չենյան, Բրայան Բրույա, Հայ-մին Վեն, Գլորիա Դեյվիս, Յուկ Վուն, Յան Հառ, Լյու Բիննեն, Բրյուս Դուար, Ջ.Ու Ֆերներին, Ալան Թուայքս, Յան Ջիի

Մեջբերված աշխատությունների թարգմանիչներ.

Մաքեն Ոլչի, «Lettere dalla China», թարգմ.՝ Հե Գառահ և ուրիշներ Խմանուիլ Կանտ, «Դատողության քննադատություն», թարգմ.՝ Վերներ Ս.Փլուհար Հեգել, «Ֆա Չեսյուե Յուանլի», Շանվու Ինչուզուան, 1961, էջ 351: [Գ.Վ.Ֆ. Հեգել, «Ծշմարիտի փիլիսոփայության տարրեր», թարգմ.] Հ.Բ.Նիսրեք Հեգել, «Սյան Լոռուջի», Սանու Յինշուզուան, 1980, էջ 87 [Գ.Վ.Ֆ. Հեգել, Հեգելի տրամաբանությունը. Փիլիսոփայական գիտությունների հանրագիտարանի առաջին մաս, թարգմ.] Վ.Ուլյաս Հեգել, «Մեյ Սյուե», Հատոր 1, Շանվու Ինչուզուան, 1979, էջ 133: [Գ.Վ.Ֆ. Հեգել, Գեղագիտություն. Գեղարվեստի դասախոսություններ, Հատոր 1, թարգմ.] Թ.Մ.Նորս

Ումեն Հուեյրայ (Սումոն Էքայ), «Անդարպաս դարպաս» (Ումեն զուան չինարեն, Սումոնքան ճապոներեն): Անգլերեն թարգմանությունը՝ Կացուկի Սեկիդայի

Յրատ. Խմբագիր՝ Յ. Ալեքսանյան  
Սրբագրիչ՝ Թ. Մաթենոսյան  
Եշաղրումը՝ Մ. Ավանեսյանի  
Կազմի ձեւավորումը՝ Ա. Բաղդասարյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 22.5 տպ. մամուլ  
Տպաքանակը՝ 1000:

Տպագրվել է «Դիզակ պլոտ» հրատարակչության տպարանում  
ԼՂՀ, Ստեփանակերտ, Յ. Նակոբյան

## **«ԳԵՂԱՐՄ» հանդեսի մատենաշարով լույս են տեսել**

«Ձագերախաղեր Արևմբյան գրականությունից»- 2010  
Ինսիֆ Բրոդսկի. «Տեղաբարափի շաջունը» - 2011  
Մ. Բախսփին. «Դոսպոնսկու պոետիկայի իմադրմները» - 2012  
«Սիրիոսի սրնահարները»/Վ. Խերնիկով, Ն. Գումիլյով, Վ. Խոդասելիչ/ - 2012  
Սերգեյ Շովլաթով. «Միայնակների երթը» - 2012  
Յուրի Լորման. «Միֆ. Անոն. Մշակույթ» - 2012  
Վաղամ Շալամով. «Կողմիմյան պարմվածքներ»- 2012  
Ժարկո Միլենիչ. «Լեռնը՝ հրաշագործի աշակերդը»- 2013  
Պավել Ֆլորենսկի. «Խկոնոսքաս» - 2014  
Ուսու կրնցեապուալ պոեզիա/ Դ. Պրիզով, Վ. Նեկրասով, Լ. Ուորինշփեյն/ - 2014  
Շենքիս Սապգիր. «Չուզահեռ մարդը» - 2014  
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակապագիր» - 2014  
«Կամուրջների խոռվոլյայունը. մերամենքաֆորիսքներ» - 2015  
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մարդյոնայի կալվածքը»- 2015  
Անդրեյ Պլավոնով. «Չեւենգուր. Գուրը. Պարմվածքներ» - 2015  
Արդի ռուսական վերլիքը (անթոլոգիա) - 2015  
Չինասպանի մշակույթի քրեսպոմագիա - 2015  
Զիդի Մաջիա. «Տրեղեն խոսքեր» - 2015  
Մա Քայ. «Սրբի արձագանքներ» - 2015  
Եվգենի Վոլոդագին. «Լավը» - 2015  
Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015  
Ուսու այլախոհական պոեզիա (անթոլոգիա) - 2015  
Չինական մդրի եւ մշակույթի հիմնական  
հասկացություններ(հագոր 1) - 2016  
Յու Զիան. «Անձրևից պարսպարվող թռչունը» - 2016  
Պավել Բասինսկի. «Լեն Տոլստոյ. Փախուսդ դրախտից» - 2016  
Չժան Ցզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016  
Վան Չենչկի. «Երիգասարդ վանականի սիրո պարմությունը» - 2016  
Լյուդմիլա Պերրուշեսկայա. «Սեր. երջանկություն. ոերվիեմ» - 2016  
Անդրեյ Բելի. «Պեգերբուրգ» - 2016  
Դիկոնոսոներ. Անհայտ պոետների ապասպան (անթոլոգիա) - 2016  
Ուսու մինիմալիստներ (անթոլոգիա) - 2016



Ոգի-Նարի  
Vogi-Nairi

Էլ. հասցե՝ [vogi.nairi@mail.ru](mailto:vogi.nairi@mail.ru)

հեռ.: +37497252323